[illegible]

[illegible]

Ցանց ժայռամայրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

АРМЯНСКАЯ КНИГА КАНОНОВ

II

Предисловие, научно-критический текст и примечания
ВАЗГЕНА АКОПЯНА

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1971

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Բ


Աշխատասիրությամբ
ՎԱՉԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1971

Խմբագրությամբ
Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆԻ, ԷՄ. Ա. ՊԻՎԱԶՅԱՆԻ

1—10—1

Հայրենական մեծ պատերազմում
զոհված հոլբոր՝
ֆուրգոն ԱՐՏՅՈՒՇՅՈՆ գիմացի
տիշատակին



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. ԿԱՆՈՆԱԴՐՔԻ ՁԵՌԱԴՐԵՐԻ ԵՐԿՈՒ ԽՄԲԵՐԸ, ՆՐԱՆՑ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՄՅԱՆՑ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՕՁՆԵՑՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՀԵՏ

«Կանոնագիրք Հայոց»-ի Ա հատորը[1] բովանդակում է Հովհաննես Օձնեցու խմբագրությունը (VIII դար)։ Նույնի ներկա՝ Բ հատորը հանդիսանում է X և XI դարերի խմբագրություններում Հովհ. Օձնեցուց հետո Կանոնագրքին կատարված ավելացումները։ Որպեսզի կարողանանք ցույց տալ վերջին երկու խմբագրությունների ընդգրկած նյութերի սահմանները և ընդհանրապես Կանոնագրքին տարբեր ժամանակներում ավելացված շերտերը, անհրաժեշտ է թեկուզ և համառոտակի հիշեցնել «Կանոնագիրք Հայոց»-ի Ա հատորի նախարանում արծարծված որոշ հարցեր։

Այստեղ չենք խոսի այն մասին, թե ի՛նչ ձեռագրեր ենք օգտագործել «Կանոնագիրք Հայոց»-ի Ա հատորի դիտա-քննական բնագիրը կազմելիս, դրանք ի՛նչ խմբերի և ենթախմբերի ենք բաժանել։ Հետաքրքրվողներին հղում ենք նույն հատորի Նախաբանի XXX-XXXIX էջերին։ Առաջադրված խնդիրների պարզաբանման համար մեզ կբերենք օգտագործված ձեռագրերի երկու խմբերից մեւական ձեռագրերի բովանդակած նյութերի ցանկերը, հիշեցնելով հետևյալը. նախ՝ որ մնացած ձեռագրերի բովանդակած նյութերի կառուցվածքը համապատասխանաբար արտահայտված է այդ զույգ ձեռագրերում. երկրորդ՝ որ այդ երկու ձեռագրերում կանոնախմբերի հաջորդականությունն ընթանում է ըստ նույն ձեռագրերի բովանդակության ցանկերի։

Ա խմբի ձեռագրերից վերցնում ենք A, իսկ Բ խմբից՝ ı, հնագույն (ծագման իմաստով) ձեռագրերի բովանդակության ցանկերը։

Ա խումբ A ձեռագիր	Բ խումբ ı ձեռագիր
«Ա. Կանոնք Առաքելական գլուխս ԼԴ։	«Ա. Կանոնք Առաքելականք գլուխք երեսուն եւ չորս։
Բ. Կանոնք Առաքելական ի վեռն Կղեմայ գլուխ Զե։	Բ. Երկրորդ Առաքելականք գլուխք Ղ եւ ե։
Գ. Կանոնք Հարցն հետեւողաց գլոխ ԻԷ։	Գ. Կանոնք Թադէոսի առաքելոյ գլուխս ԼԳ։

[1] Կանոնագիրք Հայոց հտ. Ա, աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964։

Դ. Կանոնք Նիկիայ մեծ ժողովոյն գլուխ Ի։
Ե. Կանոնք Անկիւրիայ գլուխ Ի։
Զ. Կանոնք Կեսարիայ գլուխ Ժ։
Է. Կանոնք Նէոկեսարեայ գլուխ Ի։
Ը. Կանոնք Գանգրայ գլուխ ԻԳ։
Թ. Կանոնք Անտիոքայ գլուխ ԻԵ։
Ժ. Կանոնք Ղաւոդիկեայ գլուխ ՄԵ։
ԺԱ. Կանոնք սրբոյն Գրիգորի գլուխ Լ։
ԺԲ. Կանոնք Սարգիկեայ գլուխ ԻԱ։
ԺԳ. Կանոնք Կոստանդնուպաւլսի գլուխ Գ։
ԺԴ. Կանոնք Եփեսոսի ժողովոյն գլուխ Զ։
ԺԵ. Կանոնք Աթանասի՝ Հարցմունք գլուխ ՂԸ։
ԺԶ. Կանոնք Բասղի Կեսարացւոյ գլուխ ՄԱ։
ԺԷ. Կանոնք սրբոյն Սահակայ գլուխ ՄԵ։
ԺԸ. Կանոնք Շահապիվանի Հայոց գլուխ Ի։
ԺԹ. Կանոնք Սեւաստեայ՝ Թուղթ գլուխ ԺԴ։
Ի. Կանոնք Ներսէսի եւ Ներշապհոյ գլուխ ԼԷ։
ԻԱ. Կանոնք Յովհաննու Մանդակունւոյ գլուխ Թ։
ԻԲ. Կանոնք Աբրահամու Մամիկոնւոյ գլուխ Գ։
ԻԳ. Կանոնք Սահակայ վերջնոյ գլուխ ԺԵ։
ԻԴ. Կանոնք Յովհաննու Իմաստասիրի գլուխ ԼԲ։
ԻԵ. Կանոնք Սիոնի Հայոց կաթողիկոսի գլուխ ԻԲ։

Դ. Կանոնք Փիլիպոսի առաքելոյ գլուխս Ը։
Ե. Կանոնք Հարանցն հետեւողաց գլուխս ԻԴ։
Զ. Կանոնք Անկիւրեայ գլուխս քսան։
Է. Կանոնք Նիկիայ սուրբ ժողովոյն գլուխս քսան։
Ը. Կանոնք Երկրորդ Նիկիականք գլուխս ՃԺԴ։
Թ. Կանոնք սրբոյն Գրիգորի առաքելոյ Հայոց գլուխս երեսուն։
Ժ. Կանոնք սրբոյն Աթանասի գլուխս Զ եւ Ը։
ԺԱ. Կանոնք երանելոյն Մակարայ Երուսաղէմի գլուխ Թ։
ԺԲ. Կանոնք Կոստանդինուպօլսի ժողովոյն գլուխս Գ։
ԺԳ. Կանոնք երանելոյն Աստուածբանի գլուխս Լ։
ԺԴ. Կանոնք սրբոյն Բարսղի եւ Ակեպսիքոս գլուխս ՄԱ։
ԺԵ. Կանոնք Բ Բարսղի առ Թէոդորոս գլուխս Ա։
ԺԶ. Կանոնք Գ սրբոյն Բարսղի վասն պէսպէս եւ բիւրապատիկ ախտից գլուխս ՄՀԲ։
ԺԷ. Կանոնք տեառն Եփրեմի գլուխս Ը։
ԺԸ. Կանոնք Ներսէսի կաթողիկոսի եւ Ներշապհոյ եպիսկոսոսի գլուխ Լ եւ Ը։
ԺԹ. Կանոնք կեսարեայ գլուխք Ժ։
Ի. Կանոնք Նէոկեսարեայ գլուխ Ի։
ԻԱ. Կանոնք Կանգրեայ գլուխ ԻԴ։
ԻԲ. Կանոնք Անտիոքայ գլուխք ԻԵ։
ԻԳ. Խոստովանութիւն Անտիոքայ գլուխ Ա։
ԻԴ. Կանոնք Լաւոդիկեայ գլուխք ՄԷ։
ԻԵ. Կանոնք Սարդիկեայ գլուխ ԻԱ։

ԻԶ. Կանոնք առաքելոյն Թադէոսի գլուխ ԼԳ:
ԻԷ. Կանոնք առաքելոյն Փիլիպպոսի գլուխ Ը:
ԻԸ. Կանոնք Անտիոքայ Երկրորդ գլուխ Թ:
ԻԹ. Կանոնք Եփրեմի Խորին Ասորւոյ գլուխ Ը:
Լ. Կանոնք Կիւրղի Աղեքսանդրացւոյ գլուխ Ե:
[ԼԱ. Կանոնք Եպիփանու Կիպրացւոյ գլուխ Ե]:
ԼԲ (ԼԱ). Կանոնք Եղիշէի վարդապետի գլուխ Ա:
ԼԳ (ԼԲ). Կանոնք Անտիոքայ Երկրորդ գլուխ Ա:
ԼԴ (ԼԳ). Կանոնք Նիկիայ Երկրորդ գլուխ ՃԺԴ:
ԼԵ (ԼԴ). Կանոնք Վաչագանայ Աղուանից գլուխ ԻԱ:
ԼԶ (ԼԵ). Կանոնք Բասղի պէսպէս ախտից գլուխ ՄՀԲ:
ԼԷ (ԼԶ). Կանոնք Աստուածաբանի գլուխ Լ:
ԼԸ (ԼԷ). Կանոնք Դւնայ սուրբ ժողովոյն գլուխ ԺԲ:
ԼԹ (ԼԸ). Կանոնք Մակարայ Երուսաղէմի հայրապետի գլուխ Թ:
Խ (ԼԹ). Կանոնք Սահակայ Հայոց կաթողիկոսի գլուխ Ա:
ԽԱ (Խ). Կանոնք Յովհաննու Մանդակունւոյ գլուխ Ա:

ԻԶ. Կանոնք Եպիփանու գլուխ Ե:
ԻԷ. Կանոնք Եփեսոսի ժողովոյն գլուխք Զ:
ԻԸ. Կանոնք Կիւրղի Աղեքսանդրացւոյ գլուխ Ե:
ԻԹ. Կանոնք սրբոյն Սահակայ Հայոց հայրապետի գլուխք Ե:
Լ. Կանոնք միաբան Հայոց գլուխ Ի:
ԼԱ. Թուղթ Սեւանդեայ գլուխ ԺԳ:
ԼԲ. Կանոնք Երկրորդ Անտիոքայ գլուխ Թ:
ԼԳ. Կանոնք Յովհաննու Մանդակունւոյ գլուխս Թ:
ԼԴ. Թուղթ Աբրահամու առ Վաչագան գլուխք Գ :
ԼԵ. Կանոնք վերջնոյ Սահակայ գլուխք ԺԵ:
ԼԶ. Կանոնք տեառն Յովհանու Իմաստասիրի գլուխք ԼԲ:
ԼԷ. Կանոնք Սիոնի կաթողիկոսի գլուխք ԻԳ:
ԼԸ. Կանոնք Վաչագանայ Աղուանից արքայի գլուխ ԻԱ:
ԼԹ. Կանոնք Դըւնայ սուրբ ժողովոյն գլուխք ԺԲ:
Խ. Սրբոյն Եղիշէի կանոնաց գրոց գլուխք Ա»[1]:

---

[1] № 656, էջ 6ար, տե՛ս նաև «Կանոնագիրք Հայոց», հատ. Ա, էջ XXXIII: Վիճակն այսպիսին է i ձեռագրում. Երբ համեմատում ենք այս երկու ցանկերի Ա-Խ համարները կրող կանոնախմբերը, առաջին հայացքից թվում է, թե i ձեռագրում առկա է Բարսեղ Կեսարացու անունով երեք կանոնախումբ՝ ԺԴ, ԺԵ, ԺԶ համարների տակ, իսկ A-ում՝ երկու՝ ԺԶ և ԼԶ, այսինքն՝ մեկով պակաս: Բանն այն է, որ A ձեռագրում ևս գտնում ենք i-ում նշված երեք կանոնախմբերը, միայն այն տարբերությամբ, որ Բարսեղի մեջ հետաքրքրող բնագիրը՝ ԺԵ-ը A-ում դրված է նույն հեղինակի ԺԶ համարը կրող կանոնախմբում որպես 51 (ԾԱ)-րդ կանոն, մինչդեռ i-ում վերջինս դրված է որպես առանձին կանոնախումբ թե՛ ցանկում և թե՛ բուն ձեռագրում: Նույնը կարելի է ասել նաև Սահակ Պարթևի կանոնախմբի վերաբերյալ: A-ում նշված է Սահակ Պարթևի անունով երկու կանոնախումբ՝ ԺԷ և Խ (ԼԹ) համարների ներքո, իսկ i-ում A-ի Խ (ԼԹ) համարի կանոնախումբը դրված է նույն հեղինակի ԻԹ համարի կանոնախմբի հետ: i ձեռագրի (Բ խմբի դրեթե բոլոր ձեռագրերում) ցանկում թեև այն չի արտահայտված, բայց բուն ձեռագրերում դրված է Սահակ Պարթևի մյուս կանոնախմբերի շարքում: Այսպիսով առայժմ զանց առնելով A ձեռագրի շարունակությունը՝ 40 կանոնախմբերից հետո և՛ A և՛ i ձեռագրերում էլ գտնում ենք միևնույն կանոնախմբերը՝ թվով 40, միայն տարբեր դասավորությամբ:

ԽԲ (ԽԱ). Կանոնք սուրբք ժողովոյն Կարնոյ գլուխ Թ։
ԽԳ (ԽԲ). Կանոնք սրբոյն Ներսիսի Գ-րդ գլուխ ԻԳ։
ԽԴ (ԽԲ). Կանոնք Յովհաննու Մանդակունւոյ գլուխ Է։
ԽԵ (ԽԳ). Կանոնք սրբոյն Դիոնիսիոսի գլուխ Ա։
ԽԶ (ԽԴ). Կանոնք Եպիփանու Կիպրացւոյ գլուխ Գ։
ԽԷ (ԽԵ). Կանոնք Յովհան.ու Երուսաղէմացւոյ գլուխ Ա։
ԽՀ (ԽԶ). Կանոնք Հիպոդիտայ սրբոյ գլուխ Ա։
ԽԹ (ԽԷ). Կանոնք Նեկտարեայ Հռոմայ գլուխ Ա։
Ծ (ԽՀ). Կանոնք Մեղիտոնի եպիսկոպոսի գլուխ Ա։
[ԾԱ. Կանոնք Աթանասի գլուխ Ա]։
ԾԲ (ԽԹ). Կանոնք սրբոյն Սեբ[ե]րիանոսի գլուխ Ա։
ԾԳ (Ծ). Կանոնք Սոկրատայ գլուխ Բ։
ԾԴ (ԾԱ). Կանոնք Դիոնիսի Արիսպագացւոյ գլուխ Ա։
ԾԵ (ԾԲ). Կանոնք Մանուէղի գլուխ Ա։
ԾԶ (ԾԳ). Կանոնք Կղեմայ Հռոմայ եպիսկոպոսի գլուխ Ա։
ԾԷ (ԾԴ). Տեառն Յովհաննու Մանդակունւոյ ի կոչումն ապաշխարութեան տունս ՃԽ[1]։

---

[1] Կանոնադիրք Հայոց հատ. Ա, էջ 3—4։ Բուն ձեռագրում գտնում ենք 57 (ԾԷ) կանոնախմբեր։ Սակայն ձեռագրի՝ ցանկում նշված են 54 (ԾԴ) կանոնախմբերի վերնագրեր։ Այդ տարբերությունը նրանից է, որ ձեռագրի բովանդակության ցանկում, անուշադրության հետևանքով, չի նշված երկու կանոնախմբերի վերնագրերը։ Ըստ բուն ձեռագրի՝ դրանք հետևյալ կանոնախմբերն են. «Կանոնական գիր տեառն եպիփանու ասացեալ գլուխք ե» և «Սրբոյ։ Աթանասի Մեծի Ա բանս»։ Սրանցից առաջինը պետք է լինի Լ և ԼԱ (ձեռագրի համարակալմամբ)՝ «Կանոնք Կիւրղի Աղեքսանդրացւոյ գլուխ Ե» և «Կանոնք եղիշէի վարդապետի գլուխ Ա» գ կրնագրերի միջև. իսկ երկրորդը՝ ԽՀ և ԽԹ (ձեռագրի համարակալմամբ)՝ «Կանոնք Մեղիտոնի եպիսկոպոսի գլուխ Ա» և «Կանոնք սրբոյն Սեր[ե]րիանոսի գլուխ Ա» վերնագրերի միջև։ Այս պակասը ուղղանկյուն փակագծերում լրացրինք մենք։ Բովանդակության ցանկի 42 (ԽԲ)-րդ համարը (ըստ ձեռագրի) սխալմամբ կրկնված է։ Այս ևս ուղղեցինք, կլոր փակագծերում պահելով սխալ նշումը։ Այս սրբագրություններից հետո ստանում ենք 57 կանոնախումբ և դրան էլ համապատասխան վերնագրեր՝ 54+3։ Ճիշտ այդ է վիճակը U ձեռագրում. այս և այլ փաստերը ենթադրել են տալիս, որ այս ձեռագիրն ընդօրինակված է A ձեռագրից, իսկ վերջում ավելացրել են «Յովհաննու Ոսկեբէրանի յաղագս սահմանի կանոնաց կարգաւորաց որք գան ի խոստովանութիւնս կանոնախումբը (էջ 186ա—188բ), վերջից թերի։

Սակայն Ն. Ակինյանի մոտ այս ցանկը ստացվել է 53 (ԾԳ) վերնագիր։ Չի բերված բուն ձեռագրում և բովանդակության ցանկում գտնվող Հովհ. Մանդակունու անունով հայտնի «ի

Երբ համեմատում ենք այս երկու ցանկերը, նկատում ենք, որ Ա ձեռագրի (Ա խմբի բոլոր ձեռագրերի, չհաշված թերինները) թե՛ բովանդակության ցանկի Ա—ի վերնագրերը և թե՛ բուն ձեռագրերի համապատասխան կանոնախմբերը գտնում ենք ի ձեռագրի (Բ խմբի բոլոր ձեռագրերի) թե՛ բովանդակության ցանկում և թե՛ բուն ձեռագրերում, թեպետ և տարբեր հաջորդականությամբ։ Այս հանգամանքը մեզ եզրակացնել է տալիս, որ ձեռագիր կանոնագրքերի այս երկու՝ Ա և Բ խմբերը սկիզբ են առել միևնույն հնագույն ձեռագրի առանձին տարբերակներից, որից հետո ժամանակի ընթացքում ընդօրինակվելով և նոր կանոնախմբեր ընդունելով, միայն շարունակության մեջ են շեղվել միմյանցից։

Քանի որ Ա—ի կանոնախմբերը տարբեր դասավորությամբ կրկնվում են ձեռագրերի այս երկու՝ Ա և Բ խմբերում, մեզ այժմ հետաքրքրում է այն հարցը, թե ո՛ր խումբն է որին նախորդել, այսինքն ձեռագրերի Բ խումբն առաջ է եկել Ա խմբի՞ց, թե ընդհակառակը։ «Կանոնագիրք Հայոց»-ի Ա հատորում հավանական համարել էինք առաջին վարկածը[1], ևս ահա թե ինչո՛ւ։

Անկյուրիայի կանոնախմբի առաջաբանում, որը, ինչպես երևում է, Հովհ. Օձնեցու հիշատակարանից, դրել է ինքը[2], կարդում ենք. «Այս կանոնք (իմա՛. Անկյուրիայի —վ. Հ.) նախ են քան որ կարգեցան ի Նիկիա, այլ քանզի որ ի Նիկիայն կարգեցան յառաջագոյն գրեցան, վասն սաստիկ եւ մեծ եւ սուրբ ժողովոյն, որ ժողովեցան ի Նիկիայ քաղաք...»[3]։ Ուրեմն, Հովհ. Օձնեցին գիտենալով հանդերձ, որ Անկյուրիայի ժողովը տեղի է ունեցել Նիկիայի ժողովից վաղ, իր Կանոնագրքում Անկյուրիայի ժողովի կանոնախմբից առաջ դնում է Նիկիայի ժողովի կանոնախումբը, որովհետև ժողովը «սաստիկ և մեծ» էր։ Այսպիսով, Հովհ. Օձնեցին իր հավաքածուն կազմելիս առաջնորդվել է ոչ թե ժամանակագրական, այլ նշանակության սկզբունքով։ Այս տեսանկյունով և բացատրությամբ հասկանալի է դառնում, թե ինչու Ա խմբի ձեռագրերում նախ դրված է Նիկիայի, ապա Անկյուրիայի կանոնախումբը։ Մինչդեռ Բ խմբի ձեռագրերում, թեև պահվել է Անկյուրիայի կանոնախմբի Հովհ. Օձնեցու վերևում նշված առաջաբանը, բայց դա չի խանգարել, որ Անկյուրիայի կանոնախումբը դրվի Նիկիայի կանոնախմբից առաջ։ Դրանով իսկ արդեն խանգարվել է առաջաբանում արտահայտված Հովհ. Օձնեցու և՛ սկզբունքը և՛ մոտեցումը։

Մի այլ փաստ. Ա խմբի հնագույն ձեռագրերում և նրանցից ընդօրինակ-

---

կոչումն ապաշխարութեան» կանոնախմբի վերնագիրը։ Նշում չկա նաև այն մասին, որ վերևում հիշված երկու կանոնախմբերի վերնագրերը բովանդակության ցանկից բացակայում են։ Եվ ստացվում է այն սխալ տպավորությունը, թե Ա ձեռագրի ցանկը, հետևապես բուն ձեռագիրը ևս, բաղկացած է 53 (+1) կանոնախմբերից և համապատասխան վերնագրերից (տե՛ս կամ հմմտ. «Թուղթ Մակարայ Բ երուսաղէմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց յաղագս կարգաց եկեղեցւոյ», Վիեննա, 1930, էջ 94—96)։ Այս թյուրիմացությունն արդյունք է այն բանի, որ Ն. Ակինյանը Ա ձեռագիրը չի տեսել և ուսումնասիրել։ Իրեն անհրաժեշտ փաստերը նա քաղել է Ս. Վ. Տեր-Ավետիսյանի Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի ձեռագրերի նկարագրության ցուցակից (նույն տեղում, էջ 94)։ Եվ սխալը գալիս է վերջինիցս (տես և հմմտ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրատան Ձեռագրաց ցուցակների անտիպ հավաքածուում, ցուցակ, էջ 1342 ար)։

[1] *էջ XXXVIII։*

[2] *Նույն տեղում, էջ 536։*

[3] *Նույն տեղում, էջ 152։*

վածներում՝ ABCDEFHU, Նիկիայի կանոնախմբի հենց սկզբում՝ նախքան վերնագիրը գրված է «դնի Դ»[1]։ Սա նշանակում է, թե Նիկիայի կանոնախումբը կանոնագրքում դրված պետք է լինի չորրորդ տեղում։ Եվ իսկապես, Ա խմբի ձեռագրերում, անկախ այն բանից, թե «դնի Դ»-ն ձեռագրերը ունեն թե ոչ, Նիկիայի կանոնախումբը դրված է չորրորդ տեղում. այսպես՝ Առաքելական, Կղեմես, Հարանց հետևողաց, Նիկիայի, Անկյուրիայի և այլն։ Բ խմբի ձեռագրերից 16-ը՝ acdefhiklmnoprst ունեն միայն «դնիհ» (d-ն «դնինն»), և չունեն «Դ» նշումը, իսկ միայն i ձեռագրում նշված է «եւթներորդ»[2]։ Այս խմբում մեզ հետաքրքրող կանոնախումբը դրված է յոթերորդ տեղում՝ Առաքելական, Կղեմես, Թադեոս, Փիլիպպոս, Հարանց հետևողաց, Նիկիա հերթականությամբ։ Միթե պարզ չէ, որ նախնական ձևը պետք է լինի Ա խմբի ունեցածը։

Այնուհետև, վերևում 1 ձեռագրի օրինակով բերեցինք Բ խմբի ձեռագրերում Ա—Ե կանոնախմբերի համակարգը։ Եթե մի պահ այս կանոնախմբերի հերթականությունից հանենք այն կանոնախմբերը, որոնք չեն մտել «Կանոնագիրք Հայոց»-ի Ա հատորի, այսինքն Հովհ. Օձնեցու հավաքածուի մեջ, բացառությամբ մեկ հատվածի, ուր հերթականությունը խանգարված է, դարձյալ կունենանք կանոնախմբերի Ա խմբի համակարգը։ Բերենք այդ համակարգն ըստ i ձեռագրի, ձախ կողմում պահելով կանոնախմբերի տվյալ ձեռագրի համարակալումները, իսկ աջ կողմում՝ կլոր փակագծերում նշելով Ա խմբի ունեցածը.

Ա. Առաքելական	(Ա)	ԻԲ. Անտիոք	(Թ)
Բ. Կղեմես	(Բ)	ԻԴ. Լավոդիկե	(Ժ)
Ե. Հարանց հետևողաց	(Գ)	Իե. Սարդիկե	(ԺԲ)
Զ. Անկյուրիա	(Ե)	ԻԷ. Եփեսոս	(ԺԴ)
Է. Նիկիա	(Դ)	ԻԹ. Սահակ Պարթև	(ԺԷ)
Թ. Գր. Լուսավորիչ	(ԺԱ)	Լ. Շահապիվան	(ԺԸ)
Ժ. Աթանաս Աղեքսանդրացի	(ԺԵ)	ԼԱ. Սևանտոս	(ԺԹ)
ԺԲ. Կ. Պոլիս	(ԺԳ)	ԼԳ. Հովհ. Մանդակունի	(ԻԱ)
ԺԴ և ԺԵ. Բարսեղ Կեսարացի	(ԺԶ)	ԼԴ. Աբրահամ Մամիկոնեից	
ԺԸ. Ներսես և Ներշապուհ	(Ի)	եպիսկոպոս	(ԻԲ)
ԺԹ. Կեսարիա	(Զ)	Լե. Վերջին Սահակ	(ԻԳ)
Ի. Նեոկեսարիա	(Է)	ԼԶ. Հովհ. Օձնեցի	(ԻԴ)
ԻԱ. Գանգրա	(Ը)		

Երբ համեմատում ենք այս համակարգը ձեռագրերի Ա խմբի ունեցածի հետ, ինչպես վերևում նշեցինք, խանգարված ենք տեսնում սկզբի մի հատվածը միայն՝

Անկյուրիա

---

[1] Նույն տեղում, էջ 114, 1-ին տողատակ։ Համմտ. նաև Ն 3562-ի «Դ. կանոնք Նիկիայ գլուխք Ի» (էջ 277ա) վկայության հետ. թեև բուն ձեռագրում կանոնախումբը նշված է վեցերորդ տեղում այս հաջորդականությամբ՝ Առաքելական, Կղեմես, Թադեոս, Փիլիպպոս, Հարանց հետևողաց, Նիկիա։ Ի դեպ, ձեռագրի մի շարք էջեր կազմելիս դասավորել են ետևառաջ, այդ պատճառով Մակար Ա-ի, Եփրեմ Ասորու և Կյուրեղ Աղեքսանդրացու կանոնախմբերը ընկել են Կղեմեսի և Թադեոսի կանոնախմբերի միջև։ Եվ ստացվում է այն սխալ տպավորությունը, թե Նիկիայի կանոնախումբը այստեղ գրված է իններորդ տեղում։

[2] Նույն տեղում։

Նիկիա
Կր. Լուսավորիչ
Աթանաս Աղեքսանդրացի
Կ. Պոլիս
Բարսեղ Կեսարացի
Ներսես և Ներշապուհ։

Ուրեմն, դժվար չէ նկատել, որ Բ խմբի ձեռագրերում կանոնախմբերի հաջորդականության հենքը Ա խմբի ունեցած համակարգն է։

Եվ ապա, երբ ուշադիր ուսումնասիրում ենք Ա—Ե կանոնախմբերի դասավորությունը ձեռագրերի Ա խմբում, նկատում ենք, որ հայ եկեղեցու ավանդական առաջին լուսավորիչ Թադեոս առաքյալի կանոնախումբը դրված է 26 (ԻԶ)-րդ տեղում, Հովհ. Օձնեցու կանոնախմբից հետո։ Ներքևում[1] Թադեոս առաքյալի կանոնախումբը ներկա ձևի մեջ համարել ենք ուշ շրջանի, նույնիսկ Հովհ. Օձնեցուց հետո հանդես եկած կեղծ գործ, որի մասին, հասկանալի պատճառով, տեղեկություն նա չուներ, այլապես կմուծեր իր հավաքածուի մեջ, որպես հայ եկեղեցում բարձր հեղինակություն ունեցող անձնավորության կանոնական գործ, մի անձնավորություն, որի անվան հետ է կապվում հայ եկեղեցու առաքելական հորդորդումը։ Այդ պատճառով էլ ճիշտ կերպով այն դրվել է Օձնեցու կանոնախմբից հետո։ Մինչդեռ ձեռագրերի Բ խմբում այն դրված է 3 (Գ)-րդ տեղում, Օձնեցու կանոնախմբից շատ առաջ։ Բանն այդպես է ընթացել Բարսեղ Կեսարացու անունով հայտնի մի այլ կանոնախմբի հետ[2], որը ուշ շրջանի կեղծիք լինելու պատճառով Ա խմբի ձեռագրերում դրված է Օձնեցու կանոնախմբից բավականին հետո՝ 36 (ԼԶ)-րդ տեղում, իսկ Բ խմբում՝ Օձնեցու կանոնախմբից առաջ 16 (ԺԶ)-րդ տեղում։ Կան նաև նման այլ փաստեր։

Ի վերջո կանոնագիրք-ձեռագրերի սկզբում դրված առարկայական ցանկը Բ խմբի it ձեռագրերում զարմանալի կերպով համապատասխանում է Ա խմբի A և սրան հարող այլ ձեռագրերի ցանկերին, երկու դեպքում էլ միևնույն 288 վերնագրերը։ it ձեռագրերում առարկայական ցանկը համապատասխանում է Ա խմբի A ձեռագրին, և ոչ թե իր՝ Բ խմբի մյուս ձեռագրերի ունեցածին, թեև այստեղ վերնագրերի դիմաց նշված հոդվածների ընդհանուր կարգահամարները տարբեր են, քանի որ տարբեր է նաև կանոնախմբերի հաջորդականությունը։

Կարծում ենք բերված փաստերը կհաստատեն այն հետևությունը, թե կանոնագիրք-ձեռագրերի Բ խումբը (i-ին հարող) առաջ է եկել Ա (A-ին հարող) խմբից։

Կանոնագիրք-ձեռագրերի Ա և Բ խմբերի լծորդության հարցը պարզելուց հետո մեզ հետաքրքրում է կարևոր այն հարցը, թե՝ Հովհ. Օձնեցու կազմած կանոնական հավաքածուն՝ կանոնագիրքը, կառուցվածքի իմաստով այս երկու խումբ ձեռագրերից ո՞րի մեջ է անաղարտ պահվել։ Առանց փաստեր բերելու, բայց փաստերը նկատի ունենալով, «Կանոնագիրք Հայոց»-ի Ա հատորում նշել էինք, որ Օձնեցու կանոնագիրքը անաղարտ է մնացել ձեռագրերի Ա խմբում[3]։ Ի՞նչ փաստեր են բերել մեզ նման եզրահանգման։ Հիշենք

1 Տե՛ս էջ XLIII—XLIV։
2 Տե՛ս ներքևում, էջ LXV—LXXI։
3 Էջ XLI։

կանոնագրքին առընթեր Հովհ. Օձնեցու հիշատակարանի մի հատվածը. «...Ոմանք առ ոմանս եւ ոչ ամենեքին առ ամենեսեան սոքա սերմանեալք, կամեցայ զբովանդակ զառ ի նոցանէն կանոնական՝ սահմանեալ բան ի միում տեղւոջ գեղեցկագործ մատենիւ ի հայրապետանոցի աստ արմատացուցանելց[1]։ Սակայն, Օձնեցին միայն ցաքուցրիվ եղած կանոնախմբերը չէ, որ ի մի է հավաքել և կազմել իր ժողովածուն։ Նա կատարել է նաև այլ բնույթի աշխատանք։ Դարձյալ լսենք նրան. «Գրեցաք ի սմա ոչ միայն զկանոնական սահմանեալն նոցա շարակարգութիւնս, այլ եւ զժամանակն եւ զպատճառն ի սոյն այս ի ներս ածեալ յաւելաւ, ընդ նմին և զգլուխս անցնիւրոց, համառաւաեալ բանիւ ի սկզբան անդ նախակարգեցաւ, զի անաշախատաբար անդուստ զբանն յիւրում տեղւոջն գտցէ խնդրողն»[2] (ընդգծումն մերն է—Վ. Հ.)։

Ուրեմն, կանոնական ցաքուցրիվ բնագրերից ժողովածու կազմելուց զատ, Օձնեցին կանոնախմբերի սկզբում դրել է իր հետազոտման արդյունքները՝ առանձին կանոնախմբերի ստեղծման ժամանակի ու պատճառի մասին տեղեկություններ և կանոնախմբերի բովանդակության համառոտ ցանկեր։ Ա խմբի ձեռագրերում այս բանը տեսնում ենք հաջորդաբար դրված Ա—ԻԴ կանոնախմբերում, իսկ այնուհետև մյուս կանոնախմբերում, որոնք Կանոնագրքին ավելացվել են Օձնեցուց հետո, նման բան չենք նկատում[3]։ Օձնեցու կազմած ժողովածուում, անշուշտ, վերջինը պետք է դրված լիներ իր անունով հայտնի կանոնախումբը։ Եվ ձեռագրերի Ա խմբում 24 (ԻԴ)-րդ համարի տակ նշված է այն։ Քանի որ կանոնախմբերի Օձնեցու տված բովանդակության համառոտ ցանկերը մասնավորապես, և նրա մեկընդմեջ տված կանոնախմբերի ժամանակի ու պատճառի մասին տեղեկությունները առկա են Ա-ից մինչև ԻԴ կանոնախմբերում, այսինքն 24 կանոնախմբերում, նշանակում է դրանով՝ 24-րդ կանոնախմբով պետք է եզրափակել Օձնեցու ժողովածուի բովանդակությունը։

Այս տեսանկյունով այժմ քննենք Բ խմբի ձեռագրերը։ Օձնեցու կանոնախումբը վերջինիս տարբեր ձեռագրերում մի երկու համարի զանազանությամբ դրված է 36—38-րդ համարների տակ, այսպես, efghilqrt-ում՝ 36, kop-ում՝ 37, abcdmsuv-ում՝ 38։ Եթե այս համարներից որևէ մեկը ենթադրաբար

---

[1] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 536։

[2] Նույն տեղում։

[3] Վերևում նշված 24 կանոնախմբերը, որոնցից բաղկացած է Օձնեցու Կանոնագիրքը, ունեն բովանդակության ցանկեր։ Բայց այս կանոնախմբերից 10-ը, որոնք, բացառությամբ Սարդիկեի կանոնախմբի, անհատ անձնավորություններ՝ Կղեմեսի, Հարանց հետևողաց, Գրիգոր Լուսավորչի, Բարսեղ Կեսարացու, Սահակ Պարթևի, Սևանտոսի, Հովհ. Մանդակունու, Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսի և Հովհ. Օձնեցու կանոնախմբերն են, Օձնեցու ասածի նման ժամանակի և պատճառի մասին տեղեկություններ՝ առաջաբաններ չունեն, որոնք կազմել է Օձնեցին։ Սրան հակառակ, 14 կանոնախմբեր՝ Առաքելական՝ Նիկիայի, Անկյուրիայի, Կեսարիայի, Նեոկեսարիայի, Գանգրայի, Անտիոքի, Լավոդիկեի, Կ. Պոլսի, Եփեսոսի, Շահապիվանի, որոնց թվում Աքանաս Աղեքսանդրացու, Ներսես Բագրեւանդացու և Սահակ Ջորափորեցու կանոնախմբերն ունեն նման առաջաբաններ։ Թե ինչո՞վ կարելի է բացատրել միօրինակության այս խախտումը՝ դժվար է ասել։ Մնում է ենթադրել, որ Օձնեցին որոշ կանոնախմբերի վերաբերյալ տվյալներ չի ունեցել (օրինակ, Սարդիկեի ժողովի մասին), իսկ որոշ կանոնախմբեր էլ, հայտնի բան են (օրինակ, Գրիգոր Լուսավորիչ, Սահակ Պարթև և այլն)։ Նկատի չունենալով նշված բացառությունները, ընդհանուր երևույթն այն է, որ առաջաբաններ տրված են ժողովների կանոնախմբերում, իսկ անհատ անձնավորությունների կանոնախմբերին՝ ոչ։

ընդունենք Օձնեցու ժողովածուի բովանդակած նյութերի վերջին սահմանը, կնշանակի այն ընդգրկել է 36—38 կանոնախումբ։ Բայց այս ճիշտ լինել չի կարող, որովհետև, ինչպես ցույց ենք տվել ներքևում[1], այստեղ ընդգրկված մի շարք բնագրեր, որոնք կազմվել են կամ ի հայտ են եկել Օձնեցուց հետո (Թադևոս առաքյալի, Բարսեղ Կեսարացուն վերագրված, Վաչագանի և Դվինի կանոնախմբերը), այս խմբում դրվել են Օձնեցու կանոնախմբից առաջ։

Մի այլ փաստ. Հովհ. Օձնեցու կատարած աշխատանքները բոլոր՝ 36—38 կանոնախմբերում չենք գտնում։ Օձնեցուց հետո Կանոնագրքին ավելացված կանոնախմբերը՝ Ա խմբի 24 կանոնախմբերից հետո մուծվածները չունեն նրա տեղեկությունները կանոնախմբերի ժամանակի և հանդես գալու պատճառի մասին, ինչպես նաև կանոնախմբերի բովանդակության համառոտ ցանկերը։ Իսկ վերջիններս ունեն միայն այն կանոնախմբերը, որոնք Ա խմբի ձեռագրերում դրված են Ա—ԻԴ համարների տակ։

Այնուհետև. երբ ուսումնասիրում ենք 24 կանոնախմբերի հաջորդականությունը Ա խմբի ձեռագրերում, նկատում ենք. որոշ սկզբունք. նախ դրված են թարգմանական՝ ասորական և ապա հունական, այնուհետև ինքնուրույն՝ հայկական կանոնախմբերը։ Այս կարգը խախտված է միայն երկու տեղ, ուր Գրիգ.որ Լուսավորչի և Սևանտոսի կանոնախմբերն իրենց տեղում չեն։ Առաջինը դրված է Լավոդիկեի և Սարդիկեի կանոնախմբերի միջև 16 (ԺԶ)-րդ համարի տակ, տեղական ժողովների թվարկման շարքում, իսկ երկրորդը՝ Շահապիվանի և Ներսես Բագրևանդացու կանոնախմբերի միջև 19 (ԺԹ)-րդ համարի տակ։ Այս խանգարումը, թերևս, կարող է հետագայում առաջացած լինել[2]։ Ձեռագրերի Ա խմբում աչքի է ընկնում կանոնախմբերի ըստ նշանակության դասավորումը։ Մինչդեռ Բ խմբի ձեռագրերում կանոնախմբերի համակարգը կարծեք դրված է ժամանակագրական հաջորդականությամբ, բայց այդ սկզբունքը, մի շարք դեպքերում, խախտված է։

Այսպիսով, վերևում բերված փաստերը մեզ բերում են այն հետևության, որ Հովհ. Օձնեցու կազմած Կանոնագրքի կառուցվածքի համակարգը պահպանվել է ձեռագրերի Ա խմբում։

Բ. ԿԱՆՈՆԱԳՐՔԻ X ԴԱՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև այստեղ պարզեցինք երկու հարց. առաջին՝ այն, որ կանոնագիրք-ձեռագրերի Բ խումբը առաջ է եկել Ա խմբից. երկրորդ՝ Հովհ. Օձնեցու Կանոնագիրքը համեմատաբար անաղարտ պահվել է ձեռագրերի Ա խմբում։ Այժմ անցնենք հաջորդ հարցին՝ Օձնեցուց հետո Կանոնագրքին ավելացված շերտերի և սրանց ժամանակի պարզաբանմանը։ Սակայն, մինչ այդ անհրաժեշտ ենք համարում նշել, որ երբ խոսք է լինում Կանոնագրքի ճոխացման, այսինքն նոր շերտերի ավելացման մասին, ապա դա չի նշանակում, թե այդ ավելացումը կատարվել է մեկ անգամից։ Պատահել է, որ Կանոնագրքի որևէ տարբերակին ավելացվել է մեկ կանոնախումբ, ինչպես օրինակ Ա խմբի

[1] էջ XLIII—CIV։

[2] «Կանոնագիրք Հայոց»-ի Ա հատորի հավելվածում հրատարակված Կանոնագրքի հնագույն և ընդարձակ մի բեկորը հաստատում է մեր այս ենթադրությունը։ Այստեղ Շահապիվանի ժողովի կանոնախմբին հաջորդում է ոչ թե Սևանտոսի կանոնախումբը, ինչպես Ա խմբի ձեռագրերում է, այլ Ներսես Բագրևանդացու և Ներշապուհ եպիսկոպոսի կանոնախումբը (էջ 665)։

BCDEFGH կամ U ձեռագրերում, որոնք A-ի նկատմամբ ունեն մեկով ավելի, թեև տարբեր կանոնախումբ[1], իսկ մեկ այլ տարբերակի, ինչպես օրինակ, միևնույն խմբի IJKLMNOQRSTVXYZWô ձեռագրերում, միևնույն երեք կանոնախմբերը[2]։ Այդպիսին է վիճակը նաև կանոնագիրք-ձեռագրերի B խմբում։ Մեր նշած երկու խմբերում կանոնագիրքն այժմյան ձևի մեջ հանդես է եկել դարերի ընթացքում։

Հովհ. Օձնեցուց հետո Կանոնագրքին ավելացված յուրաքանչյուր կանոնախմբի ստույգ կամ մոտավոր ժամանակը որոշել անհնար է փաստեր չինելու պատճառով, սակայն միանգամայն հնարավոր է որոշել կանոնախմբերի որոշ շերտերի կանոնագիրք մուծվելու մոտավոր ժամանակը։ Այդ հարցի ուսումնասիրությունը դյուրացնելու նպատակով առանձին-առանձին խոսենք կանոնագիրք-ձեռագրերի նախ A, այնուհետև B խմբին ավելացված շերտերի մասին։

Հայագիտության երախտավոր Ներսես Ակինյանը, կարելի է ասել, առաջիններից մեկն է եղել, որ զբաղվել է Կանոնագրքի կառուցվածքի և սրա կանոնական բնագրերի ավելացման ժամանակի հարցերի քննությամբ։ Այդ հարցերին անդրադարձել է իր երկու աշխատություններում[3]։ Ահա թե ինչպես է պատկերացնում նա Կանոնագրքի կառուցվածքը այժմյան ձևի մեջ։

1. «Հովհաննես Օձնեցվո Հավաքումը կը բովանդակեր ԻԴ գլուխ (իմա՛ կանոնախումբ —Վ. Հ.)։ Ա֊յսոսա֊ գլուխներով ծանոթ կ'երևա Կանոնագիրքս Անանիա Մոկացվո (943—967)։ Անանիա երբ կը գրէր յուր հերքմնագիրը խոսրով Անձևացվո տեսութիւններուն դեմ (Արարատ, 1897, էջ 277 հհ.) անծանոթ էր դեռ Մակարի Թղթին...։ Նաև Անանիա Հաղբատեցի, երբ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի (1019—1054) հրամանավ կը գրէր յուր Հակաճառութիւնը, ուներ աչքի առաջ Մակարի Թղթին ընդարձակ օրինակը և անկե կը բերեր յուր կոչումները, ուստի անծանոթ էր իրեն Թղթին համառոտ խմբագրութիւնը Կանոնագրքին մեջ։ Այս եկատառումներով կրնանք ի հառաջագունե ըսել թէ Կանոնագիրքը մինչև 1050 ծանոթ էր ճրապարակին միայն Ա—ԻԵ գլուխներով»[4]։

2. «Ընդարձակված Կանոնագրքին կը պատահինք առաջին անգամ 1098-ին, երբ հին Հավաքումը գտած է ԻԶ—ՄԳ հավելվածական մասեր։...Համեմատ դեպս Հովհ. Օձնեցվո կազմած Կանոնագրքին մեջ Ը դարու առաջին քառորդին գոյութիւն չունեին նույն մատենին այժմեան օրինակներու ԻԶ—ՄԳ—ԿԲ գլուխները, որոնց թվին մեջ են նաև Սիոն կաթողիկոսի (767—775) Կանոններն (գլուխ ԻԶ. այս համարը սխալ է նշված. պետք է լինի ԻԵ Ա խմբում, իսկ Բ խմբում՝ ԼԷ —Վ. Հ.) և Մակարի այս Թուղթը (գլ. Ա. համարը դարձյալ սխալ է նշված, պետք է լինի ԼԹ Ա խմբում, իսկ Բ խմբում՝ ԺԱ—Վ. Հ.)։ Որովհետև Ժ դարու երկրորդ քառորդին Անանիա Մոկացի չէր տեսած Կանոնագրքին մեջ Ա գլուխը և ԺԱ դարու առաջին կեսին Անանիա Հաղբատեցի կարդացած

---

[1] «Կանոնագիրք Հայոց», հատ. Ա, էջ XXXI։

[2] Նույն տեղում, էջ XXXI—XXXII։

[3] Թուղթ Մակարայ Բ երուսաղէմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց յաղագս կարգաց եկեղեցւոյ, Վիեննա, 1930, էջ 93—110։ Նույնի Աղարիա վ. Սասնեցի աստղագէտ, տօմարագէտ և տաղաչափ (Հանդէս Ամսօրեայ, 1936, VII—IX, էջ 315—320, 324—325)։

[4] Թուղթ Մակարայ Բ երուսաղէմի հայրապետի..., էջ 108։

է Մակարի Թուղթը Կանոնագրքեն դուրս, կրնանք կանոնագրքին ընդարձակված խմբագրության կանխագույն եզր նշանակել 1050, բայց ավելի ճիշտ 1098:

Տարակույս չի մնար, թե կանոնագրքին ԾԴ—ԿԲ գլուխները (ըստ Վիեննայի Թ. 810-ի)[1] ավելի ուշ ժամանակ կցված են, ուստի 1098են ետքը և 1600 են հառաջ»[2] (ամենուր ընդգծումը մերն է—Վ. Հ.):

Հիշեցնենք նաև, որ Ակինյանից բերված այս ընդարձակ քաղվածքում խոսվում է կանոնագրքի մասին ընդհանրապես, առանց նկատի ունենալու կանոնագիրք-ձեռագրերի Ա և Բ խմբերի բովանդակած նյութերի կառուցվածքը: Այդպիսի մոտեցումը չի կարող լրիվ և ճիշտ պատկերացում տալ:

Այժմ Ա ձեռագրի, ասել է թե Ա խմբի, օրինակով քննենք մեզ հետաքրքրող հարցը լծորդված Ակինյանի վերևում բերված վարկածի հետ:

VIII դարի առաջին քառորդում, երբ պատրաստ էր Հովհ. Օձնեցու կազմած կանոնագիրքը, և դրանից էլ բավական հետո՝ մինչև X դարի վերջերը, տակավին գոյություն չունեին վերջինիս ձեռագրերի այժմյան ձևի մեր բաժանման երկու՝ Ա և Բ խմբերը: Օձնեցու ժամանակ, ինչպես ճիշտ նշում է նաև Ակինյանը, Կանոնագիրքը բաղկացած էր 24 կանոնախմբերից, Ակինյանի արտահայտությամբ՝ գլուխներից[3]: Օձնեցուց հետո Կանոնագրքում առաջինը մուծվել է Սիոն կաթողիկոսի կամ Պարտավի ժողովի (768 թ.) կանոնախումբը 25 (ԻԵ)-րդ համարի տակ, Օձնեցու կանոնախմբից՝ 24 (ԻԴ)-րդ համարից անմիջապես հետո: Եվ դա հասկանալի է, որովհետև ժամանակագրական առումով այն ամենամոտն է Օձնեցուն: Այնուհետև Կանոնագրքում մուծվել են այլ կանոնախմբեր. թե ե՞րբ և քանի՞սը հայտնի չեն: Միայն Անանիա Մոկացու (X դարի 40—60-ական ԹԹ.) թղթերից իմանում ենք, որ նա օգտվել է Կանոնագրքի մի այնպիսի օրինակից, ուր, արդեն, առկա են հետագա մի շարք կանոնախմբերի ավելացումներ: Իր երրորդ և մասնավորապես չորրորդ նամակներում Անանիա Մոկացին վկայակոչում է և մեջբերումներ է կատարում Կանոնագրքի Առաքեական, Կղեմեսի, Հարանց հետևողաց, Անկյուրիայի, Նիկիայի, Բարսեղ Կեսարացու, Սահակ Պարթևի, Շահապիվանի և Երկրորդ Նիկիական կանոնախմբերից[4]: Ուրեմն X դարի կեսերին Կանոնագրքում արդեն մուծված էր Երկրորդ Նիկիական կանոնախումբը: Իսկ վերջինս Օձնեցու Կանոնագիրքն անաղարտ պահած Ա խմբի ձեռագրերում դրված է 34 (ԼԴ)-րդ համարի տակ[5]:

---

[1] Ի դեպ նշենք, որ բացառությամբ Ա հնագույն և Անկյուրիայի կարմիր վանքի մատենադարանի մի ձեռագրի, արտասահմանի ղանաղան մատենադարաններում և գրադարաններում պահվող կանոնագիրք—ձեռագրերի մասին չենք խոսում, որովհետև այդպիսիները Կանոնագրքի կառուցվածքի տեսանկյունով ուշադրության արժանի նոր բան չեն կարող տալ մեր Մատենադարանում պահվող չուրչ երկու հարյուր համանման ձեռագրերի համեմատությամբ: Ուստի մեզ հետաքրքրող հարցերի պարզաբանման համար բավարարվել ենք Կանոնագրքի գիտա-քննական բնագիրը կազմելու համար օգտագործած 50 ձեռագրերով:

[2] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 109—110:

[3] Այս ճիշտ տեսակետը 109-րդ էջում (տե՛ս վերևի երկրորդ քաղվածքում) երկիցս ժխտվում է նշելով թե Կանոնագրքին Օձնեցուց հետո ավելացրել են 26 (ԻԶ)-րդ գլխից սկսած: Քանի որ Օձնեցու Կանոնագիրքը բովանդակում է 24 գլուխ, իսկ սրան կատարված հետագա ավելացումները սկսվել են 26 (ԻԶ)-րդ գլխից, ապա ի՞նչ եղավ 25 (ԻԵ)-րդ գլուխը, որը ոչ Օձնեցու Կանոնագրքում է գտնվում և ոչ էլ հետագայում է ավելացվել, մնաց անհասկանալի: Այս գուցե, տպագրական վրիպում է:

[4] Արարատ, 1897, Հավելված, էջ 278—279, 281—282, 284—285, 287—288:

[5] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 4, հատ. Բ, էջ 73:

Ճիշտ ենք համարում Ակինյանի այն կարծիքը, թե Անանիա Մոկացին, երբ գրում էր իր հերքմնագիրը[1] խոսրով Անձևացու դեմ՝ կանոնագրքում չի գտել Մակար Ա Երուսաղեմի հայրապետի նամակը[2], այնտեղ տակավին մուծված չլինելու պատճառով, այլապես նա իր քննած հարցի վերաբերյալ ճոխ և անհերքելի տվյալներ կգտներ այնտեղ և կօգտագործեր։ Նշանակում է՝ Անանիա Մոկացու ժամանակ՝ X դարի 40—60-ական թվականներին կանոնագրքում եղել է երկրորդ Նիկիական կանոնախումբը 34 (ԼԴ)-րդ համարով և այնտեղ չի եղել Երուսաղեմի հայրապետ Մակար Ա-ի կանոնախումբը, որը դրված է 39 (ԼԹ)-րդ համարի տակ։ Կարելի՞ է ասել, թե կանոնադիրքն Անանիա Մոկացու ժամանակ եզրափակվել է երկրորդ Նիկիական կանոնախմբով։ Չենք համաձակվում։ Այդ ժամանակ կանոնագիրքը կարող էր եզրափակված լինել 34—38-րդ կանոնախմբերից որևէ մեկով կամ հենց երկրորդ Նիկիական և կամ 38-րդ տեղում դրված Դվինի կանոնախմբով։ Եթե ճիշտ է մեր ենթադրությունը թե Աղվանից արքա Վաչագանի կանոնախումբը կանոնագիրք է մուծվել Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատությունից[3], նշանակում է կանոնագրքում այն մուծվել է և դրվել երկրորդ Նիկիական կանոնախմբից անմիջապես հետո մինչև Անանիա Մոկացին և կամ վերջինից հետո դարձյալ X դարում։ Մյուս կողմից հայտնի է, որ Անանիա Մոկացին օգտվել է Բարսեղ Կեսարացու կանոնախմբի ԺԲ կանոնից[4], բայց նա չգիտե վերջինիս անունով հայտնի երկրորդ կանոնախմբի մասին, որովհետև եթե գիտենար՝ զանազանելու նպատակով անպայման կնշեր կանոնախմբի համարը (ասենք՝ Բարսեղի առաջի՞ն, թե երկրորդ կանոնախումբ), երբ մեջ էր բերում ԺԲ կանոնը, ինչպես նշում է երկրորդ Նիկիականի համար՝ տարբերելով իսկական Նիկիայի կանոնախմբից։ Ի դեպ՝ այդպես է վարվել Մխիթար Գոշը, երբ օգտագործել է Բարսեղի երկու կանոնախումբն էլ։ Եվ մեզ այնպես է թվում, որ այս կանոնախումբը, որը Կանոնագրքում դրված է 36 (ԼԶ)-րդ տեղում, Աղվանից Վաչագան արքայի կանոնախմբից անմիջապես հետո, Անանիա Մոկացու ժամանակ Կանոնագրքում տակավին մուծված չէր։ Դժբախտաբար այս վարկածը լոկ մի ենթադրություն է, որը դեռ կարիք ունի ավելի հիմնավոր փաստարկման։

Համենայն դեպս մեզ համար պարզ է դառնում այն, որ կանոնագրքի VIII դարի խմբագրությունում ընդգրկված Ա—ԻԴ կանոնախմբերին Օձնեցուց հետո մինչև Անանիա Մոկացին ավելացվել են ԻԵ—ԼԴ կամ ԻԵ—ԼԸ կանոնախմբերը հետևյալ հաջորդականությամբ՝ Սիոն կաթողիկոսի կամ Պարտավի, Թադեոս և Փիլիպպոս առաքյալների, Անտիոքի (Բ), Եփրեմ Ասորու, Կյուրեղ Աղեքսանդրացու, Եպիփան Կիպրացու, Եղիշեի, Անտիոքի խոստովանության, երկրորդ Նիկիական, Վաչագանի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստվածաբանի և Դվինի կանոնախմբերը։ Հետևապես, ճիշտ չենք համարում Ակինյանի երկիցս

---

[1] Իմա՛ երկրորդ նամակը, Արարատ, 1897, Հավելված, էջ 275—277։

[2] Այս նամակի ընդարձակ բնագիրը, որից օգտվել է Անանիա Շիրակացին VII դարում, և ոչ Անանիա Հաղբատեցին XI դարում, ինչպես սխալմամբ կարծում է Ակինյանը, (այս մասին տե՛ս ներքևում, էջ XCII—XCVI), մեզ չի հասել, իսկ համառոտ խմբագրությունը ավելի անագան մուծվել է Կանոնագրքում 39 (ԼԹ)-րդ համարի տակ (տե՛ս Կանոնադիրք Հայոց, հատ. Ա, էջ 4, հատ. Բ, էջ 216։

[3] Տե՛ս ներքևում, էջ 345—346։

[4] Արարատ, 1897, Հավելված, էջ 282։ Հեղինակը ԺԲ-ի փոխարեն նշում է «երեքտասան»։

հայտնած կարծիքը, թե «կանոնագիրքը մինչև 1050 (իմա՛ Անանիա Հաղբատեցու ժամանակ —Վ. Հ.) ծանոթ էր հրապարակին միայն Ա—ԻԲ գլուխներով»[1] կամ «Այսքան գլուխներով (իմա՛ 24, որ բովանդակել է Օձնեցու հավաքածուն—Վ. Հ.) ծանոթ կերևա Կանոնագիրքս Անանիա Մոկացվո (943—967)»[2]։ Այլ խոսքով, Օձնեցուց հետո մինչև Անանիա Մոկացին Կանոնագրքում ավելացումներ չեն կատարվել։ Ինչպես նկատեց ընթերցողը, վերևում ցույց տվեցինք հակառակը։

X դարի կեսերից՝ Անանիա Մոկացուց հետո Կանոնագրքում ավելացրել են նոր կանոնախմբեր։ Սակայն դարձյալ դժվար է որոշել դրանց յուրաքանչյուրի ստույգ ժամանակը։

Հայտնի է, որ Մխիթար Գոշը մեծ չափով օգտագործել է Կանոնագիրքը իր Դատաստանագիրքը կազմելիս։ Բայց դա չի նշանակում, թե նա օգտագործել է Կանոնագրքի այժմյան ձևի մի տարբերակը, ընդհակառակը, ինչպես Ս. Տիգրանյանն է ցույց տվել, Մխիթար Գոշը կանոնական կարգը քաղել է Կանոնագրքի մի հին օրինակից[3]։ Ս. Տիգրանյանի այդ կարծիքը թեև ճիշտ է, բայց նա, դժբախտաբար, ընդհանուր դիտողությունից այն կողմ չի անցնում։ Փորձենք մասնավորեցնել այս հարցի պատասխանը։ Մխիթար Գոշի մի վկայությունից թերևս կարելի է եզրակացնել, որ նա իր ձեռքի տակ ունեցել է մի այնպիսի Կանոնագիրք,[4] որի վերջին կանոնախումբը եղել են 645 թ. Դվինում տեղի ունեցած ժողովի որոշումները։ Իր Դատաստանագրքի Ա մասի ՃԴ հոդվածում Գոշը Կանոնագրքից գրեթե բառացի մեջբերելով 645 թվի Դվինի ժողովի է կանոնը, վերջում ավելացնում է. «Զայս իսկ առեալ է վերջնոյ կանոնի զհրամանե, զոր եւ մեք չափաւորապէս ըստ զանազանութեան եդաք...»[5] (ընդգծումը մերն է —Վ. Հ.)։ Այս հատվածի առիթով Վ. Բաստամյանցը իր ծանոթագրություններից մեկում գրում է. «Ինչպես երևում է մեր Մխիթարի ձեռքին եղել է Կանոնագրքի մի այնպիսի օրինակ, որը վերջանում է եղել Դվինի հինգերորդ ժողովի կանոններով, որովհետև Դատաստանագրքիս սույն Առաջին մասնի մեջ, նա բացի այդ ժողովի կանոններից, այլևս քաղվածք չէ անում ուրիշ կանոններից։ Թեպետ Գոշի վերաբերմամբ պետք է վերջին ժողով համարվի Պարտավի երկրորդ ժողովը, որը եղավ 768 թվին՝ Սիոն կաթողիկոսի ժամանակ, ըստ որում հետևյալ ժողովները, որ եղան մինչև Մխիթարի ժամանակը, չհաստատեցին կանոններ, բայց որովհետև նախ մեր կանոնագրքերի մեջ ժողովները չեն դասավորված ժամանակագրական կարգով, և երկրորդ՝ Դվինի Ե ժողովը, որ եղավ 123 տարի Պարտավի Բ ժողովից առաջ, դրած է կանոնագրքերի մեջ ղորանից հետո ուստի մեր հեղինակը դյուրությամբ կարող էր սխալվել և Դվինի Ե ժողովը համարել վերջին ժողով։

---

[1] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 108։

[2] Նույն տեղում։

[3] „Судебная книга" Мхитара и „Книга канонов", стр. 69—71 (տե՛ս Известия Кавказского историко—археологического Института в Тифлисе, том III, Тифлис, 1925, стр. 61—72).

[4] Մեզ անհիմն ու անտեղի է թվում Ս. Տիգրանյանի քննադատական այն դիտողությունը, որ իբր թե Վ. Բաստամյանցի կարծիքով Մխիթարն իր Դատաստանագիրքը կազմելիս օգտվել է ոչ թե «Կանոնագիրք Հայոց» ամբողջական ժողովածուից, այլ կանոնական տարբեր հուշարձաններից (տե՛ս նշված հոդվածը, էջ 63, 68)։

[5] Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, էջ 211։

Ահա, կարծեմ, միայն այսպիսով կարելի է բացատրել կանոնիս խոսքերը՝ զայս իսկ առեալ է վերջնոյ կանոնի զհրամանն»[1]։

Վ. Բաստամյանցն իր կարծիքի սկզբի ճիշտ դրույթից՝ «Մեր Մխիթարի ձեռքին եղել է կանոնագրքի մի այնպիսի օրինակ, որը վերջանում է եղել Դվինի հինգերորդ ժողովի կանոններով» հրաժարվում է և կարծում, թե, «վերջնոյ կանոնի զհրամանն» ասելով Գոշը թերևս նկատի է ունեցել Հայաստանում տեղի ունեցած ժողովների ժամանակագրական կարգը և Դվինի ժողովի համեմատ կանոններ հաստատող վերջին ժողովը համարելով Պարտավինը «մեր հեղինակը դյուրությամբ կարող էր սխալվել և Դվինի ե ժողովը համարել վերջին ժողովը»։ Այստեղ չի երևում Վ. Բաստամյանցի որոշակի կարծիքը և նա իզուր է մեղադրում Գոշին։ Հետևյալ երկու փաստերի համադրումը և դրանից բխող եզրակացությունը ճշտություն են մտցնում այդ հարցում և ժխտում Վ. Բաստամյանցի վարկածի երկրորդ մասը։

Վերևում նշված հոդվածում Ս. Տիգրանյանը համեմատելով Գոշի Դատաստանագրքի և կանոնագիրք-ձեռագրերի B (մեր բաժանմամբ Ա) խմբի համապատասխան կանոնախմբերի հաջորդական կարգը, դրում է. «Դատաստանագրքում կանոնադրությունների (իմա՝ կանոնախմբերի —Վ. Հ.) հետևողական դասավորության կարգը հենց այն է, որի մեջ այդ նույն կանոնադրությունները դասավորված են Կանոնագրքի կազմում, նրա B խմբի ժողովածուներում»[2]։ Այնուհետև եզրակացնում է. «Այսպիսով, Մխիթարը կանոնական կարգը քաղել է Կանոնագիրք ժողովածուից, օգտվելով նրա հին օրինակից...»[3]։ Մյուս կողմից, իրավացի է Վ. Բաստամյանցը, երբ վերևի ընդարձակ քաղվածքում գրում է, թե Դատաստանագրքի առաջին մասում Գոշի մեջբերումները Կանոնագրքից ավարտվում են Դվինի 645 թվի ժողովի կանոնների քաղվածքներով։ Հետևապես Գոշի «Զայս իսկ առեալ է վերջնոյ կանոնի զհրամանն» խոսքերն այլ բան չեն նշանակում, քան այն, որ իր ձեռքի տակ եղած Կանոնագիրքը եզրափակվել է 645 թվի Դվինի ժողովի կանոնախմբով, որը Ա խմբի ձեռագրերում դրված է 38 (ԼՀ)-րդ համարի տակ։

Այսպիսով, և՛ Անանիա Մոկացու և՛ Մխիթար Գոշի օգտագործած կանոնագիրք-ձեռագրերը չեն ունեցել Երուսաղեմի հայրապետ Մակար Ա-ի կանոնախումբը։ Հիշեցնենք նաև, որ Գոշի ժամանակ՝ XII դարի վերջերին Կիլիկիայում արդեն գոյություն ուներ Ա խմբի ձեռագրերից հնագույնը՝ A-ն, ընդօրինակված 1098 թվականին, այն էլ 57 և ոչ թե 38 կանոնախմբով, ինչպես էր Գոշի ունեցած օրինակը։ Հնարավոր է, որ Անանիա Մոկացու ձեռքի տակ եղած Կանոնագրքի օրինակը ավարտված լիներ նույն այս՝ 645 թվի Դվինի ժողովի կանոնախմբով։ Գոշի ունեցած Կանոնագրքի օրինակի ծագումը պետք է ընդունել ոչ թե իրեն մոտ ժամանակներում, այլ շատ ավելի հին՝ Անանիա Մոկացու ժամանակներում կամ ավելի վաղ. իսկ սրա մի այլ օրինակում շարունակել են ավելացնել Մակար Ա-ի[4] և Սահակ Պարթևի «Գիր աւանդութեան»

---

[1] *Նույն տեղում, էջ 211, ծանոթ. 413։*

[2] *Տե՛ս նշված աշխատությունը, էջ 70։*

[3] *Նույն տեղում, էջ 71։*

[4] *Երուսաղեմի հայրապետ Մակար Ա-ի Թուղթը Հայոց Վրթանես կաթողիկոսին (տե՛ս սույն հատորում՝ Լթ համարի տակ) գտնվում է նաև «Գիրք Թղթոցս»-ի 407—412-րդ էջերում (այս միակ հրատարակությունը կատարվել է 1901 թվին Թիֆլիսում, 1298 թվին ընդօրինակված ձեռագրից)։ Մատենագրական հուշարձանի ճոխացման փայլուն օրինակ է նաև այս ժողովածուն։*

կանոնախմբերը 39 (ԼԹ)-րդ և 40 (Խ)-րդ համարների տակ։ Ուստի ընդունելի չէ Ակինյանի այն կարծիքը, թե «Ընդարձակված Կանոնագրքին կը պատահինք առաջին անգամ 1098-ին, երբ հին Հավաքումը գտած է ԻՁ—ԾԳ հավելվածական մասեր» (ընդգծումը մերն է—Վ. Հ.)։ Ընդհակառակը, ինչպես ցույց տվեցինք վերևում Կանոնագրքի հին հավաքմանը առաջին անգամ հանդիպում ենք Անանիա Մոկացուց մի փոքր հետո՝ X դարի վերջերին ԻԾ—Խ ավելացված կանոնախմբերով, որոնք պահված են Ա խմբի ձեռագրերում։ Եվ սա էլ հանդիսանում է Կանոնադիրք X դարի խմբագրությունը, որի մասին չի խոսում Ակինյանը։

Այսպիսով, X դարի 90-ական թվականներին Կանոնագրքի տվյալ օրինակն ընդգրկում էր քառասուն կանոնախումբ, ներառյալ Հովհ. Օձնեցու ժողովածուն։ Կանոնագրքի այս բովանդակությունն այն գումարն է, որի մասին ձեռագրերի Ա և Բ խմբերի առնչությունների հարցը քննելիս, վերևում խոսեցինք որպես որոշակի մի ժամանակաշրջանում ամբողջական դարձած մատենագրական հուշարձանի։

Ինչպիսի՞ փաստերով Հովհ. Օձնեցու ժողովածուն և սրան ավելացված ԻԾ—Խ կանոնախմբերը դիտում ենք մի գործ, որից առաջ եկավ կանոնագիրքձեռագրերի Բ խումբը՝ ի տարբերություն Ա խմբի միևնույն նյութի այլ դասավորության։ Եվ ապա՝ այդ հարցը ինչո՞ւ ենք կապում X դարի 90-ական թվականների հետ։ Այս հարցերի պարզաբանմանը օգնում է ձեռագրերի բազմիցս հիշված Բ խումբն իր ենթախմբերով։ Ուստի դիմում ենք այդ խմբի ձեռագրերին։

it ձեռագրերը բովանդակության ցանկում ունեն 40 կանոնախմբի վերնագիր և այդ հաջորդականությամբ էլ կանոնախմբերը դասավորված են բուն ձեռագրերում։ Սակայն ԻԸ՝ Կյուրեղ Աղեքսանդրացու կանոնախմբի ընդօրինակումով ձեռագրերն այնուհետև մնում են թերի, չընդօրինակվելու պատճառով։ Կասկածից վեր է, որ եթե ընդօրինակությունը շարունակվեր, ապա մնացած կանոնախմբերը նույն հաջորդականությամբ կլինեին մինչև վերջ, Եղիշեի «Վասն դիւահարաց»՝ Բ խմբի ձեռագրերի 40-րդ կանոնախումբը։

Ձեռագրերի մյուս ենթախմբում՝ hlou-ում այլ բան ենք տեսնում 40 կանոնախմբերից հետո։ I ձեռագրի բովանդակության ցանկում նշված են it ձեռագրերի պարունակած Ա—Խ կանոնախմբերի վերնագրերը։ Միևնույն հաջորդականությամբ էլ կանոնախմբերը դասավորված են բուն ձեռագրերում, սակայն դրանից հետո ավելացված են նոր կանոնախմբեր, որոնց վերնագրերը

Վերջինիս XI դարի ծավալը փոքր է և եզրափակվում է հրատարակության 218-րդ էջով։ Այս մասին տե՛ս ներքևում, էջ XLVII։ Գրիգոր Վկայասերի ժամանակ, 1078 թվին, Մակարի Թուղթը «Գիրք թղթոց»-ում չէր մտել, որովհետև այն տակավին ծանոթ չէր։ Այս Թուղթը ծանոթ չէր նաև Անանիա Մոկացուն, քանզի, ինչպես ցույց տվեցինք վերևում, վերջինս երբ X դարի կեսերին գրում էր իր հերքմնադիրը խոսրով Անձևացու դեմ՝ Կանոնագիրքը օգտագործելիս Մակարի Թուղթը այնտեղ չէր տեսել։ Մյուս կողմից Մակարի Թուղթը Կանոնագրքում տեսնում ենք X դարի 90-ական թվականների խմբագրության մեջ։ Այսպիսով, որևէ վանքի հնագույն մի ձեռագրից հայտնաբերվել է այն և մուծվել Կանոնագրքում Անանիա Մոկացուց՝ X դարի կեսերից մինչև նույն դարի 90-ական թվականներին ընկած միջոցում։ Այնուհետև բավականին ուշ, գուցե և Թովմաս Հռոմկլայեցու 1298 թվի ընդօրինակության ժամանակ, «Գիրք թղթոց»-ում այն մուծվել է Կանոնագրքից։

չեն նշված բովանդակության ցանկում[1]։ Վիճակը ճիշտ այդպիսին է Անկյուրիայի կարմիր վանքի մատենադարանում պահվող մի ձեռագրում[2]։

Մի այլ ենթախմբում՝ acdkmpsv նույնությամբ պահված են it-ի Ա—Խ և hlou-ի ԽԱ—ԿԵ կանոնախմբերը և այնուհետև կանոնախմբերը թե բովանդակության ցանկում և թե բուն ձեռագրերում շարունակվում են[3]։

Վերջապես Բ խմբի befgq ձեռագրերի ենթախմբում Ա—Խ կանոնախմբերը գտնում ենք միևնույն հաջորդականությամբ, ինչպես it և վերևում նշված մյուս ձեռագրերում է, սակայն 40 (Խ)-րդ կանոնախմբից հետո այս ենթախմբի շարունակությունը տարբեր է վերևում նշված ձեռագրերից[4]։

Այսպիսով, միևնույն Ա—Խ կանոնախմբերը կանոնագիրք-ձեռագրերի Բ խմբի բոլոր ենթախմբերում կրկնվում են և այնուհետև շարունակությունների մեջ շեղվում։ Այս պարագան մեզ բերեց այն եզրակացության, որ Կանոնագիրքը Հովհ. Օձնեցուց հետո ճոխացվելով մի որոշ և հայտնի ժամանակում բովանդակել է 40 կանոնախումբ։

Հօգուտ այս եզրակացության խոսում է նաև հետևյալ փաստը. Ա խմբի հնագույն A ձեռագիրը բաղկացած է 57 կանոնախմբերից՝ բաժանված 1332 կանոնների, սակայն ձեռագրի սկզբում դրված առարկայական ցանկում արտահայտված են 40 կանոնախմբերի 1257 կանոնները։ Մնացած կանոնախմբերն իրենց կանոններով արտահայտված չեն առարկայական ցանկում։

---

[1] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ XXXIV—XXXV։ Միևնույն բանն է կրկնվում նաև Γ ձեռագրում, միայն այն տարբերությամբ, որ շարունակությունը կազմում է ոչ միայն hlou-ի ունեցածը, այլ ավելին, ինչպես acdkmpsv ձեռագրերը։ Այս ենթախմբի hou ձեռագրերը՝ սկզբից թերթ ընկնելու պատճառով՝ չունեն կանոնախմբերի բովանդակության ցանկերը։ Քանի որ hlou ձեռագրերը նյութի կառուցվածքի և այլընթերցումներով միմյանց համընկնում են, չենք կասկածում, որ եթե այդ երեք ձեռագրերի սկզբի թերթերի կորուստը չլիներ, այդտեղ էլ կնկատեինք, այն ինչ l-ում։

[2] Ինչպես նշում է Ցուցակի հեղինակ Բարդեն Կյուլեսերյանը, ձեռագրի սկզբում դրված է մի ցանկ. «որուն համեմատ ԼԹ գլուխներե բաղկացած պիտի ըլլա կանոնագիրքը, և այդ ԼԹ գլուխներուն առաջինն է Առաքելական կանոնք, իսկ վեցինը՝ Սրբոյն Ծղիշէի կանոնները, բայց կանոնագիրքս իրողության մէջ կը բովանդակե ավելի գլուխներ (Ցուցակ ձեռագրաց Անկիւրոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 231)։ Բերված ցանկից երևում է, որ նշված ԼԹ-ի փոխարեն պետք է լինի Խ։ Այդ թյուրիմացությունն արդյունք է տպագրական սխալի։ Կանոնախմբերը քվելիս ՀԷ-ից հետո համարակալումը փոխանակ շարունակվելու՝ ՀԸ, ՀԹ և այլն, այն նորից ետ է դնում՝ ՀԶ, ՀԷ, ՀԸ (նույն տեղում, էջ 233), և այսպես մինչև վերջ։ Մյուս կողմից ԼԹ համարի տակ նշված է ոչ թե Ծղիշեի կանոնախումբը, ինչպես նշում է Բարգեն Կյուլեսերյանը, այլ Հովհ. Կ. Պոլսի հայրապետի, որը հաջորդում է Ծղիշեի կանոնախմբին և hlou ձեռագրերում դրված է 41-րդ համարի տակ։ Այսպիսով, այստեղ էլ ցանկում և բուն ձեռագրում նույն 40 կանոնախմբերն են, իսկ շարունակությունը hlou և ապա acdkmprsv-ի նման։ Այն տարբերությամբ միայն, որ 40 կանոնախմբերի շարքում «Խոստովանութիւն Անտիոքայ» գրության (ԻԹ համարի տակ) փոխարեն այստեղ Ծ համարի տակ կրկնված է Փիլիպպոս առաքյալին վերագրված կանոնախումբը (նույն տեղում, էջ 231)։

acdkmprsv ենթախմբի acdr ձեռագրերին է համապատասխանում նաև Մատենադարանի «կողմից վերջերս ձեռք բերած № 10311 ձեռագիրը, ընդօրինակված 1637 թ.։ Այն չենք օգտագործել սույն հատորում, վերջինս ավարտված և տպագրության հանձնված լինելու պատճառով։

[3] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ XXXV—XXXVI։ Այս ենթախմբին է պատկանում նաև ամերիկաբնակ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի ձեռագիրը, որի լուրատիպ պատճենը վերջերս շնորհակալությամբ ստացանք նրանից։

[4] Նույն տեղում, էջ XXXVI—XXXVII։

[5] Նույն տեղում, էջ 5—17։

Արդ՝ ի՞նչ նյութեր են դրանք։ Վերջիններս այն նյութերն են, որոնք ավելացվել են A ձեռագրում նախագաղափար ձեռագրի ունեցած 40 կանոնախմբերին[1]։

Եթե մինչև այժմ մեր ջանքերն ուղղված էին կանոնագիրք-ձեռագրերի նախքան այժմյան ձևի մեր բաժանման երկու խմբերի հանգես գալը ցույց տալուն և վերջինիս 40 կանոնախմբեր պարունակելու խնդրի պարզելուն, ապա այժմ պարզենք այն հարցը, թե կանոնագիրք-ձեռագրերի B խումբը երբ հանդես եկավ։

Վերևում, երբ խոսում էինք Կանոնագրքի կառուցվածքի մասին՝ մեկից ավելի անգամներ նշեցինք, որ Կանոնագիրքը 40 կանոնախմբերով հանդես եկավ X դարի վերջերին կամ նույն դարի 90-ական թվականներին։

Հովհ. Օձնեցու կազմած Կանոնագրքին նոր կանոնախմբերի ավելացման մասին խոսելիս, նկատեցինք, որ B խմբի մի քանի ձեռագրերում՝ abefgkmpqrs որոշակի տեղում կանոնական բնագրերն ընդհատվում են պատմական բնույթի նյութերով, որոնք բացառությամբ մեկի[2], կապ չունեն Կանոնագրքի բովանդակած նյութերի հետ, և այնուհետև դարձյալ շարունակվում են կանոնական բնագրերը։ Պատմական բնույթի այդ նյութերը befgq ձեռագրերում գտնվում են 40 (խ)-րդ և 41 (խԱ)-րդ՝ ծղիշեի «Վասն դիւահարաց» և «Թուղթ զոր առաքեաց Յակոբոս առ Կողրատոս» կանոնախմբերի միջև։ Այդ նյութերը կբերենք e ձեռագրի համաձայն.

1. «Նիկիոյ սուրբ ժողովոյն անուանքն են այսոքիկ։
2. Եւ որք ի Կեսարիա ժողովեցան։
3. Յետ մատենի ժամանակագրութեան թագաւոր տէրանց աշխարհիս արանց Արշակունեաց։
4. Ի սրբոյն Գրիգորէ Բագրեւան եւ Արշակունիք միտ (sic) եպիսկոպոսք վիճակ կարդեալ էին...։
5. Եպիսկոպոս Երուսաղէմի որոյ ետոյ (sic) պատրիա[ր]գք եղեն։
6. Կ. Պօլսի եպիսկոպոսք որք հայրապետք[3]»։

---

[1] A և սրան հարող ձեռագրերում (և խումբ) 40 (խ)-րդ համարի տակ գրված է Սահակ Պարթևի «Գիր աւանդութեան» կանոնախումբը, որպես 1257 (ՌՄԾԷ)-րդ կանոն։ Վերջինս արտահայտված է առարկայական ցանկի ՁԹ «Վասն հաւատոյ եւ կրանից ի Նիկիայ հաւատոյն հաստատուն լինելոյ և նզովեալ հաւատք են այսոքիք» վերնագրի ներքո (Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 9—10)։ 1257 (ՌՄԾԷ)-րդ կանոնին հաջորդող կանոնները, որոնք արտահայտում են 41—57-րդ կանոնախմբերը, առարկայական ցանկում չենք գտնում, բացառությամբ 1258 (ՌՄԾԸ)-րդ (տե՛ս Դ վերնագրի տակ, նույն տեղում, էջ 5), 1322 (ՌՅԻԲ)—1325 (ՌՅԻԵ)-րդ (տե՛ս Զ վերնագրի տակ, նույն տեղում, էջ 5) կանոնների՝ թվով 5։ Ավելի ուշադիր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք առարկայական ցանկին գրչի կողմից ավելացվել են A ձեռագրի ընդօրինակությունից հետո։ Այսպիսով, 17 կանոնախմբեր (խԱ—ՄԷ) 75 կանոններով չեն մտել 40 կանոնախմբերից բաղկացած Կանոնագրքի առարկայական ցանկի սկզբնական բնագրում, որովհետև այդպիսիները Կանոնագրքում այն ժամանակ տակավին մուծված չէին։ Դրանք չեն մտել նաև A ձեռագրի առարկայական ցանկում, որովհետև առարկայական ցանկի ընդօրինակվելուց հետո են միայն մուծվել այստեղ։

[2] Այդ Նիկիայի ժողովի մասնակիցների ցանկն է, որը հնագույն և մյուս ձեռագրերում դրված է Նիկիայի կանոնախմբին կից և այդպես էլ հրատարակեցինք «Կանոնագիրք Հայոց»-ի Ա հատորի 133—150 էջերում։

[3] Ձեռ. № 783, էջ 185ա—190ա. b (էջ 243բ—251բ) և q (էջ 146բ—152բ) ձեռագրերում չեն պահվել վերևում նշված 2-րդ և 6-րդ վերնագրերի նյութերը, իսկ g ձեռագրում չեն ընդօրինակվել 3-րդ համարի նյութի մեծ մասը և 4-րդ համարի նյութն ամբողջությամբ։

Մեզ հետաքրքրող հարցը պարզելու համար այս շարքի նյութերից ուշադրության արժանի է երրորդը, որը հայոց կաթողիկոսների ցանկն է, տրված աթոռակալության տարիների սկզբունքով։ Այս բնագիրն ավարտվում է այսպիսի հատվածով. «Յետ սորա (Խաչիկ Ա Արշարունի —Վ. Հ.) ամ մի առանց վերադիտողի մնաց աշխարհս Հայոց։ Իսկ Գագիկ Շահնշահ ժողովեալ զամենայն եպիսկոպոսն եւ զհարս ձեռնադրեն զտէր Սարգիսն հայրապետ աթոռ սրբոյն Գրիգորի, որ <է> հայ թվականն ՆԽԱ (992) էր, իսկ ի ծնընդենէ Փրկչին ՋՂԵ (995) եւ ի սկզբանց անդի ՑՆԺէ (6417)։ Սա նմանեալ սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչին»[1]։

Ուրեմն կաթողիկոսների ցանկը ավարտվում է Սարգիս Ա Սևանցու կաթողիկոս օծվելու հիշատակությամբ։ Իսկ թե վերջինս քանի տարի է հովվապետել, ցանկի կազմողին հայտնի չէ։ Այստեղից էլ նկատի ունենալով վերևում նշված թվականը՝ 992-ը[2] կարելի է եզրակացնել, որ կաթողիկոսների ցանկը

որովհետև նախագաղափար օրինակից թերթ է ընկած եղել. այդ մասին ձեռագրի գրիչը 159ա էջի ներքևի լուսանցքում գրում է. «Թուի թէ այս տեղս պակաս է և յօրինակէն է, որ չմեղադրես»։

akmps ձեռագրերում այդ նյութերը գրված են մի փոքր այլ դասավորությամբ, որը բերում ենք ըստ k ձեռագրի.

«Եպիսկոպոսք Երուսաղէմի, որք յետոյ պատրիարքք։

Կ. Պօլսի եպիսկոպոսք, որք ապա և հայրապետք։

Նիկիայ ժողովոյն անուանք։

Քահանայապետք Հայոց մեծաց։

Եպիսկոպոսք Կամսարական տանն» (էջ 218բ—227ա. նույնը տե՛ս նաև a, էջ 210բ—219ա, m, էջ 220բ—229ա, p, էջ 240բ—247ա, s, էջ 275—286ա)։ Այս ձեռագրերում չի պահվել միայն e-ի ունեցած «Եւ որք ի Կեսարիա ժողովեցան» ցանկը։

Նշված այս նյութերը հիշված ձեռագրերում դրված են ոչ թե 40 և 41-րդ՝ Եղիշեի և «Թուղթ Ցակոբայ առ Կոդրատոս» կանոնախմբերի միջև, ինչպես befgq ձեռագրերում է, այլ 40-րդ կանոնախմբից երեք (Հովհ. Ոսկեբերանի, Ագաթանգեղոսի և Մեսրոպի) կանոնախումբ հետո։ Այն հանգամանքը, որ 40-րդ՝ Եղիշեի կանոնախմբից հետո այս ձեռագրերում Կանոնագրքի բովանդակած նյութերի շարունակությունը չեղվում է, մեզ ենթադրել է տալիս որ այստեղ ևս պատմական բնույթի նշված նյութերը դրել են 40 կանոնախմբեր պարունակող կանոնագիրք-ձեռագրերի երեք կանոնախումբ ավելացնելուց հետո և կամ սկզբնական բնագրի վերջին մասը վերադասավորելով են, այսինքն՝ 40 կանոնախմբեր պարունակող կանոնագիրք-ձեռագրի վերջում գտնվող պատմական բնույթի նյութերը դրել են վերևում նշված երեք կանոնախմբերը վերադասավորելուց հետո։ Ըստ երևույթին այդպես են վարվել նույն այդ նյութերի հետ r ձեռագրում, ուր պահվել են Նիկիայի ժողովի մասնակիցների, հայոց կաթողիկոսների և Կամսարական տան եպիսկոպոսների ցանկերը (էջ 278բ—284բ), որոնք դրված են այս օրինակի վերջին՝ 78-րդ «Վասն քահանայագործութեանն» կանոնախմբից հետո։

[1] Նույն տեղում, էջ 189ար։ Տե՛ս նույնը f-ում, էջ 286աբ, g-ում, էջ 159 աբ, q-ում, էջ 152ա, իսկ b-ում հայոց թվականը նշված է «ԽԱ» (էջ 249ա)։ Կասկածից դուրս է, որ հարյուրավոր նշանակող «Ն» տառն ընկել է։ Վերջին թվականը bq-ում նշված է ՑՁԺէ (6717, էջ 249ա, էջ 152ա)։ Բերված քաղվածքը տե՛ս նաև a, էջ 218բ, k, էջ 227ա, m, էջ 227բ, p, էջ 247ա, s, էջ 285բ, r, էջ 284ա։ ampsr ձեռագրերում բնագրի ՋՂԵ-ի փոխարեն ՋՂէ, r-ում՝ ՑՆԺէ-ի փոխարեն ՑՆՇէ։ Անշուշտ երկու դեպքում էլ առկա է գրչագրական սխալ։

[2] Այս թվականի փոխարեն Ն. Մելիք-Թանգյանը նշում է 997։ Մեջբերված քաղվածքում զուգահեռաբար տրված է երեք թվական՝ հայոց ՆԽԱ (992), փրկչական՝ ՋՂԵ (995), որոշ ձեռագրերում ՋՂէ (997) և աշխարհի արարչագործության՝ ՑՆԺէ (6417), իր տարբերակներով։ 995 և 997 (ՋՂԵ և ՋՂէ) թվականներն առաջ են եկել «Ե» և «է» տառերի սովորական շփոթումից։ Ն. Մելիք-Թանգյանը հետևել է փրկչական 997 (ՋՂէ) թվականին։ Ճիշտը թերևս հայոց ՆԽԱ (441) թվականին 551 ավելացնելն է՝ 992։

կալմված պետք է լինի 992 թվականին կամ մոտակա հաջորդ մի քանի տարիներին։

Ի՞նչ դործ ունեն կանոնագրքում պատմական այս նյութերը, որոնք իրենց բնույթով անհարիր են նրան։ Այս հանգամանքից արդեն Ն. Մելիք-Թանգյանն էր եզրակացրել, որ կաթողիկոսական ցանկի գոյությունը մի շարք ձեռագրերում նշանակում է, թե այդ բնագրերը 997 թվականից առաջ են գոյություն ունեցել կանոնագրքում և սահման հանդիսացել վերջինիս վավերական և անվավեր բնագրերի միջև. նա այդպես էլ գրում է. «997 թվի այս ցանկից հետո մտածները անվավեր են, այսինքն հավելվածներ են 10-րդ և 11-րդ և այլն դարերի»[1]։

Մի կողմ թողնելով Ն. Մելիք-Թանգյանի կարծիքի մասնակի ուղղումը[2] նշենք, որ կաթողիկոսական ցանկը կազմել է մի ժամանակակից և մուծել կանոնագրքում այն ժամանակ, երբ վերջինս Հովհ. Օձնեցուց հետ ճոխացվելով X դարի 90-ական թվականներին՝ հայոց կաթողիկոսների ցանկը կազմելու պահին բովանդակում էր 40 կանոնախմբեր։ Այդ եզրակացությանն ենք հանգում այն փաստից, որ Բ խմբի befgq ձեռագրերում,—որի շարունակությունը, ի դեպ, մյուս ենթախմբերից տարբերվում է իր կարճությամբ,—նշված նյութերը դրված են 40 կանոնախմբերից հետո։ Ով մեզ այնպես է թվում, որ ծագման առումով, այս ձեռագրերը հանդիսանում են it ձեռագրերից հետո Կանոնագրքին ավելացված նոր շերտը պարունակող առաջին և հնագույն օրինակի տարբերակները. այսինքն Բ խմբի սկզբնական օրինակի տարբերակները հանդիսանում են it ձեռագրերը, իսկ befgq ձեռագրերը նաև այս խմբին կատարված առաջին ավելացումներ ունեցող հետագա օրինակները։

Ով այս ժամանակ էլ՝ X դարի 90-ական թվականներին կանոնագրքում կանոնախմբերը թերևս ժամանակագրական հաջորդականությամբ դասավորելու մղումով վերջիններս դասավորել են և ստեղծել կանոնագիրք-ձեռագրերի մեր բաժանման Բ խումբը՝ նախ it, ապա ճոխացվելով հանդես են եկել befgq, hlou և acdkmpsv ենթախմբերը։ Այսպիսով, մինչև X դարի 90-ական թվականները գոյություն չի ունեցել կանոնագիրք-ձեռագրերի Բ խումբը։

Վերևում շարադրվածից հետո կարող ենք ասել, որ X դարի վերջերին Կանոնագիրքը մեզ ներկայանում է 40 կանոնախմբերով, այն է՝ առաջին մաս՝ Օձնեցու ժողովածուն՝ Ա—ԻԴ, ապա երկրորդ մաս՝ Օձնեցուց հետո ավելացված ԻԵ—Խ կանոնախմբերով՝ Սիոնի (կամ Պարտավի) կանոնախմբից մինչև Սահակ Պարթևի «Գիր աւանդութեան» կանոնախումբը։ Այս երկրորդ մասն էլ հրապարակվում է Կանոնագրքի Բ հատորում։

---

[1] Հայոց եկեղեցական իրաւունքը, Ա գիրք, Շուշի, 1903, էջ 67, 369։

[2] Ն. Մելիք-Թանգյանը մի փոքր սխալվում է. նախ. ոչ թե անվավեր են, այլ կեղծ, երկրորդ. այդպիսին են ոչ միայն 992 թվի (հեղինակը նշում է 997) կաթողիկոսների ցանկից հետո Կանոնագրքում մուծված գրեթե բոլոր կանոնախմբերը, այլ մինչ այդ Կանոնագրքում մուծված ուրիշ կանոնախմբեր ևս, օրինակ, Թագեոս և Փիլիպպոս առաքյալներին, Գրիգոր Աստվածաբանին, Բարսեղ Կեսարացուն վերագրված և այլ կանոնախմբեր, որոնք ներկայացված են սույն հատորում։ Նման բնագրեր գտնում ենք նույնիսկ Հովհ. Օձնեցու կազմած Կանոնագրքում, օրինակ, Առաքյալների, Հարանց հետևողաց, Սևանտոսի, Թերևս Կեսարիայի կանոնախմբերը։

Գ. ԿԱՆՈՆԱԳԻՐՔ—ՁԵՌԱԳՐԵՐԻ Ա ԽՄԲԻ XI ԴԱՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկսած X դարի վերջերից, երբ արդեն կանոնագրքի հին ձեռագրերի կողքին առաջ եկավ Բ խումբը, կանոնագրքի բովանդակության ճոխացումը ձեռագրերի Ա և Բ խմբերում ընթանում էր միմյանցից անկախ երկու ուղղությամբ։

Նախ քննենք Ա խմբի ձեռագրերի X դարի 90-ական թվականներից հետո ավելացված կանոնական շերտերի հարցը։ Կանոնագիրք-ձեռագրերի հնագույնի Ա-ի հիշատակարանում գրիչը խնդրում է հիշել. «Ես ղտէր Խաչիկ, որ յերկար ժամանակ անարատ սիրով եւ յաւժար կամաւք զաւրինակս ընձեռեաց»[1]։ Ուրեմն Ա ձեռագիրն ընդօրինակվել է տեր Խաչիկի օրինակից։ Թե ի՞նչ բովանդակություն և հնություն է ունեցել վերջինս, ինչպես նշում է Ն. Ակինյանը, չգիտենք[2]։ Սակայն որոշ փաստեր այդ ուղղությամբ մեզ խորհրդածությունների առիթ են տալիս։ Վերևում ցույց տվեցինք, որ Ա ձեռագիրը թեև բովանդակում է 57 կանոնախումբ 1332 կանոններով, սակայն նույն ձեռագրի սկզբում դրված առարկայական ցանկում ընդգրկված են 40 կանոնախմբերի նյութերը՝ 1257 կանոններով։ Մնացած 17 կանոնախմբերը՝ 41—57-րդը առարկայական ցանկում չեն արտահայտվում։ Մյուս կողմից միևնույն ձեռագրի գրիչը հիշատակարանում գրում է, որ կանոնագիրք-մատյանը տեր Խաչիկի օրինակից սկսում է ընդօրինակել նախ Սև լեռան Պառլահու վանքում, այնուհետև ինչ ինչ պատճառներով կիսատ է թողնում ընդօրինակությունը, թերի ձեռագիրը և գաղափար օրինակը (տեր Խաչիկի) իր հետ վերցնելով, տեղափոխվում է Արմեն լեռան կատարին գտնվող Հովհաննա անապատը, որի վանահայր Մելիտեն և փոխանորդ Գրիգորիսը «գիտացեալ զթերութիւն գործոյս... հրամայեն լինել զպակասութիւն թերութեան գործոյս բարեաց[3]»։ Ակինյանը գրչի այս տեղեկության մասին գրում է. «Հովհաննես գրչի երկդիմի խոսքերը կարծել կու տան, թե այս օրինակությունը նախորդին (իմա՛ տեր Խաչիկի օրինակի —Վ. Հ.) թերությունները լրացնել ձգտած ըլլա։ ...Այստեղ խոսքը անշուշտ Պառլահա վանքին մեջ սկսված ընդօրինակության մասին է, որ կլրացվի Հովհաննա անապատին մեջ, ձեռնտվությամբ նույն վանքի առաջնորդներուն, բայց կարող է «լինել զպակասութիւն թերութեան գործոյս» ակնարկել նաև կանոնագրքին պակաս մասերու նոր հավելվածներով ճոխանալը»[4]։

Ակինյանը ճիշտ է, երբ գրչի այդ վկայությունն անվանում է երկդիմի, թեև երկդիմի է նաև իր ենթադրությունը։ Ով մեզ այնպես է թվում, որ գրչի «լինել զպակասութիւն թերութեան գործոյս» խոսքերը վերաբերում են և կիսատ մնացած ձեռագրի ընդօրինակության ավարտելուն և նոր կանոնախմբեր ավելացնելուն։ Ելնելով այս կարծիքից թերևս չսխալվենք, եթե ասենք, որ տեր Խաչիկի օրինակը, որից 1098 թվականին ընդօրինակվել է Ա ձեռագիրը, ունեցել է 40 կանոնախումբ, իսկ ձեռագրում պարունակված 57 կանոնախմբերից 17-ը՝ խև—Ծէ ավելացվել են 1098 թվականի ընդօրինակության ժամանակ։

---

[1] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ LX։
[2] Թուղթ Մակարայ Բ երուսաղէմի հայրապետի..., էջ 109։
[3] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ LX։
[4] Թուղթ Մակարայ Բ երուսաղէմի հայրապետի..., էջ 109։

Հետևապես, բարեփոխելով Ակինյանի կարծիքը, կարող ենք ասել, որ Հովհ. Օձնեցու կողմից կազմված և հետագայում ճոխացած Կանոնագիրքն իր ընագույն ձևի մեջ պահված է X դարի վերջին ձևավորված խմբագրության մեջ, որը և արտահայտված է A և սրան հարող ձեռագրերում։ Կանոնագրքի ներկա հատորում X դարի վերջին խմբագրությունը (Իե—Խ կանոնախմբերը) ներկայացնելու հետ միասին, ներկայացված է նաև նրա հետագա՝ XI դարի խմբագրությունը (Խև—Ծէ կանոնախմբերը), որը արդյունք է Հովհաննա անապատի վանահայր Մելիտեի և փոխանորդ Գրիգորիսի և ձեռագրի գրիչ Հովհաննեսի աշխատասիրության։

Հետաքրքրությունից զուրկ չէ այն փաստը, որ ժամանակակիցների ձեռքում՝ XII դարի վերջերին Կանոնագրքի օրինակներն ունեցել են տարբեր ծավալներ։ Թե Մխիթար Գոշի օգտագործած Կանոնագրքի բովանդակությունը, ինչպես ցույց տվեցինք վերևում, եզրափակվել է 645 թվի Դվինի ժողովի կանոնախմբով և Կանոնագրքի այս տարբերակն էլ կառուցվածքի իմաստով ունեցել է X դարի հնություն, ապա Գոշի ժամանակակից՝ Ներսես Լամբրոնացին ունեցել է Կանոնագրքի մի այլ տարբերակ, որն ավելի ճոխ բովանդակություն ուներ և որի հնությունը բովանդակության իմաստով XI դարից այն կողմ չէր անցնում։ Ներսես Լամբրոնացին իր հիշատակարաններից մեկում դրում է. «Ու խուղեալ ընդ նա մեր յարկեղս գրոց կաթուղիկոսարանին՝ ոչ գտաք օրէնս (իմա՛ քաղաքական-աշխարհական —Վ. Հ.), բայց միայն զկանոնականս, որ ի սուրբ հարց ժողովոց էր գրեալ. և որ ի նոյն յարեցաւ ի նոցանէ կանոնս զգուշաւորս եկեղեցւոյ։ Իսկ քաղաքի օրէնս ոչ գտաւ ի մէջ Հայոց, ոչ եկեղեցիս և ոչ առ իշխանս»[1] (ընդգծումը մերն է —Վ. Հ.)։

Ինչպես դժվար չէ եզրակացնել այս վկայությունից, Ներսես Լամբրոնացին կաթողիկոսարանում գտել է միայն «զկանոնականս, որ ի սուրբ հարց ժողովոց էր գրեալ»՝ այսինքն՝ Կանոնագիրք։ Թե ինչ ծավալ է ունեցել վերջինս կամ դրա մի որևէ տարբերակը, որը գտնվել է Սկևռայի վանքում, կարելի է իմանալ մեր Մատենադարանի № 3919 ձեռագրից[2]։ Դա ժողովածու է և բովանդակում է «Գործք առաքելոց», Պողոս առաքյալի թղթերի մեկնությունները և այլ նյութեր։ Ձեռագրի 207ա—218բ էջերում գտնվում է տոնացույց, ուր թվարկված են, թե տարվա ո՞ր ամսին և ո՞ր օրն ինչ տոներ են լինելու։ Տոների թվարկումը երբեմն ընդհատվում է և մեջբերումներ են արվում Կանոնագրքի զանազան կանոնախմբերի համապատասխան կանոններից, նշելով վերջիններիս կարգահամարները։ Մեջբերվածներից միայն չորս կանոնախմբերում, որոնց կարգահամարները նշված են ընդհանուր համարներով, հիշվում է, թե որտեղից են վերցրել քաղվածքները, օրինակ, «Սեբերիանոսի ի Ղուկայ Աւետարանին մեկնութենէն ի Սկետային մեծ կանոնաց գիրքն, ի ՌՅԻԴ գլու-

---

[1] Գարեգին Ա. կաթողիկոս, Հիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 600. տե՛ս և համմտ. նաև Քաղաքական օրէնք Ներսիսի Լամբրոնացւոյ, հրատ. Բասմաջյան, Պարիզ, 1907, էջ 5։

[2] Ձեռագրի փոքրիկ հիշատակարանում ընդօրինակության տարեթիվը նշված է ՉՄԲ (էջ 44ա)։ Մատենադարանի ձեռագրաց ցուցակ (Երևան, 1965) կազմողները կարծելով, որ դա սխալ է, որովհետև ձեռագրի գրչությունն իրոք XVII դարի է, հարցականով դրել են 1610 թ. (էջ 1110), ՉՄԲ-ն կարդալով ՌՄԲ։ Դա կարող է ճիշտ լինել, բայց հնարավոր է, որ դա գրչի հին հիշատակարանը լինի, որը ձեռագրի նյութերի հետ ընդօրինակվել է XVII դարում։

խընձ»[1], «ի տէր Ներսիսի Սկեւռային մեծ կանոնքն ի ՌՅԻԲ գլուխն՝ սրբոյն Դիոնէսիոսի բան յաղագս Աստուածածնին»[2], «ի նոյն կանոնացն ՌՅԻԶ գլուխն ի տէր Ներսիսի Սկեւռացւոյն գրոցն է. *Մանուէլի»*[3], «Եւ կան բանքն ի տէր Ներսիսի Սկեւռային կանոնքն *ի ՌՅԺԸ գլուխն, ուստի եւ զայս գրեցի»*[4] *(ամենուր ընդգծումը մերն է —Վ. Հ.)*:

Այս մեջբերումները[5] *ցույց են տալիս, որ նշված ձեռագիր տոնացույցում կատարված քաղվածքները վերցվել են կանոնագրքի Սկեռայի վանքի առաջնորդ Ներսես Լամբրոնացու օրինակից: Մի օրինակ, որի ունեցած Կարինի, Եպիփան Կիպրացու (Բ), Սեբերիանոսի, Հիպպոլիտի, Նեքտաոի, Դիոնեսիոսի, Մանուելի, Մելիտոնի և ուրիշ կանոնախմբերը թվով 17, կանոնական այն բնագրերն են, որոնք բացակայում են Կանոնագրքի X գարի խմբագրությունից, մինչդեռ այդպիսիները հանդիպում են XI գարի խմբագրության մեջ: Այստեղից դժվար չէ հետևեցնել, որ Ներսես Լամբրոնացու ունեցած Կանոնագրքի օրինակը XI գարի խմբագրություն է եղել և ծագել անպայման A ձեռագրից*

---

[1] Ձեռագիր № 3919, էջ 208 ար:

[2] Նույն տեղում, էջ 214 ա:

[3] Նույն տեղում, էջ 215 ա:

[4] Նույն տեղում, էջ 217 ա: Այստեղ կանոնների կարգահամարների նշումները կատարված են միայն ընդհանուր համարներով, հակառակ այլ դեպքերի: Այդպես են վարվել գուցե նրա համար, որ այս չորս կանոնախմբերը կանոնագրքում առկա են մեկական կանոններով:

Մատենադարանի № 6076 ձեռագրում, վերջինիս հետ կապ չունեցող մի հիշատակարան մեկը մուծել է ձեռագրի վերջին էջում հետևյալ բովանդակությամբ. «Թվին ՋԸ (1456) գրեցաւ կանոնագիրքս եւ այլ բաղում բանս՝ խրատականս հոգոյ եւ մարմնոյ եւ առ աստուծոյ սքանչելեացն եւ զօրութեանն եւ դաւանութեանն Ներսէս Հայրապետի օրինակէն: Իմաստնոց բաւ է» (էջ 178 բ, ընդգծումը մերն է—Վ. Հ.): Բոլոր դեպքերում «Ներսէս հայրապետի օրինակէն» արտահայտությունը մատնացույց չի անում վերևի մեջբերումներում նշված Ներսես Լամբրոնացու օրինակը, այլ նկատի ունի կանոնագրքի թերևս Ներսես Շնորհալու մի այլ տարբերակը, որը, առանց կասկածանքի, համարում ենք A ձեռագրի տարբերակներից մեկը:

[5] Մեջբերումներ կատարված են նաև Առաքելական կանոնախմբի Գ, Դ, Զ, է, Ը, ԻԴ, Նիկիայի՝ ԺԷ, Լավոդիկեի՝ ԽԶ, ԽԸ, Կարինի՝ Զ, է, Աթանասի՝ է, Ը, Սահակ Պարթևի՝ Ա, ԽԱ, ԽԳ, Եփրեմ Ասորու՝ Զ, է, Եպիփան Կիպրացու՝ Գ, Ե (երկու տարբեր կանոնախմբեր) կանոններից և այլն: Այս նշումներում, ինչպես տեսնում ենք, կանոնները հիշված են կանոնախմբերի միայն մասնավոր համարներով: Բերված կանոնների կարգահամարները, երբ համեմատում ենք A ձեռագրի համապատասխան կանոնների համարների հետ, նկատում ենք, որ կանոնների մասնավոր համարները համապատասխանում են միմյանց, օրինակ, Առաքելական Գ, Դ, Զ և այլն, իսկ վերևում բերված չորս ընդհանուր համարներից երեքը չեզվում են A-ում եղածից, թեև երկուսում էլ հաջորդականությունը նույնն է: Դեմ առ դեմ կդնենք երկու բնագրերի ունեցածը.

№ 3919 ձեռագիր	A ձեռագիր
Մելիտոն—ՌՃԺԸ	Մելիտոն—ՌՃԺԸ
Սեբերիանոս—ՌՅԻԳ	Սեբերիանոս—ՌՅԻ
Դիոնիսիոս—ՌՅԻԵ	Դիոնիսիոս—ՌՅԻԲ
Մանուել—ՌՅԻԶ	Մանուել—ՌՅԻԳ

№ 3919 ձեռագրի չարքը ցույց է տալիս, որ Ներսես Լամբրոնացու ունեցած կանոնագրքում Մելիտոնի և Սեբերիանոսի կանոնախմբերի միջև գտնվել են չորս կանոնախմբեր մեկական կանոնով՝ ՌՃԺԲ, ՌՅԻ, ՌՃԻԱ և ՌՅԻԲ համարներով, մինչդեռ A ձեռագրի նույն տեղում գտնվում է միայն մեկ կանոնախումբ՝ Աթանասինը: Կանոնների համարակալումների տարբերությունը, անշուշտ, չի կարելի բացատրել գրչագրական սխալով: Ներսես Լամբրոնացու ունեցած կանոնագրքի վերջին կանոնախմբերն, ըստ երևույթին, ունեցել են այլ հաջորդականություն, քան A-ի վերջին մասը:

կամ սրա որևէ տարբերակից[1]։ Այսպիսով, եթե Արևելյան Հայաստանում Գոշը օգտագործել էր Կանոնագրքի X դարի խմբագրության մի որևէ օրինակ, ապա նույն ժամանակ Կիլիկիայում Ներսես Լամբրոնացին ունեցել էր Կանոնագրքի XI դարի խմբագրության օրինակ։

Այժմ անցնենք Ա խմբի ձեռագրերի բովանդակության ամի քննությանը XI դարից հետո։ Այս խմբի 29 ձեռագրերը, որոնք համարում ենք XI դարի խմբագրության արդյունք, մինչև XVII դարը բովանդակության առումով քիչ են փոփոխվել։ Չհաշված թերիները, այս խմբի մնացած ձեռագրերը պահել են Կանոնագրքի XI դարի խմբագրության բովանդակած կանոնախմբերը՝ թվով 57[2], և միայն առանձին ձեռագրերում է ավելացվել մեկ կամ ամենաշատը երեք կանոնախումբ։ Այսպես, BCDEFGH ձեռագրերը, բացի AP-ի ունեցած 57 կանոնախմբերից ունեն նաև Սիմեոն Աղվանից կաթողիկոսի անունով հայտնի կանոնախումբը։ Ուրեմն այս յոթը ձեռագրերում կանոնագրքի XI դարի խմբագրությանը ավելացվել է մեկ կանոնախումբ։ U ձեռագրում ավելացվել է դարձյալ մեկ, ոչ նախորդ ձեռագրերինը, այլ Հովհան Ոսկեբերանի «Յաղագս սահմանի կանոնաց կարգաւորաց, որք գան ի խոստովանութիւն» կանոնախումբը։ IJKLMQRSTVXYZWo ձեռագրերը, թեև ունեն AP-ի 57 կանոնախմբերը, բայց բուն ձեռագրերի (և ոչ բովանդակության ցանկերի) վերջում՝ Հովհանն Մանդակունուն վերագրված «Ի կոչումն ապաշխարութեան» կանոնախմբից հետո ավելի ունեն երեք կանոնախումբ, որոնց վերնագրերը բերում ենք համաձայն T ձեռագրի.

«Նորին կանոնք երրորդ Բարսեղի Կեսարու հայրապետին արարեալ գլուխք ՀԴ (պետք է լինի ՀԷ—Վ. Հ.):

Յոհաննու Ոսկեբերանի յաղագս սահմանի կանոնաց կարգաւորաց, որք գան ի խոստովանութիւն։

Յաղագս պսակի ամուսնացելոց»[3]։

---

[1] Այս պնդումը հաստատում է նաև հետևյալ փաստը. A և սրան հարող ձեռագրերում Ծ կանոնախմբի վերնագիրն այսպես է. «Մելիտոնի եպիսկոպոսի թուղթ առ տրիպխս» (տե՛ս ներկա հատորում, էջ 285, 1-ին տողատակ)։ Ընդգծված աղավաղված անունը նույնությամբ գտնում ենք Ներսես Լամբրոնացու օրինակում, որից և անցել է № 3919 ձեռագրում բերված քաղվածքին. «Մելիտոնի թուղթն որ առ տրիպխս» (էջ 217 ա)։

[2] Նույն 57 կանոնախմբերն է բովանդակում նաև n (№ 778) ձեռագիրը, որը դասել էինք Բ խմբի ձեռագրերի շարքին, սակայն կանոնախմբերի դասավորությունն այստեղ տարբեր է Թե՛ Ա և Թե՛ Բ խմբերից։ Այս ձեռագիրը, անշուշտ, ծագել է Ա խմբի որևէ ձեռագրից, գուցե և A կամ սրա մի տարբերակից և մեր հավանական ենթադրությամբ XVII դարում, Լվովում (տե՛ս ներքևում, էջ CI—CII):

[3] T, էջ 342բ—362բ։ Q ձեռագրում այդ երեք կանոնախմբերը դարձյալ ավելացված են վերջում և ցանկում ոչ մի նշում չկա այդ մասին, սակայն մեկ ուրիշը, հավանաբար XIX դարում, բովանդակության ցանկի վերջում գրանցել է այդ երեք կանոնախմբերի վերնագրերը. «Կանոնք Երրորդ Բարսեղի Կեսարու հայրապետին արարեալ գլուխս ՀԷ։

Տեառն Յովհաննու Ոսկեբերանի յաղագս սահմանի կանոնաց կարգաւորաց, որք գան ի խոստովանութեան, գլ[ուխս] ԺԳ։

Յաղագս պսակի ամուսնացելոց հանդերձ ճիւղագրութեամբք և ազգահամարաւ» (էջ 15 ա)։

Ճիշտ այդպես է վարվել մեկ ուրիշը X ձեռագրի միևնույն կանոնախմբերի հետ, ցանկում գրելով վերևում նշված միայն առաջին երկու կանոնախմբերի վերնագրերը (էջ 13 բ)։ Այս շարքի ձեռագրերից XY-ում բացակայում է վերևում նշված ABCDEFGHPU ձեռագրերի ԾԹ համարի տակ նշված Սեբերիանոսի կանոնախումբը։

Այս երեք կանոնախմբերի մասին T ձեռագրում գրիչը թողել է հետևյալ տեղեկությունը. «Մանիչիք ով իմաստուն ընթերցողք, որ այս Գ կանոնքս՝ Բարսղի Հէ գլուխն և Յոհան Ոսկէբերանի ՃԳ գլուխն եւ Յակոբ Ղրիմեցոյ կանոնքն ոչ կայր ի բուն օրինակն. մեf յայլմէ ծեr օրինակէ գտաf եւ եդաf աստ ի կարգի, անմեղադիr լերուf»[1] (ընդգծումը մերն է—Վ. Հ.): Այս հիշատակարանն ավելի համառոտ գտնում ենք նաև T և սրան հարող մի քանի ձեռագրերի վերևում նշված երեք կանոնախմբերից առաջինի վերնագրում. «Նորին կանոնք Երրորդ Բարսեղի Կեսարու հայրապետին արարեալ, գլուխք ՀԴ, զոr ոչ կայr ի բուն օրինակն, յետոյ դտեալ յայլում յօրինակի եւ աստ եդաf»[2] (ընդգծումը մերն է—Վ. Հ.):

Եթե T ձեռագրում վերոհիշյալ հիշատակարանը չի ընդօրինակված մի ավելի հին ձեռագրից, նշանակում է այդ երեք կանոնախմբերը Կանոնագրքում մուծել է ձեռագրի գրիչ Գրիգոր քահանան 1621 թ., որից և հիշյալ հիշատակարանն անցել է նշված ձեռագրերին։ Բոլոր դեպքերում այդ կանոնախմբերը XV դարից վաղ չէին կարող մուծվել Կանոնագրքում։

Վերևում հիշված երեք կանոնախմբերը, որոնք 15 ձեռագրերի բովանդակության ցանկերում չեն մտել, բայց բուն ձեռագրերի վերջում ավելացված են, NO ձեռագրերում արդեն մտել են նաև բովանդակության ցանկերում, այդ պատճառով վերջիններիս ցանկերում նշված են ոչ թե 57 կանոնախմբերի վերնագրեր, ինչպես վերևում նշված ձեռագրերում են, այլ 60։

Սկզբից և վերջից թերի լինելու պատճառով (կան ընկած թերթեր) հնարավոր չեղավ պարզել, թե մնացած երկու ձեռագրերը՝ eu վերևում նշված ենթախմբերից որի՞ն են պատկանում։

Այսպիսով, պարզվում է Կանոնագրքի Ա խմբի ձեռագրերի բովանդակած նյութերի աճը XI դարի խմբագրությունից հետո մինչև XVII դարը։

Դ. ԿԱՆՈՆԱԳԻՐՔ-ՁԵՌԱԳՐԵՐԻ Բ ԽՄԲԻ ՃՈԽԱՑՈՒՄԸ՝ ԱՆԱՆՈՒՆԻ, ԳԵՈՐԳ ԵՐԶՆԿԱՑՈՒ (XIV—XV դդ.) ԵՎ ԱԶԱՐԻԱ ՍԱՍՆԵՑՈՒ (XVII Դ.) ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այժմ անցնենք Բ խմբի ձեռագրերի բովանդակած նյութերի աճի քննությանը։ Ինչպես ցույց տվեցինք վերևում, X դարի 90-ական թվականներից հետո Կանոնագրքի բովանդակած 40 կանոնախմբերը ենթարկվում են վերադասավորման և այնուհետև դարձյալ շարունակվում։ 40 կանոնախմբերը վերադասավորման սկզբնական վիճակում գտնում ենք այս խմբի it ձեռագրերում[3]։

Հաջորդ ենթախմբում՝ befgq ձեռագրերում մեզ ծանոթ 40 կանոնախմբերից բացի այնուհետև գտնում ենք շարունակություն, որ այստեղ բերում ենք ըստ e ձեռագրի[4].

---

[1] էջ 369բ. Հմմտ. J, էջ 329ա։

[2] T, էջ 362 բ. Հմմտ նաև J, էջ 209 ա, K, էջ 209ա, M, էջ 280 ա, S, էջ 331 բ, V, էջ 254 ա, o, էջ 190 ա։

[3] Այս ենթախմբի i ձեռագրի կանոնախմբերի հաջորդական կարգը տե՛ս վերևում, էջ VII—IX և Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ XXXIII։

[4] e և սրան հարող ձեռագրերում մեզ արդեն ծանոթ 40 կանոնախմբերին հետևում են վերևում նշված պատմական նյութերը՝ Նիկիայի և Կեսարիայի ժողովների մասնակիցների,

«ևա. Թուխտ Յակոբայ Տեառնեղբօրն առ Կոստանդիանոս (իմա՛ Կոդրատոս —Վ. Հ.):

ևԲ. Կանոնք երկրորդ Եպիփանու գլուխ Գ։

ևԳ. Կանոնք Աքադանգեղայ (sic) գլուխ Ա։

ևԴ. Կանոնք Մեսրովպայ վարդապետի Ա։

ևե. Յիշատակարան Յոհանիսի Իմաստասիրի։

ևՋ. Աւանդութիւն Հրէից վասն ողորմութեան»[1]։

Այս ենթախմբի ձեռագրերը թեև XVII դարի գրչություն ունեն՝ b-ն՝ 1632 թ., e-ն՝ 1605 թ., f-ը՝ 1611 թ., g-ն՝ 1618 թ., q-ն՝ XVII դար, սակայն դա չի նշանակում, թե այս ենթախումբը ծագել է XVII դարում։

Եթե Բ խմբի ձեռագրերից it-ն պարունակում են նույն խմբի X դարի 90-ական թվականների խմբագրության որևէ ձեռագրի սկզբնական բովանդակությունը, ասել է թե it ձեռագրերին տակավին նոր կանոնախմբեր ավելացված չեն, ապա befgq ենթախմբում արդեն կատարված է լրացման առաջին շերտը՝ ևԱ—ևՋ կանոնախմբերով։ Այս ենթախումբը իրենից ներկայացնում է կանոնագրքի լրացման մի առանձին թև, որից հետո նոր բնագրերի ավելացում տեղի չի ունեցել։

Ձեռագրերի մյուս ենթախմբերում ավելացված շերտերը կազմում են միմյանց շարունակությունը։ hlou ձեռագրերում կանոնագիրքը թեև շարունակվում է, սակայն հետաքրքիրն այն է, որ Բ խմբի it ձեռագրերում պահված կանոնախմբերի վերնագրերն ենք գտնում այս ձեռագրերից l-ի բովանդակության ցանկում[2] և այստեղ արտահայտված չենք գտնում բուն ձեռագրում նոր կանոնախմբերի ավելացումը[3]։ Այս պարագան մեզ բերում է այն եզրահանգման, որ ձեռագրերի նշված ենթախմբում կանոնագիրքը 40 կանոնախմբեր ունենալուց ղատ, ինչպես it ձեռագրում է, շարունակվել է։ hlou ենթախմբի շարունակությունը կազմող նյութերը կանոնագրքի ավելացման մի այլ թևի, ի տարբերություն befgq ձեռագրերի, առաջին շերտն է, որը հանդես է եկել X դարի 90-ական թվականների և XIV դարի կեսերի միջոցում՝ մինչև Գեորգ Երզնկացին, որովհետև մինչև վերջինս այս շերտը արդեն մուտք էր գործել կանոնագիրք։ Այդ ցույց կտանք ներքևում։ Թե ինչպիսի կանոնախմբեր են ավելացվել hlou ձեռագրերում 40 կանոնախմբերից հետո, կտեսնենք l ձեռագրի օրինակով.

«Նորին (իմա՛. Եղիշեի —Վ. Հ.) վասն ուրացողաց։

Նորին վասն երեխայից։

Յոհանու Կոստանդինուպաւլսոյ հայրապետի։

Հայոց կաթողիկոսների, Բագրեւանգի, Երուսաղեմի և Կ. Պոլսի եպիսկոպոսների ցանկերը։ Այս նյութերը ձեռագրերի բովանդակության ցանկերում չեն արձանագրված։ Սրանց հաջորդող կանոնախմբերը ցանկերում թեև նշված են և համարակալված, բայց բուն ձեռագրերում համարակալում չունեն։

[1] Էջ 5 բ. նույն հաջորդականությունը տե՛ս բուն ձեռագրում (էջ 190 ա—205 ա)։ Միայն b ձեռագրում վերջին՝ «Աւանդութիւն Հրէից վասն ողորմութեանն» նյութի փոխարեն դրված է Հակոբ Ղրիմեցու «Յաղագս աղքականութեանն» բնագիրը։ Իսկ e ձեռագրի բովանդակության երկրորդ ցանկում թեև չի նշված, բայց ձեռագրում ընդօրինակված է (վերջից թերի) Հովհ. Մանդակունու մի կանոնախոսքը (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 491—500)։

[2] Տե՛ս վերևում, էջ XXI—XXII։

[3] Γ ձեռագրի մասին տե՛ս վերևում, էջ XXII, ծանոթ. 1, և ներքևում, էջ XXXIII։

Նորին. սկս. «Զոր ինչ խնդրիցէք յանուն իմ...»[1]։
ԽՀ. Մեծի Ագաթանկեղոսի ի բանէն, որ զԿայենէ։
ԽԹ. Երանելոյն Մեսրոպայ Հայոց վարդապետի։
Ծ. Սահմանք և կանոնք կարգի եկեղեցւոյ սրբոյն Ներսէսի հայրապետի Հայոց։
ԾԱ. Կանոնք Յովանու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի գլուխ է։
ԾԲ. Նորին Յովանու Մանդակունւոյ կոչումն ապաշխարութեան։
ԾԳ. [Նորին] Խոստովանութիւն քահանայի։
ԾԴ. Կանոնք երանելոյն Եպիփանու Կիպրացւոյ եպիսկոպոսի մեծի և առաքինոյ[2] մարգարէի եւ նշանաւոր գործի գլուխ Գ։
ԾԵ. Ի հարանց կանոնացն է։
ԾԶ. Կղեմայ Հռոմայ եպիսկոպոսին։
ԾԷ. Սրբոյն Դէոնէսիոսի Աթենացւոց եպիսկոպոսի բան Ա։
ԾԸ. Սրբոյն Դէոնէսիոսի Արիսպագացոյն յաղագս աստուածային բան երկրորդ։
ԾԹ. Կանոնք սուրբ ժողովոյն որ ի Թէոդուպօլիս, որ այժմ կոչի Կարնոյ քաղաք։
Կ. Հիպոլիտայ սրբոյ բան ի ծնունդն եւ ի մկրտութիւն Տեառն գլուխ Ա։
ԿԱ. Մելիտոսի եպիսկոպոսի թուխտ առ տոյ (sic) եպիսկոպոսի գլուխ Ա։
ԿԲ. Մանուէլի գլուխ Ա։
ԿԳ. Ի Սոկրատայ գլուխ Ա։
ԿԴ. Նորին։
ԿԵ. Կանոնք տեառն Սիմէոնի Աղուանից կաթողիկոսի» (վերջից թերի)։

Ինչպես դժվար չէ նկատել l և սրան հարող hou *ձեռագրերում* it*-ի բովանդակած 40 կանոնախմբերից բացի գտնում ենք ևս 22 կանոնախմբեր։ Վերջիններում կան այնպիսիներ, որ գտնում ենք ձեռագրերի Ա խմբի XI դարի խմբագրութեան մեջ, օրինակ Կարինի, Ներսեսի, Հիպպոլիտի, Յովհաննէս Մանդակունու և այլն, սակայն կան և այնպիսիներ, որ չենք գտնում XI դարի խմբագրութեան մեջ, օրինակ, Ագաթանգեղոսի, Մեսրոպի, Աղվանից կաթողիկոս Սիմեոնի և այլն, կամ ընդհակառակը, օրինակ, Նեկտառի, Աթանասի։*

Հաջորդ՝ acdkmpsv *ձեռագրերի ենթախումբը հետաքրքիր է նրանով, որ այստեղ արդեն առկա է ավելացումների երկրորդ շերտը, այսինքն այս ենթախումբը բովանդակում է* it *ձեռագրերի Ա—Խ և* hlou *ենթախմբի ԽԱ—ԿԵ կանոնախմբերը, որից հետո դարձյալ շարունակվում է։ Այն կներկայացնենք համաձայն* m *ձեռագրի.*

«ԿԶ. Նեկտառեայ Հռոմայ եպիսկոպոսի վասն յիսնակաց գլուխ Ա։
ԿԷ. Հարցումն Թէոդոսի քահանայի առ երանելին Եպիփան վասն Քառասնորդաց և այլոց պահոցն գլուխ Ա։
ԿԸ. Յոհանու Երուսաղէմայ եպիսկոպոսի վասն յիսնակաց պահոց գլուխ Ա։

---

[1] *Ձեռագրում Դվինի ժողովի կանոնախումբը դրված է ԼԹ համարի տակ (էջ 197բ), սրան հաջորդող Ծղիջեի «Վասն դիւահարաց» կանոնախմբի համարը, որը պետք է լինի Խ, չի նշված (էջ 201 ա), այսպես համարներ չեն նշված վերևում բերված չորս կանոնախմբերի ևս, իսկ Ագաթանգեղոսի կանոնախումբը համարակալված է ԽՀ և հաջորդաբար մնացածները։ Այդ հավանաբար բացատրվում է նրանով, որ Սահակ Պարթևի կանոնախումբը l և մի քանի այլ ձեռագրերում բաժանված է առանձին վերնագրերի տակ, որպես առանձին կանոնախմբեր։*

[2] *Ձեռագրում «աւագինոյ» սխալ ձևով։*

կթ. Վասն ութ աւուր պահոց, որ յառաջ քան զծայտնութիւն գլուխ Ա[1]։
Հ. Կանոնք Ներսէսի Կլաեցոյն վասն ազգապղծութեան գլուխ Ա։
ՀԱ. Կանոնք զգուշաւոր ի խրատ քահանայից գլուխ ԺԲ։
ՀԲ. Կանոնք երկրորդ վասն զգուշութեամբ սպասաւորելոյ քահանայից սուրբ խորհրդոյն գլուխ ՃԼԲ։
ՀԳ. Եզնկայ Կողբացոյ Հայոց վարդապետի վասն պատրաստութեան հաղորդողոյ (sic) գլուխ Ա։
ՀԴ. Նորին Եզնկայ բան երկրորդ գլուխ Զ։
Հե. Բանք Անանիա Հայոց վարդապետի վասն ոչ հաղորդելոյ զժողովրդականսն աւուր Մեծի հինգշաբաթոջ գլուխ Ա։
ՀԶ. Վասն որք ասեն անգոսնելի կիրք ի մարդեղութիւնն Քրիստոսի գլուխ Ա[2]։
ՀԷ. Յաղագս նկարեալ պատկերաց գլուխ Ա։
ՀՐ. Վասն քահանայագործութեան կարգաց խրատ ի պատրաստութիւն գլուխ ԻԹ[3]։

Այսպիսով, այս ենթախումբն ընդգրկում է it և ապա hlou ենթախմբերի ունեցած 65 կանոնախմբերը և ապա ևս 13 կանոնախումբ, սակայն ընդամենը 75[4]։

Այս խմբի r ձեռագիրը, կարելի է ասել, hlou և acdkmpsv ենթախմբերի միջանկյալ օրինակ է հանդիսանում։ Յանկում նշված են 40 կանոնախմբերի վերնագրեր, այն՝ որ համարում ենք X դարի 90-ական թվականների խմբագրութիւն, համապատասխան it ձեռագրերին։ Նշված կանոնախմբերը բուն ձեռագրերում դասավորված են ցանկում եղածի հաջորդականութեամբ, բացի դրանից այստեղ գտնում ենք ինչպես hlou, այնպես էլ acdkmpsv ենթախմբերի բովանդակած նյութերը։

Վերջին՝ «Վասն քահանայագործութեան կարգաց խրատ ի պատրաստութիւն գլուխ ԻԹ» կանոնախմբին հաջորդում է մեզ արդեն ծանոթ պատմական նյութերը՝ Նիկիայի ժողովի մասնակիցների, հայ կաթողիկոսների և Կաիսարական տան եպիսկոպոսների ցանկերը։ Այնուհետև սրա շարունակութիւնը կազմում են Հակոբ Ղրիմեցու Յաղագս ազգականութեան աշխատութիւնը, Գոշի Դատաստանագիրքը, Ասորա-Հռոմեական օրենսգիրքը և այլն[5]։

---

[1] Բուն ձեռագրում «Մեր[եր]իանոս յԴուվայ Աւետարանին մեկնութենէն» (էջ 253 բ) վերնագրով։

[2] Բուն ձեռագրում «Աչլուստ ժողովածու իմաստախոհ արանց» (էջ 278 բ) վերնագրով։

[3] Վերևում բերեցինք բովանդակության ցանկը. բուն ձեռագրում կանոնախմբերը դասավորված են նույն հաջորդականությամբ։ d ձեռագրի բովանդակությունը նույնն է, միայն սխալ համարակալելու պատճառով երկուսով պակաս է ստացվել։ m ձեռագրի ցանկում թեև բացակայում է, բայց ձեռագրում ուրիշներ ավելացրել են Ներսես Շնորհալու «Ճշրատ աստիճանաց ազգականութեանն և Հակոբ Ղրիմեցու «Յաղագս պսակի» նյութերը. վերջիններս տե՛ս նաև k ձեռագրում։

[4] Թող մեր այդ նշումը տարօրինակ չթվա, քանի որ ցանկում կանոնախմբերի համարակալումը ավարտվում է 78 (ՀՐ)-ով։ Բանն այն է, որ Սահակ Պարթևի կանոնախումբը (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 363—421) այս ձեռագրերում ևս գրված է մի քանի համարի տակ, որով համարների թիվն ավելացել է։

[5] r-ին բավական մոտ է ամերիկաբնակ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի ձեռագիրը։ Պատմական նյութերն այստեղ գտնվում են Մեսրոպի և Ներսես կաթողիկոսին վերագրված

Այսպիսով, կանոնագրքի Բ հատորի գիտա-քննական բնագրի կազմման համար մեր օգտագործած 50 ձեռագրերի օրինակով պարզեցինք կանոնագրքի բովանդակության աստիճանական ճոխացումը[1]։ Մնում է ցույց տալ, թե առանձին դեպքերում այդ ճոխացումը երբ է հանդես եկել։

Այս հարցը պարզելուն մեզ օգնում է Անկյուրիայի Կարմիր վանքի մատենադարանում պահվող № 43 կանոնագիրք-ձեռագիրը, որի նկարագրության որոշ տվյալներ և այլ տեղեկություններ վերցրել ենք Բաբգեն Կյուլեսերյանի կազմած ձեռագրաց ցուցակից[2]։ Նշված ձեռագիրը Ազարիա Սասնեցու պատվերով ընդօրինակել է Աիմեոն Լեհացին, 1609 թվին, Կ. Պոլսում։ Այս ձեռագրում գտնում ենք վերևում բերված m ձեռագրի և սրան հարող ենթախմբի բոլոր կանոնախմբերը։ Կարմիր վանքի մատենադարանի օրինակի վերջին՝ «Վասն քահանայագործութեան կարգաց խրատ ի պատրաստութիւն» կանոնախմբին, որը վերջին է նաև acdkmpsv ենթախմբի ձեռագրերում, հաջորդում է հետևյալ հիշատակարանը. «Արդ՝ աղաչեմք ղորդիքդ լուսոյ... զարժանն յիշատակելոյ, զերիցս երանեալ երջանիկ րաբունին, զպետն վարժից եւ զքաջ փաղեբրայն հայկազան սեռիս, զմեծ հռետորն Գէորգ, որ ի պակասս գրոցս շատ աշխատեցաւ եւ գրեաց բազմաշնորհ մատամբն իւրով առ ի կատարել զթերին»[3] (ընդգծումը մերն —Վ. Հ)։

Գեորգ վարդապետի ինքնության մասին ունենք մեկմեկու մերժող երկու հիշատակարան՝ առաջինը գրված XV դարում Հակոբ Ղրիմեցու ձեռքով, երկրորդը՝ 1611 թ. մոտերքում Հակոբ Քյոթահիացու կողմից։ Վերևում քաղվածաբար բերված հիշատակարանի շարունակությունն ունի հետևյալ բովանդակությունը.» [Ը]նդ նմին և զՅակոբ Ղրիմեցիս, զաշակերտս մեծիս րաբունւոյ, որ զաղիւսակս և զբոլորակս դրոշմեցի, հանդերձ խրատիւք. նաև դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուածոյ մերոյ»[4]։ Այս վկայության համաձայն «զերիցս երանեալ երջանիկ րաբունին... զքաջ փաղերայն հայկազան սեռիս,

---

կանոնախմբերի միջև, ինչպես hlou ենթախումբն է։ Սրանից հետո այս ձեռագրի նյութերը դասակարգման առումով, թեև տարբեր են r-ի ունեցած նյութերի դասավորությունից, բայց դրանք գրեթե միևնույն նյութերն են։ r և այս ձեռագրերը XVII դարի գրչություն ունեն և թվում է, թե Տիրան արքեպիսկոպոսի ձեռագիրը պետք է լինի r-ի նախնական օրինակը։ Բ խմբում նշված n-ն ձեռագրի մասին այստեղ չենք խոսի, որովհետև կառուցվածքի առումով Բ խմբին չի պատկանում և երկրորդ, ինչպես վերևում նշեցինք, սրա բովանդակած նյութերը չեն անցնում կանոնագրքի XI դարի խմբագրությունից։

[1] Ի դեպ ավելորդ չի լինի, եթե ասենք, որ Հայկազյան լեզվի հուշակավոր բառարանում (Վենետիկ, Ա հատոր, 1836, Բ հատոր, 1837) օգտագործվել է կանոնագրքի Բ խմբի ձեռագրերի տված նյութը։

[2] Բաբգէն աթոռակից կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 229—268։

[3] Նույն տեղում, էջ 235։

[4] Նույն տեղում։ Այս հիշատակարանը XVII դարի (1609 թ.) գրչությամբ է մեզ հասել։ Ինչպես հաղորդում է Բաբգեն Կյուլեսերյանը, իր նկարագրած ձեռագրում չի պահվել Հակոբ Ղրիմեցու նշած աղյուսակները ու բոլորակները» (նույն տեղում, էջ 235)։

Հակոբ Ղրիմեցու վերոբերյալ հիշատակարանը մեզ թեև ծանոթ էր նախօրոք, բայց անուշադրության էինք մատնել։ Լ. Խաչիկյանը մեր ուշադրությունը հրավիրեց այդ թերացման վրա։ Հիմք ընդունելով սույն հիշատակարանը նա կարծում է, թե Հակոբ Ղրիմեցին ևս մասնակցություն է ունեցել «Կանոնագրքի» խմբագրման գործին (ԺԺ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն երրորդ, Երևան, 1967, էջ 342, ծանոթ. 2)։ Սակայն նման պնդման համար հիշատակարանը ոչ մի հիմք չի տալիս։

զմեծ հռետորն Գէորգ» է XIV դարի վերջի և XV դարի սկզբի մատենագիր, եկեղեցական գործիչ, Հովհան Որոտնեցու աշակերտ, Գրիգոր Տաթևացու ընկեր և համշիրակ, Հակոբ Ղրիմեցու ուսուցիչ Գեորգ Երզնկացին (մեռ. 1416 թ.)։

Երկրորդը, 1611 թվականից մի փոքր անագան Կ. Պոլսում ընդօրինակված կանոնագրքի հիշատակարանն է, ուր Հակոբ Քյոթահիացին գրում է. «...Ետսի անդ կանոնս, կատարեալ գիրս կանոնաց, զոր հաւաքեալ էր զկանոնս առաքելոց, վարդապետաց, հայրապետաց սրբոց, սուրբ վարդապետն Գէորգ Կիլիկեցիե, որ է Սսեցի...»[1] (ընդգծումը մերն է —Վ. Հ.)։

Այս վկայությամբ էլ խոսքը վերաբերում է XIII դարի ոչ անհայտ մատենագիր Գեորգ Համբրոնացուն կամ Սկևռացուն։

Թե Յուցակի հեղինակ Բարգեն Կյուլեսերյանը անորոշ կերպով գրում է, թե կանոնագրքի «խմբագրողն է Գէորգ Վարդապետ»[2], ապա Ն. Ակինյանը մեջբերելով Հակոբ Քյոթահիացու վերոնշյալ հիշատակարանը գտնում է, որ խոսքը վերաբերում է Գեորգ Համբրոնացուն, ուրեմն վերջինս է խմբագրել կանոնագիրքը[3]։

Այս երկու վկայություններից ո՞րն է հավաստի։ Բանն այն է, որ Հակոբ Քյոթահիացին լինելով XVII դարի անձնավորություն, տեղեկություն է հաղորդել իրենից ավելի քան երեք դար առաջ ապրող գործչի մասին։ Եվ տեղեկությունն էլ այնպիսին է, որ հնարավորություն չկա որևէ կերպ ստուգել, թե այդ տվյալը ի՞նչ փաստերի վրա է հենված և ինչքանո՞վ է հավաստի։ Հետևապես այստեղ նույնանուն գործիչների շփոթումը ոչ միայն հնարավոր է, այլև փաստ։ Մինչդեռ Հակոբ Ղրիմեցու վկայությունը վերաբերում է իր ուսուցչին և ժամանակակցին։ Եվ որ կարևոր է, մեզ հետաքրքրող հիշատակարանը, ուր գրված է, թե «...զմեծ հռետորն Գէորգ, որ ի պակասն գրոցս շատ աշխատեցաւ...» և այլն, պատկանում է Հակոբ Ղրիմեցու գրչին։ Թերևս № 8006 ձեռագրի մի հիշատակարանի «...մէկ կանոն ալ տեսի գրվել է ՌՃԻԹ (1680) թվին Ղրիմ, Յակոբ վարդապետ Ղրըմեցի, աշակերտ Գրիգոր վարդապետի և քաջ դիտապետի Եզընկացոյ»[4] վկայությունը վերաբերում է կանոնագրքի Հակոբ Ղրիմեցու օրինակից[5] արված մի այլ գրչության, որը կատարվել է 1680 թվականին, ինչպես Ազարիա Սասնեցու ընդօրինակությունը 1609 թ. դարձյալ Հակոբ Ղրիմեցու օրինակից։

Որեմն, XIV դարի վերջին և XV դարի սկզբին Գեորգ Երզնկացին[6] կանոնագիրք-ձեռագրերի մի ենթախմբին կատարել է հերթական ավելացում։ Թե այդ ավելացումը ո՞ր ենթախմբին է կատարված, թե մինչև այդ ավելացումը ի՞նչ կանոնախմբեր կային ձեռագրերի տվյալ ենթախմբում և թե Գեորգ

[1] Նույն տեղում, էջ 265—266։

[2] Նույն տեղում, էջ 234։

[3] «Հանդէս Ամսօրեայ», 1936, VII—IX էջ 324։

[4] Էջ 2 բ, կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ LXXI։ Հ. Քյուրտյանը «Սիոն»-ի 1966 թ. հուլիսի հատորում (էջ 366 բ) նշում է, որ «Գրիգոր վարդապետի» փոխարեն պետք է լինի «Գէորգ վարդապետի»։ Դիտողությունը ճիշտ է, բայց ձեռագրում գրված է «Գրիգոր վարդապետի»։

[5] Մեր օգտագործած ac ձեռագրերը XIV—XV դարերի գրչություն ունեն։ Այստեղ, դժբախտաբար, հիշատակարաններ չեն պահվել։ Դրանցից մեկնումեկը գուցե Հակոբ Ղրիմեցու օրինակն է։

[6] Հակոբ Ղրիմեցու վերոբերյալ հիշատակարանն անուշադրության մատնելու պատճառով կանոնագրքի Գեորգ Երզնկացու խմբագրությունը վերագրել էինք Գեորգ Համբրոնացուն (տե՛ս „Армянская книга канонов и ее редакции", Ереван, 1967, դոկտորական դիսերտացիայի ավտոռեֆերատ, էջ 20)։

Երզնկացին ի՞նչ կանոնախմբեր է ավելացրել՝ պարզ չէ։ Քննենք այդ հարցերը։

Անկյուրիայի Կարմիր վանքի № 43 ձեռագրում վերևի բերված առաջին հիշատակարանը դրված է վերջին՝ «Վասն քահանայագործութեան կարգաց խրատ ի պատրաստութիւն» կանոնախմբից անմիջապես հետո։ Երբ նկատի ենք առնում այս փաստը, ապա թվում է, թե X դարի 90-ական թվականների Բ խմբի it ձեռագրերի սկզբնական, այսինքն 40 կանոնախմբեր բովանդակող օրինակին է Գեորգ Երզնկացին ավելացրել վերևում նշված ԽԱ—ՀՀ կանոնախմբերը[1]։ Սակայն, մեր կարծիքով, հարցն այնքան էլ պարզ չէ։ Առաջին հիշատակարանից մեզ հայտնի է դառնում Կանոնագրքի Գեորգ Երզնկացու ավելացրած բնագրերի միայն վերջին եզրը՝ հիշատակարանին անմիջապես նախորդող «Վասն քահանայագործութեան կարգաց խրատ ի պատրաստութիւն» կանոնախումբը։ Բայց թե ավելացված բնագրերի սկզբնական եզրը որ կանոնախմբից է սկսվել, հիշատակարանն այդ մասին բան չի հաղորդում։ Վերևում ցույց տվեցինք, որ hlou *ձեռագրերը պարունակում են Կանոնագրքի Բ խմբի հնագույն խմբագրության պատկանող* it *ձեռագրերի բովանդակած նյութերը նույնությամբ և բացի դրանից նաև Կանոնագրքին ավելացված առաջին շերտը՝ ԽԱ—ԿԵ կանոնախմբերը, (ըստ* l *ձեռագրերի վերևում բերված համարակալման)։ Այս ԽԱ—ԿԵ կանոնախմբերը որպես առանձին միավոր, գոյություն ունեն Բ խմբի երկու ենթախմբերում, միևնույն տեղում մինչև Գեորգ Երզնկացին։ Այս հանգամանքը մեզ եզրակացնել է տալիս, որ* hlou *ձեռագրերում եղած առաջին շերտը (ԽԱ—ԿԵ կանոնախմբեր՝) X դարի 90-ական թվականների խմբագրությանը (*it *ձեռագրեր) ավելացվել է մինչև Գեորգ Երզնկացին՝ մինչև XIV դարի երկրորդ կեսը, մի անհայտ անձնավորության կողմից։ Իսկ այնուհետև Գեորգ Երզնկացին վերցրել է* hlou *ենթախմբի մի որևէ ձեռագիր և կատարել նոր ավելացումներ, հիշատակարանի գրչի խոսքերով «եւ գրեաց բազմաշնորհ մատամբն իւրով առ ի կատարել զթերին» այսինքն՝ ԿԵ կանոնախմբից հետո եղածները՝ ԿՋ-ից մինչև ՀՀ կանոնախումբը (ըստ* m *օրինակի համարակալման)։ Եվ որովհետև այս նույն բովանդակությունն ու կառուցվածքը ունեն մեր օգտագործած* acdkmpsv *ձեռագրերը, հետևապես սրանք էլ պատկանում են Կանոնագրքի Գեորգ Երզնկացու խմբագրությանը։ Նշանակում է* acdkmpsv *ձեռագրերում Կանոնագիրքն ունի XIV—XV դարերի հնություն։ Հենց այս խմբագրությունն էլ օգտագործելով՝ Ազարիա Սասնեցին 1609 թվականին ընդօրինակության ժամանակ Կանոնագրքում կատարեց նոր ավելացումներ։ Սակայն մինչև այդ խնդրին անցնելը, ցանկանում ենք անդրադառնալ Ն. Ակինյանի այն վարկածին, ըստ որի Գեորգ Համբրոնացուց (իրականում Գեորգ Երզնկացուց) հետո՝ մինչև Ազարիա Սասնեցին Կանոնագրքին կանոնախմբերի նոր շերտ է ավելացրել Կ. Պոլսի պատրիարք Գրիգոր Կեսարացին (մեծ ու փոքր ընդմիջումներով՝ 1601—1626 թթ)։*

Ազարիա Սասնեցին, ինչպես ինքն է պատմում իր հիշատակարանում[2],

---

[1] *Բաբգեն Կյուլեսերյանի ծուցակի համաձայն համարակալման ԼԲ—ԿՆ կանոնախմբերը։ Հիշեցնենք, որ այստեղ ևս բովանդակում են այն բոլոր նյութերը, ինչ որ կան* m *և սրան հարող ձեռագրերում, միայն տեղ-տեղ ծուցակում համարակալման շփոթում կամ բաց թողումներ կան, այդ պատճառով էլ ստացվել է ԿՆ (65) փոխանակ ՀՀ (78) կանոնախումբ։*

[2] *Այս հիշատակարանը տե՛ս նաև Սիմէոն դպիր Լեհացւոյ ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք, հրատ. Ն. Ակինյան, Վիեննա, 1936, էջ 387—390։*

1599 թվին հայրենի Սասունը և շրջակա վայրերը կարա Յազիճիի ասպատակութիւնների ու ավերումների պատճառով թողնում է հայրենական տունը և երկար դեգերումներից հետո՝ 1603 թվին հասնում Կ. Պոլիս և ապաստանում Գրիգոր Կեսարացու մոտ։ Վերջինիս մասին ահա թե ինչ է գրում նա. «Որ էր յցեալ աստուածաշունչ գրովք, ոչ թէ միայն Հին եւ Նոր Կտակարանօք, այլ եւ արտաքին գրոց. եւ նա ի բազում գրեանց եւ ի բազում տեղաց ժողովեալ էր ի մի, զոր ես անարժանս եկեալ յարեցա[յ] ի նա, եւ աշակերտեալ առ նա տեսի զտիեզերալոյս առաքելոցն եւ զսուրբ ժողովոցն կանոնս եւ յոյժ ուրախացեալ եւոու գաղափարել»[1]։

Հենվելով Աղարիա Սասնեցու «ի բազում գրեանց եւ ի բազում տեղաց ժողովեալ էր ի մի» տեղեկութեան վրա Ակինյանը փորձում է ցույց տալ, որ Գրիգոր Կեսարացին վերցրել է Կանոնագրքի Գեորգ Լամբրոնացու (իրականում Գեորգ Երղնկացու) խմբագրութիւնը և կատարել նոր ավելացումներ[2], որից հետո միայն նույն գործը իր ուսուցչի օրինակով շարունակել է Աղարիա Սասնեցին։ Այսպիսով, ըստ Ակինյանի, Կանոնագրքի Աղարիա Սասնեցու խմբագրութիւնը բաղկացած է հետևյալ մասերից՝ Գեորգ Լամբրոնացու, Գրիգոր Կեսարացու և իր Աղարիա Սասնեցու խմբագրութիւններից[3]։ Եվ Ակինյանի կարծիքով Գրիգոր Կեսարացին Կանոնագրքին ավելացրել է հետևյալ համարակալումների կանոնախմբերը. «Բ. 41—44, 49, 57, 62—70 և 71—72 հոդվածները, ինչպես նաև Գոշի Դատաստանագիրքը, Ասորա-հռոմեական օրենսգիրքը իր հավելված մասերով»[4]։ Որպեսզի ընթերցողն առարկայական պատկերացում ունենա, թե Ակինյանի նշած համարները որ կանոնախմբերին են վերաբերում, այստեղ կբերենք նրա հիշած համարների համապատասխան կանոնախմբերը l և m ձեռագրերի համաձայն, ալ կողմում՝ վերը փակագծերում նշելով Ակինյանի ցույց տված համարները։

Ողիշէի ի կանոնաց գրոց (41).
Յոհաննու Կոստանդինուպոլսոյ հայրապետի (42).
Խ. Մեծի Ագաթանգեղոսի (43).
Խթ. Որանեցւոյն Մեսրոպայ Հայոց վարդապետի (44).
Ծե. Ի հարանց կանոնացն է (49).
Կե. Կանոնք տեառն Սիմէոնի Աղուանից կաթողիկոսի (57).
Հ. Կանոնք Ներսէսի Կլաեցոյն վասն ազգապղծութեան (62).
ՀԱ. Կանոնք զգուշաւոր ի խրատ քահանայից (63).
ՀԲ. Կանոնք երկրորդ վասն զգուշութեամբ սպասաւորելոյ...(64).
ՀԳ և ՀԴ. Ընկայ Կողբացոյ Հայոց վարդապետի վասն պատրաստութեան հաղորդողոյ (sic) (65).
Հե. Բանք Անանիա Հայոց վարդապետի (66).
ՀԶ. Այլուստ ժողովածու իմաստախոհ արանց[5] (67).

---

[1] Բարգէն աթոռակից կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, էջ 246։

[2] Ազարիա վ. Սասնեցի աստղագէտ, տօմարագէտ և տաղաչափ (Հանդէս Ամսօրեայ, 1936, VII—IX, էջ 324—325։

[3] Նույն տեղում, էջ 325։

[4] Նույն տեղում, էջ 324։

[5] m ձեռագրի ցանկում այն վերնագրված է այսպես. «Վասն որք ասեն անգոսնելի կիրք ի մարդեղութիւնն Քրիստոսիւ»։

Հէ. Յաղագս նկարեալ պատկերաց (68).

ՀՐ. Վասն քահանայագործութեան... (69). այնուհետև Նիկիայի ժողովի մասնակիցների (70), Հայոց կաթողիկոսների (71) և Կամսարական տան եպիսկոպոսների (72) ցանկեր։

Թե Ակինյանի պնդումը որքան անհավանական է, ցույց են տալիս ներքոհիշյալ պարագաները. նախ, եթե Գրիգոր Կեսարացին կանոնագրքին իրոք կատարել է լրացումներ, ինչո՞ւ այդ լրացումները կատարվել են ընդմիշտբար, թուիչքներով, օրինակ՝ նա չի վերցրել 45—48, 50—56, 58—61 (ըստ Ակինյանի նշած համարների) կանոնախմբերը։ Թե Ակինյանը ինչպես է որոշել վերևի համարները՝ մեզ մնաց անհասկանալի։ Երկրորդ, Ակինյանը նշում է այնպիսի կանոնախմբեր, որոնք մինչ այդ Կանոնագրքին ավելացվել էին Գեորգ Համբրոնացու (իրականում Գեորգ Երզնկացու) կողմից կամ նյութեր, որոնք առկա էին Կանոնագրքի X դարի վերջերի խմբագրությունում՝ ձեռագրերի Բ խմբի հնագույն ենթախմբերում, օրինակ, Հայոց կաթողիկոսների և Կամսարական տան եպիսկոպոսների ցանկերը։ Էլ չենք խոսում Գոշի Դատաստանագրքի կամ Ասորա-հռոմեական օրենսգրքի մասին, որոնք կապ չունեն Կանոնագրքի խմբագրությունների հետ և մի քանի ձեռագրերում գտնվել են մի կազմում և միայն այսքանը։ Երրորդ, վերևում ցույց տվեցինք, որ Կանոնագրքի Գեորգ Երզնկացու ավելացումները սկսվում են m և սրան հարող ձեռագրերի ԿԶ կանոնախմբից մինչև ՀՐ, իսկ այնուհետև սկսվում են Ազարիա Սասնեցու լրացումները, այնպես, որ նոր մուծված նյութերի մեջ Գրիգոր Կեսարացուն բաժին չի մնում։ Չորրորդ, Ազարիա Սասնեցու վերոհիշյալ հիշատակարանի «ի բազում գրեանց եւ ի բազում տեղաց ժողովեալ էր ի մի» հատվածի ընդգծված մասը պետք չէ անպայման հասկանալ մի տուփի կամ կազմի մեջ հավաքված, այլ որ բազմաթիվ գրքերից և տեղերից նյութեր էր հավաքել իր մոտ, որոնց թվում և Կանոնագիրքը։ Հինգերորդ, Կանոնագրքի այն ձեռագրից, որից 1609 թվին Ազարիա Սասնեցին իր համար ընդօրինակել էր մի օրինակ, 1611 թվի մոտերքում Հակոբ Քյոթահիացին գաղափարել է տալիս իր օրինակը։ Եվ իր թողած հիշատակարանում խոսելով Կանոնագրքին Գեորգ Լաբրոնացու (իրականում Գեորգ Երզնկացու) և Ազարիա Սասնեցու կողմից կատարված ավելացումների մասին, Գրիգոր Կեսարացու լրացումների վերաբերյալ բան չի ասում. ահա այդ վկայությունը. «Տեսի անդ (Գրիգոր Կեսարացու մոտ, Կ. Պոլսում —Վ. Հ.) կանոնս, կատարեալ գիրս կանոնաց, զոր հաւաքեալ էր զկանոնս առաքելոց, վարդապետաց, հայրապետաց սրբոց, սուրբ վարդապետն Գէորգ Կիլիկեցին. որ է Սսեցի եւ անուն առեալ էր զօրինակն երիցս երանեալ ƒաջ ռաբունապետն մեր տէր Գրիգոր (իմա՛ Կեսարացին —Վ.Հ.) վարդապետն։ Եւ ի նմանէ առեալ էր զօրինակն[1] աշակերտն նորա տէր Ազարիա Սասնեցի...»[2]։

---

[1] *Մեջբերման «երիցս երանեալ քաջ... ի նմանէ առեալ էր զօրինակն» հատվածը անուշադրության հետևանքով դուրս է ընկել Բարդեն Կյուլեսերյանի Կարմիր վանքի ձեռագրաց ցուցակում բերված Հակոբ Քյոթահիացու հիշատակարանից (էջ 266)։ Եվ ստացվում է սխալ այն տպավորությունը, թե Ազարիա Սասնեցին (XVI—XVII դար) Գեորգ Համբրոնացու (XIII դար) աշակերտն էր։*

[2] *Հանդէս Ամսօրեայ, 1936, VII—IX, էջ 324։ Շարունակության մեջ խոսվում է Ազարիա Սասնեցու կատարած ավելացումների մասին։ Հիշատակարանի այդ մասը տե՛ս ներքևում։*

Ինչպես դժվար չէ նկատել այս մեջբերումից, Գրիգոր Կեսարացին լոկ պատճենավորել է Կանոնագրքի Գեորգ Երզնկացու խմբագրությունը «անտի առեալ էր զօրինակն» և ուրիշ ոչինչ։

Այսպիսով, վերևում նշված փաստերը և հանգամանքները չեն հաստատում Ակինյանի պնդումը, հետևապես Կանոնագրքին Գրիգոր Կեսարացին ոչ մի ավելացում չի կատարել։ Գեորգ Երզնկացուց հետո ձեռագրերի acdkmpsv ենթախմբին, որ է վերջինիս խմբագրությունը, Ազարիա Սասնեցուց բացի ուրիշների կողմից նոր ավելացում չի կատարվել։

Այժմ անդրադառնանք Կանոնագրքի Ազարիա Սասնեցու խմբագրությանը։ Կանոնագրքի բովանդակության պատմության համար խիստ ուշագրավ է Ազարիա Սասնեցու հիշատակարանը, որը գտնվում է իր համար ընդօրինակած կանոնագիրք-ձեռագրին կից, որից և վերևում կատարեցինք մեջբերումներ։ Հիշատակարանից տեղեկանում ենք, որ Ազարիա Սասնեցին դալիս է Կ. Պոլիս Գրիգոր Կեսարացու մոտ, և վերջինիս սեփականության հանդիսացող կանոնագիրք-ձեռագիրը տեսնելով գրում է. «յոյժ ուրախացեալ ետու գաղափարել»[1]։ Սակայն, ինչպես պարզվում է հիշատակարանի շարունակությունից, նա Կանոնագիրքը անմիջապես ընդօրինակել չի տալիս, այլ նախ հավաքում է կանոնական նոր նյութեր՝ Գրիգոր Կեսարացու մոտ եղած Կանոնագրքից գաղափարվող օրինակի բովանդակությունն ավելի հարստացնելու և ճոխացնելու նպատակով։ Ահա թե ինչ է գրում այդ աշխատանքների մասին Ազարիան. «Ես ջանացի այլ եւս աւելուլ եւ հարստացուցանել, զի մի ինչ պակաս գտանիցի. եւ էր յոլով գրեանք ի Կոսանդինուպօլիս... եւ ես գտի զորս ի քահանայս եւ զորս ի յաշխարհականս եւ զորս ի այլ ազգիս, զոր ոմանք բազում աղաչանօք... հազիւ տային ինձ վասն նախանձու, եւ ժողովեցի բազում բանս եւ զանազան կանոնս, ի առանձնական եւ հասարակ ժողովոց, ի մերոց եւ օտարասեռն ազանց բազում աշխատութեամբ հաւաքեցի իբրեւ զծաղիկ ի պսակս բոլորեալս...»[2]։ Այնուհետև ընդհանուր գծերով թվելով Կանոնագրքին իր կողմից ավելացրած նյութերը[3] շարունակում է. «զոր գտցես լրիւ ի ցանկ մատենիս. բայց ժողովեցաւ սայ ի չար եւ ի դժ[ո]ւար ժամանակս, որ էր Հայոց մեծ թվին ՌՄՒ, որ մինչ ի թվին ՈՐ (այսինքն՝ 1603—1609 թթ.—Վ. Հ.) հազիւ ի մի հաւաքեցի...»[4]։ Ուրեմն, Ազարիա Սասնեցին 1603 թվին գալով Կ. Պոլիս մինչև 1609 թիվը զբաղվել է Կանոնագիրքը լրացնելու, ճոխացնելու նպատակով կանոնական նյութեր հավաքելու գործով, որից հետո միայն 1609 թվին պատվիրել Սիմեոն Լեհացուն ընդօրինակել Կանոնագրքի Գրիգոր Կեսարացու ունեցած օրինակը, որը, ինչպես վերևում ցույց տվեցինք, պատկանում էր Գեորգ Երզնկացու խմբագրությանը։

Ձեռագրի գրիչ Սիմեոն Լեհացին Ազարիա Սասնեցու ջանքերի մասին նույնպես գրում է. «Շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ գիրքս, որ կոչի կանոնք, եւ է յոյժ պիտանի եւ անգիւտ, որպէս եւ առաջիկայդ ընթեռնլով իմասցիս, թէ որպէս աշխատութեամբ եւ բազմախնդիր [յ]ուզմամբ ի բազում տեղաց եւ գաւառաց ժողովեալ հաւաքեաց ի մի յոյժ

---

[1] Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ կարմիր վանուց..., էջ 246։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 247։
[4] Նույն տեղում։

փարթամ եւ հարուստ»[1]։ Միևնույն միտքը հաստատում է կողմնակի մի այլ անձնավորություն՝ Հակոբ Քյոթահիացին, որը ընտիր կանոնագիրք ունենալու նպատակով երկար թափառումներից հետո, 1611 թվի մոտերքում, Կ. Պոլսում տեսնում է իր ակնկալածը. «Տեսի անդ կանոնս, կատարեալ գիրս կանոնաց... զի նա (Ազարիա Սասնեցին —Վ. Հ.) բազում ջանիւ խնդրեալ էր բազում տեղիք ժողովոց ի մի վայր ի վերայ այն կանոնացն, առաւել աւելեաց բազում կանոնս ի բազում օրինակաց, այնպէս փարթամ եւ հարուստ, որ ոչ գտանէր աղգիս մերում, ի մի տուփ ժողովեալ, եւ ես տեսի զնա եւ բազում ուրախութեամբ լցայ, եթէ այժմ կատարեցաւ խնդրուածն իմ, եւ առեալ ի նմանէ օրինակեցի...»[2]։

Ուրեմն, Կանոնագրքի Գրիգոր Կեսարացու ունեցած օրինակից (Գեորգ Երզնկացու խմբագրությունից) 1609 թվին Ազարիա Սասնեցին իր համար Սիմեոն Լեհացուն ընդօրինակել է տալիս և այնուհետև կատարում մի շարք նյութերի ավելացումներ, իսկ վերջինիցս էլ Հակոբ Քյոթահիացին 1611 թվին կամ մի փոքր հետո իր համար ընդօրինակել տալիս Արսլան գրչին։

Իսկ ի՞նչ նյութեր է մուծել Կանոնագրքում Ազարիա Սասնեցին։ Թերևս հարկ չկա թվարկելու բոլոր նյութերը, որոնց թիվը հասնում է շուրջ 40-ի. հետաքրքրվողներին հղում ենք Բարդեն Կյուլեսերյանի Անկյուրիայի Կարմիր վանքի մատենադարանի ձեռագրերի ցուցակի համապատասխան էջերին[3], իսկ այստեղ կթվարկենք գլխավորներից մի քանիսը. «Բանք դեղեցիկ եւ յոյժ պիտանի վասն աթոռոյն Ախթամարայ, որ է ի ներքոյ բանադրանաց ի սրբոյն Գրիգորէ Տաթեւացւոյ», «Խրատ կանոնական ընթանուր ամենայն հաւատացելոց ի Քրիստոս, ասացեալ Կիրակոսի կաթողիկոսի սուրբ էջմիածնի», «Տեսիլ սրբոյն Սահակայ հայրապետին» և սրա մեկնությունը, Գրիգոր Լուսավորչի տեսիլը, Դավիթ Ալավկա որդու կանոնները, Հռոմի եպիսկոպոս Օգոստիանոսի «Վասն վարուց կրօնաւորաց» և «Խրատ ոգէշահք...» գրույթյունները, Ներսես Շնորհալու թղթերը ու այլ նամակներ, Վանականի գործերից երկուսը, հայոց թագավորների կարգն ըստ Մովսես Խորենացու և իր՝ Ազարիայի կազմած հայոց կաթողիկոսների ցանկը և այլ նյութեր։ Այս համառոտ թվարկումից էլ երևում է, որ Ազարիա Սասնեցու լրացումները մեծ մասամբ կանոններ չեն և չեն համապատասխանում Կանոնագրքի բնույթին, օրինակ, Գրիգոր Լուսավորչի և Սահակ Պարթևի տեսիլները, այլ և այլ բազմաթիվ նամակներ, հայոց թագավորների և կաթողիկոսների ցանկերը, Նիկիայի և Քաղկեդոնի ժողովների վերաբերյալ նյութերը և այլն։

Շտապենք ասել, որ եթե Կանոնագրքի X դարի խմբագրությունում ավելացված են մի երկու ոչ կանոնական նյութեր, ապա նման նյութերի քանակը հաջորդ XI, XIV—XV դարերի խմբագրություններում ավելի մեծ տեղ է բռնում, իսկ XVII դարում Ազարիա Սասնեցու խմբագրությունը, կարելի է ասել, նյութի ընտրության եղանակը հիմնովին խախտեց, և նրա ավելացրած նյութերը ոչ

---

[1] Նույն տեղում, էջ 241—242։

[2] Նույն տեղում, էջ 265—266. տե՛ս նաև Հանդէս Ամսօրեայ, 1936, VII—IX, էջ 324։ Այս անձնավորության մասին տե՛ս նաև Մկրտիչ Աղավնունու «Մեր Կանոնագիրքն և Յակոբ եպիսկոպոս Կուտինացին» հոդվածը «Բիւզանդիոն»-ի 1897, հուլիսի 14-ի № 214-ում։

[3] Էջ 235—239։ Այս մասին Ազարիա Սասնեցին գրում է նաև իր հիշատակարանում, տե՛ս նույն տեղում, էջ 247։

թե հարստացրեցին Կանոնագրքի բովանդակությունը, այլ այն դարձրին մատենագրական զանազան նյութերի ժողովածու։

Մինչև այժմ քննում էինք տարբեր ժամանակներում Կանոնագրքին ավելացրած նյութերի շերտերի, սրանց ժամանակի և հնարավորության դեպքում ավելացում կատարողների ինքնության հարցերը։ Եվ որպեսզի այդ բանը ընթերցողների համար առարկայական երևա, XLII էջում ներկայացնում ենք Կանոնագրքի ճոխացման սխեման։

Ե. ԿԱՆՈՆԱԳՐՔԻՆ ԱՎԵԼԱՑՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՆՈՆԱԽՄԲԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

Դարերի ընթացքում Կանոնագրքի բովանդակության աճը պարզելուց հետո, անցնենք լրացված նյութերի վավերականության հարցին։

Հովհ. Օձնեցուց հետո Կանոնագրքին ավելացված նյութերի շարքում աչքի են ընկնում իրենց քանակով այնպիսիները, որոնք կեղծ գրվածքներ են։ Իհարկե այդպիսի գրվածքներ կան նաև Օձնեցու կազմած Կանոնագրքում, օրինակ, Առաքյալներին, Հարանց հետևողաց, Աթանաս Աղեքսանդրացուն, Սևանտոսին վերագրված և թերևս Կեսարիայի կանոնախմբերը։ «Կանոնագիրք Հայոց»-ի Ա հատորի «Ծանոթագրություններ» բաժնում խոսել ենք Կեսարիայի և, մասնավորապես, Աթանաս Աղեքսանդրացու կանոնախմբերի մասին։ Վերջինս չենք գտնում նույն հեղինակի աշխատությունների շարքում[1]։ Սակայն նրա աշակերտ Տիմոթեոս Աղեքսանդրացու 61 (37+24) հարց ու պատասխանի երկու բնագրերում գտնում ենք Աթանասի կանոնախմբի 15 հարց ու պատասխանի նյութերը[2]։ Թե ե՛րբ է այս կանոնախումբը ստեղծվել և վերագրվել Աթանասին՝ դժվար է հաստատ բան ասել, սակայն հաստատ է այն, որ այդ կանոնախումբը մեր մատենագրության մեջ գոյություն ուներ մինչև Հովհ. Օձնեցին՝ VIII դարի սկզբները։ Իսկ Սևանտոսի կանոնախմբի վերաբերյալ Ակինյանի փորձը՝ այն վերագրելու Դիոնեսիոս Աղեքսանդրացուն, հազիվ թե համոզիչ լինի[3], որովհետև այդ վարկածը նա հիմնավորում է այնպիսի վիրահատությամբ, որ դարձյալ մնում է անհավատալի, ուստի և այն դիտում ենք որպես կեղծ գրություն։

---

[1] Տե՛ս «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմացութիւնք», Վենետիկ, 1899։ Այստեղ գտնում ենք 141 հարց ու պատասխան «Երանելի Աթանասի ասացեալ հարցմունք վայելուչք եւ պատասխանիք հոգեշահք» վերնագրով (էջ 347—477), բայց ոչ մի նմանություն չկա այս երկու բնագրերի միջև, օրինակ, քահանայի ուխության մասին խոսում է այս գրքի ՃԻԷ (էջ 457—458) և Կանոնագրքի Աթանասի ԾԴ (էջ 312—313) հարց ու պատասխաններում, բայց ոչ մի նմանություն։


[2] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 603, 606—608, 610։

[3] Հանդէս Ամսօրեայ, 1949, IV—XII, էջ 59—70. մասնավորապես կարդա 70-րդ էջը, ուր կան հետևյալ հեռացատկ մակաբերումները. իբր Դիոնեսիոս Աղեքսանդրիայ անունից առաջ է եկել Սեւանդեայ անունը. այսօրինակ ձևով՝

ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՑ
Ս ԵԻ ԱՆԴ ԵԱՑ

կամ Մեհրուժանայ ձևից՝ Քաջանայից ձևը, այսպես՝

ՄԵՀՐՈՒԺԱՆԱՑ
ՔԱՋ ԱՆԱՑԻՑ


Կանոնագրքի Հովհ. Օձնեցու խմբագրություն
VIII դար
Ա—ԻԴ կանոնախմբեր
Անանիա Մոկացու ունեցած կանոնագիրքը
X դարի կեսեր
Ա-ԻԴ+ԻԵ—ԼԴ (կամ ԻԵ—ԼԸ?) կանոնախմբեր
Տեր Խաչիկի ունեցած կանոնագիրքը
X դար
Ա—ԻԴ+ԻԵ—ԼԸ+ԼԹ—Խ կանոնախմբեր
Ա խումբ
Բ խումբ
Կանոնագրքի XI դարի խմբագրություն
Ա—Խ+ԽԱ—ԾԷ կանոնախմբեր
AP
Կանոնագրքի X դարի վերջերի խմբագրություն Ա—Խ կանոնախմբեր
ft
Ա—ԾԷ+ԾԸ կանոնախմբեր
BCDEFGH
Ա—ԾԷ+ԾԸ կանոնախմբեր
U
Ա—ԾԷ+ԾԸ—Կ կանոնախմբեր
IJKLMNOGRST
VXYZWδ
Ա—Խ+ԽԱ—ԽԶ կանոնախմբեր
befgq
Ա—Խ+ԽԱ—ԿԵ կանոնախմբեր մինչև XIV դ. կեսեր
hlou
Ա—ԾԷ կանոնախմբեր
n
Կանոնագրքի Գեորգ Երզնկացու խմբագրություն
XIVդ. II կես—XVդ սկիզբ
Ա—Խ+ԽԱ—ԿԵ+ԿՁ—ՀԸ
acdkmpsv
Ա—ՀԸ+ՀԹ—ՁԸ
Տիրան արքեպ. Ներսոյանի օրինակ և r
Ազարիա Սասնեցու խմբագրություն
XVIIդ.
Անկյուրիայի Կարմիր վանքի №43 ձեռ.
Ա—ՀԸ+ՀԹ—ՂԹ կանոնախմբեր

Սակայն դառնանք Հովհ. Օձնեցուց հետո ավելացված մի շարք կանոնախմբերի վավերականության հարցին։

Թադեոս առաքյալին վերագրված կանոնախումբը կանոնագրքի համակարգում դրված է 26 (ԻԶ)-րդ տեղում։ Այս կանոնախմբի հեղինակի մասին, վաղուց է, որ գոյություն ունի արդարացի կասկածանք։ Տակավին 1880 թվին Վ. Բաստամյանցը գրում էր. «Դոքա (Թադեոսի կանոնները —Վ. Հ.) չեն պատկանում մեր առաջին լուսավորչին (Թադեոսին —Վ. Հ.), այլ հետո են հորինված»[1]։ Հակոբոս Տաշյանը «Վարդապետութիւն առաքելոց» (Վիեննա, 1896) իր հմտալի աշխատության 131—148-րդ էջերում մանրամասն քննելով սույն կանոնախմբի վավերականության հարցը, գտնում է, որ այն ներկա ձևի մեջ «ո՛չ ե դարեն կրնանք համարել»[2], քանի որ վերջինիս մեծ մասի աղբյուրը հանդիսանում է «Վարդապետութիւն առաքելոց» մատյանը[3]։ Մի փոքր անագան նույնպիսի կարծիք են հավաստում Ն. Մելիք-Թանգյանը և Մ. Օրմանյանը։ Առաջինը հենվելով պատմական մի շարք փաստերի վրա[4] եզրակացնում է. «Պասեքի խնդիրը, ժամանակագրության (թերևս պետք է լինի ժամակարգության—Վ. Հ.) տեսակները և կանոնադրությունը, նվիրապետության կարգը, ջրի և անխմոր հացի գործածության վեճերը, բոլորը սկսվում են շատ ուշ և կանոնավորվում են III, IV, V, VI, VII դարերում»[5]։

Եվ իսկապես, երբ հետևում ենք այս կանոնախմբի հոդվածների բովանդակությանը, ապա նկատում ենք, որ հոդվածների զգալի մասը քաղված է մեզ հայտնի աղբյուրներից, օրինակ, Ա հոդվածը կազմված է Պողոս առաքյալի նամակներից (Ա Տիմ. Գ, 1—3, Տիտ. Ա, 7—9) և Առաքելական ԻԲ հոդվածից, Գ-ն՝ Նեոկեսարիայի ԺԶ, Դ-ն՝ Առաքելական ի, ԻԱ, ԻԲ, ե-ն՝ Հովհ. Օձնեցու ԺԲ և Սիոնի Ը, Զ-ն՝ Առաքելական ԼԱ հոդվածներից և այլն։ Կազմողն իր ձեռքի տակ գտնվող սկզբնաղբյուրներից օգտվել է ազատ ձևով, քաղված նյութը մատուցել է վերաշարադրելով։

Զ հոդվածում հեղինակը խոսում է պատարագի գինու բաժակը անխառն և անապական մատուցելու մասին։ Այս հոդվածի վերջին հատվածը. «Մի՛ ոք յանդգնեսցի խառնել ջուր ի յայն բաժակն...» մինչև վերջ Տաշյանը համարում է» հետսամուտ ընդմիջարկություն»[6]։ Մեզ այդպես չի թվում։ Կանոնախմբի ներկա ձևի մեջ շոշափված առանձին հարցեր հայ եկեղեցում կարգավորվել են VI, VII դարերում։ Ինքը՝ Տաշյանն էլ կարծում է, որ այն «ամենեն կանուխ իսկ դնելով՝ ե դարեն հառաջ չի յերևան եկած»[7]։ Քանի որ գինու բաժակին ջուր խառնելու վեճերը կապված Քաղկեդոնի ժողովի որոշումների հետ առաջ եկան VI դարում և այնուհետև այդ հարցը մնաց օրակարգում հաջորդ դարերում. ուրեմն խնդրական այդ հարցը այստեղ ընդմիջարկություն չէր կարող լինել և

---

[1] «Փորձ», 1880, VIII—IX, էջ 83, ծանոթ. 3, տե՛ս նաև 1881, VI, էջ 52. հմմտ. «Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց» Վաղարշապատ, 1880, էջ 411, ծանոթ. 915։

[2] էջ 146։

[3] էջ 141, 147։

[4] Ի միջի այլոց անտեղի է հիշված Եպիփ կաթողիկոսի անունը կրող դավանական գրությունը. տե՛ս Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, ՍՊՒ, 1885, գլուխ ԻԱ։

[5] Հայոց եկեղեցական իրաւունքը, գիրք Ա, էջ 475. հմմտ. Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Ա, Բեյրութ, 1959, էջ 44։

[6] Վարդապետութիւն առաքելոց, էջ 403, տողատակ։
Նույն տեղում, էջ 134։

իր վրա կրել է VI դարից սկսած առաջ եկող վեճերի կնիքը։ Ե հոդվածի առթիվ Տաշյանը գրում է. «Ե կանոնն՝ այն է եկեղեցվո սեղանին նկատմամբ հրամայվածը շատ նման կըհնչէ ս. Սահակա մեկ կանոնինն»[1]։ Մեզ այնպես է թվում, որ Տաշյանը Ե հոդվածի աղբյուրը ճիշտ չի նշում։ Նրա նշած Սահակի Բ հոդվածը շատ քիչ է առնչվում մեզ հետաքրքրող հոդվածի հետ։ Թադեոս առաքյալին վերագրված կանոնախմբի Ե հոդվածում կարդում ենք. «Արժան է եպիսկոպոսին հաստատել սեղան ի քարանց՝ աւրինակ խաչին, եւ զայն ծածկել սրբովք կտաւովք եւ խնկարկութեամբ ընդ առաւաւտս եւ ընդ երեկոյս եւ ի ժամ պատարագին խափան մի՛ լիցի խնկոց եւ լուցմանց»։ Տաշյանի մատնանշած Սահակի Բ հոդվածում կարդում ենք. «Ե՛ւ զտաճարս աղաւթիցն՝ յորս սուրբ եւ աստուածընկալ սեղանն է հաստատեալ, յորոյ վերայ կատարի մեղսաքաւիչ եւ կենդանարար խորհուրդ մարմնոյ եւ արեան ապրեցուցչին մերոյ եւ Տեառն, ըստ արժանի բաւականութեանն զարդարուն պահեսցեն անխափան լուցմամբք եւ խնկարկութեամբ, եւ պարսպեալ եղիցի քաղաք որմովք...» (հոդվածի շարունակությունը մկրտատան և ավազանի մասին է, ուստի այն չենք բերում)։ Այս երկու մեջբերումների մեջ աղերսվող կետերը շատ քիչ են։ Մինչդեռ Հովհ. Օձնեցու կանոնախմբի ԺԲ հոդվածում գրված է. «Ոչ է արժան զսեղանն, յորոյ վերայ պատարագն Քրիստոսի մատչի, փայտեղեն կանգնել եւ շարժուն, այլ քարեղէն եւ անշարժ հիմնացուցանել»[2]։

Մի այլ տեղ Հովհ. Օձնեցին գանգատվում է, որ «ի տեղիս տեղիս զսեղանս եւ զաւաղանս ոչ առնեն ըստ հրամանի եւ աւանդութեան երանելեացն մերոց հարանց՝ քարեղէն եւ անշարժաբար զերկոսինն հիմնացուցանելով»[3] կամ «էՐ աղագաւ քարեղէն եւ ոչ փայտեղէն հրամայեցաւ կանգնել մեզ սեղան» և այնուհետև հաջորդում է բացատրությունը[4]։ Ուրեմն, Օձնեցու ժամանակ, առանձին տեղերում խախտվել էր ավանդական սովորությունը և նա պահանջում էր վերականգնել այն։ Արդյո՞ք այս պահանջի արձագանքը չէ նաև Թադեոս առաքյալի համապատասխան հոդվածը։ Իսկ թե պատարագից հետո ինչպես պետք է այն պահել, այդ մասին գրում է Սիոն կաթողիկոսը իր կանոնախմբի Ը հոդվածում. «Յայսմհետէ մի՛ իշխեսցեն զնոյն անպատուութիւն առնել սուրբ աւազանին, այլ ընդ այլ սրբութիւնսն պատուով կալցին, որպէս զսեղանն եւ զխաչն՝ վերարկուաւք ծածկեսցեն եւ խնկարկութեամբ պաատուեսցեն»[5] (ընդգծումը մերն է —Վ. Հ)։ Դժվար չէ նկատել և համոզվել, որ մեզ հետաքրքրող Ե հոդվածը վերաձևված է ոչ այնքան Սահակի վերոբերյալ հոդվածի, այլ Հովհ. Օձնեցու և Սիոն կաթողիկոսի համապատասխան հոդվածների վրա։ Իսկ այս հեղինակները VIII դարի անձնավորություններ են։

Ի դեպ, Տաշյանը վերևում չի էլ ասում, թե Թադեոս առաքյալի սույն կանոնը Սահակ Պարթևի Բ կանոնից է վերցրել, այլ ասում է «շատ նման կը հնչէ»։

---

[1] Նույն տեղում, էջ 147, իմա՛ Սահակի Բ հոդվածը, Կանոնագիրք Հայոց, հատ. Ա., էջ 368—369։

[2] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 520—521։

[3] Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 5։

[4] Նույն տեղում, էջ 7։

[5] Տե՛ս ներկա հատորում, էջ 9։

Տաշյանը գտնում է, որ առաջարկվող կանոնախումբը «գոնե Օձնեցվոյն օրով շատ ծանոթ ըլլալու չէր. վասն զի անոր հավաքման մեջ մտած չէ»[1]: Այս կարծիքը կարող է ճիշտ լինել, բայց հակառակ սրան, կարող է ճիշտ լինել նաև այն, որ այս կանոնախումբը Օձնեցու օրոք Կանոնագրքում չի մտել, ոչ թե այն շատ ծանոթ չլինելու պատճառով, այլ դեռ հորինված չէր:

Թե ով կարող է եպիսկոպոս և վարդապետ լինել հարցին Սահակ Պարթևն անդրադարձել է իր կանոնախմբի Խե և Խթ հոդվածներում[2]: Եթե հայերի առաջին լուսավորչի կանոնախումբը լիներ թեկուզ և ասորերեն, Սահակ Պարթևը կօգտագործեր անպայման, սակայն ավելի հավանական չէ՞, որ հակառակն է տեղի ունեցել՝ այդ հարցերի մասին գրելիս վերևում նշված այլ աղբյուրների հետ այս կանոնախմբի հեղինակը օգտագործել է նաև Սահակ Պարթևի կանոնախումբը:

Սույն կանոնախմբի ծ հոդվածի այն մասը, թե «հաստատել սեղան ի քարանց՝ աւրինակ խաչին», մատնացույց է անում ոչ թե խաչը և անպայման կառուցել քարից, մի երևույթ, որը մեզ մոտ հանդես է եկել շատ հնից[3], այլ այն, որ սեղանը լինի քարից պատրաստված խաչի նման ամուր և անշարժ: Թե որքանով է ճիշտ մեր այս ասածը՝ երևում է Հովհ. Օձնեցու կանոնախմբի մի այլ՝ իէ հոդվածից, ուր թույլատրվում է խաչ պատրաստել ոչ միայն քարից, այլև ուրիշ նյութերից. «Եթէ ոք խաչ արասցէ փայտեայ եւ կամ յինչ եւ իցէ նիւթոյ, եւ ոչ տացէ քահանային աւրհնել եւ աւծանել զնա միւռոնովն սրբով, ոչ է պարտ զնա ի պատիւ ընդունել կամ երկրպագուիւն մատուցանել...»[4]: Մի բան, որ հայ եկեղեցում շարունակվում է մինչև օրս:

Ուշադրությամբ ուսումնասիրելով մյուս հոդվածների բովանդակությունը՝ նկատեցինք, որ Դ և ԺԲ հոդվածները կրկնված են Ա հոդվածում. այսպես՝ Դ հոդվածում ասվում է, որ եպիսկոպոսը պետք է հրաժարվի տգետներին, հիմարներին (ոչ խելագար), գողերին, շնացողներին և անժուժկալներին ձեռնադրելու, որպեսզի «մի՛ բարկացուցանել զԱստուածն», իսկ Ա հոդվածում նույն հարցերի մասին խոսում է ընդարձակ ձևով և դարձյալ ավելացնում՝ այդպիսին «ի բարկութիւն շարժէ զԱստուածն»: ԺԲ հոդվածում, ինչպես և Ա-ում, միակերպ դատապարտում է եպիսկոպոսին, եթե նա առաջնորդվում է կաշառքի, մերձավորության և բարեխոսության սկզբունքներով:

Այս բոլոր փաստերը հաստատում են, որ սույն կանոնախումբը կեղծ գրվածք է և այն չէր կարող հանդես գալ VIII դարից վաղ, այլ Հովհ. Օձնեցուց և Սիոն կաթողիկոսից հետո: Ծրիցս արդարացի է Տաշյանը երբ գրում է. «Բայց թերևս չսխալինք ընդունելու, որ Օձնեցիեն հառաջ դեռևս ծանոթ չէին անոնք՝ (Թադեոս առաքյալի կանոնները —Վ. Հ.) գոնե առհասարակ, վասն զի եթե ծանոթ ըլլային, անշուշտ Օձնեցի զանոնք ալ առած կըլլար յուր կանոնագրոց հավաքման մեջ...»[5], որովհետև ավանդական այս անձնավորությունը մեծ

---

1 Վարդապետութիւն առաքելոց, էջ 131:

2 Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 403, 409—410:

3 Տե՛ս Ս. Գ. Բարխուդարյան, Հայաստանի կոթողային հուշարձանները, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, (հաս. գիտ.), 1960, № 7—8, էջ 61: Մի զրույցի ժամանակ Ս. Բարխուդարյանը հայտնեց, որ քարից, այսպես կոչված «քևավոր խաչերը» հայերը պատրաստել են IV—V դարերում: Իսկ խաչքարերը IX դարից վաղ մեզ չեն հասել:

4 Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 532—533:

5 Վարդապետութիւն առաքելոց, էջ 146:

հեղինակություն ուներ հայ եկեղեցում՝ հանդիսանալով քրիստոնյա առաջին քարոզիչներից մեկը Հայաստանում։ Հետևապես Թադեոս առաքյալի անունով հայտնի կանոնախմբի ծագման մասին Ակինյանի վարկածը՝ «Թե՛ վարդապետությունն առաքելոց և Թե՛ Թադեի կանոնք նախնաբար Ասորիքի մեջ ծագում առած են Դ գարու վերջերը (380) և անկե հասած Հայաստան»[1] մեզ ճիշտ չի թվում։

Հովհ. Օձնեցու կազմած կանոնագրքում հետագա ավելացումների մեջ այս կանոնախումբը կազմում է հնադույն և առաջին շերտի մի մասնիկը, հաջորդելով Սիոնի (Պարտավի) կանոնախմբին։ Նշանակում է՝ Օձնեցուց հետո նրա կանոնագրքում առաջինը մուծվել է Սիոնի (Պարտավի) կանոնախումբը և այնուհետև այս։ Այդ կարող էր տեղի ունենալ VIII դարից հետո, բայց ոչ անպայման մինչև X դարի վերջերը, ինչպես կարծում է Ն. Մելիք-Թանգյանը[2], այլ ավելի վաղ, ասենք՝ VIII դարի վերջերից մինչև IX դարը ներառյալ։

Անտիոքի ժողովին վերագրված երկրորդ կանոնախումբը կանոնագրքի համակարգում դրված է ԻՐ (28)-րդ տեղում։ Այս կանոնները պետք չէ շփոթել Անտիոքում կայացած մի շարք ժողովներից որևէ մեկի որոշումների հետ[3]։ Սույն կանոնախմբի է հոդվածում հեղինակը գրում է. «...զոր դրոշմեցաք ի մի վայր բովանդակեալ եւ ծայրատաղ արարեալ, զաւգտակարն ամենայնի զմեղս և զարդարութիւն ցուցաք...»[4] (ընդգծումը մերն է—Վ. Հ.)։ Այս նշումը արդեն հուշում է, թե այն որտեղից է քաղված։ Մեր որոնումները ցույց տվեցին, որ, օրինակ, Ա հոդվածը համառոտված է Անտիոքի ժողովի Կանոնագրքում մտած ԺԳ հոդվածից[5], Բ-ն, Գ-ն, Դ-ն, Ե-ն, Զ-ն և Թ-ն՝ համապատասխանաբար Լավոդիկեի Ի, ԻՀ, Լ, Ծ, ԾԱ և ԾԲ հոդվածներից[6], իսկ է և Ը հոդվածները՝ Աստվածաշնչի տարբեր մասերից և առայժմ մեզ անծանոթ այլ գրքերից։ Այսպիսով, առաջարկվող կանոնախումբը կեղծ է և ոչնչով չի կապվում Անտիոքի որևէ ժողովի մշակած կանոնների հետ։ Հաշվի առնելով այն փաստը, որ սույն կանոնախումբը Օձնեցու կազմած Կանոնագրքից հետո է մուծվել Կանոնագրքում և այն էլ ավելացումների սկզբնական շերտում, մինչև X դարը, մնում է ենթադրել, որ այն ստեղծվել է VIII դարի երկրորդ կեսից մինչև IX դարը ներառյալ։

Անտիոքի խոստովանությունը կանոնագրքի համակարգում դրված է 33 (ԼԳ)-րդ տեղում։ Այն կանոնական բովանդակություն չունի, այլ պատկանում է դավաբանական հակաճառական սեռին, ուր նզովվում են հայ եկեղեցու ուսմունքին խորթ տեսությունները։

Որոշ հրատարակություններում այս բնագիրը նշված է բոլորովին ուրիշ հեղինակություններով։ «Գիրք Թղթոց»-ում, ինչպես նկատել էր Հ. Անասյանը[7] այն վերագրված է ասորի Աբդիշո եպիսկոպոսին։ Ահա վերջինիս երկու նամակների վերնագրերը. «Նորին Աբդիսոյ եպիսկոպոսի. յաղագս անիծեալ նեստորականաց և ամենայն հերձուածողաց»[8] և «Նորին Աբդիսոյի եպիսկոպո-

[1] Թուղթ Մակարայ Բ երուսաղէմի հայրապետի..., էջ 43։

[2] Հայոց եկեղեցական իրաւունքը, գիրք Ա, էջ 476—477։

[3] K. J. Hefele. Conciliengeschichte, Erster Band, Freiburg im Breisgau, 1855, S. 109, 433, 477, 483, 512 և շար.։

[4] Տե՛ս սույն հատորը, էջ 48։

[5] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 213—214։

[6] Նույն տեղում, էջ 234—236, 239—242։

[7] Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ 941—942։

[8] «Գիրք Թղթոց, էջ 66—67։

սի. յաղագս նզովելոյ ղամենայն հերձուածողս, որք էին հակառակ ուղղափառուցս[1]։ Առաջին նամակն ընդգրկում է սույն բնագրի 65—68, իսկ երկրորդը՝ 69—71 էջերը[2]։ Առաջին նամակի սկզբի «Քանզի այսպէս հաւատամ առաջնորդութեամբ Միածնին որ վասն մեր մարդացաւ» հատվածը չի պահվել Կանոնագրքի բնագրում, մնացածը գրեթե նույնն է, եթե նկատի չունենանք առանձին մասերում որոշ բառերի ավելացումը կամ անունների փոփոխում։ Նույնն է երկրորդ նամակը, միայն թե սրա վերջին մասը, սկսած «զայս ամենայն զոր գրեցաք և նզովեցաք...» հատվածից մինչև վերջ բավական ընդարձակ է և տարբեր Կանոնագրքի բնագրի համապատասխան հատվածից, իսկ սրա վերջին «Սուրբ և խաղաղարար ժողովն որ յԱնտիոք...» հատվածը, ուր թված են ժողովի մասնակիցների մի մասի անունները, Աբդիշոյի երկրորդ նամակում չի պահվել։

«Գիրք թղթոց»-ում Աբդիշո եպիսկոպոսի այս երկու նամակները դրված են 14 և 15-րդ տեղերում։ «Գիրք թղթոց»-ի 219-րդ էջերում, այսինքն 56-րդ՝ «Տեառն Կոմիտասու Հայոց կաթուղիկոսի վասն հաւատոյ» նամակից հետո կա մի հիշատակարան, ուր կարդում ենք. «Աւրինակ գրոցս՝ որ լեալ էր Տէր Գրիգորիսի Վկայասիրին՝ մինչև ցայս վայր էր, և նա այսպէս էր դրեալ. Ջվահրամ որդի Գրիգորոյ Մագիստրոսի, յիշեսջիք յաղաւթս ձեր, ո՛վ երջանիկ դասք ուղղափառաց խմբիցդ Ազքանազեան սեռի։ Շիէ թուական»։ Ուրեմն, «Գիրք թղթոց»ի Գրիգոր Վկայասերի օրինակը 1078 թ. պարունակում էր 56 նամակներ, հրատարակված բնագրի կեսից պակաս։ Այսինքն Կանոնագրքի մեզ հասած հնագույն օրինակի, Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի № 131 ձեռագրի ընդօրինակման ժամանակ՝ 1098թ. «Գիրք թղթոց»-ի Գրիգոր Վկայասերի օրինակը ուներ 56 նամակներ, որոնց թվում նաև Աբդիշո եպիսկոպոսի վերոհիշյալ երկու նամակները։ Եթե նկատենք, որ Աբդիշո եպիսկոպոսի վերևում նշված երկու նամակները տեղավորված են «Գիրք թղթոց»-ի սկզբնական մասում, 56 նամակների 14 և 15-րդ տեղերը, նշանակում է դրանք «Գիրք թղթոց» են մտել շատ վաղ, գուցե և վերջինիս կազմման սկսբնական խմբագրության ժամանակ։ Մինչդեռ սույն բնագիրը Կանոնագրքում մտել է Հովհաննես Օձնեցուց հետո IX—X դարերի միջոցին։ Այստեղից կարելի է ենթադրել, որ այս բնագիրը Կանոնագիրք է մուծվել «Գիրք թղթոց»-ից։ Սակայն չշտապենք։ Հ. Անասյանը նկատել էր նաև, որ այս բնագրի առաջին մասը Երուսաղեմի սուրբ Հակոբյանց մատենադարանի ճառընտիրներից մեկում կրում է Աբրահամ կաթողիկոսի անունը[3]։ Ահա այդ բնագրի վերնադիրը. «Տեառն Աբրահամու Հայոց կաթուղիկոսի խոստովանութիւն»[4]։ Եթե նկատի չունենանք շարադասության առանձին շեղումներ, վերջինս ծածկում է Աբդիշո եպիսկոպոսի վերևում նշված առաջին նամակին։ Աբրահամ կաթողիկոսի խոստովանության միայն վերջին մասը սկսած «Արդ ամենայն վարդապետք զգուշացուցին զմեզ...» հատվածից[5] մինչև վերջ չենք գտնում Աբդիշո եպիսկոպոսի առաջին նամակում, այն գտնում ենք սրա երկրորդ նամակի վերջին մասում, սկսած «զայս ամե-

---

1 Նույն տեղում, էջ 68—69։

2 Տե՛ս ներկա հատորում։

3 Հայկական մատենագիտություն, հատ. Ա, էջ 942։

4 Տե՛ս Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. երկրորդ, Երուսաղէմ, 1953, էջ 32։

5 Տե՛ս նույն տեղում, էջ 32—33։

նայն զոր գրեցաք և նզովեցաք» հատվածից մինչև վերջ, ուր Աբդիշո եպիսկոպոսի երկրորդ նամակի «առաւել ի Դաւթայ երանելոյ...ի մոլորեցուցիչ գիտութենէ, և ճշմարիտ վարդապետքն» ընդարձակ հատվածը[1] չի պահվել Աբրահամ կաթողիկոսի խոստովանության մեջ։ Կարելի է նաև նշել, որ Կանոնագրքի Անտիոքի ժողովի խոստովանությունը և Աբրահամ կաթողիկոսի խոստովանությունն ընդհանուր առմամբ ծածկում են միմյանց, միայն վերևում նշված վերջին հատվածը չենք գտնում Կանոնագրքի բնագրում։ Միևնույն բնագրի այս երեք տարբերակներից հարազատության առումով, Աբրահամ կաթողիկոսի խոստովանությունը համեմատաբար ավելի մոտ է Աբդիշո եպիսկոպոսի առաջին նամակին։ Երուսաղեմի այն ձեռագիրը, որտեղ գտնվում է Աբրահամ կաթողիկոսի խոստովանությունը, նոր ձեռագիր է, ընդօրինակված Երուսաղեմում, 1737 թ.։ Հետևապես այն չի կարող հաստատ համոզում ներշնչել այս բնագիրը Աբրահամ կաթողիկոսին վերագրելու համար։

Մեզ հայտնի է նաև առաջարկվող բնագրի մի այլ, արդեն հրապարակված տարբերակը։ «Կնիք հաւատոյ»[2] ժողովածոի վերջին փաստաթուղթը ունի այս վերնագիրը. «Մեկնութիւն ի յայտարարութիւն և կշտամբանք հերձուածոցն»[3]։ Սրա երկրորդ մասը՝ սկսած 369-րդ էջի 6—7 և 16-րդ տողից մինչև վերջ միևնույն բնագրի մի այլ տարբերակն է։ Ձեռագիրը, որից հրատարակել է Կարապետ եպիսկոպոսը, դժբախտաբար թերի է։ Հրապարակված է մինչև մեր հրատարակության «զի է Աստուած և մարմին ի մի բն»[4] հատվածը։ «Կնիք հաւատոյ»-ի տարբերակը մեզ հետաքրքրում է այն առումով, որ բնագիրը տրված է ամբողջական ձևով, որպես մի փաստաթուղթ։ Այսպես է նաև Կանոնագրքի տարբերակը։ Մինչդեռ «Գիրք թղթոց»-ում և Ն. Պողարյանի «Յուցակ»-ում եղած տարբերակները այս բնագիրը մեզ ներկայացնում են որպես երկու առանձին փաստաթղթեր։ Մյուս կողմից, քանի որ սույն բնագիրը և «Կնիք հաւատոյ» ժողովածուն իրենց բնույթով և էությամբ դավանաբանական գրվածքներ են, հարմար է ենթադրել, որ մեզ զբաղեցնող բնագիրը «Կնիք հաւատոյ»-ից է անցել Կանոնագրքին։ Իսկ թե այս նույն բնագիրը ինչպես է հանդես եկել այլ հեղինակների՝ Աբդիշո եպիսկոպոսի, Աբրահամ կաթողիկոսի անուններով՝ դժվարանում ենք որևէ բան ասել։

Հենց այն հանգամանքը, որ այս բնագիրը տարբեր տեղերում հանդես է եկել տարբեր անուններով, իսկ «Կնիք հաւատոյ» ժողովածուում անանուն, ցույց է տալիս որ այն կեղծ է, թեև կարող է խոր հնություն ունենալ։

Ի դեպ, սույն բնագրի նյութերը համեմատել ենք նաև Միաբանի հրատարակած «Գիրք հերձուածոց»-ի[5] համապատասխան նյութերի հետ[6], բայց դժվարանում ենք ասել, որ վերջիններս օգտվել են։

Երկրորդ Նիկիական կանոնախումբը Կանոնագրքի համակարգում զբաղեցնում է 34 (ԼԴ)-րդ տեղը։ Կանոնախմբի վերնագրում նշված «երկրորդ» բառը պետք չէ շփոթեցնի մեզ առնչություններ փնտրելու այս կանոնախմբի և 787

---

[1] Գիրք թղթոց, էջ 69։
[2] Հրատ. Կարապետ եպիսկոպոսի, Էջմիածին, 1914։
[3] Նույն տեղում, էջ 366։
[4] Տե՛ս ներկա հատորը, էջ 70, տող 2։
[5] Վաղարշապատ, 1892։
[6] Նույն տեղում, հատվածներ ԽԲ, ԿԲ, ԿՋ, ՃԽԵ—ՃԽԷ, ՃՄ և այլն, էջ 7, 10—12, 16—17, 19—20։

թվի երկրորդ անգամ Նիկիայում հրավիրված ժողովի և վերջինիս որոշումների միջև։ Վերնագրի «կրկնաբանելով կարճ ի կարճոյ» հատվածը հուշում է մեզ, որ սույն կանոնախումբը ինչ որ մի բանի համառոտ կրկնուվթյունն է։ Ելնելով դրանից առաջարկվող և մեր ձեռքի տակ եղած կանոնական մյուս բնագրերը համեմատեցինք և նկատեցինք, որ այն վերցրված, համառոտված և խմբագըրված է Նիկիայի, Անկյուրիայի, Կեսարիայի, Նեոկեսարիայի, Գանգրայի, Անտիոքի և Լավոդիկեի կանոնախմբերի հոդվածներից։ Իսկ թե վերնագրում ինչո՞ւ են գրել «Կանոնք երկրորդ Նիկիականք», թերևս Նիկիայի 325 թվի ժողովի որոշումներից տարբերելու համար, մյուս կողմից տեղական նշված ժողովների որոշումները ևս ունեին Նիկիայի տիեզերական առաջին ժողովի որոշումների ոգին ու կնիքը և դրանք նույնպես ընդունվել էին հայ եկեղեցու կողմից[1]։

Այստեղ դեմ առ դեմ կդնենք երկրորդ Նիկիական, Կանոնագրքում բերված հիշված ժողովների կանոնախմբերի և կլոր փակագծերում հունարեն բնագրի (վերջինս նշում ենք պայմանականորեն, հետագայում բացատրելու պայմանով) համապատասխան հոդվածների համակարգը.

Երկրորդ Նիկիական	Կանոնագիրք		Հունարեն
Ա.	Նիկիայի	Ա.	(1)
Բ.	»	Բ.	(2)
Գ.	»	—	(3)
Դ.	»	Դ.	(4)
Ե.	»	Ե.	(5)
Զ.	»	Զ.	(6)
Է.	»	Է.	(7)
Ը.	»	Ը.	(8)
Թ.	»	—	(8)
Ժ.	»	Թ.	(9)
ԺԱ.	»	Ժ.	(10)
ԺԲ.	»	ԺԱ.	(11)
ԺԳ.	»	ԺԳ.	(13)
ԺԴ.	»	ԺԴ.	(14)
ԺԵ.	»	ԺԵ.	(15)
ԺԶ.	»	—	(16)
ԺԷ.	»	ԺԶ.	(17)
ԺԸ.	»	ԺԷ.	(18)
ԺԹ.	»	ԺԹ.	(19)
Ի.	»	Ի.	(20)
ԻԱ.	Անկյուրիայի	Ա, Բ.	(1,2)
ԻԲ.	»	Դ.	(4)
ԻԳ.	»	ԺԲ.	(11)
ԻԴ.	»	ԺԵ.	(14)
ԻԵ.	»	ԺԶ.	(15)
ԻԶ.	»	ԺԷ.	(16)
ԻԷ.	»	ԺԸ.	(17)

[1] Համմտ. Ս. Տիգրանյան, Հայոց իրավունքի պատմության ներածություն, Երևան, 1924 էջ 106։

Երկրորդ Նիկիական		Կանոնագիրք	Հոմարեն
ԻԸ.	Անկյուրիայի	ԺԹ.	(18)
ԻԹ.	»	Ի.	(19)
Լ.	Կեսարիայի	Ա. . . .	(Անկյուրիայի 20)
ԼԱ.	»	Գ. . . .	(» 21)
ԼԲ.	»	Թ. . . .	(» 25)
ԼԳ.	Նեոկեսարիայի	Բ.	(2)
ԼԴ.	»	Գ.	(3)
ԼԵ.	»	Դ.	(4)
ԼԶ.	»	Ե.	(5)
ԼԷ.	»	Զ.	(6)
ԼԸ.	»	Ա.	(1)
ԼԹ.	»	Է.	(7)
Խ.	»	ԺԴ, ԺԵ.	(9, 10)
ԽԱ.	»	ԺԳ.	(8)
ԽԲ.	»	ԺԶ.	(11)
ԽԳ.	»	ԺԷ.	(12)
ԽԴ.	»	ԺԸ.	(13)
ԽԵ.	»	Ի.	(15)
ԽԶ.	Գանգրայի	Ա.	(1)
ԽԷ.	»	Գ.	(3)
ԽԸ.	»	Բ.	(2)
ԽԹ.	»	Դ.	(4)
Ծ.	»	Ե, Զ.	(5, 6)
ԾԱ.	»	Է.	(7)
ԾԲ.	»	ԺԱ.	(11)
ԾԳ.	Լավոդիկեի	ԻԴ.	(24)
ԾԴ.	»	ԻԵ.	(25)
ԾԵ.	»	ԻԶ.	(26)
ԾԶ.	»	ԻԷ.	(27)
ԾԷ.	»	ԻԸ.	(28)
ԾԸ.	»	ԻԹ.	(29)
ԾԹ.	»	Լ.	(30)
Կ.	»	ԼԲ, ԼԳ.	(32, 33)
ԿԱ.	»	ԼԵ.	(35)
ԿԲ.	»	ԼԶ.	(36)
ԿԳ.	»	ԼԷ.	(37)
ԿԴ.	»	ԼԹ.	(40)
ԿԵ.	Գանգրայի	ԺԷ.	(17)
ԿԶ.	»	ԺԶ.	(16)
ԿԷ.	»	ԺԵ.	(15)
ԿԸ.	»	ԺԸ.	(18)
ԿԹ.	»	ԺԹ.	(19)
Հ.	»	ԻԲ.	(20)
ՀԱ.	Անտիոքի	Զ.	(6)

Երկրորդ Նիկիական		Կանոնագիրք	Հունարեն
ՀԲ.	Անտիոքի	Է.	(7)
ՀԳ.	»	Ը.	(8)
ՀԴ.	»	Թ.	(9)
ՀԵ.	»	ԺԳ.	(13, 22)
ՀԶ.	»	ԺԶ.	(16)
ՀԷ.	»	ԺԷ.	(17)
ՀԸ.	»	ԺԸ.	(18)
ՀԹ.	»	ԻԲ.	(23)
Ձ.	»	ԻԳ.	(24)
ՁԱ.	»	ԻԴ.	(25)
ՁԲ.	Լաւոդիկեի	Բ.	(2)
ՁԳ.	»	Գ.	(3)
ՁԴ.	»	ԼԳ.	(33)
ՁԵ.	»	Թ.	(9)
ՁԶ.	»	ԼԱ.	(31)
ՁԷ.	»	ԺԱ.	(11)
ՁԸ.	»	ԺԲ.	(12)
ՁԹ.	»	ԺԴ.	(14)
Ղ.	»	ԺԵ.	(15)
ՂԱ.	»	ԺԷ.	(17)
ՂԲ.	»	ԺԸ.	(18)
ՂԳ. }	»		
ՂԴ. }	»	ԺԹ.	(19)
ՂԵ. }	»		
ՂԶ.	»	—	(21)
ՂԷ.	»	ԻԳ.	(23)
ՂԸ.	»	ԻԲ.	(22)
ՂԹ.	»	ԽԲ.	(45)
Ճ.	»	ԽԳ.	(46)
ՃԱ.	»	ԺԶ.	(16)
ՃԲ.	»	ԽԴ.	(47)
ՃԳ.	»	ԽԵ.	(48)
ՃԴ.	»	ԽԸ.	(51)
ՃԵ.	»	ԽԷ.	(50)
ՃԶ.	»	ԽԹ.	(52)
ՃԷ.	»	ԾԱ.	(53)
ՃԸ.	»	ԾԱ.	(54)
ՃԹ.	»	ԾԲ.	(55)
ՃԺ.	»	ԾԳ.	(56)
ՃԺԱ.	»	—	(57)
ՃԺԲ.	»	ԾԴ	(58)
ՃԺԳ.	»	ԾԵ.	(59)

ՃԺԴ. ավելացրել է կազմողը

Այսպիսով, մեզ համար պարզ է դառնում, թե սույն կանոնախումբը

ինչ է ներկայացնում իրենից։ Սակայն, որոնումների ժամանակ մեր հետաքրքրասիրությունը պտտվում էր այն հարցի շուրջը, թե արդյոք այս կանոնախումբը Հովհ. Օձնեցու կանոնագրքի հանդես գալուց հետո՞ է կազմվել՝ օգտագործելով կանոնագրքում նշված ժողովների բնագրերը, թե՞ կազմողը անմիջական աղբյուր է ունեցել նույն ժողովների որոշումները, որոնք առանձին առանձին գոյություն են ունեցել մինչև Հովհ. Օձնեցին, ասել է թե մինչև կանոնագրքի հանդես գալը։

Կանոնական նշված բնագրերի ուշադիր և մանրակրկիտ համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ այս կանոնախումբը հանդես է եկել մինչև Կանոնագրքի հանդես գալը և սրա կազմողը օգտվել է ոչ թե Կանոնագրքից, այլ վերևում հիշված ժողովների որոշումների, Կանոնագրքից անկախ, առանձին առանձին գոյություն ունեցող բնագրերից։ Ահա թե ինչպիսի փաստեր մեզ բերեցին այդ համոզման։

Սույն կանոնախմբի և Կանոնագրքի համապատասխան կանոնախմբերի հոդվածները համեմատելիս նկատեցինք, որ այստեղ կան այնպիսի հոդվածներ, որ չեն պահվել Կանոնագրքում, բայց այդպիսիները գտնվում են միևնույն կանոնախմբերի հունարեն բնագրում. այսպես՝ այս կանոնախմբի Գ հոդվածում կարդում ենք. «Ոչ է պարտ որոց ի վիճակաւորութեան են՝ ի ներքս ածական ունել կանայս, բայց ի հանուց եւ ի մարէ եւ ի քեռէ»։ Կանոնագրքի Նիկիայի կանոնախմբի բնագրում այդպիսի կանոն չկա, այնտեղ Գ կանոնը բոլորովին այլ բան է, մինչդեռ նույնի հունարեն բնագրի 3-րդ կանոնը արտահայտված է Երկրորդ Նիկիական կանոնախմբի Գ կանոնում։ Հունարենում կարդում ենք. „Ἀπηγόρευσεν καθόλου ἡ μεγάλη σύνοδος, μήτε ἐπίσκοπῳ, μήτε πρεσβυτέρῳ, μήτε διακόνῳ, μήτε ὅλως τινὶ τῶν ἐν κλήρῳ, ἐξεῖναι συνείσακτον γυναῖκα ἔχειν. Πλὴν εἰ μή ἄρα μητέρα, ἢ ἀδελφήν, ἢ θείαν, ἢ ἃ μόνα πρόσωπα πᾶσαν ὑποψίαν διαπέφευγεν“[1] (Ընդհանրական մեծ ժողովը բոլորովին (բացարձակապես) արգելեց եպիսկոպոսին, երեցին, սարկավագին և ընդհանրապես հոգևորականության մեջ մտնողներից որևէ մեկին կնոջ հետ միատեղ բնակվելը, բացի մորից, քրոջից, մորաքրոջից (հորաքրոջից) կամ այն անձերից, որոնք դուրս են ամեն կասկածանքից)։

Մեզ հետաքրքրող երկու կանոնների նույնությունը ակներև է, ձևական տարբերությունը կայանում է նրանում, որ հունարենում մեկ մեկ թվում է հոգևորականության՝ եպիսկոպոս, քահանա, սարկավագ աստիճանները և այնուհետև էլի ավելացնում «ընդհանրապես հոգևորականության մեջ մտնողներից որևէ մեկին». իսկ Երկրորդ Նիկիականում գրված է վերջին՝ ընդհանուր ձևով և ապա՝ հունարենի մորաքրոջ (հորաքրոջ) փոխարեն այստեղ դրված է մամի՝ «ի հանուց»։

Ի դեպ այս կանոնը անցել է նաև Եպիփանի անունով հայտնի կանոնախմբին[2]։

Ղ հոդվածում կարդում ենք՝ «Ոչ է պարտ զկէսսարկաւադաց ի սարկաւագաց տեղի ունել»։ Կանոնագրքի Լավոդիկեի կանոնախմբի հոդվածներում նման սահմանում չենք գտնում, մինչդեռ նույնի հունարեն 21-րդ հոդվածում կարդում ենք. „Ὅτι οὐ δεῖ ὑπηρέτας ἔχειν χώραν ἐν τῷ διακονικῷ καὶ ἀπτεσθαι

[1] I. B. Pitra, Juris ecclesiastici graecorum htstorta et monumenta, tom. 1, Romae, MDCCCLXIV, p. 428. այսուհետև Պիտրա։

[2] Տե՛ս սույն հատորում, էջ 62։

ՀՁՅՊՈՂԱՆ ՅԱՅՍՈՅ[1]. (Պետք չէ սպասավորը (կեսսարկավագը) սարկավագանոցում տեղ ունենա (մտնի) և հպվի տերունական սպասներին)։ Ինչպես դժվար չէ նկատել, Կանոնագրքի Լավոդիկեի կանոնախմբի ԻԱ հոդվածում ընդարձակված ձևով պահվել է հունարեն նույն հոդվածի միայն վերջին մասը, իսկ առաջին հատվածի մասին ոչ մի խոսք չկա, մինչդեռ Երկրորդ Նիկիական կանոնախմբի ՂԶ հոդվածում պահվել է հունարենի առաջին մասը, իսկ երկրորդ մասը դուրս է ընկել։ Այսպիսով, հունարեն միևնույն հոդվածի նյութը հայերեն երկու տարբեր բնագրերում տարբեր մոտեցմամբ է օգտագործվել։

Երկրորդ Նիկիական կանոնախմբի ՃԺԱ հոդվածում կարդում ենք. «Ոչ է պարտ ի դեպուղս կամ յագարակս եպիսկոպոս նստուցանել, այլ տեսուչք շրջել»։ Այս ևս չենք գտնում Կանոնագրքի Լավոդիկեի կանոնախմբի սահմանումներում, մինչդեռ նույնի հունարեն 57-րդ հոդվածի սկզբի հատվածը արտահայտում է ՃԻԱ հոդվածը։ Ահա հունարենը. „Ὅτι οὐ δεῖ ἐν ταῖς κώμαις καὶ ἐν ταῖς χώραις καθίστασθαι ἐπισκόπους, ἀλλὰ περιοδευτάς,..."[2] (Պետք չէ գյուղերում և (փոքր) բնակավայրերում եպիսկոպոս նշանակել (հաստատել, նստեցնել), այլ շրջիկ)։ Հունարենի շարունակությունը կանոնագրքում բացակայում է, ուստի այն չենք բերում։

Վերևում նշված օրինակներին նման են նաև այս կանոնախմբի Թ և ԻՋ հոդվածները, որ Կանոնագրքի Նիկիայի կանոնախումբը չունի, բայց դրանք արտահայտված են նույն կանոնախմբի հունարեն 8-րդ և 16-րդ ընդարձակ հոդվածների փոքր հատվածներում։

Բերենք այլ տիպի փաստեր. Երկրորդ Նիկիական կանոնախմբում կան այնպիսի հոդվածներ, որոնք թեև համառոտ են, բայց կարող ենք նկատել, թե այդ համառոտումը ո՞ր բնագրից է կատարված՝ Կանոնագրքի՞, թե հունարենի։ Այսպես, սույն կանոնախմբի ԽԹ հոդվածում կարդում ենք. «Որք ի հիւանդութեան մկրտեցան՝ մի՛ ձեռնադրեսցին ի քահանայութիւն, քանզի ոչ հաւատացին. բայց եթէ երկիւղածութեամբ կեցցեն կամ հարկ ինչ լինիցի»։ Այս պետք է համապատասխանի Կանոնագրքի Նեոկեսարիայի ԺԷ հոդվածին. ահա այն. «Վասն որք ի նեղութիւն անկանիցին կամ ի խիստ հիւանդութիւն եւ կամ ըմբռնեսցի ի բռնաւորաց եւ վասն նեղութեան մկրտիցի, եւ կամ յառաջ էր անուն քրիստոնեայ եւ գործք վատթարք եւ ապա վասն նեղութեանն ի հաւատս կացցէ, զայնպիսին ընդունի եկեղեցի, այլ ոչ կատարելապէս, զի ակամայութեամբ են հաւատքն. զայնպիսւոյն ասէ գիր. «Միթէ՞ ի հողխոստովան առնիցիմ առ քեզ»։ Իսկ նույն կանոնախմբի հունարեն բնագրի 12-րդ հոդվածում գրված է. „Ἐὰν νοσῶν τις φωτισθῇ, εἰς πρεσβύτερον ἄγεσθαι οὐ δύναται, οὐκ ἐκ προαιρέσεως γὰρ ἡ πίστις αὐτοῦ, ἀλλ' ἐξ ἀνάγκης,..."[4] (Եթե որևէ մեկը հիվանդ ժամանակ [մկրտությամբ] լուսավորվեց, այդպիսին չի կարող երեց դառնալ, որովհետև նրա հավատը ոչ թե իր ցանկությամբ է, այլ անհրաժեշտությամբ (կարիքի, պահանջի)։ Հունարեն հոդվածի վերջին մասը չենք բերում, որովհետև այն Կանոնագրքում դարձյալ չի պահվել։ Կանոնագրքի բնագրում խոսքը հիվանդի մկրտության մասին է, մինչդեռ Երկրորդ Նիկիական և հունարեն հոդվածներում՝ հիվանդ ժամանակ մկրտվածներին քահանա չձեռնադրելու մասին է։

1. Պիտրա, էջ 428։
2. Պիտրա, էջ 503։
3. Հատ. Ա, էջ 186։
4. Պիտրա, էջ 453։

Մի այլ օրինակ. Երկրորդ Նիկիական կանոնախմբի ԽԵ հոդվածում կարդում ենք. «Սարկաւագունք պարտ է լինել յեկեղեցւոջ է, ըստ առաքելական կանոնին որ ի Գործս առաքելոցն» (տե՛ս Զ, 3)։ Կանոնագրքի Նեոկեսարիայի կանոնախմբի համապատասխան՝ ի հոդվածում ասված է. «Եւ սարկաւագունս ըստ պիտոյիցն արժան է առնել, որչափ տեղիքն եւ պէտքն խնդրեսցեն, եւ մի՛ աւելիս ինչ զի մի՛ ցոփութիւն լինիցի»[1]։ Հունարեն համապատասխան՝ 15-րդ հոդվածում գրված է. „Διάκονοι ἑπτὰ ὀφείλουσιν εἶναι κατὰ τὸν κανόνα, κἂν πάνυ μεγάλη εἴη ἡ πόλις, πεισθείσῃ δὲ ἀπὸ τῆς βίβλου τῶν Πράξεων"[2]։ (Սարկավագները ըստ կանոնի պետք է լինեն յոթ [հոգի], եթե նույնիսկ շատ մեծ է քաղաքը, իսկ դրանում կհամոզվենք Գործք [առաքելոց] գրքից)։ Կանոնագրքի բնագրում բացակայում է սարկավագների թիվը՝ յոթ և վերջինիս աղբյուրը, մինչդեռ այդ երկուսն էլ գտնում ենք և՛ հունարենի և՛ Երկրորդ Նիկիական կանոնախմբի վերևում նշված հոդվածներում։

Դարձյալ օրինակ. Երկրորդ Նիկիական կանոնախմբի նախավերջին՝ ԾԺԹ հոդվածում կարդում ենք. «Ոչ է պարտ տգիտական կամ անկանոնական գիրս կարդալ կամ սաղմոսել յեկեղեցւոջ, այլ զկանոնեալքն՝ զՆոր եւ զՀին Կտակարանաց, ըստ որում եւ կանոնեալքն են»։ Վերջինս Կանոնագրքի Լավոդիկեի ԾԵ հոդվածի առաջին մասն է[3], իսկ երկրորդ մասը, ուր թվում է Հին և Նոր Կտակարանի բովանդակությունը[4], Երկրորդ Նիկիական կանոնախմբում բացակայում է, իսկ հունարենում դրված է որպես առանձին հոդված՝ 60 համարի տակ[5]։ Բերում ենք վերևում նշված՝ ԾԺԹ հոդվածին համապատասխան հունարեն 59-րդ հոդվածը. „Ὅτι οὐ δεῖ ἰδιωτικοὺς ψαλμοὺς λέγεσθαι ἐν τῇ ἐκκλησίᾳ οὐδὲ ἀκανόνιστα βιβλία, ἀλλὰ μόνα τὰ κανονικὰ τῆς Παλαιᾶς καὶ Καινῆς διαθήκης"[6]. (Պետք չէ (հարմար չէ) եկեղեցում իր հորինած սաղմոսն ասել (կարդալ), ոչ էլ պարականոն գրքեր, այլ միայն Հին եւ Նոր Կտակարանի կանոնական [գրքերը])։ Երկրորդ Նիկիական կանոնախմբի այս հոդվածը և՛ բովանդակությամբ և՛ կառուցվածքով համապատասխանում է ավելի հունարենի նշված հոդվածին, քան Կանոնագրքի ունեցածին։

Եվ էլի. սույն կանոնախմբի Լ հոդվածում կարդում ենք. «Եթէ ոք շնացաւ կամ շնայցէ՝ է ամ ապաշխարեսցէ, եւ այսպէս աղաւթակից լիցի»։ Սրան համապատասխան Կանոնագրքի Կեսարիայի կանոնախմբի Ա հոդվածում կարդում ենք. «Վասն կանանց, որ ընդ արամբ են եւ շնան, թէ թողցեն ի բաց զպղծութիւնն եւ յապաշխարութիւն եկեսցեն՝ Բ ամ առ դրանն ընդ ձեռամբ կացցեն եւ Բ ամս մտեալ յեկեղեցի ելցէ ընդ ապաշխարողս, քննեալ վարքն, տրաւք տնանկաց քաւեալ զմեղս իւր՝ հաղորդելոյ աւրինացն արժանի լիցի»[7]։ Հայերեն այս երկու բնագրերից մեջբերման միտքը արտահայտված է Անկյուրիայի ժողովի հունարեն բնագրի 20-րդ հոդվածում. ահա այն. „Ἐάν τινος γυνὴ μοιχευθῇ, ἢ μοιχεύσῃ τις ἐν ἑπτὰ ἔτεσιν δεῖ αὐτὸν τοῦ τελείου τυχεῖν, κατὰ τοὺς βαθμοὺς τοὺς προάγοντας"[8]. (Եթե որևէ կին կամ [տղամարդ] շնացավ, կատարյալը հաղորդության [համար] յոթ տարի, դրան տանող [պատժի] աստիճանների

---

[1] Հատ. Ա, էջ 187։
[2] Պիտրա, էջ 454։
[3] Հատ. Ա, էջ 240—241։
[4] Նույն տեղում, էջ 241—242։
[5] Պիտրա, էջ 503—504։
[6] Նույն տեղում, էջ 503։
[7] Հատ. Ա, էջ 169։
[8] Պիտրա, էջ 447։

համաձայն)։ Կանոնագրքի բնագրում խոսքը վերաբերում է միայն կանանց, մինչդեռ երկրորդ Նիկիականում և հունարենում՝ և՛ կանանց և՛ տղամարդկանց։ Այստեղ պատժաչափը նույնն է՝ յոթը տարի, մինչդեռ կանոնագրքում՝ աստիճաններով՝ 5+2։

Մի այլ փաստ. Կանոնագրքի Ա հատորի ծանոթագրություններում արդեն ցույց ենք տվել, թե հունարենից հայերեն թարգմանված կանոնագրքի առանձին կանոնախմբերում ինչ հոդվածներ հունարեն կանոնախմբերը չունեն և ընդհակառակը. օրինակ, կանոնագրքի Նիկիայի կանոնախմբի Գ և ԺՀ, Անկյուրիայի Ժ, Կեսարիայի Բ, Զ, Ը, և Ժ, Նեոկեսարիայի Ը—ԺԲ, Գանգրայի Ի, ԻԱ, ԻԳ և ԻԴ, Անտիոքի ԻԵ հոդվածները հունարեն բնագրերում չենք գտնում[1]։ Այստեղ նշված հոդվածներից և ոչ մեկը չի օգտագործված Երկրորդ Նիկիական կանոնախմբում, մինչդեռ, ինչպես վերևում նշեցինք, հունարեն մի շարք հոդվածներ, որոնք կանոնագրքում չեն պահվել, օգտագործվել են Երկրորդ Նիկիական կանոնախմբում։ Միայն այս փաստը ցույց է տալիս, որ Երկրորդ Նիկիական կանոնախումբը կազմվել է վաղ քան նշված կանոնախմբերին կատարվել են այդ ավելացումները։

Վերոբերյալ փաստերի նշումից հետո արդեն կարող ենք եզրակացնել, որ ճիշտ չեն Վ. Բաստամյանցի և Ն. Մելիք-Թանգյանի այս կանոնախմբի վավերականության մասին հայտնած կարծիքները։ Մխիթար Գոշի Դատաստանագրքի առաջին մասի ՃԴ հոդվածին տված 291-րդ ծանոթագրության մեջ Վ. Բաստամյանցը գրում է. «Բացի Նիկիո ժողովի 20 կանոններից, մեր կանոնագրքերի մեջ կան և 115 կանոն, որք կոչվում են Կանոնք Երկրորդ Նիկիական... Ջնայելով բազմաթիվ արևելյան և արևմտյան հնագույն հեղինակների վկայության վրա, թե Նիկիո առաջին ժողովը (325 թ.) հաստատեց միայն քսան կանոն, ոմանք կարծում էին դոցա թիվը քսանից ավելի, մինչև անգամ յոթանասուն։ 16-րդ դարում ի հայտ եկան մի արաբերեն ձեռագիր կանոններ Նիկիո ժողովի անվամբ, դոցա թարգմանեցին ոմանք 80 և ոմանք 84 համարով, իսկ զանազան հավելվածներով նոցա թիվը ըստ ոմանց հասնում է մինչև 128-ի։ Մեր հեղինակը (Գոշը—Վ. Հ.) արդեն 12-րդ դարում ունեցել է իր ձեռքի տակ այդ տեսակ կանոններ...»[2]։

Ն. Մելիք-Թանգյանը իր միևնույն գրքում այս կանոնախմբի մասին երկու տարբեր կարծիք է հայտնում. «Հայոց ձեռագրերում կան 114—115 Երկրորդ Նիկիական կանոններ։ Այդ ավելի համարվող կանոնները պիտի քաղված լինին ժողովի ընդհանուր արձանագրությունից, որը մեզ չի հասել»[3]։ Եվ ապա.

[1] Այս հանգամանքը լույս է սփռում կանոնագրքում Կեսարիայի անունով մտած կանոնախմբի վավերականության վրա, որովհետև, ինչպես ցույց է տալիս վերևում շարադրածը, V դարում այդ կանոնախումբը գոյություն չուներ (հմմտ. Ն. Ակինյան, Շահապիվանի ժողովի կանոնները, «Հանդէս Ամսօրեայ», 1949, № 4—12, էջ 105. հմմտ. Ն. Մելիք—Թանգյան, Հայոց եկեղեցական իրաւունքը, գիրք Ա, էջ 183, Կանոնագիրք Հայոց, հատ Ա, էջ XLI, 572—574)։ Ահա թե ինչ է եզրակացնում Ն. Ակինյանը. «Ինձ կը թվի, թե հայ խմբագիրը չահագործած է այդ տեղիքը կազմելու համար նոր «Կեսարիո կանոններ» ինչ ինչ առնելով Անկյուրիո կանոններեն, ինչ ինչ հերյուրելով ըստ քմաց» (Նույն տեղում, էջ 105)։ Ընդունելի եզրակացությունն այն է, որ այս կանոնախումբը կազմվել է V դարից հետո՝ VI—VII դարերում։ Սակայն երկբայելի է Ակինյանի «ինչ ինչ հերյուրելով ըստ քմաց» արտահայտությունը։ Կազմողը ոչ թե հերյուրել է «ըստ քմաց», այլ գուցե իր ձեռքի տակ ունեցել է այնպիսի աղբյուրներ, որոնց մասին մենք առայժմ պատկերացում չունենք։

[2] Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, էջ 154—155։

[3] Հայ եկեղեցական իրաւունքը, գիրք Ա, էջ 159։

«Գալով մեր ձեռագրերի 115 Երկրորդ Նիկիական կանոններին, պետք է նկատել..., որ նրանցից սկզբի քսան կանոնները նույնն են, ինչ որ իսկական Նիկիական կանոնները, բայց ոչ հայոց ձեռագրերում եղած Նիկիականը, իսկ մնացած 95 կանոններն են ժողովածու առաքելական, տիեզերական, տեղական ժողովների կանոնների, նոր բան ամենևին չեն ներկայացնում իրենց բովանդակութեամբ, նրանք բոլորն էլ անվավեր են, որովհետև Նիկիայի վավերական կանոնները քսան են»[1]։

Վերևում բերված փաստերից երևում է, որ Մխիթար Գոշը իր ձեռքի տակ չի ունեցել «այդ տեսակ կանոններ» (իմա՝ արաբերենից թարգմանված—Վ. Հ.), ինչպես կարծում է Վ. Բաստամյանցը և ոչ էլ այս կանոնախումբը կազմված է առաքելական և տիեզերական ժողովների կանոններից, ինչպես մասնակիորեն սխալվում է Ն. Մելիք-Թանգյանը։ Այդ հարցին այժմ կարելի է ստույգ պատասխանել. Մխիթար Գոշը օգտվել է Կանոնագրքի X դարի խմբագրության մի որևէ տարբերակից[2] և, որ կարևոր է, Երկրորդ Նիկիական կանոնախումբը աղբյուրագիտական առումով չի լծորդվում Կանոնագրքի համապատասխան բնագրերի հետ։ Սույն բնագիրը անհամեմատ ավելի հարազատ է հունարեն համապատասխան բնագրերին, քան Կանոնագրքի ունեցածը։

Սրանից հետո այնուամենայնիվ, մեզ շարունակում է հետաքրքրել այն հարցը, թե Երկրորդ Նիկիական կանոնախմբի կազմողը ի՞նչ բնագրեր է օգտագործել՝ հունարե՞ն, թե դրանց հայերեն հնագույն թարգմանությունները։ Վերևում հունարեն բնագրերը վկայակոչեցինք, որովհետև մինչև հիմա մեզ չեն հասել այդ կանոնախմբերի հայերեն հնագույն թարգմանությունները։ Բայց և այնպես որոշ փաստեր մեզ ստիպում են եզրակացնել, որ հեղինակը օգտվել է ոչ թե հունարեն, այլ սրանց հայերեն հնագույն թարգմանություններից։

Կանոնագրքի Ա հատորի «Հավելված» բաժնում հրատարակել էինք Մատենադարանի № 2151 ձեռագրի մագաղաթյա պահպանակի բովանդակած նյութը։ Վերջինս Բարսեղ Կեսարացու կանոնախմբի հոդվածների ոչ լրիվ ցանկն է, ապա Կանոնագրքում մտած նրա Գ, Դ, Ե, Ժ (հունարենին համապատասխան 2, 4, 8, 9 և 18-րդ) հոդվածները թերի վիճակում և Կանոնագրքում չմտած նրա հունարեն 15, 16, 17-րդ հոդվածները[3]։ Մի բնագիր էլ հրատարակել էինք նույն հեղինակի կանոնախմբի «Մանրաթագրություններ» բաժնում[4]։ Այն Կանոնագրքում մտած Բարսեղ Կեսարացու ՁԱ (հունարենին համապատասխան 87-րդ) հոդվածի հայերեն հնագույն և ամբողջական թարգմանությունն է։ Կանոնագրքից անկախ ընդօրինակությունների շնորհիվ մեզ են հասել այս երկու բնագրերը, որոնք, անշուշտ, գոյություն են ունեցել մինչև Հովհ. Օձնեցին, այսինքն՝ մինչև Կանոնագրքի հանդես գալը և հանդիսանում են Բարսեղ Կեսարացու կանոնական նամակների հայերեն հնագույն և լրիվ թարգմանության բեկորները։ Բարսեղ Կեսարացու կանոնական նամակների հայերեն հնա-

[1] Նույն տեղում, էջ 160—161։

[2] Տե՛ս վերևում, էջ XIX—XX։

[3] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 657—661։ Տպագրական սխալի պատճառով 17-րդը դարձել է 47-րդ, էջ 651։

[4] Նույն տեղում, էջ 620—621։ Այս բնագիրը վերցրել էինք Մատենադարանի № 659 ձեռագրից, սակայն, հետագայում մեր որոնումների ժամանակ մեզ հանդիպեց դրա այլ տարբերակները, հետևյալ ձեռագրերում՝ № № 436 (էջ 186 ա—187 ա), 822 (էջ 191 բ—193 բ), 1500 (էջ 919 ա—920 ա), 5595 (էջ 349 ա—351 բ)։

դույն և լրիվ թարգմանության փաստը մեզ իրավամբ ենթադրել է տալիս, որ նման թարգմանություն անպայման ունեցել են նաև Նիկիայի, Անկյուրիայի, Նեոկեսարիայի, Գանգրայի, Անտիոքի և Լավոդիկեի ժողովների որոշումները, որոնք ինչ ինչ պատճառներով մեզ չեն հասել։ Ն. Ակինյանի կարծիքով այս վեց կանոնախմբերի հայերեն թարգմանությունը Եզնիկը բերել է 436/437 թվականներին[1], որոնք թեև չեն օգտագործվել, բայց ընդունվել են Շահապիվանի ժողովի կողմից։ Դժվար է ասել, թե Եզնիկը բերել է այդ կանոնախմբերի թարգմանությունը։ Գուցե նա բերել է դրանց հունարեն բնագրերը և դրանք թարգմանել Հայաստանում, որ ավելի հավանական է։ Բայց որ այդ կանոնախմբերը թարգմանվել են հինգերորդ դարի 30-ական թվականներին ավագ թարգմանիչների գործունեության բուռն շրջանում, միանգամայն հավանական է։

Հետաքրքիր է նաև հետևյալ փաստը. վերևում ցույց ենք տվել, թե երկրորդ Նիկիական կանոնախումբը կազմելիս ինչ կանոնախմբեր են օգտագործվել։ Տեղական ժողովներից միմիայն Սարդիկեի կանոնախումբն է դուրս մնացել երկրորդ Նիկիական կանոնախմբի համար օգտագործված աղբյուրների ցանկից, թեև այն մտել է Հովհ. Օձնեցու կազմած Կանոնագրքում։ Ինչո՞ւ։ Ըստ երևույթին նշված ժողովների որոշումների հայերեն հնագույն թարգմանություններից հետո երկրորդ Նիկիական կանոնախումբը կազմելիս Սարդիկեի կանոնախումբը տակավին թարգմանված չէր։ Վերջինիս թարգմանության ոճը, բառակազմությունը զգալի կերպով տարբերվում է նշված ժողովների հայերեն թարգմանություններից։ Ինչպես ճիշտ նկատել է Համազասպ Ոսկյանը, Սարդիկեի կանոնախումբը թարգմանվել է «հունաբան դպրոցի աշակերտի մը» կողմից[2]։ Այդ թարգմանությունը, ուսումնասիրողի գնահատմամբ, «մութ է և ստրկական»[3]։ Ասել է, թե այն թարգմանվել է VI—VII դարերում, մինչև Հովհ. Օձնեցին։ Այս ենթադրությունը հավաստում է նաև մի այլ կարծիք։ Հովսեփ Գաթրճյանը անցյալ դարի 60-ական թվականներին պատրաստել էր մի ուսումնասիրություն՝ նվիրված Հայոց Կանոնագրքին։ Վերջինս անտիպ է։ Սրանից երկու հատված հրատարակվել է Հ. Տաշյանի «Վարդապետութիւն առաքելոց» աշխատության 429—442 էջերում և «Հանդէս Ամսօրեայ»-ի 1949-ի № 4—12-ի 135—137 էջերում։ Գաթրճյանի համոզմամբ Կանոնագրքի V դարի ժողովածուն ներկայանում է հետևյալ բովանդակությամբ.

«1. Ասորի՝ Կանոնք Առաքելոց ԼԴ։

2. Յունական՝ ա. Կանոնք Նիկիոյ Ի, բ. Կանոնք Անկիւրայ, գ. Կանոնք Կեսարեայ, դ. Կանոնք Նիոկեսարեայ, ե. Կանոնք Գանգրայ, զ. Կանոնք Անտիոքայ, է. Կանոնք Ղաւոդիկեայ ՃՔ։

3. Հայ՝ Կանոնք Շահապիվանի Իզ[4]։

[1] Հանդէս Ամսօրեայ, 1949, № 4—12, էջ 105, հմմտ. նույնի Քննութիւն Ս. Սահակի վէրագրված կանոններու, Վիեննա, 1950, էջ 2։ Սակայն այստեղ հեղինակը որոշակի չի նշում այն մասին, թե Եզնիկը իր հետ կանոնների հունարեն բնագի՞րը, թե վերջինիս հայերեն թարգմանությունը բերեց։

[2] Սարդիկէի ժողովքի հայերէն կանոնները, Վիեննա, 1945, էջ 115։

[3] Նույն տեղում, էջ 132։

[4] Վարդապետութիւն առաքելոց, էջ 441—442, Հանդէս Ամսօրեայ, 1949, № 4—12, էջ 137. Հմմտ. Հ. Ոսկյան, Սարդիկէի ժողովքի հայերէն կանոնները, էջ 117։

Ինչպես դժվար չէ նկատել՝ Գաթրճյանը, այնուհետև Տաշյանը[1] և Ակինյանը[2], Կանոնագրքի V դարի խմբագրությունից բացառում էն Սարդիկեի ժողովի կանոնախումբը, որովհետև վերջինս այդ ժամանակ հայերեն թարգմանված չէր։ Իսկ դա նշանակում է, որ Երկրորդ Նիկիական կանոնախումբը կազմվել է մինչև Սարդիկեի ժողովի կանոնների հայերեն թարգմանությունը՝ մինչև VI—VII դարերը։ Նկատելով սրանից կարելի է եզրակացնել, որ Երկրորդ Նիկիական կանոնախումբը կազմել է V դարի վերջերին, կամ VI դարի սկզբներին։

Այս կապակցությամբ տեղին է հիշել Ակինյանի կարծիքը։ Մեզանից տարիներ առաջ նա Շահապիվանի ժողովին նվիրած ուսումնասիրության մեջ գրել է. «Համառոտությունս (իմա՝ Երկրորդ Նիկիական կանոնախումբը —Վ. Հ.) կատարված է վաղ ժամանակ մը, երբ տակավին նախնական թարգմանությունը կը գտնվեր անաղարտ վիճակի մեջ»[3]։

Գաթրճյանի, Տաշյանի և Ակինյանի վարկածը, թե Կանոնագրքի առաջին խմբագրությունը կազմվել է V դարում, թերևս կասկածելի է։ Գոնե այդպես կարելի է եզրակացնել Հովհ. Օձնեցու հետևյալ վկայությունից. «Վասն զի ոմանք առ ոմանս եւ ոչ ամենեքին առ ամենեսեան սոքա սերմանեալք, կամեցայ զրովանդակ զառի նոցանէն կանոնական սահմանեալ բան ի միում տեղւոջ գեղեցկագործ մատենիւ ի հայրապետանոցի աստ արմատացուցանել»[4]։ Եվ մեզ այնպես է թվում, որ V դարում Հովհ. Օձնեցու սկզբունքով (ինկորպորացիայի) չեն կազմել Կանոնագրքի առաջին խմբագրությունը, այլ գործնական նկատառումներով ի մի բերելով համառոտել են ձեռքի տակ եղած առանձին-առանձին գոյություն ունեցող՝ նշված ժողովների ընդարձակ քնագրերը, հետագայում ճոխացրել և այդպես օգտագործել։ Ճիշտ է, առայժմ դժվար է այս քնագրի հանդես գալու ժամանակը ստույգ որոշել, բայց կասկածից դուրս է, որ այն խոր հնություն ունի։ Մեր ենթադրությամբ V դարի կանոնական հավաքածուն հանդիսացել է սույն կանոնախումբը, որը Օձնեցուց հետո Կանոնագրքում մուծվելով ստացել է «Կանոնք Երկրորդ Նիկիականք» անունը։ Այսպիսով, Երկրորդ Նիկիականը կազմվել է մի անձնավորության կողմից, որն իր ձեռքի տակ ունեցել է նշված կանոնախմբերի հայերեն հնագույն թարգմանությունները։ Եվ ճիշտ է Բարսեղ Սարգիսյանը, երբ այս կանոնախմբի մասին գրում է. «Բայց ինձ կը թվի, որ Նիկիականն անկախ և աճառուած մը գրված ըլլա»[5]։

Քանի որ Հովհան Մանդակունին V դարի վերջին քառորդի անձնավորություն է, «Ուստի,—ենթադրում է Ակինյանը,—Կանոնագրքի խմբագրությունն ալ մոտավորապես նույն դարի վերջին քառորդին կատարված ըլլալու է»[6]։ Եթե ճիշտ է այս ենթադրությունը, ապա կարելի է ասել, որ թերևս Հովհան Մանդակունին էլ եղել է Երկրորդ Նիկիականի կազմողը։

Մեզ հետաքրքրում է նաև այն հարցը, թե արդյոք Հովհ. Օձնեցին Կանոնագիրքը կազմելիս իր ձեռքի տակ ունեցե՞լ է այս կանոնախումբը։ Վերջինիս մի

---

[1] Վարդապետութիւն առաքելոց, էջ 280։

[2] Հանդէս Ամսօրեայ, 1949, № 4—12, էջ 104։

[3] Նույն տեղում։

[4] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 536։

[5] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ, հատ. Բ, Վենետիկ, 1924, էջ 619. (ընդգծումը մերն է—Վ. Հ.)։

[6] Հանդէս Ամսօրեայ, 1949, № 4—12, էջ 111։

այլ «Սակս ժողովոց որ եղեն ի Հայք» փոքրիկ աշխատության մեջ, որը մտել է նաև «Գիրք թղթոց»-ում, կարդում ենք. «Առաջին ժողով արար երանելի հայրապետն մեր սուրբն Գրիգոր,... յորժամ եկն Ռստակէս ի Նիկիայ սուրբ ժողովոյն, բերելով ընդ ինքեան զգիր կանոնաց թուեալ միաձամար կարգաւ տունս ՅԱ, յորս նայեցեալ սուրբն Գրիգորի սուղ ինչ յաւելումն արարեալ յեդեալ կանոնսն սուրբ հայրապետացն՝ որք ի Նիկիայն ժամանեալ ժողովն[1] (ընդգծումը մերն է —վ. Հ.)։ Եթե ընդունենք, որ Նիկիայի ժողովի քսան կանոններին (գուցե եղել է այնպիսի օրինակ, ուր Նիկիայի ժողովի կանոնները նշված են 21. հմմտ. Ք ձեռագիրը՝ № 3544, որտեղ կանոնները նշված են 22)[2] Գրիգոր Լուսավորիչը «սուղ ինչ յաւելումն արարեալ» կցել է իր կանոնախումբը 30 կանոնով[3], ընդամենը 51 կանոն, ինչպես նշում է Օձնեցին վերևի մեջբերման մեջ. Բայց դա համոզկեր չէ, որովհետև Օձնեցին նշում է. «բերելով ընդ ինքեան... տունս ՅԱ», որին նայելով Գրիգոր Լուսավորիչը նոր միայն «սուղ ինչ յաւելումն արարեալ»։ Նշանակում է՝ Օձնեցու պատկերացմամբ Արիստակեսը բերել է Նիկիայի ժողովի որոշումները բաղկացած 51 կանոններից։ Իսկ եթե ընդունենք, ինչպես վերևում ցույց տվեցինք, որ Երկրորդ Նիկիական կանոնախումբը բաղկացած է ոչ միայն Նիկիայի, այլև ուրիշ ժողովների՝ Անկյուրիայի, Նեոկեսարիայի, Գանգրայի, Անտիոքի, Լավոդիկեի կանոնախմբերի թվով 51 կանոններից և այն Նիկիայի անունով իր հետ բերել է Արիստակեսը, դարձյալ չի ստացվի. նախ՝ մինչև Արիստակեսի վերադարձը, տեղի էին ունեցել Անկյուրիայի, Նեոկեսարիայի (314 թ.) և Նիկիայի (325 թ.) ժողովները, իսկ մյուս ժողովները տեղի էին ունեցել Նիկիայի ժողովից՝ 325 թվականից հետո, հետևարար, Արիստակեսը չէր կարող իր վերադարձից հետո տեղի ունեցած ժողովների որոշումները բերել, լավագույն դեպքում նա կարող էր բերել Նիկիայի, Անկյուրիայի և Նեոկեսարիայի ժողովների որոշումները, որոնք առանց Գանգրայի, Անտիոքի և Լավոդիկեի կանոնախմբերի բաղկացած են 60 կանոններից (20+25+15)։ Երկրորդ՝ Նիկիայի ժողովի որոշումներն իրականում կազմված են 20 կանոններից, և հավաստի այլ աղբյուրներից մեզ հայտնի է, որ Արիստակեսն իր հետ Հայաստան է բերել Նիկիայի ժողովի 20 կանոնները։ Այդպես էլ այն մտել է մեր մատենագրության մեջ, տակավին նրա արշալույսին (V դար)։ Մովսես Խորենացին, որը ժամանակով շատ ավելի մոտ էր Արիստակեսին, քան Հովհ. Օձնեցին, իր «Պատմութիւն Հայոց»-ում գրում է. «Ապա դարձեալ Արիստակէս արժանահաւատ բանիւ, եւ ſսան կանոնեալ գլխովſ ժողովոյն՝ գայ հանդիպի հօրն եւ արքային ի Վաղարշապատ քաղաքի»[4] (ընդգծումը մերն է —վ. Հ.)։ Ագաթանգեղոսը հաստատում է նույնը, բայց չի

---

[1] Գիրք թղթոց, էջ 220։ Նախապես ասենք, որ բնագրի «տունս ՅԱ»-ն այլ տարբերակում կարող էր այլընթերցում ունենալ. այդ մտայնությամբ ստուգեցինք Մատենադարանում պահվող Հովհ. Օձնեցու վերոհիշյալ աշխատության երեք օրինակները։ Սրանցից երկուսը ունեին միևնույն՝ «տունս ՅԱ» ընթերցումը (№ № 500, էջ 297 ա, 3062, էջ 68 բ), իսկ երրորդը՝ № 3076 ձեռագիրը՝ «տունս Ա» էջ 109 բ)։ Կասկածից վեր է, որ այստեղ «Ը»-ն ընկել է անուշադիր ընդօրինակելու հետևանքով։

[2] Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 114, առաջին տողատակ։

[3] Նույն տեղում, էջ 243—249։

[4] Տփխիս, 1913, էջ 240. տե՛ս նաև Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912 թ., էջ 40։

նշում կանոնների քանակը[1]։ Այսպիսով, թեև Հով. Օձնեցին կարծում է, թե Արիստակեսը իր հետ բերել է Նիկիայի ժողովի որոշումները 51 կանոնով, իրականութեան չի համապատասխանում։ Մեր համոզմամբ Հովհ. Օձնեցու մոտ հիշվածը երկրորդ Նիկիական կանոնախումբն է, որը, նրա կարծիքով, իր հետ բերել է Արիստակեսը և որը Օձնեցու ժամանակ ունեցել է 51 կանոն։ Այսպիսով, մինչև Օձնեցին, մինչև կանոնագրքի հանդես գալը, նշված ժողովների կանոնների հայերեն հնագույն թարգմանութեան բնագրից ծաղկաքաղ առնելով, համառոտելով և պարզեցնելով կազմվել է այս կանոնախումբը երկրորդ Նիկիական անունով[2]։ Այս վերնադիրը դրվել է այն ժամանակ, երբ սույն կանոնախումբը, Օձնեցուց հետո մուծվել է կանոնագրքում, որպեսզի տարբերվի Նիկիայի առաջին տիեզերական ժողովի կանոնախմբից։ Վերնադիրը սկզբնապես թերևս այդպես չի եղել, այն հավանաբար եղել է «Կանոնք Նիկիականք» ձևով[3]։

Հովհ. Օձնեցին հարկ չի համարել սույն կանոնախումբը մուծել իր կազմած Կանոնագրքում, որովհետև սրա փոխարեն նա Կանոնագրքում մուծել է երկրորդ Նիկիական կանոնախմբին հիմք հանդիսացած հայերեն հնագույն և լիարժք թարգմանութիւնների խմբագրութիւնը։ Հետագայում, Օձնեցուց հետո, այս կանոնախումբը ճոխացվել է նույն աղբյուրների հիման վրա, դարձել 114 կանոններ և մինչև X դարի առաջին կեսը, գուցե և առաջին տասնամյակներում՝ մինչև Անանիա Մոկացի կաթողիկոսը, մտել է Կանոնագրքում։

Մեր ասածը՝ ճոխացման փաստի ճշտութիւնը երևում է հետևյալից։

---

[1] Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր—Մկրտչեան և Ստ. Կանաեանց, Տփխիս, 1909, էջ 465—466։

[2] Ս. Տիգրանյանը կարծում է, թե Ուխտանեսի «Գիրք կանոնացն Նիկիայ» նշումը (Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Վաղարշապատ, 1871, էջ 110) ակնարկում է Հովհ. Օձնեցու այն վկայութիւնը, ըստ որի Արիստակեսը իր հետ բերել է Նիկիայի ժողովի 51 կանոնները (Տե՛ս Հայոց իրավունքի պատմութեան ներածութիւն, էջ 107)։ Հնարավոր է, բայց ապացուցման համար հիմքեր չունենք։

Ի դեպ, նման մի բնագիր կազմվել է ավելի ուշ շրջանում։ Վերջինս դարձյալ Նիկիայի անունով է և ունի 50 կանոն (Կանոնագրքի Ա հատորում սխալմամբ նշված է 48 (էջ 561. մեկով ավելի են նշված նաև նախորդ՝ 560-րդ էջի 21 և 22-րդ տողերի 7, 9, 7 թվերը)։ Այն գտնվում է №№ 659, 8459, 9311, ձեռագրերում, իսկ սրա մի այլ տարբերակը՝ № 657 ձեռագրում 31 կանոնով (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 560—562, 569—570)։ Այս բնագիրը և երկրորդ Նիկիական կանոնախումբը ընտրած նյութի տեսակետից ոչ մի նմանութիւն չունեն, օրինակ՝ կան հոդվածներ, որ երկրորդ Նիկիականն ունի, բայց այս բնագիրը չունի (տե՛ս Նիկիայի Զ, է, ժԱ, ժե, ժԹ, ի, Անկյուրիայի ժԲ, ժԶ, ժԹ, ի, Նեոկեսարիայի Ա, Գ, Զ, ժԸ, ի) և ընդհակառակը (Կեսարիայի Բ, Դ-Ը, ժ)։ Այս բնագրում օգտագործված է չորս կանոնախումբ՝ Նիկիայի, Անկյուրիայի, Կեսարիայի և Նեոկեսարիայի, ընդ որում Նիկիայի կանոնախմբից վերցված է 14 հոդված՝ Ա—ե, Ը—ժ, ժԲ—ժԴ, ժԶ—ժԸ, Անկյուրիայից 12-ը՝ Ա—Դ, է—ժԱ, ժե, ժէ, ի, Կեսարիայից լրիվ՝ Ա—ժ, Նեոկեսարիայից 14-ը՝ Բ, Դ, ե, է—ժէ։ Իսկ № 657-ում Նիկիայից մեկ հոդված՝ ժԸ, Անկյուրիայից 9՝ Ա—Դ, է—ժ, ի, Կեսարիայից լրիվ՝ Ա—ժ, Նեոկեսարիայից 12-ը՝ Բ, Դ, է—ժԴ, ժԶ, ժէ։ Բոլոր դեպքերում էլ միևնույն կանոնախմբի բերված և չբերված հոդվածների ընդհանուր քանակը համապատասխանում է Կանոնագրքում եղած նույն կանոնախմբերի հոդվածների քանակին՝ Նիկիա 20, Անկյուրիա 20, Կեսարիա 10, Նեոկեսարիա 20։ Այս բոլորը ցույց են տալիս, որ նշված ձեռագրերում պահված բնագիրը կազմվել է Կանոնագրքի համապատասխան կանոնախմբերից։ Այն ավելի ուշ շրջանում՝ XIII—XIV դարերում, երկրորդ Նիկիական կանոնախմբի նման նոր կանոնախումբ վերակազմելու մի փորձ է։ Ըստ երևույթին այդպիսի կանոնախմբեր ստեղծելու անհրաժեշտութիւնը զգացվել է միշնադարում։

[3] Համմտ. Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 560։

երկրորդ Նիկիական կանոնախմբի հոդվածների հաջորդականության համապատասխան, օգտագործված աղբյուրներն ունեն հետևյալ համակարգը.

Ա—Լ	հոդվ.՝	Նիկիայի	հունարեն	1—20 հոդվ.	չի օգտագործված 12-րդը.
ԻԱ—ԼԲ	»	Անկյուրիայի	»	1—25	» 3,5—10, 12, 13, 22—24-րդը
ԼԳ—ՄՆ	»	Նեոկեսարիայի	»	1—15	» 14-րդը
ՄԶ—ՇԲ	»	Գանգրայի	»	1—11	» 8—10-րդը
ՇԳ—ԿԴ	»	Լավոդիկեի	»	24—40	» 31, 34, 38 39-րդը
ԿՆ—Հ	»	Գանգրայի	»	15—20	— —
ՀԱ—ՁԱ	»	Անտիոքի	»	6—25	չի օգտագործված 10—12, 14, 15, 19—21-րդը
ՁԲ—ՃԺԴ	»	Լավոդիկեի	»	2—23 45—59	» 4—8, 10, 13, 20, 49-րդը

Ի՞նչ է երևում այս աղյուսակից։ Հերթականությամբ օգտագործված են Նիկիայի, Անկուրիայի, Նեոկեսարիայի, Գանգրայի, Լավոդիկեի կանոնախմբերը, այնուհետև կրկնվում են վերջին երկու կանոնախմբերը և այս երկուսի միջև մեկ անգամ օգտագործվել է Անտիոքինը։ Ընդ որում վերևում նշված առաջին երեք կանոնախմբերը օգտագործված են գրեթե ամբողջությամբ, բաց թողնելով առանձին հոդվածներ, իսկ չորրորդ և հինգերորդ՝ Գանգրայի և Լավոդիկեի կանոնախմբերը օգտագործված են մասնակիորեն։ Այս հանգամանքը, ըստ երևույթին, հնարավորություն է ստեղծել այդ կանոնախմբերին անդրադառնալ երկրորդ անգամ։ Կարծում ենք, որ եթե այս բնագիրը մեկ անգամից և մեկ մարդու կողմից կազմվեր, Գանգրայի և Լավոդիկեի կանոնախմբերը չէին կրկնվի։ Կազմողը կվերցներ Գանգրայի կանոնախմբից այնքան, ինչքան ինքը նպատակահարմար կգտներ, հետագայում դրան չանդրադառնալու դիտավորությամբ, ինչպես արված է Նիկիայի, Անկյուրիայի և Նեոկեսարիայի կանոնախմբերի հետ, և նոր միայն կանցներ ուրիշ կանոնախմբերի։ Այդպես և Լավոդիկեինը։ Իսկ Անտիոքի կանոնախումբը, թեև օգտագործվել է մեկ անգամ, սակայն դա նշանակում է, որ սրանից արված լրացումը կատարվել է Գանգրայի և Լավոդիկեի կանոնախմբերի լրացման ժամանակ։

Այստեղ խոսեցինք կանոնախմբերի կրկնությունների մասին, բայց փաստեր կան, ուր այս կանոնախմբի տարբեր շերտերում կրկնված է միևնույն հոդվածի միտքը. օրինակ՝ Կ հոդվածում կարդում ենք. «Ոչ է պարտ ընդ հերետիկոսս ճաշել կամ աղաւթել, կամ աւրհնութիւն առնուլ ի նոցանէ»։ Սա համապատասխանում է Լավոդիկեի 32 և 33-րդ հոդվածներին[1], իսկ ավելի ներքև, ՁԴ հոդվածում գրված է. «Ոչ է պարտ հերետիկոսաց ընդ մեզ յաղաւթս կալ»։ Սա էլ համապատասխանում է Լավոդիկեի 33-րդ հոդվածին[2]։ Այս հոդվածի միտքը գտնում ենք վերևում մեջբերված Կ հոդվածում։ Հաղիվ թե միևնույն հեղինակը նման կրկնություն թույլ տար[3]։

---

1 Համմտ. Կանոնադիրք Հայոց, հատ. Ա, էջ 236, հոդված ԼԲ, ԼԴ։

2 Նույն տեղում, էջ 236, հոդված ԼԴ։

3 Ի դեպ, այս ՁԴ հոդվածը չի պահվել սույն կանոնախմբի № 659 ձեռագրի տարբերակում, որովհետև սրա միտքը գտնում ենք ՂԴ հոդվածում (նույն Կ հոդվածը, որը № 659 ձեռագրում դրված է ՂԴ համարի տակ)։

Որևէ աշխատության ճոխացման, լրացման փաստը նոր երևույթ չէ հայ մատենագրության մեջ, որպես օրինակ կարելի է նշել «Գիրք Թղթոց», «Կնիք հավատոյ» ժողովածուները։ Որ ժամանակի ընթացքում Երկրորդ Նիկիական կանոնախումբը լրացվել ու ճոխացվել է վերոհիշյալից հետո, հազիվ թե վիճարկվի։ Կարելի է վիճարկել միայն ավելացված շերտերի վերաբերյալ. օրինակ՝ մեր համոզմամբ, այս կանոնախմբի սկզբնական բնագիրը, որը և Օձնեցուն ծանոթ էր, եղել են Ա—ԾԲ հոդվածները[1], որոնք վերցվել են Նիկիայի, Անկյուրիայի, Նեոկեսարիայի և Գանգրայի կանոնախմբերից։ Հետագայում մեկ ուրիշը ավելացրել է ԾԳ—ԿԴ (Լավոդիկեի 24—40) հոդվածների շերտը, իսկ մեկ ուրիշն էլ՝ ԿԵ—ՃԺԳ (Գանգրայի 15—20, Անտիոքի 6—25, Լավոդիկեի 2—23, 45—59) հոդվածների համառոտումը։ Թերևս այսպես ավելի հավանական է, որովհետև վերևում, ինչպես ցույց տվեցինք, ՁԴ հոդվածը կրկնվում է Կ-ում, որը գտնվում է երկրորդ՝ ԾԳ—ԿԴ հոդվածների շերտում, իսկ ՁԴ-ն ԿԵ—ՃԺԳ՝ վերջին շերտում։ Միևնույն հեղինակը, ինչպես նշեցինք, նման կրկնություն թույլ տալ չէր կարող։ Այսպիսով, Երկրորդ Նիկիական կանոնախմբի սկզբնական բնագրում եղել են Ա—ԾԲ հոդվածները, հետագայում դրան ավելացրել են ԾԳ—ԿԴ և ապա ԿԵ—ՃԺԳ հոդվածները։

Որ Երկրորդ Նիկիական կանոնախմբի սկզբնական բնագիրը կազմված է եղել Ա—ԾԲ հոդվածներից և մնացած հոդվածները հետագա ավելացումներ են, երևում է սրա մի այլ՝ № 659 ձեռագրի տարբերակից։ Այդ ցույց տալու համար № 659 տարբերակի հոդվածների հերթականության համապատասխան դեմ առ դեմ կբերենք Կանոնագրքի ունեցած համակարգը.

№ 659	Կանոնագիրք	№ 659	Կանոնագիրք
Ա.	Ա	ԺԹ.	ԺԹ
Բ.	Բ	Ի.	Ի
Գ.	Գ	ԻԱ.	ԻԲ
Դ.	Դ	ԻԲ.	ԻԲ
Ե.	Ե	ԻԳ.	ԻԳ
Զ.	Զ	ԻԴ.	ԻԴ
Է.	Է	ԻԵ.	ԻԵ
Ը.	Ը	ԻԶ.	ԻԶ
Թ.	Թ	ԻԷ.	ԻԷ
Ժ.	Ժ	ԻԸ.	ԻԸ
ԺԱ.	ԺԱ	ԻԹ.	ԻԹ
ԺԲ.	ԺԲ	Լ.	Լ
ԺԳ.	ԺԳ	ԼԱ.	ԼԱ
ԺԴ.	ԺԴ	ԼԲ.	ԼԱ
ԺԵ.	ԺԵ	ԼԳ.	ԼԲ
ԺԶ.	ԺԶ	ԼԴ.	ԼԳ
ԺԷ.	ԺԷ	ԼԵ.	ԼԴ
ԺԸ.	ԺԸ	ԼԶ.	ԼԵ, ԼԶ

---

[1] *Օձնեցու իմացածից մեկ հոդվածով ավելի, կամ նա իր ձեռքի տակ ունեցել է այնպիսի տարբերակ, որը պարունակել է 51 հոդված։*

№ 659	Կանոնագիրք	№ 659	Կանոնագիրք
Լէ.	Լէ	ՀԵ.	ՁԶ
ԼԸ.	ԼԹ	ՀԶ.	ՁԷ
ԼԹ.	ԼԸ	ՀԷ.	ՁԸ
Խ.	—	ՀԸ.	ՁԹ
ԽԱ.	Խ	ՀԹ.	Ղ
—.	ԽԱ	Ձ.	ՃԱ
ԽԲ.	ԽԲ	ՁԱ.	ՂԱ
ԽԳ.	ԽԳ	ՁԲ.	ՂԲ
ԽԴ.	ԽԴ	ՁԳ.	ՂԳ, ՂԴ
ԽԵ.	ԽԵ	ՁԴ.	ՂԵ
ԽԶ.	ԽԶ	ՁԵ.	ՂԶ
ԽԷ.	ԽԷ	ՁԶ.	ՂԷ
ԽԸ.	ԽԹ	ՁԷ.	ԾԴ
ԽԹ.	—	ՁԸ.	ԾԴ
Ծ.	Ծ	ՁԹ.	ԾԵ
ԾԱ.	ԾԱ	Ղ.	ԾԶ
ԾԲ.	ԾԲ	ՂԱ.	ԾԷ
ԾԳ.	ԿԵ	ՂԲ.	ԾԸ
ԾԴ.	—	ՂԳ.	ԾԹ
ԾԵ.	ԿԵ	ՂԴ.	Կ
ԾԶ.	ԿԶ	ՂԵ.	ԿԱ
ԾԷ.	ԿԸ	ՂԶ.	ԿԲ
ԾԸ.	ԿԹ	ՂԷ.	ԽԸ
ԾԹ.	Հ	ՂԸ.	ԿԳ
Կ.	ՀԱ	ՂԹ.	ԿԴ
ԿԱ.	ՀԲ	Ճ.	ՂԸ
ԿԲ.	ՀԳ	ՃԱ.	ՂԹ
ԿԳ.	ՀԴ	ՃԲ.	Ճ
ԿԴ.	ՀԵ	ՃԳ.	ՃԲ
ԿԵ.	ՀԶ	ՃԴ.	ՃԳ
ԿԶ.	ՀԷ	ՃԵ.	ՃԴ
ԿԷ.	ՀԸ	ՃԶ.	ՃԵ
ԿԸ.	ՀԹ	ՃԷ.	ՃԶ
ԿԹ.	Ձ	ՃԸ.	ՃԷ
Հ.	ՁԱ	ՃԹ.	ՃԸ
ՀԱ.	ՁԲ	ՃԺ.	ՃԹ
ՀԲ.	ՁԳ	ՃԺԱ.	ՃԺ
ՀԳ.	—	ՃԺԲ.	ՃԺԱ
—.	ՁԴ	ՃԺԳ.	ՃԺԲ
ՀԴ.	ՁԵ	ՃԺԴ.	ՃԺԳ, ՃԺԴ

Այսպիսով, երկու բնագրերի կանոնների հաջորդականության զուգորդումից երևում է, որ նախ այս կանոնախմբի՝ մեր նշած սկզբնական բնագիրը ներկայացնող Ա—ԾԲ կանոնների հերթականությունը և՛ Կանոնագրքում և՛ № 659 տարբերակում նույնն են. միայն շարունակության մեջ խախտվում է հերթականու-

թյունը, ուրեմն հասկանալի պատճառով, ընթանում է այլ համարակալմամբ։ Այնուհետև, հաջորդ՝ երկրորդ շերտը՝ ՕԳ—ԿԴ կանոնները № 659 տարբերակում ամբողջությամբ տեղափոխված է ՋԷ—ՂԹ համարների տակ։ Մի կողմից այն հանգամանքը, որ Կանոնագրքի Երկրորդ Նիկիական կանոնախմբի Ա—ՕԲ կանոնները № 659 տարբերակում դրված են սկզբում, միևնույն հերթականությամբ, և միայն շարունակության մեջ է խախտվում կանոնների հաջորդականությունը, իսկ մյուս կողմից մեր նշած երկրորդ շերտը՝ ՕԳ—ԿԴ կանոնները, որպես ամբողջական հատված, օգտագործված է նույն տարբերակի վերջին մասում, մեզ թույլ է տալիս կրկին հավաստելու, որ Երկրորդ Նիկիական կանոնախումբը սկզբնապես ունեցել է 52. կանոն (կամ 51, ինչպես Օձնեցին է հաղորդում), որին ծանոթ էր Օձնեցին։

Վերևում (էջ XVII—XVIII) արդեն նշել ենք, որ Երկրորդ Նիկիական կանոնախումբը Կանոնագրքում մուծվել է մինչև X դարի առաջին կեսը, գուցե և առաջին տասնամյակներում, համենայն դեպս մինչև Անանիա Մոկացի կաթողիկոսը (941—965 թթ.՝ ըստ Գալուստ Տեր-Մկրտչյանի, 946—969 թթ.՝ ըստ Մաղաքիա Օրմանյանի)։ Ինչպիսի՞ փաստեր բերեցին մեզ այդ համոզման։ 1897 թ. «Արարատ»-ի մարտ և հունիս ամիսների Հավելվածում Գալուստ Տեր-Մկրտչյանը հրատարակեց Անանիա Մոկացու չորս գրությունները հետևյալ վերնագրերով ա. «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս ապստամբութեան տանն Աղուանից որ ընդ ժամանակս ժամանակս լեալ իցէ ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն» (էջ 129—144), բ. «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի պատճառ յաղագս զխոսրով նզովելոյն .զԱնձեւացւոց եպիսկոպոսն» (էջ 275—277), գ. «Նորին տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղագս որ ասեն, թէ մի պատիւ հայրապետին եւ եպիսկոպոսին եւ վասն մի լինելոյ կոչմանն» (էջ 277—280), դ. «Նորին տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի» (էջ 280—288)։ Այս գրությունները ուշագրավ և կարևոր տեղեկություններ են պարունակում ոչ միայն X դարի առաջին կեսի և հաջորդ տարիներում հայերի քաղաքական, եկեղեցական պատմության, այլև հայ բանասիրության վերաբերյալ։

Արդարացի է Ակինյանը, երբ գրում է, թե Մոկացի կաթողիկոսը երես առ երես թերթել է Հայոց Կանոնագիրքը[1]։ Սակայն նա ոչ միայն թերթել է Կանոնագիրքը երես առ երես, այլև վերջին դրության մեջ բավական քաղվածքներ բերել Կանոնագրքի տարբեր կանոնախմբերից՝ Առաքելական, Կղեմեսի, Հարանց հետևողաց, Նիկիայի, Անկյուրիայի (սխալմամբ նշում է Նեոկեսարիայի), Կ. Պոլսի, Եփեսոսի, Բարսեղի, Սահակի, Շահապիվանի, ինչպես նաև Երկրորդ Նիկիական։ Բերում ենք վերջինիցս արված քաղվածքը. «Կարճառոտ ի կանոնաց, որ եւ այն կոչի Նիկիայի, Իա գլխոյն. Պարտ է, ասէ, զերիցունս որ զոհեցին եւ ապա դարձան եւ խոստովան եղեն՝ ոչ ամենեւին լուծանել, աթոռոյն միայն արժանի լինել, այլ ոչ պատարագ մատուցանել եւ ի վարդապետութեան կալ»[2]։ Այս մեջբերումը համապատասխանում է Երկրորդ Նիկիական կանոնախմբի Իա կանոնին, որովհետև կանոնախմբի անունը և հոդվածի համարը ճշտիվ նշում է Անանիա Մոկացին։ Ահա Կանոնագրքի համապատասխան հոդվածը. «Պարտ է զերիցունս որ զոհեցին եւ ապա դարձան եւ խոստովան եղեն՝ ոչ ամենեւին լուծանել, աթոռոյն միայն արժանի առնել, այլ ոչ պատա-

[1] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 108։

[2] «Արարատ» 1897, էջ 281։

րադ մատուցանել, եւ ոչ ի խաւսսն կալ եւ ոչ այլ պաշտաւն պաշտել քահանայութեան։ Նմանապէս եւ սարկաւագին՝ ոչ քարոզել եւ ոչ սպասաւորել, բայց եթէ վասն յոյժ երկիւղածութեան՝ եպիսկոպոսն հրամայիցէ»[1]։ Այս մեջբերման վերջին մասը՝ սկսած «Նմանապէս եւ սարկաւագին...» հատվածից Անանիա Մոկացին չի բերել, որովհետև իր քննած հարցին չէր վերաբերում։ Այս երկու հատվածների համեմատությունը ցույց է տալիս նաև, որ Երկրորդ Նիկիական կանոնախումբը կազմվելուց հետո մնացել է անաղարտ և նրա վրայով օտար ձեռք չի սահել։ Մյուս մեջբերումը, որը հանդիսանում է վերևում բերվածի հիմքը, Անանիա Մոկացին սխալ է հասցեագրում, ահա այն. «Նեոյ-Կեսարիայն, որ եւ այն Նիկիա անուանի, վասն երիցանց, որ ի բռնութենէ հեթանոսաց նախ քան զտանջանս զոհեցին եւ ճշմարտութեամբ դարձան, զպատիւ յաթոռոյն կալցին, այլ ի թարգմանութիւն նստել կամ պատարագ մատուցանել կամ Աւետարան կարդալ՝ ոչ ունի իշխանութիւն»։ Այս մեջբերման «որ եւ այն Նիկիա անուանի» հատվածը թվում է թե հուշում է Երկրորդ Նիկիական կանոնախմբի մասին, բայց այստեղ սույն կանոնը արդեն մտել է ԻԱ կանոնի տեսքով։ Մյուս կողմից այս քաղվածքի հենց սկզբի «Նեոյ-Կեսարիայն» նշումը չի կարող լինել նրա հասցեատերը, որովհետև Նեոկեսարիայի կանոնախմբում նման կանոն չենք գտնում։ Եթե Անանիա Մոկացին նկատի ունի վերջինիս Կանոնագրքի բնագրի ԺԷ կանոնը[2], ապա այն հիվանդների, նեղության և բռնության մեջ ընկածների մկրտության մասին է, թեև սրա համապատասխան հունարեն կանոնում խոսքը ոչ թե նմաններին մկրտելու, այլ քահանա ձեռնադրելու մասին է։ Անանիա Մոկացու վերևի մեջբերումը եթե լիներ ազատ շարադրությամբ, թերևս համաձայնվեինք, որ այն վերցված է Նեոկեսարիայի կանոնախ՝բից, բայց այն բերված է գրեթե բառացի, հետևապես կարող ենք ստույգ մատնացույց անել Կանոնագրքի համապատասխան կանոնախումբը։ Անկյուրիայի կանոնախմբի Ա կանոնում կարդում ենք. «Վասն երիցանց. որք ի բռնութենէ հեթանոսաց մինչեւ ի տանջանս ածել ի վերայ եւ մահ սպառնալ եւ նոքա առ երկիւղի զոհեցին եւ ապա չանացան, նկրտեցան եւ ճշմարտութեամբ դարձան. վասն այսպիսեացս կամ եղեւ զի զաթոռոցն կարգն կալցին, այլ ի թարգմանութեան նստել կամ պատարագ մատուցանել կամ Աւետարան կարդալ՝ ոչ ունին իշխանութիւն»[3]։ Կարծում ենք հարցը լուծված է։

Այս ամբողջ շարադրանքից երևում է, որ Անանիա Մոկացու ժամանակ, X դարի կեսերին, Երկրորդ Նիկիական կանոնախումբն արդեն մտել էր Հովհ. Օձնեցուց հետո, նրա կազմած Կանոնագրքում 34 (ԼԴ)-րդ համարի տակ։ Հնարավոր է, որ Անանիա Մոկացու ժամանակ Կանոնագիրքը եզրափակվել է Երկրորդ Նիկիական կանոնախմբով։

Բարսեղ Կեսարացուն վերագրված կանոնախումբը Կանոնագրքում զետեղված է 36 (ԼԶ)-րդ տեղում։

Որոշ ձեռագրերում, օրինակ՝ №№ 835, 837, 8459, կանոնախմբի վերնադիրը թեև նման է Կանոնագրքի ունեցածին, բայց որպես հեղինակ նշված է ոչ թե Բարսեղ Կեսարացին, այլ Հովհան Ոսկեբերանը։ Ահա այդ վերնադիրը. «Տեառն

---

[1] Տե՛ս ներքևում, էջ 76։
[2] Հատ. Ա, էջ 186։
[3] Նույն տեղում, էջ 154։

Յովհաննու ասացեալ (№ 837-ում՝ ասաց) ի խնդրոյ սրբոյն (№ 835-ում՝ յիմ սրբոյն) Բարսղի սահմանադրութիւն վասն պէսպէս եւ բիւրապատիկ ախտից»[1]

Տվյալ պահին չենք կարող ստույգ որոշել, թե դրանցից որն է սկզբնապես հանդես եկել։ Մեր կարծիքով, հավանականը առաջինն է, որովհետև Կանոնագրքի XI դարի խմբագրության մեջ այս կանոնախումբը նշված է նրա անունով։ Այդպես գիտի նաև Մխիթար Գոշը[2]։ Ավելին. հոդվածներից մեկի կապակցությամբ Գոշը կասկած է հայտնում, թե այդ Բարսեղ Կեսարացունը լինի։ Դատաստանագիրք Ա մասի ՁՁ հոդվածում մեջբերելով վերջինիս կանոնախմբի ՄՀ կանոնը[3] Գոշն ավելացնում է. «Երկբայի այս կանոնք սրբոյ լինել Բարսղի, եւ թէ նորա անհնարին է լինել այս կանոնաց»[4]։ Այս քաղվածքից երևում է, որ Գոշը ևս սույն կանոնախումբը Բարսեղ Կեսարացունը չի համարել։

Այն հարցը, թե տվյալ կանոնախումբը իսկապես պատկանում է Բարսեղ Կեսարացու և կամ Հովհան Ոսկեբերանի գրչին, մենք ևս բացասաբար ենք պատասխանում։ Եվ ահա թե ինչու։ Ուշադիր քննելով կանոնների բովանդակությունը և դրանք համադրելով մեր ձեռքի տակ գտնված կանոնական այլ բնագրերի հետ, նկատում ենք շոշափելի բազմաթիվ կետեր, որոնք մեզ հուշում են, թե այս կանոնախումբը աղբյուրագիտական ինչպիսի հիմքեր պետք է ունենա։ Թերևս անհրաժեշտություն չզգացվի բոլոր 272 կանոնների այդ հիմքերը նշել, մանավանդ, որ մի շարք կանոնների համար չկարողացանք ստույգ հիմքեր գտնել։ Այնուամենայնիվ, մեր ասածը ցույց տալու նպատակով կնշենք շատերից մի քանիսի աղբյուրագիտական հիմքերը։ Նախ և առաջ բնորոշ է այն, որ կանոնախմբի սկզբի հոդվածները համառոտված և խմբագրված ձևով քաղված են Կանոնագրքի Հովհ. Օձնեցու խմբագրության մեջ մտած Բարսեղ Կեսարացու կանոնախմբի կանոններից[5]։ Թերևս այս մոտեցմամբ էլ բնագրի կազմողը թաքնվել է Բարսեղ Կեսարացու անվան տակ։ Դեմ առ դեմ կդնենք այս երկու բնագրերի և ապա մյուս աղբյուրների համապատասխան կանոնները.

Առաջարկվող կանոնախումբ		Կանոնագիրք Հայոց, ճ. Ա	
Ա կանոն	. . . . .	Բարսեղ Կեսարացի	Գ կանոն
Բ »	. . . . .	»	Ը »
Գ »	. . . . .	Աթանաս Աղեք.	ՄԹ »
Դ »	. . . . .	Բարսեղ Կեսարացի	ԻԴ »
Ե »	. . . . .	»	ԻԸ »
Զ »	. . . . .	»	ԻԹ »
Է »	. . . . .	»	Լ »
Ը »	. . . . .	»	ԼԱ »

[1] №№ 8459, էջ 90 ա, 835, էջ 126 ա, 837, էջ 66 ա։ Վերնագիրն այդպիսին է նաև №№ 7060 (էջ 78 ա—116 ա), 2576 (էջ 155ա—160ա) ձեռագրերում, որոնք, սակայն, չենք ուսումնասիրել և արդյունքները նշել ծանոթագրություններում, որովհետև այդպիսիները հանդիպեցին սույն աշխատանքի տպագրվելու ընթացքում։

[2] Դատաստանագիրք Հայոց, էջ 181, 187։

[3] Բաստամյանցը նշում է Մէ, որովհետև իր օգտագործած ձեռագրում՝ № 761, այժմյան № 778-ը, նշված է Մէ, էջ 175 բ։

[4] Դատաստանագիրք Հայոց, էջ 187։

[5] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 329—362։

Առաջարկվող կանոնախումբ		Կանոնագիրք Հայոց, ճ. Ա.		
Թ	կանոն	Բարսեղ Կեսարացի	ԼԲ	կանոն
Ժ	»	»	ԼԳ	»
ԺԱ	»	»	ԼԴ	»
ԺԲ	»	»	ԼԷ	»
ԺԴ	»	Կղեմես	Ի	»
ԺԵ	»	»	ԻԳ	»
ԺԶ	»	»	ԿԳ	»
ԺԷ	»	»	ԿԴ	»
ԺԸ	»	»	ՄԲ	»
ԻԴ	»	»	ՀՊ	»
ԻԶ	»	Աթանաս	Լ	»
ԼԲ	»	Սահակ վերջնոյ	Դ, ԺԱ	»
ԼԳ	»	Հարանց հետևողաց	ԺԶ	»
ԼԴ	»	Գր. Լուսավորիչ	ԺԶ	»
ԼԵ	»	Հարանց հետևողաց	ԻԳ	»
ԼԶ	»	»	ԺԱ	»
ԼԹ	»	»	ԺԶ	»
		Գր. Լուսավորիչ	ԺԳ	»
ՄԲ	»	»	Թ	»
ՄԵ	»	Նեոկեսարիա	ԺԳ	»
ՄԹ	»	Գր. Լուսավորիչ	ԻԶ	»
ԿԱ	»	»	ԻԲ	»
ՀԲ	»	Գանգրա	Ա, Թ	»
ՀԴ	»	»	Դ	»
ՀԹ	»	Գր. Լուսավորիչ	ԺԵ	»
Ջ	»	Գանգրա	Ի	»
ՋԱ	»	»	ԻԳ	»
ՋԴ	»	Գր. Լուսավորիչ	Է	»
Ղ	»	Շահապիվան	Ժ	»
ՂԲ	»	»	ԺԱ	»
ՂԶ.	»	Գր. Լուսավորիչ	ԺԱ	»
ՃԲ	»	Գանգրա	ԺԶ	»
ՃԳ	»	»	ԺԵ	»
ՃԺ	»	Սահակ Պարթև	ԺԷ	»

Եվ այսպես կարելի է շարունակել։ Վերևի նշումները ցույց են տալիս, որ այս բնագրի հեղինակը Բարսեղ Կեսարացին չէր կարող լինել։ Սույն կանոնախմբում նկատեցինք մի այլ երևույթ էլ։ Մի շարք կանոններ կրկնված են՝ մերթ համառոտ, մերթ մի փոքր ընդարձակ. այլև կան հարցեր, որոնց նվիրված է 3—4 կանոն։ Բերենք այս կարգի մի շարք փաստեր.

1. Բ և ՂԷ կանոնները վերաբերում են այն բանին, թե պատերազմում մարդ սպանելիս, սպանողի հետ ինչպե՞ս վարվել, որպես հանցապարտի՞, թե նա անպարտ է։

2. ԼԳ և ԼԹ կանոնները վերաբերում են կուլսերին, որոնք դրժում են իրենց խոստումը։

3. ԼԴ և ՁՔ կանոնները վերաբերում են դիակողոպտությամբ զբաղվողներին։

4. ԼԲ և ՃԺԲ կանոնները վերաբերում են բորոտ և ուրուկ քահանաների և սարկավագների վարքագծին։

5. ՃԽԴ և ՄՀԱ կանոնները վերաբերում են հայհոյողներին։

6. ԼՋ և ՃԽՋ կանոնները վերաբերում են բորոտների և ուրուկների հետ կենակցողներին։

7. ԻԷ, ՃԽԹ, ՄԺԹ և ՄԻԱ կանոնները վերաբերում են ամուսնության ազատ ընտրության հարցին։

8. Ժ, ԺԱ, ԽԹ, ՃԼԳ և ՃՄԱ կանոնները վերաբերում են մերձավորների կենակցության հարցին, իսկ ՀԱ, ՃԼԲ, ՄԺԵ և ՄՀԲ հոդվածները՝ մերձավորների և խնամիների ամուսնությանը։

Մեջ ենք բերում մերձավորների ամուսնության վերաբերյալ ՀԱ և ՄԺԵ կանոնները. «ՀԱ. Եթէ ոք առնու կին ի մերձաւոր արենէ իւրմէ մինչեւ ի Չ-երորդն եւ յէ-երորդն՝ նզովեալ եղիցի եւ մեկնեսցեն ի միմեանց առաջնորդքն. եւ վասն պսակին անարգելոյ Ճ դրամ տուգանս տացէ յեկեղեցին եւ Գ ամ առ դրանն ապաշխարեսցէ. բայց վարդապետն իշխան է զինչ կամեսցի»[1]։

«ՄԺԵ. Եթէ ոք յիւր արենէ եւ ի մերձաւորէ խնամութիւն առնէ մինչեւ ի չորրորդ եւ ի հինգերորդ ազգն՝ պսակն անվաւեր լիցի եւ պսակադիրն լուծցի. Ճ դրամ տուգանս տացէ եւ ապաշխարութիւն պոռնկին եղիցի եւ ում կամի առն լիցի»[2]։

Միևնույն հարցի մասին տարբեր մոտեցում և սահմանում։ Այս փաստերը համոզում են, որ սույն բնագիրը թերևս մեկ հեղինակ չի կազմել, այլ մեկից ավելի և կամ կազմողն այնքան անփույթ է եղել, որ պատշաճ ձևով չի ընտրել և մշակել քաղվածաբար վերցրած նյութերը, որի պատճառով ստացվել են կրկնություններ։

Այսպես ուրեմն, առաջարկվող բնագիրը Բարսեղ Կեսարացու գրչին չի պատկանում, այն կեղծ գրվածք է։

Ն. Ակինյանը, հետևելով Հ. Գաթրճյանին, Սահակ Պարթևի կանոնախումբը[3] համարում է կեղծ, կարծելով, թե այն հանդես է եկել Ներսես Բ Բագրևանդացու կանոնախմբից[4] հետո։ Հետևապես, ինչպես, եզրակացնում է Ն. Ակինյանը, օգտվելու դեպքում Սահակ Պարթևի կանոնախմբի հեղինակն իր առջև ունեցել է Ներսես Բ Բագրևանդացու կանոնախումբը[5]։ Այստեղից էլ նա իր աշխատության 51—53 էջերում մի շարք շոշափելի կետեր է համադրում միմյանց և եզրակացնում, որ Սահակ Պարթևի անունով հայտնի կանոնախումբը կեղծ է և հանդես է եկել VI դարի 60-ական թվականներից հետո կամ ավելի ուշ[6]։

Շարունակելով քննական իր տեսությունը՝ Ակինյանը կարծում է նաև, որ Սահակ Պարթևին վերագրված կանոնախմբի հեղինակը օգտագործել է Բարսեղ Կեսարացու անունով հայտնի սույն կանոնախումբը։ Այս վարկածը

---

[1] Տե՛ս սույն հատորում, էջ 118։

[2] Նույն տեղում, էջ 159։

[3] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 363—421։

[4] Նույն տեղում, էջ 475—490։

[5] Քննութիւն Ս. Սահակի վերագրուած կանոններու, Վիեննա, 1950, էջ 51։

[6] Նույն տեղում, էջ 24, 63։ Համմտ. Ս. Տիգրանյան, Հայոց իրավունքի պատմության ներածություն, էջ 116—117։

հավաստելու համար նա վկայակոչում է Սահակ Պարթևի կանոնախմբի ժե կանոնը[1], որը, ըստ Ակինյանի, թեև «Ներսէսի Ի կանոնի համաձայն խմբագրված է, նկատի ունի նաև Բարսեղի (իմա՛ սույն կանոնախմբի —Վ. Հ.) ՄԺԹ և ՄԻԱ կանոնները»[2] և դեմ առ դեմ բերում նշված երեք կանոնախմբերի տվյալները[3]։

Եթե ճիշտ է այս պնդումը, նշանակում է պետք է ընդունել, որ Բարսեղ Կեսարացուն վերագրված սույն կանոնախումբը երևան է եկել մինչև Ներսես Բ Բագրևանդացու կանոնախմբի հանդես գալը՝ մինչև VI դարի կեսերը։ Սակայն այս պնդումը ապացուցելու համար փաստեր գոյություն չունեն։ Ի դեպ, Ակինյանը չի էլ կասկածում առաջարկվող կանոնախմբի վավերականության վրա։ Մինչդեռ ուրիշ փաստեր, որոնք անտեսել է Ակինյանը, տրամագծորեն հակառակ եզրակացությանն են բերում։ Այսպես. Ակինյանը չի կասկածում Կանոնագրքի Հովհ. Օձնեցու ժողովածուում մտած Սահակ Գ Զորափորեցու կանոնախմբի[4] վավերականության վրա[5]։ Վերջինս Կանոնագրքում մտել է «Կանոնք վերջնոյ Սահակայ գլուխք ԺԴ» խորագրով. այսինքն Հովհ. Օձնեցու համար Սահակ Գ Զորափորեցին, որը կաթողիկոս է եղել 677—703 թթ., հանդիսացել է վերջին Սահակը[6]։

VII դարի վերջում կամ VIII դարի սկզբում ստեղծված այս կանոնախմբից օգտվել է Բարսեղ Կեսարացուն վերագրված սույն կանոնախմբի հեղինակը։ Բերում ենք այդ փաստերը դեմ առ դեմ.

Կարծեցյալ Բարսեղ Կեսարացի	Սահակ Զորափորեցի
«ՀԲ. Թէ երէց կամ սարկաւագ բորոտի կամ ուրկանայ՝ միայն առանձինն յաղաւթս կացցէ, առանց խորհրդոյ. եւ եթէ վախճանի՝ պատուով թաղեսցեն։ Եւ սիմական թէ վախճանի՝ մատուցէ քահանայն պատարագ, ելցէ ի վեր եւ տացէ հաղորդ եւ արասցէ զյիշատակ նորա ի նմին աւուր, զի այն է արժանն»[7]։	«Դ. Հարցումն. Եթէ երէց ոք բորոտի կամ աւրկանայ, պա՞րտ է յառանձին աղաւթսն իւր Աւրհնութիւն եւ փառս ասել եւ աւետարանել, թէ բնաւ իսկ զինուորել։ Պատասխանի. Յառանձին աղաւթս ասել արժան է՝ Աւրհնութիւնն եւ փառս, բայց յայլ ինչ մի՛ համարձակել»։ ԺԱ. Հարցումն. Քահանայ որ սիմական է կամ խցարգել եւ զսուրբ խորհուրդն խնդրէ առ ի հաղորդել, արժա՞ն է իւրովի կատարել զհաղորդութիւնն եւ զդոհանալոյն աղաւթս յարգելանի անդ կամ ի սեան, եթէ նորին իսկ մատուցողին այսոքիկ պատշաճին։ Պատասխանի. Ջճաշակմանն պարտ է ասել, եւ զդոհութիւնն ասացեալ է»[8]։

Եթե բացառենք խմբագրական աշխատանքը, նմանությունը ակներև է։ Հիշենք, որ բացի Սահակ Գ Զորափորեցու այս վկայությունից կանոնական գրականության մեջ նման տեղեկություն այլուստ մեզ ծանոթ չէ։ Այստեղից

1 Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 382։ Ակինյանը նկատի ունի Իէ կանոնը։
2 Քննութիւն Ս. Սահակի վերագրուած կանոններու, էջ 53։
3 Նույն տեղում, էջ 53—54։
4 Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 506—513։
5 Քննութիւն Ս. Սահակի վերագրուած կանոններու, էջ 13։
6 Ս. Տիգրանյան, Հայոց իրավունքի պատմության ներածություն, էջ 147—149։
7 Տե՛ս սույն հատորում, էջ 108—109։
8 Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 508—509, 511։

հարց է առաջանում, եթե Բարսեղին վերագրված սույն կանոնախումբը հանդես է եկել մինչև VI դարի կեսերը, գուցե ավելի վաղ՝ մինչև Ներսես Բ Բագրևանդացու կանոնախմբի հանդես գալը, ինչպես երևում է Ակինյանի բերած փաստերի համադրումից, ապա ինչպե՞ս կարող էր նրա հեղինակը օգտվել VII դարի վերջում ստեղծված Սահակ Գ Զորափորեցու կանոնախմբից։ Նշանակում է Սահակ Պարթևի կանոնախմբի Իէ կանոնը իր հիմքում չի ունեցել սույն կանոնախմբի նշված կանոնները, ինչպես թվում է Ակինյանին, և Բարսեղին վերագրված այս կանոնախմբի ստեղծման ժամանակը պետք է ետ բերել և դա ճիշտ կլինի։ Այս պարագան ցույց է տալիս, որ սույն կանոնախումբը հանդես է եկել VII դրանից հետո, համենայն դեպս Սահակ Գ Զորափորեցուց հետո։ Եվ այդ պատճառով էլ այն չի մտել Հովհ. Օձնեցու ժողովածուի մեջ, որովհետև այդ ժամանակ տակավին գոյություն չուներ։ Այս դեպքում, արդեն, կհանգենք հակառակ եզրակացության. այն է՝ Ներսես Բ Բագրևանդացին, ինչպես և կարծեցյալ Բարսեղ Կեսարացու սույն կանոնախմբի հեղինակը օգտվել են Սահակ Պարթևի կանոնախմբից[1]։ Այլ հարց է, որ ներկա ձևի մեջ Սահակ Պարթևի կանոնախումբը կարող է որոշ չափով հեռացած լինել իր սկզբնական բնագրից։ Եթե նկատի ունենանք այն փաստը, որ սույն կանոնախմբում չի օգտագործված Սիոն կաթողիկոսի (Պարտավի 768 թ.) կանոնախումբը, ապա կարելի է ենթադրել, որ մեզ հետաքրքրող բնագիրը հանդես է եկել մինչև Հովհ. Օձնեցին. բայց միակ այդ փաստը բավարար չէ նման ենթադրության հենակ ծառայելու, իսկ այլ փաստեր առայժմ մեզ հայտնի չեն։ Բոլոր դեպքերում փաստն այն է, որ սույն կանոնախումբը չի մտել Հովհ. Օձնեցու ժողովածուում և հանդես է գալիս այն նյութերի շարքում, որոնք ավելացվել են Հովհ. Օձնեցուց հետո մինչև X դարի վերջերը։ Այստեղից եզրակացնում ենք, որ այն եղել է Կանոնագրքի մինչև XI դարի խմբագրությունում։ Անանիա Մոկացի կաթողիկոսը իր նամակներում[2] թեև մեջբերումներ չի կատարել ներկա կանոնախմբից, ինչպես Առաքյալների, Կղեմեսի, Նիկիայի և այլ կանոնախմբերից, կարող ենք ենթադրել, որ այդ ժամանակ այս կանոնախումբը տակավին մուծված չէր Կանոնագրքում, սակայն հնարավոր է, որ Մոկացու ժամանակ այն եղել է Կանոնագրքում, բայց դրա օգտագործման անհրաժեշտությունը նա չի զգացել։

Ընդհանուր առմամբ հայ եկեղեցու պաշտամունքի և ծիսական հարցերը այստեղ քիչ տեղ են բռնում, ավելի շատ ավատական հասարակության ապրելակերպի, առօրյա կյանքի, հոգևորականության ցածր աստիճանի, մասնավորապես քահանաների վարքագծի հնարավոր խախտումները խափանելու նպատակով կանոնական սահմանումներ են, օրինակ, ՃԽԱ կանոնում կարդում ենք. «Թէ ոք ի մտի դնէ պոռնկել ընդ կնոջ իշխանի եւ յորոգայթ մահու անկանի, արիւն նորա ի գլուխ նորա եղիցի»[3]։ Կանոնական որոշումներում գաղտնի պոռնկության մասին բազմաթիվ կանոններ կան ընդհանրապես, բայց այստեղ հարցը մասնավորված է իշխանի կնոջ վերաբերյալ։ ՃԾ կանոնը սահմանում է, որ եթե արհեստավորը պատվիրատուի նյութից գողանա, ապա չորեքպատիկը վճարե կամ ապաշխարե[4]։ ՃԻԵ կանոնով դատապարտվում են նրանք, ովքեր

[1] Հմմտ. Հ. Տաշյան, Վարդապետութիւն առաքելոց, էջ 217—218, 229, 239։
[2] «Արարատ», 1897։
[3] Տե՛ս սույն հատորում, էջ 135։
[4] Նույն տեղում, էջ 126։

թատրոնի օթյակում կնոջ հետ ներկա են գտնվում ներկայացման[1]։ ՃԿԴ կանոնը կարգավորում է ծնողների ժառանգության բաժանման հարցը, սահմանելով, որ երկու քույրերը պետք է ստանան մեկ բաժին[2]։ ՃՋԸ հոդվածը խիստ դատապարտում է արհեստական վիժում կատարողներին[3], իսկ ՀԳ կանոնը՝ հղիանալուց արհեստական կերպով խուսափողներին[4]։ ՋԸ հոդվածը սահմանում է, որ ով «հրդեհիցէ ղարդար վաստակս՝ տուժեսցի ընդ միոյն չորեքկին» կամ ապաշխարեն տասը տարի[5]։ Հղի կինը եթե հրաժարվում է ամուսնու հետ կենակցելուց, իսկ ամուսինը դրա համար նրան ծեծում է, ապա վերջինս հանցապարտ է (ՂԱ)[6]։ Հիվանդներին պետք է բժշկել սուրբ դեղերով, այլապես բժշկողները մեղավոր են (ՃՁԻ)[7]։ Այն երկրի թագավորը, որը լինում է նախահարձակ, իրավունք չունի զոհաբերության (մատաղ) անելու (ՃՂԸ)[8]։ Եթե վաճառողը սուտ երդմամբ կզովի իր ապրանքը իրացնելու նպատակով՝ նա արժանի է նզովքի (ՄՄ)[9]։ ՄԺՌ կանոնում խոսվում է ծնունդի ժամանակ ծանր վիրահատության և անհրաժեշտության դեպքում մեղավորներին պատժելու մասին[10]։

Ամուսնության և պսակի մասին այս կանոնախմբում էլ կան բազմաթիվ կանոններ, սակայն որոշ առումով հետաքրքիր է ՃԽԹ կանոնը, ուր կարդում ենք, որ եթե աղնիվ դիտավորությամբ զույգը ամուսնանում է, իսկ սրանց ծնողները համաձայն չեն, ապա գործը պետք է գլուխ բերել. «ղի լաւ է ի ծնուցաղց անարդիլ քան ուրանալ յԱստուծոյ»[11]։ Այս հոդվածը, ըստ էության, Սահակ Պարթևի կանոնախմբի ԻԷ հոդվածի և Պողոս առաքյալի առ Եփեսացիս թղթի (ե, 31) ոգու վերաշարադրումն է։

Վերևում շարադրված կանոնների նման կան այլ բնույթի ուրիշ կանոններ ևս, օրինակ, ՋՋ, ՃԺԵ, ՃԻԷ, ՃԻԹ, ՃԼՋ, ՃՂԴ, ՃՂԴ, ՃՂԵ, ՃՂՋ և այլն։ Իսկ մի շարք կանոններ, որոնց աղբյուրագիտական հիմքերը չկարողացանք որոշել, թերևս հեղինակը վերցրած լինի սովորույթի իրավունքից։

Ինչպես տեսնում ենք, նշված և չնշված նման կանոնները դուրս են գալիս դավանանքի և պաշտամունքի ծիսական հարցերի նեղ շրջանակներից։ Եվ որպես այդպիսին, սույն կանոնախումբն իր ընդգրկումներով և ծավալով կարծես մի առձեռն կանոնագիրք է մայր կանոնագրքում։ Եվ այդ է պատճառը, որ Մխիթար Գոշը իր Դատաստանագրքի երկրորդ մասում այս կանոնախմբից օգտվել է (Գոշ ՂԳ՝ ԻԷ, ՂԴ՝ ՋԸ, ՂԵ՝ ՃԵ, Ճ՝ ՄԱ, ՃԱ՝ ՄԲ) ավելի հաճախ, քան որևէ այլ կանոնախմբից։

Գրիգոր Աստվածաբանին վերագրված կանոնախումբը կանոնագրքի համակարգում գրված է 37 (ԼԷ)-րդ տեղում։ Այս կանոնախմբի վավերականությունը պարզ չէ. օրինակ՝ Տաշյանը այն համարում է կեղծ[12], թեև փաստեր չի

[1] Նույն տեղում, էջ 130։
[2] Նույն տեղում, էջ 143։
[3] Նույն տեղում, էջ 151։
[4] Նույն տեղում, էջ 119։
[5] Նույն տեղում, էջ 122։
[6] Նույն տեղում, էջ 122—123։
[7] Նույն տեղում, էջ 151—152։
[8] Նույն տեղում, էջ 154։
[9] Նույն տեղում, էջ 155։
[10] Նույն տեղում, էջ 158։
[11] Նույն տեղում, էջ 137։
[12] Վարդապետութիւն առաքելոց, էջ 72, 149։

բերում։ Ճիշտ է, Աստվածաբանի գրվածքներում չենք հանդիպում նման կանոնական գրույթյունների, բայց որոշ փաստեր,—իսկ թե դրանք որքանով են հավաստի՝ առայժմ չենք կարող պնդել,—մեզ խորհրդածությունների առիթ են տալիս. օրինակ՝ կանոնախմբի նախաբանում, Ա և Բ կանոններում, երբ խոսվում է հերձվածների մասին, հիշվում են Արիոսը, Մակեդոնը, և սրանց առնչությամբ Նիկիայի և Կ. Պոլսի տիեզերական ժողովների որոշումները, սակայն խոսք չկա Նեստորի և Եփեսոսի տիեզերական ժողովի որոշումների մասին։ Մի այլ օրինակ. Ժէ կանոնում, երբ խոսվում է Աթանաս Աղեքսանդրացու աքսորման մասին, հեղինակը գրում է, որ վերջինս «ազդ առաբեալ առ մեզ ի ձեռն գրոյ...»[1]։ (Ընդգծումը մերն է—Վ. Հ.)։ Այս փաստերը տպավորություն են ստեղծում, որ սույն կանոնախումբը հանդես է եկել IV դարում՝ մինչև 431 թ. Եփեսոսի ժողովը։

Այս առումով պակաս հետաքրքիր չէ նաև հնագույն բառերի գոյության փաստը այստեղ. օրինակ՝ գտակ (սկզբնապատճառ, հնարող), արտագրել (մերժել, արտաքսել, տարագրել), լրակցութիւն (բովանդակություն, միաբան), ճամպատիւ (պատվակից), ծաձրաբեռ, արտադրել (բացատրել, ճարել, վճռել, մեկնել) գտանիլ (լինել), բարեձեւութիւն, ակաստաս (ապահով վիճակ, ամրություն), պատուճասակոծ և այլն, որոնք գտնում ենք V դարի հեղինակների գրվածքներում կամ այդ ժամանակ կատարված թարգմանություններում. օրինակ՝ Եզնիկ, Եղիշե, Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի, Հովհ. Մանդակունի, Պլատոն, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի, Փիլոն, Եվսեբիոս և այլն։

Իհարկե, այս փաստերը բավարար չենք համարում խնդրի վերջնական լուծման համար, մանավանդ եթե նկատի ունենանք ԻԳ կանոնը, ուր արգելվում է եպիսկոպոսների ամուսնությունը, որը ուշ ժամանակի արտահայտություն է, գոնե մեր իրականության մեջ։ Համենայն դեպս, եթե ճիշտ է Տաշյանի կարծիքը, մնում է ենթադրել, որ կեղծողը այդ բանը կատարել է բավական նուրբ կերպով, կամ էլ Գրիգոր Աստվածաբանի առանձին գրվածքներից նա քաղվածաբար այնպես է օգտվել, որ առաջին դեմքով գրելու ձևը պահվել է։

Դվինի 645 թ. ժողովի կանոնախումբը կանոնագրքում գրավում է համակարգի 38 (ԼՀ)-րդ տեղը։ Այս ժողովի որոշումները պահպանվել են միայն կանոնագրքում։

Ուսումնասիրողները գրեթե բոլորն էլ ընդունում են, որ Ներսես Գ Շինողի օրոք տեղի է ունեցել երկու ժողով՝ 645 թ., ուր սահմանվել են այս կանոնները և 648 թ. (Լեոն ընդունում է 650 թ.)[2], ուր մերժվեց բյուզանդական կայսր Կոստանդինոս Գ-ի պահանջը՝ հայ-բյուզանդական եկեղեցական միություն կազմելու մասին։

Ն. Մելիք-Թանգյանի կարծիքով Ներսես Գ Շինողի ժամանակ Դվինում հրավիրվել է մեկ ժողով՝ 648 թ. և այստեղ էլ սահմանվել են վերևում նշված կանոնները[3]։ Մեր նպատակը չէ որոշել ժողովի ստույգ տարեթիվը, առայժմ այդ խնդիրը խիստ դժվար է՝ բավարար փաստեր չլինելու պատճառով։ Այս կանոնախմբի վերնագրից երևում է, որ մեզ հետաքրքրող ժողովը տեղի է ունեցել Կոստանդինոս Գ կայսեր չորրորդ տարում, այսինքն 645 թ.։ Այս տեղեկությունը հաստատող վկայություններ չունենք այլուստ։ Անկախ ժողովի

[1] Տե՛ս սույն հատորը, էջ 194։
[2] Հայոց պատմություն, հատ Բ., Երևան, 1947, էջ 324, 326։
[3] Հայոց եկեղեցական իրաւունքը, Ա գիրք, էջ 390։

տարեթվից, տեսնենք, թե այս կանոնախմբի մասին հայ մատենագրության մեջ ինչպիսի հիշատակության ենք հանդիպում։

Սույն կանոնախմբի սահմանման մասին ժամանակակից և ժամանակով մոտ պատմիչները ոչինչ չեն հաղորդում։ Ճիշտ է, Սեբեոսը[1], Հովհաննես Դրասխանակերտցին[2] և Ասողիկը[3] պատմում են Դվինի մի ժողովի մասին, որը տեղի է ունեցել Կոստանդինոս Գ կայսեր Հայաստան գալուց չորս տարի առաջ (ըստ Սեբեոսի), կամ երկու տարի առաջ (ըստ Հովհ. Դրասխանակերտցու, Վարդանի[4]), հավանաբար 648 թվին, բայց ժողովում սահմանե՞լ են առաջարկվող կանոնները, այդ մասին ոչինչ չեն ասում. միայն նշում են, որ ժողովում մերժվել է հայ-բյուզանդական եկեղեցական միություն կազմելու կայսերական առաջարկը։ Վերջինիս մասին, նույնիսկ չի հիշում Սամուել Անեցին[5]։ Կիրակոս Գանձակեցին բոլորովին այլ բան է հաղորդում. Ներսես Գ Շինողը Բագավանում հրավիրել է մի աշխարհաժողով շարականների երգեցողության մեջ միօրինակության մտցնելու նպատակով[6]։

Բարեբախտաբար մեզ հասել են Հայաստանում տեղի ունեցած ժողովների մի քանի ցուցակներ։ Այդ ցուցակներից հնագույնը Հովհ. Օձնեցու կազմածն է, բայց այստեղ, դժբախտաբար, ոչինչ չի արձանագրվել սույն կանոնախումբը սահմանող ժողովի մասին[7]։ Ճիշտ է, Հովհ. Օձնեցին նշում է. «Ի սկզբան թուականութեանս Հայոց, վեցերորդ ժողով արար տէր Ներսէս ի Դուին...։ Զայս ժողով արար տէր Ներսէս, հակաւակ ժողովոյն Քաղկեդովնի»[8] կամ «Նախ քան զմեզ հաստատեալ էին ի սուրբ հաւատ միութեան անապականաբար, ի ձեռն տեառն Ներսէսի որ ի Դուին հաւաքեալք ընդ ձեռամբ նորա»[9]։ Սակայն այս վկայությունները վերաբերում են Ներսես Բ Բագրևանդացու հրավիրած ժողովին[10]։

Մխիթար Գոշի մի նամակում, որը պահվել է մեր Մատենադարանի №№ 2966 (էջ 63բ—80ա), 3062 (էջ 165ա—176բ) ձեռագրերում, բերվում է նման մի ցուցակ։ Այստեղ ևս խոսքը գնում է վերևում նշված Ներսես Բ Բագրևանդացու հրավիրած ժողովի մասին։ Սակայն զարմանալին այն է, որ Մխիթար Գոշը Դատաստանագիրքը կազմելիս օգտվել է այս կանոնախմբի է—ԺԲ կանոններից[11] առանց իր աղբյուրը հիշելու, ինչպես վարվում է այլ դեպքերում, մինչդեռ Հայաստանում կայացած ժողովների իր կազմած ցուցակում չի նշում այս ժողովը։ Գուցե դա բացատրվում է նրանով, որ Գոշի նամակում բերված այդ ցուցակը վերցված և համառոտված է Հովհ. Օձնեցու վերևում նշված «Սակս ժողովոց որ եղեն ի Հայք» ցուցակից։

Ստեփանոս Օրբելյանի Պատմության կթ՝ «Թուղթ վասն հաւատոյ եւ

---

1 Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, Երևան, 1939, էջ 145։

2 Հովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 87։

3 Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, էջ 91։

4 Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 95։

5 Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, հրատ. Ա. Տեր-Միքելյան, Վաղարշապատ, 1893, էջ 80—83։

6 էջ 61—62։

7 Գիրք Թղթոց, էջ 220—223։

8 Նույն տեղում, էջ 221։

9 Նույն տեղում, էջ 223։

10 Նույն տեղում, էջ 72—75։

11 Դատաստանագիրք Հայոց, մասն Ա, ճԴ—ճէ, մասն Բ, ճԳ—ճԴ։

կարգաց եկեղեցւոյ յարեւելեան աշխարհէս առ կաթողիկոսն Հայոց տէր Գրիգոր...» գլխի[1] մի քանի էշերում (էջ 453—455) բերվում է նման մի ցուցակ, բայց մեզ հետաքրքրող ժողովի մասին դարձյալ ոչ մի խոսք։ Այսպես է դրությունը Մատենադարանի № 2335 ձեռագրի (1421 թ. ընդօրինակություն) 33բ—36բ էջերում պահվող արտաքին և հայոց ժողովների մի այլ ցուցակում։

Թե ինչով կարելի է բացատրել այդ լռությունը, դժվար է հաստատ բան ասել. թերևս ենթադրաբար ասվի, որ եթե բացառենք Շահապիվանի ժողովը, ապա Հովհ. Օձնեցու, Մխիթար Գոշի, Ստեփանոս Օրբելյանի մոտ նշված են այն ժողովները, որոնք արծարծել են արտաքին վտանգի հետ կապվող դավանաբանական հարցեր՝ հայ եկեղեցին պատնեշելու համար օտար եկեղեցիների ազդեցությունից և միությունից, դրանով իսկ պահպանելու հայ եկեղեցու անկախությունը և ապա հայ ժողովրդի ազգային դեմքը։ Իսկ այն ժողովները, որոնք նվիրված են եղել քրիստոնյա հայ համայնքի ներքին կյանքում կարգ ու կանոն հաստատելուն, առօրյա ապրելակերպի ավանդական կարգերի պահպանմանը և կամ ծիսական հարցերին, չեն մտել պատմիչների երկերում և նշված ցուցակներում։ Այս բանը, կարծեք, երևում է Մխիթար Գոշի վերևում բերված նամակից։ Ժողովները թվարկելուց հետո նա ավելացնում է. «Գլխաւոր ժողովք ի Հայք այդոքիկ են, զի զաղանդն մերժեցին զչար եւ ոչ ընկալան»[2]։ Ուրեմն, նրա և մյուսների նպատակը ոչ թե Հայաստանում տեղի ունեցած բոլոր ժողովների ցուցակ կազմելն է, այլ գլխավոր ժողովների, իսկ գլխավորը, նրանց պատկերացմամբ, այն է, որ նշեցինք վերևում։ Թերևս սրանով բացատրվի, թե ինչու Հովհ. Օձնեցին ժողովների իր կազմած ցուցակում անտեսել է ոչ միայն Ներսես Բ Բագրևանդացու[3] և Ներսես Գ Շինողի (առաջարկվող բնագիրը), այլև 719 թ. իր հրավիրած Դվինի[4] ժողովների մասին նշել, մինչդեռ 726 թ. Մանազկերտի իր հրավիրած ժողովը մտել է նշված ցուցակում[5]։

Նման մոտեցումը արտացոլումն է հայ միջնադարյան պատմագրության մեջ իշխող այն մտայնության, թե պետք է նշել կամ արձանագրել անսովոր, քաղաքական նշանակություն ունեցող և մարդկանց առօրյա ապրելակերպը բեկբեկող արտաքին և ներքին իրադարձությունների և ոչ թե հասարակության հանապազօրյա կրկնվող «անփոփոխ» վիճակի մասին։

Այս մոտեցումը, կարծես, խախտել է Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանց»[6] աշխատության իններորդ հատորի Ը պրակում. այն վերնագրելով «Առանձին ժողովք Հայոց»[7], ուր խոսում է յոթ ժողովների մասին՝ Շահապիվան, Կարին, Դվին, Մանազկերտ, Պարտավ, Վաչագան և Սիմոն։ Ի տարբերություն վերևում նշված ցուցակների, Գրիգոր Տաթևացին այստեղ խոսում է մեզ հետաքրքրող՝ Դվինի ժողովի մասին։ Բերում ենք այդ հատվածը լրիվ. «Երրորդ ժողովն է Դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն Կոստանդեայ Հռոմոց, հրամանաւ մեծի կաթողիկոսին Հայոց Ներսէսի Շինողի եւ այլ է եւ ժ եպիսկոպոսաց եւ վարդապետաց բազմաց եւ իշխանաց։ Ել նորոգեցին

---

1 Թիֆլիս, 1910, էջ 449—460։
2 ՄՄ 2966, էջ 67բ, 3062, էջ 167բ։
3 Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 475—490։
4 Նույն տեղում, էջ 514—535։
5 Գիրք թղթոց, էջ 223։
6 Կ. Պոլիս, 1729։
7 Նույն տեղում, էջ 544—545։

զթուլութիւն եւ զերկպառակութիւն ինչ եկեղեցւոյ եւ հաստատեցին գիրս կանոնականս Բժ-ան գլխոց»[1]։ Ով կարելի է ասել, Դվրնի այս ժողովի մասին, թեև անագան, բայց մատենագրական միակ վկայությունն է սա։ Մեզ թվում է, որ Գրիգոր Տաթևացին այս տեղեկությունը վերցրել է ոչ թե հնագույն պատմիչների երկերի վկայություններից, այլ Կանոնագրքից։

Թե ինչո՛ւ Հովհ. Օձնեցին այս կանոնախումբը չի մուծել իր կազմած Կանոնագրքում, թերևս բացատրվի վերևում նշված հանգամանքով, իսկ եթե մեր նշումը ճիշտ չէ, գուցե ենթադրվի, որ Հովհ. Օձնեցին տեղեկություն չուներ այդ ժողովի մասին կամ ավելի ճիշտ՝ այդ ժողովի որոշումների բնագրի մասին։

Ժողովի մասնակիցների մասին կարելի է ասել հետևյալը։ Մ. Օրմանյանը կարծում է, թե ժողովի մասնակիցները եղել են 16 անձնավորություն, իսկ 17-րդը՝ Հակոբոս Պալունյանց եպիսկոպոսը Ջամչյանի ավելացրածն է[2]։ Այս դիտողությունը ճիշտ չէ։ Նշված անվան հանդիպում ենք Կանոնագրքի գրեթե բոլոր ձեռագրերում։

Կանոնների տակ ստորագրված 17 մասնակիցներից երկուսի անուններին հանդիպում ենք այլ աղբյուրներում, օրինակ՝ Ստեփանոս Օրբելյանը հիշում է Հովհաննես Մարդպետական եպիսկոպոսին, որը Ծար կաթողիկոսի, Մաթուսաղա Սյունյաց եպիսկոպոսի և այլ եպիսկոպոսների հետ ստորագրել է Հերակլ կայսեր ուղարկված հավատո գրի տակ[3]։ Գրիգոր Անձևացյաց եպիսկոպոսի անունը մի քանի անգամ հիշվում է «Գիրք թղթոց»-ում[4] և Ուխտանեսի Պատմության մեջ[5]։

Մ. Օրմանյանը Վանանդի Իսրայել եպիսկոպոսին[6], իսկ Հ. Աճառյանը՝ Տայոց Իսրայել եպիսկոպոսին[7] ենթադրաբար նույնացնում են Իսրայել Ա Ոթմսեցի ապագա կաթողիկոսի հետ։ Այս երկու ենթադրություններից մեկն ու մեկը կարող է ճիշտ լինել, բայց ոչ մեկն էլ փաստերի վրա չի հենվում։

Այնուհետև ցանկանում ենք կանգ առնել մի այլ հարցի վրա ևս։ Մխիթար Գոշը իր Դատաստանագրքում օգտագործել է առաջարկվող կանոնախմբի վերջին վեց՝ է—ժԲ կանոնները։ ԺԱ կանոնի սկզբի հիմնական մասը նա օգտագործել է Դատաստանագրքի Բ մասի ՃԳ հոդվածում, մեզ հետաքրքրող մասը բերելով գրեթե նույնությամբ։ Այս և Գոշի նշված հոդվածների էական տարբերությունն այն է, որ Կանոնագրքի «կռուով և պատուհասիւ» բառերի փոխարեն Դատաստանագրքում կարդում ենք «և կռուով և պահակութեամբ»[8]։ Գոշի Դատաստանագրքի հրատարակիչ Վ. Բաստամյանցը այս մասին տրված ծանոթագրության մեջ գրում է հետևյալը. «Միայն մեր օրինակի մեջ (հին №-ը՝ 492, նոր №-ը՝ 488 —Վ. Հ.) և № 489 Կարապ. մեջ (այժմյան №-ը՝ 209 —Վ.Հ.) կռոով, իսկ մյուս օրինակների մեջ և կանոնի մեջ՝ կռուով»[9]։

---

[1] Նույն տեղում, էջ 544—545։
[2] Ազգապատում, Բեյրութ, 1959, էջ 712։
[3] Պատմութիւն..., էջ 119։
[4] էջ 146, 149, 151։
[5] Հատոր Բ, Վաղարշապատ, 1871, էջ 55, 57, 64։
[6] Ազգապատում, էջ 713։
[7] Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, էջ 393։
[8] Մխիթարայ Գոշի դատաստանագիրք Հայոց, էջ 412։
[9] Նույն տեղում, էջ 412, ծանոթ. 921։

Սակայն Գոշի Դատաստանագրքի մեր Մատենադարանում և այլուր պահվող 29 ձեռագրերում այդ հատվածի ստուգումները ցույց տվեցին, որ քսան ձեռագրերում պահվել է «և կոռով և պահակութեամբ»[1], մեկում՝ «և կոռով և սուղրայով»[2], երկուսում՝ «և կոռովութեամբ և պահակութեամբ»[3], երկուսում՝ «և կռով և պահսուղրայովակութեամբ»[4], երկուսում՝ «և կռով և պահակութեամբ»[5], վերջին երկուսում՝ «և կռուով և պահակութեամբ»[6] ընթերցումները։ Ակադ. Հ. Մանանդյանը ուշադրություն դարձնելով «և կռուով և պատուհասիւ» հատվածի փոխարեն «և կոռով և պահակութեամբ» փոփոխության վրա, գրում է.։ «Կոռա-ը, իմ կարծիքով, հիշատակված է եղել նաև Դվնի 645 թվի ժողովի ԺԱ կանոնում։ Այս վկայությունը, որ ամենահինն է ու կարևորը, անհայտ է մնացել մինչև այժմ, որովհետև «կոռա»-ի վերաբերյալ հատվածը կանոնում աղճատվել և փոփոխման է ենթարկվել տգետ գրիչների կողմից»։ Ապա դեմ առ դեմ դնելով Կանոնագրքից և Դատաստանագրքից վերցրած համապատասխան հատվածները շարունակում է. «Այս համեմատությունից պարզ երևում է, որ Դվնի կանոնում բնագիրն աղճատված է և «կռուով և պատուհաս-

---

[1] Տե՛ս մեր Մատենադարանի ձեռագրերը №№ 2750, էջ 129ա, 2776, էջ 136ա, 2775, էջ 183ա, 3291, էջ 95ա, 2593, էջ 132ա, 6890, էջ 100բ, 6398, էջ 89բ, 3562, էջ 131բ, 7580, էջ 6բ, 8938, էջ 392բ, 2383, էջ 61ա, 8245, էջ 52բ, 2635, էջ 202ա, 209, էջ 137ա, 488, էջ 70ա, 485, էջ 125ա, 486, էջ 76ա, (վերջին չորս ձեռագրերը Վ. Բաստամյանցի օգտագործածներն են) Ջմմառայի, Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանի ձեռագրերը (Երևանի Մատենադարանի միկրոֆիլմերի ֆոնդ, համապատասխանաբար №№ 365, էջ 200ա, 133. վերջին ձեռագրի էջերը համարակալված չեն, հողված ԲՃԺ), Վենետիկի ձեռագիր, էջ 465 (այս և XIX դարում սրանից ընդօրինակված Բրիլիսիի ձեռագրերի ընթերցումները չնորհակալությամբ վերցրինք Խ. Թորոսյանից)։

[2] № 6496, էջ 332բ,։ «Սուղրայով» ընթերցումն այս և մի քանի այլ ձեռագրերում անցել է ամենայն հավանականությամբ № 488 ձեռագրից, տե՛ս ծանոթ. 4։ «Սուզրանն» որպես կոռ գործածում է Ջաքարիա Սարկավագը, նա գրում է. Ամիրգունա խանը «բազմացոյց գունդսն՝ այսինքն կոռն» (Պատմագրութիւն, հատ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 46. հմմտ. Առ. Դավրիժեցի, էջ 84)։

[3] №№ 10311, էջ 334բ—335ա, 3788, էջ 287։

[4] №№ 8926, էջ 295բ (այստեղ «պահսուղրայով» ձևով), 2655, էջ 250ա։ № 488 ձեռագրում (1295 թ. գրչութիւն) «պահակութեամբ» բառը լուսանցքում բացատրված է «սուղրա»։ Հետագայում այս բառը մուծվել է «պահակութեամբ» բառի մեջ այս ձևով՝ «պահսուղրայովակութեամբ»։ № 8926 ձեռագրում վերևում բերված հատվածն ուղղված է «և կոռով և պահակութեամբ»։

[5] №№ 795, էջ 292ա, 3059, էջ 81բ։ № 795-ում (1618 թ. գրչութիւն) «պահակութեամբ» բառին որպես բացատրութիւն լուսանցքում դարձյալ դրված է «սուղրայով», իսկ № 3059-ում «կռուով» բառն ուղղված է «կոռով»։

[6] № 3497, էջ 128ա («պահակութեամբ» բառն այստեղ «պահսուղրայովագութեամբ» ձևով), Վրաստանի ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Քիրիլիսիի ձեռագրերի ինստիտուտի Arm. 14 ձեռագիր (մեր Մատենադարանի միկրոֆիլմերի ֆոնդ, № 50), էջ 116բ։ Այս ձեռագիրն ընդօրինակված է վերևում նշված (ծանոթ. 1) Վենետիկի Մխիթարյանների № 1237 ձեռագրից (XII դարի գրչութիւն), որը, սակայն, «կռուով»-ի փոխարեն ունի «կոռով»։ Այս երկու ձեռագրերում թեև պահվել է «կռուով» ձևը, սակայն Վ. Բաստամյանցը դրանք չի օգտագործել։ Ուստի մեզ համար անհասկանալի է մնում Վ. Բաստամյանցի վերևի նշումը, թե իր օգտագործած «միայն» երկու ձեռագրերը ունեն «կռուով», իսկ մյուս օրինակների մեջ և կանոնագրքի մեջ՝ «կռուով»։ Կանոնագրքում, իսկապես, այդպես է, սակայն Դատաստանագրքի վերևում նշված ձեռագրերի, դրանց թվում և Բաստամյանցի օգտագործածների, տվյալները նման բան չեն հաստատում։ Վ. Բաստամյանցի օգտագործած № 657 (հին №-ը՝ 749) ձեռագրում այս հողվածը չի պահվել, Դատաստանագիրքը թերի լինելու պատճառով։ Ձեռագրում հողվածների ցանկը հասնում է ՄԾԱ համարին (էջ 22բ—28ա), Դատաստանագիրքը ավարտվում է ՃԼՋ հոդվածով (էջ 28բ—87բ)։

սիւս խոսքերը, որ անտեղի են ու անհարմար, ծագել են «կոռով և պահակութեամբ» ուղիղ ընթերցվածի աղավաղումից։ Մխիթար Գոշը, անկասկած, ունեցել է ձեռքի տակ Դվինի կանոնի բնագիրն առանց այդ աղճատման։ Կարծում եմ, որ այս սրբագրության դեմ ոչ մի առարկություն չէ կարող լինել, որովհետև աղճատումն ակներև է ու անվիճելի»[1]։

Վերևում ցույց տվեցինք, որ Դատաստանագրքի մեր ձեռքի տակ եղած ձեռագրերը բոլորն էլ ունեն նշված փոփոխությունը։ Հետևապես Գոշի մոտ սկզբնապես եղել է «և կոռով և պահակութեամբ» ձևը։ Բայց արդյոք այս կանոնում սկզբնապես եղել է նույն այդ ձևը, որը հետագայում «փոփոխման է ենթարկվել տգետ գրիչների կողմից», ինչպես կարծում է ակադ. Հ. Մանանդյանը։ Նախ՝ Կանոնագրքի մեր օգտագործած բոլոր ձեռագրերը տալիս են «կոռուով և պատուհասիս» ընթերցումը, երկրորդ՝ կանոնի էությունից ելնելով, թվում է, թե VII դարի համար ճիշտ է «կոռուով և պատուհասիս» ձևը, քան թե Դատաստանագրքում պահվածը՝ «և կոռով և պահակութեամբ»։ Եվ ահա, թե ինչու։ Կանոնը սկսվում է այսպես. «Ոմանք յաղատաց ի վերայ տկարանոցաց իշխանութիւն առնեն...»։ Սա նշանակում է, որ ոչ բոլոր ազատները, այլ նրանցից մի մասը բռնություն է բանեցնում հիվանդանոցներում և աղքատանոցներում պատսպարվածների նկատմամբ։ Ի դեպ, այդպես են սկսվում նաև նույն կանոնախմբի ժ և ժԲ կանոնները։ Այս կանոնում խոսքը գնում է այն մասին, որ «Ազատներից ոմանք հիվանդանոցներում և աղքատանոցներում պատսպարվածների վրա բռնություն են գործադրում, որպես ունեցողների հարկեր պահանջում և (նույնիսկ) իրենց (ընչաղուրկները) կերակուրները և ըմպելիները հանձնում են (ազատների) գործակալներին. (վերջիններս) կռվով և պատուհասով նեղում են ողորմելի հավատակիցներին (եղբայրներին), չարչարում անխղճաբար, մինչդեռ անհրաժեշտ էր հոգալ նրանց պետքերը...» և այլն։ Ի դեպ, Վ. Բաստամյանցը ավելի վաղ ևս գտնում էր, որ «կռուով և պատուհասիւ նոյնպէս հարմար է»[2]։

Գոշը վերցնելով այս կանոնը, նախքան Դատաստանագրքում մուծելը, նրա վրա կատարել է խմբագրական աշխատանք։ Այդ աշխատանքի ժամանակ այլ բառերի կրճատման և փոփոխման հետ փոխել է «կռուով և պատուհասիս» սկզբնական ձևը «և կոռով և պահակութեամբ»։ Այս փոփոխությունը, լավ է ասել խմբագրությունը, անհրաժեշտ էր, եթե նկատի ունենք Գոշի ժամանակ, շուրջ հինգ դար տևող Հայաստանի և մանավանդ Հյուսիսային Հայաստանի տնտեսական և ագրարային հարաբերությունների զարգացման ընթացքը։

Երուսաղեմի հայրապետ Մակար Ա–ի կանոնախումբը Կանոնագրքի համակարգում դրված է 39 (ԼԹ)-րդ համարի տակ։ Այս բնագիրն իր բնույթով նամակ է. այն պահվել Կանոնագրքում և «Գիրք թղթոց»-ում[3]։ Հայագիտության մեջ, եթե բացառենք մի քանի հետազոտողների ընդհանուր բնույթի կասկածանքը, սույն կանոնախումբը համարում էին Երուսաղեմի հայրապետ Մակար Ա-ի հեղինակություն, այսինքն IV դարի։ Ընդհանուր այս ըմբռնման

---

[1] Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, Երևան 1926, էջ 39։ Նույն միտքը տե՛ս նաև հեղինակի «Ֆեոդալիզմը հին Հայաստանում», Երևան, 1934, էջ 208—209, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մաս Ա, Երևան, 1957, էջ 382—383։

[2] Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, էջ 412, ծանոթ. 921։

[3] Էջ 407—412։

դեմ, բավականին կրքոտ, հանդես եկավ Ակինյանը։ Նա, առաջին անգամ, 1908 թվին «Հանդէս Ամսօրեայ»-ում[1] «Կիւրիոն կաթողիկոս Վրաց» աշխատության մեջ կարծիք հայտնեց, որ «Գրված է թուղթս Ջ գարու Բ կիսուն Երուսաղեմի Մակար Բ հայրապետն (565—572) առ Վրթանես եպ. Սյունյաց (558—580)»։ Միաժամանակ հեղինակը այս վարկածի մանրամասն քննությունը վերապահում էր «ուրիշ առիթի»։ Եվ ահա նա, կատարելով իր խոստումը, Մակար եպիսկոպոսապետի թղթի գրության ժամանակի մասին տվեց մանրամասն ուսումնասիրություն, որը նախապես լույս տեսավ 1930 թ. «Հանդէս Ամսօրեայ»-ում[2] և ապա առանձին գրքով, «Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց յաղագս կարգաց եկեղեցւոյ» խորագրով[3]։

Իր աշխատության 13—21 էջերում թվարկելով այն հեղինակներին, որոնք գտնում են, թե այս թուղթը գրված է IV գարում, հեղինակը դրան հակադրում է մի քանի հայագետների՝ Գաթրճյանի, Գելցերի, Վեբերի, Տաշյանի, Անգելո Մայիի և Ալիշանի կասկածանքը և ավելացնում. «Այս դարերու համոզման դեմ ունինք նաև ե—ԺԱ դարերու լռությունը։ Ոչ միայն ե—է դարերու հայ մատենագիր-պատմագիրներու անծանոթ է թուղթս հանվանե, այլև ոչ Ը—Ժ գարու մատենագիրք կճանչնան անոր գոյությունը»[4] (ընդգծումը մերն է—Վ. Հ.)։ Եվ ապա թվարկում Մովսես Խորենացու (հեղինակի կարծիքով IX դարի մատենագիր), Հովհաննես Դրասխանակերտցու, Ասողիկի, Յուրտավի եպիսկոպոս Մովսեսի անունները։ Մի պահ ենթադրենք, թե այս թուղթը ոչ թե IV, այլ VI դարի գրություն է, դրանով «ե—ԺԱ դարերու լռությունը» կխախտվի՞. իհարկե ոչ։ Այս դեպքում էլ լռությունը կմնա լռություն։ Հետևապես այդ լռությունը չի կարող փաստարկ լինել հեղինակի ձեռքում։

Մակարի կանոնախմբի Ա հոդվածում խոսվում է այն մասին, թե սարկավագները իրավունք չունեն մկրտություն կատարելու, որովհետև դա եպիսկոպոսների և քահանաների իրավունքն է։ Իսկ եթե սարկավագները կատարել են նման քայլ, ապա Մակարը պահանջում է հետաքննել, որովհետև առանձին գավառներում դա սովորություն էր. և եթե այն կատարել են հետևելով տեղի սովորությանը, «անմեղութեամբ է վասն անգիտութեան կարգաց եկեղեցւոյ... իսկ եթէ գիտէր զկարգս եկեղեցւոյ եւ անց զնոքաւք»՝ պատժել։ Վերապատմելով նշված հոդվածի բովանդակությունը Ակինյանը վկայակոչում է 306 թվականի Ելվիրայի ժողովի 77-րդ կանոնը, ուր թույլատրվում է սարկավագին մկրտել, պայմանով, որ հետո եպիսկոպոսը սարկավագի մկրտածը դրոշմով լրացնե[5]։ Այստեղից Ակինյանը եզրակացնում է. «Ուստի Դ գարուն տակավին «խափանեալ» չէ սարկավագի իրավունքը մկրտելու, և ոչ ալ կնկատվի ապօրինի»[6]։ Այդպես էր դարի սկզբում, սակայն Ելվիրայի ժողովից շուրջ քսան տարի հետո՝ 325 թվականին Նիկիայի ժողովի XVIII կանոնը (հունարեն բնագիր) արգելում է սարկավագներին հաղորդություն մատուցել[7]։ Միևնույն կանոնի հայկական

[1] Էջ 171. նույնը տե՛ս առանձին, Վիեննա, 1910, էջ 98, ծանոթ. 2։

[2] Էջ 509—578։

[3] Վիեննա, 1930։

[4] Նույն տեղում, էջ 22—23։

[5] K. I. Hefele, Conciliengeschichte, Erster Band, Freiburg im Breisgau, 1855, S. 155.

[6] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 26։

[7] Պիտրա, էջ 434—435։ «... τοὶς πρεσβυτέροις τὴν εὐχαριστίαν οἱ διάκονοι διδόασιν, ὅπερ οὔτε ὁ κανὼν, οὔτε ἡ συνήθεια παρέδωκεν...»

տարբերակում՝ ժէ հոդվածում սարկավագներին արգելվում է «աւրէնս» (հաղորդություն) տալ և «մկրտութիւնս» առնել[1]։ Այս ոգով է սահմանված Սահակ Պարթևի կանոնախմբի ժէ հոդվածը. «Եւ սարկաւագք մկրտութիւն մի՛ իշխեսցեն առնել, ապա եթէ արասցեն՝ լուծեալ լիցին ի սարկաւագութենէն հանդերձ պատուհասիւ, զի ոչ է սարկաւագն քահանայ, այլ սպասաւոր քահանայինն»[2]։ Ակինյանը այս կանոնախումբն էլ, դժբախտաբար, կեղծ է համարում, ուստի և քննության ենթակա հարցերի համար նշանակությունից զուրկ։

Սահակ Պարթևի վերևում նշված կանոնում սարկավագների այդ քայլի դատապարտումը ցույց է տալիս, որ նույնիսկ V դարում նման դեպքերը բացառություն չեն կազմել և վերջիններս արգելելու համար մշակվել են կանոններ։ Եթե եկեղեցական կարգ ու կանոնի վիճակն այդպիսին էր V դարում, նշանակում է IV դարում այն դրանից տարբեր չէր։

Բացի այդ, Վ. Հացունին բերելով մի շարք փաստեր՝ Գործք առաքելոցից, Իգնատիոսից (II դար), Տերտուղիանոսից (III դար), Կիպրեղից (IV դար) և Հերոնիմոսից (IV դար), ցույց է տալիս, որ սարկավագներն այդ իրավունքն ունեին, որովհետև սկսած առաքյալների ժամանակներից գոյություն է ունեցել մկրտության երկու տեսակ՝ սովորական, որը կատարում էին եպիսկոպոսներն ու քահանաները, և անսովոր՝ բացառիկ առիթների ժամանակ՝ սարկավագները, նրր բացակա էին առաջիններրը[3]։

Մակարը նամակից և նամակատարներից իմանալով հայ եկեղեցու պաշտամունքի ծիսական թերություններրի մասին՝ պատասխան նամակում Վրթանեսին դրում է. «Եւ զամենայն կանոնադրութիւնս սրբոյ ժողովոյն որ վասն հերձուածողացն եղեւ, զորս կարեւոր է ընդունել ամենայն բարեպաշտաց, որ եղեւ վասն դրութեան կարգաց եկեղեցւոյ»[4]։ Նամակի մի այլ մասում Մակարը ասում է. «զժողովոյն կարգեալսն»։ Մեջբերելով այս հատվածները Ակինյանը պնդում է, թե գրանցում Մակարը ակնարկել է «Սահմանադրութիւն առաքելոց» մատյանը[5]։ Ելնելով նման մտայնությունից, նա առաջարկում է այդ մատյանի «διαταγαὶ (կամ διατάξεις) τῶν ἁγίων ἀποστόλων» վերնագիրը սրբագրել «διατάξεις τῆς ἁγίας Συνόδου»։ Ինչո՞ւ. որպեսզի այն հարմարվի իր՝ Ակինյանի պնդմանը։ Մի՞թե չի կարելի «սրբոյ ժողովոյն», «զժողովոյն կարգեալսն» արտահայտությունների տակ անկախ Ակինյանի սրբագրությունից «դյուրավ» (Ակինյանի օգտագործած բառն է) հասկանալ ոչ թե Առաքելոց սահմանադրությունը, այլ Նիկիայի ժողովը, ուր բացի հերձվածողական հարցերից (Պողոս Սամոսատցի, Արիոս) քննվել են և ընդունվել եկեղեցու բարեկարգության վերաբերյալ կանոններ[6]։ Միանգամայն ճիշտ է Վ. Հացունին, երբ գրում է. «Որոնք (Նիկիայի կանոնները —Վ. Հ.) թեպետ հասած էին մեր

[1] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 129։

[2] Նույն տեղում, էջ 378։

[3] Տե՛ս Առ Վրթանէս Թղթին հեղինակը Մակար առաջին է, ոչ երկրորդը (Բազմավէպ, 1931 թ. էջ 15)։

[4] Տե՛ս նույն հատորում, էջ 218։

[5] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 29—30։

[6] Համմտ. Վ. Հացունի «Թուղթ Մակարայ Երուսաղէմացւոյ առ ս. Վրթանէս, Բազմավէպ, 1929, էջ 260։ Իր մի այլ հոդվածում Վ. Հացունին այս կապակցությամբ դրում է. «Մակարա բացատրութենեն ու ժողովին անունը չտալեն կհետևի՝ որ ժողովը կամ դեռ միակն էր յուր տեսակին մեջ ու ծանոթ ամենուն, կամ տակավին շատ նոր էր և նուէնպես հայտնի հասարակաց (Բազմավէպ, 1931 թ., էջ 18)։ Եվ ապա շարունակում. «Արդարև միակ, թարմ և

աշխարհը, բայց կերևի թե նորադարձ Հայաստանի կրոնական խառնակ վիճակին մեջ լավ արմատ չէին բռնած»[1]։

Ըստ երևույթին նման պայմաններում է, որ Վրթանես կաթողիկոսը հարկ է համարում դիմել Մակար Ա-ին և նրանից խնդրել իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները։ Մյուս կողմից, եթե ընդունենք Ակինյանի նշված ենթադրությունը, այն դեպքերում ի՞նչպես հասկանանք Մակարի թղթի «ղի զժողովոյն կարգելսե ոչ ասեն ուրեք ուրեք քահանայքն ի ժամ մկրտութեաննն»[2] (ընդգծումը մերն է —Վ. Հ.) արտահայտությունը։ Ընդգծված հատվածում խոսքը վերաբերում է Նիկիայի ժողովի Հավատամքին, որը պետք է ասվեր մկրտության ժամանակ, բայց Հայաստանում տեղ-տեղ խախտվել էր։ Հետևապես խոսքն այստեղ ոչ թե Առաքյալների սահմանադրության մասին է, այլ Նիկիայի ժողովի և սրա սահմանած Հավատամքի[3]։

Իսկ թղթի տյն մասում, ուր ասվում է «աւանդեմ զկանոնագրութիւնս զայս ձեզ, ուսեալ յառաքելոցն պատմութեանց» (Դ հոդված), Ակինյանը հասկանալով Առաքելական անվավեր կանոնները՝ եզրակացնում է. «Արդ այս անվավերական մատյանը հրապարակ ելած է, ինչպես քննիչները ապացուցած են, Դ դարու վերջերն և կամ Ե դարու առաջին տասնյակին Ասորիքի մեջ»[4]։ Նշանակում է, ինչպես կարծում է Ակինյանը, Մակարը կարող էր միայն դրանից հետո օգտվել։ Կարծում ենք Մակարի թղթի խոսքը ոչ թե «անվավերական մատյան»-ի կամ սրանից օգտվելու մասին է, այլ Առաքյալներին վերագրված ավանդության։ Այս առումով միանգամայն ճիշտ է հարցիս մասնագիտական և մանրախույզ քննության հեղինակ Տաշյանը, երբ գրում է. «Ոմանք, անշուշտ, գրավոր կանոն մը չեն ակնարկեր, այլ ընդհանուր ավանդություն մ' որ այն սովորությունքն առաքելոց կ'ընծայեր»[5] (ընդգծումը մերն է —Վ. Հ.)։ Ուստի պարտադիր չէ ընդունել, թե Մակարը օգտվել է IV դարի վերջին և V դարի սկզբին հանդես եկած այդ մատյանից և դրանով էլ նրա տեղը շարժել դեպի VI դար[6]։

իսկական ժողով մը, Նիկիականը, և ինք միայն կրնար ըսել «զկանոնագրութիւնս սրբոյ ժողովոյն». որուն ինքն էլ մասնակցած էր» (նույն տեղում, էջ 19)։

[1] Նույն տեղում, էջ 261։

[2] Տե՛ս սույն հատորում, էջ 219։ Ուխտանեսը հաղորդում է, որ Հավատամքն ասվում է նաև ավետարանն ընթեռնելուց հետո (Պատմութիւն Հայոց, Բ, գլ. ԻԲ, էջ 43)։

[3] Սակայն Վ. Հացունին Նիկիայի Հավատամքի մասին ոչինչ չի նշում։ Նա հենվելով Հեֆելեի այն կարծիքի վրա, որ Նիկիայի ժողովի որոշումներից կորած նյութեր կան, որոնք Նիկիական Բ կանոնի ընդլայնումն են (Conciliengeschichte, Erster Band S. 356), կարծում է թե ժամանակի ավանդությամբ Աղթանդեղոսը Լուսավորչի բերանը դնում է մի վարդապետություն, որը ասվելու է մկրտության ժամանակ (Բազմավէպ, 1931, էջ 19)։ Ճիշտ է Հավատամքին այդպիսի հավելում գոյություն ունի, բայց այն չի ասվում առանձին, այլ ասվում է Նիկիայի Հավատամքից անմիջապես հետո (տե՛ս Հայ եկեղեցու Մաշտոց, Էջմիածին, 1894, էջ 26—29)։

[4] Թուղթ Մակարայ Բ երուսաղէմի հայրապետի..., էջ 30—31։

[5] Վարդապետութիւն առաքելոց, էջ 149—150։

[6] Ինչո՞ւ անպայման հասկանալ «Մահմանադրութիւն առաքելոց» մատյանը, ինչպես կարծում է Ակինյանը, երբ Մակարի թղթում խոսք չկա այդ մասին։ Ընդհակառակը թղթի Դ և է հոդվածներում խոսվում է միայն ավանդության մասին. «ուսեալ յառաքելոց պատմութեանց և աւանդութեամբ» կամ «ըստ առաքելոցն աւանդութեանն». տե՛ս նաև Վ. Հացունու հոդվածում (Բազմավէպ, 1931 թ., էջ 16)։ Այս կապակցությամբ թերևս ավելորդ չի լինի այստեղ բերել ամերիկաբնակ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի 1966 թ. փետրվարի 24-ի մեզ գրած նամակից մեկ հատված. «Ակինյան իր փաստը կը հիմնե այն բանի վրա՝ որ կանոնք Առաքելականք Ե դարու խմբագրություն էն։ Բայց այս ճիշտ չէ։ Լավագույն բանասերներ, օրինակ, անգլիացի Բևերիտգէ (Բևրիճ) կը դնեն զանոնք երրորդ գարու կիսուն։ Պեարսոն (Պիյրսըն)

Ակինյանի կարծիքով VI դարում հայ եկեղեցում հանդես են եկել պաշտաՕունքի ծիսական կարգ ու կանոնի զեղծումներ[1]։ Եվ այդ ցույց տալու համար նա վկայակոչում է VIII դարի հեղինակ Հովհ. Օձնեցուն։ «Հայ պատգամավորներու հայորդած տեղեկութիւնները,—գրում է Ակինյանը,—Հայաստանի մէջ մուտ գտած զեղծումներու մասին կ'արդարանան Հովհ. Օձնեցվո վկայութեամբ, որ իբր 720-ին այսպես կը մաքառի նույն զեղծումներու դեմ»[2] (ընդգծումը մերն է —Վ. Հ.) և բերում է Օձնեցու «Մատենագրութիւնք» աշխատության 5—6 էջերը[3]։ Նախ՝ եթե ընդունենք, որ Մակարի թուղթը գրվել է VI դարում, նշանակում է այն գրվելուց հետո էլ հայ եկեղեցու ոլորտում նշանակություն չի ունեցել, որովհետև նշված թղթի գրությունից հետո էլ շուրջ երկու հարյուր տարի, ինչպես կարծում է Ակինյանը, այդ զեղծումները գոյատևել են հասնելով մինչև VIII գար։ Երկրորդ՝ եթե խոսքը գնում է զեղծումների մասին, ապա պետք է ընդունել, որ հայ եկեղեցում պաշտամունքի ծիսական հարցերում եղել է կարգ ու կանոն, որը ինչ-ինչ պատճառներով զեղծվել է կամ աղավաղվել և այն վերականգնելու համար կարիք չկար դիմելու մեկ ուրիշի։ Հովհ. Օձնեցին իր ժամանակի զեղծումների դեմ մաքառելիս նման քայլի չդիմեց, այլ ինքը ձեռնամուխ եղավ զեղծումների վերացմանը։ Երրորդ՝ Մակարի թղթում խոսք անդամ չենք գտնում զեղծումների մասին. թղթում խոսվում է այն մասին, «Թէ կողմանք Արեւելից (իմա՝ Հայաստանում —Վ. Հ.) թերի են զգուշութեամբ յայսպիսիսս բազում ինչ իրաւք»[4] (ընդգծումը մերն է— Վ. Հ.)։ Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսքը ոչ թե զեղծումների, այլ թերի՝ ոչ լրիվ լինելու մասին է։ Նշանակում է հայ եկեղեցում պաշտամունքի ծիսական կարգ ու կանոն եղել է, բայց այն լրիվ չէր, անհրաժեշտ էր դարձնել կատարյալ, որի համար էլ դիմել են հեղինակավոր մի անձնավորության՝ Մակար Ա-ին[5]։

անգլիացին կպնդե թե Առաքելական կանոնները խմբագրված են Նիկիոյ ժողովեն առաջ։ Հաոնակ գերմանացին խմբագրության ժամանակը կը դնե մոտավորապես 300 թվականը։ Համենայն դեպս Առաք. կանոնները հիմնված են երրորդ գարու և ավելի կանոխի կանոններու վրա, և ինչ ավելի բնական է, քան այն՝ որ Մակար անուղղակի ակնարկած լինի անոնց»։

[1] Քանի որ ծիսական մի շարք հարցեր՝ մկրտության, մեռոնի, մանկան զգայարանների օծման, օծման տարբեր յուղերի՝ հիվանդների, մահացածների և այլն մանրամասն քննության կատարել է Վ. Հացունին և մերժել Ակինյանի այդ հարցերի մասին առաջ քաշած կարծիքները, դրանց չենք անդրադառնա. հետաքրքրվողներին կհանձնարարենք կարդալ Վ. Հացունու երկրորդ հոդվածը տպված Բազմավէպում (1931 թ. հատկապես 20, 61—64 էջերը)։

[2] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 32։

[3] Վենետիկ, 1833։

[4] Տե՛ս սույն հատորում, էջ 219։

[5] Մակար Ա-ը և ոչ Մակար Բ-ը մեծ հեղինակություն է ունեցել հայ եկեղեցում։ Մեր մատենագրության մեջ պահվել են մի շարք գրություններ վերագրված նրան, օրինակ, Մատենադարանի № 2776 ձեռագրի 249բ—258բ էջերում պահվել է մի հարց ու պատասխան. «Հարցումն երիտասարդի միոյ տխմարի եւ պատասխանի սուրբ հարն Մակարայ վասն ամենայն գործոց առաքինիս» վերնագրով։ Մի այլ հարց ու պատասխանից, որը վերագրված է Վանական վարդապետին, իմանում ենք, որ հայերը Քրիստոսի Ննդյան և Հայտնության տոնը միասին կամ առանձին տոնելու վերաբերյալ դիմել են Մակար Ա-ին և նրանից ստացել ցուցումներ, տե՛ս № 1480, էջ 575) և այլն։ Անկախ նրանից, թե այս տեղեկությունները ինչքանով են հավաստի, վերջիններս ցույց են տալիս Մակար Ա-ի հեղինակության փաստը հայ եկեղեցում, տե՛ս և համմտ. Վ. Հացունու հոդվածը, Բազմավէպ, 1931 թ., էջ 70։

Ծիսական կարգ ու կանոնի թերութիւնները հայ եկեղեցում ավելի բնական էին IV դարում, երբ քրիստոնեութիւնը նոր էր մուտք գործել Հայաստանում, ինչպես ծիսական, այնպես էլ ուրիշ հարցեր տակավին լրիվ չէին մշակվել ու ձևակերպվել հայ եկեղեցու ընդերքում[1]։ Մյուս կողմից, ինչքան հարմար է VIII դարի իրավիճակով բացատրել ու հաստատել VI դարի հայ եկեղեցու պաշտամունքի ծիսական իրադրութիւնը։ Եթե հարցը վերաբերում է VIII դարի փաստերով VI դարի ծիսական զեղծումները արդարացնելուն, այն դեպքում Հովհ. Օձնեցին նշված աշխատութեան մեջ խոսում է նման այլ կարգի զեղծումների մասին, որոնք չեն արտահայտվել Մակարի թղթում։ Հովհ. Օձնեցին գրում է. «Բայց առ սոքօք եւ զայս եւս տեսանեմք յոմանս անկարգութիւն սովորութեամբ հիմնացեալ. զի զնոսա, որք յամուսնութիւն անդր գայցեն, ոչ տանելով ըստ օրինաց հաւատացելոց յեկեղեցիս ի մէջ ժողովրդոց, հաղորդս առնելով ամենայն կարգաց եւ կրօնից քրիստոնէութեան, եւ անդ յարժանաւոր տեղիսն զնոսա պսակեսցեն։ Այլ առանց ժամու եւ աղօթից եւ առանց օրհնելոյ եւ հաղորդութեան, արտաքոյ մնան՝ ուր կամք իցեն։ Եւ քահանայն ընդ ձեռն ուրուք անդր երթողաց հրամայէ տանել զպսակն, թշնամանելով միանգամայն զպսակն եւ ղպսակեալսն»[2]։

Մի այլ օրինակ. «Բայց տեսանեմք առ այսոքիւք եւ զայն եւս, եթէ ոմանք եւ վայելչագունից սովորութեանց չանան խափանումն ի վերայ բերել. եւ զաստուածայայտութեանն եւ զծննդեան նորին զօր, զոր ի վեցն յունուարի ի միասին տօնել սովոր է աշխարհս մեր, այժմ զծննդեանն սիրեն ոմանք կատարել զտօն, իսկ յայտնութեանն խորհրդոյ՝ եւ ոչ միով իւիք կամին ճառս ի մէջ բերել, կապելով ամենեւին զինքեանս ընդ ընթերցուածոցն հրաման»[3] և այլն։

Օձնեցու ժամանակի՝ VIII դարի այս իսկական զեղծումները արդյունք էին ոչ թե պաշտամունքի ծիսական հարցերին անտեղյակութեան կամ թերի լինելուն, որովհետև Մակարի նամակը (VI դար, ինչպես կարծում է Ակինյանը) կար, ուրեմն պետք է այս կամ այն չափով դիտակ լինեին այդ հարցերին և վերացնեին։ Այդ զեղծումները, և ոչ թերութիւնները, պետք է բացատրել այլ պատճառներով, որոնք կապ չունեն հայ եկեղեցու պաշտամունքի ծիսական հարցերի աստիճանական զարգացման հետ։ Օձնեցու ժամանակ ծիսական հարցերի զեղծումները կապված էին տվյալ ժամանակի քաղաքական հանգամանքների հետ։ Մի կողմից բյուզանդական կայսրութեան և բյուզանդական եկեղեցու նվաճողական ու միավորման քաղաքականութիւնը, հայ համայնքի ներսում առաջ եկած աղանդավորական շարժումները և, վերջապես, արաբական ավերիչ արշավանքներն ու ապա ծանր հարկապահանջութիւնը։ Ահա թե ինչպես է ներկայացնում Ղևոնդ պատմիչը երկրի, մասնավորապես եկեղեցիների և նրանցում կատարվող ծիսական կարգ ու կանոնի վիճակը. «աշխարեալ եւ աւաղեալ զկորուստ աշխարհիս եւ զկործանումն եկեղեցեաց եւ զթափուր

[1] Մակար Ա-ից հետո էլ Տերենտիոս կոմեսին Բարսեղ Կեսարացու 370-ական թվերին գրած մի նամակում հետաքրքիր տեղեկութիւն ենք գտնում Հայաստանի, ավելի ճիշտ Փոքր Հայքի հայերի նման վիճակի մասին ահա՛ ինչ վերաբերում է այն բանին, որ Հայաստանում այսպիսի անտարբերութեամբ խախտվում են օրենքները, ապա ես նրանց տվի կանոններ, թե ինչպես պետք է հոգ տանել»(οὐς αὐτοῖς καὶ τύπους περὶ τῶν ἀδιαφόρως κατὰ τὴν Ἀρμενίαν παρανομουμένων ὅπως αὐτοις προσήκειν ἐπιμελεῖσθαι. տե՛ս Saint Basile Lettres, tome 1 (texte établi et traduit par Yves Courtonne, Paris, 1957, p. 218):

[2] Մատենագրութիւնք, էջ 10։

[3] Մատենագրութիւնք, էջ 12։

չինելն ի նախարարական տոհմէն»[1]. «սուրբ եկեղեցին խրթնացեալ ի բարեզուարդութենէ բեմին եւ լռեալ ձայն աստուածային փառատրութեանն, ընդ նմին լռեալ հոդեւոր և բանաւոր պատարագացն կարգք...»[2]: Համանման վկայություն VII դարի համար հաղորդում է Սեբեոսը. «Արդ՝ զի թշնամիք աստուածպաշտութեանն բաղում անգամ արշաւեալ կորուսին զերկիրս մեր. եւ որպէս զմարդիկ երկրիս կորուսին, եւ զկտակարանս եկեղեցւոյ եւ զվարդապետս նոյնպէս սպառեցին՝ եւ արդ՝ կտակարանս եւ վարդապետս ոչ գոն...»[3]:

Երկրի տնտեսությունը, զինված ուժերը քայքայվում էին: Կոտորածների, եկեղեցիների ու վանքերի կողոպուտի, ընդհանուր ավարառության և ծանր հարկապահանջության պայմաններում կարո՞ղ էր հայ եկեղեցու պաշտամունքի ավանդական ծեսերի մեջ խախտումներ ու զեղծումներ չառաջանալ: Իհարկե ոչ: Օձնեցին այս մասին է խոսում: Նա թվելով ծիսական զեղծումների շարքը, գրում է. «Եւ պատճառ ոչ ունիմ ասել, զանփո՞յթն առնելոյ զառաշնոցն այսպիսի խառնաբնդոր եւ եղծագործ սովորութեանց, եթէ ժամանկի կարճութիւն, եթէ հիւանդութեանց ի վերայ անկումն, եթէ անպարապութիւն յաշխարհակալացն հարստահարութենէ. զայս ի նոսա եւ յաստուած թողլի է»[4] կամ «զայն՝ նորագիւտ եւ դեռահասակ ժամանակն ստիպէր առնել այնպէս»[5] և կամ «այս (Քրիստոսի ծնունդը և մկրտությունը մեկ օրում՝ հունվարի 6-ին տոնելը —Վ. Հ.) նախնական սովորութիւն ի վաղընջուց հետէ նախահաւեալ, եւ մինչև առ մեզ հասեալ»[6]: Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե պաշտամունքի ծիսական հարցերի թերություններին և կամ անտեղյակությանը, այլ ինչ ինչ պատճառներով եղած կարգ ու կանոնի խանգարմանը, զեղծմանը: Հետևապես մեղ չի համոզում Ակինյանը, երբ փորձում է Օձնեցու տվյալներով բացատրել VI դարի ծիսական հարցերի խանգարումները, եթե այդպիսիք նույնիսկ գոյություն են ունեցել:

Ակինյանը այնուհետև բերում է «Հավատարիմ ժամանակակցի մը և եղելության քաջածանոթ անձնավորության մը վկայություն»[7], այն մասին, որ «հիրավի Մակար Բ (VI դար—Վ. Հ.) դրած է թուղթ առ Հայս»[8]: Նա նկատի ունի Երուսաղեմի հայրապետ Մակար Բ-ի հաջորդ Հովհաննես եպիսկոպոսապետի (ըստ Ակինյանի 575—592 թթ.) նամակը[9] գրված Աղավնքի[10] հովվապետ Աբասին (552—596 թթ.) «Սրբոյ եւ աստուածասիրի երանելոյ հոգեւոր եղբօր եւ պաշտօնակցի մերոյ Աբասայ եպիսկոպոսի Աղուանից ի Յոհաննէ եպիսկոպոսապետէ Երուսաղէմի» խորագրով[11]: Այստեղ կբերենք Ակինյանի կողմից այս նամակից վերցված երկու քաղվածները. «Աստուածասէր Թումաս, երանելոյ Պանտավանաց վանական, ըստ սովորութեանն՝ որպէս յառաջ քան զմեզ յաջորդեալք ս. աթոռոյն Յակովբայ եղբօր Տեառն առեալ էր գիր հաւատոյ

[1] Պատմություն, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 23:
[2] Նույն տեղում, էջ 21:
[3] Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն, Երևան, 1939, էջ 131:
[4] Մատենագրութիւնք, էջ 8:
[5] Նույն տեղում, էջ 6:
[6] Նույն տեղում, էջ 12:
[7] Թուղթ Մակարայ Բ երուսաղէմի հայրապետի..., էջ 47:
[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում, էջ 46:
[10] Պետք է նկատի ունենալ «Հայոց արևելից կողմանք»-ը՝ Կուրի և Արաքսի միջագետքը:
[11] Տե՛ս «Արարատ», 1896, մայիս, Հավելված, էջ 252—256. հրատ. կարապետ վարդապետ:

եւ կարգաց եկեղեցւոյ, նոյնպէս եւ ի մէնջ խնդրեաց եւ մատոյց տօմարս երկուս ժողովոյ որ առանց Քրիստոսի ժողովեալ էր ի Հայս հակառակ սրբոյ եկեղեցւոյն[1]։

«Բայց վասն քո երանութեանդ լուաք, եթէ կամակից ես բարւոյ եւ ընկալար թուղթս երկուս ի Մակարայ եւ յԵւսդոքայ՝ ի ձեռն բարեպաշտի եւ աչխատասիրի Թումասու, որ ոչինչ պէաս ունի ի ձէնջ պատուի եւ մեծութեան, բայց միայն ոգոց ձերոց փրկութեան, վասն որոյ եւ զիս թախանձեաց գրել ըստ օրինակի նոցա, որ յառաջ քան զմեզ էին նախընկալք աթոռոյս Յակոբայ առաքելոյն[2] *(ընդգծումը մերն է —վ. Հ.)։*

Ակինյանի կարծիքով ոչ մի տարակուսանք չկա, թե Հովհաննես եպիսկոպոսապետը այլ գրվածք կակնարկե, որովհետև նամակում նախ նշված է Մակարի անունը (Ակինյանի կարծիքով Բ-ը), և ապա գրության բովանդակությունը՝ «վասն կարգաց եկեղեցւոյ»[3]։

Քննենք այս հարցը ավելի մանրամասն։ Հովհաննես եպիսկոպոսապետի վերոնշյալ նամակից պարզ երևում է, որ ոչ այս և ոչ էլ նամակում ակնարկված Մակար Բ-ի նամակները ուղղված չեն հայոց ընդհանուր հոգևոր պետին, ինչպես նշված է Մակար Ա-ի նամակում (իմա՛ այս կանոնախումբը), այլ Աղվանից հովվապետին՝ Աբասին։ Ավելին, Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսապետի վերոհիշյալ նամակում խոսք անգամ չկա, թե իր անմիջական նախորդը՝ Մակար Բ-ը նամակ է գրել Սյունյաց եպիսկոպոս Վրթանեսին։ Ընդհակառակը, նամակից երևում է, որ Մակար Բ-ը գրել է Աղվանքի եպիսկոպոս Աբասին։ Իր վարկածը Ակինյանը փորձում է բացատրել այսպես. «Հովհաննու թղթին մեջ չէ հիշված Վրթանես հանվանեն, թեև իրեն ուղղված էր Մակարի թուղթը։ Այսպեսի անուշադրություն ներելի էր անշուշտ հայրապետի մը, որ կգրեր յուր թուղթը «հեռաբնակ կողմանց», իրարու սահմանակից աշխարհներու, որոնց պետերը կգործեին համամիտ և միասիրտ»[4]։ *Թուլլատրելի՞ է Երուսաղեմի հայրապետին այսպիսի տարօրինակություն, երբ Սյունյաց եպիսկոպոս Վրթանեսը, ինչպես կարծում է Ակինյանը, նամակ է գրել նրան և խնդրել եկեղեցու ծիսական կարգին վերաբերող հարցերի պատասխաններ, իսկ նա պատասխանն ուղարկում է մեկ ուրիշին՝ Աղվանից եպիսկոպոս Աբասին։ Եվ մի՞թե կարելի է արդարացնել այդպիսի «անուշադրությունը» նրանով, որ Աղվանքի և Սյունիքի հոգևոր պետերը «կգործեին համամիտ և միասիրտ» կամ այդ «անուշադրությունը» եղել է նրանից, որ Մակարը իր թուղթը գրել է «հեռաբնակ կողմանց»։ Այդ հեռավորությունը ի՞նչ նշանակություն կարող էր ունենալ հոգևոր երկու պետերի, առավել ևս երկու երկրների անունը շփոթելու խնդրում։ Չէ որ Մակարին ուղղված նամակում պետք է նշված լիներ Վրթանես (անկախ նրանից, թե ով է վերջինս՝ IV դարի Վրթանես կաթողիկոսը, թե VI դարի Սյունյաց եպիսկոպոս Վրթանեսը), ինչպես այս կանոնախմբի մեջ նշված է նրա գրողի անունը։ Եթե, իսկապես, Մակարին ուղղված նամակի մեջ չի նշված նրա գրողի անունը, ինչ որ միանգամայն անհավանական է, ապա մի՞թե նամակատարները, որոնք հայ եկեղեցու ծիսական հարցերի մասին Երուսաղեմում պատմում էին ոչ*

---

1 Նույն տեղում, էջ 252։
2 Նույն տեղում, էջ 255—256։
3 Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 48։
4 Նույն տեղում, էջ 61։

Համառոտ կերպով, չգիտեին կամ չէին ասել իրենց հոգևոր պետի անունը։ Սակայն ինչն է ստիպել Ակինյանին՝ Աղվանից եպիսկոպոս Աբասին ուղղված Մակար Բ-ի նամակը նույնացնելու քննարկվող կանոնախմբի հետ։ Այն, որ Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսապետը վերևում հիշված իր նամակի մեջ Մակար Բ-ի, Աղվանից եպիսկոպոս Աբասին ուղղված նամակի բովանդակության մասին ասում է. «կարգ եկեղեցւոյ»։ Եվ քանի որ առաջարկվող բնագրի ներածականում և Ա, Թ հոդվածներում մի քանի անգամ հիշվում է «կարգ եկեղեցւոյ» կամ «կարգք եկեղեցւոյ» և բացի այդ, այս կանոնախումբը ինքնին վերաբերում է եկեղեցու պաշտամունքի կարգ ու կանոնին, նշանակում է, ինչպես եզրակացնում է Ակինյանը, Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսապետի նամակում հիշված Մակար Բ-ի նամակը սույն բնագիրն է, հետևապես վերջինիս հեղինակն է Մակար Բ-ը VI դարում, ուղղված Սյունիքի եպիսկոպոս Վրթանեսին։ Սակայն ինչքա՞ն հիմնավոր է նամակի բովանդակությամբ որոշել նամակի կամ նրա հեղինակի ինքնության հարցը։ Հայտնի է, օրինակ, որ Հովհ. Օձնեցին էլ երկու դրություն ունի «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» վերնագրով և նույն խնդրին վերաբերող[1], բայց բովանդակությամբ բոլորովին այլ բան է, քան սույն կանոնախմբում շոշափված հարցերը, որոնք վերաբերում են դարձյալ եկեղեցու կարգերին[2]։ Նշանակում է «կարգ եկեղեցւոյ», «կարգք եկեղեցականք» չեն վերաբերում միայն ծիսական հարցերին, այլև դավանաբանությանը։ VI դարի Երուսաղեմի հայրապետների դրությունները Աղվանքի Արաս եպիսկոպոսին հենց այդ բնույթն են ունեցել։ Հարցի մանրամասն քննությունը ստիպում է մեզ կանգ առնել Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսապետի Աղվանից եպիսկոպոս Աբասին ուղղված նամակի բովանդակության և սրա հետ աղերսվող Պանտավանքի վանական Թումասի գործունեության վրա։

VI դարի կեսերին քաղկեդոնականությունը (այդ ժամանակվա գրություններում այն նույնանում էր նեստորականության հետ)[3] թափանցել էր Աղվանք և Սյունիք։ Այս բանը անհանգստացնում է հայ եկեղեցուն։ Կաթողիկոս Հովհաննես Բ Գաբեղենեցին մի քանի եպիսկոպոսների հետ նամակ է գրում Աղվանքի եպիսկոպոս Աբասին[4], մի նամակ էլ Սյունյաց եպիսկոպոս Վրթանեսին[5]։ Նամակներում խորհուրդ է տրվում մերժել նորամուծ ուսմունքը։ Այս նամակների մասին իմանում է Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսապետը և նամակ գրում Աղվանից եպիսկոպոս Աբասին։ Նամակը, որի էությունը դավանաբանական հարցերն են, ուղղված է հայ եկեղեցու դեմ, այն համարվում է հերձված, որը «ընդ բազում հերձուածս միաւորի»[6]։ Նամակի հեղինակը առանց թաքցնելու գրում է, որ նա Երուսաղեմում հալածելով նզովել է հայերին

---

[1] Մատենագրութիւնք, էջ 81—100։

[2] Հմմտ. Գրիգոր Տղայի նամակը Գրիգոր Տուտեորդուն՝ «Գիր ողջոյնի եւ հարցումն խրատու տէառն Գրիգորի Հայոց կաթողիկոսի Տղայն կոչեցելոյ առ մեծապատիւ վարդապետն Գրիգոր որդի Տուտեայ, խնդրելով ի նմանէ բան պատասխանոյ Թղթին Հոռոմոց, որ էր դրեալ առ նա ցուցանել նոցա գրով զկարգս եկեղեցական զխոստովանութիւն հաւատոց մերոց» վերնագրով. տե՛ս Ձ 2966, էջ 49բ—52բ։

[3] Գիրք Թղթոց, էջ 49, 79, 81։

[4] Նույն տեղում, էջ 81—84. Մ. Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 137—142։ Թեև այս ժամանակ Աբասն արդեն Աղվանքի հայոց կաթողիկոսն էր։

[5] Նույն տեղում, էջ 78—80. Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1912, էջ 92—96։

[6] «Արարատ», 1896, մայիս, էջ 252։

և այրել նրանց վանքերից մեկը[1]։ Այնուհետև շարադրում իրենց դավանքի սկզբունքները[2] և խորհուրդ տալիս մերժել հայ եկեղեցու դավանանքը։

Այս բանագնացությունների մեջ մեծ դեր է խաղում Երուսաղեմի Պանտավանքի՝ վանական Թումասը, մի անձնավորություն, որը մի քանի անգամ եղել է Աղվանքում։ Հենց սա էլ հայ կաթողիկոսի նամակի և Աղվանքում իր կուսակիցների դեմ տարվող հալածանքի մասին հաղորդում է Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսապետին։ Այդ մասին վերջինիս Աղվանքի եպիսկոպոս Աբասին գրած նամակում կարդում ենք. Թումասը «ըստ սովորութեանն որպէս յառաջ քան զմեզ յաջորդեալք... առեալ էր գիր հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ, նոյնպէս եւ ի մէնջ խնդրեաց...»[3]։ Նույն նամակի մի այլ մասում դարձյալ կարդում ենք. «զիս թախանձեաց գրել ըստ օրինակի նոցա»[4] (իմա՝ Մակար Բ և Եվսդոքիոս. ընդգծումը մերն է —Վ. Հ.)։ Ուրեմն, Թումասը հաջորդաբար դիմել է Երուսաղեմի Մակար Բ, Եվսդոքիոս և Հովհաննես հայրապետների օգնությանը և վերջիններս նրա խնդրանոք և թախանձանքով նամակ են գրել Աղվանքի եպիսկոպոս Աբասին։ Այդ նամակները, Ակինյանի հավանական ենթադրությամբ, Աղվանք է տարել և ապա թարգմանել Թումաս[5]։ Նշանակում է Երուսաղեմի հայրապետներին հայերը, այդ թվում և Սյունյաց եպիսկոպոս Վրթանեսը, նամակով չեն դիմել։

Դավանաբանական հարցերի շուրջը գրված՝ Հովհաննես եպիսկոպոսապետի նամակից բացի, Մակար Բ-ի և Եվսդոքիոսի նամակները թեև մեզ չեն հասել, սակայն այդ միակ նամակից էլ կարող ենք եզրակացնել, թե Աղվանքում Թումասի գործունեության նշանախեցը որն է եղել։ Այդ մասին այնտեղ կարդում ենք. Թումաս «ոչինչ պէտս ունի ի ձէնջ պատուի եւ մեծութեան, բայց միայն ոգոց ձերոց փրկութեան»[6] (ընդգծումը մերն է —Վ. Հ.)։

Ուրեմն, պայքարը գնում էր դավանաբանական հարցի շուրջը՝ Աղվանից եկեղեցին դուրս բերելու հայ եկեղեցու ազդեցությունից։ Այս էր Թումաս վանականի գործունեության և Երուսաղեմի նշված հայրապետների առաքած նամակների բովանդակության մեխը։

Հարց է առաջանում. ինչպե՞ս կարող էր Սյունյաց եպիսկոպոսությունը իր դեմս նրա պես Վրթանեսի, որը հայ լուսավորչական եկեղեցու ներկայացուցիչն էր, նամակ գրել քաղկեդոնական եկեղեցու հայրապետներից մեկին՝ Մակար Բ-ին և նրանից հայ եկեղեցու ծիսական կարգերի վերաբերյալ ցուցումներ խնդրել։ Սյունիքի աշխարհիկ և հոգևոր պետերը քաղաքական պատճառներով ինչքան էլ դժգոհ լինեին Մամիկոնյաններից և ձգտեին բաժանվել Դվինից՝, կարող էին հոգևոր կենտրոնի նկատմամբ հակաթոռ լինել, բայց ոչ հրաժարվել հայ եկեղեցու ավանդական դավանանքից։ Այս հանգամանքը եզական չէ հայ եկեղեցու պատմության մեջ։ Ի դեպ, Ակինյանը ևս այս կարծիքին է. «Իհարկե, նման քաղաքական պարագաներու մեջ տեղի ունեցած թեմական բաժանումները արտաքին են միայն և չեն կարող ազդել դավանաբանական համոզում-

---

1 Նույն տեղում։
2 Նույն տեղում, էջ 254։
3 Նույն տեղում, էջ 252։
4 Նույն տեղում, էջ 255։
5 Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 48։
6 «Արարատ, 1896, մայիս, էջ 255։
7 Այս մասին կարդա Ակինյանի նշված աշխատության 51—56 էջերը։

Ներու վրա»[1]։ Եվ մնում է զարմանալ, թե ինչպես մեր հեղինակը հարցի երկու հակադիր ծայրերը փորձում է միացնել։

Դավանաբանական այդ պայքարում, ինչպես հաղորդում է Մովսես Կաղանկատվացին, ի վերջո հաղթանակով է դուրս դալիս հայ եկեղեցին։ Աղվանից Աբաս եպիսկոպոսը «հալածեաց ի տանէն Աղուանից զվարդապետս կրօնին այնմիկ՝ զԲովմասն եւ զՂեղիայն եւ զԲնոտն եւ զԻրաս եւ զայլս ընդ նոսին...»[2]։

Այս բնադրի ժամանակի որոշման հարցում նշանակություն ունի նաև մի այլ հանգամանք։ Սույն կանոնախմբի է հոդվածում կարդում ենք. «Հանել ի սեղանն զհացն սուրբ՝ ջերմ ըստ առաքելոցն աւանդութեան եւ անապակ, առանց իրիք խառնման...»։ Սույն հոդվածը Ակինյանի մոտ ունի հետևյալ տեսքը. «[Պարտ է] հանել ի սեղանն զհացն սուրբ՝ ջերմ ըստ առաքելոցն աւանդութեան եւ զբաժակն՝ անապակ, առանց իրիք խառնման...»[3] (ընդգծումը մերն է —Վ. Հ.)։ Ընդգծված հատվածը նշանակում է հաղորդության ժամանակ գինու բաժակին ջուր չխառնել։ Պատարագի ժամանակ գինու բաժակին ջուր խառնելու հարցը կապված Քրիստոսի երկու բնության՝ Քաղկեդոնի ժողովի որոշումների հետ, Հայաստանում վեճի առարկա դարձավ VI դարից։ Մինչև VI դարը գինու բաժակին ջուր խառնելը խնդիր չէր մեզ մոտ։ Արևելյան եկեղեցիների մի մասը, տվյալ դեպքում հայ եկեղեցին, հակառակ արևմտյան եկեղեցուն, հնուց ի վեր հաղորդությունը կատարում էր անխառն գինով՝ գինու բաժակին առանց ջուր խառնելու։ Եթե ընդունենք, որ այս բնագրի Ակինյանի կազմածը ճիշտ է, այսինքն բնագրում թողնենք «զբաժակն» բառը, նշանակում է հայերը այդ հարցին անդրադարձել են V դարից հետո, որովհետև վերջինս վեճի առարկա էր, ինչպես նշեցինք վերը, մասնավորապես, սկսած VI դարից։ Ինչպես ճիշտ նկատել է Հացունին, «Երուսաղեմացի հայրապետ մը, որ ինք տիեզերական սովորությամբ... ջրախառն բաժակով կը պատարագեր, անկասկած, չէր կարող Հայոց հանձնարարել անապակը, ...»[4]։ Իսկ եթե «զբաժակն» բառը չդնենք բնադրում, նշանակում է սույն կանոնախումբը առաջ է եկել մինչև այդ հարցի խնդիր դառնալը։ Բանն այն է, որ կանոնագրքի այս հատորի համահավաք բնագրի կազմման համար օգտագործած 50 ձեռագրերից 4-ը՝ hlou ունեն «զբաժակն» իսկ մեկը՝ F «զգինին» բառերը[5]։ Այս երկու բառերը ունեցող 5 ձեռագրերը XVII դարի են, իսկ «Գիրք թղթոց»-ի տվյալը 1298 թվականի է։ Ուրեմն, մնացած ձեռագրերը, որոնց մեջ և հնագույն ձեռագրեր, չունեն «զբաժակն» կամ «զգինին» բառերը։ Մի՞թե պարզ չէ, որ այդ բառն անագան ընդմիջարկություն է[6]։ Նշված հոդվածում ասվում է. «ըստ

---

[1] Թուղթ Մակարայ Բ երուսաղէմի հայրապետի..., էջ 55։

[2] Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 143։

[3] Թուղթ Մակարայ Բ երուսաղէմի հայրապետի..., էջ 123։

[4] Բազմավէպ, 1929, էջ 263։

[5] «Գիրք թղթոց»-ում պահված է «րաժակ», էջ 411։ Այս բառերից որևէ մեկը չունեն նաև ամերիկաբնակ Տիրան արքեպիսկոպոսի սեփականությունը հանդիսացող ձեռագիրը (էջ 40բ), և ծանոթագրությունների համար օգտագործած №№ 642, 3562 ձեռագրերը. իսկ № 4488-ի բնագիրը, որը վերցված է Զամչյանի պատմության Բ հատորից, ունի։

[6] Տե՛ս և հմմտ. Հացունու հոդվածը, Բազմավէպ, 1929, էջ 263։ Ի դեպ, Ներսես Շնորհալու մի նամակում բերվում է եկեղեցական բազմաթիվ հայրերից մեջբերումներ այս խնդրի մասին։ Այստեղ Թադեոս առաքյալից հետո՝ երկրորդ տեղում նշված է Մակար Ա-ի մեզ հետաքրքրող նամակի հետևյալ հատվածը. «Պարտ է զսուրբ հացն ըստ առաքելոյն աւանդութեան

առաքելոցն աւանդութեանն։ Այս ավանդությունը գրավոր մատյան է դարձել IV դարի վերջում, ուր խոսք անգամ չկա բաժակի մասին[1]։ Հետևապես չի կարելի մի կողմից ընդունել այս ավանդությունը, ուր բաժակի մասին խոսք չկա, իսկ մյուս կողմից բնագրում դնել «զբաժակն» բառը։ Դա ժամանակավրեպ է։

Հենց այս հոդվածի աղերսով Ակինյանը դիմում է Անգելո Մայիին[2], որը, իբր թե, Մակարի թուղթը համարում է կեղծիք «Դ դարու առաջին կեսին համար»[3]։ Վերջինս սույն կանոնախմբի է հոդվածի և ոչ ամբողջ բնագրի համար գրում է. «Կանոնը կամ կեղծ կամ ընդմիջարկություն է»[4]։ Այսպիսով, Անգելո Մային է հոդվածն անվերապահորեն «կեղծ» չի համարում, այլ «կամ կեղծ կամ ընդմիջարկություն»։ Եվ նա ճիշտ է, որովհետև հիմքեր ուներ։ Եթե ընդունենք, որ բնագրում սկզբնապես եղել է «զբաժակն» բառը, նշանակում է, այս բնագիրը հորինվել է VI գարում և վերադրվել IV դարի հեղինակ Մակար Ա-ին։ Այս իսկապես կեղծիք է։ Իսկ եթե ընդունենք, որ «զբաժակն» բառը սկզբնապես բնագրում չի եղել և այն ավելացրել են հետագայում, նշանակում է այստեղ գործ ունենք բնագրի ընդմիջարկության հետ և այդպես էլ Անգելո Մային կարծում է։ Վերջինս չխորանալով բնագրի մասնագիտական և խոր վերլուծության մեջ, որպիսի նպատակ նա չի էլ ունեցել, առաջին տպավորությամբ գրել է. «Կանոնը կամ կեղծ կամ ընդմիջարկություն է»։ Իսկ Ակինյանը այս բանի վրա ուշադրություն չդարձնելով դուրս է գցում մեջբերման վերջին մասը և պահում միայն «կեղծ» բառը և այն վերագրում ամբողջ բնագրին, մինչդեռ Անգելո Մային տվյալ դեպքում կարծիք է հայտնել միայն է հոդվածի մասին։

Վերջապես Սահակ Պարթևի կանոնախմբի Լէ հոդվածում[5] խոսք չկա բաժակը անապական պահելու մասին, որովհետև այդ ժամանակ նման խնդիր գոյություն չուներ։ Իսկ Ներսես Բ Բագրևանդացու և Ներշապուհի կանոնախմբում (VI դար) խոսում է բաժակի անապականության կամ անխառնության մասին[6], որովհետև այս ժամանակ այդ խնդիրը, կապված Քաղկեդոնի ժողովի որոշումների հետ, սուր վեճի առարկա էր։

Ի դեպ, Ակինյանը փորձում է Տաշյանի ճիշտ հարցադրումը ծռել։ Տաշյանը «Վարդապետության առաքելոց» աշխատության մեջ խոսելով Առաքելական կանոնների և «ուրիշ հնագույն» գրություններ աղերսի մասին, թվարկում է

չերմ հանել ի սեղանն առանց իրիք խառնուածոյ, դի ապականացու իւիք ոչ փրկեցաք, այլ անապական մարմնով և արեամբ անարատ գառինն» (№ 502, էջ 151բ. տե՛ս և հմմտ. № 4405, էջ 239ա)։ Այս բացակայում է Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականն»-ի տպագրված (Էջմիածին, 1865) բնագրում։ Երբ էլ լինի այս նամակի խմբագրության ժամանակը կարևոր չէ, կարևոր է այն, որ այստեղ օգտվել են Մակարի թղթի մի այնպիսի բնագրից, ուր բացակայել է բաժակի հարցը (հմմտ. Ներսես Լամբրոնացու 1197 թ. Կ. Պոլսում վարած վիճաբանության ժամանակ այս հարցի մասին արտահայտածը. № 2019, էջ 374բ)։ Իր երկրորդ հոդվածում Վ. Հացունին ցույց է տալիս, որ «անապակ, առանց իրիք խառնման» խոսքերը վերաբերում են հաղորդության հացին (Բազմավէպ, 1931 թ., էջ 64—65)։

[1] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 46, հոդ. ԼԱ։

[2] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 21, 23։

[3] Նույն տեղում, էջ 23։

[4] „Canonem vel fictum vel interpolatum„. տե՛ս Scriptorum veterum nova collectio e Vaticanis codicibus edita, tomus X, Romae, MDCCCXXXVIII, էջ 272, ծանոթ. 1։

[5] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 392։

[6] Նույն տեղում, էջ 480—481, հոդված Զ, հմմտ. նաև Հովհ. Օձնեցու կանոնախմբի Ը հոդվածը, նույն տեղում, էջ 519։

մի շարք հեղինակների՝ Մակարի, Եփրեմ Ասորու, Սոկրատի, Գրիգոր Աստվածաբանի գրուքյուններըւ Այս շարքում բացի Մակարի գրուքյունից, Տաշյանը մյուսների գրուքյունները համարում է կեղծ[1], իսկ Մակարի գրուքյան (իմա՛ առաջարկվող բնագրի) մասին ահա թե ինչ է գրում. «Միայն նշանակուքյուն կրնա ունենալ Մակարա անվամբ եղած հիշյալ կանոնն, որուն անվամբ եղած կանոնադրուքյունն թերևս ճէականս ճարազատ գործ մ'ըլլա»[2] (ընդգծումը մերն է —Վ. Հ.)ւ Մեջբերելով այս հատվածը Ակինյանը գրում է. «Բայց չէ արտահայտված Տաշյան, թե հարազատուքյան դեպքին ո՞ր Մակարի պետք է վերագրել գրուքյունը»[3]ւ Տաշյանը երբ դրում էր վերոբերյալ տողերը, հայագիտուքյան մեջ գրեթե բոլորի կարծիքով սույն գրուքյունը համարվում էր Մակար Ա-ին (IV դար), հետևապես նա կարիք չուներ նշելու Մակար Ա, առանց այդ նշման էլ հասկանալով վերջինսւ

Գալով առաջարկվող բնագրի վերջում Բասենի և Բագրևանդի Տուրգյա (կամ Տուրքյա) եպիսկոպոսի դեպքին, Ակինյանը դրում է. «Տուրդ (ըստ ՁՁ նաև Տուրք) առանց տարակույսի աղավաղված հայկական անուն մըն է»[4] (ընդգծումը մերն է —Վ. Հ.)ւ

Այս անվանը հանդիպում ենք մեր պատմիչների մոտ, օրինակ, Մովսես Խորենացին Հայկ նահապետի շառավիղներից մեկին կոչում է Տուրք[5]ւ Տուրք անունով մեկը 1227 թ. ընդօրինակել է տվել մի ճառընտիր[6]ւ Այս նույն անունով ուրիշ անձնավորուքյունների հանդիպում ենք 1304, 1315, 1347 թվականներին գրված հիշատակարաններում[7]ւ

Ունենք այս անվան փաղաքշական ձևը՝ Տուրքիկ, հայր Թեղենյաց վանքի, XIII դարում մասնակցեց Զաքարեի հրավիրած կրոնական ժողովին[8]ւ Հետևապես Տուրք անունը աղավաղված չէւ Ակինյանը նշված անունը դիտում է աղավաղված, որպեսզի այն մակաբերի Տիրիկ կամ Մարկոս անուններից։ Եվ քանի որ այս բնագիրը համարում է VI դարի գործ, ուստի նա «Գիրք թղթոց»-ից վերցնում է Բագրևանդի VI դարի եպիսկոպոսներ Տիրիկին և Մարկոսին[9] և կարծում, որ «Տուրգեայ» անվանաձևը կարող էր առաջ գալ Տիրիկ=Տիրկայ ձևից. «որուն Կ՝ հնչափոխուքյամբ կարող էր փոխանակ Κ նաև Γ լսված ըլլալ հույն ականջին մեջ. ուստի նախնաբար տառադարձված՝ ΤΥΡΚΟΥ կամ ΤΥΡΓΟΥ հայ թարգմանիչը այս գրուքյունը շրջած է տառադարձական օրենքով հայերե-

---

[1] Վարդապետուքիւն առաքելոց, էջ 148—149ւ

[2] Նույն տեղում, էջ 150ւ

[3] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 22ւ

[4] Նույն տեղում, էջ 72ւ

[5] Պատմուքիւն Հայոց, էջ 114. տե՛ս նաև Ասողիկ, Պատմուքիւն տիեզերական, հրատ. Ստ. Մալխասյանց, ՍՊԲ, 1885, էջ 35, Ս. Անեցի, էջ 49, Վ. Հացունու հոդվածը (Բազմավէպ, 1931 թ., էջ 68—69)ւ

[6] № 3779, էջ 545բ։ Այս ձեռագրի մասին գրում է նաև Մ. Սմբատյանցը, բայց նա ձեռագիրը նշում է որպես Հայոմավուրք, իսկ ստացողին՝ Տուրքին համարում գրիչ. տե՛ս Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1896, էջ 407ւ

[7] Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 25, 116, 367ւ

[8] Կիրակոս Գանձակեցի, Պատմուքիւն Հայոց, էջ 171, հմմտ. Մանր ժամանակագրուքյուններ 13—18-րդ դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1951, էջ 38ւ Տե՛ս և հմմտ. նախորդ ծանոթագրուքյան մեջ Լ. Խաչիկյանի նշված աշխատուքյունում, էջ 184ւ

[9] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 73ւ

նի՝ ՏԻՐԳԱՅ կամ ՏՈՒՐԳԵԱՅ»[1], կամ Մարկոս=Մարգեայ. «որուն սխալագրությունը դյուրավ ՏԱՐԳԵԱՅ և ՏՈՒՐԳԵԱՅ կրնար կարդացվիլ»[2]։ Եթե այս ենթադրությունը (լոկ ենթադրությունը) հավանական է, ապա պարտադիր չէ այդ անունները փնտրել հեղինակի ցանկացած ժամանակում՝ VI դարում. Բուզանդը IV դարի երկրորդ կեսին Բասենի եպիսկոպոս նշում է Տիրիկ անունով մեկին. «Եւ էին երկու եպիսկոպոսք Բասենայ գաւառին, Մովսէս եւ Տիրիկ»[3]։ Ավելի վաղ ժամանակի համար (IV դարի 20—30-ական թվականներ) պատմիչները տեղեկություններ չեն հաղորդում։ Դուցե եղել են Տիրիկ կամ Մարկոս անուններով եպիսկոպոսներ, մտնավանդ եթե նկատի ունենանք, որ Բասենի կամ Բագրևանդի եպիսկոպոսների համար Տիրիկ անունը կարծեք եղել է ժառանգական[4]։ Ագաթանգեղոսը հաղորդում է, որ Գրիգոր Լուսավորչի կողմից քրմերի որդիներից ձեռնադրված եպիսկոպոսներից մեկի անունը եղել է Տիրիկէս[5], թեև նշված չէ, թե ո՛ր թեմում։

Ի միջի այլոց նշենք, որ չի արդարանում Ակինյանի զարմանքը, երբ գրում է. «Երկո՞ւ Բագրևանդ և կամ մեկ Բագրևանդի երկո՞ւ եպիսկոպոս պետք է ենթադրել։ Բայց այսպես հազիվ թե հնարավոր ըլլա»[6] (ընդգծումը մերն է— Վ. Հ.)։ Ի՞նչ կա որ. Բագրևանդը կամ որևէ մի այլ թեմ ունեցել է երկու եպիսկոպոս, թերևս այդպես կարելի է եզրակացնել Բուզանդի վերոնշյալ վկայությունից, իսկ Ներսես Բ Բագրևանդացի կաթողիկոսի «Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս...» նամակի տակ, միմյանցից անջատված, ստորագրված է. «Տիրակ Բագրեւանդեայ եպիսկոպոս» և «Մարկոս Բագրեւանգեայ եպիսկոպոս»[7], կամ մի այլ նամակում նշված է. «Ի Փովկասայ եւ ի Սամուէլէ Բասենոյ եպիսկոպոսաց»[8]։ Ոչինչ, երկու եպիսկոպոս մեկ Բագրևանդին կամ Բասենին։ Այստեղ տարօրինակ բան չկա։ Մեկ թեմին որպես բացառություն, երկու եպիսկոպոս լինելը արձանագրված է նույնիսկ ավելի ուշ ժամանակի կանոնական որոշումներում։ 1651 թ. Երուսաղեմի ժողովի կանոններում, որ Առաքել Դավրիժեցին բերում է համառոտ, կարդում ենք. «Հինգերորդ՝ միոյ վիճակի մի՛ լիցին երկու եպիսկոպոսք, եւ երկու առաջնորդք, բայց թէ կարի մեծ ինչ պատճառ ի մէջ գայցէ»[9]։ Նախ՝ պետք է ընդունել, որ կյանքում որևէ թեմ ունեցել է երկու եպիսկոպոս, որպեսզի ժողովը որոշում ընդուներ այն արգելելու մասին, երկրորդ՝ Երուսաղեմի ժողովը այդ երևույթը արգելում է վերապահությամբ, թույլատրելով բացառություն, որը ստացել է օրենքի ուժ, արձանագրվելով ժողովի որոշումներում։

Այս փաստերը, հավանաբար, վրիպել են Ակինյանի ուշադրությունից։

Ակինյանը որոշելով, որ Տուրգ եպիսկոպոսը VI դարի Բագրևանդի Տիրիկ կամ Մարկոս եպիսկոպոսն է, այնուհետև փորձում է ընդհանուր շոշափելի եղրեր գտնել առաջարկվող բնագրի Տուրգ եպիսկոպոսի վերաբերյալ եղած «սա-

[1] Նույն տեղում, էջ 74։
[2] Նույն տեղում, էջ 75—76։
[3] Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1889, էջ 279։
[4] Համմտ. Բուզանդի վերոհիշյալ և «Գիրք Թղթոց»-ի (էջ 73) վկայությունները։
[5] Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Կանայանց, Տփղիս, 1909, էջ 442։
[6] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 75։
[7] Գիրք Թղթոց, էջ 73։
[8] Նույն տեղում, էջ 41։
[9] Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1896, էջ 332։

կաւուք ընդ արիանոսս միաւորեալ է եւ դարձեալ խղճեալ վկայութեան և Հովհաննես Բ Գաբեղենեցի կաթողիկոսի և այլոց նամակի տակ Բագրեւանդի Տիրիկ կամ Մարկոս եպիսկոպոսների ստորագրության բացակայության միջև։ Նա դրում է. «որ Բագրեւանդի եպիսկոպոսի անունը՝ Տիրիկ կամ Մարկոս չի տեսնվիր Հովհաննես Գաբեղենեցվո 568-ին գրած կրկին թղթերու մեջ, իսկ Բասենի աթոռին վրա կը ներկայանա Ներսես (ի Ներսայ») Բասենո և Մարղաղո եպիսկոպոս տիտղոսով (Գիրք թղթոց, 78, 81)։ Ուստի Հայոց կաթուղիկոսի Միաբանության ուխտեն դուրս ելած է Բագրեւանդի եպիսկոպոսն և ճարած անշուշտ Աղվանից և Սյունյաց միության»[1] (ընդգծումը մերն է —Վ. Հ.)։ Եթե այսպես մոտենանք, ապա Հովհաննես Բ Գաբեղենեցի կաթողիկոսի անմիջական նախորդ Ներսես Բ Բագրեւանդացի կաթողիկոսի և այլոց «Ուխտ միաբանութեան Հայոց աշխարհիս...» թղթի տակ ստորագրված Հարքի եպիսկոպոս Պարգևը, Արշամունյաց եպիսկոպոս Վաղոտը, Արծրունյաց եպիսկոպոս Գրիգորը, Ապահունյաց եպիսկոպոս Հոհանը, Արշարունյաց եպիսկոպոս Հովուկը և ուրիշներ[2], կամ սրանց հաջորդները չեն ստորագրել Ակինյանի նշած նամակի տակ[3], ուրեմն սրա՞նք էլ «Հայոց կաթողիկոսի միաբանության ուխտեն դուրս ելած» են «և հարած անշուշտ Աղվանից և Սյունյաց միության»։

Եթե հարցերն այսպես, լոկ ենթադրություններով և առանց փաստերի, լուծվեն, ապա շատ անհարիր եզրակացությունների կհանդիպենք։ Թե ինչո՞ւ վերոհիշյալ եպիսկոպոսները չեն ստորագրել նշված նամակում, ինչո՞ւ երկու գավառ ունեցել է մեկ եպիսկոպոս կամ մեկ գավառ երկու եպիսկոպոս և նման այլ ինչուներ, դժվար է, գուցե և անհնար, առայժմ լուսաբանել, անհրաժեշտ փաստեր չունենալու պատճառով, իսկ առանց դրանց լոկ ենթադրությունները գործին չեն օգնում։

Ըստ երևույթին, այս հարցի քննությունից և իր եզրակացություններից (թե ենթադրություններից) գոհ չլինելով Ակինյանը գրում է. «Խնդիրը այս տեսակետե առնելով ալ լուծված չ'ըլլար Տոփդյա «Բասենոյ եւ Բագրեւանդեայ» թեմերու եպիսկոպոս հորջորջվելու կնճիռը։ Այս հարցը որչափ ալ այժմ անբացատրելի կ'երևա, բայց բարդությունն նույն գարուն համար բոլորովին ալ եզական չէ»[4]։ Եթե VI դարի համար Ակինյանը տեսնում է բարդություն և այն էլ ոչ «եզական», ապա այդ բարդությունն ինչքան կնճռոտ կլինի պատմագիրների նույնիսկ անձուկ վկայությունների բացակայության պայմաններում IV դարի վերաբերյալ։ Նշանակում է՝ քանի դեռ նոր փաստեր չունենք, պետք է հենվենք եղած վկայությունների համեմատական քննության վրա և հանգենք սրանցից բխող եզրակացություններին։

---

[1] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 76։ Ի դեպ, Վ. Հացունին իրական չի համարում Մ. Կաղանկատվացու վկայությունը Սյունյաց եպիսկոպոսների (Պետրոսի և՛ Վրթանեսի) ապստամբությունը հայ կաթողիկոսական աթոռի դեմ (Բազմավէպ, 1931 թ., էջ 66—68)։ Նա գրում է. «Ոչ Պետրոս և ոչ Վրթանէս հայրապետական աթոռեն զատված չապրեցան երբեք» (նույն տեղում, էջ 68)։ Այդ եզրակացության համար հիմք է ընդունում Հովհաննես Բ Գաբեղենեցի կաթողիկոսի Վրթանեսին ուղղված նամակի հետևյալ տողերը. «Որպէս ցայժմ լեալ էք ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական տեառն Աստուծոյ, նոյնպէս և այժմ՝ էք և մինչև յավիտեան...» (Գիրք թղթոց, էջ 79)։

[2] Գիրք թղթոց, էջ 73։

[3] Նույն տեղում, էջ 78, 81։

[4] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 76։

Մակարի թղթում երկու անգամ հիշվում է արիանոսների մասին, ահա այդ տեղերը. Ջ հոդվածում Մակարը հաղորդում է փրկական խորհուրդը զգուշությամբ կատարել «զի մի՛ արիանոսացն մերձ լինելով» և վերջում, երբ խոսում է Տուրդ եպիսկոպոսի մասին, «որ սակաւուք ընդ արիանոսս միաւորեալ է եւ դարձեալ խղճեալ»։ Վ. Հացունին այս մասին գրում է. «Այդ կցորդությունն արիանոսաց հետ կը յարմարի Դ գարուն, մինչ վեցերորդին Հայք գործ ունէին նեստորականաց հետ, և արիանոսք վաղուց լռել էին։ Նույն ինքն Մակար արիանոսներեն միայն կը զգուշացնե զՀայս, ապացույց, թե Նեստոր ու Եվտիքես չկային տակավին»[1]։ Ակինյանը առարկում է նաև սրա դեմ, գրելով, որ եթե VI դարում արիանոսները չէին կարող երևալ Հայաստանում, ապա «Դ դարու համար անհեթեթ է կարծել, թե Հայաստան արիանոսներ գոյություն ունեցած ըլլան»[2]։ Բանն այն է, որ արիանոսները մեծ աղմուկ էին հանել Արևմուտքում։ Նրանք դատապարտվեցին Նիկիայի ժողովի կողմից, որին մասնակցում էին նաև Մեծ և Փոքր Հայքի ներկայացուցիչները։ Մակարը զգալով արիանոսների վտանգի մեծությունը, զգուշացրել է Հայոց հովվապետին հնարավոր վտանգի ներթափանցումից, մանավանդ որ այդ ժամանակ քրիստոնեությունը տակավին խոր և ամուր արմատներ չուներ հայ ժողովրդի մեջ. հիշենք Վրթանես կաթողիկոսի դեմ կազմակերպված մահափորձը Աշտիշատում, որին մասնակցում էր նաև թագուհին[3]։

Ակինյանը, այնուհետև, փորձում է բացատրել իր վարկածը, դարձյալ դիմելով լոկ ենթադրություններ. «Ես կը կարծեմ թե «Արիանոսք կամ սխալ իմացումն է հունարեն սկզբնագրին αἱρετικός, αἱρεσιώτης. «հերձուածող» բառին, և կամ ավելի հավանորեն «արիանոսք» գործածված է իբրև հակադրություն «նեստորիանոսք» հորջորջման»[4]։

Ակինյանի փորձառու աչքից դժբախտաբար վրիպել է կարևոր մի փաստ։ Խոսելով Անանիա Շաղբատեցու (XI դար) «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» աշխատության «Վասն տօնի Մննդեան Քրիստոսի» գլխի մասին և վերջինիցս մեջբերելով ընդարձակ քաղվածք[5], նա նշում է, որ այս գլուխը հայտնի է նաև Անանիա Շիրակացու անունով և կրում է «Ի Յայտնութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ» խորագիրը։ Ակինյանի կարծիքով Անանիա Շաղբատեցու այս գրությունը, հետագա ընդօրինակողները շփոթել են երկու Անանիաների գրության հեղինակությունը և վերագրել Անանիա Շիրակացուն։ Այս գրությունն իրականում Անանիա Շաղբատեցո՞ւնն է, թե Անանիա Շիրակացունը, Ակինյանը քննության հարց չի դարձրել և անուշադրությամբ է անցել այդ խնդրի վրայով։ Այս քննենք ավելի մոտիկից։

Ակինյանը խոսելով Մակարի թղթի հնագույն բնագրի և նույնի կանոնագրքում պահված խմբագրության աղերսի մասին գրում է. «Թղթիս այժմյան օրինակը, պահված Կանոնագրքի մեջ, կներկայացնե համառոտություն մը ընդարձակ բնագրին, կատարված առանց տարակուսի ԺԱ դարու սկիզբը։ Սկզբնագիրը, այնպես ինչպես ելած էր Մակարի ձեռքեն, եղած է ընդարձակ,

---

[1] Բազմավէպ, 1929, էջ 260։

[2] Թուղթ Մակարայ Բ երուսաղէմի հայրապետի..., էջ 77, տե՛ս Վ. Հացունու առարկությունը («Բազմավէպ», 1931 թ., էջ 71)։

[3] Բուզանդ, էջ 7—8։

[4] Թուղթ Մակարայ Բ երուսաղէմի հայրապետի..., էջ 78։

[5] Նույն տեղում, էջ 82—84։

առանձին մուտքով և գլխարկարգուհյամբ։ Բնագրին այս կազմուհյունը կնկատվի նաև այն բեկորներեն, որ պահպանված են այժմյան օրինակին ավերակներու մեջ»[1]։

Ակինյանի դիտողուհյունները սկզբնական բնագրի ընդարձակ լինելու, վերջինիս այլ կազմուհյուն ունենալու վերաբերյալ միանգամայն ճիշտ են։ Եվ նա մի քանի դեպքերում նշում է ներկա բնագրի մեջ տեղ գտած ետևառաջուհյունների մասին[2]։ Սակայն նա խիստ սխալվում է, երբ այս թղթի ընդարձակ բնագրից օգտվելը վերագրում է XI դարի հեղինակի Անանիա Հաղբատեցուն[3]։ Անանիա Հաղբատեցու «Հակաճառուհիւն ընդդէմ երկաբնակաց» աշխատուհյան ԺԲ ճառը կոչվում է «Վասն տաւնի Ծննդեանն Քրիստոսի»[4]։ Ակինյանը որպեսզի ցույց տա, որ Մակարի թուղթը սկզբնապես եղել է ընդարձակ, քան Կանոնագրքում եղածը, իր գրքի 82—84-րդ էջերում դեմ առ դեմ բերում է այս երկու բնագրերից ընդարձակ հատվածներ։ Մենք ևս բերում ենք այդ հատվածները, օգտվելով Մատենադարանի № 567 ձեռագրի և Կանոնագրքի համապատասխան բնագրերից։

Անանիա Հաղբատեցի, № 567 ձեռ. — Մակարի կանոնախումբ, Կանոնագրքի ներկա հատորում

Իսկ յաւուրս սրբոյն Կոստանդիանոսի, ի սուրբ ժողովոյն Նիկիա ոչ եղեւ ընկալեալ տօնս այս ի սրբոց հարցն, այլ ըստ նոյն կանոնի սրբոց առաքելոցն սահմանադրեցին տօնել։ Եւ յայտ ի թղթոյն երանելւոյն Մակարա հայրապետին Երուսաղէմի, զոր ի Հայաստանեայցս գրեաց յաշխարհ, յաղաղս խրատու սրբոյ մկրտուհեան, քանզի նա մի էր ի սրբոց հարցն ՅԺԸ-ից, որ ի Նիկիա։ Եւ գրեալ է այսպէս ի Զ-երորդ գլխի հրամանի խրատտուհեանն. «Բայց կարղաւորուհիւն մկրտուհեան սուրբ աւազանին եւ փոյթ յօժարուհեան երից տօնից մկրտուհեան, յորում առաւել եւս փափագին մերս դաւանել ի մկրտուհիւնն զընծայեալսն Աստուծոյ, եւ կատարեալ զօրինակ մեծի փրկական խորհրդոյն, յոր ի սուրբ եւ յերեւելի աւուրս կատարեցաւ եւ այժմ մեծաւ փափագանօք փուքան կատարել ի սուրբ տեղիսս Քրիստոսի, զոր պարտ է եւ ամենայն քրիստոնէից երկիղածացս Քրիստոսի կատարել ի նոսա զկոչումն մկրտուհեանն սուրբ Յայտնուհեանն եւ ծննդեանն Տեառն, եւ փրկական Յատկի կենարար չարչարանացն Քրիստոսի եւ ի չնորհալից Պենդակոստէին, յորում էջք աստուածային Հոգւոյն ի մեզ ծաւալեցան։ Զոր պարտ է զհւրաքանչիւր սրբոց տօնից պատճառ մկրտուհեանն ծանուցանել, զի եւ դուք ի նոյն փուքացեալք կատարեցէք։ Քանզի լուսաւոր աւր ծննդեանն Քրիստոսի եւ

[1] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 81, հմմտ. էջ 108։

[2] Նույն տեղում, էջ 84—89, թեև Վ. Հացունին առարկում է նաև դրա դեմ (Բազմավէպ 1931 թ., էջ 71—72)։

[3] Նույն տեղում, էջ 15—16, 81 և շար.։

[4] Տե՛ս մեր Մատենադարանի № 567 ձեռագիրը, էջ 89ա—97բ։

մեր մեղսաքաւիչ ծնունդ սուրբ աւազանին ի նմին փրկական աւուրն կատարեցի, այլ ի նմին աւուրն առ ի յանձն մկրտել յաղագս առ մեռն զիջանելոյ։ Զի ոչ եթէ ինքն կարօտ էր սրբութեան, այլ զի զմեզ կամեցաւ սրբել ի մեղաց պղծութենէ, որ մեծաձայն գոչմամբ աղաղակէ ասելով. «Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի հոգւոյ՝ ոչ մտանել կարէ յարքայութիւնն Աստուծոյ մերոյ Քրիստոսի»։ Ըստ նմին օրինակի ծնեալք ընդ նմա եւ մկրտեալք ընդ նմին եղիցուք ի սուրբ աւուրն ծննդեանն Քրիստոսի։ Իսկ ի կենսաբեր Յարութեանն Զատկին ի ձեռն մեռուցանելոյ զմեզս մեր ի չուրս աւազանին՝ [նմանողք լինիմք մեռելութեան մահու Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ երեկին ընկղմամբն թաղել ի չուրս սրբոյ աւազանին] զերեքօրեայ զթաղումն՝ Տեառն մերոյ նշանակեմք յանձինս մկրտելոցն, զոր եւ աստուածային առաքեալն յայտնապէս ցուցանէ ասելով, թէ «Թաղեալ ընդ նմին մկրտութեամբն, ի մահ նմանողք եղիցուք նմանութեան մանու նորա. զի եւ նորոգութեամբ յարութեանն հաղորդ լինիցիմք նմա ի կեանսն յաւիտենականս։

Իսկ յաւուրն չնորհապարգեւ սրբարար Պենտեկոստէին զլուսապայծառ ազդումն Հոգւոյն Սրբոյ կենդանարարի, որ ի տեսակս հրեղէն լեզուաց իջեալ յառաքեալսն երեւեցաւ, պարգեւելով նոցա ձեռս ի վերայ մկրտելոցն դնելով պարգեւս, ընդունելով ի չնորհաց Հոգւոյն։ Ըստ նմին օրինակի եւ մեք ի նմին աւուր ձեռս ի վերայ մկրտելոցն դնելով նոյն հոգի պարգեւի, զորոյ զօրինակն զգուշութեամբ անխափան կատարեմք, զի կատարեալք լիցուք». զայս Մակարիոս[1] (ընդգծումը Ակինյանինն է —Վ. Հ.)։

եւ երեքկին ընկղմամբն թաղեալ ի չուր սուրբ աւազանին, զերեքաւրեայ թաղումն Տեառն նշանակեմք յանձինս մկրտելոցն։ Զոր եւ աստուածային առաքեալն յայտնապէս ցուցանէ ասելով, թէ՝ «Թաղեցաք ընդ նմա մկրտութեամբն, նմանողք եղիցուք նմանութեան մանու նորա, զի նորոգութեամբ յարութեանն հաղորդ լինիցիմք նմա ի կեանսն յաւիտենից»։ եւ այսպէս ուղիղ դաւանութեամբ ձեռս ի վերայ դնելով՝ պարգեւել լինի Հոգին Սուրբ ի փրկութիւն մեզ, լուսաւորել զկոչեցեալսն յորգեգրութիւն։ եւ հաւատովք աւծանիմք յիւղ սրբութեանն[2]։

Ինչպես նշեցինք վերևում, Ակինյանին հայտնի էր, որ Անանիա Շաղբատեցու վերևում նշված աշխատության ԺԲ գլուխը (Ակինյանը նշում է ԺԱ)[3] վերագրված է Անանիա Շիրակացուն՝ «Ի Յայտնութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ» խորագրով։ Բերում ենք այդ ճառի համապատասխան հատվածը պրոֆ. Աշ. Աբրահամյանի հրատարակության համապատասխան. «Իսկ յաւուրս սրբոյն Կոստանդիանոսի, ի սուրբ ժողովին Նիկիայ ոչ եղեւ ընկալեալ տաւնս այս ի սրբոց հարցն. այլ ըստ նոյն կանոնի սրբոց առաքելոցն սահմանեցին տաւնիլ։ Եւ յայտ է ի թղթոյ երանելոյն Մակարայ հայրապետին Երուսաղէմի, զոր ի Հայաստանեայցս գրեաց աշխարհ յաղագս խրատու սրբոյ մկրտութեանն. քանզի նա մի էր ի սրբոց ՅԾՀ հարանցն, որք ի Նիկիա. եւ դրեալ է այսպէս ի վեցերորդ գլխի հրամանի խրատտուածեանն, բայց կարգաւորութիւն մկրտութեան սրբոյ աւազանին եւ փոյթ յաւժարութեանն Գ տաւնիցն, յորում առաւել եւս փափագեն միգազդ փութացուցանել ի մկրտութիւն զընծայեալսն Աստուծոյ, եւ կա-

[1] էջ 89բ—90բ։
[2] էջ 223։
[3] Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 15, ծանոթ. 1։

տարել ղաւրինակ մեծ փրկական խորհրդեանն, որ ի սուրբ եւ յերեւելի աւուրս կատարեցաւ Ըւ զայս մեծաւ փափագանաւք փութան կատարել ի սուրբ աեղիսս Քրիստոսի, զոր պարտ է եւ ամենայն քրիստոնէից երկիւղածաց Քրիստոսի կատարել ի նոսա զկոչումն մկրտութեանն ի սուրբ յայտնութեանն ծննդեանն տեառն, եւ փրկական զատկի կենարար չարչարանացն Քրիստոսի, եւ ի շնորհալից Պենտակոստին, յորում աստուածային էջք Հոգւոյն կենդանարարի ի մեզ ծաւալեցան։ Զոր պարտ է զիւրաքանչիւր տաւնիցն պատճառ ծննդեանն եւ մկրտութեան ծանուցանել, զի եւ դուք ի նոյն փութացեալք կատարեցէք. քանզի լուսաւոր ծննդեանն Քրիստոսի եւ մեր մեղսաքաւիչ ծնունդ սրբոյ աւազանին ի նմին փրկական աւուրն կատարեցաւ, զի ի նմին աւուր առ յանձն մկրտիլ յաղագս առ մեզն զիջանելոյ։ Զի ոչ եթե ինքն կարաւտ ինչ էր սրբութեան, այլ զմեզ կամեցաւ սրբել ի մեղացն պղծութենէ, որ մեծաձայն գոչմամբ աղաղակէ ասելով, եթե ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ. ղի ըստ նմին աւրինակի ծնեալք ընդ նմա, եւ մկրտեալք ընդ նմին եղիցուք ի սուրբ աւուր ծննդեանն Քրիստոսի։

Իսկ ի կենսաբեր յարութեանն զատկին, ի ձեռն մեռուցանելոյ զմեղս մեր ի ջուրս աւազանին նմանողք լինիմք մեռելութեան մահուան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ երեքկին ընկղմամբն թաղել ի ջուրս սրբոյ աւազանին, զերեքտուրեայ թաղումն տեառն մերոյ նշանակեմք յանձինս մկրտելոցն, զոր եւ աստուածայինն առաքեալ յայտնապէս ցուցանէ, ասելով, թէ թաղեալք ընդ նմին մկրտութեամբն, նմանողք եղիցուք նմանութեան մահու նորա, զի եւ նորոգութեամբ յարութեանն հաղորդ լինիցիմք նմա ի կեանսն յաւիտենականս։

Իսկ յաւուրն շնորհապարգեւ սրբարար Պենտեկոստեին զլուսապայծառ ազդումն Հոգւոյն կենարարի, որ ի տեսակս հրեղէն լեզուաց իջեալ յառաքեալսն, պարգեւելով նոցա ձեռս ի վերայ մկրտեցելոցն դնելով, ընդունելով պարգեւս ի Հոգւոյն շնորհաց։ Ըստ նմին աւրինակի եւ մեք ի նմին աւուր ձեռս ի վերայ մկրտելոցն դնելով, նոյն հոգի պարգեւի, զորոյ զաւրինակն զգուշութեամբ անխափան կատարեմք, ղի կատարեալք լիցուք։ Զայս Մակարիոս»[1]։

Ինչպես դժվար չէ նկատել՝ Անանիա Հաղբատեցու և Անանիա Շիրակացու մեջբերված հատվածների մեջ իմաստային և էական տարբերություններ չկան։ Ավելին, նույնությամբ գնում են ոչ միայն Հաղբատեցուց և Շիրակացուց բերված վերևի մեջբերումները, այլև Հաղբատեցու «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» աշխատության ԺԲ գլուխը սկզբից՝ «Բազում աշխատութիւնն գործառնութեանս մերոյ վասն սրբոյ տօնիս յԱստուծոյ էր»[2] մինչև նույն ձեռագրի 96-րդ բ էջի «Բայց նա ուրեմն խոտանեն բանք ճշմարտի. սակայն ոչ թիւրեսցուք ի ճանապարհէ հարցն» հատվածը[3]։ Միայն այստեղից հետո տարբեր են Անանիա Հաղբատեցու և Անանիա Շիրակացու բնագրերի վերջին փոքր մասը։

Այժմ մնում է պարզել, թե այս բնագիրը ումից ումն է անցել. Շիրակացուց Հաղբատեցո՞ւն, թե ընդհակառակը, ինչպես կարծում է Ակինյանը։ Ամբողջ

---

[1] Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 283—284։

[2] № 567, էջ 89ա։

[3] Այս ամբողջը՝ մի քանի էջ տե՛ս և համմտ. Շիրակացու նշված ճառի հետ (պրոֆ. Աշ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 283՝ «Բազում աշխատութիւն գործառնութեանս մերոյ վասն սրբոյ տաւնիցդ հատվածից մինչև 290-րդ էջի «բայց նա ուրեմն խոտան են բանք ճշմարտի, սակայն ոչ թիւրեսցուք հատվածը)։

հարցն այն է, որ Անանիա Շիրակացու նշված ճառը գտնվում է մեր Մատենադարանի թղթյա հնագույն ձեռագրում[1], որի ընդօրինակությունը կատարվել է 971 թ., այսինքն այն ժամանակ, երբ Անանիա Հաղբատեցին հավանաբար դեռ չէր ծնվել։ Նշանակում է՝ մինչև Անանիա Հաղրատեցին այս ճառը գոյություն ուներ։ Մյուս կողմից, Անանիա Շիրակացին վերևի մեջբերման հատվածի սկզբում շատ որոշակի գրում է, որ մկրտության վերաբերյալ Մակարը նամակ է գրել Հայաստան։ Կարծես Անանիա Շիրակացին կանխազգում էր, որ կարող են հետագայում նամակի հեղինակին՝ Մակարին շփոթել ուրիշների հետ, ինչպես այս դեպքում, նամակում ավելացնում է, թե խոսքը որ Մակարին է վերաբերում՝ այն Մակարին, որը մասնակցել է 325 թ. Նիկիայի ժողովին[2]։ Ուրեմն, VII դարում սույն նամակը գիտեին որպես Մակար Ա-ի հեղինակություն։ Հետևապես կասկած չի մնում, որ Անանիա Հաղրատեցին «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» աշխատության ԺԲ գլուխը վերցրել է Անանիա Շիրակացուց։ Այս բանը նշում է նաև ինքը՝ Անանիա Հաղրատեցին և չգիտես ինչու այն դարձյալ վրիպել է Ակինյանի ուշադրությունից։ Անանիա Հաղրատեցին նշված աշխատության ԺԳ՝ «Պատճառ երից սրբասացութեանն, զոր Հայք ի դէմս Որդւոյ ասեն» գլխի[3] սկզբի մասում գրում է. «Թէ վասն էր երից սրբասացութիւնն վերաբերի հասարակածութեանն եւ մի երրեակ խաչեցարն կցորդ ի վերայ յատուկ յանուն միածնի՝ որդւոյն Աստուծոյ, եւ թէ յորում ժամանակի եւ յորոց ումանց նախ կարգեցաւ. բայց նախ ղյառաջադրեալ զխորհուրդ խաչին տեսջիր սկզբնաւորեալ ի կենաց տնկոյն որ ի դրախտին, զի անդուստ ի վերուստ իսկ արկեալ էր ի միտ երեքսրբեան տէրութեան զխորհուրդ փրկագործ խաչելութեանն Աստուածն բանի, զոր յայլում տեղւոջ քաղեալ եմ եւ եղեալ. եւ ապա զայս, զոր յԱնանիա վարդապետին գրոցն համառօտիւ ժողովեցի[4] (ընդգծումը մերն է —Վ. Հ.)։ Թվում է, թե Հաղբատեցին «յԱնանիա վարդապետին դրոցն» ասելով նկատի ունի միայն Անանիա Շիրակացուն և նրա գրվածքները։ Այդ մասին առարկություն հազիվ թե լինի։ Գուցե առարկություն լինի այն մասին, թե Հաղբատեցու այս վկայությունը չի կարելի տարածել միևնույն աշխատության ԺԲ գլխի վրա, այլ խոսքը այստեղ վերաբերում է միայն նույն աշխատության ԺԳ գլխի աղբյուրներին։ Սակայն այն փաստը, որ Շիրակացու Հայտնության ճառը գոյություն ուներ մինչև Հաղբատեցու ծնունդը մի կողմից և վերջինիս վկայությունը Շիրակացու գրվածքներից ծաղկաքաղ անելու մասին («համառօտիւ ժողովեցի») մյուս կողմից, ոչ մի կասկած չեն թողնում, որ Հաղբատեցին օգտվել է Շիրակացուց։ Հետևապես Մակարի Թղթի ընդարձակ բնագրից օգտվել է ոչ թե Անանիա Հաղբատեցին XI դարի առաջին կեսին, այլ Անանիա Շիրակացին VII դարում[5] և այն գիտեր որպես Մակար

---

[1] № 2679։

[2] Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 283։ Նույն միտքը բառացի տե՛ս Անանիա Հաղբատեցու անունով № 567 ձեռագրից վերևում մեջբերված ընդարձակ հատվածի սկզբում։

[3] № 567, էջ 98ա—111բ։

[4] Նույն տեղում, էջ 98ա։

[5] Մովսես Կաղանկատվացին գրում է. «Նոյնպէս Մարկոս (կարդա Մակարիոս—Վ. Հ.) հայրապետն երուսաղէմի, որ մի էր ի նիկիական հարցն, յիւրում խրատական թղթին գրեաց առ Հայս յաղագս մկրտութեան, եթէ ի միում աւուր տօնեմք զծնունդն և զմկրտութիւնն, զորօրինակ մահն և թաղումն անկատար է առանց յարութեանն...» (Պատմութիւն Աղուանից աշխարհի, III գլ. ԺԴ, էջ 362)։ Այս ամբողջն արտահայտված ենք գտնում Մակար Ա-ի Վրթանես

Ա-ի գրած՝ եթե այս թուղթը դրված լիներ՝ Մակար Բ-ի կողմից VI դարի երկրորդ կեսին՝ 567 թ[1], ինչպես կարծում է Ակինյանը, Անանիա Շիրակացու, որպես մատենագիր հանդես գալուց 50—60 տարի առաջ, հազիվ թե Շիրակացին շփոթեր թղթի հեղինակներին, մանավանդ որ նա գիտեր երկու Մակարների գործունեությունը[2]: Նշանակում է Մակար Ա-ի թղթի մասին ունենք հանվանե վկայություն VII դարից: Ուստի Ակինյանի «ե—է դարերու հայ մատենագիր-պատմագիրներու անծանոթ է թուղթս հանվանեա[3] պնդումը ճիշտ չէ: Ինչպես նաև ճիշտ չէ նրա մի այլ պնդումը. «Անանիա Հաղբատեցի, երբ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի (1019—1054) հրամանավ կը գրեր յուր Հակաճառությունը, ուներ աչքի առաջ Մակարի թղթին ընդարձակ օրինակը և անկե կը բերեր յուր կոչումները, ուստի անծանոթ էր իրեն թղթին համառոտ խմբագրությունը Կանոնագրքին մեջ»[4]: Իրականում Մակարի թղթի համառոտ խմբագրությանը անծանոթ էր Անանիա Շիրակացին, իսկ Անանիա Հաղբատեցին նշված թղթի ընդարձակ բնագիրը օգտագործել է վերջինիս միջոցով:

Մի այլ հանգամանք: Ճիշտ է Ակինյանի դիտողությունը, որ Կանոնագրքում պահված այս բնագրի վերնադիրը սկզբնականը չէ և այն «Առանց տարակույսի կանոնագրոց խմբագրչեն է, ուստի և անհարազատ»[5]: Եվ նա ենթադրում է, որ խորագիրը սկզբնապես պետք է լիներ այսպես. «Մակարիոսի արքեպիսկոպոսի Երուսաղէմի կանոնադրութիւն յաղագս կարգաց կաթողիկէ եկեղեցւոյ, առ քրիստոսասէր եւ երկիւղած եպիսկոպոսապետն Վրթանէս եւ առ համօրէն եպիսկոպոսս եւ քահանայս Հայոց[6]»: Այս ենթադրության համար նա վկայակոչում է բնագրի նախաբանի հետևյալ հատվածը. «Վասն երկիւղին Աստուծոյ ոչ հեղգացաք... Ես Մակարիոս արքեպիսկոպոս Երուսաղէմի եւ ամենայն բազմութիւն եպիսկոպոսացս, որ ընդ իս են՝ [եւ] առաքել ի կողմանսդ Արեւելից առ քրիստոսասէր եւ երկիւղած եպիսկոպոսապետդ Վրթանէս եւ առ համաւրէն եպիսկոպոսս եւ քահանայս Հայոց»[7]:

Հարց է առաջանում. եթե այս շարադրանքն ընդունում է Ակինյանը, ապա ինչո՞ւ է նա գտնում, որ Մակարը նամակը գրել է ոչ թե Հայոց կաթողիկոս Վրթանեսին, այլ Սյունյաց եպիսկոպոս Վրթանեսին: Այս առթիվ հիշում ենք Վ. Հացունու բացատրությունը. «Ոչ Սյունյաց առաջնորդը կրնար «եպիսկոպոսապետ» կոչվիլ և ոչ ալ Մակար կարող էր խոսիլ ամբողջ հայ կղերին՝ սոսկական եպիսկոպոսի մը բերանով, փոխանակ Հայոց կաթողիկոսին՝ որ կըհրամայեր եպիսկոպոսաց, և ինքը միայն կրնար լսեցնել յուր ձայնը»[8]:

կաթողիկոսին գրած թղթի ընդարձակ բնագրում (տե՛ս վերևի ընդարձակ քաղվածքում, էջ XCIII—XCIV, իսկ նույնի Կանոնագրքում մտած համառոտ տարբերակում չի պահվել միայն «եթէ ի միում աւուր տօնիմք զՆունդն և զՄկրտութիւնն» հատվածը:

Հնարավոր է, որ Մովսես Կաղանկատվացին այս մեջբերումը վերցրած լինի Անանիա Շիրակացուց: Բոլոր դեպքերում Մակար Ա-ի թղթի մասին տեղեկություն ունենք նաև X դարից:

1 Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 77:

2 Պրոֆ. Աչ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 284, 395—396:

3 Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի..., էջ 22:

4 Նույն տեղում, էջ 108:

5 Նույն տեղում, էջ 11:

6 Նույն տեղում, էջ 11:

7 Տե՛ս սույն հատորը, էջ 219—220. համմտ. նաև Դ հոդվածի սկիզբը:

8 Բազմավէպ, 1929, էջ 260, տե՛ս նաև նրա երկրորդ հոդվածում (Բազմավէպ, 1931 թ., էջ 70):

Թվում է, թե պարզ է ասվածն։ Ասվածը ցույց է տալիս, որ սույն կանոնախումբը Երուսաղեմի հայրապետ Մակար Ա-ի նամակն է ուղղված Հայոց կաթողիկոս Վրթանեսին (IV դար) և Ակինյանի խաչընդուս ջանքերը այն վերագրելու Սյունյաց Վրթանես եպիսկոպոսին (VI դար)՝ իզուր են։

Կարինի կաւծեցյալ ժողովի կանոնախումբը կանոնագրքում դրված է 42 (ԽԲ)-րդ համարի ներքո։ Հենց սկզբից ասենք, որ այստեղ նշված Կարինի ժողովը ոչնչով չի լծորդվում մեր սկզբնաղբյուրներում բազմիցս հիշատակվող այն ժողովի հետ, որ հրավիրեց Հերակլ կայսրը, ուր և Եզր կաթողիկոսն ընդունեց քաղկեդոնական դավանանք։ Պատմիչների մեծ մասի հավաստմամբ (Ասողիկ, Սամուել Անեցի, Կիրակոս Գանձակեցի, Ստ. Օրբելյան և ուրիշներ) այս ժողովը հրավիրվել է Կաբինում, մինչդեռ Սեբեոսը և Հովհ. Դրասխանակերտցին այդ մասին նշում չունեն։ Սեբեոսը դրում է. «եւ գնաց կաթուղիկոսն յերկիրն Ասորեստանի, ետես վթագաւորն եւ հաղորդեցաւ ընդ նմա աւրինաւք»[1], իսկ Հովհ. Դրասխանակերտցին անորոշ է դրում. Եզր կաթողիկոսն «յանձն առնու երթալ առ կայսր»[2] հավանաբար Երուսաղեմ։ Սկզբնաղբյուրների հավաստած Կարինի ժողովը տեղի է ունեցել 629 թ.։ Վերջինիս մասին պատմիչների հաղորդածն էլ հավանաբար անցել է Հայաստանում հրավիրված ժողովների մի քանի ցուցակներին, օրինակ, Հովհ. Օձնեցու[3], Մխիթար Գոշի[4], Ստ. Օրբելյանի[5] և Անանունի[6]։

Այսպիսով, առկա եղած փաստերը վերաբերում են Հերակլ կայսեր և Եզր կաթողիկոսի ժամանակ Կարինում կայացած ժողովին։ Իսկ մեզ հետաքրքրող Կարինի ժողովի մասին սկզբնաղբյուրները բացարձակ առումով լռում են։ Միակ սկզբնաղբյուրը այդ մասին առաջարկվող կանոնախմբի առաջաբանն է, այն էլ, դժբախտաբար, հակասական տեղեկություններով լի։ Այստեղ կարդում ենք, որ Թեոդուպոլսում (Կարին) տեղի է ունեցել ժողով «հրամանաւ մեծի թագաւորին Յուստինեայ» «հանդերձ կաթողիկոսաւն Հայոց Սահակաւ»։ Թերևս քննության առանձին նյութ չդարձնենք XIV—XV դարերի մատենագիր Գրիգոր Տաթևացու «Գիրք Հարցմանց»-ի՝ այս ժողովին վերաբերող տողերը, ուր կարդում ենք. «Երկրորդն է ժողովն Թէոդուպօլսի, որ այժմ կոչի Կարնոյ քաղաք։ Ոչ այն զոր յետոյ Հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց եւ խաբեաց զԵզր կաթողիկոսն Հայոց։ Այլ հրամանաւ մեծի թագաւորին Ուստիանեայ ժողովեցան Յունաց եւ Հռոմոց եւ Հայոց եւ Վրաց եւ Աղուանից եպիսկոպոսունք եւ կաթողիկոսն Հայոց Սահակ, եւ հաստատեցին զկանոնսն երից սուրբ ժողովոյն որ ի Նիկիայ, ի Կոստանդնուպօլիս եւ յԵփեսոս։ Եւ նզովեցին զաղանդն Մարկիանու եւ զԱրտեմոնի եւ զտումարն Լևոնի. եւ միաբանեցան ի մի հաւատս սուրբ առաքելոցն եւ ի կանոնս սուրբ ժողովոյն ինչ պէտք էին յաւելին գլուխս Թ ի զգուշութիւն եկեղեցւոյ»[7]։ Սակայն այս տեղեկությունը համարում ենք նշանակազուրկ, քանի որ քաղված լինելով կանոնագրքի սույն կանոնախմբից՝ նորություն չի բովանդակում։

---

[1] Պատմութիւն..., էջ 102։
[2] Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 77։
[3] Գիրք Թղթոց, էջ 221, 223։
[4] Ձ 2966, էջ 67ա։
[5] Պատմութիւն..., էջ 455։
[6] Ա 2335, էջ 36բ։
[7] Գիրք հարցմանց, էջ 544։

Ուսումնասիրողներից Միքայել Չամչյանը, Արել Մխիթարյանցը, Ներսես Մելիք-Թանգյանը, Լեոն և ուրիշներ, իրենց ուսումնասիրություններում անտեսել են այս ժողովի որոշումները և լռությամբ անցել դրանց կողքով, սակայն առանձին ուսումնասիրողներ փորձել են հավաստել այս կանոնախմբի վավերականությունը և ցույց տվել, թե ե՞րբ կարող էր տեղի ունենալ այդ ժողովը։ Կարապետ եպիսկոպոսի (Տեր-Մկրտչյան) կարծիքով Կարինի այս ժողովը, ինչպես ակնարկված է կանոնախմբի առաջաբանում, հրավիրվել է Հայոց կաթողիկոս Սահակ Բ Հարքացու (իմա՛ Ուղկացու, 534—539 թթ.) օրոք 532 թվականից առաջ[1]։ Մ. Օրմանյանը կարծում է, որ այդ ժողովը կայացել է 692 թ. Տրուլյան ժողովից հետո, ի հակադրություն քաղկեդոնականության և Տրուլյան ժողովի, ուր հայ եկեղեցու ծիսական խնդիրների մասին մի քանի կանոններ էին ընդունված։ Օրմանյանը թեև որոշ տարակուսանքով, բայց այնուամենայնիվ կարծում է, որ Կարինի ժողովը քանի որ չհամապատասխանեց Հուստինիանոս Բ կայսեր կամքին և չհամաձայնեց Քաղկեդոնի դավանության, զայրացրեց կայսրին, և վերջինս Հայոց կաթողիկոս Սահակ Գ Զորափորեցուն (677—703 թթ.) հինգ եպիսկոպոսների և մի քանի իշխանների հետ բանտարկեց և ուղարկեց Կ. Պոլիս[2]։

Այսպիսով, Կարապետ եպիսկոպոսի կարծիքով Կարինի ժողովը հրավիրվել է Հուստինիանոս կայսեր և Սահակ Բ Հարքացի կաթողիկոսի օրոք 532 թ. առաջ, իսկ Օրմանյանի կարծիքով՝ Հուստինիանոս Բ կայսեր և Սահակ Գ Զորափորեցու օրոք, 690-ական թվականներին։ Վերջին կարծիքը հիմնավոր չէ, որովհետև, եթե ժողովը տեղի ունեցած լիներ 690-ական թվականներին, անհնարին է, որ վրաց եկեղեցու ներկայացուցիչները մասնակցած լինեն, քանի որ վրաց եկեղեցին այդ ժամանակ արդեն բաժանված էր հայ եկեղեցուց և պաշտպանում էր վերջինիս հակառակ դրույթներ։ Իրականում, եթե այդ ժողովը կայացել է, ապա այն կարող է տեղի ունեցած լինել Հուստինիանոս Ա կայսեր և Սահակ Բ Հարքացի կաթողիկոսի օրոք։ Սակայն այս վարկածն էլ հեռու է ճշմարտությունից։ Հակոբոս Տաշյանն անդրադառնալով սույն կանոնախմբի վավերականության հարցին, միանգամայն ճիշտ կերպով այն համարում է կեղծ, և նրա հորինողը, ինչպես կարծում է Տաշյանը, փորձում է մի ժողով գումարել տալ Կարինում Հուստինիանոս Բ և Սահակ Գ Զորափորցու օրոք[3]։

Ժողովի որոշումների առաջաբանում ասվում է, որ «Հրամանաւ մեծի թագաւորի Յուստինեայ» ժողով կայացավ «ի միջասահմանս աշխարհին Հայոց, Վրաց, եւ Աղուանից» որին մասնակցում են «յամենայն քաղաքաց եւ յաշխարհաց Յունաց եւ ի Հռոմոց եւ ի մեծն Հռոմայ», Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի ներկայացուցիչները։ Ինչպես ցույց է տալիս ժողովի որոշումների ուսումնասիրությունը, դրանք ունեն հակաքաղկեդոնական բնույթ, թեև չեն նշված Նեստորի և հետևորդների անունները, բայց մերժում է Լևոնի տոմարը։ Հարց է առաջանում. կարո՞ղ էին Արևմուտքի եկեղեցիները, նույնիսկ Հռոմը, մասնակցել այս ժողովին և ընդունել իրենց դրույթները խարազանող

---

[1] Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, մասն Ա, Վաղարշապատ, 1908, էջ 196—197։ Ի դեպ, այդպես է կարծում նաև Գրիգոր Տաթևացին վերևի մեջբերման մեջ, գտնելով, որ Կարինի ժողովը տեղի է ունեցել մինչև Հերակլ կայսեր դարձյալ Կարինում հրավիրված ժողովը։

[2] Ազգապատում, էջ 766—767։

[3] Վարդապետութիւն առաքելոց, էջ 240—241։

կանոններ, ինչպես սույն կանոնախմբի կանոններն են։ Իհարկե ոչ։ Այս կանոնախմբի վավերականության մասին Տաշյանի եզրակացությունը միանգամայն հիմնավոր և ճիշտ ենք համարում. «Թե ամբողջ այս պատմվածքն յուր այժմու հանգամանաց մեջ բոլորովին անպատմական և անհեթեթ կարկատանք մըն է, և ոչ վայրկյան մը կըրնա տարակուսվիլ։ Դժվար է երևակայել, թե ինչպես կըրնար պատմական դուրգն ծանոթություն ունեցող մ' այս պարագայիս մեջ... ստեղծել պատմություն մ'որուն համեմատ ոչ միայն Հայք, Վիրք և Աղվանք, այլև «Ցոյնք և Հռոմք» և «ի մեծն Հռոմայ» անդամ եպիսկոպոսք գան ժողով գումարեն ի Կարին, և այն՝ մերժեն Չորրորդ տիեզերական ժողովն, դնեն այնպիսի կանոններ, որոնք այն ատեն բոլորովին հակառակ էին այն եկեղեցյաց սովորության, ինչպես է Մննդեան տոնը հունվար 6-ին կատարել, անապակ անջուր սրբագործել և այլն»[1]։

Հետաքրքիր է նաև հետևյալ փաստը. Ա կանոնում գրված է. «Եթէ պատրիարգ իցէ եւ եթէ եպիսկոպոս հրամանաւ թագաւորականաւ ելցէ յաշխարհէ եւ յաքսորս բնակեսցէ մինչեւ ի մահ»[2] եթե հարում են Արտեմոնի դավանանքին։ Ինչպե՞ս կարող էր այդ տողերը դրվել, երբ հայ իրականության մեջ այս ժամանակ թագավոր չկար։ Սա անտեղյակություն է և կեղծիք։

Թե ե՛րբ է ստեղծվել այս կեղծ բնագիրը, դժվար է ասել, սակայն կարելի է հաստատ ասել, որ սույն բնագիրը չի մտել Կանոնագրքի ոչ Հովհ. Օձնեցու VIII դարի և ոչ էլ X դարի խմբագրության մեջ, այլ մտել է Կանոնագրքի XI դարի խմբագրության մեջ։

Ներսես կաթողիկոսին վերագրված կանոնախումբը Կանոնագրքում դրված է 43 (ԽԹ)-րդ տեղում «Սահմանք եւ կանոնք կարգի եկեղեցւոյ սրբոյն Ներսէսի հայրապետի Հայոց գլուխք ԽԹ» խորագրով։ Վերնագրի «սրբոյն Ներսէսի հայրապետի Հայոց» հատվածը մեզ հուշում է, որ հեղինակը հայ եկեղեցու կաթողիկոսներից մեկը պետք է լինի։ Քննության ենթակա շրջանում հայ եկեղեցու պատմության մեջ հանդիպում ենք չորս Ներսես կաթողիկոսի, Ներսես Ա, որը կաթողիկոս եղել է 353—373 թթ., Ներսես Բ Աշտարակեցի կամ Բագրևանդացի՝ 548—557 թթ., Ներսես Դ Իշխանեցի կամ Շինող՝ 641—661 թթ., Ներսես Դ Շնորհալի՝ 1166—1173 թթ.։ Այս չորս Ներսեսներից որի՞ն կարելի է համարել սույն բնագրի հեղինակ։ Վերնագրում նշված «սրբոյն Ներսէսի» արտահայտությունը թերևս հարմար լիներ Ներսես Ա-ին կամ Ներսես Դ Շնորհալուն, որովհետև հայ եկեղեցին վերջիններիս դասել է սրբերի կարգը։ Սակայն ոչ մի փաստ չունենք Ներսես Ա-ին վերագրելու, իսկ Ներսես Շնորհալուն չենք կարող վերագրել, որովհետև նրա կաթողիկոս դառնալուց շուրջ 70 տարի առաջ այս կանոնախումբը արդեն մտել էր Կանոնագրքի XI դարի հավաքածուի մեջ[3]։ Վերջինիս սկզբում դրված է Կանոնագրքի բովանդակության ցանկը, ուր ԽԹ համարի տակ կարդում ենք. «Կանոնք սրբոյն Ներսիսի Գ-րդ գլուխ ԻԹ»[4]։ Ուրեմն, այս կանոնախմբի հեղինակը որոշելու առաջին փորձը կատարվել է XI դարում և այն վերագրել են Ներսես Գ Շինողին։ Ուրիշ-

---

[1] Վարդապետութիւն առաքելոց, էջ 241—242։

[2] Տե՛ս ներքևում, էջ 247։ Համմտ. նաև Ե կանոնը, էջ 251։

[3] Խոսքը Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի № 131 ձեռագրի մասին է, ընդօրինակված 1098թ. մեր օգտագործած Ա ձեռագիրը։

[4] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 4։

ներ, օրինակ՝ Վ. Բաստամյանցը, հեղինակ համարում է Ներսես Բ Բագրեվանդացուն[1]։

Եթե Ներսես Գ Շինողին վերագրելու հիմքեր չունենք, ապա Վ. Բաստամյանցը փորձում է իր կարծիքը հիմնավորել, գրելով, թե «Ուշադրության արժանին այն է, որ հիշյալ բոլոր կանոնագրքերի մեջ (իմա՝ իր օգտագործած —Վ. Հ.) այս երկու տեսակ կանոնները (իմա՝ առաջինն՝ Ներսես և Ներշապուհի ու երկրորդ՝ այս կանոնախմբերը—Վ. Հ.) միշտ միասին են դրված[2]։ Վ. Բաստամյանցի օգտագործված ձեռագրերում ստուգեցինք երկու Ներսեսների անունով մեզ հասած կանոնախմբերի տեղը, և նկատեցինք, որ դրանք նշված ձեռագրերում միշտ չէ, որ միասին են դրված. օրինակ՝ Բաստամյանցի նշած №№ 746, 752, 759 (այժմյան համարակալմամբ համապատասխանաբար №№ 654, 833, 660) ձեռագրերում այս երկու կանոնախմբերը միմյանցից դրված են բավականին հեռու։ Այսպես է դրված նաև կանոնագրքի քննական բնագիրը կազմելու համար մեր կողմից օգտագործված 50 ձեռագրերում (սրա մեջ է մտնում նաև վերևում նշված №№ 654, 660 ձեռագրերը)։ Բաստամյանցի նշած մյուս ձեռագրերում՝ №№ 741, 742, 743, 750, 761 (այժմյան համարակալմամբ համապատասխանաբար №№ 649, 650, 651, 658, 773) երկու Ներսեսների կանոնախմբերը թեև հաջորդում են միմյանց, բայց այդ փաստը հիմք չի տալիս այս կանոնախմբի հեղինակին համարել Ներսես Բ Բագրեւանդացուն, որովհետև այս ձեռագրերը, բացառությամբ № 778-ի լիակատար կանոնագրքեր չեն, այլ համառոտ, որոնք հանդես են եկել սկսած XIV դարից և իրենց մեջ լրիվ չեն պարունակում Հովհ. Օձնեցու կազմած և սրանից հետո Կանոնագրքին ավելացված կանոնախմբերը։ Այսպիսի կանոնագրքեր մեր Մատենադարանում պահվում են մի քանի տասնյակի հասնող ձեռագրերում, որոնց մի խմբում Կանոնագիրքը վերագրվում է Եպիփանին. «Գէորգեայ Հայոց վարդապետի համառաւտ ժողովեալ ի կանովնաց սրբոց հարցն Եպիփանու կանովն» վերնագրով[3]։ Նման կանոնագրքերից մեկում պահվել է գրչի շատ բնորոշ հիշատակարանը. բերում ենք մեզ հետաքրքրող հատվածը. «...աստանօր կատարեցաւ աստուածային օրինացն հետեւողաց սուրբ հարցն կանոնագրաց լիակատար կանովնաց սակաւս ծաղկաքաղս փոքր մի կանոնս»[4] (ընդգծումը մերն է—Վ. Հ.)։ Նշանակում է հետագայի խմբագրողները կամ գրիչները սույն կանոնախումբը դիտել են Ներսեսի և Ներշապուհի կանոնախմբի հեղինակ Ներսես Բ Բագրեւանդացու գրչի արդյունք և վերադասավորելիս դրել հաջորդաբար[5]։

Իսկ № 778 ձեռագիրը, թեև լիակատար Կանոնագիրք է ուրույն կառուց-

---

[1] «Փորձ», 1881, IV էջ 57, Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, Հառաջաբանություն հրատարակողի, էջ 74—75, ծանոթ. 44, բնագրում էջ 105, ծանոթ. 185, էջ 108, ծանոթ. 192 և այլն։

[2] Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, Հառաջաբանություն հրատարակողի, էջ 74—75, ծանոթ. 44։

[3] Ն 1242, էջ 88ա. համմտ. նաև №№ 657, էջ 88ա, 833, էջ 7բ, 6562, էջ 47ա և այլ ձեռագրերում։

[4] № 657, էջ 129բ, ձեռագիրը 1614 թվի ընդօրինակություն է։

[5] Տեղն է հիշելու, որ այս կանոնախմբի՝ Ա. Ղլտճյանի կազմած գիտա-քննական բնագիրը լրացված է այսպիսի ձեռագրերի ընթերցումներով, որոնք կատարված են հետագայում և ունեն հոդվածի միտքը պարզ և հասկանալի դարձնելու բնույթ, հետևապես նման ընթերցումները, թեկուզ հասկանալի, չեն համապատասխանում սույն կանոնախմբի սկզբնական բնագրին։ Ուստի նման ընթերցումներով պետք է ոչ թե բնագիր կազմել, այլ այն բացատրել։

վածքով[1], սակայն ձեռագրի հիշատակարանը մեզ ենթադրել է տալիս, որ ձեռագրի պատվիրատու՝ Լվովի եկեղեցու ավագ քահանա տեր Զաքարիան Կանոնագրքի նախնական կառուցվածքի վրայով ձեռք է սահեցրել և մասնակիորեն փոփոխել կառուցվածքը. «Դարձեալ աղաչեմ զձեզ... մի մոռանայք յիշել ի Քրիստոս զյառաջ անուանեալ տէր Զաքարիայն, որ բազում աշխատութեամբ եւ չատագովութեամբ պարղեաց եւ սրբադրեաց զկանոնս...»[2], Թերևս այդ «պարզեաց»-ի արդյունք է ոչ միայն երկու ներսեսների կանոնախմբերի միմյանց հաջորդումը, այլև այն, որ տիեզերական երեք ժողովները՝ Նիկիա, Կ. Պոլիս, Եփեսոս դրված են հաջորդաբար, մինչդեռ մեզ հայտնի այլ կանոնագիրք ձեռագրերում դրանք ուրիշ դասավորություն ունեն[3]։

Այս փաստերից հետո կարելի է ընդունել, որ Բաստամյանցի քննության առարկա հանդիսացող եզրակացությունը հիմնված է միանգամայն թույլ հենակետի վրա։ Այս կանոնախումբը իրավամբ անվավեր են համարել և հետագայի հորինվածք՝ Ն. Մելիք-Թանգյանը[4] և Ա. Ղլտճյանը[5]։ Վերջինս գրում է նաև, որ կանոնների ընդհանուր բնույթը ցույց է տալիս, թե նրանք խմբագրված լինեն զանազան ժամանակներում ու հետո իրար հետ միացված[6]։ Այդ դժվար է ասել, քանի որ փաստեր չկան։ Սակայն նրա՝ հետագայի հորինվածք լինելը կասկածից դուրս է։

Կանոնախմբի վերնագրում նշված է. «Սահմանք եւ կանոնք կարգի եկեղեցւոյ»։ Նանոթանալով հոդվածների բովանդակությանը՝ եկեղեցու կարգավորության, նրա տարբեր աստիճան սպասավորների կամ պաշտամունքի վերաբերյալ բան չենք գտնում։ Հոդվածների նյութերը վերաբերում են մարդկանց առօրյա խնդիրներին։ Թե երբ կարող էր ստեղծվել այս կանոնախումբը, հնարավոր է պարզել ներկա բնագրի հոդվածների աղբյուրագիտական հիմքերի քննությամբ։ Այդ աշխատանքի մեզանից տասնյակ տարիներ առաջ կատարել է Ա. Ղլտճյանը։ Նախ քննենք նրա արածը։

«Հանդէս Ամսօրեայ»-ի 1908 թ. մայիս (էջ 133—139) և հուլիս (էջ 161—166) համարներում նա տվել է այս կանոնախմբի ուսումնասիրության արդյունքները, իսկ օգոստոսի (էջ 227—232) համարում՝ գիտա-քննական բնագիրը։ Ահա թե ինչ է գրում նա. «Այս կանոնները խմբագրողն իր կանոններից Ա—ԺԲ, ԺԴ—ԺԷ, ԺԹ, Ի, ԻԲ—ԻԸ, ԻԶ և ԼԴ—Խ կանոնները խմբագրելիս օգտվել է Առաքելական ԻԹ և ԽԸ, Նիկիական, ԺԴ, Անկյուրիայի Ժ, ԺԷ, Կեսարիայի, Ա, Բ, Գ, Ե, Թ, Ժ, Նեոկեսարիայի, Ա, Ը, Թ, ԺԱ, ԺԲ, Բարսեղի, ԺԱ, ԻԸ, ԻԶ. ԻԸ, Թադեոսի, ԺԹ, Ի, ԻԱ, ԻԸ, Լուսավորչի Դ, Ե, Զ, ԺԱ, ԺԴ, Շահապիվանի Բ, ԺԴ, Պարտավի (իմա՝ Սիոնի —Վ. Հ.) ԺԱ, ԺԴ, ԻԴ, Բարսեղի (Բ) Խ, ԽԸ, ՄԴ, ՃԻԱ, ՃԽԶ, Մէ, ՍՀԱ, Աթանասի ԿԱ, Դոշի Ա մասն ՁԶ, Բ մասն ԽԸ, ԽԹ, ՄԱ, ՂԴ կանոններից, երբեմն համարյա Թե բառացի արտագրելով նրանցից»[7]։ Մնացած 12 կանոններն են կազմում, ըստ Ղլտճյանի, խմբագրողի ինքնուրույն մասը, որը

---

1 Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ XXX, ծանոթ 5։
2 Մ 778 (Պ), էջ 291բ։
3 Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 4։
4 Հայոց եկեղեցական իրաւունքը, գիրք Ա, էջ 369։
5 «Հանդէս Ամսօրեայ» 1908, մայիս, էջ 134։
6 Նույն տեղում, հունիս, էջ 166։
7 «Հանդէս Ամսօրեայ», 1908, մայիս, էջ 134։

վերցված է սովորույթի իրավունքից[1]։ Մի կողմ թողնելով մի շարք նշումներ, օրինակ՝ Առաքելական ԻԹ, Խե, Նիկիական ԺԳ, Բարսեղի ԺԱ, ԻՀ, Թաղեոսի Ի, ԻԱ, Պարտավի (Սիոն) ԻԳ, Բարսեղի (Բ) Խ, ՄՀԱ հոդվածները, որ արտահայտված չենք գտնում սույն կանոնախմբում, ավելացնենք, որ Դոշից օգտվելու փաստը բոլորովին իզուր է նշված։ Կարծեցյալ Ներսեսը ինչպես կարող էր իր կազմած կանոնախմբում օգտվել Դոշից, երբ վերջինիցս գրեթե հարյուր տարի առաջ այդ կանոնախումբը արդեն մտել էր Կանոնագրքի XI դարի հավաքածուի մեջ[2]։

Ա. Ղլտճյանի վերևում նշած՝ Դոշի հոդվածները հեռավոր նմանություն ունեն սույն կանոնախմբի համապատասխան հոդվածների հետ։ Վերևում էլ ցույց ենք տվել, որ Դոշի օգտագործած Կանոնագիրքը չուներ 39 (ԼԹ)-րդ կանոնախմբից սկսած, հետևապես այս կանոնախումբը ևս։ Իսկ Ղլտճյանը ի՞նչ հիման վրա էր Դոշի Դատաստանագիրքը համարում այս կանոնախմբի աղբյուրներից մեկը։ Այս հարցի պատասխանն իմանում ենք «Մուրճ»-ի 1905 թ. մայիսի համարում Ն. Մելիք-Թանգյանի «Հայոց եկեղեցական իրաւունքը» գրքի մասին նրա գրախոսականից։ Թվելով մի շարք ձեռագրեր՝ Ղլտճյանն այնուհետև գրում է. «որոնց մեջ 751 ձեռագիրը[3] մատենադարանի (իմա՛ էջմիածնի —Վ. Հ.) բոլոր կանոնագրքերի մեջ ամենահինն է (1368 թվին գրված) ...»[4] (ընդգծումը մերն է—Վ. Հ.)։

Այսպիսով, այս թյուրիմացությունը ծնունդ է այն բանի, որ էջմիածնի № 751 (այժմյան համարակալմամբ № 659) ձեռագրից հին կանոնագիրք-ձեռագիր, ինչպես օրինակ Նոր Ջուղայի վերևում նշված (XI դար) և մեր Մատենադարանի № 6409 (XIII դար) ձեռագրերը այն ժամանակ Ղլտճյանին ծանոթ չէին, որոնցից առաջինը Դոշի Դատաստանագրքից գրեթե հարյուր տարի վաղ գոյություն ուներ և պարունակում էր այս կանոնախումբը։

Վերջինիս Զ հոդվածի համար, եթե Սիոնի կանոնախմբի ԺԳ հոդվածը որպես աղբյուր կարող ենք երկբայությամբ նշել, քանի որ այդ կարող էր քաղված լինել նաև Նեոկեսարիայի Թ հոդվածից, մանավանդ երկու բնագրերում էլ պատժաչափերը նույնն են, ապա ԺԴ հոդվածի համար, որպես աղբյուր, կարելի է հաստատորեն մատնացույց անել Սիոնի ԺԱ հոդվածը։

Այս փաստերը մեզ ստիպում են հավաստել, որ կարծեցյալ Ներսեսը օգտագործել է ինչպես Կանոնագիրքը, այնպես էլ Սիոնի կանոնախումբը, լինի այն կանոնագրքում, եթե վերջինից դուրս։ Նշանակում է՝ մեր հեղինակը հանդես է եկել VIII դարից հետո։ Ժամանակագրական այս սահմանը թերևս անշարժ չէ։ Իէ հոդվածում հանդիպում ենք «ապոռնայէ» բառին։ Ղլտճյանն իրավամբ գրում է, որ արդ բառը չի բացատրված հայերեն բացատրական և ոչ մի բառարանում[5], երկար որոնումներից հետո նա գալիս է այն ենթադրության, որ նշված բառը կազմվել է լատիներեն abortus (բայը՝ aborior) բառից, հայացնելով այն՝ ապոռնել—ապորթել—ապոռնայել, այսինքն վիժել։ Հենց

---

[1] Նույն տեղում։

[2] Այս հավաքածուի բովանդակության ցանկը տե՛ս Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 3—4։

[3] Մի այլ տեղ էլ այդ համարը նա սխալմամբ դրում է 741, տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1908, Ե, էջ 135։

[4] «Մուրճ», 1905, Ե, էջ 154. նույն միտքը տե՛ս «Հանդէս Ամսօրեայ»-ում 1908, Ե, էջ 135։

[5] Հանդէս Ամսօրեայ, 1908, էջ 232։

դրա մասին է հոդվածի միտքը և բնագրում «ապոռնայէ» բառը բացատրված է «ձգէ» (իմա՝ վիժե) բառով[1]։ Հավանական ենք համարում այս ենթադրությունը։ Այսպիսով, սույն կանոնախումբը կարող էր հանդես գալ մի այնպիսի միջավայրում, որտեղ շփումը լատինների հետ առկա էր։ Իսկ այդպիսի շփում նկատում ենք Կիլիկիայում[2], որտեղ հայերը IX—X դարերում զգալի թիվ էին կազմում[3]։ Սրա հետ մեկտեղ, եթե նկատի ունենանք, որ մեզ հասած կանոնագիրք-ձեռագրերից ամենից հինը՝ XI դարի հավաքածուն ընդօրինակվել է և լրացվել նույնպես Կիլիկիայում[4], ապա բացառված չէ այն հնարավորությունը, որ Կիլիկիայի հայերի միջավայրում ստեղծվել է սույն կանոնախումբը։

Բարսեղ Կեսարացուն վերագրված «Վասն պէսպես եւ բիւրապատիկ ախտից» կանոնախումբը, որի ՂԹ, ՃԻԱ, ՄԸ հոդվածներից օգտվել է կարծեցյալ Ներսեսը (համմտ. համապատասխանաբար ԺԱ, Բ, ԼԸ հոդվածները), կանոնագրքի X դարի խմբագրության մեջ արդեն կար, իսկ Ներսեսին վերագրված կանոնախումբը Կանոնագրքում մտել է, ինչպես ճիշտ կերպով դիտել է Ն. Մելիք-Թանգյանը, 997 թվականից հետո[5], այսինքն XI դարի խմբագրության ժամանակ։ Նվ իղուր է ջանք թափում Ա. Ղլտճյանը մերժելու Ն. Մելիք-Թանգյանի այդ վարկածը, հենվելով նրա թերևս ոչ ճիշտ մի արտահայտության վրա[6]։

Այսպիսով, այս կանոնախմբի ստեղծման ժամանակագրական միջոցը համարում ենք X դարից և Կանոնագրքում առաջին անգամ մտել է նրա XI դարի հավաքածուի մեջ։

Սակայն անհրաժեշտ ենք համարում մեր դիտողությունները ներկայացնել սույն կանոնախմբի ԻԲ կանոնի առթիվ Ա. Ղլտճյանի սրբագրության մասին։ Նշված կանոնում կարդում ենք. «Վասն զազգական կին առնելոյ. ցհինգերորդն մի՛ իշխեսցէ, եւ զչորրորդն ապաշխարեսցէ եւ երրորդն մեկնեսցին եւ ապաշխարեսցեն»[7]։ Առարկելով մի շարք հեղինակների (Վ. Բաստամյանց, Ն. Մելիք-Թանգյան, Ա. Սեդրակյան և ուրիշներ) Ա. Ղլտճյանը հոդվածի «ցհինգերորդն» բառը փոխարինում է «զերրորդն» բառով[8]։ Այս հարցին նա անդրադարձել է մանրամասնորեն իր երեք աշխատություններում[9]։ Երկար վիճելուց և պատմական ճանապարհորդություն կատարելուց հետո նա հոդվա-

---

[1] «Հանդէս Ամսօրեայ», 1908, V, էջ 232։ Հ. Աճառյանը «Հայերէն նոր բառեր Կանոնագրքի մէջ» իր հոդվածում «ապոռնա» բառը բացատրում է «հոսում կամ վիժում ունեցող» (Բազմավէպ, 1924 թ., էջ 81)։ Սակայն նա այս բառը համեմատում է նաև «հուն. ἀπόρροια «հոսում» ἀπόρροος «հոսում ունեցող» և կամ ἀποῦρέω «միզած ժամանակ դուրս ձգել» բառերուն հետ, թեև ասոնցմե ոչ մեկուն ճշտիվ համապատասխան չըլլա։ Արդյոք ավելի մերձավոր ասորական ձև մը կա՞ (նույն տեղում)։ Դիմեցինք ասորագետ պրոֆ. Ն. Տեր-Մինասյանը։ Նա մերժեց այդ բառի ասորական ծագումը։

[2] Տե՛ս Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952. стр. 181.

[3] Նույն տեղում, էջ 51։

[4] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ LIX։

[5] Հայոց եկեղեցական իրաւունքը, դիրք Ա, էջ 369։

[6] «Մուրճ», 1905, V, էջ 154. տե՛ս նաև «Հանդէս Ամսօրեայ» 1908, V, էջ 134—135։

[7] Տե՛ս սույն հատորը, էջ 260—261։

[8] Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1908, VIII, էջ 229, Կանոնգիրք Հայոց, Թիֆլիս, էջ 119։

[9] Ամուսնություն, ամուսնալուծություն և քաղաքացիական պսակ, Ալեքսանդրապոլ, 1904, Հանդէս Ամսօրեայի 1902, V, VI համարներում (տես վերևում) և Հայ հին իրաւունքը, Ալեքսանդրապոլ, 1913։

ծին տալիս է հետևյալ կերպարանքը. «Վասն զազդական կին առնելոյ. զերրորդն մի՛ իշխեսցէ, չորրորդն ապաշխարեսցէ և երրորդքն մեկնեսցին և ապաշխարեսցեն»[1]: Այնուհետև Ա. Ղլտճյանը շարադրում է վերոբերյալ հոդվածից բխող հետևյալ կետերը. 1. Երրորդ աստիճանում չհամարձակվեն ամուսնանալ: 2. Չորրորդ աստիճանում ամուսնացածները ապաշխարեն: 3. Երրորդ աստիճանում ամուսնացածները բաժանվեն և ապաշխարեն[2]: Եվ.ապա այս հոդվածի մասին դրում է. «Մեր վերջնական եզրակացությունն այն է, որ նա (հոդվածը —Վ. Հ.) սահմանում է երրորդ աստիճանի արյունակիցների պսակի խիստ արգելք, և կողմնակի կերպով թույլ է տալիս չորրորդ աստիճանի արյունակիցներհ ամուսնություն»[3]:

Որ Ա. Ղլտճյանի առաջարկած ուղղումը ճիշտ չէ և բնագրում պետք է թողնել «ցհինգերորդն» և ոչ թե դարձնել «զերրորդն», երևում է նաև 1661 թ. Ղալասար դյուղում ընդօրինակված № 838 ձեռագրի (էջ 138ա) ազգականների ամուսնության մասին տարբեր հեղինակներից արված քաղվածքներում: Վերջիններիցս մեկի վերևում գրված է «Ներսէսի է» և բերում սույն հոդվածից հետևյալ քաղվածքը. «Ե-երրորդն՝ մի՛ իշխեսցէ և Դ-ն՝ ապաշխարեսցեն, և Գ-ն՝ մեկնեսեն»[4]: Այն ժամանակ ճիշտ են հասկացել, հետո է, որ ոմանք շփոթել են և տվել տարբեր բացատրություններ:

Մեզ ավելի ճիշտ է թվում նախորդ՝ «ցհինգերորդն» ընթերցումը: Բնագրի «ցհինգերորդն մի՛ իշխեսցէ» հատվածը հոդվածում համարում ենք ընդհանուր դրույթ կամ սահմանում: Եթե պատահի, որ մինչև հինգերորդ աստիճանը, ասենք, չորրորդ, երրորդ աստիճաններում ամուսնություններ լինեն, ապա չորրորդ աստիճանում գտնվողները ապաշխարեն՝ ամուսնությունը շարունակելով հանդերձ, իսկ երրորդ աստիճանում գտնվողները բաժանվեն և ապաշխարեն: Մեր այս բացատրությունը հաստատող փաստեր հանդիպեցին ՊՊԿԱ փոր ձերում[5]: Ճիշտ է, այստեղ խոսքը ոչ թե հինգերորդ, այլ վեցերորդ աստիճանի ազգակցական կապի մասին է, մեկ աստիճանով հեռու վերևի նշումից, բայց մոտեցումը նույնն է: 1909 թվականի հոկտեմբերի 14-ին էջմիածնի հոգևոր սինոդը հանդես է գալիս հետևյալ հայտարարությամբ հասի և չհասի հարցում. «... ա. Անվաւերք համարիսցին պսակք կատարեալք մինչ ցհինգերորդ աստիճան ազգակցութեան և ցչորրորդ աստիճան խնամէութեան: բ. Անթոյլատրելի համարիսցին պսակք հինգերորդ և վեցերորդ աստիճանաց ազգակցութեան և չորրորդ աստիճանի խնամութեանց: Բայց ի դէպս պատահմանց՝ յորժամ յայտնեսցի, եթէ կատարեալք են պսակք ի յիշատակեալ անթոյլատրելի աստիճանս, պսակիցն համարիսցին վաւերականք, իսկ պսակադիր քահանայն, պսակեալքն ենթարկեսցին խիստ ապաշխարանաց ըստ այսմ...»[6]: Վավերագրի շարունակության մեջ խոսում է նման դեպքերի մասին. «Եփրեմ քահանայն տէր Ստեփանեան Ղալաբաշի գեղջ վճռովդ ծանուցեալ է յանցաւոր յայնմ, զի ի նոյեմբեր ամսեան 1905 ամի պսակեալ է նորա զԱրշակն Համբարձումեան

---

1 Հանդէս Ամսօրեայ, 1908, VIII էջ 223, Կանոնդիրք Հայոց, էջ 119:
2 Հանդէս Ամսօրեայ, 1908, VI, էջ 161:
3 Նույն տեղում, էջ 164:
4 էջ 80ա:
5 Պատմության պետական կենտրոնական արխիվ (Երևան). այսուհետև ՊՊԿԱ:
6 Ֆոնդ 57, գործ 1362, էջ 58աբ: Տե՛ս նաև Խրիմյան Հայրիկի 1899 թ. հունիսի 30-ի, դեկտեմբերի 17-ի և 1902 թ. հունվարի 4-ի կոնդակները («Արարատ» 1902 թ., Ա, էջ 3—7):

ընդ Սաթենկան Յովսէփեան և զՍողոմոնն Բաբայեան ընդ Բաւականի Ղուլիեան, դիտելով, զի նոքա գտանին ընդ իրեարս ի վեցերորդում աստիճանի ազգակցութեան. սոյն օրինակ պսակի թէպետ և արգելեալ են կաեռնական օրինօք եկեղեցւոյ Հայոց, սակայն ոչ համարին անվաւեր՝ յորժամ արդէն կատարեալ են նոքին»[1] (ընդգծումը մերն է—Վ. Հ.)։

«Ամուսնութիւն, ամուսնալուծութիւն և քաղաքացիական պսակ» աշխատութեան մէջ Ա. Ղլտճյանը գրում է. «Պետք է առանձնապես շեշտել, որ հայ եկեղեցին ամուսնական չհաստութեանց դեպքում յուրաքանչյուր նոր աստիճան արգելելիս, հետևել է հունա-բուզանդական եկեղեցուն։ Յուրաքանչյուր նոր արգելք արձագանք է գտել (սխալմամբ տպագրված է գրել —Վ. Հ.) հարևան հայ եկեղեցու կյանքում և նա այդ ազդեցության տակ, իր կանոնական սահմանադրության անելիս, ուշ կամ շուտ, այնտեղ՝ արևմուտքում արդեն արգելված արյունակցական պսակների աստիճանները մտցրել իր եկեղեցու գործադրվող կանոնների մեջ՝ նախապես ազգի և եկեղեցու ներկայացուցիչների կանոնադիր ժողովի հաստատությունն ստանալով»[2]։ Մենք կասկածելի ենք համարում այս դրույթը։ Հայ եկեղեցին, որը արևմտյան եկեղեցու դեմ պայքարի դարավոր պատմություն ուներ, կապված քաղկեդոնականության հետ, հազիվ թե նման ստրկամտությամբ հետևեր հունա-բուզանդական եկեղեցուն։ Ենթադրենք, թե Ա. Ղլտճյանի այս եզրակացությունը ճիշտ է, այն դեպքում ինչու է նա ջանում այս հոդվածի «ցհինգերորդն» բառը փոխել «զերրորդն» բառով, չէ որ Կ. Պոլսի պատրիարք Փոտի Նոմոկանոնում (tit. 13, cap. 2) մինչև IX դարը արգելվում էր ամուսնությունը ազգականների միջև մինչև չորրորդ աստիճանը, իսկ IX դարից այն արգելեցին հինգերորդ աստիճանում[3]։ Նշանակում է կարծեցյալ Ներսեսն էլ հետևել է Փոտի Նոմոկանոնին և գրել «ցհինգերորդն»։ Այսպիսով, այս ընթերցումը ևս իր հերթին ցույց է տալիս, որ սույն բնագիրը առաջ է եկել VIII դարից հետո, քանի որ հայ եկեղեցում սկսած Շահապիվանի ժողովից (նույնը և Առաքելական կանոնախմբում) մինչև Սիոնի Պարտավում հրավիրված ժողովը (VIII դ.) ամուսնությունը ազգականների միջև արգելվում էր մինչև չորրորդ աստիճանը ներառյալ։ Այս հարցի մասին, ինչքան մեզ հայտնի է, հայ եկեղեցական ժողովներում, VIII դարից հետո մինչև 1243 թ. Սսի ժողովը, որոշում չի ընդունվել։ Ներսես Շնորհալին[4] և Սսի ժողովը[5] ամուսնության թույլատրելի ազգականության աստիճանը ավելի են հեռացրել։

Վերևում արդեն ցույց տվեցինք մի շարք բնագրերի, օրինակ՝ Թադեոս առաքյալին, Բարսեղ Կեսարացուն, Ներսես կաթողիկոսին, Գրիգոր Աստվածաբանին վերագրված, Երկրորդ Նիկիական, Անտիոքի (Բ), Կարինի ժողովների

---

[1] Նույն տեղում, էջ 60ա. տե՛ս նաև 1916 թ. դեկտեմբերի 10-ի կանոնական կոնդակը նույն խնդրի մասին, ֆ. 57, գ. 1402։ Նույն ֆոնդի 1393 գործում, 1916 թ. ապրիլի 30-ի թվարկությամբ կան մի շարք գրություններ, ուր թույլատրվում է վեցերորդ աստիճանի արդեն կատարված ամուսնությունները, որոնք օրենքով արգելված են, էջ 36, 38—41, 86, 87 և այլն)։

[2] Էջ 28։

[3] Այս տեղեկությունը վերցրել ենք Վ. Բաստմյանցի հոդվածից տե՛ս Փորձ, 1880, XI—XII, էջ 157։

[4] Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 84—85։

[5] Ա. Ղլտճյան, Կանոնդիրք Հայոց, էջ 175, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 304—305։

կանոնախմբերի կեղծ լինելը և համոզված ենք, որ այդ հարցում հազիվ թե որևէ տարակույս լինի։ Սակայն կան բնագրեր, որոնք ներկա ձևի մեջ նույնպես կեղծ են, բայց այդ ցույց տալու համար մեր ձեռքի տակ առայժմ բավարար հիմքեր չունենք։ Օրինակ՝ Փիլիպպոս առաքյալի, Եփրեմ Ասորու[1], Կյուրեղ Աղեքսանդրացու, Եպիփան Կիպրացու, Հիպպոլիտի[2], Նեկտարի, Մանուելի, Մելիտոնի, Հովհան Մանդակունու մի քանի կանոնախմբերը և էլի ուրիշներ։ Ի դեպ, կեղծ ասելով պետք չէ հասկանալ հայ եկեղեցու տեսություններին, սահմանումներին ընդհանրապես կամ ծիսական սկզբունքներին և կամ ավանդական հասարակության ավանդական սովորույթներին հակասող ինչ որ նոր բան։ Դրանք, կարելի է ասել, կեղծ են որևէ կանոնախմբի հեղինակի վավերականության առումով, իսկ կանոնական բնագիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ հեղինակների վավերականությունը կասկած չհարուցող և հայտնի ժողովների կանոնախմբերի ունեցած նյութերի մի նոր տարբերակ, բազմաթիվ դեպքերում վերցված այս կամ այն հայտնի հեղինակի կամ ժողովի կանոնախմբերից։ Իսկ եթե պատահում է, որ առանձին հոդվածների աղբյուրագիտական հիմքերը պարզ չեն, ապա դրանք էլ, թերևս, սովորութային իրավունքից վերցված լինեն։ Նշված կանոնախմբերը թեև կեղծ են, բայց այդ բանը նրանց մի մասին չի զրկում որպես հասարակության զարգացման պատմական որոշ ժամանակա-

---

[1] Կանոնագիրք Հայոցի Ա հատորում (էջ XIX) խոսելով «աղատա»-ների իրավական վիճակի մասին գրել էինք. «Այս վիճակը արտահայտված ենք գտնում տակավին IV դարի հեղինակ Եփրեմ Խուրի Ասորու կանոնական մի գրության մեջ, որը հայերեն թարգմանվել է V դարում, իսկ հետագայում՝ Հովհ. Օձնեցուց հետո մուծվել Կանոնագրքում»։ Ինչպես հիմա է մեզ թվում, այդ գրությունը կեղծ է, վերագրված Եփրեմ Ասորուն։ Սակայն այնտեղ քննված հարցի մեր բացատրության համար այս ճշտումը նշանակություն չունի, որովհետև այնտեղ մեզ հետաքրքրում էր ոչ թե հեղինակի հարցը, այլ քննության ենթակա հատվածի միտքը։ Այս կանոնախմբի Բ հոդված մի հատվածի վերաբերյալ ըստ երևույթին ճիշտ է Ակինյանի կարծիքը՝ համապատասխան հատվածը Շահապիվանի ժողովի կանոնախմբից անցել է Եփրեմ Ասորու անունով հայտնի կանոնախմբին («Հանդէս Ամսօրեայ» 1949, № 4—12, էջ 112)։

[2] Սա II—III դարի անձնավորություն է (Ե. Տեր-Մինասյան, Ընդհանուր եկեղեցական պատմություն, հատ. Ա, էջմիածին, 1908, էջ 138։ Պրոֆ. Ե. Տեր-Մինասյանը «Կանոնագիրք Հայոց»-ի Ա հատորի նյութերի մշակման ժամանակ մեր ուշադրությունը հրավիրեց Ֆ. Լաուխերտի „Die Kanones der wichtigsten altkirchlichen Concilien nebst den apostolischen Kanones", (Freiburg i[m] B[reisgau] und Leipzig, 1896) դրքի վրա և իր անձնական օրինակը սիրահոժար կերպով տրամադրեց մեզ օգտագործելու, որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը), հետևապես, այդ ժամանակ վեճ գոյություն չուներ Քրիստոսի ծնունդը և մկրտությունը մեկ օրում՝ հունվարի 6-ին, կամ տարբեր օրերում՝ դեկտեմբերի 25-ին և հունվարի 6-ին տոնելու մասին։

Պատասխանելով մեր նամակին, Ֆրանսիացի հայագետ հայր Ռընուն 1965 թվականի հունիսի 18-ին մեզ գրած նամակում ահա թե ինչ է գրում Կանոնագրքում մտած Հիպպոլիտի և Մելիտոնի մեկական կանոնների մասին. «Հունական կանոնական այն ժողովածուները, որ ես ուսումնասիրել եմ, չեն պարունակում այս կանոնները։ Նրանք չկան նաև Հիպպոլիտի կանոնների արաբական վերսիայում, սրանք իմ բարեկամներից մեկը շուտով հրատարակելու է «Patrologia Orientalis»-ում։ Հայկական այս բնագրերը որոշակիորեն անվավեր են և թեև հայոց պահանջներին բավարարություն տալու նպատակով։ Հայկական եկեղեցին, սերտորեն կապված լինելով Երուսաղեմից ստացած ավանդություններին, ճանաչում է միայն հունվարի 6-ի տոնը, մինչդեռ հունական եկեղեցին ու նրա ազդեցության տակ գտնվող եկեղեցիները աստիճանաբար ընդունում էին [դեկտեմբերի] 25-ի տոնակատարությունը։ Հարց է ծագում, թե արդյո՞ք այս կանոնները մի կեղծարարի գործ չեն, որը ցանկություն է ունեցել հայկական ծիսակատարության սովորույթներին տալ ավելի հին վավերականություն։ Ո՛չ Հիպպոլիտը, ո՛չ Մելիտոնը չէին ճանաչում Հայտնության տոնը»։

շրջանի սոցիալ-տնտեսական և իրավական հարաբերությունների արտահայտիչ լինելուց (Բարսեղ Կեսարացուն, Ներսեսին վերագրված և այլն)։

Սակայն ամենից հետաքրքիրն այն է, որ հայ եկեղեցին դավանանքի և ծիսական հարցերի հետ լծորդվող պարականոն և կեղծ գրվածքների նկատմամբ անհանդուրժող լինելով, արգելում էր դրանց օգտագործումը[1], մյուս կողմից կանոնագրքում, որը արդեն հանդիսանում է վավերագրերի պաշտոնական հավաքածու, մուտք են գործել նման գրվածքներ։ Ի՞նչով կարելի է բացատրել այս երևույթը։ Նայած պարագաներին, երբ արդեն որևէ խնդրի առնչությամբ անհրաժեշտություն է զգացվել հենվել ոչ միայն ժամանակի աստվածաբանության մակարդակի և սեփական իմացության վրա, այլև ապացուցման համար փնտրել հեղինակություններ և վերջիններիս ասույթներով հարցի լուծումը սպառված համարել։ Ժամանակակիցները կամ հետագայի անձնավորություններն այդ արել են նրա համար, որ իրենց գրվածքի արժեքը բարձրանա։ Դա միաժամանակ ցույց է տալիս, ոչ միայն որևէ հարցի լուծման քննադատական մոտեցման բացակայությունը, այլև աստվածաբանության մեջ հեղինակությունների առաջ անվերապահ խոնարհվելը միջնադարում։ Նման պայմաններում, ահա պահանջ է զգացվել հորինելու կեղծ գրություններ, որոնք վերագրվել են պատմական և ոչ պատմական անձնավորություններին։

Այս նշանակում է, որ հայ եկեղեցին կրոնական իր դրույթները հաստատ ու անսասան պահելու նպատակով շքամուտքից հետ էր դարձնում կեղծ կամ պարականոն գրվածքները, իսկ հետնամուտքից ներս թողնում՝ իրեն ձեռնտու նման գրություններ։

Առանձին դեպքերում և ընդհանուր կերպով պարզել ենք նման բնագրերի հորինման մոտավոր ժամանակները, հասկանալի է, դրանց հեղինակների հարցը դարձյալ թողնելով մթության մեջ, որովհետև փաստեր չունենալուս պատճառով անկարող ենք որոշել։ Սակայն մի բան պարզ է. դրանց հեղինակները հոգևորականներ լինելով հանդերձ, համենայն դեպս չեն եղել ցածր աստիճանի կրոնավորներ, այլ ժամանակի աստվածաբանության մակարդակին կանգնած, կրթված անձնավորություններ, որոնք և փորձել են իրենց ուժերը նաև այս բնագավառում։

Կանոնագրքին ավելացված տարբեր շերտերում կարելի է մի ընդհանուր երևույթ էլ նկատել։ Եթե Հովհ. Օձնեցուց (և ոչ միայն Հովհ. Օձնեցուց) հետո Կանոնագրքում մուծվում էին բնագրեր, որոնց մի մասը կեղծ էր, բայց բոլոր դեպքերում դրանք իրենց բնույթով կանոններ էին և վերաբերում էին ավատական հասարակության անդամներին, հոգևորականության վարքագծին, վարվելակերպին, հայ եկեղեցու ծիսական և իրավաբանական զանազան հարցերին, —օրինակ՝ Թադեոս և Փիլիպպոս առաքյալներին, Բարսեղ Կեսարացուն, Ներսես կաթողիկոսին վերագրված, Երկրորդ Նիկիական, Կաբինի ժողովի և ուրիշ կանոնախմբեր,—ապա ավելի ուշ՝ XI դարի խմբագրությանն ավելացված բնագրերն իրենց բնույթով կանոններ չեն, օրինակ՝ «Սրբոյն Դիոնեսիոսի Աթենացւոյ եպիսկոպոսի» բնագրից մինչև վերջ (տե՛ս Մէ կանոնախմբերը)։ Էլ չենք խոսում XVI—XV և XVII դարերի ավելացումների մասին, որոնց զգալի մասը կապ չունի Կանոնագրքի բնույթի հետ։

---

[1] Այդպիսի մի շարք գրվածքների ցանկը տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Երևան, 1959, Ներածություն, էջ XXXIX—XL. տե՛ս նաև, էջ 898—913։

Թերևս տեղն է այստեղ քննել Կանոնագրքի և Ճառընտիր կոչվող ժողովածուների բովանդակած առանձին նյութերի լծորդության հարցը։ Ճառընտիրները տարբեր ծավալի ժողովածուներ են, ուր հավաքված են բազմապիսի բովանդակություն ունեցող նյութեր։ Նյութերի ընտրության տեսակետից սրանք միանման չեն։ Վերջիններս բովանդակում են ընդհանուր և ազգային եկեղեցական նշանավոր հայրերի ճառերը, սրանց գրվածքներից առանձին գլուխներ կամ ընդարձակ հատվածներ, վարքագրական, վկայաբանական, մեկնողական, քերականական և նույնիսկ փիլիսոփայական նյութեր[1]։ Այս նյութերի մի մասի վավերականության պարզումը բանասիրության ապագա խնդիրն է։

Ճառընտիրների հանդես դալը միջնադարում տվյալ դեպքում կապված է քրիստոնյա հայ համայնքի անդամների դավանաբանական դաստիարակության հարցի հետ։ Սրանք իրենց ներգործության բնույթով խրատական են՝ մարդկանց կրթել, դաստիարակել՝ համոզելու, բացատրելու, օրինակ ծառայեցնելու և ոչ թե կանոնական կամ կարգադրական միջոցներով։ Այս առումով Ճառընտիրներն ավելի շուտ կապվում են խրատական, քան թե կանոնական կամ դատաստանական գրականության հետ, որովհետև այնտեղ բացառված է ապաշխարության և քրեական պատասխանատվության խնդիրը։

Սակայն Ճառընտիրները ժամանակի ընթացքում ճոխացվելով երբեմն ընդգրկել են նաև կանոնական գրվածքներից ընդարձակ քաղվածքներ. օրինակ՝ Բարսեղ Կեսարացու, Սահակ Պարթևի, Հովհ. Մանդակունու, Նիկիայի, կարծեցյալ Կարինի և այլ կանոնախմբերից[2]։

№№ 993, 1525 Ճառընտիր-ձեռագրերում պահվել է Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսի կանոնախմբի Ա կանոնը[3]։ Վերջինս նշված ձեռագրերում ունի «Աբրահամու Մամիկոնէից եպիսկոպոսի առ Վաչաքան արքայ Աղուանից վասն տգիտութեանն» խորագիրը[4]։ Այս երկու ձեռագրերում եղածը երբ համեմատում ենք Կանոնագրքի համապատասխան կանոնի հետ, նկատում ենք, որ միմյանց միանգամայն ծածկում են[5]։

Միևնույն № 993 Ճառընտիրում պահվել է Առաքյալներին վերագրված կանոնախմբի վերջին մի ընդարձակ հատվածը՝ «Վիճակք առաքելոցն Տեառն» խորագրով[6], ուր պատմվում է, թե քարոզելու նպատակով առաքյալները որ երկրները գնացին[7]։

Ուսումնասիրելով վերոհիշյալ Ճառընտիրներում և Կանոնագրքում պահված Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսի և Առաքյալների կանոնախմբերից

---

[1] Տե՛ս № 1500 ձեռագիրը։ Այստեղ գտնում ենք Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեանն» (էջ 1053ր), «Ամենալսաւի իմաստասիրի եւ հռետորի Աթենացո[ւ] եպիսկոպոսի լուծմունք Պրոկղի Դիադոխոսի...» (էջ 1068ա), «Ներածութիւն Պորփիւրի» (էջ 1125ր), Արիստոտելի «Մտորոգութիւն» (էջ 1146ր), «Պերիարմենիաս» (էջ 1168ր), «Ճաղագս առաքինութեանն» (էջ 1184ր), «Ճաղագս աչխարհացս» (էջ 1185ր) աշխատությունները, քերականությունը (էջ 1121բ) և այլն։

[2] Տե՛ս № 933, էջ 71բ—80ա։

[3] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, էջ 501—502։

[4] № 1525, էջ 188բ. հմմտ. № 993, էջ 243ա։

[5] Այս բնագիրն առնչվում է ավելի Կանոնագրքի ունեցածին, քան Մովսես Կաղանկատվացու Պատմության պահած (հատ. Ա., գլուխ Ի՞Ե) բնագրի հետ։ Վերջինիս պահած «ղրեհինս» բառը բացակայում է Կանոնագրքի և Ճառընտիրի ունեցած բնագրերում։

[6] էջ 643ա։

[7] Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, 58-րդ էջի 6-րդ տողից մինչև 63-րդ էջի 5-րդ տողը։

բերված ընդարձակ հատվածները՝ կարելի է եզրակացնել, որ վերջիններս Ճառընտիրներին անցել են կանոնագրքից։ Սակայն կան բնագրեր էլ, որ հակառակ եզրակացության են բերում։ Այսպես. Կանոնագրքի ներկա հատորում 46 (ԽԶ)-րդ համարի տակ նշված Օպիփան Կիպրացու կանոնախմբի Գ կանոնը կանոնագիրք-ձեռագրերի Բ խմբում դրված է որպես նույն հեղինակի մի առանձին գործ, որ Ա խմբի ձեռագրերում միացրել են Օպիփան Կիպրացու անունով հայտնի մի այլ գրվածքի և կազմել այդ կանոնախումբը՝ բաղկացած երեք կանոններից[1]։ Շարունակելով մեր որոնումները՝ № 941 Ճառընտիր-ձեռագրում նկատեցինք, որ մեզ հետաքրքրող Գ կանոնը այստեղ նույնպես բերված է որպես առանձին գործ՝ «Հարցումն Թէոդոսի քահանային ընդ երանելին Օպիփան վասն քառասնորդաց պահոց» վերնագրով[2]։ Այս և Կանոնագրքի համապատասխան բնագրերի համեմատությունը ցույց տվեց, որ Ճառընտիրում պահվածը բավականին ընդարձակ է[3]։ Այս հանգամանքը եզրակացնել է տալիս, որ այն համառոտվելով և խմբագրվելով Ճառընտիրից (ոչ անպայման № 941 ձեռագրից) անցել է Կանոնագրքին։ Հնարավոր է, սակայն, որ սույն բնագիրը անցել է այս երկուսին մի երրորդ ընդհանուր սկզբնաղբյուրից։

Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի մատենադարանի Ճառընտիրներից մեկում[4] գտնվում են XI դարի խմբագրության ժամանակ Կանոնագրքում մուծված կանոնախմբերից մի քանիսը։ Ձեռագրաց Ցուցակում բերված և Կանոնագրքի նույն կանոնախմբերի համապատասխան հատվածների համեմատությունը ցույց տվեց, որ Ճառընտիրում գտնում ենք Հիպպոլիտի, Նեկտարի, Մելիտոնի և Աթանաս Աղեքսանդրացու կանոնախմբերը[5], որոնք Կանոնագրքի ներկա հատորում համապատասխանաբար ունեն ԽՐ, ԽԹ, Ծ և ՃԱ համարները։

Քանի որ այս գրվածքներն իրենց բնույթով կանոնական բնագրեր չեն, այլ դավանաբանական, և ավելի հարմար են Ճառընտիրի կամ դավանաբանական նման մի գրվածքի, քան թե կանոնական ժողովածուի համար, ուստի կարող ենք եզրակացնել, որ այդ գրվածքները եղել են որևէ Ճառընտիրում և հետագայում՝ XI դարում Կանոնագրքին նոր ավելացումներ կատարելիս մուծվել են այնտեղ։

Ինչպես տեսանք, Կանոնագրքի XI դարի խմբագրության վերջին 13 գրվածքները (ԽԵ—ՃԷ համարների տակ եղածները) Ճառընտիրներից կամ ինչ-ինչ գրվածքներից վերցված քաղվածքներ և կամ առանձին գլուխներ են. օրինակ՝ Ղուկասի Ավետարանի մեկնությունից (Սեբերիանոս, ՄԲ) և այլն. երբեմն էլ՝ առասպելախառն պատմություններ (հիշենք թեկուզ Օպիփան Կիպրացուն վերագրված՝ ԽԶ համարի տակ գտնվող բնագիրը)։ Այս գրություններն առանձին-առանձին վերցրած բանասիրական կամ աղբյուրագիտական առումով կարող են այն նշանակությունը չունենալ, ինչ որ Կանոնագրքի տար-

---

[1] Տե՛ս սույն հատորի 268—280 էջերը։

[2] Էջ 224ա. ամբողջ բնագիրը 224ա—225բ էջերում։

[3] Պատկերացում կազմելու համար նշված բնագիրն ամբողջությամբ բերել ենք «Ծանոթագրություններ» բաժնի համապատասխան տեղում, տե՛ս ներքևում 388—390 էջերը։

[4] Արտավազդ արքեպիսկոպոս Սիւրմէեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի սրբոց Յակոբեանց վանքի, Ա հատոր, Ս. Ղազար, 1948, էջ 3—50, 1419 թվի ընդօրինակություն։

[5] Նույն տեղում էջ 5։

բեր խմբագրությունների հետ լծորդվելիս, այդ պատճառով էլ փորձ չարինք դրանք դուրս հանելու ներկա հատորի հրատարակությունից։

Ջ. «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ը ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վերևում կանոնագիրք-ձեռագրերի խմբերը, նրանց առնչությունները, կանոնագրքին հետագայում ավելացված շերտերը և վերջիններիս հետ լծորդվող այլևայլ հարցերը քննելուց հետո, այնուամենայնիվ մեզ դարձյալ հետաքրքրում են հետևյալ երկու հարցերը. նախ՝ կանոնագրքի օգտագործման ժամանակագրական սահմանները և երկրորդ՝ այն, թե երբևէ օգտագործվե՞լ են վերևում նշված կանոնական կեղծ բնագրերը։ Մեզ հայտնի են փաստեր, երբ այդ բնագրերի վկայությունները, որպես պաշտոնական վավերագրերի հեղինակություն, օգտագործվել են և՛ մատենագրական տարբեր բնույթի երկերում և՛ հայ եկեղեցու իրավասության տակ գտնվող հարցերի վերջնական լուծման կարգադրություններում։ Անցնելով նշված հարցերի քննությանը՝ նպատակ չունենք ցույց տալ Կանոնագրքի որպես սկզբնաղբյուրի օգտագործման փաստերը Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերում։ Բանասիրությունն այդ խնդրում արդեն մեծ գործ է արել[1] և իր շանքերն այս ուղղությամբ տակավին կարող է շարունակել։ Այստեղ կնշենք այլևայլ առիթներով միջնադարում և ավելի ուշ շրջանում Կանոնագիրքն ընդհանրապես և նրա կեղծ կանոնախմբերը մասնավորապես օգտագործելու մեզ հայտնի փաստերը։

Վերևում ցույց ենք տվել, որ X դարի կեսերին Անանիա Մոկացին իր Թղթերում քաղվածաբար օգտվել է Կանոնագրքի տարբեր կանոնախմբերից՝ Առաքելական, Կղեմեսի, Հարանց հետևողաց, Անկյուրյայի, Կ. Պոլսի, Եփեսոսի, Բարսեղ Կեսարացու, Սահակ Պարթևի և Շահապիվանի[2]։ Սրանց հետ մեկտեղ նա միաժամանակ բերում է Երկրորդ Նիկիական կանոնախմբի ԻԱ կանոնը այսպիսի նշումով. «Կարճառոտ ի կանոնաց որ եւ այն կոչի Նիկիայի ԻԱ գլխոյն»[3]։

Մխիթար Գոշի կողմից Կանոնագրքի օգտագործված լինելը, որպես ընդհանուր ճանաչում գտած փաստ, չենք քննի։ Սակայն կանգ կառնենք նրա կատարած աշխատանքի մի այլ կողմի վրա։ Գոշը թեև կասկածանքով է վերաբերվել Կանոնագրքի այս հատորում տեղ գտած՝ Բարսեղ Կեսարացու անունով հայտնի կանոնախմբի վավերականությանը[4], բայց այդ չի խանգարել, որ նա

---

[1] Տե՛ս Մխիթար Գոշի Դատաստանագրքի հրատարակիչ Վ. Բաստամյանցի մանրամասն ծանոթագրությունները հրատարակության ղուգահեռ, Ս. Տիգրանյանի վերևում նշված աշխատությունը և այլն։

[2] «Արարատ, 1897, Հավելված, էջ 278—279, 281—282, 284—285, 287—288։ Թղթերի հրատարակիչ Գալուստ Տեր—Մկրտչյանը տողատակին նշել է վերևում բերված կանոնների մեծ մասի համապատասխան կարգահամարները և ներկայացրել կանոնները։

[3] Նույն տեղում, էջ 281։

[4] Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, էջ 187 (մասն Ա)։ Ի դեպ նշենք, որ բացի Կանոնագրքից, ժամանակին օգտագործվել են կանոնական առանձին բնագրեր, որոնք չեն մտել Կանոնագրքում։ Այս դեպքում արդեն, դեր է խաղացել հեղինակության ուժը։ Ասողիկը պատմելով Սևանի կղզում, Կամրջաձորում, Հաղբատում և Սանահինում հիմնադրված վանական միաբանությունների մասին գրում է, որ դրանք կազմակերպվել են «ըստ... ; կանոնին

օգտագործի այն։ Եվ ոչ միայն վերջինս, այլ մի շարք կեղծ կանոնախմբերից, որոնց իսկության վրա չի կասկածել, վերցրել է երբեմն ընդարձակ նյութեր և օգտագործել Դատաստանագրքի տարբեր հոդվածներում, տալով դրանց օրենքի պատշաճությանը հասնող ուժ. օրինակ՝ Երկրորդ Նիկիական կանոնախմբի Ջ և ՁԹ կանոնները նա արտահայտել է Դատաստանագրքի Ա մասի Հ և ՀԱ հոդվածներում, Բարսեղ Կեսարացու կանոնախմբի ԽԴ, ՁԴ, ՄԸ, ՄԹ, ՄԺ, ՄԺԱ, ՄԺԹ կանոնները՝ համապատասխանաբար ՁԳ, ՁԴ, ՂՋ, ՂԷ, ՂԸ, Ղ, ՂԱ հոդվածներում, Թադեոս առաքյալի ԼԱ կանոնը՝ ՂԲ հոդվածում, դարձյալ Բարսեղ Կեսարացու կանոնախմբի ԻԷ, ՁԸ, ՂԷ, ՃԱ, ՃԵ, ՄԱ, ՄԲ կանոնները համապատասխանաբար արտահայտել է Դատաստանագրքի Բ մասի ՂԳ, ՂԴ, ՃԺԷ, ՂԵ Ճ, ՃԱ հոդվածում, Թադեոս առաքյալի ԼԳ կանոնը՝ ՃԲ հոդվածում և այլն։

XIII դարի մատենագիր Հովհաննես Երզնկացու «Խրատ հասարակաց քրիստոնէից՝ քահանայից եւ ժողովրդոց...»[1] աշխատության մեջ «ծաղկաքաղ արարեալ» բերված են Կանոնագրքի մի շարք կանոնախմբերից բավականին նյութեր. օրինակ՝ Առաքելական, Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի, Բար-

սահմանադրութեանն սրբոյն Բարսղի», օրինակ, Սեանում «միացեալ ժողովեցան եղբարց բազմութիւն, կանոնադրութեան սահմանաւ սրբոյն Բարսղի, միակրօնք ի տան Աստուծոյ եղեալ...» (Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, հրատ. Ստ. Մալխասյանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 181, տե՛ս նաև էջ 160, 173—174)։ Մի այլ տեղ անդրադառնալով Սարգիս Ա Սևանեցի կաթողիկոսի ապրելակերպին գրում է. «ժրաջան աղօթիւք ի տուէ և ի գիշերի կատարէր զկանոն կարգի կրօնաւորական սահմանին, պնդութեամբ վարեցեալ և պահոցն սրբութեամբ և ձևով մարմնոյ որդունակ սրբոյն Բարսղի յաստուածաբանէն ներբողեալ» (նույն տեղում, էջ 260, ամենուր ընդգծումը մերն է—Վ. Հ.)։ Ասողիկի հավաստումները, թե վանական միաբանությունները իբր կազմվել են ըստ Բարսեղ Կեսարացու կանոնական սահմանման, կարող են կասկածելի լինել, որովհետև չորս դեպքում տեղեկությունները միանման ձևով է հաղորդում, կարևորն այն է, որ Ասողիկը փորձում է այդ գործողությունները հիմնավորել Բարսեղ Կեսարացու նշված կանոնական սահմանումով։

Մեր Մատենադարանի № 3031 ձեռագրում, որը հայտնի է Սանահինի քյոթուկ անունով, ես գտնում ենք նշում Բարսեղ Կեսարացու այդ բնագրի մասին. «...զՍիմէան քաջ քարտուղարն Սանահնու, որ զՍրբուհոյ Աստուածածնիս հիմնարկութեանն և աւարտմանն ականատես էր եղեալ, որ ի ժամուն յայնմիկ գրել (sic) զգիրս Բարսղի Կեսարացւոյ յաղագս ճգնաւորաց...» էջ 19բ)։ Կանոնագրքում նման կանոնախումբ չենք գտնում ո՛չ Բարսեղ Կեսարացու և ո՛չ էլ մեկ ուրիշի անուններով։ Սակայն Կանոնագրքից դուրս մեզ հայտնի է նրա մի կանոնախումբը, որի հայերեն հնագույն թարգմանությունը պահվել է մեր Մատենադարանի մեզ հայտնի մի քանի ձեռագրերում (№№ 659, 822, 1500 և այլն)։ Այս բնագրի հունարենը մեզ հասել է։ Բարսեղ Կեսարացու նամակների նոր հրատարակության առաջին հատորի 52—57 էջերում (Saint Basilae Lettres, t. I, par Yves Courtonne, Paris, 1957) գտնվում է սույն բնագրի հունարենը Περὶ τελειότητος βίου μοναχῶν (Վանականների կատարյալ վարքի մասին) խորագրով։ № 822 ձեռագրում խորագիրը պահվել է այսպես. «Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի թուղթ առ սուրբն Գրիգոր Աստուածաբան եպիսկոպոս Նազիազու յաղագս կրոնական վարուց» (էջ 128ա)։ Սույնի վերջին հատվածը բավական մոտ է հունարենի վերնագրին։ Այստեղ խոսվում է այն մասին, թե ինչպես պետք է վանականը պահի իրեն իր կենցաղավարության մեջ։ Ասողիկի քառիցս հիշատակությունը արդյո՞ք սույն բնագիրն է ակնարկում, որոշակի և անվերապահ պատասխանել դժվարանում ենք։ Սակայն այն փաստը, որ այս կանոնախումբը վանականների կենցաղավարության մասին է, և այդ հարցի մասին Բարսեղ Կեսարացուց մեզ այլ բան հայտնի չէ, ենթադրում ենք, որ Ասողիկը ակնարկել է սույն կանոնախմբին։

[1] Նշում ենք Մատենադարանում պահվող այս գործի բազմաթիվ ձեռագրերից միայն մեկը՝ № 581, էջ 178ա—262բ։

սեղ կեսարացու, Ներսես Բ Բագրեվանդացու, Հովհ. Օձնեցու, կեղծ Ներսեսի և այլ կանոնախմբերից[1]։ Նույն աշխատության Սիրո մասին գլխում[2] հեղինակը բերում է Բարսեղ Կեսարացու ՃԹ կանոնը։

Գրիգոր Տաթևացին «Գիրք հարցմանց» աշխատության[3] իններորդ հատորի 52-րդ պրակում «Վասն է՞ր ազգն Ֆռանկաց զերկու օր պահոցն լուծանէ» հարցին պատասխանելիս հիշելով Նիկիայի և Բարսեղ Կեսարացու կանոնները, մեջ է բերում Եփրեմ Ասորու կանոնախմբի Բ և Գ կանոնները[4]։

Քրիստոսի ծնունդը և մկրտությունը մի օրում՝ հունվարի 6-ին, թե տարբեր օրերում՝ դեկտեմբերի 25-ին և հունվարի 6-ին տոնելու վերաբերյալ միջնադարում ընթացել են բորբոքված վեճեր։ Այդ վեճերը մասնավորապես սուր բնույթ են կրել, երբ Արևմուտքից հայ եկեղեցուն սպառնում էր եկեղեցական միության խնդիրը։ Այդ վեճերը արտահայտվել են մատենագրական զանազան նյութերում։ Մատենադարանի № 502 ձեռագրում պահվել է այսպիսի մի գործ «Վկայութիւնք վասն ծննդեանն Քրիստոսի եւ մկրտութեան. զի պարտ է տօնել ի միում յաւուր ի յունուարի ի վեցն»[5]։ Այստեղ համառոտ և ընդարձակ քաղվածքներ են բերված Հովհ. Երուսաղեմացու, Նեկտարի, Գրիգոր Աստվածաբանի, Հիպպոլիտի, Սեբերիանոսի, Մանուելի, Մելիտոնի, Կարնո ժողովի[6] կանոնագրքում գտնված կանոնախմբերից իրենց դրույթների հաստատման և ճշտության մասին։ Նման մի գրվածքի հանդիպում ենք վերևում նշված № 3919 ձեռագիր տոնացուցքի տարբեր մասերում, ուր քաղվածաբար և ընդարձակ ձևով բերված են Առաքելական, Նիկիայի, Աթանասի, Սահակ Պարթևի, Եփրեմ Ասորու, Եպիփան Կիպրացու, Սեբեոս Կանոսի, Հիպպոլիտի, Նեկտարի, Մանուելի, Մելիտոնի, Լավոդիկեի և Կարինի ժողովի կանոնախմբերից[7]։

Կանոնագիրքն օգտագործելու հետաքրքիր փաստերի հանդիպում ենք XVIII, XIX և XX դարի առաջին երկու տասնամյակներում։

1781 թ. Ռուսահայ թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանցը Նորահիմն քաղաքի՝ Նոր Նախիջևանի հոգևոր դատարանի համար կազմում է «Կանոնադր-

---

[1] Նույն տեղում, էջ 202աբ, 204բ, 205ա—207բ, 210աբ, 215բ, 216բ, և շար.։

[2] Նույն տեղում, էջ 198բ։ Այս գտնում ենք նաև № 9063 Ձեռընտիրում (1623 թվի ընդօրինակություն), ուր բերված է Բարսեղ Կեսարացու ՃԲ և ՃԳ կանոնները (էջ 8բ)։ Նույն ձեռագրի տարբեր գլուխներում բերված են առանձին կանոններ. օրանակ՝ «Կանոն վասն երդմանն» գլխում Քրիստոսին ուրանալու դեպքում մատնացույց է արվում Բարսեղ Կեսարացուն վերագրված է կանոնը (էջ 4ա), «Ցաղագս պսակի եւ խրատ վասն ամուսնութեանն» գլխում՝ Սիոն կաթողիկոսի (Պարտավի) կանոնախմբի ԺԶ կանոնը հետևյալ խմբագրությամբ՝ «Ցառաջին ժամանակին սուրբ հարքն արգելին զազատս եւ զանազատս յարեան մերձաւորութենէ, բայց այժմ լուծեալ տեսանեմք զկանոնք սուրբ հարցն՝ մանաւանդ յազատաց, զի անխտիր խառնին յիւրեանց մերձաւորն անկարգ ամուսնութեամբ, այլ մերով բանիւ, զոր գրեմք ի հրամանաց առաջին սուրբ հարցն մի՛ իշխեսցեն ազգականք ամուսնութեամբ զուգիլ. ապա թէ ոչ՝ նզովեսցին ի մէնջ եւ ի սուրբ [հար]ցն կանոնաց..., (էջ 3բ) և այլն։

[3] Կ. Պոլիս, 1729։

[4] էջ 651։ Նույն աշխատության մի այլ մասում, երբ խոսվում է անապական պատարագի մասին, Գրիգոր Տաթևացին հիշում է Առաքելոց և Կղեմեսի կանոնները (էջ 548), սակայն Տաշյանը նրա բացատրությունը իրավացիորեն համարում է «անճիշտ և կամավոր մեկնություն» (Վարդապետութիւն առաքելոցն, էջ 252—253)։

[5] էջ 146ա—162բ. Հմմտ. «Արարատ», 1896, Հավելված, էջ 49—52,

[6] Նույն տեղում, էջ 146բ—148ա, 153ար, 155աբ, Հմմտ. № 4405, էջ 227ա և շար.։

[7] էջ 208ա—217բ։

րութիւնք»[1]։ Վերջինս բաղկացած է վեց մասից և 126 գլխից[2] (իմա՛ կանոն կամ հոդված)։ «Բան առ բարեսէր ընթերցողս» առաջաբանում հեղինակը դրում է. «Զառաջակայ կանոնս ոմանս ծաղկաքաղ արարեալ ի կանոնաց նախնի հարց սրբոց, եւ սրբոյ եկեղեցւոյ Հայաստանեաց հովուապետաց, ընծայեցի նորոյ հոգեւոր դատարանին մերոյ եւ նորաշէն քաղաքիս Նախիջեւանայ»[3]։ Առաջին մասի է գլխում խոսելով եպիսկոպոսների կարգման և սրանց պարտավորությունների մասին, վերջում ավելացնում է. «Տես ի կանոնս Կղեմայ ի գլուխն ԼԶ. ԼՐ ԼԹ եւ զայլ կանոնս սրբոց հարց, եւ ի յԱնտիոքայն, գլուխ ԻԴ, ԻԶ, եւ ի կանոնս ազգիս Հայոց յատուկ ժողովոց»[4]։ Քահանաների մասին խոսելիս Բ մասի ԺԶ գլխում գրում է. «Վասն քահանայից անթիւ են կանոնք, այլ մեք այսպէս գրեմք. եթէ քահանայ ոք ունի գԿանոնգիրսն, ընթերցցի եւ զիւր կանոնն գիտասցէ, եւ որ ոչ ունի զԿանոնգիրքն, թող զՄաշտոց գիրքն կարդայ...»[5]։ Հոգևոր պաշտոնյաների եկամտի մասին խոսելիս վերջում ավելացնում է. «Տես ի Կանոնգիրսն»[6] (ամենուր ընդգծումը մերն է—Վ. Հ.)։ Այս կանոնադրությամբ, ինչպես նշում են հրատարակիչները, «ոչ միայն այս (Նոր Նախիջևանի—Վ. Հ.), այլև բոլոր Ռուսաստանի մյուս վիճակները[7], այսինքն մինչև 1836 տարին»[8], մինչև Պոլոժենիայի գործադրությունը առաջնորդվել և կառավարվել են։ Իհարկե Հովսեփ Արղությանցի վերևում նշված կանոնագրությունքը հոգևոր մի վիճակի համար էր։ Նման կանոններ, թերևս ավելի համառոտ բովանդակությամբ, կազմել են այլ վիճակներում ևս, օրինակ, Տիդրանակերտի վիճակում «ինչ-ինչ ի կանօնաց նախնեաց էին անհետ արարեալ եւ զբազում անվայել եւ վնասակար իրս իւրեանց ի բնէ օրէն համարեալ նոքօք վարէին»[9]։ Այս պայմաններում, 1825 թ. հոգևոր առաջնորդ Կարապետ վարդապետի ջանքերով և «հաճութեամբ գլխաւորաց» կազմվում են 12 կանոններ, այնուհետև «համայն ազգօք, որք են աստ, ընդհանրական սինօթ արարեալ ԺԴ պատուիրա-

---

[1] *Տե՛ս Մասեաց աղաւնի եւ ծիածան Հայաստանեայց, Թեոդոսիա, 1864, էջ 75—80, 110—112, 135—139, 230—233, 290—292։*

[2] *Նշված առաջաբանում Հովսեփ Արղությանցը թեև նշում է այդպես (էջ 72), սակայն երկշաբաթաթերթի 1864 թվի համարների նշված էջերում տեղ են գտել հինգ մասերը 99 գլուխներով, 6-րդ մասը իր 27 գլուխներով, հաջորդ համարներում չգտանք։ 1865 թվի 161—163, 189—192 էջերում գտնում ենք նույն հարցի մասին պարզաբանումներ, բայց դրանք վեցերորդ մասը չեն կազմում։*

[3] *Նույն տեղում, էջ 77։*

[4] *Նույն տեղում, էջ 78։*

[5] *Նույն տեղում, էջ 111։*

[6] *Նույն տեղում, էջ 137։ ԻԶ հոդվածում գրում է. «Հարկ է տեսանել եւ ի կանոնգիրքս, որ ի կանոնս առաքելոց, զոր ի ձեռն Կղեմայ...», նույն տեղում, էջ 139։*

[7] *Այդ մասին ահա թե ինչ է գրում Ռուսաստանի հայոց հովվապետ Հովհաննես արքեպիսկոպոսը Ներսես Աշտարակեցուն 1825 թվի դեկտեմբերի 26-ին. «Կոնսիստորեան մեր ի սկզբանէ հաստատութեան իւրոյ մինչեւ ցայժմ ունի ինքեան կանոն կառավարութեան զիոքրիկ մատեանն իրաւանց, զոր հանգուցեալ նախընթացն մեր յառաջնորդութեան վիճակին սրբազան Յովսէփ ընտրեալն ի կաթողիկոսութիւն Հայոց, քաղեալ ի կանոնաց եկեղեցւոյ մերոյ եւ ի խրատուց ծխարանին մերոյ, այն է, Մաշտոցին,...որով եւ վարի վիճակ ամենայն որպէս դատաստանական կարգաց» (Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժին, ֆ. կաթ. դիվան, թղթ. 51, վավ. 129, էջ 1ա. այսուհետև ՄԱԲ),*

[8] *Մասեաց աղաւնի եւ ծիածան Հայաստանեաց, 1864, էջ 74։*

[9] *ՄԱԲ, կաթ. դիվան, թղթ. 53, վավ. 26։*

նրս եղաք եւ հաճութեամբ համայնից կնքեցաք»[1]։ Եվ այս «Զքսան եւ հինգ բանից կանոնականաց զօրինակսն» Կարապետ վարդապետը Հովհաննես քահանայի միջոցով 1826 թվի մայիսի 18-ին ուղարկում է կաթողիկոսին ծանոթանալու և հատուկ կոնդակով դրանց գործադրության թույլտվություն ստանալու նպատակով։ Այս կանոնների մի մասի սկզբնաղբյուրը Կանոնագիրքն է. «որոց (կանոնների —Վ. Հ.) ոմանք են ի հաստատութիւն սրբոց Նախնի կանօնաց»[2]։ Վերևում բերված քաղվածքները վերցրինք Կարապետ վարդապետի՝ կաթողիկոսին ուղղված գրությունից, իսկ կանոնները այստեղ չենք գտնում։ Շարունակելով մեր որոնումները արխիվի մի այլ թղթապանակում՝ հանդիպեցինք միայն 12 կանոնների[3], որոնք վերաբերում են հասի ու չհասի և ընդհանրապես ամուսնության հարցերին։

Հոգևոր բարձր իշխանությունների գրություններում հաճախ ենք հանդիպում Կանոնագրքից կատարված քաղվածքների այս կամ այն հարցը բնութագրելու և կամ վճռի հիմք հանդիսանալու վերաբերյալ։ Վիրահայոց հոգևոր առաջնորդ Ներսես Աշտարակեցին 1815 թ. փետրվարի 5-ի գրությամբ Մադախլուի Հովսեփ քահանային պատժում է ապօրինի պսակ կատարելու պատճառով։ Մեղադրանքը հիմնավորվում է Կանոնագրքի մի քանի կանոնախմբերից բերված քաղվածքներով. օրինակ՝ Կղեմեսի 37, 57-րդ, Գրիգոր Լուսավորչի 8-րդ, Բարսեղ Կեսարացու 215-րդ (բնագրում նշված է 214) կանոններով[4]։

Կանոնագրքի օգտագործման փաստերի հանդիպում ենք նաև XX դարի առաջին երկու տասնամյակներում։ Գեորգ Ե կաթողիկոսը 1915 թվի նոյեմբերի 26-ի գրությամբ սինոդին հայտնում է. «ի նախնեաց անտի սուրբ եւ առաքելական եկեղեցիս Հայաստանեայց զհետ եղեալ կանոնաց սահմանելոց յազգային ժողովոց, յառաքելաշաւիղ հայրապետաց եւ հարանց սրբոց, առաջնորդէր բանաւոր հօտին իւրոյ ի բարի վարս եւ յանարատ կեանս...»[5]։ Այնուհետև հիշեցնում է, որ «հոգեւոր ատեանք մեր, յորս քննին եւ ի յայտ ածին առն եւ կնոջ ի միմեանց եւ ի կապիցն օրինական ամուսնութեան, միանգամայն զանց արարեալ զկանոնօքն հնոց եւ ոչ ունելով նորս եւ աներկբայս եւ ոչ ուղեցոյցս, թէ

---

[1] Նույն տեղում։

[2] Նույն տեղում։

[3] ՄԱՌ, կաթ. դիվան, թղթ. 51, վավ. 272։ Ներսես Աշտարակեցին 1817թ. հոկտեմբերի 6-ի թվագրությամբ Վրաստանի Թեմի քահանաների համար մշակում է 13 կանոններ, թե նրանք ինչպես են իրենց պահելու եկեղեցում (ՄԱՌ, կաթ. դիվան, թղթ. 31, վավ. 77), կամ կանոններ Քաղման վերաբերյալ (նույն տեղում, թղթ. 32, վավ. 170. 1818 թիվ հունվարի 2)։ Այս երկու դեպքում էլ կանոնագրքից օգտվելու հետքեր չգտանք։

[4] ՄԱՌ, կաթ. դիվան, թղթ. 27, վավ. 4։ Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հատ. Ա, Կղեմեսի Լէ, Ոէ, Գր. Լուսավորչի Ը (էջ 85, 90, 246)։ Թիֆլիսի հայաղն իշխան Սողոմոն Արղությանի դուստրը ամուսնանալու նպատակով երկրորդ անգամ է մկրտվում։ Այս բանը մեծ հուզմունք է առաջ բերում Թիֆլիսի հայ հասարակության մեջ։ Ներսես Աշտարակեցին մի գրությամբ (անթվական, բայց մինչև 1816 թվի փետրվարի 29-ը) աշխատում է հանգստացնել հասարակությանը։ Նա կրկին դիմում է Կանոնագրքին իր ասածները հավաստելու նպատակով. «նախ առաջին առնեմ աստանօր զկանոնս, զորս ունի եկեղեցի Հայաստանեաց իբրեւ զհիմունս խորհրդոյ սրբարար մկրտութեան եւ դրոշմի...»։ Ապա «ի Կանոնագիրս Հայոց»-ից մեջ է բերում Կղեմեսի ՀԹ, Զ, ՁԱ կանոնները և այլն. ՄԱՌ, կաթ. դիվան, թղթ. 29, վավ. 13։ Գաղտնի պսակ կատարող քահանաներին պատժելու Մ. Օրմանյանի կոնդակը տե՛ս «Լոյս» (Կ. Պոլիս), 1907 թ. № 14, էջ 209—211։

[5] ՊՊԿԱ, ֆ. 57, գ. 49, էջ 45ա։

յո՞ր դէպս իրաւունք իցեն բաժանիլ զամուսինս ի միմեանց...»[1]։ Վերջում պահանջում է սինոդի անդամներից, որ ուսումնասիրեն վերջին երեսուն տարվա սինոդում գտնվող ամուսնալուծութեյան գործերը, դրանց հանգամանքները, և պարզեն, թե նման դեպքերում «որպիսիք ի հնոց կանոնաց դործադրեալք իցեն, յո՞ր դէպս խոտորմունք ի նախնեաց սովորութեանց եղեն...»[2] և այլն։

Ամուսնութեյան և ամուսնալուծութեյան հարցերում հայ եկեղեցու մենաշնորհը ակնառու կերպով երևում է Եվրոպայի հայոց հոգևոր առաջնորդ Ուքաեյանի՝ Մանչեստրից 1909 թվի օգոստոսի 27/9 սեպտեմբերի Մատթեոս Բ կաթողիկոսին ուղղված գրութեյունից[3], ուր ասված է. «Հայ. եկեղցին յուր զավակաց մեջ պատահած ամուսնական խնդիրներու մեջ երբեք չընդունիր ո՛չ փաստաբան և ո՛չ դատարան. հետևաբար, ես իբրև եպիսկոպոս հայ. եկեղեցվո այս մասին ոչ մի խոսք չունիմ Ձեզ (փաստաբանին —Վ. Հ.) ասելիքս»[4]։

Քանի որ Կանոնագրքի VIII դարի խմբագրութեյունը ստեղծել էր հայոց կաթողիկոս Հովհ. Օձնեցին և իր ժողովածուում նա ընդգրկել էր հայ եկեղեցու կողմից արդեն ընդհանուր ճանաչում գտած և ընդունված տիեզերական,

---

[1] Նույն տեղում, էջ 45բ։

[2] Նույն տեղում, էջ 46ա։ Հայ եկեղեցու ընդունած կանոնների հաստատ պահելու պահանջը արտահայտված է եպիսկոպոս Ձեռնադրվողի երդմնագրում։ Նման մի քանի երդմնագրեր (191՛ թվ ապրել) տե՛ս ՊՊԿԱ, ֆ. 57, գ. 454։

[3] ՊՊԿԱ, ֆ. 57, գ. 1350։

[4] Նույն տեղում, էջ 25ա։ ՊՊԿԱ-ի 57-րդ ֆոնդում պահվել է № 673 գործը (ցուցակ № 1։ Գործը բաղկացած է 171 թերթից։ Սրա վրա մեր ուշադրութեյունը հրավիրեց Գր. Հ. Կարախանյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալութեյունը) «Ծանկ եկեղեցական կանոնանց» խորագրով։ Գրվածքի հեղինակը և ժամանակը հայտնի չեն։ Ձեռագրից կարելի է ենթադրել, որ այն գրվել է XIX դարի վերջերին կամ XX դարի սկզրներին։

Ինչպես երևում է «Առ ընթերցողս» հեղինակի առաջաբանից (վերջինս երկու օրինակով է. նախ՝ գրված է սկզբում, էջ 1—2, թերի, և վերջում՝ 170բ—171ա լրիվ) նա ուսումնասիրելով էջմիածնի մատենադարանում պահվող կանոնագիրք-ձեռագրերը, ճառընտիրները, զանազան հարցերի մասին սինոդի դատական գործերը և վճիռները, քաղվածաբար վերցրել է անհրաժեշտ նյութեր։ Ծուրաքանչյուր քաղվածքի վերջում նշված է, թե դրանք որտեղից է վերցրել։ Այս նյութերը հեղինակը դասավորել է այբբենական կարգով՝ Ա—Օ (էջ 3ա—126ա), օրինակ, արեղա, ազանութիւն, ագապ և այլն։ Աշխատութեյան նպատակի մասին հեղինակը գրում է. «Ներկա ժողովածուն... պարունակում է իր մեջ այն բոլոր կարգերն ու օրենքները, որոնցով ղեկավարվել են հայ եկեղեցին ու հայ ժողովուրդը երկար դարեր, քրիստոնեութեյան Հայաստան մուտք գործելուց գրեթե մինչև մեր օրերը և որոնցից շատերը նույնիսկ մինչև այսօր էլ գոյութեյուն ունեն մեր եկեղեցում և էական նշանակութեյուն ունեն մեր հոգևոր և հոգևոր—վարչական գործերում։ ...Սույն աշխատութեյունս ուրեմն մեկ կողմից մի կարևոր պակաս լրացնում է զուտ պատմա-բանասիրական տեսակետից, մյուս կողմից-մանավանդ մեր այս օրերում-գալիս է մի անհրաժեշտ ծառայութեյուն մատուցանելու հատկապես հայ եկեղեցուն, սրա կանոնական, վարչական բարեփոխութեյանց առթիվ, ...» (էջ 170աբ)։

Գործի հաջորդ էջերում՝ 127ա—161ա գտնվում է նաև Արխտակես Դավթյանի «Կանոնք ս. ժողովոց եւ հարց եկեղեցւոյ» (պրակ Ա, Թիֆլիս, 1904) աշխատութեյան սկզբունքով կազմված մի այլ աշխատութեյուն՝ սկզբից թերի, մնացել է ԿԱ վերնագրի տակ դրված նյութերի վերջին մի փոքր մասը։ Ավարտվում է Ձէ «Յաղագս նկարեալ պատկերաց թէ որք են երկրպագելիս» վերնագրի տակ նշված նյութերով։

Ակադ. Աշոտ Հովհաննիսյանը ծանոթանալով սույն աշխատութեյան ձեռագրին լուսանցքում գրել էր, որ «անհեղինակ այս գործը ամենայն հավանականութեյամբ պատկանում է Բաբգեն Աղավելյանի գրչին. իր սարկավագութեյան ժամանակ, այս մասին ինձ 1914—1915 թվականներին պատմում էր ինքը հեղինակը...։ Բաբգենը հետագայում սինոդի անդամ էր և հեղինակութեյուն էր համարվում կանոնական և մասնավորապես ամուսնալուծական հարցերում»։

Հոդ. ԺՂ., էջ 12։ Այս հարցի մասին մանրամասն իմանում ենք նաև Մովսես Կաղանկատվացու աշխատությունից, ուր VIII դարի առաջին կեսի համար կան հետաքրքիր տեղեկություններ։ Ամենուրեք չենք համարում այդ տեղեկությունները բերել ամբողջությամբ. «Փոխանորդ դաճոն հայրապետութեանն Աղուանից երջանիկն Միքայէլ զկնի Սիմէոնի. և եկաց ամս երեսուն և հինգ։ Յաւուրս սորա լինի առնակնութիւն իշխանացն Աղուանից, Վարազոյ՝ վախտանգայ որդի, քոռն Վարազմանայ, զոռոնակիցն իւր Վարդանուհի արար կին. և տէր Միքայէլ տարագրեալ զնա, թէ մի՛ յանդգնիր առնել, զի քոռունք էք։ Իսկ նորա զկորստեան խորհեալ խորհուրդ գրէ առ Թալիւէ՝ Վրաց կաթուղիկոս, օրհնել զանօրէն ամուսնութիւնն։ Եւ այլափառն այն այր այսպէս հրամայեաց. «Եթէ դուք յիմում խոստովանութեան էք՝ օրհնեալ էք. ապա եթէ յԱղուանից աւանդութեան էք՝ դուք գիտէք»։ Յայնժամ հայրապետն Աղուանից Միքայէլ արար ժողով ուխտի եկեղեցւոյ իւրոյ. և կոչէ առ ինքն զհոչակելի այրն՝ զՍողոմոն, որ Մաքենացւոց էր առաջնորդ ուխտին սուրբ, և ըստ ժամանակին Հայաստանեայցն էր պարծանք։ Եւ դումարեալ գնոսա ի Շամքոր ի Բերդոյ վանս միաբան ժողովով նզովեցին զտունն Վարազոյի, և ի նոյն ժամու հասանեն Տաճիկք և ի գոգ մօրն փողոտեն սրով, և զմիւս որդին ձին տարեալ սպան։ Եւ գրեցին քոռունք ժողովականքն առ Թալիւէ Վրաց եպիսկոպոս. «Եթէ դո՛ իշխեցեր լուծանել զկանոնեալսն ի սուրբ առաքելոցն աշակերտաց, որք յԱնտիոք ժողովեալ տարագրեցին զՊողոս Սամոսատացին ի սուրբ եկեղեցւոյ և սահմանեցին տառս կանոնականս, «Թէ մի՛ ոք իշխեսցէ զագգականն առնուլ ի կին», և սրբոյն Աթանասի կանոնական հրաման է, «Եթէ չէ ամուսնութիւն, այլ պոռնկութիւն». և Լրանալուն Բարսղի վասն սորին գործոյ ասացեալ։ Արդ՝ մեք ուղղափառութեան ժողովքս և դքեղ նզովեցաք ընդ ամենայն հերձուածողս, և արդարադատին Քրիստոսի մատուցուք բազմապատիկ փառս» (Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, հտ. Գ, գլ. ԺԳ, էջ 359—360. միևնույն միտքը խիստ համառոտ տե՛ս նաև Աղուանից կաթողիկոսների ցանկում, նույն տեղում, էջ 393, որ բառացի կրկնել է Կիրակոս Գանձակեցին, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 197. տե՛ս նաև էջ 196, Մովսէս Կաղանկատվացի, հտ. Բ, գլ. ԼԲ, էջ 244—245, հտ. Գ, գլ. ԻԴ, էջ 392։ Վերևում նշված կանոնախմբերից կատարված մեջբերումները համապատասխանում են Հարանց հետևողաց ծ, Աթանասի ծէ և Բարսեղի ԼԳ, ԼԴ, ԼԷ հոդվածներին. տե՛ս Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 106, 197, 352—354)։

Ի դեպ, արյունակիցների երրորդ աստիճանի ամուսնությունն արգելված ենք գտնում Առաքելական ԼԳ, Շահապիվանի ԺԳ և Վաչագանի ծ հոդվածներում։ Նշանակում է՝ քե եղած արգելքներին հակառակ նման ամուսնությունները շարունակվել են V դարից մինչև VIII դարը՝ Սիոն կաթողիկոսի ժամանակաշրջանը։ Դարձյալ հետաքրքիր է, որ նման ամուսնությունների մասին խոսելիս, եթե Առաքելական, Շահապիվանի և Վաչագանի համապատասխան կանոններում հարցը վերաբերում է հասարակության բոլոր շերտերին, ապա Սիոնի կանոնախմբում առանձնապես շեշտվում է իշխանների մասին՝ «ամենաւնդ ազատաց» (հմմտ. նաև Վ. Բաստամյանցի կարծիքը, Փորձ, 1881, IV, էջ 55)։ Այս երևույթը ուներ տնտեսական խոր պատճառներ։ Մովսես Խորենացին խոսելով մերձամուսնությունն արգելելու՝ Աշտիշատի ժողովի որոշման մասին, գրում է. «և զերկուսս զայսոսիկ յազգաց նախարարացն բառնայ. մի՝ զմերձաւորաց խնամութիւն, զոր վասն ազանիլոյ սեպհական ազատութեանն առնէին...». (Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 280. ընդգծումը մերն է—Վ. Հ.)։

Ավելի ուշ, Ներսես Շնորհալին խոսելով անչափահասների ամուսնության դրդապատճառների մասին, գրում է. «Մի՛ և տղայոց անմեղաց յաղագս ազանութեան ճայբեցի ժառանգութեան, կամ վասն այլ ինչ պատճառի, պակ դիցէ ոք ի քահանայից» («Թուղթ ընդհանրական», Էջմիածին, 1865, էջ 83. ընդգծումը մերն է—Վ. Հ.)։

Մեզ թվում է «հայրենի ժառանգութեանն» պահպանման համար, մանավանդ «ազատոն» շրջանում, կյանքում ոտնահարվում էին նման որոշումները, թեև այս երևույթը բնախոսական առումով բերում էր և սերնդի սպառում, ինչպես կարդում ենք վերևի նշված հատվածում, որը և Մովսես Կաղանկատվացու գնահատմամբ վերուստ տրված պատիժ էր։

Սակայն ավելի ուշ, պայմանների անհրաժեշտության բերումով, լվովահայերի՝ Միքայել կաթողիկոսին ուղղված 1572 թ. ապրիլի 15-ի նամակում (Կամենից, Վենետիկ, 1896, էջ 228—231) խոսվում է լվովահայերի մերձամուսնության փաստերի մասին. «Ես Ծ տուն հայ կամք

բնակեալ ի մէջ Իլով քաղաքի· ...Ծանուցանեմք... զմեր սակաւութիւնս ի մէջ այլասեռից. ամէնքս ազգասէր եմք, խառնակել եմք հետ միմեանց, ոմն ազգակցութեամբ և ոմն խնամութեամբ, չի լինիր որ այս բանս ի մեր մէջն չլինի· երթամք ի ֆռանկէ և յոուզէ աղջիկ առնումք և աղջիկ տամք, հաւատոց պատառում կը լինի, և յետին չար կու լինի քան զառաջինն. լավ է մասնաւոր չար լինալու քան զբոլն չար»։ Այնուհետև խնդրում են «ժողովք արա. գլուխ եպիսկոպոսաց և գլուխ վարդապետաց, և մեր բանն առաջի ձեր առնուք և աղէկ քննութեամբ մեզ բարի ճանապարհ ցուցանէք... (նույն տեղում, էջ 230)։

Այստեղ, արդեն, խնդիրը վերաբերում է ազգապահպանության։ Այս մասին նաև պետք է հիշել, որ 1655 թ. Նիկոլ Թորոսովիչը հատուկ ժողովով վերականգնում է Ներսես Շնորհալու ցուցումը, «եթէ յերկոցունց կողմանցն ի չորրորդ աստիճանի իցէ... բայց սյս կէտս յետոյ խափանեցաւ...» (նույն տեղում, էջ 141)։

Մի այլ՝ 1694 թ. հիշատակարանում գրիչը նշելով ծանր ձարկերի մասին, գրում է. «Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն անառակ գործոց մերոց։ Եւ մեծ անառակ գործքն մեր այս է, որ ազգապղծութիւն բազում կու լինի ի միջի մերում...» («Ազգագրական Հանդէս», Բ գիրք, 1897 թ., էջ 291)։

Հոդ. ԺԹ, էջ 15։ Ներքոհիշյալ մի քանի ձեռագրերում հոդվածի միտքը նույնն է, բայց չարադասութիւնն է մի փոքր տարբեր։ Հոդվածը բերում ենք ամբողջությամբ. «Ի. Ժողովրդական ոք որ յաղագս պէսպէս ինչ սխալանաց բանադրեալ յեպիսկոպոսէն թէ մեռանիցի՝ թող չթաղեն քահանայքն և ոչ զերեխայն (№ 649-ը՝ զերեխայ) իւր մկրտել։ Եւ դէպ լիցի երեխայի հասանել այնպիսոյն կամ մեռելոց, քահանայն մկրտեսցէ զերեխայն և թաղեսցէ զմեռեալ ընտանեաց նորա և զայլ կապանսն բանին պնդութեամբ անլոյծ կապեսցէ» (№ 651, էջ 107ա. Համմտ. նաև №№ 649, էջ 117ա, 2964, էջ 161ա, 648, էջ 67ա, 3562, էջ 347ա)։

Հոդ. Ի, էջ 15—16։ Էական տարբերությունը՝ «կնքեսցէ... մկրտեալսն» հատվածի փոխարեն ունեն «տարցէ ի գլուխ զխորհուրդ սուրբ մկրտութեան (№№ 648, 3562-ը՝ մկրտութեանն) ի վերայ վախճանելոյն, զի աւանդեցաւ ի ձեռն (№№ 648, 3562-ը՝ ի ձեռս) հրեշտակաց սրբոց ի Քրիստոս» (№№ 649, էջ 117ա, 651, էջ 107ա, 2964, էջ 161ա, 648, էջ 67ա, 3562, էջ 347աբ)։ №№ 651, 648, 3562 ձեռագրերը չունեն հոդվածի վերջի՝ «Այդ կանոն ի վերայ ակամային դիպեսցի» հատվածը։

Հոդ. ԻԱ, էջ 16։ №№ 649, 651, 2964, 648, 3562 ձեռագրերում, որպես առանձին հոդված, դրված է այս հոդվածի երկրորդ մասը, սկսած «Գեղչաւագ որ յաղագս» հատվածից մինչև հոդվածի վերջը։ Այսպես ունեն նաև համահավաք բնագրի համար օգտագործված մի քանի ձեռագրեր (տե՛ս վերևում, էջ 16, տողատակ)։ Գոչի Դատաստանագրքի Ա մասի ՃԹ հոդվածից (ուր օգտագործված է քննվող կանոնը) մե՞կ քե երկու կանոն լինելը պարզ լի երևում (Դատաստանագիրք Հայոց, էջ 208—209)։ Մենք հետևեցինք ձեռագրերի մեծ մասի ունեցածին, հոդվածների ընդհանուր համարակալումը չխախտելու համար։ № 651 ձեռագրում «քորեպիսկոպոսունք» և «գեղչաւագ» բառերը համապատասխանաբար գրչական սխալով դրված են «չորեպիսկոպոսունք» և «զեղչաւագ» ձևերով (էջ 107բ), իսկ № 648, 3562 ձեռագրերում «ուրուք» բառը՝ «իրիք» ձևով (էջ 67ա, 347բ)։

Հոդ. ԻԲ, էջ 16—17։ Բնագրի «և ի պիղծ մսոյ» հատվածը № 651 ձեռագրում ունի «և անպիղծ մսոյ» ձևը (էջ 107բ)։

Վերջաբան էջ 17—18։ №№ 648, 649, 651, 2964, 3562 ձեռագրերը վերջաբան չունեն։ Ն. վ. Ծովակյանը իր մի հոդվածում («Սիոն» 1944 թ. էջ 26—27) զուգահեռաբար բերելով և քննելով կղեմեսի (միայն մի քանի ձեռագրերում գտնվող, տե՛ս Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 557), Հարանց հետևողաց և Պարտավի կանոնախմբերի վերջում պահվող գրքերի այս ցանկը, իրավացիորեն եզրակացնում է. «Այս կանոնը (իմա՛ Քուլլատրելի գրքերը—Վ. Հ.) իր ներկա ձևի մեջ կրնվի ըլլալ պատահական հավելում մը Պարտավի ժողովին կանոններուն վրա, կատարված խմբագրողի մը կամ ընդօրինակողի մը կողմէ...» (էջ 27)։

ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վերնագիր, էջ 19: *Մի քանի ձեռագրերում վերնագիրը համառոտ է և ունի որոշ շեղումներ, օրանակ, հինգ ձեռագրերում այն այսպես է. «Կանոնք և սահմանք Թաքէոսի առաքելոյն (№ 649-ում՝ սուրբ առաքելոյն Թադէոսի, № 3369-ում՝ առաքելոյն Հայոց)» № 651, էջ 12բ, 650, էջ 21ր, 649, էջ 18բ, 2964, էջ 25բ, 3369, էջ 22ա։ երկու ձեռագրերի ունեցածը բոլորովին այլ բան է. «Առաջին բան կանոնիս առաքելոյն Թաքէոսի (№ 8459-ում՝ չիf Թաքէոսի)» №№ 9311, էջ 9ր, 8459, էջ 10ա, իսկ №№ 648, 657, 659, 3562 ձեռագրերում չկա նման վերնագիր։ Այս չորս ձեռագրերում բացակայում են առանձին հոդվածներ, որոնք կնշվեն իրենց տեղում։*

Առաջաբան, էջ 19—20: *Առաջարանը այս ձեռագրերում ընդարձակ է, բերում ենք ամբողջությամբ. «Սահմանք և կանոնք Թադէոսի առաքելոյ ի գալն նորա յՈւռհայ քաղաք և լուսաւորել դնոսա մկրտութեամբ աւազանին։ Եւ ձեռնադրեաց եպիսկոպոսք և քահանայս և սարկաւագունք և հաստատեցան վարդապետք և աւրէնսուսոյցք։ Եւ եղև պայծառութիւն եկեղեցւոյ Աստուծոյ և սեղանոյ։ Կամեցաւ գնալ անտի, գի քարոզեսցէ և այլոց քաղաքաց։ Եւ կացոյց իւր փոխանակ զԱղդէ կերպասագործ։ Ժողովեցան ամենեքեան հարցանել նմա զկարգս եկեղեցւոյ և զկրաւն քրիստոնէից։ Եւ նա պատմեաց նոցա կարգաւ ըստ հրամանի Փրկչին, որ ունի գլուխս լԲ (№ 659, էջ 44ա, աննչան չեղումներով՝ առանձին բառերի ետեռաչութիւն, ուղղագրական և այլն, այս առաջարանը գտնում ենք նաև հետևյալ ձեռագրերում. №№ 648, էջ 1ա, 649, էջ 19ա, 650, էջ 22ա, 651, էջ 12բ, 657, էջ 97ար, 2964, էջ 25բ, 3369, էջ 22ա, 3562, էջ 269ա, 8459, էջ 10աբ, 9311, էջ 9բ—10ա)։*

Առաջաբանից հետո երեք ձեռագրում դրված է նոր վերնագիր «Թադէոսի կանոնի գլուխ լԲ» № 8459, էջ 10բ, հմմտ. № 9311, էջ 10ա)։ Իսկ № 3369 ձեռագիրն ունի. «Հարցմունք և սահմանք սրբոյ առաքելոյն Թաքէոսի ամենայն Հայոց» (էջ 22ա)։ Սրանից հետո №№ 8459, 9311 ձեռագրերում դրված է հոդվածների բովանդակության ցանկը։ Նման ցանկ, բայց տարբեր, № 657 և համահավաք բնագրի կազմման համար օգտագործված Okmps ձեռագրերում դրված է մինչև առաջարանը։ Մյուս ձեռագրերը չունեն նման որևէ ցանկ։ Ամբողջությամբ բերում ենք այդ ցանկերը։ Ահա №№ 8459, 9311 ձեռագրերի ունեցածը.

«Ա. Վասն եպիսկոպոսի որ խնամէ ազգաւորի։

Բ. Վասն եպիսկոպոսաց տեսութեան։

Գ. Վասն ձեռնադրութեան քահանայի։

Դ. Վասն չձեռնադրելոյ զանպիտանս։

Ե. Վասն զսուրբ սեղանն կանդնելոյ։

Զ. Վասն հացին պատարագին և բաժակին (№ 9311-ում՝ բաժին)։

Է. Վասն զսեղանն աւրհնելոյ և զտունն [Աստուծոյ] (№ 9311-ում՝ չիf և զտունն [Աստուծոյ])։

Ը. Վասն մարմնաւոր ուրախութիւն առնել յաւուրս տօնի։

Թ. Վասն յաղօթս կալոյ եկեղեցւոյ։

Ժ. Վասն որք տգէտութեամբ զոք ձեռնադրեն։

ԺԱ. Վասն որք ձեռնադրեցաւ ոք (ոք-ի վրա նշան, արդյո՞ք այդ բառը պետք է հանել, իսկ № 9311-ը չունի այն)։

ԺԲ. Վասն ամուսնացեալ քահանայից։

ԺԳ. Վասն քահանայից սրբութեան։

ԺԴ. Վասն քահանայի որ երդնու։

ԺԵ. Վասն յանցաւորաց։

ԺՋ. Վասն շնացողաց։
ԺԷ. Վասն որք հեղուն զորդէծնութիւն։
ԺՐ. Վասն քահանայի որ երդնու։
ԺԹ. Վասն որ հեղու զինքն։
Ի. Վասն արուագիտաց։
ԻԱ. Վասն որ ամուսնացեալ և շնայ։
ԻԲ. Վասն ուրացողաց։
ԻԳ. Վասն կախարդաց։
ԻԴ. Վասն շնացողաց որ զմանկունս սպանանէ։
Իե. Վասն մարդասպանաց։
ԻՋ. Վասն որք ընդ անասունս պղծին։
ԻԷ. Վասն որ միով կաթամբ սնեալ են չամուսնանալ։
ԻՐ. Վասն ազգաւորաց որ ամուսնանան։
ԻԹ. Վասն որ զսահմանս փոխէ։
Լ. Վասն տօնս (№ 9311-ում՝ զտունս) առնելոյ։
ԼԱ. Վասն չորեքշաբաթի և ուրբաթի։
ԼԲ. Վասն քառասնորդաց և սուրբ պահոցս (№№ 8459, էջ 10բ—12ա, 9311, էջ 10ա—11ա)։

№ 657 ձեռագրում ցանկն այս է։
ԵԱ. Վասն որ արժան է եպիսկոպոսին կալ ի տեսչութիւն եկեղեցւոյ։
Բ. Վասն առնելոյ զիւրան կամ զօտարս։
Գ. Վասն ձեռնադրութեանն։
Դ. Վասն ընտրողութեանն։
Ե. Վասն սուրբ սեղանոյն։
Զ. Վասն հացի և գինւոյ։
Է. Վասն եկեղեցի աւրհնելոյ։
Ը. Վասն մխիթարութեան ժողովրդեանն։
Թ. Վասն ժողովրդականացն։
Ժ. Վասն տգիտութեամբ ձեռնադրութեան։
ԺԱ. Վասն գարշելոյ ի ձեռնադրութենէ։
ԺԲ. Վասն ամուսնացեալ քահանայի։
ԺԳ. Վասն անձամբ քահանայի։
ԺԴ. Վասն քահանայի որպէս պարտ է։
Ժե. Վասն մկրտելոյ և անգանել ի մեղս։
ԻԶ. Վասն շնալոյ։
ԺԷ. Վասն հեղուլ զինքն։
ԺԸ. Վասն ընդ արու պղծելոյ։
ԺԹ. Վասն ամուսնացելոյ շնալոյ։
Ի. Վասն ուրանալոյ զՔրիստոս և զչանալոյ։
ԻԱ. Վասն կամաւ սպանելոյ։
ԻԲ. Վասն մի մօր կաթան սնելոյ։
ԻԳ. Վասն ազգականաց ամուսնացելոյ։
ԻԴ. Վասն յափշտակելոյ։
Իե. Վասն կատարելոյ տօնին։
ԻԶ. Վասն չորեքշաբաթոյ և ուրբաթի։
ԻԷ. Վասն Քառասնորդաց պահոցս (էջ 97բ)։

Բուն ձեռագրերում էլ այս ցանկերում նշված հաջորդականությամբ ընթանում են հոդվածները, մինչդեռ այդպիսիք գրեթե չեն համապատասխանում կանոնագրքի ունեցածին, որովհետև երբեմն հոդվածների տեղն է փոխված, երբեմն հոդվածներ դուրս գցված, երբեմն էլ հոդվածներ միմյանց միացված և այլն։

Ահա և համահավաքի համար օգտագործված kmps ձեռագրերի ունեցած ցանկը։ Բերում ենք ըստ k ձեռագրի.

ԵԱ. Վասն եպիսկոպոսաց պարկեշտ և անարատ լինել։
Բ. Վասն եպիսկոպոսաց մտապէս սիրել զհատատացեալս։
Գ. Վասն թէ յո՞ր հասակ պարտ է ձեռնադրել քահանայս։

Դ. Վասն եպիսկոպոսաց հրաժարել ի ձեռնադրութեան տգիտաց։
Ե. Վասն թէ եպիսկոպոսին պարտ է սեղան հաստատել։
Զ. Վասն հացի պատարագին, թէ լո՞րում յաւուր պատարագի ի նոյն աւրն եփել։
Է. Վասն եպիսկոպոսաց ժողով առնել ժառանգաւորաց և ժողովրդոց ի սեղան հաստատել։
Ը. Թէ լո՞րում աւուր սեղան հաստատէ եպիսկոպոսն արժան է զենմունք լինել։
Թ. Վասն թէ ի ժամ աղօթից չխօսել այլ ինչ բան, բայց աղաւթից։
Ժ. Վասն ձեռնադրելոց եթէ յայտնի ինչ աղտեղութիւն։
ԺԱ. Վասն թէ յետ ձեռնադրութեանն յայտնի ինչ աղտեղութիւն։
ԺԲ. Վասն եպիսկոպոսաց ոչ առնել կաշառք։
ԺԳ. Վասն ամուսնացեալ քահանայից. թէ ո՞րպէս պատարագ մատուցանել։
ԺԴ. Թէ որք կուսութեամբ ընկալան քահանայութիւն, ո՞րպէս պատարագ մատուցանել։
ԺԵ. Քահանայի որ երդնուցու։
ԺԶ. Քահանայի աղքատասէր լինել և քաղցրաբան։
ԺԷ. Որ միանգամ ի Քրիստոս մկրտին՝ սրբութեամբ կեալ վասն շնացողաց։
ԺԸ. Վասն շնացողաց որ զորդեծնութիւն հեղու ի շնալն։
ԺԹ. Վասն թէ ոք անժուժկալաբար լըլկէ զինքն հոսմամբք։
Ի. Վասն արուադիտաց։
ԻԲ. (sic). Վասն թէ որ առնակին իցէ և շնայ։
ԻԳ. Վասն կախարդաց և ուրացողաց։
ԻԴ. Վասն շնացողաց որ զմանկունս սպանանեն։
ԻԵ. Վասն քրիստոնէից որ ղուրբաթ և ղչորեքշաբթին պահեն։
ԻԶ. Վասն տէրունական տօնից շաբաթ մի պահել և ապա կատարել։
ԻԷ. Վասն զսուրբ Քառասունսն պահել և յաւուր չարշարանաց տեառն տքնել։
ԻԸ. Վասն որ զանասուն պղծեն։
ԻԹ. Վասն ուրացողաց զՔրիստոս։
Լ. Վասն կամաւ սպանողաց զմարդ։
ԼԱ. Վասն որ մի մօր կաթնամբ սնեալ են՝ ոչ է պարտ ամուսնանալ։
ԼԲ. Վասն ազգականաց որ ամուսնանան։
ԼԳ. Վասն որ զսահմանս ընկերին յափըշտակէ» (էջ 26բ—27բ. հմմտ. m, էջ 39աբ, p, էջ 29բ—30ա, s, էջ 32ա—33բ)։

Այս ցանկում բաց է թողնված ԻԱ համարը, իսկ ԺԸ հոդվածը ցանկում վերնադիր չունի։ Ցանկում եղած ԺԸ վերնադիրը վերաբերում է ԺԹ հոդվածին, ԺԹ-ն՝ Ի-ին, Ի-ն՝ ԻԱ-ին. այնուհետև ցանկի և հոդվածների հաջորդականությունն համապատասխանում է։ Մեզ այնպես է թվում, որ, դուցե, ցանկի ԺԸ վերնագրում արտահայտված է ԺԸ և ԺԹ հոդվածների բովանդակությունը։

Ο ձեռագրում ցանկն հետևյալն է.

«Ա. Վասն եպիսկոպոսի որ անարատ լինի, պարկեշտ և ուսուցանող և ոչ արծաթասէր։
Բ. Վասն եպիսկոպոսի որ զամենայն հաւատացեալս միապէս սիրել։
Գ. Վասն եպիսկոպոսի պարտ է քահանայ Լ-ն ամեայ ձեռնադրել։
Դ. Վասն եպիսկոպոսի առաւել հրաժարել ի ձեռնադրութենէ։
Ե. Վասն եպիսկոպոսի հաստատել սեղան ի քարանց։
Զ. Վասն զշերմ հացն զսուրբ սեղանն հանել և զբաժակն անապակ։
Է. Ցաղագս եպիսկոպոսի զսեղանն որ հաստատէ ժողովս արասցէ աթոռակցաց իւրոց։
Ը. Ցորժամ հաստատէ եպիսկոպոսն զսեղանն ի նմին աւուր զենցունս պարտ է առնել։
Թ. Վասն հաւատացելոց յորժամ կամ յաղօթս մի՝ խօսեսցեն յեկեղեցւոջն։
Ժ. Վասն չգիտելոյ եպիսկոպոսն որ ձեռնադրեալ է անարժան քահանայ կամ սարկաւագ։
ԺԱ. Վասն որ ձեռնադրեսցէ եպիսկոպոսն քահանայ ուղիղ և յետոյ շնասցէ քահանային։
ԺԲ. Վասն շնացեալ քահանայի զեպիսկոպոսն վասն կաշառոյ հրաման տայցէ քահանային։
ԺԳ. Վասն ամուսնացեալ քահանայ յորժամ պատարագ մատուսցէ, թէ քանի՞ աւուր հրաժարեսցէ։
ԺԴ. Վասն կուսան քահանայի որ պատարագ մատուսցէ։
ԺԵ. Վասն քահանայի որ երգնուցու։
ԺԶ. Վասն քահանայի պարտ է աղքատասէր և քաղցրաբան լինել։
ԺԷ. Վասն ժողովրդականաց պարտ է անարատ լինել։

ԺԸ. Վասն շնացողաց թէ այր է թէ կին։
ԺԹ. Վասն շնացողաց որ զորդէծնութիւնն հեղուցու։
Ի. Վասն սերմերթնութեան։
ԻԱ. Եթէ ո[ք] ընդ արուի պղծիցի։
ԻԲ. Վասն անառակի որ շնալցէ։
ԻԳ. Վասն կախարդի ։
ԻԴ. Որ շնայ և զմանուկն սպանանէ։
ԻԵ. Վասն չորեքշաբթի և ուրբաթի պահելոյ։
ԻԶ. Վասն տէրունական տօն կատարելոյ որ շաբաթ մի պահեն։
ԻԷ. Վասն քառասնորդաց պահոց։
ԻԸ. Վասն անասնագիտի։
ԻԹ. Վասն որ զՔրիստոս ուրանայ։
Լ. Եթէ ոք իւր կամաւ մարդ սպանանիցէ։
ԼԱ. Յաղագս որ մի մօր կաթամբ սնեալ են։
ԼԲ. Վասն ազգականի որ կին արասցէ։
ԼԳ. Որ զսահմանս ընկերին յափշտակէ» (էջ 323բ—324բ)։

№№ 8459, 9311 ձեռագրերում այնուհետև դրված է վերնագիր. «Կանոնք սուրբ առաքելոյն Թաղէոսի, հարցմունք և պատասխանիք» (էջ 12ա, էջ 11բ)։ Իսկ № 3369 ձեռագիրը քանի որ ցանկ չունի, ուստի երկրորդ վերնագիրը դրված է առաջաբանից հետո. «Հարցմունք և սահմանք սրբոյ առաքելոյն Թաթէոսի ամենայն Հայոց» (էջ 22ա)։

Հոդ. Ա, էջ 20—22: Մի քանի ձեռագրեր «ի տեսութեան» փոխարեն ունեն միևնույն բառի մի այլ «ի տեսչութիւն» տարբերակը (№№ 8459, էջ 12ա, 9311, էջ 11բ, 649, էջ 19ա, 648, էջ 1ա, 659, էջ 44բ, 657, էջ 97բ, 3562, էջ 269ա)։ Իսկ Հարցի վերջում ավելի կա մի բառ՝ «եկեղեցւոյ» (№№ 659, 657, 648, 3562, 8459, 9311), «եկեղեցոյն» (№№ 649, 650, 651, 2964), «սրբոյն եկեղեցւոյ» (№ 3369)։ №№ 648, 657, 659, 3562 ձեռագրերի Պատասխանում էական շեղումներ չկան։ Մի քանի ձեռագրերի Պատասխանում կան շեղումներ. այդ ցույց տալու համար կբերենք ամբողջ պատասխանը համաձայն № 8459 ձեռագրի. «Պարտ է եպիսկոպոսին անարատ լինել, պարկեշտ, ուսուցող, մի՛ երկբան, մի՛ արծաթասէր, մի՛ կերող և արբեցող, մի՛ կաշառառու, մի՛ բամբասող (№ 9311-ը՝ չունի մի՛ կաշառառու մի՛ բամբասող), մի՛ հակառակող, այլ հեզ և հանդարտ, որպէս ասաց եղբայրն մեր Պօղոս, եղիցի աւրինակ բարի ամենեցուն (№№ 649, 650, 651, 2964, 3369-ը՝ չունեն որպէս... ամենեցուն հատվածը) պահող և տգնող, ատեցող զհանգիստ քնոյ, լինել արտասուաց առաւել քան ծաղու, աւրինակ լինել հօտին ամենայն կարգօք առնել ձեռնադրութիւն արժանաւորաց, այնոցիկ որ հասու և գիտունք են գրոց կարգաց և աւրինաց Աստուծոյ և զտգէտս խոտել մի՛ ձեռնադրեսցէ, քանզի տգիտութիւնն Աստուծոյ խոտելի է, որպէս յարագործ յայսմանէ զգոյշ լեր, քան յամենայն իրաց, քանզի տգէտ քահանայիք և սարկաւագունք կամ այլ ով ոք իցէ յառաքելական աստիճանի ի բարկութիւն ջարժէ զԱստուած, զի եթէ բերանով ի միտ առնու և ասէ, և սրտին ոչ իմանա զասելն՝ բարկացուցանէ զԱստուած և վնասակար լինի ամենայնի։ Եպիսկոպոս այլ զինչ առնէ, կորեաւ այնպիսի հոգին, պարտ է հեռանալ յայսմանէ։ Ջուսումնասէրսն և զգինտունսն մեծարէ պատուով, իսկ զտգէտսն մի՛ կացուցէ առաջնորդս կամ վերակացու ինչ իրաց եկեղեցոյ, իսկ եթէ յանդգնեալ եպիսկոպոսին արասցէ զայս կամ վասն կաշառու կամ վասն բարեխօսաց, այնպիսի եպիսկոպոսն նզովեալ եղիցի և որ ինչ անտի վնասք ծնանին նա ընկալցի վրէժ յատուրն դատաստանի յանմահ տանջանսն» (№ 8459, էջ 12ա—13բ. Համմտ. №№ 9311 էջ 11բ—13ա, 3369, էջ 22աբ, 649, էջ 19աբ, 650, էջ 22աբ, 651, էջ 12բ—13ա, 2964, էջ 25բ—26բ)։ Բնագրի հոդվածների սկզբի «Դարձեալ ասէ առաքեալն» հատվածը այս ձեռագրերը չունեն։ Այս հոդվածը վերաշարադրված և լրացված է մի քանի տարբեր աղբյուրներից, ինչպես օրինակ, Պողոս առաքյալի երկու նամակներից (Ա. Տիմոթէոս, Գ, 1—4, Տիտոս, Ա, 7—9), Առաքելական կանոնախմբի Ի, ԻԱ, ԻԲ, Կղեմեսի՝ Հ, Նիկիայի՝ Գ, Ժ հոդվածներից։

Հոդ. Բ, էջ 22—23: Առաջին հոդվածի Հարցումից հետո համահավաքի համար օգտագործված ձեռագրերի մեծ մասը, բացառությամբ հինգ ձեռագրերի, չունեն հաջորդ Հարցումները։ Վերջիններս այդ ձեռագրերում դարձյալ վերականգնվում են ԻՀ հոդվածից սկսած։ Մինչդեռ այդպիսիներ պահպանվել են նաև ծանոթագրություններում օգտագործվող ձեռագրերում։ Միօրինակությունը պահպանելու նպատակով հարցերը վերականգնեցինք սույն հրատարակության բնագրում։ Այն դեպքերում, երբ Հարցում բացակայում է մի երկու բառ, միտքը հստակ հաս-

կանալու համար այդպիսիները ավելացրել ենք ծանոթագրություններում օգտագործված ձեռագրերից մեկից, ամեն անգամ նշելով ձեռագրի համարը։ Հարցում եղած «ունել եպիսկոպոսին» բառերը վերցրել ենք № 8459 ձեռագրից։

Պատասխանը ներքևում նշված ձեռագրերում զգալի շեղումներով է։ Այն բերում ենք ըստ № 8459 ձեռագրի «Պարտ է եպիսկոպոսին զամենայն հաւատացեալսն միապէս սիրել զազգս և զօտարս, քէ եղբայր է, քէ քոյր։ Եւ կաշառ ամենևին մի՛ առնիցէ, զինքն մեռեալ համարի յաշխարհի, մի՛ խիստ պէնել և զուարճանալ կամ լրկաի ինչ խօսել կամ հրապարակաւ զոք յանգիմանել առանց նրորդ հարցման՝ նախ առանձին և ապա Բ կամ Գ վկայիւք։ Հեշտական հանգերձիւք մի՛ վարել, մի՛ պճնող։ Առանց ընկերաց հարցման մի՛ ինչ գործել, զի այն է հաճոյ Աստուծոյ։ Կացուցանել ընդ ձեռամբ իւրով տեսուչս գաւառաց և քաղաքաց, վարգապետս հովուել զհօտ Տեառն, և ժողովրդոցն հնազանդել հովուաց. կարգելոցն եպիսկոպոսէն ի շէնս Բ և Դ քահանայս և սարկաւագ մի, իսկ ի յագարակս քահանայ մի և սարկաւագ մի։ Զհաշմեալ մի՛զոք ձեռնադրել, զի եթէ զարատաւորն պատարագ ոչ մատուցանել հրամայէր մարգարէն, ո՞րչափ ևս առաւել որ զերկնաւոր պատարագն մատուցանէ, առանց արատոյ լինել։ Առանց վկայից և քննութեան մի՛ զոք ձեռնագրել և առանց հաւանութեան ժողովրդեանն, զի անտի մահաբեր վնասք լինին» (էջ 13բ—15ա, հմմտ. №№ 9311, էջ 13ա—14ա, 3369, էջ 23ա, 651, էջ 13ար, 650, էջ 22բ—23ա, 649, էջ 19բ—20ա, 2964, էջ 26ր—27ա, 648, էջ 2ա, 3562, էջ 270ա, 659, էջ 46ա, 657, էջ 98ա)։

Հոդ. Դ, էջ 24։ №№ 8459, 9311 ձեռագրերում Հարցը բավական ընդարձակ է և վերջին մասը զուրս է գալիս հարցի սահմաններից։ Ահա այն. «Որպիսի չափոյ պարտ է ձեռնադրել զքահանայսն ի ամեան և լ ամ կացեալ ի կարգին և ապա լռեցէ, զի այսչափ պարտ է կալ ի կարգին քահանայն և սարկաւագն (էջ 15ա, էջ 14ա)։ Այս նույն ձեռագրերում Պատասխանը զգալի շեղում ունի. «Արժան է եպիսկոպոսին այսպէս ձեռնադրել զքահանայս և զսարկաւագունս, իսկ ի Ե ամն կամ քէ աւելի մի՛ ձեռնադրել քահանայ կամ սարկաւագ, և մի՛ ամուսնութիւն հրամայել, զի յայսմ վայրի անձինք աղճատին և միտք և ժամանակք գինքն պատրաստել սուրբ պահել և պայծառ զիւր հոգին, զի մի՛ զայլս հոգալով զինքն անփոյթ արասցէ և ղրկի ի յաւիտենական կենացն» (№№8459, էջ 15բ, 9311, էջ 14բ)։ Իսկ մյուս ձեռագրերից մի քանիսում՝ №№ 651 (էջ 13բ), 650 (էջ 23ա), 649 (էջ 20ա), 2964 (էջ 27բ), 3369 (էջ 23ա) րնագրի «անփոյթ»-ը փոխարինված է «անհոգ» բառով։ Հոդվածի առաջին մասի միտքը գտնում ենք Հոհան Մանդակունուն վերագրված կանոնախմբի Ա հոդվածում (տե՛ս վերևում, էջ 264)։

Հոդ. Դ, էջ 24—25։ Հարցի «Ի»-ն վերցրել ենք № 649 ձեռագրից։ Բնագրի «արժան է... հրաժարել» հատվածը մի քանի ձեռագրերում այսպես է գառաւել (№ 651, 649-ում՝ աւելի) հրաժարել եպիսկոպոսն» (№№ 8459, էջ 15բ, 9311, էջ 14բ, 651, էջ 13բ, 649, էջ 20ա)։ № 3369 ձեռագիրը չունի «առաւելն» և «ի ձեռնադրութենէն» բառերը (էջ 23ա), իսկ բնագրի «ի ցովասրտից»-ը դրված է «ի ցոփամտաց» ձևով, այսպես է նաև «ի վատասրտից»-ը՝ «և վատամտից» նուկնը №№ 8459, 9311, 649-ում՝ «և ի վատամտաց», № 651-ում՝ «և ի վատամտից»։ Բնագրի մի այլ «ի վատթարութենէն» բառը №№ 8459, 9311, 651, 649-ում դրված է «ի վատթար գործոց», իսկ № 3369-ում՝ «վատթարագործաց»։ № 650 ձեռագրում թեև Հարցը կա, բայց չունի Պատասխանը, այս հարցի տակ դրված է ե հոդվածի պատասխանը, առանց համապատասխան հարցի։

Հոդ. Ն, էջ 25։ «Զսուրբ» բառը վերցրել ենք № 8459 ձեռագրից։ № 650-ում Հարցը չի պահվել, իսկ Պատասխանը դրված է Դ Հարցի տակ։ №№ 649, 651, 2964 ձեռագրերում չի պահվել Հարցի «զսուրբ», իսկ №№ 651, 2964-ում՝ «և որպէս» բառերը։ Պատասխանում առկա են այսպիսի շեղումներ. բնագրի «խաչին... կատուվճռ հատվածը դրված է. «խաչին անշարժ և զնա ծածկեսցեն հանդերձիւք», «խնկոց և լուցմանց» հատվածը՝ «խնկարկութեանն և լոյսն ի ժամու իւրեանց» (№№ 8459, էջ 16բ, 9311, էջ 15ա)։ Մի քանի ձեռագրերում առաջին շեղումը նույնությամբ գտնում ենք, մինչդեռ երկրորդը այսպես է. «ի խնկարկութեան և լուացմանն ի ժամս իւրեանց» (№№ 651, էջ 14ա, հմմտ. №№ 649, էջ 20բ, 650, էջ 23բ, 2964, էջ 28ա), կամ հոդվածը շարունակվում է. «ի ժամս իւրեանց (№ 3369, էջ 23բ)։ Այստեղ չի պահված նաև «և խնկարկութեամբ» բառը։

Հոդ. Զ, էջ 25—26։ «Եւ սուրբ»-ը վերցրել ենք № 8459 ձեռագրից։ Հարցի առանձին բառեր, որոշ ձեռագրերում բացակայում են կամ աղավաղված են և կամ այլ բառով փոխարինված, օրինակ, «աղհաց»-ի փոխարեն № 649 ձեռագիրն ունի «զինչ». «պատշաճեսցուք»-ի փոխարեն № 3369 ձեռագիրն ունի «պաշտեսցուք», № 650-ը՝ «պաշտաճեսցուք», №№ 8459, 9311 ձեռագրերը չունեն «զգինի», № 650-ը՝ «որպէս» բառերը։ Պատասխանում բնագրի «նոյնպէս և

զգինին... ի սուրբ սեղանն» հատվածը մի քանի ձեռագրերում այսպես է. «նոյնպէս և զգինի (№№ 3369, 8459, 9311-ում՝ զգինին) բաժակոյն (№ 3369-ում՝ բաժակին, №№ 8459, 9311-ում՝ չքf բաժակոյն) ի սուրբ ամանս (№№ 3369, 8459, 9311-ում՝ յամանս) պահել և սուրբ ամանով (№ 3369-ում՝ ամանաւք, №№ 8459, 9311-ում՝ բաժակաւն) հանցեն ի սեղանն սուրբ (№№ 3369, 8459, 9311-ում՝ ի սուրբ սեղանն)» (№№ 651, էջ 14ա, 649, էջ 20բ, 650, էջ 23բ, 2964, էջ 28ա, 3369, էջ 23բ, 8459, էջ 16բ, 9311, էջ 15բ)։ №№ 8459, 9311 ձեռագրերում չի պահվել բնագրի «այլ անագորոյն մտաց» հատվածը։

Հոդ. է. էջ 26—27: Մի քանի ձեռագրերի պատասխանում մի տեղ կա բառերի եռահատոյնութիւն. «յորժամ զսեղանն հաստատեսցէ եպիսկոպոսն ժողով արասցէ քահանայից աթոռակացս իւրոց, սարկաւագաց, ժողովրդոց և մատուսցեն...» (№ 659, էջ 47բ, հմմտ. №№ 648, էջ 2բ, 657, էջ 98բ, 3562, էջ 271բ)։

Հոդ. Ը, էջ 27: «Որպէս»-ը վերցրել ենք №№ 651, 3369 ձեռագրերից։ Հարցի վերջին բառը մի քանի ձեռագրերում փոխարինված է «բարուք» (№№ 651, էջ 14ա, 649, էջ 20բ), կամ «բերաւք» (№№ 650, էջ 24ա, 2964, էջ 28բ) բառով։

№ 3369 ձեռագրում չեն պահվել Պատասխանի «ի նմին աւուր», «վասն աստուծոյ» բառերը, իսկ «նոխազս»-ի փոխարեն պահվել է «զարջառս» բառը։

Հոդ. Թ, էջ 27—28: №№ 8459, 9311 ձեռագրերում Հարցի վերջին «յեկեղեցւոջ» բառը փոխարինված է «յարևելս» բառով։ Պատասխանում կան մի քանի էական չեղումներ. օրինակ, բնագրի «ընդ միմեանս» հատվածը մի քանի ձեռագրերում այսպես է. «և մի ընդ միմեանս նայեսցին» (№№ 651, էջ 14բ, 649, էջ 21ա, 650, էջ 24ա, 2964, էջ 29ա), իսկ «մի՛ քրքմնջեսեն ընդ միմեանս»-ը №№ 8459, 9311 ձեռագրերում՝ «մի՛ խօսեսցին ընդ միմեանս և ոչ նայեսցեն ի մարդ» (էջ 17բ, էջ 16բ)։ Ձեռագրերի մի այլ խմբում Պատասխանի սկզբի մեծ մասն ունի այսպիսի չարադասութիւն. «Յորժամ ժողովին ժողովուրդք հաւատացեալք ի տուն աստուծոյ մի՛ քրքմնջեսցեն և մի՛ ընդ միմեանս նայեսցեն, զայլ ինչ մի՛ խաւսեսցեն, բայց միայն յաղաւթս աստուծոյ կացցեն ընդ արևելս» (№ 659, էջ 48ա, հմմտ. №№ 648, էջ 2բ, 657, էջ 99ա, 3369, էջ 24ա, 3562, էջ 271բ)։

Հոդ. Ժ, էջ 28—29: «Զանարժան ոք» բառերը վերցրել ենք № 3369 ձեռագրից։ Հարցում էական տարբերութիւնը № 650 ձեռագրում է, ահա այն. «եթէ ոք տգիտութեամբ ձեռնադրեսցէ քահանայս առնուցու զանքաոամ պսակն փառաց» (էջ 24ա)։ Պատասխանը մի քանի ձեռագրում ընդհանուր առմամբ նույնն է, բայց տարբեր է շարադասութիւնը. բերում ենք ամբողջութեամբ. «եթէ ձեռնադրեսցէ զոք եպիսկոպոսն քահանայ և կամ սարկաւագ և յանցանք լինի նորա շնութիւն կամ գողութիւն կամ սպանութիւն կամ զինչ և է աղտեղութիւն և ի ժամ ձեռնադրութեան ոչ գիտաց եպիսկոպոսն և վկայեաց ոք ոչ փոխանակ անգիտութեան. և ապա յետոյ կամ զղջանայ կամ պատճառօք մի գործքն յայտնի եղև ոչ կարէ նա այլ սպասաւորել սուրբ սեղանոյն և ոչ պատարագել, այլ արտաքոյ եկեղեցոյ ապաշխարել զյանցանս իւր ամ և ապա զոր ինչ արժան է չնորհել նմա ի ներքոյ բեմի սպասաւորութիւն առնել և կալ ի պատուին միայն բեկեալ սրտիւ մինչև ցօր մահուան իւրոյ» (№ 8459, էջ 18ա—19ա, հմմտ. №№ 9311, էջ 17ար, 649, էջ 21ա, 650, էջ 28ար, 651, էջ 14բ, 2964, էջ 29ար)։ № 3369 ձեռագրում չի պահվել բնագրի «որպէս է մարդոյ», «կամ սպանութեամբ» հատվածները, իսկ «պատճառանաւք» և «զբիծ ամ»-ի փոխարեն համապատասխանաբար ունի «պատմուճանօք» և «բաժանմամբ» (էջ 24բ)։

Հոդ. ԺԱ, էջ 29—30: Հարցի «դարշեցաւ» բառից առաջ №№ 650, 651, 2964 ձեռագրերում դրված է «զղջեալ» դերբայը։ ԺԲ հոդվածը համահավաքի bcfgq և ծանոթագրությունների համար օգտագործված ձեռագրերում միացված է սույն՝ ԺԱ հոդվածին։ Այս միացումը թերևս ճիշտ է, որովհետև ԺԲ հոդվածը ԺԱ-ի անմիջական շարունակությունն է։ Այդ պատճառով էլ նշված ձեռագրերում ԺԲ հոդվածի համար Հարց չի պահվել։ Այստեղ այդ միացումը չկատարեցինք, որպեսզի չխախտվի հոդվածների ընդհանուր համարակալումը, որը կապված է «Կանոնագիրք Հայոց»-ի և հատորի առարկայական ցանկի (տես էջ 5—17) հետ։

Այստեղ կան նաև չեղումներ. «եթէ ոք յետ ձեռնադրութեանն մեղոյց՝ այնպիսոյն ամենևին բարձցի քահանայութեան շնորհն և ձևն և նչանն, քանզի անհնար է նմա քահանայանալ, այլ արտաքոյ եկեղեցոյն ապաշխարեսցէ ժէ ամ, ապա եկեղեցոյ արժանանայ և սուրբ հաղորդութեանն ընդ զինուորսն կացցէ յեկեղեցոջ. դի անհնար է նմա ի բեմ ելանել կամ կարդալ կամ սաղմոս ասել մինչև ցօր մահուան իւրոյ, քանզի պղծեաց զսուրբ ձեռնադրութեանն և առ ոտն կոխեաց, մի՛ոք համարձակեսցէ նմա ի քահանայութիւն, իսկ եթէ եպիսկոպոսն հրաման տացէ նմա քահանայութեան, վասն կաշառու կամ վասն բարեխօսաց՝ կրեսցէ պատուհաս յաւուր դա-

տաստանին յաննարելի տանջանսն» (№ 8459, էջ 19աբ. հմմտ. №№ 9311, էջ 18ա, 648, էջ 3ա, 649, էջ 21ա, 650, էջ 24բ, 651, էջ 15ա, 657, էջ 99ա, 659, էջ 44աբ, 2964, էջ 29բ, 3562, էջ 271բ, 3369, էջ 24բ)։ № 3369-ում Պատասխանը ունի շեղումներ, օրինակ, «վատթար գործնեացս», «րարձցի ի քահանայական շնորհէն», «յաւր մահուան» հատվածների փոխարեն համապատասխանարար ունի «վատ գործ գործեացս», «ոչ մնասցին ի կարգ քահանայութեան շնորհքն», «զվախճան»։

Հոդ. ժՒ, էջ 30—31: «Զինքն» բառը վերցրել ենք № 3369 ձեռագրից։ Մի քանի ձեռագրերում Հարցի վերջին երեք բառերը փոխարինված են «առնէ» բառով (№№ 8459, էջ 19բ, 9311, էջ 18բ)։

Պատասխանը այս ձեռագրերում տարբեր շեղումներով է. այսպես №№ 8459, 9311 ձեռագրերում Պատասխանը սկսվում է հետևյալ կերպ. «Ամուսնացեալ քահանայ յորժամ պատարագել կամի Դ աւուրս հրաժարեսցէ յամենայն մեղաց և ապա առնէ պատարագ» (էջ 19բ—20ա, էջ 18բ)։ Ուրիշ ձեռագրեր չունեն Պատասխանի «ամուսնացեալ... մատուցանել կամին» հատվածը, իսկ «զմատուցման աւրն»-ը փոխարինված է «և ապա մատուցէ պատարագ» բառերով (№№ 651, էջ 15ա, 649, էջ 21բ, 650, էջ 25ա, 2964, էջ 30ա)։ № 3369 ձեռագրում Պատասխանի «զերիս»-ը փոխարինված է «ս»-ը բառով և չեն պահվել բնագրի «զառաջաւորութեանն», «զայս» բառերը (էջ 24բ)։ Մի այլ խմբում պատասխանի վերջին երկու տողը այլ չարահարում ունի. «պարտ է սուրբ լինել և պատրաստ որպէս Աստուծոյ, իսկ կալ ի սպասու ահիւ և դողութեամբ, զի պակաց իսկ արժանի լիցի և անմահ կենացն» (№№ 659, էջ 49բ—50ա, հմմտ. №№ 648, էջ 3բ, 657, էջ 99բ, 3562, էջ 271բ)։

Հոդ. ժԳ, էջ 31: Հարցի «քահանայ որպէս» հատվածը № 3369-ում աղավաղված ձևով միացրել են միմյանց և ստացվել է. «քահանայապէս» (էջ 25ա) արտահայտությունը։ Մի քանի ձեռագրում էական շեղումն այն է, որ Պատասխանի «խորհրդով առանց» բառերի միջև կա «կատարեալ մտօք», այսպես՝ «սուրբ խորհրդով, կատարեալ մտօք առանց» և այլն (№ 8459, էջ 20բ, հմմտ. №№ 649, էջ 22ա, 650, էջ 25ա, 651, էջ 15բ, 2964, էջ 30աբ, 3369, էջ 25ա, 9311, էջ 19բ)։

Հոդ. ժԴ, էջ 31—32: Պատասխանը որոշ ձեռագրերում շեղումներ ունի. օրինակ, № 659 և սրան հարող ձեռագրերում սկիզբն այսպես է. «նմա չէ արժան կալ ի քահանայութեանն (№№ 648, 3562-ում՝ ի կարգի քահանայութեանն)», իսկ վերջին՝ «արհամարհեաց» բառը փոխարինված է. «անարգեաց» բառով (№№ 659, էջ 50ա, 648, էջ 3բ, 657, էջ 99բ, 2964, էջ 272ա)։ №№ 8459, 9311 ձեռագրերում վերջին շեղումն այսպես է. «հայհոյեաց և անարգեաց» (էջ 20բ, էջ 19բ)։ № 3369-ում Պատասխանն ընդարձակ է. «նմա չէ արժանի, այլ ի կարգի քահանայութեան է եկեալ, բայց եթէ երթնու զբանն յԱստուծոյ արհամարհէ, որպէս ասէ տեառն մեր, ամենևին մի երդնուլ» (էջ 25ա)։

Հոդ. ժՀ. էջ 32: № 3369 ձեռագրում Հարցն այսպիսի տեսք ունի. «Ո՞րպիսի օրինակաւ պարտին ունել զքահանայութիւնն» (էջ 25ա. հմմտ. №№ 649, էջ 22ա, 650, էջ 25ա, 651, էջ 15բ, 2964, էջ 30բ)։ Այստեղ բացակայում է նաև Պատասխանի «քահանային» բառը, «աղքատասէր»-ի փոխարեն ունի «աղքատանալ» (վերջին բառը №№ 648, 3562-ում՝ «աղքատ» ձևով, էջ 3բ, էջ 272ա), իսկ «զամենևնեսեան արքայութեանն արժանացուսցէ» և «զոր անդն է պատրաստեալ» հատվածները համապատասխանարար գտնում ենք. «արժանաւոր կացուցանել յարքայութեանն» և «փառաց» (էջ 25ա) ձևերով։ Պատասխանի վերջին՝ «արքայութեանն... պատրաստեալ» հատվածը №№ 8459, 9311 ձեռագրերում հանդիպում ենք այսպես. «արքայութեան Աստուծոյ արժան առնել և ինքն պակէ ի Քրիստոսէ» (էջ 21ա, 20ա)։

Հոդ. ժՁ. էջ 32—33: Պատասխանում №№ 649, 650, 2964, 3369 ձեռագրերը չունեն «մի' արբենալ» բառը, վերջին ձեռագիրը չունի նաև՝ «իսկ ժողովուրդ... կեղծաւորութեանն» հատվածը (էջ 25ա)։ №№ 8459, 9311-ում բացակայում է «մի' երդնուլ, մի' բամբասել» հատվածը (էջ 21բ, էջ 20ա)։ Այս երկու ձեռագրերում «ամենայն» բառը փոխարինված է «արատով» բառով։ Պատասխանի վերջին մասը շեղված է. «իսկ ժողովուրդ առանց աղտո լինել առանց կեղծաւորութեան» №№ 651, էջ 15բ, 650, էջ 25բ, 649, էջ 22ա, 2964, էջ 31ա)։

Հոդ. ժԷ, էջ 33: Պատասխանը մի քանի ձեռագրերում այլ չարահարում ունի. «Արտաքոյ եկեղեցոյ ապաշխարիցէ Դ ամ պահաւք և աղաւթիւք և տգնութեամբ և լուծումն չարաքու և կիրակէի և ի տերունեան տասն մինչև ի կատարել երից ամացն և յամին չորորդի հաղորդութեան արժանի լիցի։ Եւ որ գողացի ոք՝ գնոյն պատուհաս կրեսցէ, ապա թէ ի մեղս յամեալ իցէ՝ կրկին ապաշխարեսցէ» (№ 651, էջ 15բ, հմմտ. №№ 649, էջ 22աբ, 650, էջ 25բ, 2964, էջ 31ա)։ №№ 8459, 9311-ում բնագրի «պատուհաս»-ը փոխարինված է «ապաշխարութիւնդ» բառով

(էջ 21բ, էջ 20բ)։ Մի քանի ձեռագրում էլ չի պահվել «ապա եթէ... ապաշխարեսցեն» հատվածը (№№ 659, էջ 51ա, 657, էջ 99բ)։

Հոդ. ԾԸ, էջ 33—34։ Հարցի «առնել» բառը վերցրել ենք № 3369 ձեռագրից։ №№ 8459, 9311-ում՝ Հարցն այսպես է. «Որ ի չնալն հեղու զորգէծնուքիւնն» (էջ 22ա, էջ 20բ)։ № 3369-ում չի պահվել Պատասխանի «եթէ ոք ի քրիստոնէից» հատվածը։ Մի քանի ձեռագրերում էլ բնագրի «և զաստուծոյ երկիւղն ոչ ինչ համարին» հատվածը դրված է. «յայտնեսցի այնպիսին» բառերի միչև (№№ 8459, էջ 22ա, 649, էջ 22բ, 650, էջ 25բ,651, էջ 16ա, 2964, էջ 31ա, 9311, էջ 20բ, հմմտ. № 3369, էջ 25բ)։ Այս նույն ձեռագրերում, բացառությամբ վերջինի. «ոչ»-ը դրված է «առ ոչ» կամ «առ յոյ» ձևով։

Հոդ. ԾԹ, էջ 34։ Հարցի «պարտ է առնել»-ը վերցրել ենք № 3369 ձեռագրից։ Պատասխանը մի քանի ձեռագրերում համառոտ է. «պղծէ զինքն (№№ 649, 650, 651, 2964-ում՝ պիղծ է), այնպիսին ընդ չնացօղն ապաշխարեսցէ և ձեռնադրութեան արժանի մի՛ լիցի» (№ 3369, էջ 25բ, հմմտ. №№ 651, էջ 16ա, 650, էջ 25բ, 649, էջ 22բ, 2964, էջ 31աբ)։

Հոդ. Ի, էջ 34—35։ Հարցի «այնպիսին» վերցրել ենք № 3369 ձեռագրից։ Այս և №№ 648, 649, 650, 651, 657, 659, 2964 ձեռագրերում չի պահվել Պատասխանի «եթէ ոք պղծի... պիղծ է այնպիսին» հատվածը։ № 3369-ը «որոշմանն»-ի փոխարեն ունի «վաղչանի իւրոյ» (էջ 25բ)։ №№ 8459, 9311-ում՝ չի պահվել միայն «պիղծ է» բառը (էջ 22բ, էջ 21բ)։ №№ 648, 657, 659, 3562 ձեռագրերում այս հոդվածը դրված է կանոնագրքի ունեցած ԻԸ հոդվածի փոխարեն։

Հոդ. ԻԱ, էջ 35։ Պատասխանը մի քանի ձեռագրերում մեզ հասել է երկու խմբագրությամբ. ա. «Արտաքոյ եկեղեցոյ ապաշխարեսցէ Բժ-ան ամ արտասվօք, Զ ամ օրէնս մի՝ առցեն, և զմի մասն կերիցեն զտարոյն՝ զշարաթ և զկիրակէ և զտէրունեա տօնս. և երիս մասն պահեսցեն, և ապա մտցեն եկեղեցին և հաղորդեսցին» (№ 3369, էջ 25բ—26ա. հմմտ. №№ 649, էջ 22բ, 650, էջ 26ա, 651, էջ 16ա, 2964, էջ 31բ)։ բ. «եթէ այր կամ կին որ ամուսնացեալ լինի և չնա, ԺՐ ամ արտաքոյ եկեղեցոյ ապաշխարեսցէ արտասուօք, Զ ամ սրբութեամբ պահել զշարաթ և զկիրակի և զտօնս տէրունականս, այլ աւուրքն ամենայն Զ ամին մի՛ լիցին, իսկ Զ ամն զԳ մասն տարոյն պահեսցէ և զմինն կերիցէ և զշարաթու և զկիրակէ և զտէրունայն տօնս, և ապա մտցէ յեկեղեցին և հաղորդեսցի» (№ 8459, էջ 22բ—23ա, հմմտ. № 9311, էջ 21բ—22ա)։

Հոդ. ԻԲ, էջ 35։ Հարցը №№ 8459, 9311-ում այսպես է. «Կախարդի զի՞նչ հրաման տացուք» (էջ 23բ, էջ 22ա)։ Այս երկու ձեռագրերում բացակայում է Պատասխանի «կախարդի» բառը, իսկ վերջում՝ «ի վերայ» բառին հաջորդում է «ընորա» դերանունը։ Մնացած ձեռագրերի մի մասում Պատասխանն համեմատաբար ընդարձակ է. «Ամենայն աւուրս կենաց իւրոյ ապաշխարեսցէ արտաքոյ եկեղեցոյ և ի վախչանին հաղորդեսցի» (№№ 3369, էջ 26ա, 649, էջ 23ա, 650, էջ 26ա, 651, էջ 16ա, 2964, էջ 31բ—32ա)։ Այս և հաջորդ ԻԳ հոդվածները չեն պահվել №№ 648, 657, 659, 3562 ձեռագրերում։

№№ 649, 651, 2964, 3369, 8459, 9311 ձեռագրերում մնացած հոդվածները ունեն հետևյալ հերթականությունը.

Կանոնագիրք	Նշված ձեռագրերը
ԻԳ	ԻԳ
ԻԴ	ԻԴ
ԻԵ	ԼԱ
ԻԶ	Լ
ԻԷ	ԼԲ
ԻԸ	ԻԶ
ԻԹ	ԻԲ
Լ	ԻԵ
ԼԱ	ԻԷ
ԼԲ	ԻԸ
ԼԳ	ԻԹ (հմմտ. Արիլ Մխիթարեանց, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874, էջ 16—17)։

Հոդ. ԻԳ, էջ 36։ Հարցի «արասցուք»-ը վերցրել ենք № 3369 ձեռագրից։ Պատասխանի «որ չնայ... ցաւր մահուանն» հատվածի փոխարեն մի քանի ձեռագրեր ունեն «զամենայն աւուրս կենացս» (№ 651, էջ 16բ, հմմտ. №№ 649, էջ 23ա, 650, էջ 26ա, 2964, էջ 32ա, 3369, էջ 26ա), իսկ երկու ձեռագիր՝ «ամինչև ցօր մահուանն» (№№ 8459, էջ 23բ, 9311, էջ 22բ)։

Հոդ. ԻԴ. էջ 36։ Հարցի «որպէս»-ը վերցրել ենք № 3369 ձեռագրից։ Հարցը բացակայում է №№ 8459, 9311 ձեռագրերում։ № 3369-ում բացակայում է Պատասխանի «քրիստոնէից... ղո-

բևբշարաթ֊ հատվածը՝ №№ 649, 650, 651, 2964, 3369, 8459, 9311-ում՝ «խոնարհութիւն և չարչարանաւքն֊ բառերին նախորդում է «կամատուր» բառը։

№№ 8459, 9311-ում բացակայում է հոդվածի վերջին՝ «պահել մինչև ցինն ժամն» հատվածը (էջ 25ա, էջ 23բ—24ա)։ Այս հատվածի «պահել» բառին № 3369-ում նախորդում է «ապա պարտ է» բառերը (էջ 26բ)։

Հոդ. Իե. էջ 36—37: Միայն № 649 ձեռագրում Հարցը ունի չեղում. «Ո՞րպէս կատարեսցէ մարդ տանս» (էջ 23բ)։

Պատասխանը այս ձեռագրերում պահվել է երկու խմբագրությամբ. ա. «Նախ պահեսցեն չարաթ մի ի պատիւ սուրբ տանին և ի սպաս և ապա կատարեսցեն» (№ 651, էջ 16բ, հմմտ. №№ 649, էջ 23բ, 650, էջ 26բ, 2964, էջ 32բ, 3369, էջ 26բ)։ բ. «Ձորժամ տօն առնեն քրիստոնեայքն նախ պահեսցեն շաբաթ մի ի պատիւ սուրբ տօնին և ապա կատարեսցեն» (№№ 8459, էջ 25ա, 9311, էջ 23բ)։

Հոդ. Իզ., էջ 37: Հարցը № 3369-ում այսպես է. «Զսուրբ քառասնորդն պահեսցեն քրիստոնեայքն սրբութեամբ որպէս արժան է պահել» (էջ 26բ—27ա)։ Պատասխանի սկզբից մինչև «և ապա»-ն № 3369-ում ունի այսպիսի շարադասություն. «զսուրբ քառասնորդն պահել ամենայն քրիստոնեայք սրբութեամբ, որ սոյն շաբաթ և կիրակէ է. և յորժամ չարչարանաց տեառն մերոյ օրք կան՝ մի՛ ոք իշխեսցէ ժպտել, այլ տրտում ընդ տեառն մերոյ տդնութեամբ անդադար աղօթիւք» (էջ 27ա)։ Բնագրի «հաւատացեալքն» բառը №№ 8459, 9311-ում փոխարինված է «ամենայն քրիստոնեայք» բառերով, իսկ №№ 649, 650, 651, 2964-ում՝ «քրիստոնեայքն» բառով։ №№ 8459, 9311-ում՝ բնագրի «տրտոյն»-ը փոխարինված է «որ ոչ»-ով։

Հոդ. Իէ., էջ 38: Հարցը № 3369-ում այսպես է. «Թէ զանասուն ոք պղծեսցէ զի՞նչ արասցուք» (էջ 26ա)։ Այս ձեռագրում Պատասխանն այսպես է. «Որչափ ամս կենաց մարդոյ են ապաշխարեսցեն և ի վախճանին հաղորդեսցին»։ Մի քանի ձեռագրերում չի պահվել Պատասխանի «Որ ընդ անասնոյ պղծի» հատվածը (№№ 649, էջ 24ա, 650, էջ 27ա, 651, էջ 17ա, 2964, էջ 33ա, 8459, էջ 24ա, 9311, էջ 22բ)։ Այս հոդվածը չի պահվել № 659 ձեռագրում։

Հոդ. Իթ, էջ 38: № 3369-ում Հարցը շարունակվում է. «Նմա առնել» (էջ 26ա), իսկ Պատասխանը մի փոքր այլ է, «Ունկնդիրս կացցէ ի մէջ եկեղեցոյ ժե ամ և զայլ ժամանակս ընդ ձեռամբ. և յետս անձին իւրոյ հաղորդեսցի» (էջ 26ա)։

Հոդ. Լ, էջ 39: Պատասխանի «սնուցող» բառը № 8459-ում դրված է «ըստընդունս» (էջ 24ա), իսկ № 9311-ում՝ «ըստ ընդունօղն (էջ 23ա) ձևով։ Վերջին ընթերցումը ակներև սխալ է։

Հոդ. ԼԼ., էջ 39: Պատասխանի «յարակայ» բառը №№ 649, 650, 651, 2964, 3369 ձեռագրերում փոխարինված է «հանապազագ»-ով։

Վերջաբան, էջ 39—40: Բնագրի «զայս»-ի փոխարեն № 3369-ում՝ «զայս կանոնս» (էջ 27ա), «յինէն»-ի՝ «յիսնէն» (№№ 650, էջ 27ա, 651, էջ 17ա, 3369, էջ 27ա), «և այլ որ յետ ձեր»-ի՝ «և օրինք ձեզ» (№ 3369, էջ 27ա), «յաղաւթս»-ի՝ «յաղագս» (№ 650, էջ 27ա, 649, էջ 24ա, 651, էջ 17ա), «կարդեցին»-ի՝ «հաստատեցին» (№№ 649, 650, 651, 2964, 3369), «լուաւ»-ի՝ «թուեալ է» (№ 8459, էջ 26բ, 9311, էջ 25ա), «տեառն»-ի՝ «մերս» (№ 3369), «գրեց»-ի՝ «իմով ձեռամբս գրեցի» (№ 3369), վերջինս չունի նաև «ըստ» (սահմանս) բառը։ «Զաքարիայ» անունը №№ 649, 650, 651, 2964, 3369 ձեռագրերում դրված է «Զաքէ», իսկ №№ 8459, 9311-ում՝ «Ադդէ» ձևերով։

ՓԻԼԻՊՊՈՍ ԱՌԱՔՅԱԼԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վերնագիր, էջ 41: *Ձեռագրերում օգտագործված* kmps *ձեռագրերում առաջարանին նախորդում է կանոնախմբի հոդվածների ցանկ։ Այն բերում ենք ըստ* k *ձեռագրի.*

«Ա. Նախ քէ պարտ է քառասունք կատարելոյ (sic)։

Բ. Վասն ամուլ կանանց։

Գ. Վասն քէ ոչ է պարտ զշուն ընդ ոչխարի փոխանակել՝ զոչխարն պատարագ մատուցանել։

Դ. Էջ փոխանակեալ ընդ ոչխարի և վաճառեալ արծաթի՝ պատարագեսցի։

Ե. Վասն ոչ զենլոյ զանսուրբ կենդանիսն և առնուլ զմորքսն։

Զ. Վասն որ զսուրբ կենդանիսն որսան և առանց զենման ուտեն և զմեռելոտոյ զմորքսն կորզեն։

Է. Վասն կանանց որ ապարահ իցեն՝ ոչ մերձենան։

Ը. Վասն կանանց որ ապարահ իցեն՝ մի՛ արգելցին յաղաւթից ժամուն։

*Թ. Վասն այնոցիկ որք խափանեն ի ժամու աղաւթիցն» (*k, *էջ 32ա, հմմտ.* m, *էջ 44ա,* p, *էջ 36 բ,* s, *էջ 39բ)։*

Ցանկի մեջ մուծված է նաև քառասունքի վերաբերյալ հատվածի առաջին մասի (տող 2—7) բովանդակությունը (առաջին վերնադիրը), այդ պատճառով էլ ցանկը բաղկացած է 9(Թ) վերնագրից, մինչդեռ կանոնախումբն ունի 8 հոդված։

Ո ձեռագրում ցանկն ունի հետևյալ պատկերը.

«Ա. Վասն կնոջ որ ամուլ դիպի։

Բ. Շուն եթէ փոխանակեսցի ընդ ոչխարի։

Գ. Վասն իշու որ փոխանակեսցի ընդ ոչխարի։

Դ. Վասն զենման անսուրբ գազանաց և վերարկուս վաճառեն։

Ե. Վասն որսորդաց որ մաքուր անասուն որսան։

Զ. Վասն տեառատես կնոջ որ այրն իւր մերձենայ։

Է. Վասն տեառատես կնոջ որ խափանէ զաղօքսն։

Ը. Վասն ամենայն հաւատացելոց որ խափանեն զաղօքսն այգուն և երեկունն ոչ գնան» (էջ 329բ)։

Քառասունքի մասին, էջ 41—42: *Այս բնագիրը աննշան տարբերություններով գտնում ենք № 3369 ձեռագրում (էջ 27բ)։ Այստեղ չի պահվել «եւ մարգարէականքն» բառը, իսկ մի քանի բառեր էլ փոխարինված են այլ կամ հոմանիշ բառերով, օրինակ, «քողուքեանց-ը՝ «քաւուքեան և քողուքեանն», «մեռելոց-ը՝ «ննջեցելոցն», «սակաւատրքս-ը՝ «սակաւ աւուրք։ Ձեռագրերի մյուս խումբն ունի այլ շարադասություն և մի փոքր էլ ընդարձակ առաջաբան։ Վերջինս կրճատենք ամբողջությամբ. «Ծնեան Փիլիպ[պ]ոսի (№№ 8459, 9311-ը՝ Փիլիպոսի առաքելոյն) հրամայեալ է (№№ 8459, 9311-ը՝ զոր հրամայել է) ունել (№№ 8459, 9311-ը՝ չեf ունել) քառասունս (№№ 8459, 9311-ը՝ ե տունս), զոր կարգեաց (№№ 8459,9311-ը՝ կարգեցաք, № 650-ը՝ կատարեաց, № 651-ը՝ գարգեաց) հրամանաւք (№№ 8459, 9311-ը՝ հրամանաւ) նորա Յոհան-*

նէս (№№ 649, 650, 651, 2964-ը՝ Յոհաննէս աւետարանիչ (№№ 8459, 9311-ը՝ աւետարանիչն) մաւր (№№ 648, 3562-ը՝ մօր, 8459, 9311-ը՝ ե մայր) տեառն բարեխաւսել (№№ 648, 3562, 8459, 9311-ը՝ բարեխօսել) նմա. նախ առաջին (№№ 8459, 9311-ը՝ ի յառաջ) յաղագս (№№ 8459, 9311-ը՝ վրայ յաղագս) ինքեան քողութեան (№№ 8459, 9311-ը՝ քողութիւն ասէ Փիլիպոս) որ զանհաւատ քաղաքն կործանեաց Փիլիպպոս (№№ 8459, 9311-ը՝ վրայ Փիլիպպոս) և յանդիմանեցաւ ի տեառնէ վասն բարկացողութեան (№№ 648, 3562-ը՝ բարկացողութեանն), ու ի նմանէ ընկալան մանկունք եկեղեցոյ երիցս անգամ (№№ 8459, 9311-ը՝ միանգամ) արժան է և աւելի ոչ հրամայեմք, բայց գահմանեալ (№№ 8459, 9311-ը՝ սահմանել) աղաւթքն (№№ 648, 3562-ը՝ աղօթքն, 8459, 9311-ը՝ աղօքս) անխափան կատարեցէ մատուցողն (№№ 649, 650, 651, 2964-ը՝ մատուցանողն, 8459, 9311-ը՝ ղմատուցողն) և ի մէջ կանոնացն կարդացմունք (№№ 8459, 9311-ը՝ կարդացմունս եղիցի) առաքելականք (№№ 649, 650, 651, 2964-ը՝ առաքելական, 8459, 9311-ը՝ առաքելականս) և խունկն արկանել ի մէջ կանոնացն և յամենայն (№№ 649, 650, 651, 2964-ը՝ ամենայն) աւուր (№ 650-ը՝ յորոյ) սպասք (№№ 8459, 9311-ը՝ սպաս) առնել եկեղեցւոյն (№№ 8459, 9311-ը՝ եկեղեցւոյ) և յամենայն (№№ 649, 650, 651, 2964-ը՝ ամենայն) ժամանակ (№№ 649, 650, 651, 2964-ը՝ տասնակ, 8459, 9311-ը՝ ժ օր) գիշերապաշտաւն (№№ 8459, 9311-ը՝ գիշերապաշտօն) առնել և սաղմոսել ընձայլիւք (№№ 8459, 9311-ը՝ ընծայլիւք, 649-ը՝ ընձայլնիւք)։ Իսկ զՔառասունսն (№№ 648, 3562-ը՝ դՔ-ուն, 8459-ը՝ զՔ-ունս, 9311-ը՝ զՔ-տունս) հրամայեաց ունել (№№ 8459, 9311-ը՝ առնել) գաւառս ևՐ (№№ 649-ը՝ քառասուն[ն] և ուր) վասն քողութեան մեղաց մեռելոց և կենդանեաց (№№ 8459, 9311-ը՝ կենդանեաց և մեռելոց) ըստ №№ 8459, 9311-ը՝ չիՀ ըստ) ևՐ (№№ 649, քառասուն և ուր, 8459, 9311-ը՝ զՔՐ) քաղաքաց (№№ 8459, 9311-ը՝ քաղաքացն) ցնսուալ, որով (№№ 648, 3562-ը՝ որովք) ապրէին մահապարտքն (№№ 8459, 9311-ը՝ մահապարտեալքն) ի նոսա ապաստանեալք (№ 650-ը՝ ըսպաս տանեալք)։ Իսկ զհան (№ 651-ը՝ զհարկն) հրամայեալ է (№№ 8459, 9311-ը՝ հրամայեաց) ևՐ երկդրամեան (№№ 8459, 9311-ը՝ երկդրամեանն) տալ յեկեղեցին ըստ կատարման աւուրցն խորհրդոց (№№ 8459, 9311-ը՝ խորհրդոյ), զոր անդրանկացն (№№ 649, 650, 651, 2964-ը՝ յանդրանկացն, 8459, 9311-ը՝ ի յանդրանկաց) պահանջէր Աստուած տալ քահանայական ազգին Ղետացոցն (№№ 8459, 9311-ը՝ Ղետացւոց), զոր իւր անուանեաց փոխանակ եդիպտացոցն (№№ 650, 651, 2964-ը՝ Եգիպտացն, 8459, 9311-ը՝ եդիպտացւոց) անդրանկացն (№№ 8459, 9311-ը՝ անդրանկաց) կործանելոցն (№№ 649, 650, 651, 2964, 8459, 9311-ը՝ կործանելոց), դի սակաւաւորք (№№ 649, 648, 3562-ը՝ սակաւ աւուրք, 8459, 9311-ը՝ սակաւորք) էին։ Իսկ եթէ յաղագս (№ 649-ը՝ յաղաքս) աղքատութեան (№ 649-ը՝ աղքատութեամբ) պակաս իցէ քան զևՐ (№ 9311-ը՝ ևՐ) երկդրամեան (№№ 8459, 9311-ը՝ երկդրամեանն) հաւանութեամբ (№ 649, 8459, 9311-ը՝ հաւանութեան, այս բառ № 8459-ում եաև կրկնված է) քահանային արժան է, քանզի մեծ հնարաւոր է (№№ 8459, 9311-ը՝ զօրաւոր է, 648, 3562-ը՝ չիՀ է) ուխտս այս առ մեռեալս և առ կենդանիս (№№ 648, 3562-ը՝ կենդանիսն)։ Քանզի այսպէս հաւատա (№№ 8459, 9311-ը՝ հաւատաց) եկեղեցի Աստուծոյ, եթէ (№№ 649, 650, 651, 2964-ը՝ Քէ) յանդումն (№№ 649, 650, 651, 2964-ը՝ անդումն) տարտարոսաց լինիցի (№№ 8450, 9311-ը՝ լինել) դրաւեալ (№№ 8459, 9311-ը՝ չիՀ գրաւեալ) ոգին (№№ 8459, 9311-ը՝ հոգին) և ժ կնքով (№№ 648, 3562-ը՝ կնքող) կնքեալ իցէ, զի մի՛ ոք կարասցէ (№№ 8459, 9311-ը՝ կարիցէ) յիշատակել առաջի Աստուծոյ ի փրկութիւն։ Բայց որք սրբութեամբ և աղաւթիւք (№№ 648, 3562, 8459, 9311-ը՝ աղօթիւք) կատարեն զուխտս զայս, կարեն փրկել (№№ 649, 650, 651, 2964-ը՝ փրկեն) զմեռեալսն (№№ 8459, 9311-ը՝ զմբռնեալսն) և կարեն (№№ 8459, 9311-ը՝ կարէ) փրկել (№№ 649, 650, 651, 2964-ը՝ խզել, 8459, 9311-ը՝ փշրել) զժ կնիքս (№№ 8459, 9311-ը՝ կնիքն) Աստուծով (№№ 9311-ը՝ Աստուծոյ) զներքին (№№ 8459, 9311-ը՝ ի ներքին) դժոխոցն ի վեր յերկինս քաւուցանէ (№№ 8459, 9311-ը՝ քաւուցանել) զհոգին, եթէ ի հաւատս (№№ 649, 650, 651, 2964-ը՝ զհաւատս) միայն իցէ վաղճանեալն (№№ 8450, 9311-ը վախճանել) և ոչ յանաստուածութեան (№№ 8459, 9311-ը՝ յանաստուածութիւն) և ի հայհոյութեան (№№ 8459, 9311-ը՝ ի հայհոյութիւն)։ Վասն որոյ և ամենայն գունդք հրեշտակաց բազմութեան այսպիսի անուշահոտ (№№ 8459, 9311-ը՝ անուշահոտութեան) ցանկութեանց վարդագոյն արեան Քրիստոսի սուրբ (№№ 8459, 9311-ը՝ զՌ) զննմանն դառք (№№ 649-ը՝ գոհՔ, 8459, 9311-ը՝ գրոհ) տուեալ ի վերուստ խուսափելով անդ հասանեն ի սպասաւորութիւն. և լինի յայնմ (№№ 8459, 9311-ը՝ յայն) աւուր (№№ 650, 651, 2964-ը՝ չիՀ աւուր) տօն (№№ 648, 3562, 650, 651, 2964-ը՝ տուն) պատարագին, տուն (№№ 8459, 9311-ը՝ և տուն) Աստուծոյ և բնակութիւն (№№ 8459, 9311-ը՝ բնակարան) հրեշտակաց» (№№ 648, էջ 5ա—6ա, 3562,

էջ 273բ—274բ, 649, էջ 24ա—25ա, 650, էջ 27բ—28բ, 651, էջ 17բ—18ա, 2964, էջ 33բ—35ա, 8459, էջ 27ա—29բ, 9311, էջ 25ա—27բ)։

№ 659 ձեռագրում Փիլիպպոս առաքյալի կանոններին նախորդում են նույն հեղինակին վերագրված երկու գրություններ. ա. «Սահմանք Փիլիպոսի առաքելոյ յաղագս Քառասունս ունելոյ և պատարագացն» (էջ 53բ—56ա). սկ. «Անգիտաբար ոմանք ասեն. եթե Քրիստոսի պատարագելոյն արդ ոչ ևս պիտոյ իցեն վասն մեղաց պատարագ...» (էջ 53բ)։ բ. «Ճեկնեղեցական պատմութենէ վասն Փիլիպոսի առաքելոյ» (էջ 56ա—59բ). սկ. «Զայս ուսաք մեք վասն սրբոց առաքելոցն Քրիստոսի՝ զՔառասունս նախ Փիլիպոս առաքեալ կարգեաց...» (էջ 56ա)։

Պետք է նաև նշել, որ Փիլիպպոսի անունով կանոնագրքում եղած այս երկու բնագրերը տարբեր գրություններ են։

№ 657 ձեռագրում չի պահվել Քառասունքի մասին հատվածը։

Հոդ. Ա, էջ 42—43: №№ 649, 650, 651, 2564, 8459, 9311 ձեռագրերում այս կանոնախմբի հոդվածները չեն պահվել։ №№ 648, 3562 ձեռագրերում հոդվածները էական տարբերություն չունեն։ №№ 659, 657 ձեռագրերում բնագրի «զվայրենանալն» բառը դրված է «զվերանալն» ձևով (էջ 60ա, էջ 124բ)։ № 3369 ձեռագրում բնագրի «պարտապան» բառը փոխարինված է «պարտական» բառով (էջ 28ա)։ № 657 ձեռագրում «է ամբ-ի փոխարեն «ե ամբ (էջ 124բ)։

Հոդ. Բ, էջ 43: № 3369 ձեռագրում չի պահվել բնագրի «զի զինք շան են» հատվածը։

Հոդ. Դ, էջ 43—44: № 3369 ձեռագրում կան մի երկու էական չեղումներ. օրինակ՝ երկիցս գործածված «զվերարկուս», «զվերարկուս» բառը համապատասխանաբար հանդիպում ենք «զվերակացուս», «վերակացուս» սխալ ձևերով (էջ 28ա), իսկ «զարծաքին» բառը՝ «զարդարն» ձևով (էջ 28ա)։ №№ 659, 657 ձեռագրերը բնագրի «է քէ» բառերի միջև ունեն «որպէս» բառը, այսպէս՝ «այնպէս է, որպէս քէ» (էջ 60ա, էջ 124բ)։ Այստեղ չի պահվել «ընծայ» բառը։

Հոդ. Ե, էջ 44: Բնագրի «եւ վիրաւորեալ» հատվածը № 3369 ձեռագրում «և եթէ լինի վիրաւորեալ» ձևով է (էջ 28ա)։

Հոդ. Զ, էջ 44: Բնագրի «սահմանացն լինիցի» բառերի միջև №№ 659, 657 ձեռագրերում պահվել է «ծորումն» բառը, այսպես «սահմանացն ծորումն լինիցի» (էջ 61ա, էջ 125ա)։ Իսկ № 3369 ձեռագրում բնագրի «պապականածնութեանն» բառի փոխարեն գրված է «պապականութեանն» (էջ 28ա)։

Հոդ. Ը, էջ 45: №№ 3369 ձեռագրում բնագրի «ժամանելովն» բառը փոխարինված է «մտանելով» բառով (էջ 28բ), իսկ «ունկն դնելով»-ը «ունկնդրութեան» բառով (էջ 28բ)։ Այս նույն ձեռագրում պահվել է 9-րդ հոդված. «Ե. Իսկ եթէ յանգգնեալ եպիսկոպոսին վասն կաշառոյ կամ վասն բարեխօսութեան և կամ վասն մերձաւորութեան հրաման տացէ՝ վրէժս աւուրն դատաստանին աններելի տանջանաս» (էջ 28բ)։ Այս հոդվածն ավելացրել են հետագայում։ Փիլիպպոս առաքյալի անունով հայտնի կանոնախմբի հնագույն ձեռագրերն այս հոդվածը չունեն։ Թադէոս առաքյալի անունով հայտնի 11-րդ հոդվածի վերջին մասն է այն, տե՛ս վերևում՝ էջ 30, տող 6—9։

ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ ԵՐԿՐՈՐԴ ԱՆՏԻՈՔԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վերնագիր, էջ 46: *Մի քանի ձեռագրերում վերնագիրն այսպես է. «Ընորին կանոնք երկրորդ» (№№ 3562, էջ 295ր, 648, էջ 23բ), «Դարձեալ (№ 649-ում՝ յիմ՝ դարձեալ) նոցին կանոնք երկրորդ (№№ 649, 650-ում՝ երրորդ)» (№№ 651, էջ 35ր, 649, էջ 45ա, 650, էջ 48ր, 2964, էջ 65ա), «Դարձեալ նոցին երկրորդ կանոնք» (№ 3369, էջ 62բ): Այս ձեռագրերում վերնադիրը սկսվում է «ընորին, «նոցին» և «դարձեալ նոցին» բառերով, որովհետև սույն կանոնախմբին անմիջապես նախորդում է 25 հոդվածից բաղկացած՝ Անտիոքի կանոնախումբը, որը մտել էր կանոնագրքի Հովհաննես Օձնեցու ժողովածուի մեջ (տես «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա, էջ 202—223):*

№ 657 ձեռադրում չի պահվել այս կանոնախումբը: Հինգ ձեռագրերում պահվել է հոդվածների բովանդակության ցանկը, որ այստեղ բերում ենք ըստ k ձեռագրի.

ա.Ա. Վասն եպիսկոպոսի չիշխել այլոց վիճակի:

Բ. [Վասն] ոչ նստելոյ սարկաւագի ընդ իրիցու:

Գ. Վասն որ եկեղեցիս հաց ուտեն:

Դ. Վասն արանց չղաւղել ընդ կանայս:

ե. Վասն որ ի հարսանիս կաքաւեն:

Զ. Վասն ժառանգաւորաց որ ի խաղս և ի հրապարակս գնան:

է. Վասն մեղաց և արդարութեան և ապաչխարելոյ:

Ը. [Վասն] ի սուրբ դրոց վկայութեան պատուիրանացն Աստուծոյ:

Թ. Վասն աստուածաշունչ գրոց» (էջ 186բ, տե՛ս նաև m, էջ 190ր—191ա, p, էջ 204բ—205ա, s, էջ 234ա—234բ):

Իսկ O ձեռագրի ցանկը այսպիսին է.

«Ա. Վասն եպիսկոպոսի մի՛ իշխեսցէ յայլոց վիճակի քահանայ ձեռնադրել:

Բ. Վասն սարկաւագի մի՛ նստցի ընդ իրիցու ի սեղան:

Գ. Վասն ի մէջ եկեղեցոյ ոչ ճաշակել հաց:

Դ. Վասն քահանայի և սարկաւագաց և ժողովրդոց ի հետ կանանց մի՛ մտցեն ի բաղանիսն:

ե. Վասն քահանայի ոչ գնալ ի հարսանիս և կաքաւել:

Զ. Վասն քահանայից և յուխտէ մանկանց մի՛ գնալ տեսանել խաղ ի հրապարակս:

է. Վասն ղսահմանադրեալ կանոնս և զօրէնս պահեսցեն:

Ը. Վասն լռելոյ զլեզու իւր ի չար և ի սուտ խօսելոյ և յերդնելոյ:

Թ. Վասն պաշտելոյ զԱստուածաշունչ դիրք՝ զՀին և զՆորս» (էջ 331աբ):

Հոդվածների ուշադիր քննությունը ցույց տվեց, որ դրանք քաղված են մեզ հայտնի կանոնախմբերից և աղբյուրներից. այդ մասին տե՛ս վերևում՝ էջ XLVI: Առաջաբանը և Ը հոդվածը ավարտվում է «ողջ լերուք ի Տէր» արտահայտությամբ, ւրը ցույց է տալիս, որ դրվածքը ուղղված է մեկին և խրախատական նամակի բնույթ ունի, թեև իրականում կարող էր որևէ մեկին ուղղված չլինել:

Առաջաբան, էջ 46—47: *№№ 648, 649, 650, 651, 2964, 3369, 3562 ձեռագրերը չունեն առաջաբան: № 659 ձեռագրում չի պահվել առաջաբանի սկզբի «Որպէս ասէ՝ յերկուց... ասիցեն լերինս փոխեաց՝ փոխեսցի» և վերջին՝ «խաղաղութիւն ձեզ բազմասցի, ողջ լերուք ի Տէր» հատվածները:*

Հոդ. Ա, էջ 47: *№№ 648, 649, 650, 651, 2964, 3369, 3562 ձեռագրերում չի պահվել այս հոդվածը: Այս ձեռագրերում պահվել են Բ, Գ, Դ, ե, Զ, հոդվածները, թվով հինգ:*

Հոդ. Բ, էջ 47: Նախորդ ծանոթ. մեջ նշված յոթ ձեռագրերում այս հոդվածը գրված է Գ հոդվածի տեղը, իսկ Գ-ն՝ Բ-ի։

Հոդ. Գ, էջ 47: № 650 ձեռագրում չի պահվել սկզբի «կամ եղև մեծ և սուրբ ժողովոյն» հատվածը։ Հոդվածի վերջում №№ 649, 650, 651, 2969, 3369 ձեռագրերն ունեն «ըստ առաքելոյն», իսկ բնագրի «ունիցին» բառը № 3369 ձեռագրում փոխարինված է «ուսցին» բառով (էջ 62բ)։

Հոդ. Դ, էջ 47—48: Բնագրի «երէց» բառը №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում գրված է հոգնակի «քահանայից» (№№ 648, էջ 23բ, 3562, էջ 296ա), «սարկաւագ»-ը՝ «սարկաւագաց», «ղուզել»-ը՝ «լուզել» (№ 650-ում՝ լօղեալ. №№ 649, էջ 45ա, 650, էջ 49ա, 651, էջ 35բ, 2964, էջ 65բ)։ Հոդվածի վերջում №№ 649, 650, 651, 2964, 3369 ձեռագրերում կարգում ենք նաև «ընդ նոսա»։

Հոդ. Ե, էջ 48. №№ 648, 3562 ձեռագրերում սկիզբը մի փոքր այլ շարադասութիւն ունի. այսպես՝ «կամ եղև մեծ ժողովոյն քէ քահանայից իսկ և ամենայն ուխտի» (էջ 23բ, 296ա)։ Հոդվածի վերջին՝ «վայել էր» բառին №№ 648 (էջ 23բ), 649 (էջ 45ա), 650 (էջ 49ա), 651 (էջ 36ա), 2964 (էջ 65բ), 3562 (էջ 296ա) ձեռագրերում հաջորդում է «քահանայից», իսկ № 3369 (էջ 62բ) ձեռագրում՝ «քրիստոնէից» բառը։

Հոդ. Զ, էջ 48: Բնագրի «երգոց և փողոց» հատվածը №№ 649, 650, 651, 2964, 3369 ձեռագրերում այսպես է՝ «երգաց (№ 3369-ում՝ երգուց) և պարուց և փողոց»։ Այս ձեռագրերը չունեն նաև «զոն», «զտուն իւր» բառերը։ Վերջինս չունի նաև № 659 ձեռագիրը (էջ 103բ)։ №№ 648, 649, 650, 651, 659, 2964, 3369, 3562 ձեռագրերում բնագրի «առնել» բառը փոխարինված է «լինել» բառով։ Բնագրի «Աստուծոյ քանզի» բառերի միջև կարդում ենք. «գիտասչիր դի հեռանան (№ 659-ում՝ հեռանայ) չնորհք (№№ 659-ում՝ չնորհեն, 648-ում՝ չնորհքն) տեառն (№ 659-ում՝ աստուծոյ)» (№№ 648, էջ 23բ—24ա, 649, էջ 45ա, 650, էջ 49ա, 651, էջ 36ա, 659, էջ 103բ, 2964, էջ 65բ, 3369, էջ 62բ, 3562, էջ 296ա)։

Հոդ. Է—Ք, էջ 48—54: №№ 648, 649, 650, 651, 2964, 3369, 3562 ձեռագրերում այս երեք հոդվածները չեն պահվել։

№ 659 ձեռագրում մինչև է հոդվածի պատգամների քվարկումը կա վերնագիր՝ «Ժ պատգամք» (էջ 103բ, հմմտ. 1բ էջը)։ Առանձին չեղումներ կան պատգամների մէջ. օրինակ՝ ա-ում «ձեզ»-ի փոխարեն կա «քեզ» (էջ 103բ). ահա նաև մյուսները, որոնք խիստ համառոտ են.

«բ. Եւ մի՛ արասցես զնմանութիւն տեառն Աստուծոյ քո ի վերայ երկրի։

գ. Սիրեսցես զտէր Աստուած քո։

դ. Պատուեսյ զաւր չաբաթուն։

ե. Եւ զհայր և զմայր քո պատուեսյ» (էջ 103բ—104ա)։ Սրա տակ գրված է. «Ասյս ի մի տախտակին գրեալ կայր, և ի միւսն» (էջ 104ա), և թվում է հաջորդ զ—ժ պատգամները, ուր համառոտ են Ք-ն և ժ-ն.

«Ք. Մի՛ սուտ վկայեր։

ժ. Մի՛ ցանկայր ամենայնի որ ինչ ընկերին է» (էջ 104ա)։

Հոդ. Ը, էջ 50—52: № 659 ձեռագրում այս հոդվածը միացված է նախորդին։ Այստեղ չեն պահվել հոդվածի վերջին մասի «որ կամիցիս», «զԱստուածդ» և «ողջ լերուք... ուխտի եկեղեցւոյ» բառերը և հատվածը, ինչպես նաև Թ հոդվածը։

ԵՓՐԵՄ ԱՍՈՐՈՒՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վերնագիր, էջ 55: №№ 648, 3562 ձեռագրերում չի պահվել բնագրի «գլուխք Ը» հատվածը (էջ 165բ, էջ 261ա)։ Երկու ձեռագրեր միայն վերջին մասում ունեն բառերի հետևառաջություն. «ի կուսութեան ճառէն, զոր անուցանէր անապատն» (№№ 659, էջ 311ա, 657, էջ 123բ)։ № 657 ձեռագրում նչված է «տուն ԻՀ», մինչդեռ ձեռագրում բերված են կանոնագրքից արդեն հայտնի ութ հոգվածները։ Այս կանոնախմբի վավերականության մասին խոսելիս Հ. Տաշյանը այն իրավացիորեն համարում է կեղծ (Վարդապետութիւն առաքելոց, էջ 148)։ Եփրեմ Ասորու մատենագրության մեջ (Սբբոյն Եփրեմի մատենագրութիւնք, հտ. Ա, Բ, Գ. Վենետիկ, 1836) մեր որոնումներն այս կանոնախմբի վավերականությունը հաստատող որևէ հետք գտնելու համար՝ իզուր անցան։

Հոդվածների բովանդակության ցանկերը մի քանի ձեռագրերում տարբեր են, օրինակ, kmps-ինն այսպես է (ըստ k ձեռագրի).

«Ա. Վասն ժառանգաւորաց որ կամակոր մտաւք ընկենուն զպատիւն։

Բ. Որք ճաշակեցին ի մոռացութեան ի մսոյ կամ ամբարտաւանութեամբ։

Գ. Վասն քահանայի որ լուծանէ գպահս։

Դ. Վասն որ մեռելոտի ուտեն կամ զհեթանոսաց զննեալ։

Ե. Քահանայ որ յանուրջս պոռնկեսցի գիճութեամբ։

Զ. Վասն Աստուածայայտնութեան պահոց ժառանգաւորաց և աշխարհականաց։

Է. Վասն յիշատակաց մարտիրոսաց։

Ը. Վասն տէրունական պատարագի մատուցանելոյ» (էջ 116բ, հմմտ. m էջ 124բ—125ա, p, էջ 125բ—126ա, s, էջ 146բ)։

O ձեռագրում ցանկն այսպիսին է.

«Ա. Վասն քահանայի և կրօնաւորի և սարկաւագի որ կամակոր մտօք զինքն ընկենուն։

Բ. Վասն որք ի մոռացութենէ զշորեքշաբթի և ուրբաթի միս ուտէ։

Գ. Վասն քահանայի որ ի նոյն արասցէ։

Դ. Որք մեռելոտի ուտեն կամ զհեթանոսի ոճենայն։

Ե. Վասն քահանայի որ յանուրջս պոռնկի։

Զ. Վասն Աստուածայայտնութեան պահոցն։

Է. Վասն յիշատակ մարտիրոսաց առնելոյ։

Ը. Վասն տէրունական ոճոյն և կիրակէի պատարագ անխափան մատուցանելոյ» (էջ 324աբ)։

№ 657 ձեռագրում ցանկն այսպիսին է.

«Ա. Վասն կարգաւորաց ընկենուլ զպատիւն։

Բ. Վասն մոռացմամբ ճաշակել։

Գ. Վասն քահանայ ի նոյն գտեալ։

Դ. Վասն մեռելոտոյ ուտելոյ։

Ե. Վասն քահանայի [որ] յանուրջս պոռնկի։

Զ. Վասն Աստուածայայտնութեան պահոցն։

Է. Վասն զմարտիրոսաց փոխել։

Ը. Վասն տէրունական պատարագինն» (էջ 123ա)։

Սրանից հետո, որով ավարտվում է սույն կանոնախմբի ցանկը, որպես շարունակություն նչված են մի քանի կանոնախմբերի վերնագրեր.

«Թ. Վասն Կիւրղի Աղէքսանդրացւոյն։

Ժ. Աթանասի ասացեալ։
ԺԱ. Յոհանու Մանդակունւոյ։
ԺԲ. Փիլիպոսի առաքելոյն։
ԺԳ. Եպիփանու (էջ 123ա)։

Ձեռագրում այս հերթականությամբ էլ դասավորված են վերոհիշյալ կանոնախմբերը։ Ցանկին նայելով ընթերցողը կարող է այն սխալ տպավորությունը ստանալ, թե եփրեմ Ասորու կանոնախմբի № 657-ի տարբերակը ունի ութից ավելի հոդվածներ։

Հոդ. Ա, էջ 55—56։ № 648-ում չի պահվել թիվը։ Բնագրի «ի հաղորդութիւնն»-ը №№ 648, 3562-ում դրված է «ի հաղորդութեան» ձևով (էջ 166ա, էջ 261ա)։

Հոդ. Բ, էջ 56։ Այս հոդվածի նյութն ընդգրկող և միևնույն հեղինակի անունով մի այլ գրվածք գտնում ենք № 991 Ճառընտիրում (էջ 297բ—300բ), «Երանելոյն Եփրեմի Տորին Ասորոյ վասն ոչ լուծանելոյ զպատս չորեք[չ]աթաթին եւ ուրբաթի» խորագրով։ Այս բնագիրը բավական ընդարձակ է և ոչ մի նմանություն չունի սույն հոդվածի հետ։ Նման մի բնագիր տես նաև Բ. Սարգիսյանի Յուցակում։ Ըստ վերջինիս՝ «Հետնագույն և հետևակ գրչե մը հերյուրված կամ թարգմանված կ՝երեի» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հատ. Բ, Վենետիկ, 1924, էջ 585)։

Հոդ. Դ, էջ 57։ Բնագրի «պապաշխարեսցեն եւ դարձցին» հատվածը №№ 648, 3562-ում դրված է «դարձցին և պաշխարեսցեն» ձևով (էջ 166բ, էջ 261բ), իսկ վերջին՝ «պապաշխարութեան» բառը երկու ձեռագրում էլ չի պահվել։

Հոդ. Զ, էջ 56—58։ №№ 648, 3562-ում հոդվածն սկսվում է այսպես. «Քահանայք Աստուածայայտնութեան այսպէս կարգեցաւ այրեաց և կրօնաւորաց և ապաշխարողաց» (էջ 166բ, էջ 261բ)։ Այս ձեռագրերում չեն պահվել նաև երկրորդ «կարգեցան» և «ութաւրեայ» բառերը։ №№ 657, 659 ձեռագրերում բնագրի «Ե»-ի փոխարեն նշված է. «Խ» (էջ 123բ, էջ 312բ)։

Հոդ. է, էջ 58։ №№ 657, 659-ում չի պահվել բնագրի «յիշատակս» բառը (էջ 124ա, էջ 312բ)։

ԿՅՈՒՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑՈՒԻՆ ՎԵՐԱԴՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վերնագիր, էջ 59: №№ 659, 657 ձեռագրերը բնագրի «գլուխք Ե»-ի փոխարեն ունեն «ասաց ելալ» (էջ 310ա, էջ 124ա)։

Պահվել է երկու ցանկ։ kmps ձեռագրերի ունեցածը բերում ենք ըստ k-ի։

«Ա. Վասն կուսակրաւն և այրի քահանայից զառնել քահանայագործութիւն։

Բ. Վասն քահանայի որ կին ունի և շնացաւ։

Գ. Վասն որ ամուսնացան ընդ հեթանոսս։

Դ. Վասն որք զժառանգս հեթանոսաց սնուցանեն։

Ե. Վասն որ զմկնանկն աւրհնեն և զայլ գարշելիս» (էջ 155ա, հմմտ. m, էջ 160ա, p, էջ 168ա, s, էջ 193աբ)։

Իսկ O-ինն այսպիսին է.

«Ա. Վասն կրօնաւորի կամ այրի քահանայի աշխարհի քահանայութիւն արասցէ։

Բ. Վասն քահանայի որ ի շնութիւն անկանի։

Գ. Վասն որք ամուսնացեալ են ընդ հեթանոսաց։

Դ. Վասն որք զժառանգս հեթանոսաց առնուն ի սնունդս։

Ե. Քահանայ (րն. վահանայ—վ. հ.) որ աւրհնէ զմթեր, այսինքն՝ մկնընկեաց ամանս» (էջ 335բ)։

Հոդ. Ա, էջ 59: Բնագրի «նաեւ ժողովուրդքն» բառերի միջև №№ 648, 3562 ձեռագրերը ունեն «իւր» (էջ 165ա, էջ 266բ)։

Հոդ. Դ, էջ 59—60: Հոդվածի վերջում՝ «ապա յետին» բառերի միջև №№ 648, 3562 ձեռագրերը ունեն «թէ» (էջ 165բ, էջ 266ա)։ Բնագրի «Քոջակին» բառից մինչև կանոնախմբի վերջը չի պահվել № 3562 ձեռագրում, հավանաբար, ընդօրինակութեյունն ընդհատվելու պատճառով, որովհետև ձեռագրի հաջորդ 267, 268 թերթերը դատարկ են։

Հոդ. Դ, էջ 60: № 648-ում չի պահվել բնագրի «ըստ» բառը (էջ 165բ)։ №№ 648, 657, 659 ձեռագրերում բնագրի «կրեսցեն» բառի փոխարեն դրված է «ընկալցին» (էջ 165բ, էջ 124ա, էջ 311ա)։

Հոդ. Ե, էջ 60—61: №№ 657, 659 ձեռագրերում չի պահվել սույն հոդվածը, իսկ № 648-ը չունի միայն «ինչ» բառը (էջ 165բ)։

ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՑՈՒԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վերնագիր, էջ 62: №№ 648, 3562-ում չեն պահվել «գլուխք ե» բառերը։ № 657-ում այս կանոնախումբը առանց խորագրի միացված է Փիլիպպոս առաքյալի կանոնախմբին, սակայն այդ չփոթը ուղղելու նպատակով գրիչն ևՀոդվածի դիմաց, աջ լուսանցքում, կարմիր մելանով գրել է. «Եպիփանուն էր» (էջ 125ա), որը և նկատվում է որպես վերնագիր։

Պահվել են մի քանի տեսակ ցանկեր, օրինակ, №№ 648, 3562-ում հետևյալ կերպ է.
«Ա. Վասն եպիսկոպոսաց և երիցանց և սարկաւագաց ոչ է պարտ տանտիկին ունել։
Բ. Վասն որք ուլունս արկանեն։
Գ. Վասն Յարութեան զերիս աւուրս ոչ ընթեռնուլ կաթողիկէ։
Դ. Վասն որք պատահական մահուամբ մեռանի։
ե. Վասն զի ոչ է պարտ ի Զատկէն մինչև ի Պեն[տ]եկոստն պըսակ դնեն (№ 648, էջ 164բ. հմմտ. № 3562, էջ 266ա)։

kmps-ում այսպես է. «Ա. Վասն ժառանգաւորաց որ տանտիկին ունին հեթանոսաբար։
Բ. Վասն որ ուլունս կապեն և գրարարութիւն անեն։
Գ. Վասն թէ զկնի Յարութեան զերիս աւուրս ոչ ընթեռնուն կաթուղիկեաք։
Դ. Վասն որք յանկարծակի չար մահուամբ մեռան։
ե. Վասն որք ի տէրունի աւուրսն պսակ դնեն» (k, էջ 153ա, m, էջ 158ա, p, էջ 166ա, s, էջ190բ—191ա)։

Ահա և O-ի ունեցածը. «Ա. Վասն եպիսկոպոսի և քահանայ[ի] որ տանտիկին ի տան ունիցի[ն]։
Բ. Վասն որք ի կախարդս երթան։
Գ. Զկնի Յարութեան զերիս աւուրս ոչ ընթեռնուն կաթուղիկեայքն։
Դ. Վասն որք ի ծովու և ի չար գազանէ մեռանին։
ե. Ի Զատկէն մինչև ցՊենդակոստն և յամենայն կիրակէի պսակ չանեն» (էջ 336բ)։

Հոդ. Ա, էջ 62: № 657 ձեռագրի բնագիրն էական տարբերություն չունի։ Հոդվածի վերջին «ի քերցս» բառը միայն № 648-ում դրված է «ի քեռ նոցա» ձևով (էջ 164բ)։
Հոդ. Դ, էջ 63: Նկատելի տարբերությունն այն է, որ բնագրի «ի գետոյս» բառը №№ 648, 3562 ձեռագրերում դրված է հոգնակի «ի գետոցս» ձևով, իսկ «և ի սրոյս» հատվածը երկու ձեռագրերում էլ չի պահվել (հմմտ. էջ 165ա, էջ 266բ)։

ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ ԱՆՏԻՈՔԻ ԺՈՂՈՎԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերնագիր, էջ 65: Ծանոթագրություններում օգտագործված ձեռագրերից միայն № 659-ը առանց խորագրի, ունի այս բնագիրը (էջ 204ա—208ա)։ Վերջինս անմիջապես հաջորդում է Բարսեղ Կեսարացու մի նամակին, ուղղված Անտիոքի եպիսկոպոս Դիոդորին (տե՛ս «Կանոնադիրք Հայոց», հտ. Ա, էջ 620—621)։

kmps *ձեռագրերում մյուս կանոնախմբերի նման, այս բնագիրը ևս ունի բովանդակության ցանկ. ահա այն ըստ* k *ձեռագրի.*

«Ա. Երեք հարիւր ե ԺԸ որ ի Նիկիա, ՃՄ, որ ի Կոստանդնուպոլիս, Մ որ յԵփեսոս։

Բ. Որ ոչ հաւատալ զբնութիւն զէութիւն միութեանն բանին։

Գ. Որ ոչ խոստովանի զծիսուս Աստուած։

Դ. Որ ասէ թէ յերկնից կամ յայլմէ բնութենէ։

Ե. Որ զմարմինն Աստուծոյ ապականացու ասէ։

Զ. Որ ասեն Բ բնութիւն։

Է. Որ ասեն զմահն Տեառն և զչարչարանսն ապականացու։

Ը. Որ ասեն զմարմինն Տեառն ի միաւորութենէն մինչև յարութիւն» (էջ 139ա, հմմտ. m, *էջ 144բ,* p, *էջ 150ա,* s, *էջ 173բ)։*

№ 659 ձեռագրում, ինչպես ասացինք, պակասում է վերնագիրը, հետևապես չի իմացվում, թե այն ում է վերագրված։

Այժմ մի քանի նշում № 659 ձեռագրի պահած չեղումների և ընթերցումների մասին։ Բնագրի մինչև «նզովեմք և զՓլաբիանոս եպիսկոպոս» (էջ 66, տող 12) հատվածը № 659 ձեռագրում կարգում ենք. «նզովեմք և զՄանի և զՄարկիոն և զԲարդուծան և զԵւտիքոս որ ասաց եթէ յերկնից երեր զմարմինն Ցիսուս» (էջ 204բ, հմմտ. «Գիրք քղթոց», էջ 66, «Կնիք հաւատոյ», էջ 370)։ Մի այլ տեղ բնագրի «նզովեմք և զԵւդոդորոս... զԲարա ի Մծբնայ» հատվածի (էջ 67, տող 6) փոխարեն կարդում ենք «նզովեմք և զԵւդոդորոսն և զԴիոգորոս և զԲայ և զԿակ և զԲարայ ի Մծբնայ» (էջ 205ա)։ Այսպես աղավաղված է նաև բնագրի «Խաչինն» (էջ 68, տող 5) բառը «խաղին» ձևով (էջ 205բ)։ Մինչև 69-րդ էջի առաջին տողը, որտեղ «Գիրք քղթոց»-ում սկսվում է Աբդիշո եպիսկոպոսի երկրորդ նամակը, № 659 ձեռագրում գտնում ենք վերնագիրը՝ «Ճանկ նզովելոյ զԱրիոս և զայլ հերձուածս» (էջ 206ա), որին հետևում է հետևյալ ցանկը.

«Ա. Բնութեան։

Բ. Խոստովանութեան։

Գ. Որ յերկնից բերեալ ասեն զմարմինն Քրիստոսի։

Դ. Որք ապականացու ասեն զմարմինն Քրիստոսի։

Ե. Երկուց բնութեանց։

Զ. Որ ասեն զչարչարանս փրկարար ապականացու։

Է. Որ զմարմինն տեառն ապականացու ասեն մինչև ցՅարութիւնն (էջ 206բ)։

Այս բնագիրը պահվել է նաև մեր Մատենադարանի №№ 859 (էջ 194բ—199ա), 5182 (էջ 133ա—136բ) և 8463 (էջ 134բ—139բ) ձեռագրերում։ Նկատելի է, որ վերջիններիս ունեցածը քաղված է կանոնագրքի բնագրից, եթե բացառենք մի-երկու բառերի սխալ ընդօրինակությունը կամ բաց թողումը, որոնք արդյունք են անուշադիր ընդօրինակության, մնացածը նույնն է։ Միայն № 859 ձեռագրում չի պահվել ժողովի մասնակիցների ցանկը (էջ 199ա)։

№ 659 ձեռագրում մի փոքր ընդարձակ է և հատվածը (էջ 70). «Որ ասէ զկարգ միութեանն բաժանել յերկուս բնութիւնս ի Քրիստոս կամ երկուս դէմս և երկու կերպարանս, և յայն մուծանեն զչորրորդութիւնն, այսպիսիքն նզովեալ լիցին» (էջ 207ա)։

Ժողովի մասնակիցների ցուցակում, բնագրի «Դեմատրոս, Բարսոսե-ի (էջ 72) փոխարեն № 659 ձեռագիրն ունի «Դեմատ ոս (մեկ տառի տեղ բաց է թողնված—Վ. Հ.), Բասոսս» (էջ 208ա), իսկ «Պատակիոս» (էջ 72) անունը դարձել է «Պատարակիոս» (էջ 208ա)։ № 659-ում չեն պահվել վերջին՝ «Ի եպիսկոպոսք» բառերը։

Բնագրի բ հատվածի «որ ոչ» բառերի վրա (էջ 69, տող 3) F ձեռագրում կա նշան և 162ա էջի աջ լուսանցքում գրիչը գրում է. «Ճայլ օրինակէ այս տօնս այսպէս է. «որ ոչ խոստովանի զՔրիստս Աստուած որ համբերեաց խաչի կամօրութեամբ վասն մեր՝ մին ի դիմաց երրորդութեան և ի բնութենէ Աստուծոյ Հօր. այլ փոխանակ այդորիկ ասէ, թէ մարդ է բնութեամբ, և այր է արարած, և Աստուած է չնորհօք, և որդի է ընտրութեամբ և ապականացու մարմնով, և չարչարելի և մահկանացու բնութեամբ մարդկայնով՝ եղիցի նզովեալ»։ Այս մեջբերումը ճիշտ և ճիշտ «Գիրք թղթոց»-ի ունեցածն է (էջ 68)։ Այն արդյոք քաղված է վերջինից, թե՞ մի այլ կանոնադիրք ձեռագրից։

ԵՐԿՐՈՐԴ ՆԻԿԻԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վերնագիր. էջ 73: №№ 657, 8459, 9311 ձեռագրերում չի պահվել այս կանոնախումբը, իսկ մյուս ձեռագրերում վերնագիրը ունի տարբեր շեղումներ, օրինակ, № 3369 ձեռագրում պահվել է «Կանոն երկրորդ Նիկիոյ, որք եղան ՅՃԺԸ եպիսկոպոսունս կրկնաբանելով կարճ ի կարճոյ» (էջ 36ա) ձեռ. № 659 ձեռագրում չեն պահվել Կանոնագրքի ունեցած «երկրորդ» բառը և վերջին՝ «կրկնաբանելով կարճ ի կարճոյ գլուխք ՅԺԴ» հատվածը (էջ 85բ), իսկ մնացած՝ №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում այս կանոնախումբը քանի որ գտնվում է Նիկիայի առաջին տիեզերական ժողովի կանոնախմբից հետո, ուստի այս կանոնախմբի վերնագիրը ենթարկված է նախորդին, այսպես. «Այլ կանոնք Նիկիայ (№№ 650, 651, 2964 ձեռագրերում՝ Նիկիական)» (№№ 648, էջ 11բ, 649, էջ 31ա, 650, էջ 34բ, 651, էջ 23բ, 2964, էջ 44ա, 3562, էջ 281ա). այսինքն, այս կանոնները ևս Նիկիայի առաջին տիեզերական ժողովի մի այլ որոշումներն են:

Ծանոթագրություններում օգտագործված մյուս ձեռագրերի ունեցած տարբերակների մասին խոսելիս պետք է նշել, որ №№ 648, 649, 650, 651, 2964 և 3562 ձեռագրերում 114 հոդվածներից պահվել են 25-ը, որոնք ունեն ոչ թե հերթական՝ Ա, Բ, Գ, Դ, Ե և այլն համարներ, այլ կանոնագրքի ունեցած համարները, օրինակ, այստեղ առաջին տեղում դրված է ԻԱ հոդվածը՝ ԻԱ համարով, երկրորդ տեղում ԼԸ հոդվածը՝ ԼԸ համարով, երրորդ տեղում ԼԹ հոդվածը՝ ԼԹ համարով և այլն: Ի դեպ սա ցույց է տալիս, որ այս տարբերակների սկզբնական բնագիրը կազմվել է կանոնագրքի բնագրից և պետք է ունենա ամենայն հավանականությամբ XV—XVI դարի հնություն: № 3369 ձեռագրի տարբերակում սկզբի 25 հոդվածները նույնն են, ինչ որ № 648 և սրան հարող ձեռագրերում, բայց հոդվածների համարակալումը վերջիններիս նման չէ, այլ փոփոխված և հաջորդական՝ Ա, Բ, Գ, Դ, Ե և այլն: Այնուհետև այս 25 հոդվածներին հաջորդում է վերևում նշված (էջ LXII—LXIII) Ա—ՃԲ հոդվածների խումբը՝ այս կանոնախմբի սկզբնական բնագիրը 47 հոդվածով, սկզբում հաջորդականությունը մի փոքր խախտված, գրված է իր հերթական ԻԶ—ՀԲ համարների տակ: Ապա սրան հաջորդում են կանոնախմբի մնացած հոդվածները:

Ցուրաքանչյուր հոդվածի մասին իր տեղում կխոսվի անհրաժեշտության չափով:

Այս բոլոր ձեռագրերից միայն № 659-ի տարբերակն է, որ ունի հոդվածների բովանդակության այբբենական ցանկ՝ ինչպես մի քանի ուրիշ կանոնախմբեր: Ցանկը արված է խնդրո առարկա հանդիսացող հոգվածը հեշտությամբ գտնելու համար, թեև որոշ տեղերում հոդվածների համարները ճիշտ չեն նշված: Բերում ենք այդ ցանկն ամբողջությամբ: Ցանկի ձախ կողմում, կլոր փակագծերում, նշում ենք ձեռագրի հոդվածների այն համարները, որոնք շեղվում են ցանկում նշված համարներից, իսկ այնպիսիները, որոնք համապատասխանում են ցանկի նշումներին, բաց ենք թողնում:

Ցանկ Նիկիոյ

[Ա]մուսնացողաց ընդ հերցուածողս—ՀԻ
(ՂԸ) Աղաւթելոց—ՃԺԶ
(ՂԴ) Այրի մարդոց—ՂԴ
Բորոտաց—ԻԷ
Աղաւթից—ՁՔ, ՁԳ
Բազմամուսնաց—ԼԸ
Ամուսնացելոց—Ք, ԽԶ
(ՁՀ) Գրակարդացաց—ՁՔ
Արհամարհելոց—ԺԶ
(ՂՔ) Եպիսկոպոսաց—Դ, Ե, Կ, ԿԴ, ՂՀ
Արհամարհողաց—ԽՔ, Մ
Երպիսկոպոսաց—Է, ԺԵ, ԻՀ, ԿԴ, ԿԵ
(Ղ) Ագաբաց—ՃՔ, ՂԱ
(ՂԱ) Եկեղեցականաց—ԻԵ, ԿՔ, ՂԲ
Ամբարտաւանից—ՃՔ
Երիցանց մեղուցելոց—ԽԱ, ԽԲ, ԽԴ, ԿԲ
Առժամայն մկրտելոց—ՀԲ, Ճ
(ՀԷ) Եպիսկոպոսաց—ԿՀ, Հ, ՀԵ, ՃԺԲ

(ՁՔ) Երգմնացողաց—Ղ
Երիցու ի բեմ ելանել—ՃԺԱ
Զոհողաց—ԻԱ, ԻԲ
Զանազան մեղուցելոյ—ՀԱ
Ընչից եկեղեցւոյ—ՇԱ
Թողացելոց զորդիս—ՇԵ
(ՂԶ) Թովչաց—ՃԺԵ
Ժառանգաւորաց—Ժ
(Զէ) Ժառանգաւորաց—ԺԷ, ԼՀ, Ա, ՁՀ, ՃԲ
Ժողովրդականաց—ՀԲ, ՁԱ, ՁԴ
Լուծողաց զպահս—ՇՀ
Խորոզաց—ԱՀ
Շառայից—ԱԷ
Շափս հարկանողաց—ՃՀ
Կրճատելոց—Ա
(ՂԲ) Կիրակէի—Ի, ՇԷ, ՂԳ
Կուսանաց—ԻԲ, ԼԳ
Կանանց ամուսնացելոց—ԼԴ
Կանանց—ՇԳ, ՇԴ, ՁԵ
(Ճ) Կէսսարկաւագաց—ՂԲ
Հանկանակողաց—ՃԺ
Հեթանոսաց—Բ
Հաւատացելոց—ԺԴ
Հերձուածողաց—ԺԲ
Հիւանդաց—ԱԳ
Հերձուածողաց դաւց—ՀԴ, ՀԳ
Հիւանդաց մկրտելոց—ՃԳ, ՃԴ
Ձեռնադրելոց—Ը, ԿԶ, Կէ
(ՂԴ) Ճաշել ընդ հերձուածողս—ՂԵ
Միաշաբաթի—Զ
(ՂԷ) Մսակերաց—ՂԶ
Մկրտելոց—ՃԱ, ՃԲ
Ցափրշտակողաց—ԻԳ
Ցղի կանանց—ԼԷ
Նշելոյ ընդ կանայս—ԼՂ
Շնացելոց—Լ, ԼԲ
Շինական տանց—ՃԺԳ
Ուրացողաց—ԺԱ, ԺԲ
Որդոց զՆայր թողուլ—ՇԶ
Ուխտաւորաց—ԿԱ
Պզծելոց—ԻԴ
Պոռնկաց—ԻԶ
Պառաւանց—ՀԶ
Սովորութեանց—Զ
(ՂՁ) Ասրկաւագաց—ԺԸ, ԱԵ, ԶԶ
Սպանողաց զմանուկ—ԼԱ, ԼԲ
Սրբութեանց—ՀԸ
(ՁԶ) Սպասաւորաց—ՁԷ
Վիճակելոց—Գ
Վախճանելոց—ԺԳ
(ՂԸ) Տաւնաւղաց ընթերայս (իմա՝ ընդ Հրէ-այս—Վ. Հ.)—ՂԷ
Քառասնորդաց—ՃՆ, ՃԶ, ՃԷ, ՃԸ (էջ 84բ—85բ)։

Ցանկի վերնագրերից երկուսը՝ «Ձեռաւթելոց—ՃԺԶ» և «Թովչաց—ՃԺԵ» գրչի կողմից ավելացվել են տողամեջ, հետագայում էլ նշված են այնպիսի համարներ, որպիսի համարներով ձեռագրում հոդվածներ չկան. վերջին հոդվածը կրում է ՃԺԴ համարը։ Մի այլ «կանանց» վերնագրում նշված են ՇԳ, ՇԴ, ՁԵ համարները։ Վերջին՝ ՁԵ համարը ճիշտ չէ նշված։ Ձեռագրի հոդվածների շարքում, ՁԴ և ՁԵ հոդվածների միջև կա մի հոդված՝ կանանց բեմ չբարձրանալու մասին, որը համարակալում չունի։ Ցանկում խոսքը թերևս սրա մասին է։ Ճիշտ չի նշված վերջին՝ «Քառասնորդաց» վերնագրի վերջին՝ ՃԸ համարը, որի ներքո գտնվող հոդվածը վերաբերում է հարսանիքներում ծափ, պար և անպատեհ երգեր արգելելուն։ Գիտա-քննական բնագիրը կազմելու համար օգտագործված ձեռագրերից kmps-ն ունեն միևնույն ցանկը, այն բերում ենք ըստ k ձեռագրի.

Ա. Վասն որ կրճատեն զինքեանս։
Բ. Վասն նորատունկ և նոր ուսումն հեթանոսաց որ խնդրեն ձեռնադրութիւն։
Գ. Վասն վիճակաւորաց որ ունին տնտեսս։
Դ. Վասն եպիսկոպոս ձեռնադրելոյ։
Ե. Վասն որոշելոց յեպիսկոպոսէ։
Զ. Վասն զսովորութիւն ոչ նորաձևել։
Է. Վասն ի մայրաքաղաքն մի եպիսկոպոս լինել։
Ը. Վասն զնաւատիկոսն ձեռնադրելոյ։
Թ. Վասն երկրորդ ամուսնացելոց։
Ժ. Վասն ժառանգաւորաց որ զմեզս ոչ խոստովանին։
ԺԱ. Վասն ուրացողաց և անցաւորաց ի ժառանգութիւն ոչ ածելոյ։
ԺԲ. Վասն ուրացողաց, թէ որպէս շնորհին արժան առնել։
ԺԳ. Վասն վախճանելոյ շնորհին արժան առնելոյ։
ԺԴ. Վասն թէ զնոր հաւատացեալս որպէս պարտ է մկրտել։
ԺԵ. Վասն եպիսկոպոսաց քաղաքէ ի քաղաք չփոխել։
ԺԶ. Վասն ժառանգաւորաց որ զեկեղեցիսն արհամարհեն։
ԺԷ. Վասն ժառանգաւորաց որ տոկոսիս առնուն։

ԺՐ. Վասն սարկաւագի՝ աւրէնս ոչ տալ։
ԺՔ. Վասն զհերձուածողսն մկրտելոյ։
Ի. Վասն կիրակէի ծունր ոչ կրկնել։
ԻԱ. Վասն ժառանգաւորաց որ զոհեցին և ապա դարձան։
ԻԲ. Վասն որք վտանգիւ և բռնութեամբ զոհեցին։
ԻԳ. Վասն որ բռնութեամբ զխօսեցեալ աղչկունս յափշտակեն։
ԻԴ. Վասն ուխտաւորաց որ ոչ կամին ճաշակել ի մսոյ։
ԻԵ. Վասն եկեղեցւոյ ստացուածոյն որ վաճառեն։
ԻԶ. Վասն պոռնկացելոց ընդ անասունս ապաշխարելոյ։
ԻԷ. Վասն բորոտաց և դիւահարաց, թէ որպէս պարտ է աղաւթել։
ԻԸ. Վասն եպիսկոպոսաց որ ոչ ընկալան։
ԻԹ. Վասն որ կուսութիւն խոստացան և արհամարհեցին։
Լ. Վասն շնացողաց։
ԼԱ. Վասն թէ մայր զմանկունսն սպանանէ։
ԼԲ. Վասն որ ընդ երկու քեռն ապականութիւն գործէ։
ԼԳ. Վասն կնոջ որ երկու եղբարց ամուսնասցի։
ԼԴ. Վասն որք ի բազում ամուսնութիւնս անցան։
ԼԵ. Վասն որք ցանկան ձեռն արկանել կնոջ և ոչ կարացին։
ԼԶ. Վասն երախայից որ ոչ դադարեն ի մեղանչելոյ։
ԼԷ. Վասն մկրտելոյ զյղիսն։
ԼԸ. Վասն զշնացեալսն ոչ մատուցանել ի քահանայութիւն։
ԼԹ. Վասն քահանայից ոչ երթալ յերկրորդ հարսանիսն։
Խ. Վասն նախ քան զձեռնադրութիւնն մեղուցեալ ժառանգաւորաց։
ԽԱ. Վասն կանանց քահանայից որ շնացան յառաջ կամ յետոյ քան զկարգ։
ԽԲ. Վասն երեսնամեայ ձեռնադրելոյ զքահանայս։
ԽԳ. Վասն որք ի հիւանդութեան մկրտեցան և խնդրեն ձեռնադրութիւն։
ԽԴ. Վասն քահանայից որ յանդիման եպիսկոպոսաց աղաւթս կատարեն։
ԽԵ. Վասն սարկաւագաց յեկեղեցիս լինել։
ԽԶ. Վասն որք զամուսնութիւն արհամարհեն։
ԽԷ. Վասն ծառայից, որ ի ծառայս աստուածպաշտութեան ելանել կամին ի տերանց։
ԽԸ. Վասն որ գարշին ի մսակերաց։
ԽԹ. Վասն որ յամուսնացեալ իրիցուէ խորշի։
Ծ. Վասն որ գխորհուրդ եկեղեցւոյ ի տան գործեն։
ԾԱ. Վասն որ զեկեղեցւոյ պտուղն ծախեն։
ԾԲ. Վասն որ գարշին ագապաց։
ԾԳ. Վասն քահանայից որ ի կապեղայս մտանեն։
ԾԴ. Վասն սարկաւագաց և այլ ուխտի մանկանց որ զհաց և զգինի աւրհնեն։
ԾԵ. Վասն որ յեպիսկոպոսէն կարգացն երդմնեցուցանել զերախայս։
ԾԶ. Վասն քահանայից որ մասունս բառնան յագապաց։
ԾԷ. Վասն որք յեկեղեցիս ճաշ ուտեն։
ԾԸ. Վասն որք ի կիրակէի և ի շաբաթու հրէանան։
ԾԹ. Վասն որ այր և կին ի միասին ի բաղանիս մտանեն։
Կ. Վասն որ ընդ հերետիկոսսն հաղորդին։
ԿԱ. Վասն որք աղաւթս առնեն առ յարարածս։
ԿԲ. Վասն թովչաց և կախարդաց։
ԿԳ. Վասն որք ընդ Հրէայս և ընդ հերձուածողս և ընդ հեթանոսս հաղորդին։
ԿԴ. Վասն եպիսկոպոսի որ ոչ գա ի կոչեցեալ ժողովն։
ԿԵ. Վասն կանանց որ փոքրեն զգլուխս և առնացի զգենուն։
ԿԶ. Վասն զաւակաց որ ի պատճառս աստուածպաշտութեան թողու[ն] զծնաւղս։
ԿԷ. Վասն որ թողու զիւր զաւակսն յաղագս Հզնութեան։
ԿԸ. Վասն որ ի կիրակէի կամ յաւուրս Պենտակոստէից պահեն։
ԿԹ. Վասն որք զեկեղեցական պահս լուծանեն։
Հ. Վասն որք ի ժողովոց մարտիրոսաց գարշին։
ՀԱ. Վասն լուծեալ ժառանգաւորաց որ ի ժողովս գան։
ՀԲ. Վասն որ զօտար արսն առանց թխթոյ քահանայ ձեռնադրեն։

ՀԳ. Վասն իրիցանց որ կանոնական թուխք տան։
ՀԴ. Վասն գաւառաց եպիսկոպոս եպիսկոպոսին կարգել։
Հե. Վասն եպիսկոպոսաց որ յայլում գաւառ ձեռնադրութիւն առնել։
ՀԶ. Վասն եպիսկոպոսաց որ զմիմեանց սահմանս լուծանեն։
Հէ. Վասն այնոցիկ որ ոչ ընկալան զձեռնադրութիւն՝ մի՝ հաղորդեսցին։
ՀԸ. Վասն ձեռնադրեալ եպիսկոպոսաց որ ոչ ընկալան ժողովուրդն։
ՀԹ. Վասն եպիսկոպոսաց որ փոխանորդ կացուցանեն։
Զ. Վասն եպիսկոպոսաց գիտոն և իշխան լինի և զիւր ինչսն առանձին։
ԶԱ. Վասն եպիսկոպոսաց ամենայն իրաց իշխանութիւն ունել յեկեղեցիսն և ընչիցն։
ԶԲ. Վասն որք յազգի յազգի ի մեղս անկանին։
ԶԳ. Վասն որ զառաջամայն մկրտեալսն ի քահանայութիւն մատուցանեն։
ԶԴ. Վասն հերետիկոսաց ընդ ուղղափառսն ոչ աղաւթեալ։
Զե. Վասն որ ի հանգստարանս և ի վկայարան հերետիկոսաց երթան։
ԶԶ. Վասն որ ընդ հերետիկոսսն ամուսնութիւն առնեն։
Զէ. Վասն պառաւանց որ յառաջոյ նստին։
ԶԸ. Վասն ընտրութեամբ առնել եպիսկոպոսն։
ԶԹ. Վասն զսրբութիւնսն յայլ տեղիս ոչ առաքել։
Ը. Վասն ժողովրդականաց որ եկեղեցւոջ գիրս կարդան կամ սաղմոս ասեն։
ԸԱ. Վասն սաղմոս ասել և գիրս կարդալ։
ԸԲ. Վասն ամենայն ժողովս պաշտաւն լինել։
ԸԴ. Վասն զկնի վարդապետութեան երախայից աղօթս առնել։
ԸԴ. Վասն ապաշխարողաց և հաւատացելոց նոյնպէս։
Ընե. Վասն աշխարհականաց որ ի բեմս ելանէ։
ԸԶ. Վասն կէսսարկաւագաց որ զսարկաւագաց տեղիս կամին ունել։
ԸԷ. Վասն ուրարի, թէ ո՞րպէս պարտ է ունել։
ԸԸ. Վասն կէսսարկաւագաց ոչ քողուլ զգրոնս։
ԸԹ. Վասն որ յետ երկուց չաբաթուց Քառասնորդացն ի մկրտութիւն գան։
Ձ. Վասն որք կամին գալ ի մկրտութիւն։
ՁԱ. Վասն Աւետարան կարդալոյ։
ՁԲ. Վասն որք ի հիւանդութեանն մկրտին։
ՁԳ. Վասն զմկրտեալսն ուծանելոյ։
ՁԴ. Վասն թէ ի Քառասնորդսն շաբաթ և կիրակէ պատարագ մատուցանել և ոչ յամենայն աւուր։
ՁԵ. Վասն զմեծ ի հինգշաբաթին ոչ լուծանել։
ՁԶ. Վասն հարսանեաց ի Քառասնորդս և ի Պենտակոստն և ի կիրակէսն ոչ առնել։
ՁԷ. Վասն ըսպասոյ և երգոց հարսանեաց։
ՁԸ. Վասն քահանայից ըստահակ տեսիլս տեսլեան։
ՁԹ. Վասն հանդանակողաց։
Ճ. Վասն քահանայից որ յառաջ քան զեպիսկոպոսն ի սեղանն նստին։
ՃԱ. Վասն եպիսկոպոսաց յազարակս և ի գեղս ոչ նստել։
ՃԲ. Վասն եպիսկոպոսաց և քահանայից որ ի շինական տունս պատարագս մատուցանեն։
ՃԳ. Վասն ի յեկեղեցիս զկանոնեալ գիրսն կարդան։
ՃԴ. Վասն ոչ լուծանելոյ զնիկիական կանոնսս (էջ 46ա—48բ, համմտ. m, էջ 57բ—60ա, p, էջ 51ա—53բ, s, էջ 58ա—61ա)։

Հոդ. Ա, էջ 73: ՄՄ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում այս հոդվածից մինչև ի հոդվածը չի պահվել։ № 3369 ձեռագրում այս հոդվածը դրված է ԻԶ համարի տակ (էջ 37ա)։

Հոդ. Բ, էջ 73: № 3369 ձեռագրում այս հոդվածը դրված է ԻԷ համարի տակ։ Այստեղ էական տարբերություն չկա, եղածը ուղղագրական կամ քերականական տարբերություն է, օրինակ, այս տարբերակում մի հատվածը կարդում ենք այսպես. «զնոր տունկս և նոր յուսմունսնս կամ «ածել յեպիսկոպոսութիւնս, ուր չի պահվել բնագրի «յառաջս բառը (էջ 37ա)։ Երկու հոդվածում էլ «և» չգոկապի փոխարեն № 659 ձեռագրում դրված է «կամ» (էջ 85բ—86ա), իսկ «զնորուսումնսս-ը՝ «նոր ուսումնսն» ձևով (էջ 86ա)։

Հոդ. Գ, էջ 73: № 3369-ում այս հոդվածը տես ԻՀ համարի տակ։ № 659-ում տարբերությունը այսպիսին է. «բայց ի մաւրէ և ի հանոյ և ի քեռէս (էջ 86ա)։ № 3369-ում չի պահվել

«ի հանուց» բառը, իսկ «ի ներքս ագականս»-ը պահվել է «ի ներքսականս» (էջ 37ա) ձևով, որը պետք է ուղղել «ի ներքս [ած]ականս»։

Հոդ. Դ, էջ 73։ № 3369-ում այս և հաջորդ հոդվածները սխալմամբ դրված են «ԻԳ» և «ԻԴ» համարների տակ (էջ 37ա), մինչդեռ իր ձեռագրի հերթականության համապատասխան, պետք է լինեն «ԻԲ» և «Լ» համարներու։ № 659-ում վերջին հատվածը այսպես է. «Եպիսկոպոսաց մերձակայութեան ի վտանգի» (էջ 86ա)։

Հոդ. Ե, էջ 74։ № 659-ում չի պահվել «գառ» բառը։

Հոդ. Զ, էջ 74։ № 3369-ում այս հոդվածը տես Լև համարի տակ (էջ 37ա)։ Տարբերությունը №№ 659, 3369 ձեռագրերում միևնույն բառերի մեջ է, երկուսն էլ չունեն բնագրի երկրորդ «գաւառի» բառը. «սովորութիւն» բառի փոխարեն № 3369-ում դրված է «ի սպասաւորութիւն», № 659-ում՝ «սովորութիւնսն», իսկ վերջին բառը, այսպես է. «ձևել նորա» (№ 3369, էջ37ա) և «նորոգաձեել» (№ 659, էջ 86ա)։

Հոդ. Է, էջ 74։ № 3369-ում այս հոդվածը տե՛ս ԼՀ համարի տակ (էջ 37բ)։ Տարբերությունը № 659-ում այսպես է. «Երուսաղէմացւոյ» և «զմայրաքաղաքացն» (էջ 86ա), իսկ № 3369-ում «Երուսաղէմի» տեղանունը դրված է «մի» ձևով, որը հասկացվում է «[երուսաղէ]մի»։ Ճիշտ այդպիսի ձևով է գրված համահավաքի համար օգտագործված acdkmprstv ձեռագրերում (տե՛ս վերևում, էջ 74)։ Սրանից թերևս ենթադրենք, որ № 3369-տարբերակը առաջ է եկել այս խմբի ձեռագրերի որևէ մի օրինակից։

Հոդ. Ը, էջ 74։ № 3369-ում այս հոդվածը տե՛ս ԼԲ համարի տակ (էջ 37բ)։ Բնագրի «աւածանել» բառից առաջ №№ 659, 3369 ձեռագրերը ունեն «և» այսինքն «և աւծանել»։ Հոդվածի սկզբի մի հատվածը № 3369-ում այսպես է. «զայնոսիկ որ ի հաւատա[ց]ելոց ժառանգութենէ են գրեալք» (էջ 37բ), իսկ բնագրի «եկեալքն» բառի փոխարեն այս ձեռագրում կարդում ենք «գաղաքն» (էջ 37բ)։ Տե՛ս և համարի տակ (էջ 37բ)։

Հոդ. Թ, էջ 74։ № 3369-ում այս հոդվածը տես և համարի տակ (էջ 37բ)։ Միակ ձևական տարբերությունը № 659-ում՝ «յետս» բառի փոխարեն դրված է «զկնի» (էջ 86բ)։

Հոդ. Ժ, էջ 74։ № 3369-ում այս հոդվածը տե՛ս ԽԱ համարի տակ (էջ 37ա)։ № 659-ը ունի «յանդիմանել ոչ» ձևով (էջ 80բ)։

Հոդ. ԺԱ, էջ 74։ № 3369-ում ԼՐ (էջ 37ա)։

Հոդ. ԺԲ, էջ 75։ № 3369-ում այս հոդվածը տես ԽԲ համարի տակ, բայց սխալմամբ նշված է «ԻԲ»(էջ 37բ)։ Այս ձեռ-ում էական տարբերությունն այն է, որ «իրացն» բառը ունի «իւրեանց», իսկ մյուս երկու բառերը՝ «ապաշխարեալ» և «հաղորդեալ» ձևերով։ № 659-ում հոդվածի մի հատվածը այսպես է. «յամենայն աշխարհասիրացս Դ ամս արտասուաւք և մտերմութեամբ ապաշխարել և ճգնութեամբ» (էջ 86բ). իսկ «հաղորդել» բառի փոխարեն այստեղ կարդում ենք «հաւասարելը»։

Հոդ. ԺԳ, էջ 75։ № 3369-ում ԽԳ (էջ 37բ)։ Այստեղ չի պահվել «արժանի» և «իսկ կեցեալք արգելուլ» բառերը. «անարժանք» բառն էլ փոխարինված է «արժանի» բառով։ «Արժանի առնել»-ը № 659-ում փոխարինված է «հաղորդել» բառով։ «Իսկ կեցեալք արգելուլ» հատվածը այստեղ ևս չի պահվել (էջ 87ա)։

Հոդ. ԺԴ, էջ 75։ № 3369-ում ԽԴ (էջ 37բ)։ Բնագրի «զերեամ մի» հատվածը № 659-ում դրված է «զերիս ամս» (էջ 87ա), իսկ № 3369-ում՝ «զերկամ մի» ձևերով, «մկրտել» բառը՝ «մկրտիլ»։

Հոդ. ԺԵ, էջ 75։ № 3369-ում ԼԳ (էջ 37ա)։ Այստեղ հոդվածի վերջին հատվածը այսպես է. «այլ քաղաքս փոխել խոովութեանն»։ № 659-ում եղածը՝ բնագրի «յայլմէն»-ի փոխարեն ունի «յիւրմէն» (էջ 87ա), ավելի ճիշտ է, իսկ «յաղագս»-ը փոխված է «վասն»-ով։

Հոդ. ԺԶ, էջ 75։ № 3369-ում Խե (էջ 37բ)։ № 659-ի հոդվածը բերում ենք ամբողջությամբ. «Պարտ է զարհամարհողն ժառանգաւոր իւրեանց եկեղեցաց, յայլ ուրեք ոչ պաշտել» (էջ 87ա)։

Հոդ. ԺԷ, էջ 75։ № 3369-ում ԼԴ (էջ 37ա)։ Այստեղ հոդվածը շարունակվում է. «եթէ առցէ նզովեալ եղիցի»։ Բնագրի «տոկոսիս» բառը № 659-ում դրված է «վաշխ» ձևով, իսկ հոդվածի վերջն այսպես է. «կամ կիսամուանութիւնն՝ շահի յաղագս» (էջ 87ա)։ Վերջին երկու բառերը թերևս պետք է լինի «շահի աղագաւ կամ «յաղագս շահի» շարադասութեամբ։

Հոդ. ԺԸ, էջ 75։ № 3369-ում ԼԶ (էջ 37բ)։ Բնագրի «ենտել» և «երիցուս» բառերն այստեղ համապատասխանաբար կարդում ենք «ենտիլ» և «գահանայիցս»։ № 659-ում հոդվածի վերջն այսպես է. «և ոչ ընդ նոսա նստել» (էջ 87ա)։ Ուրիշներ «նոսա» բառը ուղղել են «երիցուս»։

Հոդ. ԺԹ, էջ 76։ № 3369-ում ԽԶ (էջ 37բ)։ Այստեղ «որք»-ը փոխարինված է «ոք»-ով և

չի պահվել բայը՝ «մկրտել»։ № 659-ում հոդվածի սկիզբը ունի շեղում. «պարտ է զ'երձուա-ծողս դարձեալս Պատրիանոսս կոչեցեալս Մանտանացիս մկրտել» (էջ 87ա)։

Հոդ. Ի, էջ 76: № 3369-ում լե (էջ 37ար)։ Բնագրի «կիւրակէի» բառին նախորդում է «յաւուր»։ № 659-ի ունեցածը բերում ենք ամբողջությամբ. «Ոչ է պարտ կիւրակէին աղաւթելով ծոմը կրկնել և յաւուրս Պէնտակոստէից» (էջ 87ա)։

Հոդ. ԻԱ, էջ 76: №№ 648, 649, 650, 651, 2964, 3562, 3369 ձեռագրերում այս հոդվածը տե՛ս Ա համարի տակ։ Դրանցում չեն պահպանվել «խոստովան եղեն» բառերը, իսկ «առնել» բառի փոխարեն դրված է «լինել» բառը. №№ 649, 650, 651, 2964-ում չի պահվել նաև «վասն» բառը, որը № 648, 3562-ում փոխարինված է «առ» բառով։ Հոդվածի վերջը № 3369-ում այսպես է. «Բայց եթէ յոյժ կեղծաւոր և երկիւղածութեամբ եպիսկոպոսին հրամայիցէ» (էջ 36ա)։ Բնագրի «և ոչ ի խաւսսնա-ը այստեղ պահված է «ի խօսն», իսկ «սարկաւագին» բառը՝ հոգնակի «սարկաւագունք» ձևերով։ № 659-ում տարբերությունը ցույց տալու համար հոդվածը բերում ենք ամբողջությամբ. «Պարտ է որ զոհեցին երիցունք, իսկ ապա ի բաց դարձան և կացին ի խոստովանութիւն ոչ ամենևին լուծանել, այլ աթոռոյն միայն արժանի լինել, ոչ մատուցանել պատարագ նոցա և ոչ ի խաւս կալ և ոչ այլ ինչ այսպիսի պաշտել զքահանայութիւնն։ Նմանապէս և սարկաւագաց նմին պատուի արժանի լինել, բայց ոչ քարոզել և ոչ սպասաւորել, բայց եթէ վասն երկիւղածութեան նոցա եպիսկոպոսն հրամայեսցէ» (էջ 87ար)։

Հոդ. ԻԲ, էջ 76: № 3369-ում ևէ (էջ 38ար)։ №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում ԻԲ—ԼԷ հոդվածները չեն պահվել։ № 659-ի այս հոդվածը բերում ենք լրիվ. «Պարտ է ըստ վտանգին և բռնութեան բազմին զոհեալս, բայց խոստովանեալս զինքեանս միշտ քրիստոնեայս Ց ամս ապաշխարեալս և այնպէս չնորհին արժանի լինել» (էջ 87բ)։

Հոդ. ԻԳ, էջ 77: № 3369-ում ԼԹ (էջ 38ա)։ Այստեղ չի պահվել հոդվածի վերջին՝ «քէպէտ և բռնազբաւսեցան» հատվածը։ Այս հոդվածը № 659-ում այսպես է «Ձխաւսեցեալ աղչկունս յայլոց յափշտակե[ա]լ պարտ է նախկին խաւսելոյն ի բաց ս.ս.լ, զի քեպէտ և բռնարարեցան» (էջ 87բ—88ա)։

Հոդ. ԻԴ, էջ 77: № 3369-ում Ծ (էջ 38ա)։ Այս հոդվածը քանի որ № 659-ում խիստ համառոտ է, իսկ № 3369-ում զգալի չափով տարբեր, այդ պատճառով այս երկու ձեռագրերի ունեցածը բերում ենք ամբողջապես. «Թէ ոք պղծէ զբանչար՝ ընդ մսոյ ուտել՝ որոշեսցի» (№ 659, էջ 88ա)։

«Որք ուխտին անտի իցեն երիցունք և սարկաւագունք և հեռի իցեն ի մսոյ կամ զի ճաշակեսցեն և կամիցին պահեսցեն ի մսոյ. ապա թէ պղծեսցին կամ արհամարհեսցին մինչև ցբանչարն, այսինքն ընդ մսոյն անկանիցի կամ պահիցի, ի միսն չուտիցեն և ոչ անսայցեն կանանց, լուռ լիցին ի յաստիճանէ քահանայութենէն» (№ 3369, էջ 38ա)։

Հոդ. ԻԵ, էջ 77: № 3369-ում լէ (էջ 37բ)։ Այստեղ հոդվածի միտքը փոխված է, ահա վերջինս. «Ոչ է պարտ զեկեզեցեանց (sic) երիցանց վաճառանոց նստիլ և զատ վաճառել»։ № 659-ում «երիցու»՝ եզակի ձևով։

Հոդ. ԻԶ, էջ 77—78: № 3369-ում ևՀ (էջ 38ա)։ Այստեղ երկու տարբերություն կա. բնագրի «յետ» և «ապաշխարել» բառերը դրված են «զհետ» և «ապաչխարեալ» ձևերով։ № 659-ում բնագրի «կենդանիսն» և «ապաս» բառերը համապատասխանաբար փոխարինված են «անասունս» և «իսկ» բառերով։ Այստեղ չի պահվել նաև երկրորդ «այսպէս»-ը, իսկ վերջին բառը դրված է «հաղորդել» անորոշ ձևով։

Հոդ. ԻԷ, էջ 78: № 3369-ում ՇԱ (էջ 38ա)։ № 659 ձեռագրում բնագրի «դիւահարաց» բառից հետո մի փոքր ընդարձակ է. «դիւահարաց հաւատացելոց աղաւթակից լինել մինչև ի ժամանակ սրբելոյ» (էջ 88ա)։

Հոդ. ԻԸ, էջ 78: № 3369-ում ՇԲ (էջ 38ա)։ Բնագրի «եպիսկոպոսունս» և «զայլոց» բառերն այստեղ տրված են «յեպիսկոպոսութիւնս» և «զայլ» ձևերով։ № 659-ի ունեցածը բերում ենք լրիվ. «Ոչ է պարտ կացելոց եպիսկոպոսաց և ընկեցելոյ, զայլ եկեզեցիս նեղել» (էջ 88ա)։

Հոդ. ԻԹ, էջ 78: № 3369-ում ՇԳ (էջ 38ա)։ Բնագրի «համուանացելոցն»-ն այստեղ դրված է «համուանացեալսն»։ № 659-ում հոդվածը այսպես է. «Որք զկուսութիւն խոստացան և արհամարհեն՝ ղերկամուանացելոցն կալցին զսահման» (էջ 88ա)։

Հոդ. Լ, էջ 78: № 3369-ում ՇԴ (էջ 38ա)։ Այստեղ հոդվածը չարունակվում է. «և ապա հաղորդեսցի»։ № 659-ում կարդում ենք. «շնացաւ ոք» և «լինել» (էջ 88ա) ձևերով։

Հոդ. ԼԱ, էջ 78: № 3369-ում ՇԵ (էջ 38ա)։ Սկզբի տողը այստեղ այսպես է. «եԹէ մայր զմանուկ իւր սպանցէ զամենայնն»։ Հոդվածի վերջին մասը մի փոքր այլ է. «Իսկ եթէ ոչ սպանեալ առնեն կամ սատանայի որոգայթիւք եղիցի՝ է ամ ապաչխարեսցեն» (էջ 38ար)։

№ 659-ում այս հոդվածը բաժանված է երկու մասի և դրված ԼԱ, ԼԲ համարների տակ։ Առաջինները. «ԼԱ. Եթէ մայր սպանցէ զմանուկ՝ զամենայն ժամանակս իւր ապաշխարեսցէ և ի վախճանին հաղորդեսցի. և որք զկամաւոր սպանութիւնն գործեն նմանապէս ԼԲ. Որք զակամայ սպանութիւնս առնեն՝ է ամ ապաշխարեսցեն» (էջ 88բ)։

Հոդ. ԼԲ, էջ 78—79։ № 3369-ում ՈՋ (էջ 38բ), № 659-ում ԼԴ (էջ 88բ)։ Վերջում հոդվածն այս շարադասությունն ունի. «Եթէ ուրուք գխաւսեալ զկոյս (վերջին բառը ձախ լուսանցքում— Վ. Հ.) ապականեսցի ընդ քեռ նորա և դարձեալ ընդ խաւսելոյն ամուսնասցի՝ և՝ ինքն և՝ գիտակիցք նորա ժ ամ ապաշխարեսցեն և այսպէս հաղորդեսցի աւրինացն» (№ 659)։

Հոդ. ԼԴ, էջ 79։ № 3369-ում ՈՀ (էջ 38բ), № 659-ում ԼԴ (էջ 88բ)։ Առաջինում բացակայում է «երկուց» բառը, իսկ հոդվածի վերջում շարունակվում է. «եկեղեցւոյն կամ ի հաղորդութենէ»։ Վերջին ձեռագրում ունի այսպիսի տարբերություն. «կին ոք եթէ» և «մինչև ցամՀ որոշեալ կացցէ»։

Հոդ. ԼԴ, էջ 79։ № 3369-ում ՈԸ (էջ 38բ), № 659-ում ԼԵ (էջ 88բ)։ Վերջինում հոդվածն այսպես է. «Եթէ որ բազում ամուսնութեամբ վարեցաւ՝ ի վախճանին շնորհին արժանի լիցինս։ Իսկ առաջինում «շնորհին» բառը դրված է «շնորհացն» ձևով։

Հոդ. ԼՆ, էջ 79։ № 3369-ում ՈԹ (էջ 38բ)։ № 659-ում ԼԶ (էջ 88բ—89ա)։ Առաջինում՝ «ընդ ննջել կնոջ», իսկ «արկեալ» բառը գրված է «արկեչ» ձևով։ № 659-ում հաջորդ՝ ԼԶ հոդվածի առաջին՝ «երախայն» բառը դուրս է ընկել և մնացածը միացրել են այս հոդվածին՝ այսպես. «Եթէ որ ցանկասցի ընդ կնոջ ննջել և ձեռն ոչ արկէ՝ անպարտ լիցի, իսկ ձեռն արկեալ և ոչ կարացեալ՝ պարտաւոր լիցի ապաշխարութեան, կա՛մ գադարեսցէ ի մեղանչելոյն կա՛մ րնկնացի աբտաքսս»։

Հոդ. ԼՉ, էջ 79։ № 3369-ում Կ (էջ 38բ)։ Այստեղ հոդվածը աղավաղվել է. «Երեխայն կամ գարանեալ մեղանչէ ի բաց մերժեսցին»։

Հոդ. ԼԷ, էջ 79։ № 3369-ում ԿԱ (էջ 38բ)։ Այստեղ «է»-ն փոխարինված է «և»-ով։ Իսկ № 659-ում բացակայում է «արժան է» բառը։ Հոդվածի սկիզբն էլ այսպէս է. «պարտ է և» (էջ 89ա)։

Հոդ. ԼԸ, էջ 79։ № 3369-ում Բ (էջ 36ա), № 659-ում ԼԹ (էջ 89ա)։ №№ 648, 649, 650, 651,2964,3562 ձեռագրերում պահվել է Կանոնագրքի ունեցած՝ ԼԸ համարը։ Այսպես գրեթե մյուս ցուցակներում։ Այս և № 3369 ձեռագրերում հոդվածը շարունակվում է. «և եթէ իցեն քահանայք զադարեոցեն (№ 3369-ում՝ դատապարտեսցեն) ի քահանայութենէն (№№ 648, 3369, 3562-ում՝ ի քահանայութենէն» (№№ 648, էջ 11բ, 649, էջ 31ա, 650, էջ 35ա, 651, էջ 23բ, 2964, էջ 44ա, 3562, էջ 281ա)։ Այս շարունակությունը № 659-ում դրված է որպես առանձին հոդված՝ Ա համարի տակ, միայն թե «քահանայք» բառը փոխարինված է «ժառանգաւորք» բառով։

Հոդ. ԼԹ. էջ 79։ №№ 3369-ում Գ (էջ 36ա), № 659-ում ԼԸ (էջ 89ա)։ № 648 ձեռագրում այս հոդվածը միացված է նախորդ՝ ԼԸ հոդվածին (էջ 11բ), իսկ № 3265-ում դրված է այ լուսանցքում, դարձյալ ԼԹ համարի տակ (էջ 281ա)։ Չորս ձեռագրերում բնագրի «յերկրորդ» բառը գրված է «երրորդ» (№№ 649, էջ 31ա, 650, էջ 35ա, 651, էջ 24ա, 2964, էջ 44ա)։

Հոդ. Խ, էջ 79—80։ №№ 3369-ում՝ Դ (էջ 36ա), № 659-ում ՄԱ (էջ 89ա)։ Տարբեր ձեռագրերում հոդվածի սկզբի մասը ունի բառերի տեղատեղություն, այսպես. «Ոչ է պարտ նախ քան զձեռնադրել (№ 3369-ում՝ զձեռնադրեալ) զերիցունսն պատարագ մատուցանել մեղուցեալոցն (№ 3369-ում զմեղուցեալսն)» (№№ 651, էջ 24ա, 650, էջ 35ա, 649, էջ 31ա, 2964, էջ 44ա). «Ոչ է պարտ զերիցունսն նախ քան զձեռնադրութիւնսն մեղուցեալս մատուցանել պատարագ» (№№ 648, էջ 11բ, 3562, էջ 281ա), «Ոչ է պարտ երիցանց մեղուցելոց յառաջ քան զձեռնադրութիւնն պատարագ մատուցանել» (№ 659, էջ 89ա)։ Այնուհետև ինչպես բնագրում։

Հոդ. ԽԱ, էջ 80։ № 3369-ում ԿԲ (էջ 38բ)։ №№ 648, 649, 650, 651, 659, 2964, 3562 ձեռագրերում այս հոդվածը չի պահվել։ № 3369 ձեռագրում կան այսպիսի շեղումներ. 1. «գտցի» բառի վրա վրխարեն կարգում ենք «գտցենս»։ 2. «և ոչ է արժան»-ին նախորդում է «ոչ կարէ»-ին, այսպես՝ «ոչ կարէ և ոչ է արժան»։ 3. Այստեղ չի պահվել բնագրի «յետս» բառը։ 4. «մատուցանել» բառը վրխարինված է «մերձուցանել» բառով։ Շ. երկու տեղ հանդիպում ենք բառերի տեղատեղության, այսպես. «արժան է արձակել» և «քահանայ լինել»։

Հոդ. ԽԲ, էջ 80։ № 3369-ում Ն (էջ 36ա)։ Այստեղ «քահանայ»-ի փոխարեն կարգում ենք «գոք երէց», իսկ №№ 648, 659, 3562-ում միայն «երէց» (էջ 12ա, էջ 89ա, էջ 281բ)։ №№ 651, 650, 649 և 2964 ձեռագրերում այս հոդվածը համար չունի։

Հոդ. ԽԳ, էջ 80։ № 3369-ում ԿԳ (էջ 38բ)։ № 659 հոդվածը այսպիսին է. «Եթէ ոք ի հի-

ւանդութեան մկրտեսցի՝ մի՛ եկեսցէ յառաջ ի ժառանգութիւնն, զի ոչ յաւժարութեամբ հաւատաց, բայց եթէ Երկիւղած իցէ կամ հարկ ինչ լիցի» (էջ 89ար)։ №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում չի պահվել այս հոդվածից մինչև Ը՛ հոդվածը ներառյալ։

Հոդ. ԽԴ, էջ 80։ № 3369-ում ԿԴ (էջ 38բ)։ Այստեղ մի հատվածը այսպես է. «եպիսկոպոսին յտղօքս չէ»։ Ահա № 659-ի նույն հոդվածը. «Որք գիւղից երիցունք են ի քաղաքս կամ յանդիման եպիսկոպոսին աղաւթս ոչ կատարեսցեն» (էջ 89ր)։

Հոդ. Խb, էջ 81։ № 3369-ում Կb (էջ 39ա)։ Վերջին հատվածը այսպես է. «որ ի Գործս առաքելոցն գործեն»։ № 659-ում այլ դասավորություն ունի հոդվածի սկիզբը. «Սարկաւագունք եւքն պարտին լինել» (էջ 89ր)։

Հոդ. ԽԶ, էջ 81։ № 3369-ում ԿԶ (էջ 39ա)։ Այստեղ ավելի է մեկ բառ. «արհամարհիցէ կամ մեղադրիցէ»։ № 659-ում «որպէս» բառը փոխարինված է «որ» բառով, իսկ «Աստուծոյ»-ն չի պահվել (էջ 89բ)։

Հոդ. Խէ. էջ 81։ № 3369-ում Կէ (էջ 39ա)։ № 659-ում հոդվածն այսպես է. «եթէ ոչ ծառայ պատճառաւ բարեգործութեան գնասցէ ի տէրունց իւրոց ոչ ինչ ի նոցանէ խափանել՝ նզովեսցի» (էջ 89բ)։

Հոդ. ԽԸ, էջ 81։ № 3369-ում ԿԸ (էջ 39ա), № 659-ում ՂԷ (էջ 93ա)։ Վերջին ձեռագրում այս հոդվածն այսպիսի ձև ունի. «եթէ ոք պիղծ վարկցի զմսակերն՝ նզովեալ լիցի»։

Հոդ. ԽԹ, էջ 81։ №№ 3369-ում Կթ (էջ 39ա), № 659-ում ՃԸ (էջ 89բ)։ Միակ էական տարբերությունն այն է, որ № 659 ձեռագրում բնագրի «խղճիցէ»-ն փոխարինված է «խտրեսցէ» բառով։ Այստեղ Ի՛ համարի տակ նշված է մի հողված, որ մյուսներում չունեն. «եթէ ոք արհամարհեսցէ զտուն Աստուծոյ դիւր (sic) արհամարհելի լինել՝ նզովեսցի» (էջ 89բ)։

Հոդ. Ա, էջ 81։ № 3369-ում Հ (էջ 39ա)։ Համմտ. № 659-ի ունեցածը. «եթէ ոք արհամարհեսցէ զեկեղեցեաւն Աստուծոյ և զեկեղեցական խորհուրդ ի տան կամիցի գործել՝ նզովեսցի» (էջ 90ա)։

Հոդ. ՅԱ, էջ 81։ № 3369-ում ՀԱ (էջ 39ա)։ № 659-ում տարբերությունը մի հատվածում է. «զեկեղեցական պտղաբերութիւնս առանց կամաց վերակացուին» (էջ 90ա)։

Հոդ. ՅԲ, էջ 82։ № 3369-ում ՀԲ (էջ 39ա)։ № 659-ում տարբեր է հոդվածի սկզբի մասը. «եթէ ոք պիղծ վարկցի, զոր հաւատով» (էջ 90ա)։

Հոդ. ՅԳ, էջ 82։ № 3369-ում ՀԳ (էջ 39ա), № 659-ում ՁՀ (էջ 92ա)։ Վերջին ձեռագրում «քահանայից» բառը փոխարինված է. «ժառանգաւորին» բառով։

Հոդ. ՅԴ, էջ 82։ № 3369-ում Հդ (էջ 39ա), № 659-ում ՁԸ (էջ 92բ)։ Համմտ. № 3369 ձեռագրում հոդվածի սկիզբը, «Ոչ է պարտ գրակարդացաց կամ կէսսարկաւագաց հացի օրհնութիւն տալ»։ № 659-ը բնագրի «կամ գինի աւրհնել»-ի փոխարեն ունի «կամ բաժակ աւրհնել»։ Ձեռագրում այս երեք բառի վրա դրված է հանելու նշան։

Հոդ. Յե, էջ 82։ № 3369-ում ՀՁ (էջ 39ա), № 659-ում ՁԲ (էջ 92բ)։ Էական տարբերությունը № 659-ում է. «Ահա նրա ունեցածը. «Ոչ է պարտ ումեք երդեմնեցուցանել, բայց զորս կարգեալ է եպիսկոպոսին»։

Հոդ. ՅՁ, էջ 82։ Այս հոդվածը № 3360-ում չի համարակալված, իսկ № 659-ում դրված է Ղ համարի տակ (էջ 92բ)։ Այստեղ «քահանայից» բառը դարձյալ փոխարինված է «ժառանգաւորաց» բառով, իսկ № 3369-ում բնագրի «յագապս մասունս»-ը փոխարինված է «յաղաքս» բառով։

Հոդ. ՅԷ, էջ 82։ № 3369-ում ՀԷ (էջ 39ա), № 659-ում ՂԱ (էջ 92ր)։ Վերջին բառը № 3369-ում «ճաշ ուտել», իսկ № 659-ում «հաց ուտել» ձևերով։

Հոդ. ՅԸ, էջ 82։ № 3369-ում ՀԸ (էջ 39ա), № 659-ում ՂԲ (էջ 92բ)։ Վերջին՝ «հրէանալ» բառը № 3369-ում «նման հրէի» ձևով։

Հոդ. ՅԹ, էջ 82։ № 3369-ում ՀԹ (էջ 39բ), № 659-ում ՂԴ (էջ 92բ)։ Ահա վերջին ձեռագրի ունեցածը. «Ոչ է պարտ այրամարդոյն բաղանեաւք վարիլ»։

Հոդ. Կ, էջ 83։ № 3369-ում Ձ (էջ 36ա), № 659-ում՝ ՂԴ (էջ 92բ)։ Բնագրի «ճաշել» բառը №№ 651, 650, 2964, 3369 ձեռագրերում դրված է «ճաշակել» ձևով (էջ 24ա, 35ա, 44ա)։

Հոդ. ԿԱ, էջ 83։ № 3369-ում Ը (էջ 36բ), № 659-ում ՂԵ (էջ 92բ), 651-ում ԿԲ (էջ 24ա)։ №№ 648, 3369, 3562-ում չեն պահվել բնագրի «ոք» (էջ 12ա, 36բ, 281բ), № 3369-ում՝ նաև «կամ առաքառերը (էջ 36բ), այստեղ կրկնված է «յաղօքս» բառը։ № 659-ում հոդվածը այսպես է. «եթէ ոք հրեշտակաց կամ այլում արարածոց աղաւթս մատուցանէ՝ նզովեալ լիցի»։ Բացի վերևում նշվածից № 3369-ում այս հոդվածը պահվել է նաև ՁԱ համարի տակ այս

ձևով. «ԵՔԷ ոք ընդ հրե[շ]տակս յաղօխս կացցէ և կամ առ այլ ոք արարածոց՝ նզովեալ եղիցի» (էջ 39ր)։

Հոդ. ԿՐ, էջ 83: ՀՀ 648, 649, 650, 651, 2964, 3369, 3562 ձեռագրերում չի պահվել այս հոդվածը։ № 659-ում այն պահվել է ՂԶ համարի տակ, ուր բնագրի «Քով իցէ», «կախարդ իցէ»-ն դրված են «Քովիսցէ», «կախարդիսցէ» բայական ձևով (էջ 93ա)։

Հոդ. ԿԴ, էջ 83: № 3369-ում է (էջ 36ա), № 659-ում ՂՀ (էջ 93ա)։ Բնագրի «աւրհնել» բառը ՀՀ 648, 649, 650, 651, 659, 2964, 3369, 3562 ձեռագրերում փոխարինված է «տալ» (տօնել) բառով։ № 659-ում հոդվածի վերջին մասը չեղվում է այսպես. «կամ զատկական նուէրս ի նոցանէն առնուլ»։

Հոդ. ԿԴ, էջ 83: № 3369-ում Զ (էջ 39ր), № 659-ում ՂԲ (էջ 93ա)։ № 3369-ում հոդվածի մի հատվածը այսպես է. «Ի ժողովս արհամարհելով ի կոչելոցն»։ № 659-ում ընդարձակ է հոդվածի վերջին մասը. «Բայց վասն հիւանդութեան ներումն կալցին»։ ԿԴ—ԿԷ հոդվածները չեն պահվել ՀՀ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում։

Հոդ. ԿԵ, էջ 83: № 3369-ում ԶՐ (էջ 39ր), № 659-ում ՇԴ (էջ 90ա)։ Վերջին ձեռագրում բնագրի մի հատվածը կարդում ենք այսպես. «յաղագս կարծեցեալ ճգնութեանն։ Այստեղ «փոքրիցէ» բառը փոխարինված է «կտրեսցէ» բառով և չի պահվել «իւր» բառը։ Իսկ ՇԴ համարի տակ բերված է Դանգրայի կանոնախմբի ԻԴ հոդվածի համառոտ բովանդակությունը, որը բացակայում է մյուս տարբերակներում. «ԵՔԷ ոք կին յաղագս պարկեշտութեան թողցէ զիւր այրն՝ նզովեալ լիցի» (№ 659, էջ 90ա)։

Հոդ. ԿԶ, էջ 83: № 3369-ում ԶԳ (էջ 39ր), № 659-ում ՇԶ (էջ 90ար)։ Այս երկու ձեռագրում գրեթե միանման են հոդվածի սկզբի մասը. «ԵԹԷ ուրուք (№ 3369-ում՝ ոք) որդիք թողցեն զհաւատացեալ հայրս (№ 3369-ում՝ ծնողս) պատճառաւ բարէպաշտութեան (№ 3369-ում՝ պատճառանաւ աստուածպաշտութեան)»։ № 659-ում չի պահվել «իբրև» բառը։

Հոդ. ԿԷ, էջ 84: № 3369-ում ԶԴ (էջ 39ր), № 659-ում ՇԸ (էջ 90ա)։ Վերջին ձեռագրում բնագրի մի հատվածը շարադրված է այսպես. «յաղագս կարծեցելոյ ճգնաւորութեանն»։

Հոդ. ԿԸ, էջ 84: № 3369-ում Ե (էջ 36ր), № 659-ում ՇԷ (էջ 90բ)։ № 3369-ում չեն պահվել «յաւուր» և «յաւուրս» բառերը։ ՀՀ 648, 3369, 3562 ձեռագրերում «և»-ը փոխարինված է «կամ»-ով (ՀՀ 648, էջ 12ա, 3562, էջ 281բ)։ Համմտ. № 659-ի ունեցածը. «ԵԹԷ ոք յաղագս կարծելոյ ճգնութեան ի կիւրակէի պահեսցէ կամ յաւուրս Պենտակոստէից՝ նոզովեալ լիցին»։

Հոդ.ԿԹ, էջ 84: № 659-ում ՇԸ (էջ 90բ)։ № 3369-ում չի պահվել այս հոդվածը։

Հոդ. Հ, էջ 84: № 3369-ում ԼԹ (էջ 39ա), № 659-ում ՇԹ (էջ 90բ)։ Էական տարբերությունն այն է, որ «զարշելոցի» բառը № 659-ում փոխարինված է «պիղծ վարկցի» բառերով, իսկ «ժողովոց»-ը՝ «ժողովս»։

Հ—ԶԳ հոդվածները չեն պահվել ՀՀ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում։

Հոդ. ՀԱ, էջ 84: № 3369-ում Զե (էջ 39ր), № 659-ում Կ (էջ 90բ)։ «Ի վիճակելոցն» բառը № 3369-ում պահվել է «ի վիճակաց» ձևով, իսկ № 659-ում փոխարինվել է «ի ժառանգաւորաց» բառով։ Այստեղ «իշխեսցէ» բառն էլ փոխարինված է «յանդգնեսցի» բառով։

Հոդ. ՀԲ, էջ 84: № 3369-ում ԶԶ (էջ 39ր), № 659-ում ԿԱ (էջ 90բ)։ Բնագրի «յաւտարաց»-ը № 659-ում փոխարինված է «զոք յուխտաւորաց», իսկ վերջին երկու բառը՝ «ի ժառանգութիւն ընդունելւ»։ № 3369-ում գրված է «ածելւ» փոխանակ «մատուցանելւ»։

Հոդ. ՀԳ, էջ 84: № 3369-ում ԶՀ (էջ 39ր), № 659-ում ԿԲ (էջ 91ա)։ Միայն վերջին ձեռագրում կա մի ավելացում. «երիցու ումեք»։

Հոդ. ՀԴ, էջ 84: № 3369-ում Զէ (էջ 39ր), № 659-ում ԿԳ (էջ 91ա)։ № 659-ում հոդվածը ավելի պարզ է շարադրված. «Պարտ է մայրաքաղաքաց եպիսկոպոսին ամենեցուն եկեղեցական իրաց ունել հոգս և առանց նորա եպիսկոպոսք մի՛ լինելւ»։

Հոդ. ՀԵ, էջ 85: № 3369-ում ԶԲ (էջ 39ր), № 659-ում ԿԴ (էջ 91ա)։ Բնագրի երկրորդ հատվածը № 659-ում այսպես է. «լիւրմէ իշխանութենէ ի միւս փոխել և ձեռնադրելւ։ Իսկ № 3360-ում «փոփոխիլ» բառի փոխարեն «փախչիլ կամ փոփոխիլ»։

Հոդ. ՀԶ, էջ 85: № 3369-ում Ղ (էջ 39ր), № 659-ում ԿԵ (էջ 91ա)։ Հոդվածի վերջին երեք բառը № 659-ում ետևառաջութիւն ունի. «այլոց եպիսկոպոսաց լուծանելւ»։

Հոդ. ՀԷ, էջ 85: № 3369-ում ՂԱ (էջ 39բ), № 659-ում ԿԶ (էջ 91ա)։ Բնագրի «ձեռնադրեալ ոչ ընկալցի» հատվածը № 659-ում այսպես է. «ձեռնադրել ոչ հաւանեսցի», իսկ «եղիցի» բառը նույն ձեռագրում փոխարինված է «կացցէ» բառով. № 3369-ում՝ «նզովեալ եղիցի»։

Հոդ. ՀԸ, էջ 85: № 3369-ում ՂԲ (էջ 39բ), № 659-ում ԿԷ (էջ 91ա)։ Բնագրի սկզբի հատ-

վածը № 659-ում ունի այսպիսի չարադրութիւն. «Պարտ է ձեռնադրելոյ եպիսկոպոսին և ոչ կացելոյ ի ժողովրդենէն»։

Հոդ. ՀՔ, էջ 85։ *№ 3369-ում ՂԴ (էջ 40ա), № 659-ում ԿՀ (էջ 90ա)։ Վերջին ձեռագրում այս հոդվածը հետևյալ կերպ է. «Ոչ է պարտ եպիսկոպոսի զայլս փոխանակ իւր նստուցանել առանց ժողովոյն»։*

Հոդ. Զ, էջ 85։ *№ 3369-ում ԼԴ (էջ 40ա), № 659-ում ԿՔ (էջ 91ա)։ Այս երկու ձեռագրերում էլ չեղումներն զգալի են, ուստի հոդվածները բերում ենք լրիվ. «Պարտ է և արժան ամենայն եպիսկոպոսաց եկեղեցեաց անխրատաց ունել իշխանութիւն և երիցանցն, իսկ որ առանձինն ինչ է եպիսկոպոսին ի դէպ եպիսկոպոսին, որոց կամի քողուլ» (№ 3369)։ «Պարտ է գիտութիւն ունիլ եկեղեցականացն, իսկ որ առանձին ինչ է եպիսկոպոսին, ի դէպ եպիսկոպոսին, որոց կամիցի քողուլ» (№ 659)։*

Հոդ. ԶԱ, էջ 85—86։ *№ 3369-ում ՂՆ (էջ 40ա), № 659-ում Հ (էջ 91ա)։ Բնագրի երեք բառերի տեսաոաջութիւն կա № 3369-ում. «ունել ամենայն իրաց», Հոդվածի չարադասութիւնը մի փոքր այլ է № 659-ում, ահա այն. «Պարտ է եպիսկոպոսին ամենայն եկեղեցական իրաց ունել իշխանութիւն և որպէս կամիցի ի կարաւտեալս անաւրինել, ապա եթէ և ինքն կարաւտ իցէ ի հարկաւոր պէտս՝ վարեսցէ, ոչ ինչ այպանելի»։*

Հոդ. ԶԲ, էջ 86։ *№ 3369-ում ՂԶ (էջ 40ա), № 659-ում ՀԱ (էջ 91բ)։ Վերջին ձեռագրում հոդվածը հետևյալ կերպ է չարադրված. «Պարտ է զանազան մեղսն անկելոցն ապաշխարել մտերմութեամբ՝ չնորհին արժանի լինելի»։*

Հոդ. ԶԳ, էջ 86։ *№ 3369-ում ՂԷ (էջ 40ա), № 659-ում ՀԲ (էջ 91բ)։ Բնագրի վերջին բառի փոխարեն № 659-ում կարդում ենք. «յառաջ մեզ աղաւթակից լինել»։ Սակայն, ուշադիր քննութիւնը ցույց տվեց, որ բնագրի ԶԳ հոդվածի առաջին՝ «Ոչ է պարտ հերետիկոսաց» հատվածը դուրս է ընկել, իսկ երկրորդ՝ «ընդ մեզ յաղաւթս կալ» հատվածը միացվել է ԶԳ հոդվածին։ Այսպիսով, բնագրի վերջին համատեքստանել» բառի փոխարեն ԶԳ հոդվածին կցել են ԶԴ հոդվածի երկրորդ մասը և այն դարձրել անհասկանալի, մյուս կողմից № 659-ում չի պահվել ԶԴ հոդվածը։ Այս նույն ձեռագրում ՀԳ համարի տակ պահվել է մի հոդված, որը բացակայում է մյուս տարբերակներում, ահա այն. «Պարտ է զղարձեալսն ի հերձուածոց աւծմանն արժանի լինել» (էջ 91բ)։*

Հոդ. ԶԴ, էջ 86։ *№ 3369-ում ԺՀ (էջ 36բ)։ Այստեղ բնագրի «մեզ»-ը փոխարինված է «հայսն» բառով, այսինքն ավելի որոշակի են դարձել «մեզ»-ի իմաստը, իսկ վերջին երկու բառը այսպես է. «կալ յաղօթս»։*

Հոդ. Զե, էջ 86։ *№ 3369-ում ԺՐ (էջ 36բ), № 659-ում ՀԴ (էջ 91բ)։ Վերջին ձեռագրում չի պահվել բնագրի «կամ ի վկայարանս» հատվածը, իսկ «հերետիկոսաց»-ի փոխարեն գրված է հերձուածողաց»։*

Հոդ. ԶԶ, էջ 86։ *№ 3369-ում ԺԴ (էջ 36բ), № 659-ում Հե (էջ 91բ)։ Հոդվածի վերջին մասը № 659-ում այսպիսի չարադասութիւն ունի... «ամուսանանալ ընդ հերձուածողաւ»։ Բնագրի «հերետիկոսաց» բառը №№ 648, 3562-ում գրված է եզակի ուղղական՝ «հերետիկոս» (էջ 12ա, 281բ)։*

Հոդ. ԶԷ, էջ 86։ *№ 3369-ում ԺԴ (էջ 36բ), № 659-ում ՀԶ (էջ 91բ)։ Համմտ. № 659-ի ունեցածը. «Ոչ է պարտ պառաւանց առաջի նստիլ»։ №№ 649, 650, 651, 2964 ձեռագրերում չի պահվել այս հոդվածը։*

Հոդ. ԶԸ, էջ 86։ *№ 659-ում Հէ (էջ 91բ)։ Նախորդ՝ Զէ հոդվածը №№ 648, 3562 ձեռագրերում միացված է ԶԸ-ին և գրված ՄԸ համարի տակ։ №№ 650, 649-ում չի պահվել բնագրի «եպիսկոպոս» բառը (էջ 35բ, էջ 31բ), իսկ №№ 648, 651, 2964, 3562-ում կա երկու բառի տեսաոաջութիւն «եպիսկոպոսաց ընտրութեամբ» (էջ 12ա, էջ 24ա; էջ 45ա, էջ 281բ)։ Համմտ. № 659-ի ունեցածը. «Պարտ է եպիսկոպոսաց ընդրութեամբ եպիսկոպոսաց յառաջ գալ»։*

Հոդ. ՁՔ, էջ 87։ *№ 3369-ում ԺԵ (էջ 36բ), № 659-ում ՀԸ (էջ 91բ)։ Մի քանի ձեռագրերում սույն հոդվածն ունի այսպիսի այլընթերցումներ. «Ոչ է պարտ և արժան զսրբութիւնսն (№ 3369-ում՝ սրբութիւնս, №№ 648, 3562-ում՝ զսրբութիւնս) յաւրհնութենէ (№ 3369-ում՝ օրհնութենէ, №№ 648, 650, 2964, 3562-ում՝ յաւրհնութեան, № 649-ում՝ յաւրհնութեամն) բանի (№№ 3369, 651-ում՝ բնի, № 649-ում՝ լիք բանի) ըստ (№ 3369-ում՝ ընդ) Զատկի յայլ (№ 3369-ում՝ այլ) տեղիս առաքել (№ 3369-ում՝ առնել առաքել)» (№№ 648, էջ 12ա, 649, էջ 31բ, 650, էջ 35բ, 651, էջ 24ա, 2964, էջ 45ա, 3369, էջ 36բ, 3562, էջ 281բ)։ № 659-ում. «Ոչ է պարտ զսրբութիւնսն յաւրհնութեան կարգի ըստ Զատկի յայլ եկեղեցիս առաքել» (էջ 91բ)։*

Հոդ. Ղ, էջ 87։ *№ 3369-ում ԺԶ (էջ 36բ), № 659-ում ՀՔ (էջ 91բ)։ Բնագրի «սաղմոսա-*

սացի» բառը № 659-ում դրված է «սաղմոսաց» ձևով, իսկ «առանձինն... յեկեղեցւոջ հատվածը՝ «սաղմոսել առանձին յեկեղեցւոջ»։

Հոդ. ՂԱ, էջ 87։ № 3369-ում ԺԷ (էջ 36բ), № 659-ում ՁԱ (էջ 92ա)։ №№ 648, 649, 650, 651, 2964, 3369, 3562 ձեռագրերում չի պահվել հոդվածի վերջին՝ «այլ ի միջին գրակարդացումն առնել» հատվածը։ Բնագրի «յարել» բառը №№ 650, 3369-ում դարձել է «յարկել» (էջ 35բ, էջ 36բ, իսկ № 651-ում՝ «արկել» էջ 24բ)։ № 659-ում չեղվում է «ի միջին գրակարդացումն» հատվածը, այստեղ այդ այսպես է. «ի միջոցին կարդացմունս» (էջ 92ա)։

Հոդ. ՂԲ, էջ 87։ № 3369-ում ԺԸ (էջ 36բ), № 659-ում ՁԲ (էջ 92ա)։ Բնագրի «յամենայն» բառը № 659-ում փոխարինված է «ի»-ով։

Հոդ. ՂԴ, ՂԴ, Ղե, էջ 87։ № 3369-ում՝ ԺԹ, Ի, ԻԱ (էջ 36բ), № 659-ում՝ ՁԳ, ՁԴ (էջ 92ա)։ Այս երեք հոդվածները Լավոդիկեի կանոնախմբի ԺԹ հոդվածն են։ Բնագրի ՂԴ հոդվածը առանձին անիմաստ է և խիստ աղավաղված, այն կազմում է նախորդի՝ ՂԳ-ի շարունակությունը, ինչպես № 659 ձեռագրում է։ Բնագրի «վարդապետութեանն երախայից» (ՂԴ) հատվածը №№ 649, 650, 651, 2964, 3369 ձեռագրերում դրված է հոգնակի՝ «վարդապետութեանցն երախայից» (№ 3369-ում՝ երեխայից. էջ 32ա, էջ 35բ, էջ 24բ, էջ 45բ)։ Իսկ «գնացելոցն»-ը (ՂԴ) № 3369-ում՝ «գնացողաց»։ Ահա և № 659-ի ունեցածը. «Պարտ է քան զխաւսն նախ երախայից աղաւթս մատուցանել, իսկ ապա այնոցիկ որ յապաշխարութեանն են և գնացելոց նոցա և ապա հաւատացելոցն»։ Այստեղ բերում ենք այդ երկու (ՂԴ, ՂԴ) հոդվածները միասին, միաժամանակ երկրորդ հոդվածում կատարելով որոշ փոփոխություն՝ միտքը հասկանալի դարձնելու համար. «Պարտ է զկնի վարդապետութեանն՝ երախայի յաղաւթս լինել. իսկ ապաշխարողաց և յետ զնալոյ սոցա՝ հաւատացելոցն»։ Բնագրում այդպիսի փոփոխություն չկատարեցինք, որովհետև կխախտվեր հոդվածների ընդհանուր համարակալումը, որը կապված է «Կանոնադիրք Հայոց»-ի և հատորի ընդհանուր ցանկի հետ (տե՛ս էջ 5—17)։ Այս նույն ձեռագրում (№ 659) բնագրի Ղե հոդվածից անջատել են վերջին՝ «և ոչ արանց ի բեմ ելանել» հատվածը և դարձրել առանձին հոդված, որը առանց համարակալման հաջորդում է ՁԴ հոդվածին։ Ահա այդ հոդվածը. «Ոչ է պարտ կանանց ի բեմ ելանել»։ Վերևում նշված մի քանի ձեռագրերում այդ հոդվածը նույնն է, ինչ Կանոնագրքի ունեցածը (Ղե) միայն մի բառի չեղում կա, բնագրի «արանց» բառը այս և № 659 ձեռագրերում փոխարինված է «կանանց» բառով (№№ 648, էջ 12ա, 649, էջ 32ա, 650, էջ 35բ, 651, էջ 24բ, 2964, էջ 45բ, 3369, էջ 36բ, 3562, էջ 282ա)։

Կանոնագրքի Լավոդիկեի կանոնախմբի ԽԱ (հմմտ. հուն. 44-րդ) հոդվածում արգելվում է կնոջը բեմ հանել, բայց Երկրորդ Նիկիական կանոնախմբում այս հոդվածը չի պահվել։ Ղե հոդվածը, ինչպես ցույց ենք տվել վերևում, Լավոդիկեի կանոնախմբի 19-րդ հոդվածի վերջին մասն է։ Կանոնագրքում այդ հոդվածի բնագրում կարդում ենք. «Իբրեւ միայն քահանայիցն արժան է եւ որ յաջտիճանին, և ոչ եթէ կէսսարկաւագաց թէ սաղմոսողոգ ի բեմ ելանել եւ ի սեղանոյն աւրէնս առնուլ» (հտ. Ա, էջ 233—234)։ Ինչպես տեսնում ենք այս մեջբերման համաձայն բեմ բարձրանալ թույլատրվում է միայն քահանաներին և մերժում ինչպես քահանայից ցածր աստիճան ունեցող եկեղեցական պաշտոնյաներին, այնպես էլ ընդհանրապես աշխարհականներին։ Նույն հոդվածի հունարեն բնագրում այդ հատվածում գրված է. „καὶ μόνοις ἐξὸν εἶναι τοῖς ἱερατικοῖς εἰσιέναι εἰς θυσιαστήριον καὶ κοινωνεῖν„ (Պիտրա, էջ 498։ Սվ միայն հոգևորականներին է թույլատրվում մտնել բեմ և հաղորդվել)։ Այս վկայությամբ էլ բեմ մտնել թույլատրվում է միայն հոգևորականությանը։ Տարբերակներում եղած «կանանց» ընթերցումը սխալ է, իսկ բնագրի «արանց» բառի տակ պետք է հասկանալ միայն աշխարհականներին, մանավանդ հոդվածի սկզբում այդ ակնարկվում է՝ «ժողովրդականաց»։ Այս առումով սույն հոդվածը ևս ավելի մոտ է Լավոդիկեի կանոնախմբի հունարեն բնագրին, քան Կանոնագրքինը։

Հոդ. ՂԶ, էջ 87։ № 3369-ում ԻԲ (էջ 36բ), № 659-ում Ղե (էջ 92ա)։ Վերջին ձեռագրում հոդվածը հավանաբար աղավաղված է և մնում է անիմաստ։ Ահա ամբողջը. «Ոչ է պարտ սարկաւագացն ի սարկաւագանոցին տեղի որոշեալ ունել»։ Ինչպես վերևում նշել ենք, այստեղ տրված է Լավոդիկեի կանոնախմբի հունարեն բնագրի 21-րդ հոդվածի առաջին մասը, իսկ Կանոնագրքի նույն կանոնախմբի համապատասխան հոդվածում (ՀԱ) երկրորդ մասը։ № 659 ձեռագրում «զկէսսարկաւագացն»-ը փոխարինված է «սարկաւագացն»-ով, իսկ «ի սարկաւագացն»-ը՝ «ի սարկաւագանոցին»։ Հակառակ № 659-ի ունեցածի, և՛ Կանոնագրքի և՛ հունարենի բնագրերում միտքը պարզ է՝ կէսսարկավագները պաշտամունքի արարողության ժամանակ պետք է զբաղեցնեն իրենց տեղը և ոչ թե սարկավագների։

Հոդ. ՂԷ, էջ 88: *№ 3369-ում ԻԴ (էջ 37ա), № 659-ում ՂԶ (էջ 92ա), №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում բնագրի «պարանոց և»-ի միջև կա «ունել» բառը, այսպես.՝ «պարանոց ունել և». Այս երկու բառը № 3369-ում աղավաղվելով դարձել է «պարարեցուցանել», իսկ «այսպէս»-ը փոխարինված է «ապա» բառով։ № 659-ում հոդվածը ընդարձակ է, ահա այն. «Ոչ է պարտ սպասաւորացն և կամ գրակարդացացն որարիովն ունել և այսպէս կարդալ կամ սաղմոսել կամ զայլ պաշաւունն յեկեղեցւոյն որարիովն առնել»։ Ուրիշներ վերջին բառը, տողամեջ, ուղղել են «ունի»։*

Հոդ. ՂԸ, էջ 88: *№ 3369-ում ՂՀ (էջ 40ա), № 659-ում Ճ (էջ 93ա), № 3369-ում չի պահվել միայն երկրորդ «ոչ»-ր։ № 659-ում «և ոչ»-ը փոխարինված է «դոնէ քէ»-ով։ Գրչական սխալի հետևանքով «զդրունսն» դրվել է «դրունս», իսկ վերջին երկու բառը այսպես է. «և աղաւքից պարապել»։ №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում չեն պահվել ՂՀ—ՃԴ հոդվածները։*

Հոդ. ՂՔ, էջ 88: *№№ 3369-ում ՂՔ (էջ 40ա), № 659-ում ՃԱ (էջ 93ա), Միայն № 659 ձեռագրում «յետ»-ը գրված է «գկ[ն]ի»։*

Հոդ. Ճ, էջ 88: *№ 3369-ում Ճ (էջ 40ա), № 659-ում ՃԲ (էջ 93ա), № 3369-ում չի պահվել միայն «որք մկրտին», № 659-ում հոդվածը համառոտ է. «Պարտ է մկրտելոցն ասել գՀաւատն ի մեծի հինգշաբաթուցն»։*

Հոդ. ՃԱ, էջ 88: *№ 659-ում Զ (էջ 92ա), Այս հոդվածը այստեղ այսպես է. «Պարտ և և ի միաշաբաթու կարդալ Աւետարան»։*

Հոդ. ՃԲ, էջ 88: *№ 3369-ում ՃԱ (էջ 40ա), № 659-ում ՃԳ (էջ 93ա), № 659-ում չի պահվել բնագրի «որք»-ը, իսկ «մկրտեցան զՀաւատն ասել» հատվածի փոխարեն ունի «մկրտելոցն պատմել զՀաւատնո»։*

Հոդ. ՃԳ, էջ 88: *№ 3369-ում ՃԲ (էջ 40ա), № 659-ում ՃԴ (էջ 93ա), Միակ տարբերությունն այն է, որ № 659 ձեռագիրը բնագրի «պարգև ի» փոխարեն ունի «աղատութեան» բառը (էջ 92աբ)։*

Հոդ. ՃԴ, էջ 88: *№№ 3369-ում ՃԳ (էջ 40ա), № 659-ում ՃՆ (էջ 93բ), № 659 ձեռագրում չի պահվել բնագրի «Եպէսէտ եւ մարտիրոսաց յիշատակ իցեն» հատվածը։ Այս երկու ձեռագրում էլ հոդվածը չարունակվում է՝ № 659-ում. «ընթե և վկայաբանութիւն ուրեք կատարեցի», № 3369-ում. «լիցի պատարագ»։*

Հոդ. ՃՆ, էջ 89: *№ 3369-ում՝ ԻԴ (էջ 37ա), № 659-ում՝ ՃՋ (էջ 93բ), №№ 648, 3562-ում՝ ՂՀ (էջ 12բ, էջ 282ա), իսկ № 649 (էջ 32ա), 650 (էջ 35բ), 651 (էջ 24բ), 2964 (էջ 45բ) ձեռագրերում՝ ՂԲ։ №№ 650, 651, 2964, 3369-ում բնագրի «զքառասներորդս» բառին ավելացված է «պահոն» բառը՝ «ի քառասնորդաց պահոն»։ Այս ձեռագրերում չի պահվել հոդվածի վերջին՝ «այլ չորակեր լինել» մասը։ № 659-ում հոդվածի վերջում ավելացված է «սակաւ ինչ»։*

Հոդ. ՃՋ, էջ 89: *№ 3369-ում՝ ԻԸ (էջ 37ա), № 659-ում՝ ՃԷ (էջ 93բ), №№ 648, 3562-ում՝ ՂԲ (էջ 12բ, էջ 282ա), №№ 649, 650, 651, 2964-ում՝ Ճ։ № 659-ը բնագրի «հարսանիս կատարել» բառերի միջև ունի. «առնել կամ ծնունդս»։*

Հոդ. ՃԼ էջ 89: *№ 3369-ում՝ ՃԴ (էջ 40ա), № 659-ում՝ ՃԸ (էջ 93բ)։ № 3369-ում հոդվածի վերջին երկու բառը այսպես է. «անպատհեալ (հապալված՝ անպտղ) առնել»։ № 659-ը բնագրի «ի հարսանիս» բառից հետո ունի այլ չարունակություն. «ծափս հարկանել կամ կաքաւել կամ երգս անպատեհս ասել»։ №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում չի պահվել ՃԷ հոդվածից մինչև կանոնախմբի վերջը։*

Հոդ. ՃԸ, էջ 89: *№ 3369-ում՝ ՃՋ (էջ 40բ), № 659-ում՝ ՃՔ (էջ 93բ)։ № 659-ում «քահանայից»-ի փոխարեն դրված է. «ժառանգաւորացն» բառը։ № 3369-ում բնագրի «տեսիլ» և «տեսանել» բառերը համապատասխանաբար փոխարինված է. «տեսնել» և «տանել» բառերով։*

Հոդ. ՃՔ, էջ 89: *№ 3369-ում՝ ՃՆ (էջ 40բ), № 659-ում՝ ՃԺ (էջ 93բ)։ № 659-ում «Հանկանակս տանել»-ը գրված է բնագրի «Հանգանակաւք դինարրուաց վարել» հատվածի փոխարեն։*

Հոդ. ՃԺ, էջ 89: *№ 659-ում՝ ՃԺԱ (էջ 93բ)։ Այստեղ հոդվածը այսպիսի շարադասություն ունի. «Ոչ է պարտ երիցու առանց եպիսկոպոսի ի բեմ ելանել նախ քան զեպիսկոպոսին ելանել»։ № 3369-ում չի պահվել այս հոդվածը։*

Հոդ. ՃԺԱ, էջ 89: *№ 3369-ում՝ ՃԷ (էջ 40բ), № 659-ում՝ ՃԺԲ (էջ 94աբ)։ Բնագրի «տեսուչք շրջել»-ը № 659-ում արտահայտված է մեկ բառով «խնամակալուա»։*

Հոդ. ՃԺԲ, էջ 90: *№ 3369-ում՝ ՃԸ (էջ 40բ), № 659-ում՝ ՃԺԳ (էջ 94ա)։ № 3369-ում բնագրի «ի չինական»-ը դարձել է «իշխանական»։ Մեղ թվում է այս փոփոխությունն արդյունք*

լ դրչագրական սխալ։ Բայց հետաքրքիրն այն է, որ հունարեն բնագրում (Լավոդիկեի կանոնախումբ, հոդ. 58) չի նշված ոչ «ի շինական տունս» և ոչ էլ «իշխանական տունս», այլ ուղղակի ἐν τοῖς οἴκοις (տներում) ընդհանուր ձևով։ Մոտավորապես նույն բովանդակությամբ մի հոդված գտնում ենք Սահակ Պարթևի կանոնախմբում։ Վերջինիս իր հոդվածում քահանաներին պատվիրում է եկեղեցուց դուրս «մի՛ իշխեսցեն աւրէնս ի տունս շինականաց առնել և անդ տալ զսրբութիւնն, բայց հիւանդացս» (հտ. Ա, էջ 381), իսկ Ներսեսի և Ներշապուհի կանոնախմբում՝ «ի տունս շինականացն քահանայք մկրտութիւն մի՛ իշխեսցեն առնել» (էջ 485)։ Հունարենում և երկրորդ Նիկիականի բնագրում խոսքը նվերի մասին է τροσφορὰ (=պատարագ), Սահակ Պարթևի մոտ ավելի շուտ հաղորդության, իսկ երրորդում՝ մկրտության։ Թեև այս երեքն էլ վերաբերում են ծիսակատարության տարբեր հարցերին, բայց բոլոր դեպքերում արգելվում է դրանք կատարել մասնավոր տներում։ Ավելի որոշակի նշում են Սահակ Պարթևը և Ներսեսը, առանձնացնելով շինականներին։ Երկրորդ Նիկիականի ՃԺԲ հոդվածը լինելով հունարենի բառացի թարգմանություն, ավելի ունի միայն «շինական» բառը, որը մեր համոզմամբ Սահակ Պարթևի վերևում նշված հոդվածից է անդրադարձվել այստեղ։ Այս հանգամանքը նաև ցույց է տալիս, որ մինչև երկրորդ Նիկիական կանոնախմբի հանդես գալը գոյություն ուներ Սահակ Պարթևի կանոնախումբը։

Հող. ՃԺԴ, էջ 90։ № 3369-ում՝ ՃԲ (էջ 40բ), № 659-ում՝ ՃԺԴ (էջ 94ա)։ Վերջին ձեռագրում այս և հաջորդ՝ ՃԺԴ հոդվածները միացված են միմյանց։ Այստեղ կբերենք № 659-ի հոդվածի առաջին մասը. «Ոչ է պար[տ] տգիտական սաղմոս կամ անկանոնական չեկեղեցուդ ասել կամ անկանոնական գիրս կարդալ, այլ ղկանոնեալսն՝ Նոր և Հին Կտակարանաց, որպէս և ստորագրեալս էն։

Այնուհետև հաջորդում է բնագրի ՃԺԴ հոդվածը։ Վերջինիս էլ հաջորդում է թուլատրելի գրքերի ցանկը. «Իսկ կարգեալ գիրքն այսոքիկ ենն» խորագրով։

«Մովսիսի ն գիրք.

Ա. Ծնունդք.
Բ. Ելք Իսրաէլի.
Գ. Ղեւտականք.
Դ. Թիւք.
Ե. Երկ[ր]որդ աւրէնք.
Զ. Ցեսու.
Է. Դատաւորք.
Ը. Հռութ.
Թ. Թագաւորք առաջին.
Ժ. Թագաւորք երկրորդ.
ԺԱ. Թագաւորք երրորդ.
ԺԲ. Թագաւորք չորրորդ.
ԺԳ. Մնացորդք առաջին.
ԺԴ. Մնացորդք երկրորդ.
ԺԵ. Դաւիթ մարգարէ.
ԺԶ. Առակք Սողոմոնի.
ԺԷ. Առակք երկրորդ.
ԺԸ. Առակք երրորդ.
ԺԹ. Ժողովողն.
Ի. Երդ երգոցն.
ԻԱ. Իմաստութիւն Սողոմոնի.
ԻԲ. Ցոք.
ԻԳ. Եսայի.
ԻԴ. Երեմիայ.
ԻԵ. Բարուք.
ԻԶ. Ողբք Երեմիայի.
ԻԷ. Եզեկիէլ.
ԻԸ. Դանիէլ.
ԻԹ. Երկոտասան մարգարէքն.
Լ. Եզր առաջին.
ԼԱ. Եզր երկրորդ.
ԼԲ. Բան Նեեմայ.
ԼԳ. Եսթեր.
ԼԴ. Յուդիթ.
ԼԵ. Տուրիթ.
ԼԶ. Մակարայեցիք առաջին.
ԼԷ. Մակարայեցիք երկրորդ.
ԼԸ. Մակարայեցիք երրորդ.
ԼԹ. Մակարայեցիք չորրորդ.
Ա. Ցեսու Սիրաքայ.
Այս է չափ և կարդ Հին Կտակարանացն։

Նոր Կտակարանք.

Ա. Աւետարան Մատթէոսի.
Բ. Մարկոս.
Գ. Ղուկաս.
Դ. Յոհաննէս.
Ե. Պաւղոս Հռոմայեցւոց թուղթն.
Զ. Կորընթացւոց թուղթն.
Է. Կորընթացւոց երկրորդ թուղթն.
Ը. Երրորդ Կորընթացի.
Թ. Գաղատացւոց.
Ժ. Եփեսացւոց.
ԺԱ. Փիլիպեցի.
ԺԲ. Կողոսացի.
ԺԳ. Առաջին Թեսաղոնիկեցւոց.
ԺԴ. Երկրորդ Թեսաղոնիկեցւոց.
ԺԵ. Երրայեցւոց թուղթ.

ԺԶ. Տիմոթէոս առաջին.
ԺԷ. Երկրորդ Տիմոթէոս.
ԺԸ. Տիտոս.
ԺԹ. Գործք առաքելոցն.
Ի. Թուղթ Յակոբու.
ԻԱ. Պետրոսի առաջին Թուղթ.
ԻԲ. Պետրոսի երկրորդ Թուղթ.
ԻԳ. Յո[վ]հաննու առաջին Թուղթ.
ԻԴ. Յովհաննու երկրորդ Թուղթ.
ԻԵ. Յովհաննու երրորդ Թուղթ.
ԻԶ. Յայտնութիւն Յովհաննուս (էջ 94ա—95ա),

Հմդ. ՃԺԴ, էջ 90: № 3369-ում՝ ՃԺ (էջ 40բ), № 659-ում՝ ՃԺԴ (էջ 94ա)։ Բնագրի «սրբոյ ժողովոյս», «ի Նիկիայ ժողովեցաւս» հատվածների փոխարեն № 3369-ում համապատասխանաբար դրված է «սրբոց ժողովոցս», և «ի Նիկիոյ ժողովոցն». իսկ այնուհետև մնացած մասն այստեղ ընդարձակ է. «յառաջի Աստուածապսակեալ սուրբ Թագաւորին Կոստանդիանոսի նզովեալ եղիցի, իսկ կատարիչք սահման սրբոյ կանոնացս այնպիսին օրհնեալ է և օրհնեալ եղիցի ի լաստուծոյ և ի մարդկանէն»։ Ահա և № 659-ի ունեցած ՃԺԴ հոդվածի շարունակությունը. «ԵԹԵ ոք յանդգնեսցի լուծանել զսահման սրբոյ ժողովոյն, որ ի Նիկիայ ժողովեցան՝ առաջի բարեպաշտ Թագաւորին Կոստանդիանոսի, նզովեալ լիցի»։ Սրան ձեռագրում, այնուհետև հաջորդում է Հին և Նոր Կտակարանի գրքերի ցանկը, որոնք թուլլատրվում է կարդալ (էջ 94ա—95ա, տես վերևում)։ Այս ցանկը Լավոդիկեի կանոնախմբի հունարեն 60-րդ հոդվածն է, որը կանոնագրքի մեջ միացված է ԾՆ հոդվածին (հտ. Ա, էջ 241—242)։ Ինչպես երեում է Երկրորդ Նիկիական կանոնախմբի վերջին հոդվածը ստեղծվել է հետագայում, այս կանոնախմբի ճոխացման ժամանակներում։

ՎԱՉԱԳԱՆ ԱՂՎԱՆԻՑ ԱՐՔԱՅԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վ.Երնապիր, էջ 91: *Միայն № 3276 ձեռագրում են պահվել այս կանոնախմբի մի քանի՝ Բ, Գ, ԺԳ, ԺԴ հոդվածները։ Այստեղ վերնագիրը հետևյալ տեսքն ունի. «Սահմանադրութիւն Վաչագա[նա]յ Աղուանից արքայի» (էջ 180ր)։ Այս կանոնախումբը պահվել է նաև Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատության մեջ (էջ 97—103), ուր վերնագիրը այսպիսին է. «Սահմանադրութիւն կանոնական ի Վաչականայ Աղուանից արքայէ եղեալ ի ժողովն, որ յԱղուէնն եղե» (էջ 97)։ Ուսումնասիրողներից մի մասը՝ Կ. Շահնազարյան, Գ. Ջարբհանալյան, Ղ. Ալիշան, Վ. Հացունի և ուրիշներ գտնում էն, որ Աղվանից պատմության հեղինակ Մովսես Կաղանկատվացին VII դարի հեղինակ է, որի գործը շարունակվել է X դարում Մովսես Դասխուրանցու կողմից, մյուս մասը՝ Ք. Պատկանյան, Հ. Աճառյան, Հ. Մանանդյան, Ն. Աղոնց, Մ. Աբեղյան և ուրիշներ՝ X դարի։ Ավելի ուշ Ն. Ակինյանը ի մի բերելով բոլոր ուսումնասիրողների կարծիքները, մանրամասն քննելով մատենագրական առկա վկայությունները որոշ վերապահությամբ պաշտպանեց ուսումնասիրողների երկրորդ մասի կարծիքը, ցույց տալով, որ աշխատության հեղինակը Մովսես Դասխուրանցին է և վերջինիս աշխատությունը չէր կարող 1003 թ. առաջ հանդես գալ («Հանդէս Ամսօրեայ», 1953 թ., էջ 32։ Ակինյանի ամբողջ հոդվածը տե՛ս նույն տեղում, 1953 թ., էջ 1—32, 161—175, 321—349, 552—596, 1955 թ. 309—329)։ Մի կողմ թողնելով Ակինյանի վարկածի առանձին հակասությունները, օրինակ՝ Աղվանից պատմությունը եթե 1003 թ. առաջ չէր կարող հանդես գալ, ապա ինչպես է որ X դարի կեսերին Անանիա Մոկացին հիշում է այդ աշխատությունը և կարգացել այն («Արարատ», 1897, Հավելված, էջ 135—136). տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է այն հարցը, թե սույն կանոնախմբի՝ կանոնագրքում եղած բնագիրը «Աղվանից պատմություն»-ից անկա՞խ է մտել կանոնագրքում, թե այն վերցրել են վերջինիցս և մուծել կանոնադրքում։ Սույն կանոնախումբը կանոնագրքի Ա խմբի ձեռագրերում դրված է Լե (35) համարի տակ (տե՛ս կանոնադիրը Հայոց, հտ. Ա, էջ 4), իսկ Բ խմբի՝ ԼՀ (38) (տե՛ս նույն տեղում, էջ XXXIII)։ Երկու դեպքում էլ Հովհաննես Օձնեցու կանոնախմբից՝ Օձնեցու կազմած կանոնադրքի վերջին կանոնախմբից հետո։ Նշանակում է՝ այն կանոնադիրը է մուծվել Օձնեցուց՝ VIII դարից հետո։ Եթե սրա հետ մեկտեղ նկատի ունենանք, ինչպես ճիշտ նշում է Ակինյանը, որ Միքայել Աղվանից կաթողիկոսի 705 թ. ժողովում, երբ քննվում էր մերձամուսնության հարցը (հմմտ. նաև 768 թ. Պարտավի ժողովի ԺԶ հոդվածը) այս կանոնախմբի ԺԷ հոդվածը չի ակայակոչվել՝ նշանակում է VIII դարում «տակաւին հրապարակի վրայ մատչելի չէին այս կանոնները։ Ուստի անոնք գտնուած ըլլալու են Ը գարու երկրորդ կէսին կամ Թ գարուն որևէ վանքի մը խուլ անկիւնը» («Հանդէս Ամսօրեայ», 1953, էջ 563)։*

Ավելին. ինչպես ցույց ենք տվել ներածությունում (էջ LXIV—LXV) երկրորդ Նիկիական կանոնախումբը Անանիա Մոկացու կաթողիկոսության ժամանակ (941—965ԹԹ. ըստ Գալուստ Տեր-Մկրտչյանի, տե՛ս Արարատ, 1897, էջ 91ա) արդեն մուծված էր կանոնագրքում, ուր երկրորդ Նիկիական կանոնախմբին հաջորդում է սույն կանոնախումբը։ Այն հարցին, թե Անանիա Մոկացու ժամանակ վերջինս մուծվա՞ծ էր կանոնագրքում, հաստատ պատասխան չենք կարող տալ։ Վերևում տեսանք, որ Անանիա Մոկացին ոչ միայն գիտի «Պատմութիւն Աղուանից աշխարհի» գիրքը, այլև կարդացել է։ Սակայն այդ փաստը հիմք չի տալիս պնդելու, թե այդ ժամանակ էլ այս կանոնախումբը նշված գրքից անցել է կանոնագրքին։ Բոլոր դեպքերում այս անցումը չէր կարող X դարի 90-ական թվականներից հետո կատարվել (հմմտ. Ակինյանի կարծիքն այս մասին, Հանդէս Ամսօրեայ, 1953, էջ 560), որովհետև կանոնագրքի X դարի վերջերի խմբագրության մեջ այն արդեն գտնվում էր և դրված էր 35 (Լե)-րդ տեղում, հաջորդելով

անմիջապես երկրորդ Նիկիական կանոնախմբին։ Հնարավոր է, որ սույն կանոնախումբը կանոնագիրք է մուծվել «Պատմութիւն Աղուանից աշխարհին» աշխատությունից և կամ վերջինիս աղբյուրից։ Թերևս հավանական է առաջին ենթադրությունը։

Իսկ ի՞նչո՞ւ Հովհ. Օձնեցին սույն կանոնախումբը չի մուծել կանոնագրքի իր հավաքման մեջ, կարելի է պատասխանել ենթադրաբար. այն հավանաբար ծանոթ չէր Հովհ. Օձնեցուն, որովհետև, ինչպես վերևում տեսանք, այս կանոնախումբը պարունակող գրքի մասին հաղորդում են միայն X դարից։

Առաջարան, էջ 91—93։ № 3276 ձեռագրում առաջաբանը չի պահվել։ Այստեղ նշված մի շարք անձնանունների և տեղանունների ուղղագրությունը շեղվում է Մովսես Կաղանկատվացու ունեցածից։ Որպեսզի ուսումնասիրողներին հնարավորություն տանք համեմատելու այդ երկու րնագրերում տվյալ անունների ունեցած շեղումները, նպատակահարմար գտանք Մովսես Կաղանկատվացու Պատմության սույն կանոնախմբի առաջաբանի ժողովի մասնակիցներին վերաբերող հատվածը այստեղ բերել. «Ես Վաչական՝ Աղուանից արքայ, և Շուխհազիջայ արքեպիսկոպոս Պարտաւայ, Մանասէ Կապաղայ եպիսկոպոս, Յունան Հաչուայ եպիսկոպոս, Անանիա ե Սահակ և Ուտոյ քորեպիսկոպոսք, Յովսէփ Կաղանկատուոց երէց, Մաքէ Պարտաւայ երէց, Թոմայ Թադաւորի դրան երէց, Պօղոս Գնգաճայ երէց, Շմաւոն Յուոյ քորեպիսկոպոս, Մաքէ Դարահոճոյ երէց, Աբիկաղ Բեթայ երէց, Ուրբաթ Այրմանուշաց երէց, Յովէլ և Պարպ և Միքէ և Յակոբ Երիցունք, և ազատ մարդիկ և նահապետք Արցախայ, և Բակուր Կաղանկատուց նահապետ, և այլք բազումք, որք միաբան առաջի իմ եկին ի հանդէս ի հովոցի տեղւոջս յԱղուէննս» (էջ 98)։

Կանոններից առաջ kinps ձեռագրերում պահվել է դրանց ցանկը, որ բերում ենք համաձայն k ձեռագրի.

«Ա. Վասն քահանայից որ ի շենս են երկիցս ի տարին երկիր պագցեն եպիսկոպոսին։

Բ. Հաս քահանայից և սարկաւազաց։

Գ. Նուէրք Թագաւորի և ազատ ազգի իւր ձեռօք տայցէ։

Դ. Ժողովրդոց նուէրք առ երիցունս։

Ե. Ոչխարաց և ձիոց նուէրք ի ժողովրդէնէ առ քահանայս։

Զ. Վասն ազատի և շինականի մեռելոց յիշատակ մի՛ խափանեսցեն ի տարին։

Է. Վասն վանականաց եթէ սղալանս գացի և յայտ լիցի։

Ը. Վասն վանաց երիցանց ըստ պիտոյից տալ ժողովուրդն։

Թ. Վասն քրիստոնէի որ ի մարտս արիւն հեղու։

Ժ. Վասն քահանայի որ հովէ զդեօղս կամ զագարակս։

ԺԱ. Վասն որ զազգական կին արասցէ։

ԺԲ. Վասն կնաթողի։

ԺԳ. Վասն որ ի վերայ մեռելոյ կոծ դնեն։

ԺԴ. Վասն որ զմեռելոտի ուտէ կամ ի քառասնորդս միս ուտէ։

ԺԵ. Վասն որ ի չորեքշաբթի կամ ուրբաթի միս ուտէ։

ԺԶ. Վասն որ զքահանայ կամ զսարկաւագ բամբասէ։

ԺԷ. Վասն որ ընկերք և աշակերտք մեղս զնեն ի վերայ երիցու։

ԺԸ. Ի շենս որ բաղում են եկեղեցիք զպտուղ և զհաս աւադ եկեղեցին տացեն։

ԺԹ. Վասն աղատաց տասանորդաց։

Ի. Ձերիցունս առանց հրամանաց եպիսկոպոսին մի՛ հանցեն եկեղեցւոյն։

ԻԱ. Վասն աղատաց առանց հրամանի եպիսկոպոսին սեղան մի՛ կանգնեսցէ։

ԻԲ. Վասն պայմանի եպիսկոպոսաց քահանայից և ազատաց» (էջ 206ար. հմմտ. m, էջ 209աբ, p, էջ 227աբ, s, էջ 259բ—260ա)։

Դ հոդվածը սույն ձեռագրերում բաժանված է երկու մասի։ Այս հոդվածի երկրորդ մասը՝ սկսած «Եւ ոյր ոչխար է՝ ...ո-ից մինչև վերջ դրված է իբրև առանձին հոդված՝ ե համարի տակ։ Այդ պատճառով այս չորս ձեռագրերի ցանկում առաջ է եկել նոր վերնագիր։ Ցանկի Դ վերնագիրը վերաբերում է Դ հոդվածի առաջին մասին, իսկ ե վերնագիրը՝ Դ հոդվածի վերջին մասին, որը նշված չորս ձեռագրերում դրված է ե համարի տակ։

O ձեռագրերում ցանկն այսպիսին է.

«Ա. Վասն երիցանց որ ի շենս լիցին ի տարւոջն երկիցս անգամ ընծայ տայցեն եպիսկոպոսին։

Բ. Վասն քահանայի և սարկաւագի. յորժամ ձեռ[ն]ադրեն՝ դրամ տայցեն եպիսկոպոսին։

Գ. Վասն աղատ մարդոյ և Քաղաւոր[ի] որ ինչ հոգոյն մասն է տայցէ ի վանսն։

Դ. Թէ աղատ և Քէ շինական ի տարւոյն Ա անդամ պատարագ արասցեն։

Ե. Վանաց կրէց կամ վանական գայքանք առնեն։

Զ. Վասն վանից երիցանց որ բաղում են և ժողովուրդքն սակաւ և այլ վանաց ժողովուրդք բաղում են և երիցունք սակաւ, Քէ ղինչ առնեն։

Է. Վասն քրիստոնէի որ մարդ սպանանէ։

Ը. Վասն երիցու որ Ռ շէն պահէ։

Թ. Վասն աղգի որ կին արասցէ։

Ժ. Վասն որ զկին Քողու և առանց պսակի կին առնէ։

ԺԱ. Վասն որք զկոծ դնիցեն։

ԺԲ. Որ դմեռելոտի ուտէ և ի Քառասնեւրորդսն միս ուտէ։

ԺԳ. Վասն չորեքշաբաթի և ուրբաթի որ միս ուտէ։

ԺԴ. Վասն աշխարհականի որ քահանայի ե սարկաւագի վերայ բամբասանս դիցէ։

ԺԵ. Վասն քահանայի որ քահանայի վերայ բամբասանս դիցէ։

ԺԶ. Վասն Եպիսկոպոսաց և երիցանց աղատ արանց առաջի արքայի եղեն։

ԺԷ. Եւ որ տասանորդ տան աղատ մարդիք։

ԺԸ. Վասն աղատ արանց որշափ իւրեանց դաստակերտքն են։

ԺԹ. Վասն աղատ մարդո որ իւր եկեղեցւոյ սեղան կանգնէ։

Ի. Վասն պայման[ա]ց որ արարին Եպիսկոպոսունք և երիցունք և աղատ մարդիկ առաջի արքային» (էջ 345բ—346ա)։

Հդ. Ա, էջ 93։ *№ 3276 ձեռագրում չի պահվել այս հոդվածը։*

Հդ. Բ, էջ 93։ *№ 3276 ձեռագրում միակ տարբերությունը այն է, որ «Դ գրամ»-ի փոխարեն ունի «Գ դրամ» (էջ 180բ)։*

Հդ. Գ, էջ 93։ *№ 3276 ձեռագրում լական տարբերությունն այն է, որ «կարողությունն իւր»-ի փոխարեն ունի «ի կարողությունն է իւր» (էջ 180բ)։*

Հդ. Դ, էջ 94։ *№ 3276 ձեռագրում առկա են հետևյալ շեղումները. «Դ գրիւ» փոխանակ «Դ դրիւ», «ողոյն»՝ «ոգնաց», «յաւանակ»՝ «յովանակ», չունի (ոչխար) «է» օժանդակ բայը (էջ 180բ—181ա)։ Այս հոդվածում մեզ հետաքրքրում է հեղուկի չափ «փաս»-ը։ Նոր հայկազյան բառարանի հեղինակները այն նույնացնում են փարչի կամ քասի հետ (հտ. Բ, էջ 935)։ Փասը որպես փարչ կամ քասա է բացատրում Աճառյանը (Հայերէն արմատական բառարան, հտ. Զ, էջ 1404—1405։ Սասանյան Շապուհ Ա-ի Նաքշ-ի-Ռուստեմի արձանագրության մեջ գինու համար երիցս գործածված է չափի մի միաւոր, կոչված 𐭯𐭠𐭮𐭠𐭲𐭩 այսպես, 𐭠𐭩𐭭𐭮𐭥 𐭯𐭮𐭮𐭠𐭲𐭠𐭲 𐭲𐭥𐭮𐭮𐭥𐭫𐭠𐭲 (էջ 16), 𐭠𐭩𐭭𐭮𐭥 𐭯𐭮𐭮𐭠𐭮𐭥 𐭲𐭥𐭮𐭮𐭠𐭫𐭠𐭲 (էջ 16) և 𐭠𐭩𐭭𐭮𐭥 𐭯𐭮𐭮𐭠𐭮𐭥 𐭲𐭥𐭮𐭮𐭠𐭫𐭠𐭲 (էջ 18). տե՛ս Recherches sur les Res Gestae divi Saporis, par Er. Honigmann et An. Maricq, Bruxelles, 1953)։ Մեզ հետաքրքրող բառն ծագման իմաստով արդյո՞ք չի կապվում Նաքշ-ի-Ռուստեմի արձանագրության մեջ գործածված վերոհիշյալ բառի հետ։*

Հդ. Ե—ԺՐ, էջ 94—96։ *Այս ութ հոդվածները չեն պահվել № 3276 ձեռագրում։*

Հդ. ԺԴ, էջ 96։ *№ 3276-ում առկա են այսպիսի շեղումներ. «ժեռելոտի», չունի «ի» (Քառասնեւրորդսն) և «հանդերձ ժողովրդեամբն» (էջ 181ա)։*

Հդ. ԺԳ, էջ 96։ *Բնագրի «կալցի» բառի փոխարեն № 3276 ձեռագրում պահվել է «կալցէ» (էջ 181ա)։*

Հդ. ԺԵ—ԻԱ, էջ 97—99։ *Այս յոթ հոդվածները № 3276 ձեռագրում չեն պահվել։*

Վերջաբան, էջ 99—100։ *№ 3276 ձեռագրում ևս չի պահվել վերջաբանը։ Համահավաք բնագրի կազմման համար օգտագործված ձեռագրերից ոչ մեկը, ինչպես և Մովսես Կաղանկատվացու Պատմության համապատասխան բնագիրը չեն պահել վերջում ուղղանկյուն փակագծերում առնված «հաստատութեան» բառը։ Միտքն հասկանալի դարձնելու համար Մովսես Կաղանկատվացու Պատմության հրատարակիչ Մ. Էմինը նշված բառը ավելացրել է կլոր փակագծերում։ Այդպես վարվեցինք նաև մենք՝ այն վերցնելով ուղղանկյուն փակագծերում, ի նշան մեր կողմից բնագրին կատարված ավելացման։*

ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑՈՒԻՆ ՎԵՐԱԴՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վենեցիա, l. 101: Այս կանոնախումբը պահվել է վերևում բազմիցս նշված ձեռագրերից մի քանիսում՝ №№ 657, 659, 8459։ Սրանց պետք է ավելացնել նաև №№ 835, 837 ձեռագրերը։

№ 657 ձեռագրում վերնագիրն ընդարձակ է. «Կանովնք սրբոյն Բարսեղի սահմանադրութիւնք նմանապէս և բիւրապատիկ ախտից և յանցանաց, գլուխք ՄՀ, զոր սակաւ իմն ի յայսմն գիծ տառիս դրոշմաք» (էջ 115ր)։ Սրա վերջին հատվածը ցույց է տալիս, որ սույն կանոնախմբի հոդվածները, որոնք կանոնագրքի XI դարի խմբագրության մեջ բաղկացած են 272 հոդվածներից, այստեղ լրիվ չեն բերված. բերված են ընտրությամբ 111 հոդվածներ։ Այսպես է բերված նաև №№ 659, 835, 837, 8459 ձեռագրերում, սակայն սրանցից յուրաքանչյուրում հոդվածների տարբեր քանակությամբ։ № 659 ձեռագրի 140a էջում թեև դրված է «Յանդ Բարսղի», բայց սա ոչ թե տվյալ կանոնախմբի վերնագիրն է, այլ վերջինիս հոդվածների բովանդակության ցանկի։

№№ 657, 659 ձեռագրերը մինչև բուն հոդվածներն ունեն վերջիններիս բովանդակությունը արտահայտող ցանկ։ № 659 ձեռագրում ցանկը կազմված է այրբենական կարգով, իսկ № 657-ում՝ ըստ հոդվածների հաջորդականության։ Այսպիսի ցանկ, բայց տարբեր, գտնում ենք կանոնադրքի դիտաքննական բնագրի կազմման համար օգտագործված kmps ձեռագրերում։ Այստեղ կբերենք այդ ցանկերը։ Սկսենք № 659 ձեռագրից։ Այստեղ վերնագրերի ձախ կողմում նշված են հոդվածների համարները։ Այդ համարները համեմատեցինք ձեռագրի բուն հոդվածների համարների հետ և նկատեցինք 2—4 համարների չեղում։ Այդ չեղումները ցույց տալու նպատակով ցանկի վերնագրերի աջ կողմում կլոր փակագծերում նշում ենք № 659 ձեռագրի հոդվածների ստույգ համարները։

«Բ, ՃԽՆ Արուագիտաց։ (Բ, ՃԽՐ)
ԺԱ Ազգականաց։ (ԺԱ)
ԻՆ Ամբարտաւանից։ (ԻԴ)
ԻԼ Անհնազանդելոց ծնաւղաց։ (ԻԶ)
ԼՀ Անարժան հաղորդողաց։ (ԼԷ)
ՀՉ Արուագիտաց ընդ կնոչ։ (ՀԹ)
ՇԱ Ամուանացելոց ընդ անաւրինի։ (Շ)
ՇԲ Առևանկաց։ (ՇԱ)
ԿԲ Այր որ Քողու զկին իւր վասն Աստուծոյ։ (ԿՀ)
ՀԳ Անարգողաց զքահանայս։ (ՀԲ)
ՁԱ Անժամ ուտելոյ կիրակէի։ (ՀՀ)
ՃԲ Արուեստաւորաց գողոց։ (ՃԲ)
ՃԽԳ Արգելողաց զպտուղս քահանայից։ (ՃԼԲ)
ՃՇԳ Ակամայ ըմբռնելոյ յանաւրինաց։ (ՃՇ)
ՃՇՆ Անհաւատ կնոչ։ (ՃՇԱ)
ՃՀԳ Ագաբաց։ (ՃԿԲ)
ՄԱ Արուեստաւորի վաճառելոյ։ (ՃՂԷ?)
ՄԺԱ Արատաւորի։ (ՄԷ)
ՄԺԳ Անզաւակաց։ (ՄԺ)
ՄԽԶ Ամուանացելոց այսահարաց։ (ՄԽԳ)
ՄԽԳ Այսահարի։ (ՄԽ)

Մխէ Աւտահարութիւն դոր քաշ անուանեն։ (Մխդ)
Ա Բռնադատողաց։ (Ա)
ԼՐ Բորոտաց քահանայից։ (ԼԱ)
ՇԳ Բռնադատողաց։ (ՇԲ)
ՃՀՐ Բեմ ելանելոյ կանանց։ (ՃԿԸ)
ՃՁԱ, ՃՁՐ Բանադրողաց։ (ՃՀէ, ՃՀԸ)
ՄԳ Բամբասողաց։ (ՃՂԲ)
ՄԻԱ Բռնարար պսակողի։ (Մժէ)
ՀՔ Գերեզման բացողաց։ (ՀՁ)
ՁՁ Գաղանաբեկի։ (ՁԳ)
ՃՀ Գաղտ պսակի։ (ՃԿՁ)
ՃԺԷ Գիտողաց առևանկաց։
ՇԷ Դստերաց և ուստերաց քահանայից։ (ՇՁ)
Ղ Դիւթից։ (ՁԷ)
ՃՃԴ Դատարկաբանից։ (ՃՃ)
ՃՀԵ Դպրաց։ (ՃՀԱ)
ՃՁԲ Դարձողաց ի մեղս։ (ՃՁԵ)
ԺՁ Եպիսկոպոսաց երկրորդ ձեռնադրելոյ։ (ԺՁ)
ԺԸ, ՃԼԴ, ՃԼՁ Եկեղեցւոյ։ (ԺԲ, ՃԼԲ, ՃԼԴ)
ՁԴ Եկեղեցւոյ իրաց։ (ՁԱ)
ՃԺԵ Եկեղեցւոյ ընչից գողանալոյ։ (ՃԺԳ)։
ՃԼ Եղբաւր ընդ քեռ ննջելոյ։ (ՃԻէ)
ՃԼԲ Երկուց քուերց առնելոյ։ (ՃԻԸ)
ՃԼէ Եկեղեցւոյ։
ՃՁԳ Երեք կնոջ կամ չորից։ (ՃԽԲ)
ՃՁ Երդման։ (ՃՀՁ)
ՄԻԸ Երախայի մեռելոյ։ (ՄԻԴ)
ՄԻԲ Երախայի կենդանւոյ։ (ՄԻԵ)
ՄԼԲ, ՄԼԴ Երախայի մկրտելոյ։ (ՄԻԸ, ՄԻԲ)
ՄԼէ Երկրորդ ամուսնացելոց։ (ՄԼԴ)
ՄԼԸ Երրորդից և չորրորդից։ (ՄԼԴ)
ԺԲ Քրիստոս ուրացողաց։ (ԺԲ)
ԿԱ Զաւշաքաղ քահանայից։ (Կ)
ՁԲ Զդիս կողոպտողաց։ (ՁՁ)
ՃԻԸ Զարդարելոց կանանց։ (ՃԻԵ)
ՃՁԸ Զգուշութեան հատի։ (ՃՁԴ)
ՄԺԸ Զայրս ատեցողաց կանանց։ (ՄԺԴ)
ՄԻՁ Զատկի Աւետարանի։ (ՄԻԲ)
ՄԽԸ Զատկոյ աւուր։ (ՄԽԵ)
ՃԿԲ Ընկերի մեռանելոյ։
ՃՀԳ Ընտանեաց քահանայից ի բեմ ելանելոյ։ (ՃՀ)
ՂԲ Թէ ոք պոռնկի և մեռանի։ (ՂՁ)
Ճ Թէ ի ձեռն առաջնորդաց մեռանի։ (ՂԷ)
ՃԻԵ Թատերաց։ (ՃԻԲ)
ՃՁԳ Ժողովոց։ (ՃՀԲ)
ՂՁ Իգացելոց։ (ՂԳ)
ՄԻԲ Իշխանի անարդողաց կքահանայս։ (ՄԺԸ)
ԻԸ Լուծելոց քահանայից։ (ԻԷ)
ՃՀԱ Լուծողաց զպատուիրանս։ (ՃԿէ)
ԻԴ Խլից և համարից քահանայից։ (ԻԳ)
ՃՂԳ Խղճիւ զննման։ (ՃՁԲ)
ՃՂԲ Խոստացեալ անասնոյ։ (ՃՂԵ)
ՄԳ, ՄԵ Խոստովանողի կրաւնաւորի։ (Մ, ՄԱ)
ՄՁ Խոստովանութեան ամենայն մարդոյ։ (ՄԲ)
ՄԺԲ Խաւսեալ կնոջ։ (ՄԸ)

ՄԺՋ Խառնակութիւն ամուսնութեան ազգականաց, (ՄԺԲ)
ՄԻԴ Խայի յափըշտակոզաց, (ՄԻ)
ՄԻԵ Խայի գերելոյ, (ՄԻԱ)
ՄԼԱ Խորհըրդոյ քահանայի, (ՄԻԷ)
ՄԼ Մնաւղաց զգուշացուցանել քահանայի, (ՄԻՋ)
ՃԿԵ, ՃԿՋ Մնաւղաց ընչից, (ՃԿԱ, ՃԿԲ)
ԻՋ Մաւսայից, (ԻԵ)
ԽԳ Մնաւղք որ գիտեն զչարիս զաւակաց, (ԽԲ)
ՃԳ Մնաւղք որ <զոր>զորդիս առականէ (sic խմա՛ ակնառութեամբ) սիրեն, (Ճ)
ՌԻԱ Մնելոց կանանց, (ՃԺՋ)
ՄԺԳ Մննդականաց, (ՄԲ)
Գ, ՄԺԲ Կնաւողաց, (Գ, ՄԺԵ)
ՄԲ Կուսի կանամրոյ, (ՄԵ)
Ջ Կուսանաց, (Ջ)
Ը Կախարդաց, (Ը)
ՄԺ Կին առնելոյ, (ՄՋ)
ԼԳ Կողոպտելոյ զդիս, (ԼԳ)
Խ Կանանց ճանապարհորդողաց, (ԼԲ)
ԽԱ Կանանց որ յանասուն պղծին, (Խ)
ԽՒ Կին որ դիտէ զչար[իս] առն իւր, (ԽԱ)
ԽԼ Կին որ ննչէ ընդ անաւրինի, (ԽՋ)
ԽԸ Կին որ շնայ ընդ եղբաւր առն իւր, (ԽԷ)
ԽԲ Կին որ շնայ ընդ խորթոյ, (ԽԸ)
Ծ Կուսանաց, (ԽԲ)
ԾԳ Կին որ ընդ արեզայի շնայ, (ԾԳ)
ՄԽԵ Կուսից այսահարաց, (ՄԽՒ)
ԾԲ Կաշառառուաց քահանայից, (ԾԸ)
ԿԸ Կին որ ծնանի ի սուրբ պահսն, (ԿԷ)
ՀԵ, ՃԸ Կիրակէի, (ՀԳ, ՃԳ)
ՃԿԸ Կիրակէի զձայն Աւետարանի լլսելոյ, (ՃԿԳ)
ՀԸ Կրաւնաւորաց, (ՀԵ?)
ՂՒ Կոծողաց զմեռե[ա]լս, (ՂԲ)
ՂԵ Կրաւնաւոր որ յաշխարհ մեռանի, (ՂԳ?)
ՃԻԳ Կին որ զհանդերձ առն ագանի, (ՃԻ)
ՃԻԷ Կին որ ընդ արբեցողս նստի, (ՃԻԳ)
ՃԻԲ Կին որ զենու կամ որս առնէ, (ՃԻՋ)
ՃԽՒ Կնոջ քահանայի, (ՃԼԸ)
Դ, Ե Հարկանողաց, (Դ)
ՀՋ Հեթանոսաբարոյ, (ՀԳ)
ՋԸ Հրդ[եհ]ողաց զարդար վաստակս, (ՋԵ)
ՃԺԷ Հաղորդողաց, (ՃԺԳ)
ՃԻՋ Հայեցողաց ի մերձաւորութիւն անասնոց, (ՃԻԳ)
ՃԼԳ Հարսին պոռնկելոյ, (ՃԻԲ)
ՃԼԵ Հին գերեզմանաց, (ՃԼԱ)
ՃՄԲ Հաւատացելոց գ[ե]րելոց, (ՃՄԵ)
ՃԿԳ Հաւատալոյ ի մարդ, (ՃՄԲ)
ՃԿԸ Հրամանի մեռելոյ, (ՃԿԳ)
ՃՋՋ Հեթանոսի կերակրոյ, (ՃՋԲ)
ՃՂ Հիւանդաց, (ՃՋՋ)
ՃՂԱ Հեթանոսի ճաշակողաց, (ՃՋԷ)
ՄԼԵ Հիւանդի որ ի մահիճս, (ՄԼԱ)
ՃՂԳ Ձկանց, ([Ճ]ՂԱ)
ՄԺԵ Ձեռնածուաց, (ՃԺԳ)
ԼԳ Մոնղոնաց, (ԼԲ)
Է Մսահատաց, (ԿԲ)

ՀԱ Մերձաւորաց գուդևլոց, (Հ)
ՂԳ Մեռեալն թէ պատուիրվ լայ, (Ղ)
ՃԺԳ Մկրտելոց, (ՃԺԱ)
ՀԻԲ Մանկանց անհաւատից սնուցողաց, (ՃԺԲ)
ՀՀԲ Մկրտելոց անհաւատից, (ՃԼԸ)
ՀՄԱ Մեքենայից սատանայի, (ՃԽԷ)
ՀԿ Մեռելոց ի վաստակս իւրեանց, (ՃՄԸ)
ՃՀԲ Մտողաց ի տունն պոռնկաց, (ՃՀՌ?)
ՀՂԲ Մեռելոտոյ, (ՃՋԸ)
ՀՂՋ Մատաղ ի որսոյ, (ՃՂԲ)
ՋԷ Յափրշտակեալ անասնոյ, (ՋԴ)
ՂԱ, ՃԺԲ Յղի կանանց, (ՋԸ, ՃԺԷ)
ՀԿԴ Յուսալոյ ի յինչս, (ՃԿ)
ՄԻԳ Յայտնելոյ գլարիս ուրուք, (ՄԺԲ)
ՄԽՐ Յիշատակի մեռելոց, (ՄԼԲ)
ԽԳ Ներքինեաց, (ԽԴ)
ԽԸ Ննջողաց ընդ զոքանչի, (ԽԴ)
ԼԱ Շարաթոյ և կիրակէի պահոց, (Լ)
ԼՋ Շնացողաց ընդ ուրուկս, (ԼԸ)
Է Ուրացողաց երդմանն, (Է)
Ժ Որ ընդ եղբաւր պոռնըկի, (Ժ)
ԻԲ Ուրուկաց, (ԻԸ)
Լ Ուխտուաւորաց քահանայից, (ԻԲ?)
ԼԲ Որք զանձինս նզովեցին (զուգն նուիրեցին), (ԼԸ)
ՀԲ Որ զամուսնութիւն անարգեն, (ՀԱ)
ՀԳ Որք վասն յաճախ պղծելոյ ոչ ամուսնանան,
ՂԸ Որոգայթից, (ՂԸ)
ՃԻ Որդիք որ ոչ պատուեն ղծնաւղս, (ՂԲ)
ՀԻԳ Որ ընդ անհաւատից ճաշակէ, (ՃԻԱ)
ՀԽ Որ խառնեն զսուրբ արիւնն, (ՃԼՋ)
ՃԽԸ Որ պոռնըկեցաւ և կին արար, (ՃԽԴ)
ՀՀԸ, ՃՀԷ Ուխտաւորի աւրէնս մի՛ տալ,
ՀՂԲ Որսոյ, (ՃՂ)
ՄԸ Որդոց և թոռանցն, (ՄԳ)
ՃՋ Ջամուսնանալ ի քառասնեւորդան, (ՃԳ)
ՄԷ Ջամուսնանալ կ ամեայ, (ՄԲ)
Բ Պատերազմողաց, (Բ)
ԺԳ Պոռնըկողաց ի տան Աստուծոյ, (ԺԳ)
ԼԷ Պոռնըկողաց ճարտարաց, (ԼՋ)
Ջ Պենտակոստէի և կիրակէի պահողաց, (ՀԷ)
ՋԳ Պատարագոզաց անխտիր, (Ջ)
ՋԸ Պեղծ կերողաց, (ՋԲ)
ՂԴ Պոռնըկողաց, (ՂԱ)
ՂԷ Պատերազմողաց, (ՂԳ)
ՃԻ Պոռնըկաց, (ՃԺԸ)
ՀԽԱ Պոռնկողաց ընդ կնոջ իշխանի, (ՃԼԷ)
ՀԽՋ Պոռնըկողաց ընդ [ու]ստեր, (ՃԽՒ)
ՀԽԷ Պոռնըկողի ընդ երկուց քերց, (ՃԽԳ)
ՄԼԹ Պոռնըկաց, (ՄԼԸ)
ՄԽԱ [Պ]ատանաց մեռելոց, (ՄԼԷ)
ՃԸ Պոռնըկելոց բազում անգամ, (ՃԽՋ)
ՀԸՋ Պոռնիկ քահանայի, (ՃԸՒ)
ՀՄԷ Պոռնկողաց խեղդեցելոյ, (ՃԸԳ)
ՀՄԸ Պոռնիկ կնոջ որ ի ծնունդս վտանգի, (ՃԸԴ)
ՃՋԷ Պտղոց անաւրինաց, (ՃՋԳ)

ՃՂԷ Պատարագաց, (ՃՂԳ?)
ՄԻ Պսակի տղայոց, (ՄԺՋ)
ՄՄ Սարկաւագի այսահարութեան, (ՄԽՋ)
ԺԴ Սարկաւագաց, (ԺԴ)
ԼԵ Սերմանցողաց, (ԼԴ)
ՃԺ, ՃԺԱ Սարկաւագաց, (ՃԷ, ՃԸ)
ՃԽԹ Սրբութիւն խոստացելոյ անձին, (ՃԽԵ)
ՃԿԱ Սրոյ, (ՃՍԷ)
ՄԲ Սուտ երդմանց, (ՃՂԸ)
ՃԱ Վախճանելոյ ի ձեռն ծնաւղաց, (ՂԸ)
ՃԴ Վարդապետ որ զաշակերտս ակնառու ուսուցանէ, (ՃԱ)
ՃԺԸ Տեառտեսից, (ՃԺՋ)
ՃԼԱ Տղայոց պղծելոց, (ՃԻԷ)
ՃՂԸ Տարաժամ մահու
Մ Տնականի, (ՃՂՋ)
ՄԽԴ Տղայոց այսահարի, (ՄԽԱ)
ԺԵ, ԺԹ Քահանայից, (ԺԴ, ԺԵ?)
ՃԷ Քահանայից կուրացելոց, (ԺԸ)
Ի, ԻԱ Քահանայից, (Ի, ԻԱ)
ԻՐ Քահանայութիւն որ ոչ է ևստուծոյ, (ԻՐ)
ՄՆ, ՄՋ Քահանայից կանանց պոռնըկելոց, (ՄԴ, ՄԵ)
ՄԸ Քահանային կին որ փոքրէ զգլուխս, (ՄԷ)
Կ Քահանայ որ զսպաս եկեղեցւոյ վաճառէ, (ՄԹ)
ԿԲ Քահանայ որ զխոստովանութիւնն յայտնէ, (ԿԱ)
ԿԴ Քահանայ որ զեղխի գինով, (ԿԲ)
ԿԴ Քահանայ որ ոչ պատարագէ, (ԿԴ)
ԿԵ Քահանայ որ զդատաստանն թիւրէ, (ԿԴ)
ԿՋ Քահանայ որ երդումն տայ մարդոյ, (ԿԵ)
ԿԷ Քահանայ որ առանց խոստովանութեան աւրէնս տայ, (ԿՋ)
ՀԷ Քահանայ որ յանասուն պղծի, (ՀԵ)
ՋԲ Քառասնորդաց լուծելոց, (ՀԹ)
ՃԸ Քահանայ որ բանագրէ, (ՃԵ)
ՃԹ Քահանայից բամբասողաց, (ՃՋ)
ՃԺԲ Քահանայից ուրուկաց, (ՃԹ)
ՃԺԴ Քահանայ ձէթ արկանելոյ յեքեղեցի, (ՃԺ)
ՃԺՋ Քահանայից տեսլեանց, (ՃԺԴ)
ՃԼՀ Քահանայից արիւնահեղաց, (ՃԼԴ)
ՃՄԲ Քահանայից պոռնկաց, (ՃԽՀ)
ՃԿԹ, ՄԼԴ Քահանայ ի ճանապարհի, (ՃԿԵ, ՄԼ)
ՄԼՋ Քահանայ ի հրապարակ չճաշակել, (ՃԼԲ)
ՃՋԴ, ՃՋԵ Քահանայի ապաշխարելոյ, (ՃՋ, ՃՋԱ)
ՄԻԷ Քահանայի ժողովրդով և խաչով, (ՄԻԳ)
ՄԼՋ Քահանայ որ առանց քննելոյ աւրէնս տայ (ՄԼԲ)
ՄԽ Քահանայ որ խ ունի, (ՄԼԷ)
ՄԽԹ Քահանայից այսահարութեան» (ՄԽՋ) (էջ 140ա–144ա)։

Այսպիսով, 231 վերնագրերի դիմաց գրված են 249 հոդվածների համարներ, թեև վերջին հոդվածը կրում է ՄԿԷ (267) համարակալումը և հիշատակարանում էլ նշված է միևնույն թիվը. «Կատարեցաւ կանոն սրբոյն Բարսղի Հայրապետին Կեսարոյ, տունք ՄԿԷ...» (էջ 184բ)։ Ցանկում այբբենական կարգը խախտված է մեկ անգամ, «Քրիստոս ուրացողաց» վերնագրով դրված է «Ե» և «Ջ» տառերի միջև։ Ընդհանուր առմամբ ցանկի վերնագրերը ճիշտ են արտահայտում հոդվածների բովանդակությունը, բայց առանձին մի քանի դեպքերում վերնագրերի դիմաց, աջ մասում, համարակալումներ չեն նշված կամ նշված համարակալումների մոտ դրված է հարցական, որ նշանակում է թե ցանկի վերնագրի և նշված հոդվածի բովանդակության միշտ շեղում կա։ Ցանկի վերնագրերում առկա են կրկնություններ, օրինակ, «Պ» տառի տակ երկու անգամ գրված է «Պատերազմողաց» վերնագիրը Բ և ՂԷ (ՂԴ)

համարների նշումով. այսպես երկու անգամ են նշված «եկեղեցւոյ», «Սարկաւագաց», «Քահանայից» վերնագրերը։ Վերջիններիս գիմաց թեև նշված են տարրեր հոդվածների համարներ, բայց երբեմն հոդվածներն էլ են կրկնված։ Կանոնագրքի ՄԺԶ (№ 659-ում՝ ՄԺԴ) հոդվածը ցանկում չի արտահայտված, այսպես է № 659-ի ՄԼԶ հոդվածը, որը չի պահվել կանոնագրքի բնագրում, իսկ կանոնագրքի ՀԴ հոդվածը թեև № 659-ում չի պահվել, բայց այն հիշվում է ցանկում (տես «Ո»-ի տակ)։

Սույն կանոնախմբի № 659 ձեռագրի տարբերակի և կանոնագրքի բնագրի համապատասխան հոդվածների համեմատությունը երևան հանեց այլ կարգի շեղումներ։ № 659 ձեռագրում չեն պահվել կանոնագրքի սույն բնագրի ԺԴ, ՀԴ, ՀԸ, ՃՂԴ, ՃՁԸ, ՄԻ հոդվածները (ԺԴ, ՀԴ, ՀԸ հոդվածները չեն պահվել նաև № 657 ձեռագրում, հիշենք, որ այստեղ բերված են հոդվածների կեսից պակասը, տե՛ս ներքևում)։ Մի քանի դեպքերում երկու հոդվածները միացված են և տրված՝ մեկ հոդվածով. օրինակ՝ ԻՐ և ԻԴ հոդվածները միացված և դրված են ԻՐ համարի տակ, ՃՀ և ՃՀԱ-Ն՝ ՃԻՀ, ՃԿԸ և ՃԿՔ-Ն՝ ՃԿՁ, ՄԻԴ և ՄԻԵ-Ն՝ ՄԻ, ՄԺԵ և ՄԵՁ-Ն՝ ՄԵԱ։ Պատահում է և այնպես, որ մի հոդվածը բաժանված է երկու մասի և դրված որպես առանձին հոդվածներ, առանձին համարներով, օրինակ՝ ԺԴ հոդվածը բաժանված է երկու մասի և դրված ԺԴ ու ԺԴ համարների ներքո, ՃՄՐ-Ն՝ ՃԽԸ և ՃԽԹ, ՄՁ-Ն՝ ՄՐ և ՄԴ։ Այս շեղումներն էլ արտահայտված են ցանկում։

Հետաքրքիր է մի այլ երևույթ։ Ցանկի վերնագրերի ձախ կողմում նշված հոդվածների համարները որպես կանոն համապատասխանում են կամ մեկ և մասամբ երկու համարի շեղումով համընկնում են ոչ թե № 659 ձեռագրի հոդվածներին, այլ սույն կանոնախմբի կանոնագրքի բնագրի համապատասխան հոդվածներին։ Այս բանը մեզ ենթադրել է տալիս, որ ցանկը կազմված է համապատասխան կանոնագրքի և ոչ թե միայն № 659 ձեռագրի։

№ 657 ձեռագրում ցանկը հետևյալ կառուցվածքն ունի։

«Ա. Վասն որ զէգ ապականէ։

Բ. Վասն պատերազմի արիւն հեղելոյ։

Գ. Վասն հարկանելոյ զընկերս։

Դ. Վասն կնաթողաց անզաւակի։

Ե. Վասն աղախնոյ ի տե[ա]ռնէ պոռնկեալ։

Զ. Վասն կուսի պոռնկելոյ։

Է. Վասն [որ] ուրանայ և երդնու։

Ը. Վասն կախարդաց ի յապաշխարութիւն դառնալն։

Թ. Վասն զառականս ընդ արուի։

Ժ. Վասն պոռնկելոյ ընդ եղբօրն։

ԺԱ. Վասն որ զազգական ապականէ։

ԺԲ. Վասն ուրանալոյ զՔրիստոս։

ԺԳ. Վասն պոռնկելոյ ի տան Աստուծոյ։

ԺԴ. Վասն քահանայի և սարկաւագի պոռնկեալ ի նոյն։

ԺԵ. Վասն քահանայի և սարկաւագի ի շնութեան և ի գողութեան։

ԺԶ. Վասն եպիսկոպոսի և երիցու երկրորդ ձեռնադրութեան։

ԺԷ. Վասն եպիսկոպոսի և երիցու պարգ լուծանել։

ԺԸ. Վասն կարգաւոր[ի] որ կուրանայ։

ԺԹ. Վասն եկեղեցի սրբել յետ ի աւուր։

Ի. Վասն քահանայի որ աշխարհական գործով [զբաղի]։

ԻԱ. Վասն քահանայի որ արտաքս եկեղեցւոյ է։

ԻԲ. Վասն քահանայի [որ] յԱստուծոյ և ոչ ի սատանայէ։

ԻԳ. Վասն համրից (բե. համերց) և խլից։

ԻԴ. Վասն անբարտաւանաց և փառասիրաց։

ԻԵ. Վասն անհնազանդ ծառայից։

ԻԶ. Վասն անհնազանդ որդւոց։

ԻԷ. Վասն քահանայի որ լուցեալ է։

ԻԸ. Վասն ուրկունից քէ այր քէ կին։

ԻԹ. Վասն աբեղայից հրաժարելոյ աշխարհէ։

Լ. Վասն շաբաթ և կիրակի և Պենտեկոստէին։

ԼԱ. Վասն կարգաւորաց բորոտիլ։

ԼՐ. Վասն մոնոզոնաց կին առնել։
ԼԳ. Վասն կողոպտողաց զգիս։
ԼԴ. Վասն որ սերմանցուքիւն լինի։
Լե. Վասն չնալոյ ընդ ուրուկս։
ԼԶ. Վասն ճարտար պոռնկուքեանն։
ԼԷ. Վասն անարժան յօրէնս մատչիլ։
ԼԸ. Վասն որ նուիրին Աստուծոյ և չնանան։
ԼԹ. Վասն կնոջ [որ] առանց ընկերի ի ճանապարհ [երթայ]։
Խ. Վասն կնոջ ի յանասնէ պղծիլ։
ԽԱ. Վասն որ ծածկէ զչարիս առն։
ԽԲ. Վասն որ ծնողք (իմն. ծնողք որ) ծածկեն զչարիս որդոյն։
ԽԳ. Վասն ներքինին կին առնէ կեղծաւոր։
ԽԴ. Վասն նընչելոյ ընդ զոքանչի։
Խե. Վասն որք ընդ կնոջ իւրում ննչէ արուագիտուքեամբ։
ԽԶ. Վասն չնալոյ ընդ անօրինի։
Խէ. Վասն կնոջ ընդ եղբօր առն չնալոյ։
ԽԸ. Վասն որ ընդ խորքն չնայ։
ԽԹ. Վասն կուսի չնալոյ ի տան։
Ծ. Վասն ամուսնանալոյ ընդ անօրինի։
ԾԱ. Վասն անգևաո (իմն՝ առևանգ) արասցէ։
ԾԲ. Վասն կնոջ [որ] առանց կամաց օրինաց։
ԾԳ. Վասն կնոջ չնալոյ ընդ ուխտականի։
ԾԴ. Վասն [որ] քահանայանալոյ յօժարի։
Ծե. Վասն կնոջ քահանայի պոռնկելոյ։
ԾԶ. Վասն քահանայի ուստր կամ դուստր պոռնկելոյ։
Ծէ. Վասն կնոջ քահանայի որ փոքրէ զհերս։
ԾԸ. Վասն քահանայի որ կաշառ առնու։
ԾԹ. Վասն վաճառելոյ զսպաս խորհրդոյ։
Կ. Վասն քահանայի ղօշա[քա]ղութեամբ։
ԿԱ. Վասն խոստովանութեան յայտնելոյ։
ԿԲ. Վասն քահանայի որ ի գինոյ զեղխի։
ԿԳ. Վասն ոչ մատչելոյ ի սուրբ խորհուրդն։
ԿԴ. Վասն դատաստանի քիւրելոյ։
Կե. Վասն որ քահանայ երդումն տայ։
ԿԶ. Վասն [որ] առանց խոստովանելոյ զետին քոչակն [տայ]։
Կէ. Վասն ծննդականի։
ԿԸ. Վասն կնաքողաց Աստուծոյ համար։
ԿԹ. Վասն մսահատի պղծութեան։
Հ. Վասն կին առնելոյ ի մերձաւորաց։
ՀԱ. Վասն որ ղամուսնութիւն անարդէ։
ՀԲ. Վասն որ արհամարհէ զքահանայս։
ՀԳ. Վասն [որ] զօր կիրակէի ոչ պատուէ։
ՀԴ. Վասն զհեթանոսաց բարս ունելոյ։
Հե. Վասն քահանայի որ պղծի։
ՀԶ. Վասն որ ըստ փափագի զգերեզմանս բանայ։
ՀԷ.Վասն որ զկ[ի]րակի պահօք պահէ։
ՀԸ. Վասն անժուժիչ կատարեալ հասակաւ։
ՀԹ. Վասն [որ] ի սուրբ Քառասունսն յազեսցի։
Զ. Վասն [որ] անխտիր մատուցէ զպատարագ։
ԶԱ. Վասն որ ուտէ զեկեղեցւոյ իրս։
ԶԲ. Վասն յազելոյ կերակուս պղծէ։
ԶԳ. Վասն գազանաբեկի։
ԶԴ. Վասն հրդեհելոյ զարդար վաստակ։
Զե. Վասն զդիան կողոպտելոյ։
ԶԶ. Վասն դիւթից և ոչ կախարդաց։

ԶԷ. Վասն յղեաց սպասելոյ։
ԶԸ. Վասն կոծողաց զմեռեալս։
ԶԹ. Վասն մեռելոց պատուիրելոյ կոծել։
Ղ. Վասն պոռնկութեան ընդ կնոջ։
ՂԱ. Վասն քահանայի վատ դնացիւք։
ՂԲ. Վասն իդացելոց։
ՂԳ. Վասն ի պատերազմ արիւն հեղուլ։
ՂԴ. Վասն յայլ որոգայթ դիպելոյ։
ՂԵ. Վասն պոռնկի և այլ չարագործի։
ՂԶ. Վասն ի ձեռն առաջնորդին։
ՂԷ. Վասն [որ] ի ծնողացն սպանաւ աստուածային։
ՂԸ. Վասն ոչ պատուելոյ զծնօղսն։
ՂԹ. Վասն որք զորդիս ակնառութեամբ սերեն։
Ճ. Վասն ուսուցանելոյ զաշակերտաց։
ՃԱ. Վասն արուեստաւորաց։
ՃԲ. Վասն ամուսնացելոց զշարաթ և զկիրակի։
ՃԳ. Վասն ղկիրակի պատուելոյ որ ոչ գործեն։
ՃԴ. Վասն քահանայի [որ] վայրապար ընդ բանիւ [արասցէ]։
ՃԵ. Վասն զքահանայս բամբասելոյ։
ՃԶ. Վասն [որ] սարկաւագ ոչ [է] հաւասար քահանայի։
ՃԷ. Վասն [որ] մի՛ իշխեսցէ [ճաշակել] սարկաւագ ընդ քահանայի։
ՃԸ. Վասն ուրկանալոյ քահանայ և սարկաւագ։
ՃԹ. Վասն քահանայի՝ մի՛ իշխեսցէ ձէթ արկանել։
ՃԺ. Վասն մկրտելոյ ոչ թողուլ կինս։
ՃԺԱ. Վասն քահանայի՝ մի՛ պայծառ զգեստիւ [զգենուլ]։
ՃԺԲ. Վասն դպրաց և ուխտի մանկա[ն]ցս» (էշ 115բ—116բ)։

Կանոնագրքի սույն կանոնախմբի ՃԺէ հոդվածից սկսած շարունակությունը № 657 ձեռագրում չի պահվել։ Ի դեպ, № C57 ձեռագրում ցանկի վերնագրերի և հոդվածների հաջորդականությունը համապատասխանում է միմյանց, միայն ՃԶ վերնագրից սկսած մինչև վերջ՝ ՃԺԲ, ցանկի վերնագրերը հոդվածների համեմատությամբ մեկով ավելի են, որովհետև ՃԶ հոդվածի համար ցանկում դրված են երկու՝ ՃԶ և ՃԷ վերնագրերը։ Վերևում բերված ցանկի վերնագրերի և հոդվածների հաջորդական համարակալումը 2—4 համարով տարբերվում է ներկա բնագրի հոդվածների հերթական համարակալումից, որովհետև այդ հերթականությունը մի քանի դեպքերում խախտված է. այսպես՝ ԺԴ, ՀԳ և ՀԸ հոդվածները դուրս են ընկել № 657 ձեռագրի բնագրից, հետևապես սրանց համապատասխան վերնագրերը ցանկում բացակայում են։ ՂԲ հոդվածը թեև այս ձեռագրում չի պահվել, սակայն ցանկում պահվել է դրան համապատասխան վերնագիր՝ ԶԸ համարի տակ։ Մի այլ դեպքում ձեռագրում թեև հոդվածը (ՁԷ) գտնում ենք (№ 657 ձեռագրում այս հոդվածը դրված է ՁԴ համարով), սակայն ցանկում սրան համապատասխան վերնագիր բացակայում է։ Երրորդ դեպքում այս բնագրի ԻԲ, ԻԴ և ՃԺ, ՃԺԱ հոդվածները № 657 ձեռագրում միացված են և դրված մեկական՝ ԻԲ և ՃԶ համարների տակ, մինչդեռ ցանկում, մի դեպքում ԻԲ և ԻԴ (№ 657-ում՝ ԻԲ) հոդվածների համար դրված է մեկ վերնագիր՝ ԻԲ համարով, իսկ մյուս դեպքում ՃԺ և ՃԺԱ (№ 657-ում՝ ՃԶ) հոդվածների համար երկու վերնագիր՝ ՃԶ և ՃԷ համարներով։ № 657 ձեռագրի և ցանկի վերնագրերի և սրանց հոդվածների մի քանիսը կանոնագրքի ունեցած բնագրի համապատասխան հոդվածների հետ համեմատած ունեն ետևառաջություն. № 657-ում այսպես է. Ն և Դ, Ի և ԻԱ, Կ և ԿԱ, Ղ և ՂԱ. կանոնագրքում այդ նույն հոդվածներն ունեն հետևյալ հաջորդականությունը՝ Դ և Գ, ԻԱ և Ի, ԿԱ և Կ, ՂԱ և Ղ (կանոնդրքի համարակալմամբ Գ և Դ, Ի և ԻԱ, ԿԱ և ԿԲ, ՂԴ և ՂԵ)։

kmps ձեռագրերում ցանկն ունի հետևյալ պատկերը (բերում ենք ըստ k ձեռագրի)։
«Ե[ր]որդ ցանկ կանոնաց սրբոյն Բարսեղի։
ԱԼ. Վասն որ բռնութեամբ ապականէ զէգք յանկարծակի։
Բ. Վասն որ արիւն հեղու ի պատերազմի։
Գ. Վասն որ արձակէ զկին վասն զաւակի։
Դ. Վասն որ հարուածովք սպանանէ զ[ը]նկեր կամ զծառայ։
Ե. Վասն աղախնաց որ ի տերանց իւրեանց պսակին։

Զ. Վասն որ կուսութիւն խոստանայ և պոռնկի։
Է. Վասն որ երդնու ուրացութեամբ։
Ը. Վասն կախարդաց և դեղատուաց որ դան յուղղութիւն։
Թ. Վասն արուագիտաց։
Ժ. Վասն որ ընդ եղբօր պոռնկի։
ԺԱ. Վասն որ զազգային ապականէ։
ԺԲ. Վասն որ զՔրիստոս ուրանայ։
ԺԳ. Վասն որ պոռնկի ի տան Աստուծոյ։
ԺԴ. Վասն որ զինքն կրճատէ։
ԺԵ. Վասն ժառանգաւորաց որ ի շնութիւն կամ ի կողութիւն կամ ի զուր վկայութիւն գտցին։
ԺԶ. Վասն որ Բ ձեռնադրութիւն ընդունին։
ԺԷ. Վասն ժառանգաւորաց որ զպահս լուծանեն։
ԺԸ. Քահանայ կամ սարկաւագ թէ կաղանայ կամ կուրանայ։
ԺԹ. Վասն եկեղեցւոյ որ այլազգի մտանէ։
Ի. Քահանայ որ առանց աղօթից և առանց խորհրդոյ յամէ։
ԻԱ. Վասն քահանայի որ աշխարհական գործով սպաղի։
ԻԲ. Քահանայութիւն որ ի սատանայէ է։
ԻԳ. Քահանայութիւն որ ի յԱստուծոյ է։
ԻԴ. Վասն քահանայի որ խուլ է և համր։
ԻԵ. Վասն անբարտաւանաց և փառասիրաց։
ԻԶ. Թէ ծառայ անհնազանդ լինի ի տեառնէ։
ԻԷ. Որդիք որ ոչ հնազանդին ծնօղաց իւրեանց։
ԻԸ. Վասն քահանայի որ լուծեալ է ի կարգէն։
ԻԹ. Վասն կանանց և արանց որ ուրկանան։
Լ. Վասն ուխտաւորաց որ ի կանայս յարին կամ քահանայագործութիւն առնեն։
ԼԱ. Վասն որ զշաբաթ և զկիրակէ և զԵնտակոստէն պահօք անցուցանեն։
ԼԲ. Եւ որ յառաջ քան զծայտնութիւնն ծնունդ առնեն։
ԼԳ. Էրէց կամ սարկաւագ թէ բորոտի կամ ուրկանայ։ Սիմեականի որ վախճանի։
Լե (sic). Որ մոնոզոնութիւն խոստանայ և կին առնու։
ԼԶ. Վասն որ զդիս կողոպտեն։
ԼԷ. Վասն սերմնաներթութեանց։
ԼԸ. Վասն որ ընդ ուրուկս շնայ։
ԼԹ. Եթէ ոք պոռնկի ճարտարութեամբ առնւ։
Խ. Վասն որ անարժան հաղորդի։
ԽԱ. Վասն որ զանձինս իւրեանց նուիրեցին Աստուծոյ և ի մեղս անկան։
ԽԲ. Կին որ առանց ընկերի ճանապարհ երթայ։
ԽԳ. Կին որ յանասուն մատչի։
ԽԴ. Կին որ գիտէ զ[չ]արիս առն։
ԽԵ. Վասն ծնօղաց որ զպղծութիւն զաւակին ծածկեն։
ԽԶ. Վասն ներքինեաց և մարմնազեղծ կեղծաւորաց։
ԽԷ. Վասն որ ննշէ ընդ զոքանչի կամ ընդ քեռ կնոջ իւրոյ։
ԽԸ. Վասն որ արուագիտութեամբ ննշէ ընդ կնոջ։
ԽԹ. Վասն կնոջ որ շնայ ընդ յանաւրէնս։
Ծ. Վասն կնոջ որ շնայ ընդ եղբօր առն իւրում։
ԾԱ. Վասն որ շնայ առ մերձաւորս իւր։
ԾԲ. Վասն կուսի որ շնայ ընդ արամրոյն։
ԾԳ. Վասն որ ամուսնանայ ընդ անաւրինի։
ԾԴ. Վասն առևանկի։
ԾԵ. Կին որ շնայ ընդ ուխտականս։
ԾԶ. Վասն որ կամի քահանայ լինել և կին նորա շնացեալ է։
ԾԷ. Վասն կնոջ քահանայի որ պոռնկի։
ԾԸ. Ուստր կամ դուստր քահանայի թէ պոռնկի։
ԾԹ. Կին քահանայի թէ այլակերպի։
Կ. Քահանայ որ կաշառ առնէ։
ԿԱ. Քահանայ որ զսպաս խորհրդոյն յափշտակէ։

ԿԲ. Քահանայ որ զխոստովանութիւն հրապարակէ։
ԿԳ. Քահանայ որ ցոր է և զաւշաքաղ։
ԿԴ. Քահանայ որ զեխի գինով։
ԿԵ. Քահանայից սրբութեամբ մատչել ի խորհուրդն։
ԿԶ. Քահանայ որ զարդար դատաստանս թիւրէ։
ԿԷ. Քահանայ որ երդումն տայ մարդոյ։
ԿԸ. Քահանայ որ առանց խոստովանութեան զլետին թոշակն տայ։
ԿԹ. Վասն յղի կանանց որ յաւուրս պահոց տկարանան։
Հ. Վասն որ թողուն զկինս պատճառաւ աստուածպաշտութեան։
ՀԱ. Վասն որ մսահատի պիղծ համարելով։
ՀԲ. Վասն որ կին առնու յարեան մերձաւորէ։
ՀԳ. Վասն որ զամուսնութիւնն անկոսնեն։
ՀԴ. Որ վասն յաճախ պտղոյ արգիլէ զամուսնութիւն։
ՀԵ. Վասն որ արհամարհեն զամուսնացեալ քահանայն։
ՀԶ. Վասն որ զօր կիրակէին ոչ պատուեն կամ ի թատերս երթան։
ՀԷ. Վասն որ զօրս և ղժամս և զլուանի խտրեն։
ՀԸ. Վասն որ զաւուրս և զշաբաթս պահէ որպէս Հրեայ։
ՀԹ. Վասն ժառանգաւորաց թէ անասնապիղծ գտցին։
Զ. Վասն որ փոփոխեն զոսկերս մարտիրոսաց։
ԶԱ. Վասն որ առ փափագ զգերեզմանս բանան։
ԶԲ. Վասն որ զկիրակէ կամ զՊենտակոստէ ընդ պահաւք արկանէ։
ԶԳ. Վասն որ յառաջ քան զարձակել ժողովրդեանն ճաշակեսցէ։
ԶԴ. Վասն որ աղուհացս յանգէտ յաղեցաւ։
ԶԵ. Վասն քահանայից անխտիր մատուցանելոյ զպատարագս որպէս ի Ջատիկ։
ԶԶ. Վասն որ ուտէ ի տեղւոջ։
ԶԷ. Վասն որ յաղեսցի կերակուր ի պիղծ անասնոց։
ԶԸ. Վասն գաղանաբեկի։
ԶԹ. Վասն յափշտակեալ անասնոյ չնուիրել Տեառն։
Ղ. Վասն որ հրդեհեն զվաստակս։
ՂԱ. Վասն որ զդիս կողոպտեն։
ՂԲ. Վասն դիւթաց։
ՂԳ. Վասն որ զյղի կին գան հարկանէ։
ՂԴ. Վասն որ ի վերայ մեռելոյ կոծ դնէ։
ՂԵ. Վասն որ պատուիրէ մեռեալ, թէ զիս կոծով լացէք։
ՂԶ. Վասն քահանայի որ լուծեալ է եպիսկոպոսէն։
ՂԷ. Վասն որ ընդ կնոջ ցանկայ պոռնկութեան և ցանկութիւն նորա ոչ եկեսցէ յայտ։
ՂԸ. Վասն իգացեալոց։
ՂԹ. Վասն որ ի պատերազմն արիւն հեղու։
Ճ. Վասն ակամայ սպանողաց։
ՃԱ. Վասն որ չոգան ի պոռնկութիւն և վախճան ՚ետս անդ։
ՃԲ. Վասն որ ի ձեռն առաշնորդին խրատուն վախճանի։
ՃԳ. Վասն որ ի ձեռն ծնօղաց հանդիպի վախճան վասն խրատու։
ՃԴ. Որդիք որ ոչ պատուեն զծնաւղս։
ՃԵ. Վասն ծնաւղաց որ զորդիսն ակնառութեամբ սիրեն։
ՃԶ. Վասն վարդապետաց որ զաշակերտսն ակնառութեամբ ուսուցանեն։
ՃԷ. Վասն արուեստաւորաց որ զայլոց ինչս յափշտակեն։
ՃԸ. Վասն ամուսնացելոց զսուրբ Քառասունսն և զկիրակէսն սուրբ պահել։
ՃԹ. Վասն զկիրակէսն չգործել։
Ճժ. Վասն քահանայից վայրապար զոք մի՛ նզովել։
ՃԺԱ. Վասն աշխարհականաց որ զքահանայսն բամբասեն։
ՃԺԲ. Սարկաւագ ոչ է հաւասար քահանայի։
ՃԺԳ. Սարկաւագի ոչ ճաշակել ընդ քահանայի։
ՃԺԴ. Վասն քահանայից և սարկաւագաց որ ուրուկ լինի կամ բորոտ։
ՃԺԵ. Քահանայ որ ձէթ արկանէ ի մկրտելն։
ՃԺԶ. Վասն ժամ մկրտութեանն մերձ աւազանն մի՛ կալ կնոջ։

ՃԺԷ. Քահանայ մի՛ իշխեսցէ երեսելի յերիվար նստել կամ բոկ ի սեղանն մատչել։
ՃԺԸ. Վասն ժառանգաւորաց որ զինչս եկեղեցոյ յափշտակեն։
ՃԺԹ. Վասն քահանայից և սարկաւագաց որ ի տեսեալն լինին։
ՃԻ. Վասն ի սուրբ խորհուրդն սրբութեան մատչել։
ՃԻԱ. Վասն կանանց որ տեռատես լինին։
ՃԻԲ. Վասն յղի կանանց եկեղեցի մտանել։
ՃԻԳ. Վասն պոռնկաց որ զմանկունս սպանանեն։
ՃԻԴ. Վասն որ մանկանց անհաւատից ըստինըս տան։
ՃԻԵ. Կին մի՛ իշխեսցէ հանդերձս առն զգենուլ։
ՃԻԶ. Վասն հաւատացելոց որ ընդ անհաւատսն հաղորդին։
ՃԻԷ. Վասն կանանց որ այլուր աւթեակս առնեն։
ՃԻԸ. Վասն կանանց չհայել ի խառնակումն անասնոց։
ՃԻԹ. Վասն կանանց որ հուպ լինին ի գինէմոլսն։
ՃԼ. Վասն կանանց որ յաւուրս տօնի այլակերպին։
ՃԼԱ. Վասն կանանց որ անասուն դենուն կամ հնձան հարկանեն կամ որս առնեն։
ՃԼԲ. Վասն ոչ ննջելոյ եղբօր ընդ քեռ իւրում։
ՃԼԳ. Վասն մանկանց որ մեղանչեն։
ՃԼԴ. Վասն որ ամուսնանան նախանձու առ մերձաւոր արեան։
ՃԼԵ. Վասն որ ելանեն յանկողինս մերձաւորի։
ՃԼԶ. Վասն ի տան Աստուծոյ ոչ ճաշել և ոչ ննջել և ոչ շատ խօսել։
ՃԼԷ. Վասն որ զմեռեալս մերձ եկեղեցին թաղեն։
ՃԼԸ. Վասն որ զեկեղեցիս ըշտեմարան կերակրոյ առնեն։
ՃԼԹ. Վասն թէ ի ժամ աղաւթից յեկեղեցւոջ մատուցանեն։
ՃԽ. Վասն քահանայից որ զենմունս առնեն և առանց աղօթից կենան։
ՃԽԱ. Վասն որ դան ի մկրտութիւն և ամուսինս ունին։
ՃԽԲ. Վասն որ զզաւակս վասն ընչից ի յուրուկս կամ անարժանս տայ։
ՃԽԳ. Վասն [որ] պոռնկի ընդ կնոջ իշխանի։
ՃԽԴ. Վասն այրի քահանայից և կանանց քահանայից։
ՃԽԵ. Վասն որ արգելուն զպտուղ և զհաս քահանայից։
ՃԽԶ. Վասն [որ] ցորբաբանեն բանիւք։
ՃԽԷ. Վասն որք յօժարեցան յարուաքիտութիւն և չանկան ի գործն։
ՃԽԸ. Վասն որ պոռնկի ընդ գոդի և ընդ ուրուկ։
ՃԽԹ. Վասն որ պոռնկի ընդ երկուց քերց։
ՃՄ. Վասն որ պոռնկեցան և դարձեալ կին արարին։
ՃՄԱ. Վասն որ հաւանութեամբ միմեանց ամուսնանան։
ՃՄԲ. Վասն որ բազում անգամ պոռնկեցան։
ՃՄԳ. Վասն շնացողաց առ արեան մերձաւորսն։
ՃՄԴ. Վասն ժառանգաւորաց որ պոռնկին։
ՃՄԵ. Վասն որ ակամայ ըմբռնեցաւ յանաւրինաց ի պոռնկութիւն։
ՃՄԶ. Վասն որ յանհաւատից կին առնու։
ՃՄԷ. Վասն պոռնկորդաց որ քահանայութիւն խնդրեն։
ՃՄԸ. Վասն որ պոռնկեցան և առ նախատինս զինքեանս կորուսին։
ՃՄԹ. Վասն զպոռնկորդիան մկրտելոյ։
ՃՆ. Վասն որք գերի վարին և ուրանան։
ՃՆԱ. Վասն որ յանկարծակի յորոգայթ մահու անկանին։
ՃՆԲ. Վասն որք ճոխաբար ընթանան ընդդէմ որոգայթից մահու։
ՃՆԳ. Վասն որ դնէ զյոյսն ի մարդ։
ՃՆԴ. Վասն որ անփոյթ առնեն զաղաւթս վասն երկրաւոր ըստացուածոյ։
ՃՆԵ. Վասն որ զինչս իւրեանց այլոց տան և ոչ զաւակաց։
ՃՆԶ. Վասն հաւասարելոյ զինչս եղբարց և քրէից որ ի ծնաւղէն։
ՃՆԷ. Վասն կտակաց ննջեցելոց։
ՃՆԸ. Վասն որ յաւուր կիրակէի զձայն Աւետարանի ոչ լսեն։
ՃՆԹ. Վասն որ ի պանդխտութիւնս երթան և ոչ գնան յեկեղեցին։
ՃՀ. Վասն քահանայի որ արտաքոյ եկեղեցւոյն պսակ դնէ կամ աղ աւրհնէ։
ՃՀԱ. Վասն քահանայից որ զսուրբ խորհուրդն արտաքոյ եկեղեցւոյն տան։

ՃՀՐ. Վասն քահանայից որ լուծանեն զօրէնս և անարժանից տան զսուրբ խորհուրդն։
ՃՀԳ. Վասն ոչ ելանել ի բեմն և ոչ լուցանեն ճրագք՝ որ ոչ ունին զաստիճանն։
ՃՀԴ. Վասն որ զագապս ի տունս առնեն և ոչ յեկեղեցի տան։
ՃՀԵ. Վասն ընտանեաց քահանայից որ ի բեմս ելանեն և շնորհս ընդունին։
ՃՀԶ. Վասն որք ոչ ունին զաստիճանն և առաջնորդին ժողովրդեանն։
ՃՀԷ. Վասն ժառանգաւորաց որ ի հրապարակս ուտեն և ըմպեն։
ՃՀԸ. Վասն որ այսահարի օրէնս տան։
ՃՀԹ. Վասն այսահարաց որ զմեզս իւրեանց խոստովանին։
ՃՁ. Վասն քահանայից որ մտանեն ի տուն կնոջ որ ունի այր <վասն> անհաւատ կամ քահանայագործութիւն առնէ։
ՃՁԱ. Վասն քահանայից որ երգումն տան։
ՃՁԲ. Վասն քահանայից որ զայլոց բանադրածն լուծանեն։
ՃՁԳ. Վասն քահանայից որ վայրապար բանագրեն։
ՃՁԴ. Վասն [որ] եկեղեցիս ժողով առնեն քահանայից ըզվասն (sic) կուսանսն և ուսուցանեն։
ՃՁԵ. Վասն քահանայից յուսաղրելոյ զմեղաւորսն։
ՃՁԶ. Վասն ապաշխարողաց որ ի մէջ ապաշխարութեան մեռանին։
ՃՁԷ. Վասն կերակրոյ որ յազեալ է յանաւրինաց։
ՃՁԸ. Թէ չէ արժան հաղորդել յանաւրինաց կամ վիճել վասն հաւատոց։
ՃՁԹ. Վասն քահանային զգուշ կալ հաւտին։
ՃՂ. Վասն որ հնարիւք զմանկունս սպանեն զայր և զկին։
ՃՂԱ. Վասն [որ] խողխողեն վասն յաճախ պոռնկութեան։
ՃՂԲ. Վասն զհիւանդս սուրբ դեղովք բժշկել։
ՃՂԳ. Վասն որ ուտեն զզենեալն յանաւրինաց։
ՃՂԴ. Վասն որ զմեռելոտի վաճառեն։
ՃՂԵ. Վասն զենմանց որ ոչ ւորդ արիւն հանդերձ շնչովն։
ՃՂԶ. Վասն զկիսասուրբ կենդանիս ոչ ուտել։
ՃՂԷ. Վասն որսորդաց թէ որպէս պարտին ուտել։
ՃՂԸ. Վասն որսոյ ձկանն։
ՃՂԹ. Վասն որսոյ թէ զորս պարտ է մատաղ առնել։
Մ. Վասն որ ղյափշտակեալ և զխեղ անասուն մատաղ առնեն։
ՄԱ. Վասն մատաղ ոչ առնել յերկիր թշնամեաց։
ՄԲ. Վասն որ մատաղ խոստանան անխափան հատուցանել։
ՄԳ. Վասն նուէր Տեառ[ն]. յաւուր յայնմիկ բաշխել աղքատաց։
ՄԴ. Վասն որ զինչս իւրեանց զարատաւոր վաճառեն նենգութեամբ։
ՄԵ. Վասն սուտ վկայից։
ՄԶ. Վասն անիծանողաց և բամբասողաց։
ՄԷ (sic). Վասն զղջացելոց հասիցն և թէ յետ կարգին պղծին։
Մը. Վասն խոստովանողաց առանց հրամանի վարդապետին չգործել գործ ինչ։
ՄԸ. Վասն ծերոց և պառաւաց որ կ ամեան։
ՄԹ. Վասն այրեաց անկարգ ամուսնութեան։
Մժ. Վասն որ մինն կուսան և միւսն այրի և մինն վախճանի։
ՄԺԱ. Վասն որ զխօսեցեալն ի կնութիւն և զհաստատեալն ոչ առնուլ վասն պղծութեան։
ՄԺԲ. Վասն որ ցաւագար է կամ չարագործ և կամի ամուսնանալ։
ՄԺԳ. Վասն որ խօսեցեալ է և գան ի դուռն եկեղեցւոյն և չար գործքն յայտնի։
ՄԺԴ. Վասն կնոջ որ ի ծնունդն վատնի և ճարտարք զմանուկն սպանանեն։
ՄԺԵ. Վասն կնոջ որ ոչ ծնանի և ընդ այլ ոք պղծի։
ՄԺԶ. Վասն անասնագիտաց։
ՄԺԷ. Վասն որ ի մերձաւորէ արեան կին առնու։
ՄԺԸ. Վասն առևանգաց։
ՄԺԹ. Վասն կանանց որ զայրս իւրեանց ատեն և այլոյ ամուսնանան։
Մի. Վասն որ զկին իւր արձակէ։
ՄիԱ. Վասն որ տղայոց պսակ դնէ։
ՄիԲ. Վասն որ զհաստատեալ կին ի քահանայէ այլոյ տան։

ՄԻԳ. Վասն որ զզաւակս իւր առանց հաւանութեան առն տա կամ վասն ընչից ծերոց տայ։
ՄԻԴ. Վասն որ զքահանայս անարգեն։
ՄԻԵ. Վասն քահանայից որ զչարիս ուրուք ծածկեն պատճառանօք։
ՄԻԶ. Վասն խաչ աւրհնելոյ։
ՄԻԷ. Վասն որ զխաչ յափշտակեն կամ վաճառեն։
ՄԻԸ. Վասն որ զխաչ ի գերութիւն տեսանեն։
ՄԻԹ. Վասն՝ Զատկի և տաւնի ի տունս ժողովրդեան աւետարանել։
ՄԼ. Վասն խաչիւ ելանել ի սահմանս և աւետարանել։
ՄԼԱ. Երեխայ որ մեռեալ ծնանի։
ՄԼԲ. Վասն երեխայի որ հիւանդ ծնանի և անփոյթ առնեն։
ՄԼԳ. Երեխայից որ հիւանդ է և գիտաց քահանայն։
ՄԼԴ. Թէ քահանայ ի մեծի խորհրդեան է և բերեն մանուկ երեխայ առ նա։
ՄԼԵ. Քահանայ որ մկրտութեան սկիզբն արարեալ և երախայն վախճանի։
ՄԼԶ. Վասն երեխայն Ը- աւրեայ մկրտեն։
ՄԼԷ. Քահանայ որ ի ճանապարհ <որ> գնայ և ժողովուրդն առանց հովիւի մնա։
ՄԼԸ. Վասն հիւանդաց յեր[ր]որդ աւուր կոչել զքահանայս և խոստովանել։
ՄԼԹ. Վասն քահանայի որ առանց խոստովանութեան հաղորդ տա կամ պսակ դնէ։
ՄԽ. Վասն երկրորդ ամուսնացելոց։
ՄԽԱ. Վասն եր[ր]որդ և չոր[ր]որդ ամուսնացելոց։
ՄԽԲ. Վասն Քառասունս կատարելոյ։
ՄԽԳ. Վասն պոռնկաց ամուսնացելոց։
ՄԽԴ. Վասն որ զդիս բազում կտաւաւք պատեն։
ՄԽԵ. Վասն կատարելոյ զյիշատակ ննջեցելոց։
ՄԽԶ. Վասն այսահարաց բազում է եղանակ։
ՄԽԷ. Վասն կուսից որ այսահար լինին և ամուսնանալ կամին։
ՄԽԸ. Վասն կանամբեաց որ այսահար լինին։
ՄԽԹ. Վասն զանազան հնարից չար դիւին։
ՄՄ. Վասն աւուրս սուրբ Զատկի և կիրակէի լուծանել զպահողս։
ՄՄԱ. Վասն ժառանգաւորաց որ հանդիպին պիղծ այսոյն։
ՄՄԲ. Քահանայ որ այսահարի թէ որպէս ապաշխարէ։
ՄՄԳ. Վասն որ մաքառին ընդ քահանայս և ընդ ուխտի մանկունս։
ՄՄԴ. Վասն որք գնան ի գէտս։
ՄՄԵ. Վասն որ կախարդաց գիտութեանն ցանկան։
ՄՄԶ. Վասն այսահարութեան թէ որպէս հանդիպի։
ՄՄԷ. Վասն այսահարից որ ի սիրոյն Քրիստոսի խրատին։
ՄՄԸ. Վասն այսահարից որ վասն մեղաց։
ՄՄԹ. Վասն այսահարի որ ի ծուլութենէ առաքինութեան։
ՄԿ. Վասն այսահարից որ անզեղջ են և փառասէր։
ՄԿԱ. Վասն լրբութեան դիւին։
ՄԿԲ. Վասն դիւին որ քաշակալս անուանեն և կերպարանս կերպարանս երևին։
ՄԿԳ. Վասն որ յարակայ մոլին և լուսնահարս կոչին։
ՄԿԴ. Վասն որ գաղտնի լկէ և հոգէգէշ կոչի։
ՄԿԵ. Վասն որ զանազան կերպիւ լկին ի գիւէն։
ՄԿԶ. Վասն կոչելոյ զանազան աղտոն այսահարութիւն։
ՄԿԷ. Վասն թէ որպէս պարտ է կարգաւորել զայսահարն։
ՄԿԸ. Վասն որ դառնան ի մեղաց և գան ապաշխարութիւն։
ՄԿԹ. Վասն որ բանիւ Աստուծոյ դաջինս հաստատեն և ստեն։
ՄՀ. Որք գնան ի լրտեսութիւն ճշմարտութեամբ կամ դաւաճանութեամբ։
ՄՀԱ. Վասն թէ զայլոյ բանադրած վարդապետ կամ եպիսկոպոս մի՛ լուծցէ։
ՄՀԲ. Վասն [որք] դատարկաբանութեամբ պղծին։
ՄՀԳ. Վասն որ հրաժարին ի դատարկաբանութենէ և դարձեալ անդէն դառնան։
ՄՀԴ. Վասն որ զուգաւորին ընդ կնոջ եղբաւր կամ ընդ քերց» (էջ 87ա—93ա. հմմտ. m, էջ 96ա—102բ, p, էջ 96բ—102ա, s, էջ 111ա—118)ա։

Այս ցանկում թեև նշված է 274 վերնագիր, բայց իրականում այն համապատասխանում է ներկա բնագրի 272 հոդվածներին։ Հոդվածները և ցանկի վերնագրերը համեմատելիս նկա-

տեցինք որոշ շեղումներ, այսպես, ցանկում սխալմամբ կրկնված է ՄՋ համարը, ՅԴ հոդվածը չի արտահայտված ցանկում, որովհետև km ձեռագրերում այն միացված է նախորդ ՅՐ հոդվածին, իսկ ps ձեռագրերում չի պահվել։ Մեկ դեպքում ցանկի վերնագրերի հաջորդականությունը չի համապատասխանում հոդվածների հաջորդականությանը՝ ՄԽՐ և ՄԽԴ վերնագրերը պետք է դրվեին ըստ հոդվածների հաջորդականության նախ ՄԽԴ (հոդված Մե), ապա ՄԽՐ (հոդված ՄԽԱ)։ Կան այլ կարգի շեղումներ, երբեմն երկու հոդվածին ցանկում դրված է մեկ վերնագիր. օրինակ, ՄԽԴ, ՄԽԵ հոդվածները համապատասխանում են ցանկի ՄԽՋ վերնագրին։ Հինգ դեպքում մեկ հոդվածին ցանկում դրված է երկու վերնագիր՝ ԼԱ հոդվածը ցանկում ունի ԼԱ և ԼՐ վերնագրերը, ՀՋ-ն՝ ՀԷ և ՀԸ, ՃՋԸ-ն՝ ՃՂ և ՃՂԱ, ՄՀԱ-ն՝ ՄՀՐ և ՄՀԴ վերնագրերը, իսկ ԼՐ հոդվածը ցանկում թեև դրված է ԼԴ վերնագրի տակ, բայց ԼԴ համարակալումը բաց են թողել և հաջորդ վերնագիրը նշել ԼԵ համարի ներքո։ mps ձեռագրերում ԼԴ վերնագրի վերջին՝ «սիւնականի որ վախճանին» հատվածի սկզբում ավելացրել են «վասն» և նշել ԼԴ համարի տակ։

Այս շեղումների պատճառով էլ վերոբերյալ ցանկի վերնագրերի և հոդվածների հաջորդական համապատասխանությունը տատանվում է 2—3 համարի եռևառաջությամբ։

Ներքևում նշում ենք ծանոթագրություններում օգտագործված ձեռագրերի էական տարբերությունները։

Հոդ. Ա, էջ 101: Բնագրի «յանկարծաւրեա՛» բառը №№ 835, 837, 8459 ձեռագրերում դրված է «յանկարծօրէն» ձևով։ «Ր մահ համարեալ լիցի եւ» հատվածի փոխարեն նշված ձեռագրերն ունեն «այնպիսին», իսկ «վարդապետն իշխանս» բառերի միջև՝ «ի ճշմարիտ հաւատն» բառերը (№№ 835, էջ 126աբ, 837, էջ 66աբ, 8459, էջ 91ա)։ №№ 659, 657 ձեռագրերն ունեն ղգալի շեղումներ, ուստի հոդվածը բերում ենք լրիվ. «Որ ղէգ ասլականէ բռնաբար յանկարծաւրէն յղի, մահապարտութեան դատաստան ընկալցի, այնպիսին այրեսցի։ Հայելով վարդապետին ի ճշմարիտ հաւատսն կարճել ղկարգն իշխան է» (էջ 144ա, էջ 116բ)։ Կանոնադրքում թեև նշվում է. «Ր մահ համարեալ լիցի», բայց չի հասկացվում, թե ինչու երկու մահ համարել, մինչդեռ №№ 659, 657-ում նշվում է հղի ժամանակ կնոջ բռնադատողը (հարվածողը) երկու մահ է գործում՝ մեկ ծնողին, մյուսը պտուղին։

Հոդ. Գ, էջ 101: Բնագրի «զաւակի» փոխարեն №№ 659, 657 ձեռագրերում պահվել է «անզաւակութեան» (էջ 114բ, էջ 116բ)։ № 657-ում այս հոդվածը դրված է Դ-ի տեղը, իսկ Դ-ն՝ Գ-ի։

Հոդ. Դ, էջ 102: №№ 835, 837, 8459 ձեռագրերը չունեն բնագրի «տարապարտուց» բառը։ Առաջին երկու ձեռագրերում որոշ բառեր դրված են այսպես. «զընկերն», «սպանէ», «անկանի», «իշխանաց»։ Այս երեք ձեռագրերում էլ հոդվածի վերջին մասը խմբագրվել է այսպես. «և զգող ոք մատնէ մահապարտ է» (№№ 837, էջ 66բ, 835, էջ 126բ, 8459, էջ 91ա)։

Հոդ. Զ, էջ 102: Երեք ձեռագրերում չի պահվել սուլն հոդվածը և Զ համարի դիմաց նշված է. «Գրած է» (№№ 837, էջ 67ա, 835, էջ 126բ, 8459, էջ 91ա)։

Հոդ. Է, էջ 102: Բնագրի «հաղորդեսցի աւրինաց» բառերի փոխարեն №№ 837, 835 ձեռագրերը ունեն «ապա մտեալ հաղորդեսցի» (էջ 67ա, էջ 127ա)։

Հոդ. Ը, էջ 102: Բնագրի «արժան է յորդորել» բառերի միջև երեք ձեռագրերում պահվել է «տալ նոցա և» (№№ 837, էջ 67ա, 835, էջ 127ա, 8459, էջ 91ա)։ №№ 837, 835 ձեռագրերում նաև կարդում ենք. «զարհուրին և անդրէն դառնան», իսկ «չարիսւ-ի փոխարեն ունեն «գործն»։

Հոդ. Թ. էջ 103: Բնագրի մի հատվածը №№ 837, 835 ձեռագրերում կարդում ենք այսպես. «ընդ արուն անցուցանեն (վերջին բառը տե՛ս նաև №№ 657, 659 ձեռագրերում) եղիցի ի վերայ նոցա այն ժամանակն որ ի շնութեան զանաւրէնութիւն գործէ» (էջ 67աբ, էջ 127ա)։ Հոդվածի վերջին «Գ ամ... ընդ ձեռամբ» հատվածը չի պահվել №№ 657, 659 ձեռագրերում։ Այս հոդվածը քաղված է Բարսեղ Կեսարացու մի այլ կանոնախմբից (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 351, հոդ. ԼԲ, և համապատասխան ծանոթ. էջ 618)։

Հոդ. Ժ, էջ 103: Վերջին «սպանողի ընկալցի» բառերի փոխարեն №№ 837, 835 ձեռագրերն ունեն «սպանողսն դատեսցի» (էջ 67բ, էջ 127բ), իսկ №№ 659, 657-ը՝ «սպանողի ապաշխարութիւն կրեսցէ» (էջ 145ա, էջ 117ա)։

Հոդ. ԺԱ, էջ 103: Բնագրի «պատուհաս» բառի փոխարեն №№ 659, 657 ձեռագրերում պահվել է «երկրորդ պատիժս» բառերը (էջ 145ա, էջ 117ա)։

Հոդ. ԺԲ, էջ 103: Բնագրի «ժամանակսն լալով» բառերի փոխարեն երեք ձեռագրերում պահվել է. «աւուրս կենաց իւրոց» (№№ 837, էջ 67բ, 835, էջ 127աբ, 8459, էջ 92ա)։

Հոդ. ԺԳ, էջ 103—104: Այս հոդվածը №№ 657, 659 ձեռագրերում բաժանված է երկու

Հոդ. ՄԼԴ, ՄԼՑ, էջ 162։ Ա 659-ում այս երկու հոդվածները միացված են և դրված որպես մեկ հոդված՝ Մի համարով։ Նախ դրված է ՄԼՑ հոդվածը, ապա սրան իբրև ջրունակութիւն ՄԼԴ-ը։ Այստեղ չի պահվել բնագրի «ծու հարկ է», «պայծառացուցանել զնա» և «աջխարհախումբ» բառերը (էջ 173բ)։

Հոդ. ՄԼՋ, էջ 162։ Բնագրի «ի հաւատացելոց»-ի փոխարեն Ա 659-ում գրված է «ի քրիստոնէից» (էջ 173բ)։

Հոդ. ՄԼԷ, էջ 162։ Բնագրի «յամենայն տունս ժողովրդեանն» հատվածը №№ 837, 835, 8459-ում դրված է «ժողովրդեանն յամենայն տունս» ձևով (էջ 95բ, էջ 150բ, էջ 129բ)։

Հոդ. ՄԼԹ, էջ 163։ Ա 659-ում «որ ի մաւրէ մեռանալ» հատվածը կարդում ենք այսպես. «որ մաւտ ի մեռանել գայ» (էջ 174ա)։

Հոդ. ՄԽ, էջ 163։ Հոդվածի սկիզբը №№ 837, 835, 8459-ում այսպես է. «ծու տղայն որ կենդանի ծնանի և հոգաբարձոյքն անփոյթ առնեն և ոչ ասեն յահանային», Այս և № 8459 ձեռագրերում «Գ ամ»-ի փոխարեն նշված է. «ծ ամ»։ Համառոտ է հոդվածի վերջին հատվածը. ահա այն՝ «բայց իշխանութիւն վարդապետին կարճել» (№№ 837, էջ 96ա, 835, էջ 151ա, 8459, էջ 130ա)։ № 659-ում տարբեր է պատժաչափը՝ «է ամ», «Գ ամ»-ի փոխարեն, «ծ ամ», «Գ ամ» (էջ 174ա)։

Հոդ. ՄԽԱ, էջ 163—164։ №№ 837, 835, 8459-ում «զգուշացուցանէ» բառը դրված է «իմաց էրին (№ 835-ում՝ արին)» ձևով, սրանք չունեն նաև «կացցէ» բառը (էջ 96ար, էջ 151ա, էջ 130բ)։

№ 659-ում «եւ նա վասն իւր... վասն այլ գրաղմանն» հատվածը դրված է այսպես. «եւ նա վասն ծուլութեանն» (էջ 174բ)։

Հոդ. ՄԽԲ, էջ 164։ №№ 837, 835, 8459-ում չեն պահվել «հանդիպի» և «զմանուկ» բառերը (էջ 96բ, էջ 151ար, էջ 130բ—131ա)։

Հոդ. ՄԽԴ, էջ 164։ № 837, 835, 8459-ում չի պահվել «ծրախայ թէ եկեալ ի մկրտութիւն եւ» հատվածը (էջ 96բ, էջ 151բ, էջ 131ա)։

Հոդ. ՄԽԵ, էջ 165։ № 659-ում չի պահվել «եթէ համարձակիցի ոք» հատվածը։ № № 837, 835, 8459-ում բնագրի «ճանապարհ ըստ կամաց» և «ի քաղաքակիցս իւր... ղմիմեանց բեռն բարձէք» հատվածները համապատասխանաբար այսպես են. «ի հեռոյ ի հօտէն» և «յայլ քահանայ և ապա գնալ» (էջ 97ա, էջ 151բ—152ա, էջ 131բ)։

Հոդ. ՄԽԶ, էջ 165—166։ №№ 837, 835, 8459-ում հոդվածի սկիզբը այսպես է. «Այր կամ կին յորժամ հիւանդանայ և անգանի ի մահիճ պարտ է յաւուր Գ հետ կոչել» (էջ 97բ, էջ 152ա, էջ 131բ)։ Այս ձեռագրերը չունեն բնագրի «եւ զերիցունսն», «ղբաղեալ ի ծուխս աշխարհիս» հատվածները, իսկ «հոգաբարձուքն» բառը փոխարինված է «ընդանիք» բառով։ № 659-ում չի պահվել «ցաւոց» բառը, իսկ մի քանի դեպքում էլ կան այլընթերցումներ, օրինակ «յաւուրն երրորդի կոչել» հատվածի փոխարեն կարդում ենք «երկիցս անգամ ի հարկէ կոչել», «զերիցունսն»-ի՝ «զիւրեանց», «որ ոչ ղղուշացաւ»-ի՝ «և ոչ չոգաւ» (էջ 175բ)։

Հոդ. ՄԽԷ, էջ 166։ Հոդվածի վերջին «ծու այլք չյայտնեն... քահանայն ի մեղաց նոցա» հատվածը № 659-ում դրված է այսպես. «և այլք յայտնեն զգործս նորա և քահանայն տուեալ է սուրբ խորհուրդն՝ անպարտ է ի մեղաց նոցա» (էջ 176ա)։

Հոդ. ՄԽԸ, էջ 166։ № 659-ում հոդվածն այսպես է սկսվում. «Երկրորդացն քահանայն առ սեղանն աւրհնեսցէ դուռն» (վերջին բառն ավելացրել են ուրիշներ, այլ լուսաճցհում. էջ 176ա)։ Այնուհետև ինչպես բնագրում։ Բնագրի «պսակ առ դրանն» հատվածը №№ 837, 8459-ում փոխարինված է «զդուռն առ սեղանոյն» հատվածով (էջ 97բ—98ա, էջ 152բ, էջ 132բ)։

Հոդ. ՄԽԹ, էջ 166—167։ №№ 837, 835, 8459-ում չի պահվել «կացուսցէ» բառը, իսկ № 659-ում՝ «առ սուրբ սեղանն»։ Այս բնագրի ՄԽԹ և ՄԾԱ հոդվածների միջև վերևում նշված չորս ձեռագրերում պահվել է մի հոդված, որը № 837, 8459-ում ունի ՄԽՈ, № 659-ում ՄԼՉ համարը, իսկ № 835-ում համար չի նշված. ահա այդ հոդվածը. «Իսկ եթէ մինն կուսան և մինն (№№ 659, 835-ում՝ միւսն) այրի (№ 659-ում՝ երկեակ) և այլ վարքն սրբութեամբ են,

արժան է տալ նոցա (№ 659-ում՝ չիՙ նոցա) զպսակն աւրհնութեանն» (№№ 837, էջ 98ա, 835, էջ 152բ, 8459, 133ա)։ Այս հոդվածը № 659 ձեռագրում այնուհետև շարունակվում է. «Կուսանին և զերկեակն առ դրանն կացուցանել մինչև զկարգն ապաշխարեսցէ և արժանի լիցի աւրինաց» (էջ 176բ)։

Սա Նեոկեսարիայի կանոնախմբի Ը հոդվածն է («Կանոնագիրք Հայոց», հտ. Ա, էջ 182) միայն այստեղ պատժաշափը չկա։

Հոդ. ՄԽԱ, էջ 107: Բնագրի «աւուրբք Բ»-ը №№ 837, 835, 8459-ում դրված է «աւուրս Ը» (էջ 98բ, էջ 152բ, էջ 133բ)։

Հոդ. ՄԽՈ, էջ 167: Այս հոդվածը չի պահվել №№ 837, 835, 8459 ձեռագրերում, միաժամանակ նշված է «գրած է» (էջ 98բ, էջ 153ա, էջ 133բ)։ № 659-ում վերջին՝ «այլ... աղքատաց» հատվածն այսպես է «բայց միով է արժան եթե ոք սիրէ, նոյն չափով յաղքատս տացէ» (էջ 176բ)։

Հոդ. ՄԽԴ, էջ 167: «Բնագրի «եւ ի թուղնոց ըստ ծ զգայութեան մարդոյն» հատվածը №№ 837, 835, 8459-ում այսպես է. «եւ ի թուղնոց եւ ի խաշանց ըստ է զգայութեան մարդոյն» (էջ 98բ, էջ 153ա, էջ 133բ)։

Հոդ. ՄԽԴ—ՄԽԸ, էջ 167—169: Այս հոդվածները չեն պահվել №№ 837, 835, 8459-ում, միաժամանակ նշված է. «գրած է» (էջ 98բ, էջ 253ա, էջ 134ա)։

ՄԽԵ հոդվածը № 659-ում այսպիսի տեսք ունի. «ՄԽԱ. Թէ տղայոց դիպիցին զպաշն ծնաւղացն պարտ է կատարել և արգելուլ զնոսա յամենայն կերակրոց և ստեամբ միայն սնուցանել մինչև (ձեռ-ում մինչև բառից հետո մի բառի տեղ բաց է թողնված—Վ. Հ.) սրբութեան. և ապա աւրհնել յանուն Տեառն» (էջ 177ա)։ ՄԽԹ հոդվածի «է ժամանակս» հատվածի միջև № 659-ը ունի «ամեաց՝ է ամայ ժամանակս», իսկ «ի սրտի» փոխարեն ունի «ի մտի» (էջ 177բ)։ ՄԽԺ հոդվածի «յղփութեանց» բառը № 659-ում փոխարինված է «ցանկալի» բառով, իսկ «եւ դառնալ ի բանակ իւր» հատվածը չի պահվել (էջ 177բ)։

Սակայն պետք է նկատել, որ այս մի քանի հոդվածները սկզբնապես մի ամբողջական գրութիւն են եղել։ Այն հոդվածների բաժանված է այնպես, որ նկատվում է մեկը մյուսի շարունակութիւն կազմելը, բացի այդ, բաժանումը կատարված է մեխանիկական այնպիսի մոտեցմամբ, որ ՄԽԴ հոդվածը այս ձևով բովանդակութիւն չունի։

Հոդ. ՄԽԹ, էջ 169: «Բնագրի «ի պահոց» և «զարհուրի հրապուրիչ» հատվածների փոխարեն № 659-ում համապատասխանաբար կարդում ենք «ի կապանաց» և «հալածի» (էջ 178ա)։

Հոդ. ՄՄ, էջ 169—170: № 659-ում չի պահվել «քահանայ» բառը, իսկ «արար» բառի փոխարեն գրված է «սիրէ» (էջ 178ա)։ №№ 837, 835 ձեռագրերը ունեն միայն վերջին նշումը։

Հոդ. ՄՄԱ, էջ 170: №№ 837, 835-ում չի պահվել «քահանայութեանն» բառը, «որում»-ը փոխարինված է «ում որ այս» բառերով, իսկ «է ժամանակաւ»-ը գրված է «է. ամայ ժամանակաւ» (էջ 99ար, էջ 153)։ № 659-ում «զաւծումն քահանայութեանն և ի տուն իւր դարձցի» (էջ 178ա) հատվածը գրված է «բնագրի «զաւծումն... իւրում» հատվածի փոխարեն։

Հոդ. ՄՄԲ, էջ 170—171: № 835-ում՝ արք փխ. ոք (էջ 153բ), իսկ № 659-ում չի պահվել «ոք» բառը։

Հոդ. ՄՄԴ, էջ 171: Բնագրի «աստեղաց եղիցի» բառերի միջև №№ 659, 837, 835, 8459 ձեռագրերն ունեն «կամ յուրութիւս (№ 659-ում՝ յուրեանս) և յուլուս առ ի պահպանութիւն անձանց» (էջ 179ա, էջ 100ա, էջ 154ա, էջ 135ա)։ №№ 837, 835-ում «հրեշտակաց» բառը փոխարինված է «կամարարաց»։

Հոդ. ՄՄԴ, էջ 171: «Բնագրի «Քրիստոսի որպէս» բառերի միջև №№ 837, 835, 8459-ն ունեն «որ ասէ այդ գործ ոչ իւիք ելանէ եթէ ոչ պահաւք և աղօթիւք» հատվածը (էջ 100ա, էջ 154ա, էջ 135բ)։ № 659-ում «ի բանէն Քրիստոսի» հատվածի փոխարեն գրված է. «և նա ինքնին ասաց այդր ազգ ոչ ելանէ եթե ոչ պահաւք և աղաւթիւք (էջ 179ա)։

Հոդ. ՄՄԵ—ՄԿԴ, էջ 171—174: Այս հոդվածները №№ 837, 835, 8459-ում չեն պահվել, միաժամանակ նշված է «այս ամէն (№ 835-ում՝ չիՙ ամէն) դրած է (էջ 100ա, էջ 154ա, էջ 135բ)։ Այս մի քանի հոդվածները պահվել են № 659-ում, առանձին չեղումներով, այստեղ կնշենք դրանք։ ՄՄԵ և ՄՄԶ հոդվածները № 659-ում միացված են, որն ավելի ճիշտ է, ՄՄԶ հոդվածի «եւ այս բնութեամբ ընթանայ յեկեղեցին» հատվածը № 659-ում դրված է ավելի ընդարձակ. «և այս քննութեամբ է նոցա յաւժարութեամբ ընթանան յեկեղեցին յորժամ հանդիպի նոցա» (էջ 179ա)։ ՄՄէ հոդվածի «եւ մեկնեն... հանդիպին լուսոյն» հատվածը համառոտ է. «և հասանէ նմա լոյս» (էջ 179բ)։ ՄՄը հոդվածի «ծնկեալք» և «արատուէն... ի վատ բարուցն» հատվածները համապատասխանաբար դրված են այսպես. «անկեալ» և «խրատ տու-

նալ յիւրեանց բարուցն» (էջ 179բ)։ ՄԸՐ հոդվածի վերջին «ընթանան առ գրարարս... լնդ սատանայիս» հատվածի փոխարեն դրված է. «ընդ անարգս աղանդիւք զիւրեանս պղծեն և գտանին ի հուր և գեհենին ընդ սատանայիս» (էջ 179բ)։ Մկ հոդվածի «յափափայս» և «դատեն» բառերի փոխարեն ունի՝ «անփափայս» և «ծածկեն» (էջ 180ա)։

Հոդ. ՄԿՆ, էջ 174—175։ Հոդվածը №№ 837, 835, 8459-ում մի փոքր ընդարձակ է. «Այսահարութիւն է շնութիւն, արիւն հեղութիւն, դողութիւն, և սուտ երդնուլ և սուտ (№ 835-ը չունի սուտ) խօսել և զուր վկայել և արուագիտութիւն և անասնազանցութիւն և ագահութիւն և արծաթասիրութիւն և արբեցութիւն։ Այսահարութեան (№ 835-ում՝ այսահարութիւն) հանդիպիր լաւ էր բան այսպիսի ախտից» (էջ 100ար, էջ 154ար, էջ 135բ—136ա)։ Այս հոդվածով վերջանում է սուն կանոնախումբը № 8459 ձեռագրում։

Հոդ. ՄԿԶ, էջ 175։ Ընագրի «յաւելուլ» բառը № 659-ում փոխարինված է «հայել» բառով (էջ 181ա)։ №№ 837, 835, 8459-ում հոդվածն այսպես է. «Իսկ քահանային այսպէս արժան է՝ յորժամ հանգիպին այսահարութեան (№ 835-ում՝ այսահարութիւն), տանել ի տուն աստուծոյ և ի դուսն եկեղեցւոյն և ի սար անդ աւթել և է անդամ աղթս առնել հանդերձ է խորհրդեամբ Աւետարանին և հայել և տեսանել ղլրրութիւն, և յաւելուլ և կարճել ըստ ողորմութեան Աստուծոյ ի պահան և յաղթսն երկիւղիւն Աստուծոյ» (էջ 100բ, էջ 154բ, 136ար)։

Սրանով էլ վերջանում է ընագիրը №№ 837, 835 ձեռագրերում։

Հոդ. ՄԿԼ, էջ 175—177։ Ընագրի «արդարոց» և «ի քաւութիւն» բառերի փոխարեն № 659-ում համապատասխանաբար կարդում ենք. «որոց» և «ի քաւութիւն» (էջ 181բ)։ Մնացած հոդվածները՝ ՄԿԸ—ՄՀՐ, թեև պահվել են այս ձեռագրում, բայց տարբեր համարակալմամբ, այսպես, ՄԿԸ հոդվածը նշված է ՄԿԳ համարով, ՄԿԹ-ն՝ ՄԿԴ, ՄՀ-ն՝ ՄԿԵ, ՄՀԱ-ն՝ ՄԿԶ, ՄՀԲ-ն՝ ՄԿէ։

Վերջին՝ ՄՀՐ հոդվածին, որը № 659-ում դրված է ՄԿէ համարի տակ, հաջորդում է հետևեալ հիշատակարանը. «Կատարեցաւ կանոն սրբոյն Բարսղի հայրապետին Կեսարիոյ՝ սուրբ ՄԿէ, և միանգամայն ամենայն գլուխքն տունքն ՅԺԵ, և այն զկնի սորին՝ սկ դարձեալ նոյն Բարսղի գտանես զկնի սորին այլ կանովնս» (էջ 184բ)։ Հիշատակարանի «և այն զկնի սորին» հատվածը մատնացույց է անում այն կանոնախումբը, որ հրատարակել ենք «Կանոնագիրք Հայոց»-ի և հատորում (էջ 329—362)։ Այդպես ենք կարծում, որովհետև նշված հիշատակարանին անմիջապես հաջորդում է վերջինս։ Սակայն այս կանոնախումբը № 659 ձեռագրում բաղկացած է ոչ թե 51 հոդվածից, ինչպես «Կանոնագիրք Հայոց»-ում է, այլ 43 (42+1). տե՛ս ցանկը 185ար էջերում, հոդվածները՝ 185բ—198ա, 198ա—204ա էջերում)։

Հիշատակարանի վերջում կրկնված «Եւ դարձեալ նոյն Բարսղի գտանես զկնի սորին այլ կանովնս» հատվածն էլ մատնացույց է անում միևնույն ձեռագրի 208բ—214բ էջերում գտնվող՝ Բարսեղ Կեսարացու կանոնական մի այլ նամակը՝ բաղկացած 40 հոդվածներից, թեև համարակալում դրված չէ։ «Ընորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Քուղթ առ սուրբ Գրիգոր Աստուածաբան եպիսկոպոս Նազիանզու յաղագս կրօնաւորութեան» վերնագրով։ Այս ընագիրը ունի չափազանց հետաքրքիր բովանդակություն և չի մտել կանոնագրքի որևէ խմբագրության մեջ։

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վերնագիր, էջ 181: *Կանոնագրքի գիտա-քննական բնագիրը կազմելու համար օգտագործված ձեռագրերից բացի, միայն № 3276-ում է որոշ կրճատումներով պահվել սույն կանոնախումբը։ Վերնագիրն այստեղ համառոտ է. «Երանելոյն Գրիգորի Աստուածաբանի սահմանք և կանոնք վասն ուղղափառութեանն» (էջ 164բ)։*

Մեզ արդեն ծանոթ Oknps *ձեռագրերում այս կանոնախմբի ցանկն ալսպիսին է. սկսենք* O *ձեռագրից։*

ՃԱ. Վասն որք ասիցեն զորդին Աստուծոյ արարած։

Բ. Վասն որք զՍաբէլի զուդահաւատս ունիցին։

Գ. Վասն ծնընդեան Քրիստոսի որ յունվարի Ջ առնեն։

Դ. Վասն որ արհամարհիցէ զսուրբ մկրտութիւնն ի Հայր և յՈրդի և ի Սուրբ Հոգին։

Ե. Վասն որք ուրանան յետ մկրտութեան զհաւատս։

Զ. Վասն որք ի պոռնկութիւն անկանիցի[ն]։

Է. Վասն որք ի կռապաշտութիւն անկանիցի։

Ը. Եթէ ոք ցանկայ եպիսկոպոս լինել։

Թ. Վասն եպիսկոպոսաց որք անարժան գտանի[ն]։

Ժ. Վասն եպիսկոպոսաց որ ողորմած լինին։

ԺԱ. Վասն եպիսկոպոսաց որ հարկանող իցեն։

ԺԲ. Վասն եպիսկոպոսի որ տուգանս առնու՝ արժան է տալ աղքատաց։

ԺԳ. Վասն կաթուղիկոսի որ նոր օրէնս տայ եկեղեցոյ։

ԺԴ. Վասն եպիսկոպոսի որ դառն վարի խստութեամբ։

ԺԵ. Եթէ ոք ի քահանայից կամ ի մոնոզաց արհամարհալ լինի յեպիսկոպոսէ և ընթանալ առ նախագլուխ և առնու զկարգն։

ԺԶ. Վասն եպիսկոպոսի որ յայլոց վիճակ ընթանայ։

ԺԷ. Որ այսու ագահեալ խռովութիւնս առնէ։

ԺԸ. Վասն եպիսկոպոսի՝ Բ և Գ վկայիւք դատել զքահանայն։

ԺԹ. Վասն որք ընծայեն զանձն Աստուծոյ և պոռնկին։

Ի. Վասն որ պոռնկի ընդ կուսի։

ԻԱ. Վասն անասնագիտաց։

ԻԲ. Վասն քահանայի որ զնոյն կարգս գացի։

ԻԳ. Եպիսկոպոս հանդերձ կնաւ մի՛ եղիցի։

ԻԵ. (sic). *Եւ քահանայ և սարկաւագ յեպիսկոպոսէ առցեն զկարգն։*

ԻԶ. Վասն եպիսկոպոսաց որ լինին առաչնորդք։

ԻԷ. Վասն քահանայի որ ուսուցանել զբարեպաշտութեան օրէնս։

ԻԸ. Վասն եպիսկոպոսի որ կարգեսցէ զտօն տէրունական։

ԻԹ. Վասն Քառասնորդաց պահոց։

Լ. Վասն յարութեան տեառն Փրկչին» (էջ 377բ—378ա)։

kınps *ձեռագրերի ունեցածը բերում ենք ըստ* k*-ի.*

ՃԱ. Ի բաց լինել ի հերձուածողաց։

Բ. Վասն համագոյ միասնական Սուրբ երրորդութեանն։

Գ. Վասն որք ի հերձուածողացն գան ի ճշմարտութիւն ուսցին։

Դ. Վասն որք զտան Ննջնդեան և զՅայտնութեան փոխիցեն։

ե. Վասն չարհամար[հ]ելոյ զսուրբ Մկրտութիւնն որ ի Հայր և յՈրդի և ի Սուրբ Հոգին։
Զ. Վասն որ զկնի մկրտութեան ըմբոնեցաւ յուրացութիւն։
[է. Վասն որ զկնի մկրտութեան դառածան ի մեղս ապաշխարանք դնել։]
Ը. Վասն որ ի ձեռս կռապաշտից զոհեցին և կերան։
Թ. Վասն եպիսկոպոսաց բարեձևութեամբ կեալ։
ժ. Որք չեպիսկոպոսաց անարժան զտան։
ժԱ. Վասն եպիսկոպոսաց որ առնուն ի ձեռնադրելն կաշառս։
ժԲ. Վասն եպիսկոպոսաց ոչ հարկանել զոք։
ժԳ. Թէ ոչ է պարտ եպիսկոպոսին ի մեղաւորաց տուգանս առնել, այլ հրամայել յաղքատս։
ժԴ. Թէ ոչ է պարտ կաթողիկոսի նոր օրէնս տալ յեկեղեցի։
ժԵ. Թէ ոչ է պարտ եպիսկոպոսին խստութեամբ վարիլ։
ժԶ. Վասն քահանայից չապստամբել իւրոյ եպիսկոպոսէ։
ժէ. Եպիսկոպոս մի՛ կալցի զայլո վիճակ վասն պատուոյ։
ժԸ. Թէ զայնպիսին մեծն Աթանաս տարազրեաց։
ժԹ. Թէ ոչ է պարտ ղրահանայս լուծանել առանց Բ և Գ վկայից։
Ի. Որք կուսանալ խոստացան և պոռնկեցան։
ԻԱ. Որք պոռնկեցան րնդ կուսան։
ԻԲ. Որք պղծեցան յանասունսն։
ԻԳ. Քահանայ ի նոյն չարիս զտեալ։
ԻԴ. Եպիսկոպոս հանդերձ կնաւ մի՛ եղիցի։
ԻԵ. Եպիսկոպոս ընկալցի զաւծումն յերից եպիսկոպոսաց։
ԻԶ. Թէ քահանայք և սարկաւագունք ի մի՛ եպիսկոպոսէ։
ԻԷ. Վասն Եպիսկոպոսաց որ չիցեն կարող հերքել զհերձուածս՝ լռեսցին։
ԻԸ. Եթէ զուսումնասէրս ձեռնադրել քահանայ։
ԻԹ. Վասն տանից տէրունականաց։

Լ. Վասն Քառասնորդաց պահոց և սրբոյ Զատկին, Համբարձմանն և Պենտակոստէին» (էջ 73ա, հմմտ. III, էջ 83աբ, P, էջ 80բ—81ա, S, էջ 92բ—93բ)։

Քանի որ կանոնախմբի առաջաբանը որոշ ձեռագրերում դրված է որպես առաջին հոդված, իսկ Լ հոդվածն էլ միացված է ԻԹ հոդվածին, այդ պատճառով այստեղ ցանկի վերնագրերի համապատասխանությունը հոդվածներից չեղվում է մեկով։

Առաջաբան, էջ 181—182: № 3276 ձեռագրում չի պահվել առաջաբանը։

Ինչպես նշեցինք վերևում, որոշ ձեռագրերում, ինչպես և մեր հրատարակության հիմք հանդիսացող A ձեռագրում, առաջաբանը դրված է որպես առաջին հոդված։ Մենք այդ ուղեցինք՝ համարակալումը վերցնելով կլոր փակագծերում։ Հոդվածների համարակալումների հետ վարվեցինք դարձյալ այդ ձևով, ձախում նշելով յուրաքանչյուրի թե՛ ընդհանուր և թե՛ մասնավոր հերթական ճիշտ համարները։

Հոդ. Ա—Ը, էջ 182—188: Այս հոդվածները չեն պահվել № 3276 ձեռագրում։

Հոդ. Թ, էջ 188—190: Բնագրի «այսինքն կաթողիկոսն, ի նմին կարթեսցի» հատվածը (էջ 188, տող 13) № 3276-ում դրված է «այսինքն ի նմին կրթեսցի կաթողիկոսն», «միայն լոկ»-ը՝ «լոկ միայն», (էջ 164բ), իսկ «Նաղիանձու»-ն՝ «Ադիազու» ձևերով (էջ 165ա)։ Բնագրի «զի սրբոց հարցն» հատվածից (էջ 189, տող 6) մինչև հոդվածի վերջը չի պահվել նշված ձեռագրում։

Հոդ. Ժ—ԺԱ, էջ 190—191: Այս երկու հոդվածները ևս չեն պահվել № 3276-ում։

Հոդ. ԺԲ, էջ 191: Բնագրի «եպիսկոպոսին» և «հաւատոյ» բառերը № 3276-ում համապատասխանաբար պահվել են «եպիսկոպոսին» և «հաւատոց» (էջ 165ա)։

Հոդ. ԺԳ, էջ 191—192: Բնագրի «լուծեալք» բառը № 3276-ում նշված է «լուծեալ» (էջ 165ա)։

Հոդ. ԺԴ, էջ 192: Այս հոդվածը չի պահվել № 3276-ում։

Հոդ. ԺԵ, էջ 192—193: Բնագրի «խոզեալ», «ամբաստանեալ» և «եղեալ» բառերը № 3276-ում համապատասխանաբար գրված են «խոզել», «ապստամբել» և «եղեալ» ձևերով (էջ 165ա)։

Հոդ. ԺԶ, էջ 193—174: Հոդվածի վերջին հատվածի «ձեռամբ քահանայագործէ» բառերը № 3276-ում գրված են այսպես. «ձեռօք քահանայագործել» (էջ 165ա)։

Հոդ. ԺԷ, էջ 194: *Բնագրի «եւ մեզ աւանդեաց» հատվածը № 3276-ում այսպես է. «աւանդեաց և մեզ» (էջ 165ա)։*

Հոդ. ԺՐ, էջ 194—195: *Նշված ձեռագիրը լումի բնագրի միայն առաջին «ոչ»-ը (էջ 165բ)։*

Հոդ. ԺԹ, էջ 195: *Բնագրի «մնասցեն» և «լսողսն» բառերը № 3276-ում համապատասխանաբար փոխարինված են «կացցեն» և «ապաչխարողսն» բառերով (էջ 165բ)։*

Հոդ. Ի, էջ 195: *Բնագրի «ապաշխարեցէք» և «աւրինաց» բառերը № 3276-ում գրված են «որոշեսցի» և «յօրինացն» (էջ 165բ)։*

Հոդ. ԻԱ, էջ 195—196: *№ 3276-ը լումի բնագրի «են» (ոգիքն) օժանդակ բայը, իսկ բնագրի «ե յետին», «միմեանց» (արուամոլքն) բառերը գրված են այսպես «ե ի յետին», «ի միմեանց» (էջ 165բ)։*

Հոդ. ԻԴ, էջ 197: *Բնագրի «պատուով սահմանեցան» հատվածը № 3276-ում այսպես է. «պատիւ ունին և սահմանեցան» (էջ 165բ)։*

Հոդ. ԻԵ, էջ 197: *Այս հոդվածը նախորդի շարունակությունն է և ինչպես սխալմամբ է դրված առանձին հոդված։*

Հոդ. ԻԶ, էջ 197: *№ 3276-ում բնագրի «հերքելն» բառը փոխարինված է «հալածելն» բառով, իսկ «զադարեսցէ» բառն այստեղ չի պահվել (էջ 165բ)։*

Հոդ. ԻԷ, էջ 197: *Նշված ձեռագրում բնագրի «ուսցին զբարեպաշտութիւնեան» բառերի միջև դնում ենք «նախ» բառը (էջ 165բ)։*

Հոդ. ԻԸ—Լ, էջ 198—199: *Այս երեք հոդվածները չեն պահվել № 3276 ձեռագրում։*

ԴՎԻՆԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄՐ

Վերնագիր և առաջարան, էջ 200։ *Կանոնագրքի համահավաք բնագրի համար օգտագործված ձեռագրերից բացի սույն կանոնախումբը մասամբ պահվել է № 3276 ձեռագրում։ Այստեղ չեն պահվել առաջարանի «կայսեր», «ուղիղ կարգի... եւ ժառանգաւորաց» և «երանելւոյ» հատվածները, իսկ «կանոնացդ» բառն էլ պահվել է «կանոնիդ» ձևով (էջ 181ա)։*

Ցանկ. էջ 200—201։ *Հովհ. Օձնեցուց հետո կանոնագրքում մուծված կանոնախմբերը որպես կանոն հոդվածների բովանդակության ցանկեր չունեն։ Այս առումով բացառություն են կազմում այս և կարևոր ժողովի կանոնախմբերը։ Քանի որ վերջին երկու կանոնախմբերի* Okmps *ձեռագրերի ունեցած ցանկերը տրված են վերևում՝ 200—201 էջերի տողատակի այլընթերցումներում, դրանք այստեղ չենք բերի։*

Ցանկը չի պահվել № 3276 ձեռագրում։

Հոդ. Ա, էջ 202։ *№ 3276-ում սույն հոդվածը չի պահվել։ Ինչպես նշում է Աբել Մխիթարյանցը այս և մի շարք այլ կանոնախմբեր ինքը վերցրել է Ջամչյանի համառոտումից (Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874, նախադրություն, էջ ժԸ. հմմտ. նույն տեղում, էջ 86—90) հմմտ. նաև № 4488 ձեռագիրը, էջ 15բ—16բ)։*

Հոդ. Բ, էջ 202։ *№ 3276-ում միակ տարբերությունը այն է, որ բնագրի սկզբի «վիճակիս» բառն այստեղ գտնում ենք «վիճակէս» ձևով (էջ 181ա)։*

Հոդ. Գ, էջ 203։ *Այս և մնացած հոդվածները չեն պահվել № 3276 ձեռագրում։*

ՄԱԿԱՐ Ա–Ի ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վերնագիր. էջ 216: *№№ 648, 3562 ձեռագրերում վերնագիրը գրեթե նույնն է. նկատվող չեղումն այն է, որ այստեղ չի պահվել «կարգաց» բառը, իսկ «անցանել» բառի փոխարեն ունեն «ել» բառը (№№ 648, էջ 160ր, 3562, էջ 257ա)։ Ինչպես ճիշտ նկատել է Ն. Ակինյանը՝ սույն կանոնախումբը որպես նամակ «Գիրք Թղթոց»-ում մուծվել է Կանոնագրքից (Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց յաղագս կարգաց եկեղեցւոյ, էջ 10)։ Ուստի վերնագրում չեղումներ չկան, միակ տարբերությունն այն է, որ «հրամանն»-ի փոխարեն կարդում ենք «կարգ» («Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 407)։*

№№ 648, 3562 ձեռագրերի և «Գիրք Թղթոց»-ի տարբերակներում առաջարկվող բնագիրը պահվել է գրեթե նույնությամբ, էական տարբերություններ չկան։ Այս ցույց է տալիս, որ Կանոնագրքից այն անցել է սույն ձեռագրերին և «Գիրք Թղթոց»-ին։ Այդ պատճառով էլ այս բնագրերից մեջբերումներ չենք կատարի (տե՛ս № 648, էջ 160բ—164բ, № 3562, էջ 257ա—261ա, 266ա. վերջին ձեռագրում մի քանի էջեր կազմված են ետևառաջությամբ, դրա համար էլ կանոնական մի շարք մանր բնագրերի հետ այս կանոնախմբի վերջին հոդվածն իր տեղից ընկել է մի քանի էջ հետու. «Գիրք Թղթոց» էջ 407—412)։ № 3276-ում սույն կանոնախումբը չի պահվել. այդ մասին գրիչը գրում է. «Զի կանոնք սրբոյն Մակարայ Երուսաղէմի հայրապետին ոչ գրեցաք ի տփի աստ» (էջ 164բ)։

kmps *ձեռագրերում վերնագրից հետո դրված է կանոնների ցանկը, վերջինս բերում ենք ըստ* k *ձեռագրի.*

«Ա. Ոչ է պարտ ծուլանալ ի մկրտելոյ։

Բ. Ոչ է արժան սարկաւագի մկրտութիւն առնել։

Գ. Թէ պարտ է յեկեղեցիս աւազան առնել և մկրտել։

Դ. Թէ պարտ է զկարգ եկեղեցւոյ տեսուչք հաստատ պահել։

Ե. Թէ զիւղ սրբութեան եպիսկոպոսապետն աւրհնել։

Զ. Թէ մի՛ երկմտութեամբ և թերահաւատութեամբ և աղտեղի գործով մերձենալ ի սեղան։

Է. Թէ պարտ է զխորհուրդ պատարագին որոյն կատարել ի հերձուածողաց, զի մի՛ անուն Աստուծոյ հայհոյեսցի։

Ը. Զհաց պատարագին չերմ հանել ի սեղանն։

Թ. Սուրբ սեղանն ընդ վարագուրաւ և աւազանն արտաքոյ ի նմին տանն։

Ժ. Ժառանգաւորք իւրաքանչիւր ըստ աստիճանի կալցեն զգործս» (էջ 68ա. հմմտ. m, *էջ 78բ,* p, *էջ 74բ—75ա,* s, *էջ 86աբ)։*

Ահա և O *ձեռագրի ցանկը.*

«Ա. Թէ արժան է սարկաւագաց մկրտութիւն առնել։

Բ. Վասն աւազանի որ սրբեալ ոչ ունին և որպէս ամանի մկրտեն։

Գ. Վասն կարգի եկեղեցւոյ սրբոյ յօրինեն։

Դ. Վասն միաբանութեան եպիսկոպոսաց և ժառանգաւորաց։

Ե. Թէ որպէս մերձենացուք առ սուրբ սեղանն սուրբ և կենարար խորհուրդն։

Զ. Վասն փրկական խորհրդին կատարելոյ։

Է. Վասն չերմ հացին որ ի բեմն հանեն։

Ը. Վասն ի ձև սեղանուն և խորհրդոյն և վարագուրին։

Թ. Վասն աւանդման պատուիրանին հաւատոյ» (էջ 390ա)։

ԿԱՐԻՆԻ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վերնագիր. էջ 244: կանոնագրքի համահավաք բնագրի կազմման համար օգտագործված ձեռագրերից զատ, այս կանոնախումբը գտնվում է նաև XIX գարում ընդօրինակված № 5182 ձեռագրի 123բ—132բ էջերում։ Ձեռագիրը պարունակում է հիմնականում Խոսրովիկ թարգմանչի մի գրվածքը. «Եւ այնոսիկ որ ասեն բնութեամբ անձն, անսկիզբն ընկալեալ զմարդկութիւն Աստուած բան ի կուսէն» խորագրով (էջ 5ա—107բ) և մի քանի կանոնախմբեր՝ Ներսես Ա Բագրեւանգացու և Ներջապուհ Մամիկոնեից եպիսկոպոսի (էջ 109ա—118ա), Հովհան Մանդակունու (էջ 118բ—119ա, համմտ. կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 492—500), Կարինի ժողովի (էջ 123բ—132բ), և Անտիոքի ժողովի խոստովանություն (էջ 133ա—136բ)։

Այս ձեռագրի՝ Կարինի ժողովի կանոնադրության բնագիրը չունի վերնագրի միայն «ժողովեցան» բառը, մնացածը նույնն է (էջ 123բ)։

Առաջաբան, էջ 244—245: № 5182 ձեռագրի բնագիրը էական տարբերություն չունի առաջարկվող բնագրից։ Վերջինիս միայն «հաստատեալ» և «ընդունել» բառերը (244$_{11}$, 245$_{1}$) դրված են անցյալ դերբայով՝ «հաստատեալ» և «ընդունեալ» (էջ 124ա), իսկ նախքան «եկեղեցւոյ» (245$_{6}$) բառը դրված է «սուրբ» (էջ 124բ)։

Ցանկ, էջ 245—246: Գիտա-քննական բնագրի համար օգտագործված 50 ձեռագրերում, ինչպես նշել ենք, 645 թ. Դվինի ժողովի կանոնախմբի նման այստեղ ևս գտնում ենք ցանկ։ Այս մասին տես Ներածությունում մեր բացատրությունը (էջ CXVIII—CXIX)։ Okmps *ձեռագրերի ունեցած ցանկը տես վերևում՝ 245—246 էջերի տողատակի տարընթերցումներում։*

Այստեղ կնշենք № 5182 ձեռագրի համապատասխան կանոնների ոչ մեծ տարբերությունները։

Հոդ. Ա, էջ 246—247: Բնագրի «կատարել» բառի փոխարեն (էջ 246, տող 13) նշված ձեռագրում կարդում ենք «կնկատել» (էջ 125ա)։

Հոդ. Գ, էջ 248—249: Բնագրի «յառաջնմէն» բառը (էջ 248, տող 12) նշված է «յառաջագոյն» ձևով (էջ 126բ), իսկ «յաւրհնութենան» և «մարդոց» բառերը (էջ 249, տող 1 և 2) համապատասխանաբար՝ «յաւրհնութենէ» և «մարդոյ» ձևերով (էջ 126բ)։

Հոդ. Դ, էջ 249—250: Բնագրի «խորհիցի» և «ունել» բառերը (էջ 249, տող 10 և 13) համապատասխանաբար նշված են «խորհեսցի» և «ունելով» ձևերով (էջ 127ա)։

Հոդ. Ե, էջ 250—251: Բնագրի «դրութենան» (էջ 251, տող 8), «էն» (տող 10) և «բնակեսցէ» (տող 12) բառերը համապատասխանաբար նշված են «դրութենանցն», «իցէ» և «կացցէ» ձևերով (էջ 128ա)։

Հոդ. Թ, էջ 255—257: Բնագրի «կամասո-ի (էջ 255, տող 15) փոխարեն ունի «կամար», իսկ «վիցին» բառը (էջ 257, տող 1) այստեղ չի պահվել (էջ 131ա)։

ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վերնագիր, էջ 258: *Որոշ ձեռագրերում վերնադիրը մի փոքր համառոտ է, «կանոնք (№ 651-ում՝ կանո[ն]քնն) սրբոյն Ներսէսի հայրապետին գլուխք ԼԴ (№№ 649, 651-ում՝ չի՛ գլուխք ԼԴ)» (№№ 648, էջ 51ա, 649, էջ 79ա, 650, էջ 87ա, 651, էջ 66ա, 2964, էջ 112բ. 3562, էջ 331ա):*

Վերնագրում նշված «Գլուխք ԼԴ» հատվածը ցույց է տալիս, որ այս կանոնախմբի հոդվածները լրիվ բերված չեն: Եվ իսկապես, այս ձեռագրերում չեն բերված՝ ԺԴ, ԻԱ, ԻԴ—ԻԸ Լ, ԽԱ, ԽԴ հոդվածները, թվով 10:

kmps *ձեռագրերում հոդվածների ցանկը ունի այս պատկերը.*

ՃԱ. Վասն զզջացելոց՝ յետին քոշակին մի՛ զրկեսցին:
Բ. Վասն որ չնան և զմանկունսն սպանանեն:
Գ. Վասն իգացելոց:
Դ. Վասն որ խաւսեալ զաղչիկն քողուն և զքոյրն առնու և նա խեղդ արկեալ մեռանի:
Ե. Վասն որ մին կուսան և մի[ն] երկեակ զուգին:
Զ. Վասն երրորդաց:
Է. Վասն որ զպոռնիկ կանայս քողուն:
Ը. Վասն կնաքողաց:
Թ. Վասն որ երկու քևոց պոռնկին:
Ժ. Վասն քահանայից որ պոռնըկին:
ԺԱ. Վասն որք չնան և կամին սպանանել:
ԺԲ. Վասն որք ընդ հեթանոսի չնան:
ԺԳ. Վասն որք ընդ հեթանոսի չնան կերակրով:
ԺԴ. Վասն որ ընդ հեթանոսի զուգի:
ԺԵ. Վասն որ զալգի հարկանէ:
ԺԶ. Վասն որ զարջառ հարկանէ:
ԺԷ. Վասն որ զտուն այրէ ընչիւք:
ԺԸ. Վասն կանանց որ ապարահ իցեն և անխտիր կան:
ԺԹ. Վասն մանկան որ անկնունք մեռանի ծուլութենէ:
Ի. Վասն դողոց և աւազակաց և մարդասպանաց և հրկէզ առնողաց:
ԻԱ. Վասն որ դրամ գողանան:
ԻԲ. Վասն որ ընդ ազգականս ամուսնանան:
ԻԳ. Վասն որ ընդ հօր կնոջ ննջէ:
ԻԴ. Վասն որ ընդ եղբաւր կնոչն ամուսնան[ան]:
ԻԵ. Վասն բռնադատեալ կնոջ և ի պղծելն հաւանեսցի:
ԻԶ. Վասն չարապաշտից և որ հմայից հաւատայ:
ԻԸ (sic). Վասն մանկանց, որ ապոռնայիցէ կամ ձգէ և կամ ածէ:
ԻԹ. Վասն որ ընդ հեթանոսի մեղանչէ:
ԻԹ (sic). Վասն որ այլոց զմահ խորհին:
Լ. Վասն կնոջ որ յղի է և անգէտս հարկանի յումեքէ:
ԼԱ. Որ մկնակ դինի ըմպէ:
ԼԲ. Վասն որ յաւձից խալքի:
ԼԳ. Վասն ակամայ սպանողաց:

ԼԴ. Վասն արուագիտաց և որ ընդ անասունս պղծի։
ԼԵ. Վասն շնացողաց։
ԼԶ. Վասն որ յառաջ քան զհարսանիսն ընայ և կին առնէ։
ԼԷ. Վասն որ մինն կուսան և մինն երկեակ ամուսնանան։
ԼԸ. Վասն որ հացի դէզ այրի։
ԼԹ. Վասն որ ընդ զոքանչի ննջէ։
Ի. Վասն երկրավարացն։
ԻԱ. Վասն որ զպահք լուծանեն ի պատճառս հիւանդութեան։
ԻԲ. Վասն որ զմեղս ծածկէ և ոչ խոստովանի։
ԻԳ. Վասն ողորմութեան» (k, էջ 227ա—228ա. հմմտ. m, էջ 229ա—230ա, p, էջ 247բ—248ա, s, էջ 286ա—287ա)։

Այս ցանկում կան որոշ խախտումներ, նախ համարակալման մէջ րաց է թողնված Իէ համարը, իսկ ԻԹ-ն կրկնված է։ Երկրորդ՝ ԻԹ հոդվածի վերնագիրը ցանկում դրված է ԼԸ համարի տակ, որովհետև այս և Բ խմբի մի շարք ձեռագրերում այդ հոդվածը դրված է ԼԸ և ԼԹ համարների միջև (տե՛ս վերևում, էջ 261, տող 15-րդ, տողատակ), Ի հոդվածը ցանկում համապատասխան վերնագիր չունի, իսկ ԻԳ հոդվածի համար ցանկում նշված է երկու՝ ԻԲ, ԻԳ վերնագիր։

Հոդ. Ա, էջ 258։ Հոդվածի վերջին երկու բառր №№ 651, 2964-ում այսպես է. «կանոնի հրամանաց» (էջ 66ա, 112բ)։

Հոդ. Գ, էջ 258։ Ներքոհիշյալ ձեռագրերում տարբեր է միայն պատժաչափը՝ «Դ» փոխանակ «Դ» (№№ 648, էջ 51բ, 649, էջ 79ա, 650, էջ 87ա, 651, էջ 66ա, 2964, էջ 112բ, 3562, էջ 331ա)։

Հոդ. Դ, էջ 258։ Բնագրի «զքոյլրն» բառը №№ 650, 651-ում դարձել է «զքոյն» (էջ 87ա, էջ 66ա), հավանաբար «ր»-ն մոռացվել է։ Հոդվածի վերջին բառին հետևյալ ձեռագրերում համապատասխանում է «ապաշխարեսցեն»՝ №№ 648, էջ 51բ, 649, էջ 79ա, 650, էջ 87ա, 651, էջ 66ա, 2964, էջ 112բ, 3562, էջ 331ա։

Հոդ. Ե, էջ 259։ Նշվելիք ձեռագրերում տարբեր է պատժաչափը՝ «Դ» փոխանակ «Գ»-ի, ինչպես նաև բացակայում է «ապաշխարեսցեն» բառը (№№ 648, էջ 51բ, 649, էջ 79ա, 650, էջ 87ա, 651, էջ 66ա, 2964, էջ 112բ, 3562, էջ 331ա)։ Հոդվածում գործածված «զուգին» բառը հասկացվել է «ամուսնանանն» իմաստով (Ն. Մելիք—Թանգյան, Ա. Ղլտճյան) և այս հոդվածը համեմատելով ԼԸ հոդվածի հետ նկատել են «տարօրինակ հակադիպութիւններ», երբ «միևնոյն նիւթի վրայ կանոն է գրում տարբեր սահմաններով» (Ն. Մելիք-Թանգյան, «Հայոց եկեղեցական իրաւունքը», էջ 369)։ Այս հոդվածի իմաստը բացատրելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ նաև մի այլ պարագա։ Մեր լեզվում «զուգութիւն», «զուգել» բառերը այլ իմաստների հետ նշանակում են ոչ միայն «ամուսնութիւն», «ամուսնանալ», այլև «կենակցութիւն», «կենակցել» (սեռական իմաստով)։ Ջի՞ կարելի արդյոք «զուգին» բառը այստեղ հասկանալ այդ իմաստով, այսինքն «եթէ մեկը կույս է և մյուսը երկեակ և կենակցում են...»։ Այս դեպքում ոչ միայն չենք նկատի Ն. Մելիք-Թանգյանի «տարօրինակ հակադիպութիւնները», այլև կազատվենք ԼԸ հոդվածի՝ Ա. Ղլտճյանի վերակազմությունից։ Ի դեպ, այս հոդվածի համար որպես աղբյուր Ա. Ղլտճյանն առաջարկում է Նեոկեսարիայի Գ, Բարսեղի Դ, Լուսավորչի Ե և Ներսիսի ու Ներջապուհի Իե հոդվածները (ՀԱ, 1908 թ. V, էջ 134)։ Նշված հոդվածներից այս նյութը չեն ջոջափում Նեոկեսարիայի Գ և Բարսեղի Դ հոդվածները։ Մեր կարծիքով ճիշտ կլինի նշել Լուսավորչի Ե և Նեոկեսարիայի Ը հոդվածները, ուր պարզ չի նշված՝ խոսքը ամուսնությա՞ն թե կենակցության մասին է։

Հոդ. Է, էջ 259։ Բնագրի «արասցեն»-ը №№ 651, 2964-ում փոխարինված է «առնուցուն» բառով (էջ 66բ, էջ 113ա), իսկ «առնե»-ը՝ «այլում» բառով (№№ 648, էջ 51բ, 649, էջ 79ա, 650, էջ 87ա, 651, էջ 66բ, 2964, էջ 113ա, 3562, էջ 331ա)։

Հոդ. Ը, էջ 259։ Վերոհիշյալ վեց ձեռագրում տարբեր է պատժաչափը՝ «Է» փոխանակ «Ե»։

Հոդ. Թ, էջ 259։ Բնագրի «պոռնկին» բառը №№ 648, 3562-ում փոխարինված է «պղծի» բառով, իսկ «ապա»-ն չունեն (էջ 51բ, էջ 331ա)։

Հոդ. Ժ, էջ 259։ Վերևում նշված վեց ձեռագրերում հոդվածի վերջին «կացցեն» բառին հաջորդում է «յետոյ» բառը։

Հոդ. ԺԴ, էջ 259—260։ Այս հոդվածը չի պահվել №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերում։

Հոդ. ԺԵ, էջ 260։ №№ 648, 3562-ում տարբեր է պատժաչափը՝ «Դ» փոխանակ «Գ»։

Հոդ. ԾԶ, էջ 260: №№ 648, 3562-ում բացակայում են բնագրի «հարկանէ», «եւ» բառերը։ Իսկ մյուս ձեռագրերում հոդվածն ունի այսպիսի շարահարութիւն. «Վասն որ զարշառ սպանանէ և կամ զայլ անասուն՝ Գ ամ ապաշխարեսցեն» (№ 651, էջ 66բ. հմմտ. №№ 650, էջ 87բ, 649, էջ 79բ, 2964, էջ 113ա)։ Այս ձեռագրերի «վասն որ... զայլ անասուն» ընթերցումն էլ Ա. Ղևոնճյանը գրել է իր համահավաք բնագրում (տես ՀԱ, 1908, VIII, էջ 229)։

Հոդ. ԾԸ, էջ 260: Տարբեր է պատժաչափը՝ «Գ»-ի փոխարեն №№ 648 և 3562-ը ունեն «Դ» (էջ 52ա, 331բ), իսկ №№ 651 (էջ 66բ), 650 (էջ 87բ), 649 (էջ 80ա), 2964 (էջ 113բ) ձեռագրերը՝ «ԺԳ»։ Հոդվածի սկիզբը Ա. Ղևոնճյանի մոտ այսպես է. «Վասն կանանց որ ապարահ իցեն»։ Հրատարակիչը նշում է նաև որ այդ հատվածը ինքը վերցրել է գլխոց ցանկից (ՀԱ, 1908, VIII, էջ 229), բայց այդպես պետք չէ վարվել, որովհետև գլխոց ցանկը կազմվել է XVII գարում (տես վերևում, էջ 384) և բնագրի վիճակը սկզբնապես այդպիսին չէր։

Հոդ. ԻԱ, էջ 260: Այս հոդվածը չի պահվել վերևում նշված վեց ձեռագրերում։

Հոդ. ԻԴ—ԻԸ, էջ 261: Այս հինգ հոդվածները լեն պահվել վերևում նշված վեց ձեռագրերում։ Ա. Ղևոնճյանի մոտ ԻԴ հոդվածի վերջին մասն այսպես է. «բայց եթէ մեկնեսցին և զմահապարտին ապաշխարութիւն կրեսցեն և ստոյգ ապաշխարեսցեն» (ՀԱ, 1908, VII, էջ 229)։ Այս վերցված է Բ խմբին պատկանող ձեռագրերից (տես վերևում. էջ 261, տողատակ 5—6)։

Հոդ. ԻԷ, էջ 261: Այս հոդվածի սկիզբը Ա. Ղևոնճյանի կազմած բնագրում այսպես է. «Վասն որ մանուկ ապրոնայ է» (ՀԱ, 1908, VIII, էջ 230)։

Հոդ. Լ, էջ 261: Միտքը անհասկանալի է. եթե ուրիշին մահ նյութելը իրեն է հանդիպում, մահանալուց հետո էլ ինչպե՞ս 10 տարի ապաշխարի։ Խոսքը թերևս գնում է մահափորձի մասին, որ եթե մեկը մահափորձ է խորհում ուրիշի վերաբերյալ և իրեն է հանդիպում, ապա 10 տարի պետք է ապաշխարի։ Այս հոդվածը չի պահվել վերևում նշված վեց ձեռագրերում։

Հոդ. ԼԱ, էջ 262: Ա. Ղևոնճյանի կազմած բնագրում այս հոդվածի մի ընդարձակ մասն այլ շարադասութիւն ունի, այսպես. «յումեքէ հարկանի յանգէտս և անցուցանէ զմանուկն» (ՀԱ, 1908, VIII, էջ 230)։

Հոդ. ԼԲ, էջ 262: Հոդվածի վերջին «ապաշխարեսցէ» բառը №№ 651 (էջ 67ա), 650 (էջ 88ա), 2964 (էջ 113բ) ձեռագրերում փոխարինված է «պահեսցէ» բառով։ Իսկ № 649-ում այս և հաջորդ՝ ԼԳ հոդվածները կրճատումներով միացրել են միմյանց. ստացվել է անիմաստ բան. «այսպես, «Վասն որ մկնհարաց ի յամին յայն զկաթն մի՛ կերիցեն և մի՛ զմիսսն յերիս ամս» (էջ 80ա)։

Հոդ. ԼԳ, էջ 262: Բնագրի «Վասն աւձահարաց» բառերի միջև №№ 651, 650, 2964-ում «անասնոց» բառը, այսպես. «Վասն անասնոց աւձահարաց» (էջ 67ա, էջ 88ա, էջ 113բ)։ Հենց այս և նման ձեռագրերի ընթերցմանն է հետևել Ա. Ղևոնճյանը այս կանոնախմբի իր կազմած բնագրում (տես ՀԱ, 1908, VIII, էջ 230)։

Հոդ. ԼԵ, էջ 262: Մի փոքր տարբեր է հոդվածի վերջին հատվածը մեզ ծանոթ ձեռագրերում. այսպես. «և եթէ յամեալ իցէ ի մեղսն, յաւելցին ամք ապաշխարութեանն» (№№ 651, էջ 67ա, 650, էջ 88ա, 649, էջ 80ա, 2964, էջ 114ա)։

Հոդ. ԼԸ, էջ 262: Այս հոդվածի սկիզբը հիշեցնում է Նեոկեսարիայի կանոնախմբի Ը և Գրիգոր Լուսավորչի ծ հոդվածները (տե՛ս նաև սույն բնագրի ծ հոդվածը), իսկ վերջը՝ Նեոկեսարիայի Թ հոդվածի վերջին հատվածը, ընդ որում այստեղ խոսքը գնում է երրորդ անգամ ամուսնացողների մասին (Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 182), մինչդեռ սույն հոդվածում՝ երկրորդ։ Հետաքրքիր է, որ բնագրի «երկեակ» բառը №№ 651 (էջ 67ա), 650 (էջ 88ա), 649 (էջ 86ա), 2964(էջ 114ա) ձեռագրերում դրված է «գ-կին», այսինքն «երեքկին»՝ «երեք կամ երրորդ անգամ), ինչպես նշված է Նեոկեսարիայի կանոնախմբի Թ հոդվածում։

Ն. Մելիք-Քանգյանի կարծիքով այս և ծ հոդվածը կառուցված են միևնույն նյութից, միայն տարբեր սահմանումներով, և դա համարում է «բոլորովին տարօրինակ հակադիպութիւններ» (Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Ա, էջ 369)։ Ա. Ղևոնճյանը քննադատելով այս կարծիքը, գրում է, որ ոչ մի «հակադիպութիւններ» չկան։ Բնագրի «երկեակ» բառի վերևում նշված մի քանի ձեռագրերի տված «Գ. կին» (=երեքկին) ընթերցումով նա վերակազմում է հոդվածի բնագիրը ու նշում, որ ծ հոդվածում խոսվում է երկրորդ անգամ ամուսնացողների մասին, իսկ այս՝ երրորդ անգամ ամուսնացողների (ՀԱ, 1908, V էջ 135)։ Ա. Ղևոնճյանի ասածը ճիշտ է՝ եթե մահանա կույսը. բայց եթե պատահի հակառակը՝ «երկեակ»-ը մահանա, իսկ կույսը մնա, ապա գարձյալ կստանանք «երկեակ»։ Եթե ընդունվի ծ հոդվածին տրված մեր բացատրությունը (տես վերևում էջ 385), ապա կնշանակի՝ այս երկու հոդվածներում միևնույն նյութը օգտագործված է տարբեր տեսանկյուններով և Ա. Ղևոնճյանի առաջարկած սրբագրությունը անի-

մաստ է։ Մի այլ պարագա. եթե իսկապես ե և այս հոդվածները վերաբերում են մի դեպքում կույսի և «երկնակի», մյուս դեպքում կույսի և «երեքկին» ամուսնանալուն, ինչո՞ւ հարցնենք՝ ապա ինչո՞ւ դրանք հաջորդաբար չեն դրված, որպես միանման գործողության տարբեր օղակներ, ինչպես, ասենք Նեոկեսարիայի Ը, Թ և ժ (Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 182—183) հոդվածներն են։ Մինչդեռ մեր բացատրության համաձայն խոսքը միևնույն անձնակազմի տարբեր գործողությունների մասին է, մի դեպքում՝ կույսը և «երկնակ»-ը կենակցում են (ե հոդված), մյուս դեպքում՝ ամուսնանում (ԼՀ հոդված), դրա համար էլ դրանք միմյանցից անջատ են գրված։ Հենց այդպես է դրված Բարսեղ Կեսարացուն վերագրված կանոնախմբի ՄԸ հոդվածում, որը և անցել է Դոշին (տե՛ս Դատաստանագիրք, մասն Ա, ՁՁ, էջ 187)։ Հետևապես ճիշտ չէ Ղլտճյանը, երբ սուլն կանոնախմբի ԼՀ հոդվածի որպես աղբյուրագիտական հիմք նշում է Դոշին (Ա մաս, ՁՁ հոդված). ավելի հավանական է Բարսեղին վերագրված կանոնախմբի ՄԸ հոդվածը։

№№ 651, 650, 649, 2964 ձեռագրերը երկրորդ «և»-ի փոխարեն ունեն «ապա»։

Հոդ. ԽԱ, էջ 263: №№ 648, 649, 650, 651, 2964, 3562 ձեռագրերը չունեն այս հոդվածը։

Հոդ. ԽԲ, էջ 263: Բնագրի «հիւանդութեանն» բառը №№, 649, 650, 651, 2964 ձեռագրերում փոխարինված է «վտանգին» բառով։

Հոդ. ԽԴ, էջ 263: Այս հոդվածը չի պահվել վերևում նշված վեց ձեռագրերում։

ԵՓԻՊԱՆ ԿԻՊՐԱՑՈՒԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ՄԻ ԱՅԼ ԿԱՆՈՆԱԽՈՒՄԲ

Վերնագիր, էջ 268: Հետևյալ մի քանի ձեռագրերում վերնագրի «կանոնք»-ի փոխարեն գտնում ենք «Գիր կանոնիս» (№№ 649, էջ 73ա, 650, էջ 80բ, 651, էջ 61ա, 2964, էջ 104բ):

Այս ձեռագրերում գտնում ենք նաև հոդվածների բովանդակության համառոտ ցանկ. ահա այն.

«Վասն քահանայից և սարկաւագաց զգուշութիւն ի կանանց յորժամ ի սպասաւորութիւն սրբոյ խորհրդոյն մատչին:

Աւրէնսգրութիւն ոչ մերձենալ ի կինն իւր ապարախ:

Վասն երիցանց և սարկաւագաց» (№№ 649, էջ 73ա, 650, էջ 80բ, 651, էջ 61աբ, 2964, էջ 104բ): Նման ցանկ տե՛ս նաև O ձեռագրում. «Ա. Վասն որք անարժան ի սպասաւորութիւն առնեն կամ պատարագին կամ հաղորդին:

Բ. Վասն կնոջ որ ի յապարահս իցէ:

Գ. Վասն քառասնորդաց պահոցն (էջ 410բ):

kmps ձեռագրերում Ա և Բ հոդվածների ցանկն առանձին է դրված, Գ հոդվածին առանձին, որովհետև վերջինս կանոնագրքի Բ խմբի ձեռագրերի մի մասում՝ acdkmprsv տարբեր տեղ է դրված, որպես ուրույն և միմյանց հետ կապ չունեցող բնագրեր: Եվ վերնագրից էլ կարելի է եզրակացնել, որ այն առանձին բնագիր է և Ա, Բ հոդվածներին Ա խմբի ձեռագրերում միացված է մեխանիկորեն: Ահա այդ ցանկն ըստ k ձեռագրի:

«Ա. Վասն քահանայից և սպասաւորաց սրբոյ խորհրդեանն ի բաց կալ ի մարմնասիրութենէ և ի հեշտութենանց աշխարհի և առաւել ի յանկողնոյ:

[Բ]. Վասն ապարահից և սազմնառուաց ի բաց կալ ի մերձաւորութենանն (էջ 233 բ, m, էջ 325, p, էջ 254ա, s, էջ 293բ):

[Գ.] «Վասն Քառասնորդաց պահոց և այլոցն» (k, էջ 247ա, m, էջ 252ա, p, էջ 268բ, s, էջ 311ա):

Հոդ. Ա—Բ, էջ 268—277: №№ 649, 650, 651, 2964 ձեռագրերի հոդվածներում էական տարբերություն չենք գտնում, եթե նկատի չունենանք առանձին բառերի հետևառաջությունը կամ պարզեցումը, օրինակ, «սուրբ» Քէ «ամաքուր» և այլն:

Հոդ. Գ, էջ 277—280: Նշված չորս ձեռագրերում այս հոդվածը բոլորովին տարբեր բան է: Այն բերում ենք № 649 ձեռագրի համաձայն. «Երիցունք և սարկաւագունք որ չրթամբք իւրեանց պղծին և եկեալ խոստովանիցեն զյանցանսն՝ ընդունելի են ընդ այլ սարկաւագունս և երիցունս. և եթէ սովին յանցանօք անկեալ գտցին կամ թէ ևս առաւել ինչ և ոչ խոստովանիցին զյանցանսն առ ի երկիւղի մարդկան, այնպիսիքն ի բաց չընչեալ եղիցին» (էջ 77աբ. Համմտ. նաև №№ 650, էջ 85ա, 651, էջ 64բ, 2964, էջ 110ա):

Ներածությունում նշեցինք № 941 ձառընտիրի մասին (էջ CX), ուր պահվում է սույն «հոդվածիս» ընդարձակ տարբերակը: Այստեղ բերում ենք նշված ձեռագրի ունեցածն ամբողջությամբ.

«Հարցումն Թէոդոսի քահանային ընդ երանելին Եպիփան վասն քառասնորդաց պահոց. եթէ Մովսէս քառասուն աւր պահեաց եւ նիդիայ եւ Տէրն մեր, պահս ո՞չ այնպէս քիւ, մինչ զշաբաթ եւ ըզկիւրակէ լուծանեմք:

Պատասխանի ետ երանելին Եպիփան եւ ասէ. Այս պահս քառասուն եւ ութ աւուրք բովանդակի, ըստ քառասուն եւ ութ քաղաքացն ապաստանից, զոր զատոյց Ցեսու վասն սպանողաց, որք փախուցեալ ի քաղաքն անկանէին ապաստանից եւ կայր մինչեւ մեռանէր ըստ փափկութեան մարմնոյ. եւ այն լինէր քառասուն եւ ութ յօր, ըստ քաղաքացն ապաստանից եւ ըստ

Մովսէսի աւրինադրութեան որ զմահապարտսն ժողովէր մինչեւ ի վախճան քահանայապետին. եւ ապայ արձակեալ լինէր ի մահուանէ։ Սոյնպէս եւ այս քառասնօրեայ պահս մինչեւ ցմահ քահանայապետին Քրիստոսի քաւութեան առիթ մեղուցելոցն փրկական պատարագաւըն հաւատացելոցն լինէր, եւ ստոյգ խոստովանողացն եւ ապաշխարողացն, զի թէպէտ եւ սուրբ հարքն յաղագս յիշատակի սրբոցն եւ սուրբ պատարագին եւ յարութեան Քրիստոսի զշաբաթ եւ զկիրակէ լուծանել հրամայէին ի կերակուրս, բայց ոչ յաւելորդս՝ ի գինի եւ ի ձէթ զմեզ թողացուցին, այլ ի պարկեշտութիւնս. զի լաւ է շնորհաւք հաստատել զերկիր զսիրտ եւ ոչ կերակրօք, զի ոչինչ օգտեցան որ այնպէս գնացին։ Վասն որոյ եւ նզովս ստորագրեցին առ այնոսիկ որ յղփութեան աւրէնս վարկանին, զի առաջին սուրբ հարքն ոչ սահմանեցին։ Արդ՝ այսպէս կարգեցաւ ի սուրբ առաքելոցն եւ ի սուրբ հարցն. մի՛ ինչ աւելի ճաշակել ի սուրբ քառասուներորդն յաւուր շաբաթու կամ ի կիրակէի, բայց միայն զայլ աւուրցն կերակուրսն։ Տես զճշմարտութիւնն, զի որպէս յաւուրցն Պենտակոստիցն, ոչ պահեն զչորեքշաբաթի կամ զուրբաթն։ Սոյնպէս եւ աստ ոչ է պարտ ի շաբաթու կամ կիւրակէի փափկանալ կերակրովք, այլ վասն սուրբ Յարութեանն եւ սուրբ պատարագին յերրորդ ժամու հրամայեցին յանպաճոյճ կերակուրսն, զոր յայլ աւուրսն ճաշակեմք. այլ զչորեքշաբթի եւ զուրբաթն եւ զուխտի պահսն եւ զԱրդէվառի եւ զԱստուածածնի եւ զԽաչի եւ զսուրբ Յայտնութեանն եւ զԱռաջաւոր պահսնն ընդ սուրբ քառասուներորդսն համարեցան։ Արդ՝ որ յայսմ կանոնի միաբան լինի՝ խաղաղութիւն ի վերայ նորա ասէ աստուածային առաքեալն եւ առաւել ի վերայ այնոցիկ, որք երեք յիսնակս կատարեն յանուն Սուրբ Երրորդութեանն. զՊասէքին եւ զԱրդէվառին եւ զսուրբ Յայտնութեանն զփրկութիւն Տեառն առցեն զաւետիս։ Եւ որք լուծցեն ի պասեքի պահոցն կամ զառաջատրն կամ զուրբաթ կամ զչորեքշաբթի կամ զԱրդէվառի կամ զԱստուած[ած]նի կամ զսուրբ Խաչին կամ զԱստուածայայտնութեանն։ Եթէ յակամայ ոք լուծցէ՝ Ե աւր պահեսցէ եւ եթէ կամաւ՝ Զ ամ արտաքոյ կացցէ եւ ապայ հաղորդեսցի աւրինացն։

Այսպէս կարգեաց սուրբ այրն Աստուծոյ Եպիփան վասն սրբութեանն պահոցն ոչինչ արտաքոյ պատուիրանաց, այլ հաստատութեամբ Հին եւ Նոր Կտակարանաց։ Տես զիմաստութիւն եւ զհանճար հոգւոյն սրբոյ որ բխմամբ ի սուրբ առաքեալսն եւ ի վարդապետսն ճշմարիտ կարգեցին զսկիզբն պահոցն է շաբաթ կարգելով Արարչին առ մի մի աւուր Ռ ամ, որ լինի դարս էՌ։ Արդ՝ ամենայն դար բովանդակեցին զկարգաւորութիւն պահոց է շաբաթս ոչ երբէք որոշեալ ի միմեանց եւ ոչ պակասեցուցեալ. վասն զի ի կատարել եաւթից հազարաց հասցուք միւսանգամ գալստեանն Նորոգման եւ յարութեան զարգարեալ եաւթեակ շնորհաւք, զոր եւ կիւրեղ յայտնապէս ցուցանէ զմուտ պասեքին զքառասնորդաց երկշաբաթին աւր անուանէ ընթերցուածք ի գիր անկելոյ վարդապետութեանն ի սուրբ քառասնորդացն եւ առ հանգերձեալսն կնիք առնելոյ, զի դարձին յապաշխարութիւն եւ վարդապետք իմաստունք ասեն յորովայն մարն ի քառասուն աւուր առնուլ զկենդանութիւն։ Սոյն օրինակ յայս քառասներորդս իբր յորովայնի սաղմ առեալ կացցուք ոչ մերձենալ ի փափուք կերակուրսն։ Տես զՀոգէխառն իմաստութիւն ընթերցուածոցն կիւրղի եւ Յակոբայ դրութեանն նայելով ի ստեղծուած առաջին մարդոյն, զի ի վեցերորդ աւուրն ստեղծ տէր Աստուած զմարդն. նոյնպէս եւ կենարարն մեր ի վեցերորդ գարուն մարմնացաւ ի Սրբոյ Կուսէն, նորոգելով զհնութիւն մեռելութեան մերոյ։ Եւ ի վեցերորդ նուագին, յորում եկն ի կամաւոր չարչարանս մահու խաչին. նախ ի վեցերորդ շաբաթուն եկն ի Բեթանիայ, ուր էր Ղազար մեռեալն, զոր յարոյցն ի մեռելոց, զչորս անկիւնս երկրի կենդանացոյց որ օրինակի հինկ զգայարանք մարդոյն բռնութեանն. իսկ Մարիամ եւ Մարթայ որ օրինակին ի վեց Ռ դարս անցելոցն՝ Մարթայ զբազում իւիք զբաղեալ, իսկ Մարիամ ընտրելով զփրկութիւն ի Տեառնէ զերծանելով ի բռնութենէ սատանայի, զոր սուրբ վարդապետացն կարգեալ են չորս մասամբք զբոլոր մարդն սրբեալ ճշմարիտ ետես զիրս ընթերցուածին վասն սրբութեան պահոցն ոչ կատարել ի նոսայ տանս. վասն զի ոչ ունի օրինակ ըստ հնումն եւ ոչ ի նորումս մինչեւ ի կատարեալ վեցերորդում շաբաթուն։ Սոյնպէս եւ ոչ ուրբաթացուցանել, զի մի՛ խափանեսցի յարութեան պաշտաւն. եւ յարութիւն ոչ եթէ պաճուճեալ կերակրովք յաւրինի, այլ պաշտմամբք եւ աղօթիւք, զի որպէս ոչ է մարթ ի Բարէկենդանէն մինչեւ ցՋատիկն գառն զենուլ, նոյնպէս եւ անմարթ է ի փափուկ կերակուրս վայելել յաւուրս քառասնորդացն, զապաշխարողսն արտաքոյ եկեղեցւոյն ունելով մինչեւ ի պասէքն տէրունական, զի ասէ առաքեալն. «Զատիկ՝ վասն մեր զենաւ Քրիստոս». եւ մեք փափաքելով <ով> մարմնով եւ արեանն Տեառն ճաշակելով յայսմ աւուր մեծի զենման։ Եւ արդ՝ պարտ է սրբութեամբ մաքրել զանձինս պահաւք եւ աղաւթիւք աւուրս քառասուն եւ ութ. եւ ի կատարմանն լցցուք ցնծութեամբ ճաշակեսցուք ի մարմնոյ եւ յարենէ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Այսպէս՝ կարգեաց սուրբն Գրիգոր Հայոց հայրապետն ոչ ազարտելով զաւ-

րէնս կամ զմարգարէս ըստ բանի կենարարին որ ասէ. «Ոչ եկի լուծանել զաւրէնս կամ զմարգարէս, այլ լնուլ», եւ սայ զնոյն աւրինակ բերելով յորժամ մոլեգնեալ դիւօք զաւրքն եւ քահանայքն, եւ նորա զմտաւ ածեալ զնաթուգոնոսորայ զբժշկութիւն, զնոյն ինքն կատարէր ի բովս փրկութեան արկանէր զժողովուրդն աւուրս վաթսուն եւ վեց, եւ ապայ բժշկէին յայսոյ չարեաց։ Արդ՝ սուրբ վարդապետացն ի մեր տկարութիւնս հայելով զնոյն աւտրսն կարգելով ի վերայ վասն բժշկութեան ոգոց ի սատանայական խորհրդոց։ Այլ ըստ ձեռնադրութեանն վաթսուն եւ վեց աւուրցն, զոր ոչ ոք ի սրբոյն Գրիգորի հաւատոցն խափանեալ սկիզբն ամենից է և ծ երբեակս կատարին, որ է սկիզբն Առաջաւոր պահոցն, բայց դու միտ դիր, զի ըստ մերում տկարութեանս կարգեցին զտասս ամենից բաժանմունս՝ որ լինի Ե եւ Ը աւուր. ոչ է արժան հաւատացելոց վայելել ի փափուք կերակուր, այլ սրբութեամբ կալ մնալ մեծի յարութեան Փրկչին մերոյ. վասն դի ի միասանգամ գալստեանն յորժամ փող հարկանի եւ սթափեալքն արթնութեամբ յառաջանան ընդառաջ Փրկչին, նորոգեսցուք եւ մեք ի բաց դնելով զծանտրութիւն հողանիւթ բնութեանս, ակն կալցուք յուսոյն մեծի եւ անճառ խոստմանցն, թէ «Ուր եմ եմ՝ անդ եւ պաշտաւնեայն իմ եղեցի» ի Քրիստոս Յիսուս, ի Տէր մեր, որում փառք եւ պատիւ այժմ եւ միշտ. ամէն» (էջ 224ա—225բ)։

Վերևում՝ էջ 268 նշել ենք, որ beïgq ձեռ-երի ունեցած սուլն բնագիրը՝ առաջին մասում ունի զգալի տարբերություններ կանոնագրքում եղածից, իսկ երկրորդ մասում բոլորովին տարբեր բան է։ Այդ ցույց տալու համար նշված հինգ ձեռ-երի ունեցածը կբերենք ամբողջությամբ ըստ e ձեռագրի։

«Գիր կանոնական սրբոյն Նպիփանու

ՌՄԾԵ Ա. ի վերայ բազում նշանաց և մարգարէութեան էր և այս շնորհեալ երանելոյն Նպիփանու եպիսկոպոսի, զի յորժամ կամէր զպատարագն մատուցանել յառաջին ազօքսն իւր, զոր վասն արժանաւոր լինելոյ անձին իւրոյ աղօթէր, վասն իշանելո[յ] Սուրբ Հոգւոյն խորհուրդն որ ի վերայ սրբոյ սեղանոյն. և տեսանէր յայտնապէս զշնորհս Սուրբ Հոգւոյն ի վերայ սեղանոյն. և յամենայն ի կեանս իւրում ոչ երբէք կատարէր զխորհուրդ սուրբ պատարագին, եթէ ոչ իշեալ տեսանէր զշնորհս Սուրբ Հոգւոյն ի պատարագն։ Եւ եղև աւր մի կալ նմա առաջի սրբոյն և յասելն նորա զբանս աղօթից ըստ սովորութեան աղաչանաց իւրոց պաշտել առաջի Աստուծոյ, զի իշցէ Սուրբ Հոգին և կատարեսցէ զխորհուրդ սուրբ պատարագին, եւ ոչ եղև երևումն Սուրբ Հոգւոյն ըստ սովորութեանն որպէս երէկն և եռանդն։ Եւ զարհուրեալ դողութեամբ յուժգին արտասուօք և հառաչանօք երիցս անգամ կրկնեաց զբանս աղօթիցն և ամէնեին ինչ ոչ յայտնեցաւ երևումն շնորհաց Սուրբ Հոգւոյն։ Իսկ երանելին կայր զարհուրեալ, և ողբալով աղաչէր զԱստուած վասն յայտնելո[յ] ըզպատճառ չլինելոյ ընդունելի աղօթից նորա՝ վասն իշից Սուրբ Հոգւոյն։ Եւ հայեցեալ նորա ի ձախակողմն կոյս, սարկաւագն որ զջոց պատարագին ունէր, և տեսանէր զճակատ նորա լի բորոտութեամբ որ յառաջ մաքուր էր ի բորոտութենէ։ Իսկ երանելին Նպիփան ձգեաց զձեռն իւր փութապէս և զջոցն եբարձ ի նմանէ և ասաց ցնայ հեզութեամբ. «Երթ, որդեակ, գնալ ի տուն քո և մի՛ ճաշակեր այսօր յաստուածային խորհրդոյս»։ Եւ իշեալ սարկաւագն եւ արտաքս և գնաց ի տուն իւր։ Եւ հրամայեաց երանելին այլում սարկաւագի զջոցն վերացուցանել և սպասաւորել սուրբ խորհրդոյն։ Եւ նայ սկիզբն արարեալ աստուածային բանիցն սուրբ պատարագին ուժգին արտասուօք։ Եւ նոյն ժամայն եհաս տեսիլն նշանի Հոգւոյն ի սուրբ սեղանն աստուածային ահեղ խորհրդոյն։ Եւ զկնի արձակելոյն եկեղեցոյն կոչեաց զսարկաւագն և ասէ. «Կամիմ ոտանել զպատճառն իրացս որ եղև քեզ»։ Եւ նորա պատասխանի տուեալ ասէ ցերանելին. «Ի գիշերիս այսմիկ մերձեցայ ի կինն և յանդգնեալ ի սպասաւորութիւն սրբոյ սեղանոյն, զայս կրեցի այժմ»։ Եւ հրամայեաց երանելին Նպիփան և կոչեաց զամենայն սարկաւագունս և զերիցուս եկեղեցոյն և ասէ ցնոսա. «Որդեակք, որ արժանի եղաք սուրբ խորհրդոյն սպասաւորութեան՝ ի բաց արարէք զամենայն մարմնական սիրելութիւն յանձանց ձերոց, զի մի՛ անցանիցէք նոքաւք և արհամարհիցէք զհրամանս քարոզին որ աղաղակէ և ասէ. «Որ ունիցի կանայս, այսպէս կալցին, որպէս թէ չունիցին». և ցմեծ մարգարէն ասէ, թէ՝ «Սպասաւորութիւն կոչեցար, լոյծ և ի բաց ընկեալ զհողաբնական ոտից քոց». զի սպասաւորութիւն յոր կոչեցար՝ երկիր սուրբ է. և այսմ հետէ ոչ մարմնասրապէս. Մովսէս, այլաբանիւ սպասաւորութեամբ։ Այլ և ի հնումն որք կամէին ի սպասաւորութիւն խորանին մերձենալ երիս աւուրս ի կանայց զգուշանային, որչափ ի նորումս։ Նոյնպէս և յորժամ կամիս հաղորդել, տես զմեղսաքաւիչ խորհուրդն, զի թէպէտ սուրբ է ի կարևորէ կերակուր քան զանկողնոցն ցանկութիւնս։ Սակայն զգիշերն ընդ մէջ անցուցանեմք, այլ և սուրբ կերակուրն և զըմպելին, որք յանդգնաբար մերձենան, մինչև անառակ արբենան, մեղս ևս համարիմք նոցա. ոչ թէ զգինին, այլ անառակ և զ[յ]անդուգն ցանկութիւն։ Նայև վասն հա-

ցին առաշատրութեան ասէր քահանայից Դաւիթ, եթէ՝ «Զգուշացեա՞լ են մանկունքն քո ի կանանց՝ կերիցեն». Պատասխանի ետ Դաւիթ և ասէ. «Սուրբ են ի կանանց յեր[է]կէ և եռանդէ և յորմէ հետէ ելաք ի ճանապարհս» և ապա հրամայեաց։ Ապա և որ ինչ բնութեան սուրբ է, յանդգնութիւն պիղ[ծ] առնէ և ոչ եթէ զբնութիւնն, այլ զ[յ]անդուգն և զանժամանակն ասեմ։ Արդ՝ որք արժանաւորեցայք սպասաւորութեան սրբոյ խորհրդոյն, մեծաւ երկիւղիւ զգուշացարուք բաղում սրբութեամբ զանձինս արժանաւորեցուցանել կալ առաջի սուրբ սեղանոյն և հաղորդել կենդանարար և ի մեղսաքաւիչ խորհրդոյն։ Եւ յայնմ հետէ ոչ ևս ծեռնադրեաց ի սպասաւորութիւն խորհրդոյն որ առնէին կանայս վասն [յ]անդգնելոյ առ նոսա յաւուր սպասաւորութեան սուրբ խորհրդոյն, այլ արս կուսանս և պարկեշտս երկիւղածս, զորոց զազնըւական վարս անարատութեան յանձինս ցուցեալ էր և զամուսնութիւն, զորոց բազումք վկայեցին զայսպիսի վարուց։ Եւ էր այնուհետև ղարդարեալ սուրբ եկեղեցին և պայծառացեալ սուրբ կարգօք քահանայիցն ի հաճութիւն Աստուծոյ և ի շինութիւն լսողաց։

ԻՄՄԶ. Ր. Վասն է՞ր աւրէնսդիրն չհրամայեաց մերձենալ յապահարն՝ լուր քաջ, հաս ի վերայ և իմանաս զչարաչար վնաս ապահարին անկողնոցն։ Գիտեալ, զի որք առեալ զսերմանս ի լիճս և ի ծովակս (ձեռ–ում ի ծովակս) սերմանեսցեն և ոչ երկիր մաքուր, մոլէգնոտս զնոսա համարիմք։ Նոյնպէս (ձեռ–ում նոյնապէս) լինին ախտք կանանց ըստ ամսոց, զի կենդանի երկիր մանկանն յօրինեսցի, և զառեալն ի զուգակցէն մաքուր պահեսցէ։

Արդ՝ ոչ այլ ինչ պատճառ ունի, բայց միայն վասն մանկանն կենդանութեանն լինն ամսեան ժամանակի յորովայնի մօրն։ Վասն որոյ ոչ ի մատաղ հասակ մօրն լինի ապահարին, դի չէ ժամանակ արգանդին մանկաբեր լինել և ոչ [յ]որժամ դադարէ ի ծնընդոց ի ժամանակի տնկեալ է Արարիչն դինել ապահարին ի բնութիւն կանանց, զի մանուկն կենդանի պահեսցէ. ուստի և յառաշագոյն մինչև մանուկ ստեղծեալ իցէ, յապարահին յառաւելութենէ կերակրոցն անկեալ յարգանդն ըստ ամսոց և ոչ գտեալ ի նմա զմանուկն, ճեպով արտաքս ելանիցէ։ Եւ յորժամ մանուկն ստեղծանի, ոչ. ևս դիմէ արտաքս, վասն մանկանն պիտոյից, որով զկենդանութիւն ունի։ Վասն որոյ պարտ է զարմանալ և փառաւորել զսքանչելագործն Աստուած, որոյ վասն մեր զարմանալոյ նոյն կարմրութիւն արեան ի սպիտակութիւն դարձուցանել մինչև մանուկն զարգասցի և ապա անդրէն ի նոյն գոյ[ն] դառնալ։ Բայց բնութիւն միմանոյն է և պղծութիւն ի նմա ոչ դոյ, զի եթէ պիղծ էր ծնունդն, ապայ և հարսանիս ոչ հրամայէր. պիղծ է պոռնկութիւն, լի չարահոտութեամբ անկողինք նոցա. սուրբ է ամուսնութիւն. և որ վասն ապահարին մի՛ յոգիս մեր մեղիցուք և մի՛ զմարմինս մեր ապականեսցուք զծնընդոցն, զի զայն Մովսէս և մարգարէքն պատուիրեցին. «Ի կին ապահար մի՛ մերձենալ», այլ [և] յանկողինս նոցա մի՛ ելանել, դի մի՛ կենդանի ծնունդքն ապականեսցին ժանտիւքն որ ի նմանէ աճեցեալ, դի յորժամ լիւրմէ զուգակցէն ընկալցի զմարմնաւորութիւն ամպողջ և անարատ պտուղ յորովայնի ծնընդոց յաշխարհ։ Ապա եթէ արք կամ կանայք առանց իմաստութեան յանդգնաբար մերձեսցին զանարժանս գործել, նոքա ոչ որդէծնութեան են անցեալ, այլ պիղծ և անառակ ցանկութեանց, այլ և որք իմանալն կարեն, ոչ լինին աւուրքն այն որդէծնութեան, դի զաղտեղութիւն յոլով ունիցին յինքեանս և ոչ տայ պատկերին ստեղծանել և յօգիլ ի միմեանս։ Ապա եթէ սակաւ ունիցին զհիւրն ի ներս յանկարծ զստեղծանելն, ստեղծանի մանուկ, բայց աղտեղութիւնք ընդ ստեղծուածն խառնեալ ծնանին խելք քիւրք, մարմնահարք, հիւանդք, անդամալոյծք, չարախորհութիւնք և յայլ ազտեղութենէ ի մասունս մարմնոյ տնկեալ և բունեալ, նեղխեալ և վիրաւորեալ և գտեալ ապականեալ զմարմինն և որ ի տղայութեան և որ յերիտասարդութեան և յոր ևս յառաջ ժամանակի չար ախտ յայտնի ազգ։

Վասն որոյ հոգելից մարգարէին ծանուցեալ պատուիրէ և ասէ, եթէ՝ «Ի կին ապահար՝ մի՛ մերձեսցիս», որպէս զի մի՛ ծնունդն կենդանի կարիցէ աղտեղութեամբ անդէն ախտիւք։ Եւ արդ՝ եթէ Մովսէս և եզեկիէլ հոգելից մարգարէքն պատուիրեցին չմերձենալ յանկողինս ապահարին։ Եւ հմուտք բժիշկաց վասն գիտելով զանցանս յանկողնացն զգուշացուցանեն զմարգ։ Եւ քննչտակարկատքն (մխայե b-ում քննել տա կարկատք. առաջինն անճատկանալի է, իսկ երկրորդը՝ սխալ—Վ. Հ.) հեթանոսաց ի բժշկական արուեստսն տեղեկացեալ զնոյն զանազան ախտիցն յոլովութիւն որ ընդ մարմին ծնընդոցն փաղփաղեալ ապականիցէ, որք այնմ ժամանակի ի տաղտկալի անկողինս մերձենայցեն իբրև օրէնս իմն հաստատեցին ոչ միայն անկողնոց հեռանալ, այլ և տանց և արանց հալածել իբրև եթէ զբնութիւն, զոր արար Աստուած պիղծ համարել, այլ մեք ոչ եթէ զոր արար Աստուած աստեաց ի բնութիւն կանանց խոտեմք պիղծ համարելով, այլ որպէս մարգարէքն պատուիրեցին չմերձենալ յանկողինս նոցա, վասն մանկակոտոր լինելոյ, որ ոչ սայ ստեղծանիլ աղտեղութեան և յոլովութիւն։ Եւ եթէ յանկարծ ինչ ստեղծանիլ և ախտիւք և ապականութեամբ ստեղծանի։ Վասն այսորիկ և մեք պատուիրեմք ըստ

մարգարէին «Մի՛ մերձենար յանկողինս նոցա». ղի մի՛ ծնունդն կորիցէ և մի՛ ծնողքն յոգիս իւրեանց մեղիցեն անհրկեղութեամբ և [յ]անդգնութեամբ, ղի մեղք այն են, զոր կամաւ և [յ]անդգնութեամբ ոք գործէ և ոչ յակամայ և ցօտվք։

